78-42

2004

891.99
Գ-89
1

# ՆԱՐԵԿ

## ԻՐՔ ԱՂՕԹԻՑ

ՒՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՅ
ՀՈԳԵԿԻՐ ՀՌԵՏՈՐԻՆ

ԽԵԱԼ ՆՆՋՄՈՒՆ ԵՒ ՀԻՆԳ ԲԱՆՍ ՀՈ
ԵՆԱՒՆ ՄԱՂԹԱՆԱՑ

ՄԱՆԱՒ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ԵՒ ՎԵ
ԱՓԱՌ ՊԱՏՐԻԱՐԳԻ ԿՈՍՏԱՆԴՆՈՒ
ՊՕԼՍԻ ՏԵԱՌՆ ԱՍՏՈՒԱԾԱՏՐՈՅ
ԲԱՐԵՋԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՅՕՐԹԱԳԻՒՂ

ՅՐԱՆԻ ՊՕՂՈՍԻ ԱՐԱՊԵԱՆ
ԱՊՈՒՉԵԽՑԻՈՅ

1844 = ՌՄՂԳ

3574 Կ. 3 243 

Գրեալք յոգնաթախանձ բանից օգտակա-
րաց, ապաշաւանաց, հոգեշահ խրատուց։

Անձին սգաւորաց, ողջակիզաց կանոնաց
կենաց, կամաւորութեան յանձնառութեանց․
[...]րեւութից յայտնութեանց, մեղանաց խոս-
[տո]վանութեանց, ցուցմունք դաղտնեաց, տա-
[րա]ծմունք ծածկեցելոց․ յանդիմանութիւնք
թագուցելոց։

Սպեղանիք զօրաւորք՝ վիրաց անբժշկակա-
նաց․ դեղք ազդողականք՝ ցաւոց անտե-
սականաց․ հնարաւորութիւնք բազմամ[...]անեայ
երկանց վտանգից․

[...]մաց կարեաց՝ ամենից ընդունելեաց․
[...]թք արտասուաց, պա[...]ք աղօթից․

[...]նդրոյ հայցմանց՝ հարց [...]անձանց և
[...]ձանց անապատականաց ա[...]ցեալ մատ-
եան ողբերգութեան,

ԳՐԻԳՈՐԻ

Նարեկայ վանից վանականի․

4790-49



# Ի ԽՈՐՀՈՅ ՍՐՏԻՑ

ԽՕՍՔ

# ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

## ԲԱՆ · Ա

Ձայն հառաչանաց՝ հեծութեան սրտի՝ ողբոց աղաղակի՝ քեզ վերընծայեմ տեսողդ գաղտնեաց · և մատուցեալ եդեալ 'ի հուր թախծութեան անձին տոչորման՝ զպտուղ ըղձից ճենճերոյ սասանեալ մտացս՝ բուրվառաւ կամացս առաքել առ քեզ։ Բայց դու հոտոտեսցիս հայեսցիս գթած, քան 'ի պատարագն բոլորապտուղ մատուցեալ ծխոյն բարդութեան։ Ընկալ զասկաւամանեայ բանիցս յօդուած՝ քեզ 'ի հաճութիւն, և մի 'ի բարկութիւն · ելցէ 'ի խորոց աստի զգայութեանց խորհրդակիր սենեկիս՝ փողփողեալ կէ

ժամանել առ քեզ՝ կամաւորական նուէր
բանական զոհիս, ողջակիզեալ զօրութ ճար-
պոյ՝ որ լի է պարարտութի։ Եւ ՚ի դը-
նելս իմ ընդ քեզ դատ՝ խառնեալ աղեր-
սիւ հզօր, մի՛ իբրև զհամբարձումն ձեռաց
ամբարշտեալն յակոբու, ըստ բողոքելոյն
եսայեայ, և զանիրաւութին բաբելոնի,
տաղտկալի քեզ երևեսցի. զոր առակ է
յիսներորդի երկրորդի սաղմոսին ա-
դէ. այլ իբր զբուրեալ խունկն հաճոյա-
կան ՚ի խորանին սեղանոյ, զոր դաւիթ
կանգնեալ նորոգեաց տապանակին հան-
դստեան ՚ի գերութեն դարձելոյ, որ ՚ի վե-
րատին գիւտ կորուսելոյ հոգւոյ առակն
ընդունելի կամաց քոց լիցի։

Է. Բայց քանզի ձայնդ ահաւոր դատաս-
տանիդ հատուցման՝ ուժգին հնչեցեալ
՚ի ձորն վրէժխնդրութե՝ կրկին ինձ երկ-
նէ մարտից յարուցմունս. այժմէն դողա-
կեալ շարժմունս յուզմանց ներհակակա-
նաց, որ լիմուսն անձին ցուցանի, խռո-
վութիւս ամբոխից. հարեալք ընդ միմեանս
զէն առ սուսեր՝ խորհրդոցն հոյլք, հա-
րեալն՝ ընդ բարին, և դերեալ զիս ՚ի մահ-
րատ հին դիպուածոյն՝ որ նախքան զշնոր-
հին ժամանել առ իս. զոր ընտրեալն առա-
քելականացն դասուց պօղոս՝ աւօրինա-

եալ զմոլէս , զքո՛ փրկութիւն յաղթօղ ուցանէ : Ա՛ն զի թէ մերձ է օր մահուն , ոչ էր ասէ , 'ի հովիտն անձուկ ասպարիսին յովսափաթու եւ հեղեղատին կեդրոնի , փոքր հանդիսարանացն իրաւանց ժամադրութեանց , որ կենցաղականաւ այսր յաւիտենիւ` ըղ հանդերձելոցն ինձ կերպարանէն , այլ եւ յաւէտ մերձեցաւ 'ի վերայ իմ արքայութիւն ոյ` մարմին եղելոյ , մեծապէս գտեալ զիս առիթ հասուց` բազմաց տոկոսեաց` զանազան մասանց յանդիմանողաց ճշմարտապատմից , քան զձեռին նորին վերակացուցման անդ ուրեմն երբեմն 'ի հարուածս եդովմայեցւոց եւ փղշտացւոց , եւ այլոց բարբարոս ազգաց : Վ՛անզի այն ընտրութիւն ամօք չափեցաւ , իսկ պատուհաս իմումս պարտուց` առանց աւարտման ունի զսահման : Ա՛հ գուբ` եւ որոգայթ անձողոպրելի , ըստ մարգարէին եւ առակողին , տագնապաւ մեծաւ առ դուրս ինձ հասեալ` զամօթն մշտնջենաւոր ատեն գծագրել : Որ միայն քո է հրաշագործել պտուղս դեղոց` 'ի հնարս կենաց` ամենավարան տարակուսանաց հոգւոց վտանգից , քանզի ա Ամենայնի` գովեալ 'ի փառս անձառս անսահմանելի բարձրութեան , յաւիտեանս յաւիտենից :

Վերստին յաւելուած կրկին հեծութեն՝ Նորին հրա-
կոչի, առ նոյն աղերս մաղթանաց բանի. 'Ի խո-
րոց սրտից խօսք՝ ընդ Այ։

## ԲԱՆ · Բ

Ա · Եւ արդ՝ քանզի առ բարձրեալն Ած յօդաւորական շրթամբք կարդա[ցի], որ գործովք միայն գրաւի, և ոչ ստեղծաբանութե կաշառի, որ յեղխպտոս միշտ ունիս զարտիդ զդարձն, զինչ օրինակ այս քեզ նմանագոյն և յարմարական առտանօր եդից՝ անձն իմ պարտաւոր։ Պատժակիցս կործանեցելոյն սոդոմայ. ընդերանեալ դատախազս նինուէի. անարի բարբարոսս քան զախկլինն հարաւային. վաթարագոյնս քան զքանան. յամառեցեալ քան զամաղէկ. անբժշկականս քաղաք դըրօշելոյ. նշմար մնացեալ ապստամբութե հինն իսրայէլի. յիշատակարան պահեալ՝ ուխտազանցութեն յուդայ։ Աշտամբեալս գեր քան զծուլ. տարամերժեալս քան ըղձայդան. խորթաբարոյս քան զդալիլեա. աններելիս քան զանհաւանն կափառնաում. պարսաւեցեալս ի բեր զքորազին. բամբասեցեալս ընդ բեթսայիդայ. անպարկեշտ ծաղկեցեալ ալերս եփրեմի։ Եւ զու ազանիս միշտ յիմարութե՝ այլ ո՞չ հանդարտու-

ձեռամբ ․ 'ի կորեանց առխծուց՝ անձնա-
կան, օձս եղեռնային ․ կերպս ձուոց քար-
ձից՝ լցեալ ժանտութբ ․ պատկերս վերջին
հարուածոցն երուսաղէմի, ըստ բանին տէ-
առնն՝ և տեսանողացն ձայնի ։ Հաղաւտիս
մոռացեալ՝ հասեալ 'ի կործանումն ․ խոր-
տակեալ դրացս վտահարան , և կրկին
կործեալ շինուածս խօսուն ․ Թողեալ ժա-
ռանգութիւնս յարմարական , մոռացեալ
ուխտս Ածակերտ , ըստ բանից նախագրե-
ալցն՝ մովսէսի՝ դաւթայ և երեմիայի ։
Յարկս բանական՝ ունողս բորոտութե ,
հարուածեալ խրատու քերմանն՝ օրինխ-
ապղուրեալ , օծեալ կաւով՝ ողոքական
չեղութեն ․ անձարակ գտեալ յեր հնա-
րից , քակտեալ վերստին ձեռամբ շինողին ․
արտաքս ընկեցեալ իրաւացի հատուցմամբ
Տրամանաւ հզօրին 'ի տեղի անսուրբ ․ հերք-
եալ տարագրեալ խարոցաւ մեծաւ՝ Ամի-
տանց խնայելոյ ։ Ծածկեալ դրամս յերկ-
րի չորեօք , ըստ աւանդակորոյս ժխտողին՝
որ յաւետարանին ցուցանի ։

Է. ՈՎ դու Ած՝ Ածդ հոգւոց՝ և ամե-
նայն մարմնոց , ըստ դաւանելոյ Ածաշնոր-
հին, երկայնամիտ և բազումողորմ, ըստ որյն
յոչնանու ձայնին , շնորհեա կատարել
'ի քոյդ հաճութիւն օրհնեալդ կամօքդ՝

փսկզընաւորեալ մատեան մաղթանաց՝ այսր ողբերգութե՟ ։ Եւ ընդ լալոյ սերմանել բանիս 'ի նախընթաց չուս աստիճանաց՝ օթեւանացս պատրաստութե՟ , 'ի կատարածն ժամանելոյ հաւաքման հնձոցն , դարձայց բերկրեցեալ լրութե՟ քաւութե՟՝ պտղոյն երանութե՟ որայիցն բարութե՟ ։ Մ՛ի տացես ինձ արգանդ սրտի անորդի՝ իբր խափայելի , և ստինս աչաց ցամաքեալս՝ ով ամենագութ ։ Լուր բանական մաղթողիս՝ հզօր և ողորմած , նախ քան երկնի , և երկին՝ երկրի , և նա՝ ցորենոյ և գինւոյ և ձիթոյ , և նոքա՝ իսրայէլի ։ Եւ երկնաւորացն աղերս որ առ քեզ՝ հոգւոյս ազդեսցէ , քան թէ տարերաց ապականացուաց ։ Դու ստեղծիչ՝ և ես կաւ , բայց տարակուսելոյս 'ի մուտս մաղթանաց այսր հեծութե՟՝ կամաքաղցրութե՟՝ զօրանալ տուէն · զի մի 'ի բանալ վերնայինն երկնի՝ անընտիր գտեալ կրթութե՟ վայելման լուսոյ , իբր զնիւթ մոմոյ՝ սպառեցայց ջնջեալ 'ի միջոյ ։ Ագի՛ զըրկելոյս , ըստ մաղթանաց գոչման տաղին , և ոյժ թալկացելոյս , և կեանք մաշելոյս , մըտացս խղճիւ , այլ ոչ տաժանմամբ կրից՝ աշխատութե՟ զքեզ խնդրելոյ · ա՛ռ զաւանդ մաղթանացս , և տուր զողորմութի՟ քո շնորհացդ · ընկա՛լ զփոքրս՝ 'ի տկարէս , և շը-

Շնորհեա՛ զմեծդ՝ առ 'ի հզօրէդ. զօրացո՛ ըղ-
ձանս զղջման, առաքեալ 'ի մեզ հոգի 'ի
բարձանց՝ ծածաշունչ պատգամօքս 'ի սմա
եղելոցս։ Պարգևեա՛ բարերար՝ զառակն
կորուսեալ, լուսաւորեալ առ ճշմարտութի՛ն,
…ուցանելով մահու արժանեացս՝ ընդ պը-
ղնձեալս գայի անարգս ձայնի՝ զոսկի քո շը-
նորհի. ընդ անզարդութեան երկաթեայս՝
…թե գունեալս՝ պղինձ պճնելի. ցուցք
…քինութեան, հրաշէկ լիբանանու։
Ընդէ՞ր կարծրացուցանես զսիրտ եղկելոյս՝
չերկնչել 'ի քէն, անճա՛ռ և ահաւոր։ Մի՛
երկէ՛ անպտուղ 'ի փուքը վաստակոյս՝ իբր
…ջան սերմանօղ անբերրի երկրի։ Մի՛
…ի ինձ երկնել, և ո՛չ ծնանել. ողբալ, և
ո՛չ արտասուել. խորհել, և ո՛չ հառաչել.
…գել, և ո՛չ անձրևել. ընթանալ, և ո՛չ հա-
սանել. ինձ ձայնել, և քեզ ո՛չ լսել. պա-
ղատիլ, և անտես մնալ. կողկողել, և ո՛չ ո-
ղորմել. աղաչել, և ո՛չ ինչ օգտել. զոհել,
և ո՛չ ձենձերել. զքեզ տեսանել, և դատարկ
երթանել։ Լո՛ւր ինձ նախքան զկարդալս
իմ՛ առ քեզ՝ միայնդ հզօր. մի՛ զանվճար
…ձանացն տոյժս՝ ընդ թուով աւուրց
…ք կեցելոյս չարագործիս ինձ՝ հատու-
ցանել։ Կեցո՛ զիս գթած. լո՛ւր ինձ ողոր-
մած. մարդասիրեա՛ նեղօղ. խնայեա՛ եր-

կայնամիտ · պաշտպանեամ ապաւէն · բարե-
րարեամ հզօր · ազատեամ ամենակալ · կենա-
գործեամ նորոգօղ · վերականգնեամ ահաւոր ·
լուսաւորեամ երկնային · բժշկեամ հնարա-
ւոր · քաւեամ անքննին · պարգեւատրեամ ա-
ռատ · շնորհազարդեամ աննախանձ · հաշտեամ
անախտակիր · ընկա՛լ անոխակալ · սրբեամ 'ի
պարտուց օրհնեալ։ Եթէ յառեցից զաչս
իմ, նայեցեալ 'ի հայեցուածս երկուց վը-
տանգից յաւուր թշուառութեան , զքեզ
տեսից փրկութի՛ն յոյս և խնամակալ · եթէ
նկատեալ դիտեցից 'ի վեր յամենադրա-
ւուղին սոսկալի , հրեշտակ քո խաղաղութեան
քաղցրութ ինձ պատահեսցէ , Ցո՛յց ինձ
տէր 'ի յելիցն աւուր շնչոյս արձակման՝
մարմնութեան ոգի , լուսով ամբարձեալ 'ի
յերկնաւորացն երջանկաց՝ պարգեւօք մի-
ոյ քոյ եկեալ հասեալ։ 'Ի յարդարոցն կա-
տարելոց՝ կարեաց ինձ կցորդ ժամանե-
ցուսցես · դատակնկալն բարի՝ չարիս 'ի յու-
սահատութեան աւուր շնորհեսցես։ Յա-
ւելցի քեզ բարեբանեալ՝ որ փրկութիւն ես
ամ~ի , եթէ ախտացեալս քո ոչխարի՝ գա-
զան դժնդակ տացես ուղեկից · մեղօք մե-
ռելոյս՝ անմահ կեանք · կործանելոյս
պարտեօք՝ փրկութիւն։

Է · Արդեօք մատուցից զբարերարեալ-

ակնկալութի · անտեսեսցե՞ս զգթասիրելդ՝
խնամող · այլայլեսցե՞ս զմարդասիրելդ՝ ան-
փոփոխ · նշանջեսցե՞ս զկենագործելդ՝ ան-
պխձան · թողուցո՞ւս զողորմութիւնդ՝ եր-
անելի պատուղ։ Նուաղեսցե՞ս զքաղց-
ութեանդ բարեշնորհ ծաղիկդ · անպատ-
ւեսցե՞ս զնիւթ պանծանաց քումդ ձո-
ոմթեան · յեղանակեսցե՞ս զփառս հերաց
քոց բարձրութե · ո՞չ պահեսցես զկայեր-
չական զարդ պայծառութե քումդ պսակի ·
Եթէ ողորմածացն է երանութի · իսկ դու-
ընաւ իսկ արքայութի լցեալ փափաքմամբ ·
ո՞չ զբուռն պարգեւեսցես փրկութի · ո՞չ
մատուցանիցես դեղ վիրացս · ո՞չ սպեղա-
նիս խոցուածոյս · ո՞չ դարման ակարու-
թեա · ո՞չ ծագեսցես լոյս ՚ի խաւարի՝ յու-
սացելոյս ՚ի քո զօրութիւնդ՝ կենաց պար-
գեւդ ախեղերաց։ Որ միայնդ ունիս փառս
նրնութե խոկութե եւ յարակայ մշտնջե-
նաւորութե · վկայեալ ՚ի ընաւեց · օրհնեալ
ւ փառաւորեալ յերկս յաւիտենս · եւ ան-
ծեր քան զպայման սահմանի ի նալեացն
յաւիտենից · ամէն ։

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հրա-
կալի, առ նոյն ակներև մաղթանաց բանի. ՚ի խո-
րոց սրտից խօսք՝ ընդ Այ։

## ԲԱՆ. Գ

ա. Տէ՛ր իմ տէր, տուիչ պարգևաց
ինքնաբուն բարի. ամենից ա-
րող հաւասարապէս. միայն ա-
րարիչ զընաւս յոչէից. փառաւորեալ
անքննին. ահեղ. ահարկու. սոսկալի. հ
զօր. սաստիկ. անտանելի. անմերձենալի.
անըմբռնելի. անխմնալի. անճառելի. ա
տեսանելի. անզննելի. անշօշափելի. անոր
նելի. անսկիզբն. անժամանակ։ Անշամա-
դաղ գիտութիւն. աներկեան տեսութիւն.
ճշմարիտ էականութիւն. բարձր՝ և խոնար
օրհնաբանեալ գոյութիւն. անստուեր ծա-
գումն. ամենափայլ ճառագայթ. խոստո
վանեալ լոյս. անտարակոյս փառաւորութիւն
անտարտամ հանդիստ. անյեղլի կնիք. ան
սահմանելի տեսիլ. վկայեալ անուն. ճաշ
քաղցրութեան. բաժակ բերկրութեան. հա
տիչ հոգւոց հաց. օտար մթութեանց սէ
անէ կըայ խոստումն. ծածկոյթ ցանկա
զգեստ անկապուտ. օթոց բաղձալի. զա
փառաց. ձեռնկալու մեծ. ապաւէն գ
եալ. աննուաղելի շնորհ. անպակա

գանձ · անապական անձրև · արփիացնցուղ
յօղ · ամենատեղաց դեղ · ձրի բժշկութիւն ·
կրկնաձիր առողջութիւն · վեհագոյն խրա-
խոյս · անպատիր կոչումն · համօրէն աւե-
տիս · սորկամեծար թագաւոր · աղքատա-
սէր պաշտպան · մշտահարուստ տուիչ · ան-
խափան դիմեցումն · աննահանջելի հրա-
ման · անհամառօտ լոյս · երկար տեսողուն ·
անզղջական տուր · ամենաբաշխ աջ · ար-
դարակշիռ ձեռն · անաչառատես ակն ։
Մխիթարութե ձայն · սփոփանաց լուր ·
բերկրութե բերումն · անուն կենդանի ·
նախախնամօղ մատն · անդայթագղելի ելք ·
անխարդախ ընթացք · կենդանարար կամք ·
աննենգելի խրատ · աննախանձ պատիւ ·
լոյնական հնարք · անձկական պայման · ան-
դառնելի հետք · աներևոյթ շաւիղ · ան-
չափագիր պատկեր · ողքանութի անսահ-
ման · աննմանական տիպ · անզուգական
դութ · ողորմութի բազմաղեղ · խոնարհութի
տօնելի · համբոյր փրկական ։ Սու ևս քան
զայս աղդմունք վայելչականք՝ անծութեղ-
նուիրելիք , օրհնեալ · գովեալ · բարեբան-
եալ · քարոզեալ · աւետարանեալ · հռչակ-
եալ · հնչեցեալ · պատմեալ · անխաբելի կա-
մօք աղաչեալ · և որ ինչ առ մեզ բերին առ
'ի քեն՝ համմունք քաղցրութե , զոր հան-

դերձելոցն ձեռաց լուսաբանեն կերպաւո-
րութիւք · որով զուարթ ցուցանիս 'ի փըր-
կութիւն իմ՝ երանուհի, իբր 'ի պարարտու-
իմեքէ՝ ախորժ անընչանօք լցեալ · զի ոչ ի-
մասն ինչ անտախտապատուատ փառատրի-
երգով, այլ զի պատճառ իմն առցես զփըր-
րըս ազերս՝ մեծիդ փրկանաց :

Է · Ու քանզի առ իմ հասակ անկեցեալ
յերկրի ազգ բանականաց՝ այս պատուէր
նկարագրական նորոգ մատենի ողբոց նը-
ւագի, որ զամենեցունց ունի զկրից պա-
տահմանց՝ նշաւակեալ յիւրում պատկե-
րի, իբր կցորդ մեծախտական կարե-
համայնից, առ բոլոր գումարս բազմահա-
լով անհեղեղերակցա քրիստոնէից : Ու նախ-
նի ժամն ժամանողաց, և առ երկրորդ կը-
շեցեալ չափու արբունն · առ որ 'ի կատա-
րած աւուրն կալեալ՝ սակաւաձեռն ծե-
րութիւն · առ պարտաւորս, և արդարս · առ
ինքնարդեօ բարձրայօնն, և սխալեալ անձ-
նադատ գոեալն · առ բարին, և եղե-
նագործս · առ նկունս, և առ արիս · առ
յարուկս և ներքցանկեալս, առ սեպուհս և
դերաշխարհիկս : Միջակայնոց՝ և պայա-
կատաց · շինականաց՝ և տոհմականաց · առ
ուաց՝ և իգաց · հրամայողաց՝ և հնազան-
դելոց · դեր ելոց՝ և նուաստից · մեծից

ա

փոքունց · պատուականաց՝ և ռամկաց · ձի-
ավարժից՝ և սոսկականաց · քաղաքականաց՝
և գեղջկաց · արքայից գաւառուեց՝ 'ի սանձս
ահաւորին ըմբռնեցելոց : Սխայնացելոց՝
վերնականացն խօսակցաց · մաքրականաց՝
տիրանուէր զգաստութեց · քահանայական՝
երջանկակրօն ընտրութեց · պչելութեց՝
բարեզգեստից դիտողութեց · աթոռակա-
լութեց նախագահից՝ սրբանուէր տեսո-
ղութեց · որոց ոմանց աղէրս աղաչանաց ,
և ոմանց խրատ բարեաց՝ առ դէմս աղօ-
թից այսու մատենիւ մատակարարեցի ,
ձեռնարկեալ հոգւոյդ զօրութե՝ կարգել
ինձ մաղթանս բազմադիմիս , և ամ̃ցուն սո-
ցին խնդրուածս՝ գթուե մեծիդ յանդի-
ման լինել սովաւ համապաղ :

Է · Նա արտացես զոյն ընթերցողացն 'ի
վերաս յատակս՝ բժշկուե հոգւոց , և մաք-
րութե յանցանաց · թողութե պարտուց ,
և արձակուրդ մեղաց կապանաց : Նղեցէ
զղխումն արտասուաց՝ սովաւ փարժելոցն ,
և պարգևեալ տացի 'ի ձեռն սորին ապա-
շաւ ըղձից : Շնորհեսցի տէր և ինձ ընդ-
նոսին առ 'ի քէն՝ զղջման կամաց · և նոցա
միով ձայնիւ շունչս բարեհամբոյրս ·
նուիրեսցի վն իմ այսու մատենիւ պաղա-
տանք նոցին , և բանիւս այսու հեծութեք



ԼԵՆԻՆԻ ԱՆՎԱՆ ... ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-Арм.ССР

նոցին ընդ իմ խնկեցին։ Ընդ համբոյ ճաշակման այսր ողորմութեան, շնորհ ընայ քոյ մնացեալ բնակեսցէ. եթէ ելցեն ինձ բարեպարիշաք ընծայիլ տուաւ, ընկալ կենդանեօքն վ̃ քոյ գթած՝ և զիս ընդ նոսին. եթէ ախտս ինչ սրբանուէրս կաթուածոց աչաց սովլիմբ բերիցի, եղիցի ՚ի քէն խնամակալ՝ և յիս անձրևեալ. եթէ գրեսցի և ՚ի փրկութի կարգեսցի՝ հաղորդելոցն յայս կիրս կենաց, արասցես կամաւ քո օրհնեալ՝ և ինձ համարեալ. եթէ հեծութիս ա̃ծահաճոյս ՚ի ձեռն այսր բանի՝ ՚ի գաղանեաց ուրուք յառաջ եկեսցէ, օգտեցայց քև բարձրեալ՝ և ես ընդ նմին. եթէ ձեռն մաքուր՝ խնկով հանդերձեալ ու քեզ համբարձցի, հասցէ միասցի ընդ իմս ձայնի և աղաչողացն աղերս՝ յառաջ մատուցեալ։ Եթէ պաղատանս բազմադիմս ընդ իմս երկնեսցի, լիցի և ինձ քև՝ ի վասն սորին կրկին նուիրեալ։ Եթէ յարդեսցի այս անձին բանի պատարագ՝ քեզ ՚ի հաճութիւն, նախայլոցն՝ ընդ իս քև ընծայեսցի։ Եթէ ՚ի տխրանաց ինչ ձանձրութե̃ ոք նուաղեսցի, կանգնեսցի վերստին հաստատրանս այս հառաչանաց՝ ՚ի քեզ յուսացեալ. եթէ համբարատակն վտահութե̃ մեղօք յատակի, այսու արձանց

դաւանեցելովք աջով քո պաշտպան՝ դարձ-
եալ կառուսցի։ Եթէ յուսոյն ձգտման՝
ստուերքն յանցանաց հատեալ կորեսցի ,
կցեսցի դարձեալ միւսանգամ կամօք ա-
մենակալին՝ բարուք պատուաստեալ .
Եթէ վտանգ մահու՝ անձնական ցաւոյ՝
որք պաշարեսցէ , գտցէ փրկութիւն սո-
վաւ առ 'ի յոյս կենաց՝ յաղօթելն առ քեզ
կենցուցիչ . Եթէ տագնապաւ որ տարակու-
սի՝ 'ի սիրտ խոցեսցի , քաղցրութ՟ քո՝ սո-
փաւ ապրեալ ողջասցի։ Եթէ անբաւելի
կորստեամբ պարտեաց՝ յանդունդս որ խո-
րոց իցէ ընդլուղեալ , եկեսցէ 'ի լոյս՝ կար-
թիւ այս հնարից՝ քեւ պատսպարեալ . Եթէ
թմբրութ՟ լարբից՝ խաւարին գործոց՝ իցէ
որ միասեալ , զօրասցի անդրէն վ՟քո միայն
ապաւէն՝ 'ի քեզ ապաստան եղեալ։ Եթէ
դահպանակն վստահութ՟ն զանձն ուրուք
լքցէ , ընկալցի այսու միջնորդիւ ձեռն
քո զնա՝ ամփոփեալ 'ի նոյն հաստատուն .
Եթէ ամայի 'ի զգուշութ՟ պահողացն որ
դեգերեսցի , սպասեսցէ սովին՝ առ 'ի նոյն
դարձ նորոգողին։ Եթէ սարսուռ դի-
ւային ջերման՝ գողութ՟ ինչ զոք խռո-
վեսցէ , սթափեսցի 'ի սոյն յայս նշան՝ խռո-
տովանեալ և երկրպագեալ խաչիդ խորհրդո-
ւդ , Եթէ անօրէնութ՟ մըրիկ՝ խռովա-

կի՛չ հոգւոյս՝ յանկարծ բախեսցէ զհաստ-
ուածս մարմնոյ՝ շինուածոյ մարդոյ՝ յերկ-
րային ծոլուս, հանդարտեսցի անդրէն՝ զե-
կաւ այս թեւոց ՚ի քեզ պատկանեալ։

Գ. Նու արասցես լինել դեղ կենաց՝ ան-
հնարս ցաւոց հոգւոց և մարմնոց՝ քոց ըն-
տեղծուածոց, զայս կարգեալ սահման
ողբոց մատենի սկզբնեցելոյ յանուն քո՝
բարձրեալ։ Ոսկեալս իմ՝ դու կա-
տարեա. եղիցի հոգի քո խառնեալ ՚ի սա.
շունչ զօրութե մեծիդ միասցի ՚ի քո լինձ
շնորհեալ ստեղծաբանութիս. զի դու տաս
զօրութիւն վհատեալ սրտից, և ընդունիս
փառս յամենեցունց. ամէն։

---

Վերստին յաւելուած կրկին հեծութե՝ Նորին հրա-
կոզի, առ նոյն աղերս մաղթանաց բանի. ՚ի խո-
րոց սրտից խօսք՝ ընդ այ։

## ԲԱՆ. Դ.

ա. Սուքանչլի սկիզբն կալայ խօսել ընդ
քեզ՝ որ ՚ի ձեռին ունիս զշունչ
կենդանութե հոգւոյս բազմամեղի, յի-
րաւի սարսեալ դողացեալ տագնապաւ մե-
ծաւ՝ յաւէտ երկնչիմ. վասն զի աճաւոր և
անտանելի, և ՚ի սահմանէ բանի փախչելի,

յիշատակ անձողոպրելի՝ անաչառդ. քո ա-
տենի՝ 'ի կշտամբութիւն իմ պարտաւորի՝ ա-
ռաջի՛ երկնի և երկրի։ Նա զի՝ և չէք իսկ
բժշկութիւն բազմավարանդ սաստկութեան վի-
րացս անողջանալի, խայթմանց խածուա-
ծոց մահաբերին բերանոյ ժանեաց՝ որսո-
ղին զանձն իմ 'ի կորուստ։ Մանաւանդ
զի՝ ոչ գոյ պատասխանի, ըստ առակողին,
յաւուր պատերազմի. և ոչ բանիւ խրա-
ւանալի, և ոչ վերարկուաւ պատսպարելի,
և ոչ դիմակօք կեղծաւորելի. ոչ առ երեսս
բանիւք մատչելի, և ոչ կերպարանօք եր-
բէք խաբելի. ոչ յօդուածովք բանից սը-
տելի. ոչ արագամամբ ոտից փախչելի. ոչ
թիկանց դարձուցանելի. ոչ դիմաց ընդ
երկիր մածուցանելի. ոչ բերանով ընդ
հող հատանելի. ոչ 'ի խորս երկրի զօղելի։
Քանզի մերկ են քեզ ծածկեալքն, և հը-
րապարակեալ են աներևոյթքն. արդարու-
թիւն իմ նուաղեալ՝ և խաւար ունայնացեալ.
մեղանքն յայտնեցեալ՝ և յաւէտ առաւել-
եալ. չարիքն իմ մնացական՝ և ես կորստա-
կան. խրատանցն կշիռ պակասեալ՝ և անի-
րաւութեանն խնկոյն զօրացեալ. բարեացն
բերք հալեալ՝ և սխալմունքն արձանացեալ.
աւանդն կորուսեալ՝ և դատաւնիքն ոյժ-
գին գտեալ. մահուն մուրհակ գծեալ՝ և

աւետեացն կառք եղծեալ։ Բարերար տխրեցեալ` և բանսարկուն ուրախացեալ. հրեշտակաց գունդն թաղծեալ` և սատանայ խնծղլուք պարեալ. վերնական զօրք ողբացեալ` և ստորնայինքն բերկրեցեալ. սպանողին մթերք լցեալ` և պահողին գանձըն կապտեալ. օտարին կողմն կանգնեալ և ստացողին պարգև մատնեալ. հաստողին ձիր մոռացեալ` և կորուսչին հաղըքն պահեալ. երախտիք փրկչին հեգնեալ` և բելիար զուարթացեալ. կենացն աղբիւր փակեալ` և գուողին ժանգ` ժանգխս ժամանեալ։

Է. Նուարդ` ոչ ապաքէն ըղձալի էր, ընդրոյն կանխութե նախաձայնելոյ, ոչ ըստեղծանելն երբէք յարդանդի` և ոչ նկարելն 'ի յորովայնի. ոչ 'ի ծնունդ յառաջադայել` և ոչ 'ի լոյս կենաց հասանել. ոչ 'ի թիւս մարդկան գրել` և ոչ 'ի հասակ ածման ամբառնալ. ոչ 'ի պատկեր գեղոյ զարդարել` և ոչ բանիւ հանդերձաւորել, քան ընդ այսպիսեաց սաստկագունից և սոսկալեաց ըմբռնել պարտուց, զոր և ոչ վիմաց կարծրութի բերէ, թող թէ մարմնոյ լուծականութի։

Ը. Նուարդ` տո՛ւր բարեգութ` աղաչեմ զքեզ` տո՛ւր ինձ ողորմութի, որ զայսոսիկ

դու ինքնին քեզէն քոյովդ բանիւ մեզ սահմանեցեր՝ ասելով, Թէ տուք զայդ նուէր՝ յանուն փրկութեան ձերոյ՝ Տր, և մ̃ք եղերուք․ զի զողորմութիւն կամիմ, և ոչ ըզպատարագ։ Նա բարձրացիր վերստին ինկեալ այսր յիշատակաւ, որ ունիմ զա̃մ, և ՚ի քէն է ամենայն, և քեզ փառք յամենեցունց․ ամէն։

---

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ Նորին հրակողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի, ՚ի խարոց սրտից խօսք՝ ընդ Այ։*

## ԲԱՆ․ Ե

Ա․ Եւ արդ՝ ես երկրածինս մարդ՝ կենցաղականաւ անկայուն գոյիւ ըղբաղեալ, և յիմարութեան պատրողականաւ գինեաւս յիմարեալ, որ ամենայնիւ սասեմ, և ոչ միով իւիք Ճշմարտեմ։ Վասնզի որովք դիմօք վերագրեցելովք նշանակօք աղարտեցելովք՝ յանդգնեցայց լինել յանդիման քում դատաստանիդ, ով իրաւադատ ահաւոր անճառ՝ անպատում հզօր Ած բարերից։ Վասնզի դասեալ աստատին ՚ի սոյն՝ զապերախտութիւն մեղուցեալ անձինս՝ առ քումդ երախտիս, ցուցից զիրաւունս քո

միշտ զօրացեալ, և զանխրատութիւն իմ յա-
ւէտ պարտաւորեալ։ Որ արարեր զիս 'ի քո
պատկեր պանծալի՝ 'ի ձեռն վեհիդ տպաւո-
րութե՛, զտկարս օժանդակելով.
Է ․ Ո՛ արդարեցեր բանիւ ․ փայլեցուցեր
փչմամբ ․ մտօք ճոխացուցեր ․ իմաստիւք ա-
ճեցուցեր ․ հանճարով հաստատեցեր ․ 'ի
շնչականացն որոշեցեր ․ հոգւով իմանալ-
եաւ խառնեցեր ․ իշխանականին գըլ-
պճնեցեր ։ Ո՛նոր հայրաբար ․ սնուցեր
դայեկապէս ․ տածեր ստացողապէս ։
Տնկեցեր զամբարիշտս 'ի քումդ գաւթի ․
Ջրովն կենաց ոռոգեցեր ․ աւազանին ցօղով
մաքրեցեր ․ կենացն վտակաւ արմատացու-
ցեր ․ հացիւդ երկնայնով ջամբեցեր ․
ծծայլին արեամբդ արբուցեր ․ անհպիցն և
անհասանելեացն ընտանեցուցեր ․ զաչս երկ-
րեղէն՝ 'ի քեզ համարձակեցեր ․ լուսոյդ
փառաց վերամածկեցեր ․ զհողանիւթ մա-
տունս անմաքուր ձեռացս՝ 'ի քեզ մատու-
ցեր ․ զմռխիրս անարգ մահացու՝ իբր զնը-
շոյլ լուսոյ յարդեցեր ․ զհայր քո հզօր ա-
հաւոր օրհնեալ՝ մարդասիրապէս և անար-
ժանիս իմդ անձին կնքեցեր ։ Ո՛չ կրկեր
զբերանս լցեալ նանրութե՛՝ 'ի ժառանգա-
կիցն կարդալ զքեզ ․ ոչ կշտամբեցեր ըղ-
յանդգնեալս՝ 'ի քո կցորդութիւն ․ ոչ

ստուերացուցեր զտեսիլ աչացս՝ ’ի քումդ ակնարկութ̃ի • ոչ արգելանաւ կապանաց՝ ընդ մահապարտացն տարադրեցեր • ոչ խորտակեցեր զդաստակ բազկիս , որ անմաքրապէս առ քեզ համբառնայր • ոչ մանրեցեր զոստս իմոց մատանցս՝ ’ի շօշափելն ըզբանդ կենաց • ոչ պատեցին զինև մառախուղք՝ ’ի ձօնելն զքեզ՝ ահաւոր • ոչ փըշրեցեր զպարս ատամանցս՝ յըմբոշխնելն ըզքեզ՝ անսահմանելի • ոչ գնացեր բարկութեամբ խստորինակ՝ խստորինակի ընդ քեզ հետևօղս , իբր ընդ վրիպեալ տունն խարայելի ։ Ո՛չ խայտառակեցեր ’ի հարսնարանիդ՝ զանարժանս քումդ պարերգութ̃ե • ո՛չ ’ի գձուձ հանդերձին տեսիլ՝ զանօրինեալս յանդիմանեցեր • ոչ կապանօք ձեռացս և ոտիցս՝ յարտաքին խաւարն հալածեցեր ։

Գ • Ո այս ա̃մ մասունս բարեաց՝ և զներելոյդ երկայնմտութ̃ի ընկալեալ ’ի քէն՝ բարերար օրհնեալ՝ և յամենայնի միշտ երկայնամիտ , փոխադրեցի զհասակարս պարտեաց՝ անթիւս և բազմօրինակ անօրէնութիւնս , մարմնականաց և անձնականաց՝ ամենակիր բազմածուփ խորհրդոց յուզմանց երկրաքարշութեանց ։ Ո այսպիսիկ քեզ՝ ա̃ծ իմ և տ̃ր , ընդ այսքանեաց բարեաց փոխա-

բերեցի • զայս քեզ՝ ինձէն հատուցի չարիս , ըստ մոլխեան յանդիմանութեն առակի , մոռացեալ զիմաստութի՝ և սիրող յիմարութե ։ Օ՜ այց բարեաց երախտեաց կամաւս՝ ընդունայնութե գնացիք չարաչար ունայնացուցի • զայս լուսաւորութի շնորհաց անձամբ՝ 'ի բարձրելոյդ խնամոց բարդեցեալ՝ մրրկաւն խելագարութե ցնդեցի ։ Եւ թէպէտ բազումանգամ ծանուցար՝ կարկառմամբ ձեռին քո այցելութե ձգել զիս առ քեզ, ոչ հաւանեցայ ըստ մարգարէին՝ որ զիսրայելէ ամբաստանութեան • և թէպէտ խոստացայ դաշնաւորեցի քեզ հաճոյանալ , և ոչ ընդ այսմ սահմանաւ ուխտի փակեցայ , այլ դարձեալ զնոյն նիւթեցի չարիս , անդրտին յոճն առաջին մատեայ , փշոցն մեղաց հերկեցի զանդաստան սրտիս՝ յորոմնն արդիւնաւորութիւն ։ Եւ իս ելանեն առածք ածարեալ որ մարգարէիցն • քանզի մնացեր յինէն խաղողոյ , և ես ընդ այնորիկ փուշ շառաւիղեցի • դարձայ յանախորժ դառնութի պտղոյ՝ այգիս օտարացեալ • բուռն հարի զանհաստատ հողմոյ , որովք միշտ տատանեալ՝ այսր անդր տարաբերիմ • ըստ ձայնի երանելոյն յոբայ՝ ընդ ճանապարհ իմն անդարձ գնացի • 'ի վերայ աւաղոյ՝

ընուածս յիմարութե̃ կառուցի ։ Այնա-
տարր հետովք խաբեցայ՝ կենացն անձկա-
եաց հասանել · փակեցի ինձէն զելսն ու-
ղղորութե̃ · բացի կամաւ զկորստեան խոր-
խորատն ։ Խցի զպատուհան լսելեաց ի-
մոց՝ առ բանիդ կենաց ընդունելութի̃ ·
կափուցի զաչաց հոգւոյս հայեցուած՝ առ
՚ի զկենացն դեղ նկատել ։ Ո՛չ ընդոստեայ
՚ի թմբրութենց լքմանէ մտացս՝ ՚ի պատ-
գամ փողոյդ ահաւորութե̃ · ոչ զգաստա-
ցայ ՚ի փողք գուժի՝ հրափորձական ա-
ւուրն ընտրութե̃ · ոչ երբէք զարթեայ ՚ի
նիրհմանէ քնոյն մահացուի, որ ՚ի կորուս-
տըն կարապետէ ։ Ո՛չ ետու հանգիստ քոյ
հոգւոյդ՝ ՚ի մարմնեղէնս տաղաւարի · ոչ
ընդ բնութի̃ շնչոյս խառնեցի զմահն շնոր-
հաց քումդ պարգեւի · իմոյս ձեռօք կոչեցի
կորուստ, ըստ առակողին, զհոգիս կենդա-
նի մահացուցանել ։

Է · Եւ զինչ է ինձ սակաւ և նուաղա-
գոյնս յօդել սահմանս կսկծելիս չափաբե-
րականս, մինչ անցեալ է ըստ քանակութի̃
և վրիպեալ ըստ բժշկութի̃ ։ Արդ՝ քո է
ընձեռել կեանս՝ հոգւոյ մեռելոյս, և ա-
նոխակալութ̃ մատչել առ այցելութի̃ դա-
տապարտելոյս՝ որդի այ̃ կենդանւոյ · քեզ
փառք յամենայնի · ամէն ։

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հրակոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի, 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ․

## ԲԱՆ · Դ

Ա · Եւ արդ՝ զի՞նչ բարւոք դեղ առ այս, կամ ո՞ր օգուտ ինձ առ այն սահման ընթացից ձայնիս հեծութեան՝ լքանել, և ոչ զամբարեալ չարաւ մահացու վիրիս՝ խարանաւ բանիս արտաքս հերքել․ և կամ զծանրութի սրտիս՝ մթերեալ ցաւոյս՝ հոգեկան խիթոյս, իբր տաղտկացուցանողական հնարաւորութբ, մատնամուխ զզուանօք փոխել։

Բ · Եւ քանզի ոչ գտայ արժանի պարծելոյ 'ի փառս՝ ընդ սբցն դաս, որոց լի են բերանք նց ծաղու՝ և շրթունք իւրեանց ցնծութբ, ըստ առակողին և սաղմոսողին, 'ի կարգն երկրորդ դիմեցից՝ զնմանն իմ ճշտակել համայն սատանօր․ թէպէտ առ իմում թերութե բարուց անբարեաց և նոքա յաղթականք իցեն, իբր ապաշաւեալն քան զանապաշխարն։ Զօնելի եղէ մանաւանդ, առ իմոց պարտուցս առաւելութիւն․ պատուեցաւ և փարխեցին, առ գժնէիս ամբարշտութի․ գովեցաւ անառակ որդին, առ անդարձիս ուխտազան

գութիւն • յիշատակեցաւ կեղծաւորութիւ
որդւոյն ամասեայ , առ անշնորհութիւն
տղախատութիս • օրհնաբանեալ եղև աւա-
զակն , որ դատախազն է անհաւատից •
պատուեցաւ և կինն պոտնիկ՝ սկզբնամայրն
ապաշաւողաց • Ո՛չ պակաս քան զփարա-
ւոն՝ զտեղծուած սրտիս իմ խստացու-
ցի • ըստ օրինակի խաւարու մրրկաց ծովա-
ծփեցայ • ոչ այնքան սորսեցի և պատկա-
ռեցի 'ի սաստկութենէ քումդ հրամանի ,
որքան ալիք ծովուն՝ յեղերացն ։ Ը՛նդ-
թիւս չափուց կշռութեան առ իմս գոր-
ծոց՝ և ատաղցյն կայ սահմանեցաւ • պա-
կասեաց անբաւուցն շիղջք , առ համբարս
իմոցս անօրէնութեանց ։

Է • Ոի թէպէտ և յոյժ բազումեն մա-
նուանքն՝ 'ի յափունս ջրոյն համահաւաք-
եալք , այլ՝ ուրոյնք և առանձնականք 'ի
ծննդոց աճելութենէ • իսկ մեղանք իմոյս
յանցանաց՝ անթիւք , զորս անհնար է առ-
նուլ 'ի միտ ։ Ոմն՝ և ծնունդք իւր • ոմն՝
և շառաւիղք իւր • ոմն՝ և բիծք իւր • ոմն՝
և արկածք իւր • ոմն՝ և փուշք իւր • ոմն՝
և արմատք իւր • ոմն՝ և հաստուածք իւր •
ոմն՝ և պտուղք իւր • ոմն՝ և նշխարք իւր •
ոմն՝ և ճուղք իւր • ոմն՝ և սերք իւր • ոմն՝
և արմկունք իւր • ոմն՝ և ճիրանք իւր • ոմն՝

և մատունք իւր · ոմն՝ և խլրտմունք իւր · ոմն՝ և զօրութիւնք իւր · ոմն՝ և աղտմունք իւր · ոմն՝ և նշմարանք իւր · ոմն՝ և ախտք իւր · ոմն՝ և մնացուածք իւր · ոմն՝ և տուերք իւր · ոմն՝ և մթութիւնք իւր · ոմն՝ և յարձակմունք իւր · ոմն՝ և հնարք իւր · ոմն՝ և սպառիքք իւր · ոմն՝ և գխտմունք իւր · ոմն՝ և գխմեցմունք իւր · ոմն՝ և չափք իւր · ոմն՝ և խորք իւր · ոմն՝ և գարշութիւնք իւր · ոմն՝ և կայծակունք իւր · ոմն՝ և կիրք իւր · ոմն՝ և մթերք իւր · ոմն՝ և գանձք իւր · ոմն՝ և ցնցուղք իւր · ոմն՝ և աղբերք իւր · ոմն՝ և գիւտք իւր · ոմն՝ և շանթք իւր · ոմն՝ և հրդեհմունք իւր · ոմն՝ և պատկառանք իւր · ոմն՝ և վէհք իւր · ոմն՝ և անդունդք իւր · ոմն՝ և բորբոքմունք իւր · ոմն՝ և աղջութիւնք իւր · ոմն՝ և ամպրոպք իւր · ոմն՝ և կայլակք իւր · ոմն՝ և հոսմունք իւր · ոմն՝ և հեղեղք իւր · ոմն՝ և սաւնամանիք իւր · ոմն՝ և դրունք իւր · ոմն՝ և շաւիղք իւր։ Հնոցն՝ և տապ իւր · հրատն՝ և գոլորշիք իւր · հալոցն ձուլոյն՝ և ձենձերմունք իւր · օշինդրն՝ և դառնունք իւր · կործանիչն՝ և հնազանդեալք իւր · բռնաւորն՝ և յեղուզակք իւր · գռուղն՝ և սպառազէնք իւր · աւազակապետն՝ և գումարտակք իւր · գաղանն՝ և կորիւնք

իւր · խածանօղն՝ և ծակոտուածք իւր · ա-
պականագործն՝ և նմանիք իւր ։

Է · Արդ՝ այսոքիկ պէտք են գլխաւորու-
թեանց՝ տպականողաց ոգւոց համայնից ,
տանեալք ընդ ինքեամբք նուաճութիւք մա-
անց իւրաքանչիւրոք 'ի սոցանէ՝ բիւրք
իւրուց՝ և հազարք հազարաց · իսկ զհա-
մայնիցս թէ նա միայն զօրէ իմանալ , որ
ու 'ի մէնջ չէութիւն գրեալ՝ իբր զէու-
թիւն գործոց տեսանէ ։ Նւ արդ՝ եթէ
ք զանձն ոչ խաբեսցէ , և առ երեսս ոչ
երպարանեսցի , և կեղծաւորաբար ոչ ան-
ւատեսցէ , և մարդ զինքն ծանիցէ , և
սարակաց բնութե փարեսցի , և երկրա-
ին զանձն դիտեսցէ , և'ի չափու իւրում
նանին կացցէ , իմասցի ծանիցէ՝ զնախա-
իւ մասունս արկածիցդ վերադրելոց ,
է ոչ ընդունայն ինչ գրեցի , և կամ ըղ-
նաւ խոկութիւն սահմանեցի , որ 'ի մերս
ութե պատուակլի աղգի աղգի փիլիսոփա-
ութիւն · այլ 'ի բիւրուցն արդասեաց
րեաց՝ չափ մի երևեցուցի , զի նորօք և
յլոն իմաստասիրեսջիք , թէպէտև ոչ
բաւանդակապէս ։

Վերստին յաւելուած կրկին հեծութեն՝ նորին հրա-
կողի , առ նոյն աղերս մաղթանաց բանի ։ 'ի խո-
րոց սրտից խօսք՝ ընդ այ ։

## ԲԱՆ · Է

ա · Լուղի մի՛ զփրկութեն վստահութ
իսպառ կորեցից , և ապաղէն եղ-
եալ՝ մատնեցայց այսքանեաց աներևութ
ընդդիմամարտից , որք ոչ այլ ինչ են , քա
թէ ընտանիք թշնամիք՝ ինքնածին բու-
եալք , զոր վերադրեալքդ սահմանեցին
զորքանութի պատկերին ձևոյ եղեալ ա-
հարկուս ։ Յուցից առ սմին բազմափոյ
բունութեան մարտկացդ՝ զօրեղ ախոյեան
ածականս՝ ամենայաղթօղս և անպարտե-
լիս , թէ և կսկծելիս կիրս՝ և դժուարա-
կութ պտուղս ծառոց անհասանելեաց ,
անկոխ ճանապարհաց երկք և տաժան-
մունք ։ Քանզի զոյն ամ դունդս չարու-
թեան բանսարկուին զօրաց , սակաւ մի ա
տօսր կաթուածոց աչաց՝ իբր զձձիս զե
ռուն բազմատանիս խնայթից երկրի տկ
խլրտմանց՝ անկեալ 'ի վերայ ծորումն ձ
թոյ , կամ դոյզն դեղ ինչ սստակչական
ցամաքեցուցանէ · և դոյզն մի հառաչու
սրտի հեծութեան՝ ելեալ 'ի յոդւոյ , ի
շնչումն հարաւային ջերմութեն՝ խառնեա

յորեւու , զսատանամանեաց սաստկութիւն հալէ . քանզի ըստ միումն նմանութե՝ հեշտածինք են . եւ ըստ միւսումն դիմադրութեան՝ դիւրամեռք :

Է . Այլ ես ոչ երբէք կասեցից զատել զդատապարտեալս՝ բանից կսկծմամբ . պարսել զպարտաւորեալս՝ իբր զչնաստակար անփրկանաւոր անհամոզելի . վա̃ զի զոմանս սաստկեալ ՚ի յիմոց նեղչացն , ոմանց զօրութիւն տամ կենդանանալ՝ առ հոգւոյս կորուստ : Տունկս դառնոստեան , որ ըղ գորշութի անառակ վարուց ծաղկեցի . բարունակս ապականաբեր եւ մահ ողկուզեան , որ զկորստեան գինին երկնեցի . քանանու զաւակս՝ եւ ոչ յուդայի , ըստ ասից [illegible]լին դանիէլի . որդիս գեհենին , եւ ոչ արքայութե . ժառանգս գժոխոց , եւ ոչ փառացն փափաքելեաց . նիւթս տանջանացն , եւ ոչ հանգստեան : Ապերախտս՝ առ երախտաւորդ . ապաշնորհս՝ առ բազմապարգեւդ . մի̃շտ մեղուցեալս՝ առ երկայնամիտդ . դառնացուցիչս քաղցրութե բարերարիդ : Վառայս չար եւ վատ , ըստ տէրունեան յանդիմանութեն . իմաստուն՝ չարիս գործել , ըստ եսայեայ նախաստութեանն . ժիրս առ ժանդագործութիս ըղձութեան : փոյթս առ ՚ի բարկացուցա-

դ

նել զմ͞րն ․ մշտաշարժս առ գիւտս սատա-
նայականս ․ հանապազորդեան վիշտս սատա-
ցողին ։ Խուղս առ բարեացն Թուխչս ․ Ծով
առ երանութ͞ին ընտրութ͞ե ․ գանձարս առ
զխոստմունս խոստացելոցն ․ անարխս առ կարի-
պխտանեացն և օգտակարացն ․ պաշտօնեայ
տիրադրուժ երախտամոռաց ։

Գ ․ Վա՜յ անձինս մեղաւորի , զի զարա-
րիչն իմ բարկացուցի ․ վա՜յ որդւոյս կո-
րստեան , որ զկենդանութ͞ին ձիր մոռա-
ցայ ։ Վա՜յ պարտապանիս անհամար բիւ-
րուց քանքարաց , որ ո՛չ գոյ հատուցանել ։
Վա՜յ բեռնակրիս ծանրութեան մեղա-
դժնէից , որ չունիմ դառնալ առ հանդըր-
տարարն ․ վա՜յ վաստակարիս տրունեան պար-
տուցն , որ չի՛ք հնար յանդիման լինել հը-
զօրին ։ Վա՜յ եղէգնախուխ կիզանող-
կանս նիւթոյ , որ տոչորելոց եմ 'ի գեհե-
նին ․ վա՜յ ինձ առ այս յիշատակ , զի նեղ-
բարկութե՛ն ո՞յ՝ այրեցելովք են գործեալ ․
վա՜յ յիմարութ͞եա , որ ո՛չ մտաւեցի զծած-
կեցելոցն յայտնութ͞ե հանդէս ։ Վա՜յ ան-
բարշախ , զի միշտ անդադար՝ սատայն-
չարեաց կկեցի ․ վա՜յ զմարմինս պարարող-
կերակուր որդանցն անմահից , կատաղաց-
Թունաւորաց զխմրդ համբերեցից ․ վա՜յ ին-
առ արբումն մահուն բաժակի , որո՞վ զայ-

ւխտենականն տուժեցայց · վա՜յ ինձ առ ելս անարժան հոգւոյս՝ յեղկելի մարմնոյս, ի՞բր դատաւորին Աշխարհի յանդիմանեցայց · վա՜յ ինձ առ նուաղութիւն իւղոյն լապտերաց, զի անարծարծելի է աղօտանալըն · վա՜յ ինձ առ ճեպ տագնապի ահին պակուցման, յորժամ առագաստին մուտն փակեսցի · վա՜յ ինձ առ ձայնին ահաւորութիւն՝ դողացուցչաց և սարսափելեացն բանից՝ երկնաւոր Թագաւորին իձաւակնքելոյն, Թէ ոչ գիտեմ զքեզ:

---

Վերստին յաւելուած կրկին հեծութեն՝ նորին հրակողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի: 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ:

## ԲԱՆ · Ը

ա · Աւարդ՝ զի՞նչ գործեցես՝ անձն իմ կորուսեալ, կամ ո՞ւր Թաքիցես, կամ զիա՞րդ ապրեսցիս, կամ ո՞րպէս ելցես 'ի մեղաց բանդէ: Քանզի բազում են պարտիքդ, և անթիւ հատուցմունքն · սաստիկ կշտամբանքն, և անվրիպան նախատինքն · անողորմ են հրեշտակքն, և անկաշառ դատաւորն · հզօր ատեանն, և անաչառ բեմն · քստմնելի սպառնալիքն, և

անողորմ հատուցմունքն • ահարկու հրամանն, և մերկապարանոց յանդիմանութիւնքն • հրեղէն են գետքն, և անանցանելի են վըտակքն • Թանձրամած խաւարն, և արտաքոյ այցելութեան՝ մառախուղն • ապականութիւն է գուբն, և մշանջենաւոր է տագնապն • ամենագրաւ տարտարոսն, և անզերծ սառնամանիքն։ Նա արդ՝ արդարև քեզ են գանձեալ դաւինքս այսոքիկ դըժնդակք, և տարժանելի օթևանք, անըմբերելեացդ պատուհասից, որ անարժան անձն իմ մեղաւոր՝ չարագործ՝ պոռնիկ՝ բազմաբիծ, և սահման անդաստանի բնաւին անմաքրութեան։ Նա՛ զարդիւնս գործոց ձեռաց քոց ժառանգեցես՝ Թիւրեալդ ՚ի յուղղութեց, և զառածեալդ ՚ի մաքրութեանց • տարագրեալդ յարդարութեանց, և ՚ի կարգաց պարկեշտութեց • ունայնդ ՚ի լիութեց՝ հոգեպարգև հարըստութեց • նախանձարկու բարերարին, և ամենակալ Թագաւորին։

Է • Եւ քանզի կառուցեր քեզ անել արդելան՝ և անփախչելի որոգայթ, խոստովանեա՛լ քեզէն զանբժշկականդ քո վէր, և զանօրինակդ հարուած, վկայելով զանձինդ զպարտականդ մահու՝ զանբուժելիդ բեկութի, որ չարդ ՚ի բարեաց, որ դառ-

նութիդ ՚ի քաղցրութենէ · ո՜վ խաւարդ ՚ի լուսաղբերից · ո՜վ կապտեալդ ՚ի պճնելոց · ո՜վ դսրովեալդ ՚ի գովելոց · ո՜վ ամբարիշտդ ՚ի բարեպաշտից · ո՜վ շնչականդ ՚ի բանականաց · ո՜վ անմիտդ ՚ի մտաւորաց · ո՜վ անհանճարդ յիմաստնոց · ո՜վ անմաքուրդ յընտրելոց · ո՜վ մահացուդ ՚ի կենդանեաց · ո՜վ խոհերականդ ՚ի ո՜ղջ · ո՜վ արբշիռդ ՚ի պարկեշտից · ո՜վ կեղծաւորդ յարդարոց · ո՜վ անպիտանդ ՚ի պիտանեաց · ո՜վ անարգդ ՚ի փառաւորաց · ո՜վ նուաղդ յառաւելութենէ · ո՜վ գերիդ ՚ի գերագունից · ո՜վ նուաստագոյնդ ՚ի վեհից · ո՜վ աղքատդ յընչեղաց · ո՜վ անարժանդ ՚ի փրկութենէ · ո՜վ տնանկդ ՚ի բարձրութենէ · և ՚ի հոգևոր հարստութենէ · և հատուածեալդ յօրհնելոց ։

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հրակոյն , առ նոյն ողբս մաղթանաց բանի ։ ՚ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ·

## ԲԱՆ · Թ·

ա · Եւ արդ՝ զինչ արժանաւոր ընդ քեզ բամբասանս շարադրեցից ՚ի կտակ մաղթանաց մատենի այսր ողբեր-

գութեան, ո՛վ անձն իմ թշուառ ամենապատկառ, և առ պատասխանիս բանից անբարբառ, անպիտան ե՛մ և ո՛րչն մասնակցութեան։ Ո՛ի եթէ զլի՛ մի ծովուց՝ 'ի յորակութի̃ դեղջ յեղեղեցից, և զդաշտս ապարխօք բազմօք սահմանեալ՝ 'ի տարածուծն լայնութեան քարտենի չափեցից, և զպուրակս յոքունց անտառաց՝ շամբից եղեգանց՝ 'ի հաստուածս գոյութեան գրչաց կազմեցից, և ո՛չ զթիւ մի 'ի բարդելոցն անօրէնութե̃ց՝ զօրեցից ընդ գրով սահմանի գրաւել։ Նազի՝ թէ զմայրս լիբանանու՝ 'ի մի լուծ կշռոց զօդեցից, և կամ զլեառն արարատեան՝ 'ի կէտ ամբարձման նժարի միոյ արդարութե̃՝ միջնորդկացուցից, ո՛չ հաւասարէ այնր հարթութեամբ համողուգակցել։

Է. Ուսս ամբարձուղէշ՝ ստուարամէզն՝ տերևալից՝ ունայն 'ի պտղոց, նմանակից յաւէտ հարազատ այնր թզենւոյ՝ զոր տէրն գօսացոյց. քանզի սաղարթօք վայելից, այս է՝ արտաքին դիմօք բարեշուք կերպից՝ իբր պսակաւ իմիք պաճուճեալ, բացականացն գոս բաղձալի. իսկ եթէ մերձեցցի անկօղն՝ խուզել զխնդրելին, գտցէ զքեզ ունայն 'ի բարեաց, և գարշելի 'ի գեղեցկութե̃ց, ծաղր տեսողաց, և նշա-

ւակութիւք Նախատողաց ։ Ո՜վ եթէ ա-
պաժաման՝ յանգգուշ ժամուն՝ հերապանծ-
տունկն պտղակորդս անկենդան, որ դոյն
պատկերն է անպատրաստից, եկն ընդ ա-
նիծիւք. և կամ երկիր ոռոգեալ ցօղով,
և ոչ բազմապատիկ՝ զաւանդս արդասեաց
երկրագործութե՝ տածողացն մատուցա-
նէ, լքեալ մոռանի. իսկ դու՝ ո՜վ անձն
իմ եղկելի, սահման բանաւոր և տունկ
կենդանի՝ և ոչ ՚ի ժամու իւրում պտղա-
ւոր. իբր ոչ զնոյն կրեսցես պատիժ Նախ-
նում առակից. Ա՜յ զի զհամայնն ընկա-
լար ՚ի քեզ՝ անպակաս յառաւելութեց,
սկզբնաւորեալ ՚ի մարդն առաջին՝ և մինչև
՚ի սպառումն ծննդոց նորին՝ զբերս գործոց
նանրութեց, և զգիւտս նորոգս՝ ատելիս
և անախորժելիս հաստողին զքեզ ոյ։
Գ. Աւ վ՜ զի եգի զքեզ նպատակ հան-
դէպ երեսաց տեսութե մտացս՝ անձն իմ
անպիտան, վիմօք ձգելոց արձանաց բանից՝
իբր զանընդել գազան վայրենի՝ անողոր-
մաբար զքեզ քարկոծել։ Որ թէպէտ և
ոչ պատահիմ անուանիլ արդար, սակայն
յառաջնումն պատասխանւոջ՝ իբր ընդ-
ոստխի ուժեմն՝ ընդ անձին յօժարամիտ
կամօք ոգորիմ, ըստ իմաստութեն բանի. և
զայգս մտաց խորհրդոցս գազանեաց՝ իբր

զգլխաւորեալ յանդաւորութի հարութե գործոց խոստովանեալ, քեզ տարածեցից ձ՛ձ իմ և տր: Ո՛վ ի որում չափով չափեցից զանձինս սոգտանք, ՚ի քոյդ աննուաղ գթութենէդ՝ այսրէն չափեցայց · ընկալեալ զշնորհդ յաճախագոյն՝ ըստ մեծագունիցդ պարտեաց: Իսկ որքան վիրացն հարուածք՝ անբժշկականք և անհնարաւորք ճարակեցին, այնքանեօք չափովք կրկին առաւելին՝ և խնամոք առուեստից բարձրեալ բժշկիդ՝ բարեհռչակեալ լուսաւորեսցին · և՚ի պարտուցն առաւելուի, նոյնքան փոխատուիդ առատատրուի բարեբանեալ միշտ պսակեսցի, ըստ խնկաւորդ քում առակի: Ո՛վ ի քո է փրկութի · և՚ի քէն է քաւութի · և աջով քո՝ նորոգութի · և մատամբ քո՝ զօրեղութի · և՚ի հրամանաց քոց՝ արդարութի · և յողորմութենէ քոց՝ ազատութի · և յերեսաց քոց՝ լուսաւորութի · և՚ի դիմաց քոց՝ զուարճութի · և հոգւովդ քո՝ բարութի · և օծմամբ իւղոյ քոյ՝ սփոփութի · և ցօղով շնորհի քոյ՝ զուարթութի · և դու տաս մխիթարութի, և մոռացուցանես զվհատութի · և բառնաս զխաւար վշտաց, և զհեծութի ողբոց՝ ՚ի ծաղր փոխես: Իսկ քեզ վայելէ օրհնութի գովութբ հանդերձ յերկինս, և յաշխա

հայրն՝ և՛ի ծնունդս նոցա, և յաւիտենից յաւիտեանս. ամէն։

Վերստին յաւելուած կրկին հեծութիւն՝ նորին հըսկողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի։ 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ։

ԲԱՆ. Ժ.

Ա. Արդ՝ քանզի միապէս մատնէ կորստեան՝ և զղջումն ուժգնապէս, և մեղանչելն մոլեգնաբար. զի թէև օտարացեալ իմն են 'ի միմեանց այլայլութիւք նմանութեցն, սակայն զկերպարանս երկաքանչիւրոցն առ միմեանս եդեալ, զմի և զնոյն վհատութե ծնունդս արտադրեն։ Զի մինն զհզօրին ձեռն՝ իբր անկար թերահաւատէ. իսկ միւսն՝ ըստ նմանութե քառատանեաց պաճարեղինաց՝ յանզգայս եղեալ, զյուսոյն առասան խզէ. վա որոյ ընդ առաջնումն միշտ փաղաքշեալ՝ հանապազ խնդայ սատանայ. իսկ երկրորդաւն՝ ըստ նմանութե լափլիզող դժոխորովայն գազանի, իբր կերակրով՝ արբեալ պարարի։

Բ. Արդ՝ իբր զգանեալ բազմահարուածեան հեծանաւ, և յափն մահու ժամանեալ՝ դդղն լինչ դարձումն ընչից

ընկալեալ, և յոգի կենդանի եկեալ, կաղ-
դուրեցայց՝ պատսպարեցայց՝ կանգնեցայց՝
յարեայց յանկենդանականս կորստենէ,
օժանդակեալ քո̃ ձեռամբն՝ որ գթածն է
յոյժ. 'ի բարերար յերկնաւոր հօրէն՝ փըր
կութե̃ և բժշկութե̃ պտուղ ընձեռեալ
ինձ մեղուցելոյս՝ ախտացելոյս՝ և մահացե-
լոյս։ Եւ սկզբնաւոր ողբերգութե̃ այսր
աղերսանաց՝ զհաւատոցն շինուած կառու-
ցից. քանզի և ոմն 'ի նախնեացն՝ սուրբք
զինեալ, փոխեցաւ ի կեանն յանմահականն
վիճակ վերին. զապաշխարութե̃ն դեղ ըն-
կալեալ, ապաշաւանաց թոշակաւն՝ զդրա-
ւականն անեղծութե̃ աստէն ժառանգեաց։
'Ի վեր քան՝ զորոց առաքեալ ընդ նմին
ցուցանէ, որք զհանդէսն մրցանակին յերկ-
րի կատարեալ, ապագայից և երկնաւո-
րացն յուսոյ հաւատացին, և անտեսիցն
ճոխութե̃ փարթամացան։ Իսկ զխրախոյս
տ̃րունի պաշտելի բանին՝ յիշեալ առ սմին,
զի ա̃մ ինչ հնարաւոր է այնմ որ հաւատայն։
Ի՛ զի՝ և զչափն ընտրականացն բարեմաս-
նութե̃ ո̃յ հաճելեացն՝ զննեալ ստանօր,
զայս պատկեր բանի ընկալաք նախնի գահ-
երէց, առ 'ի սրբութե̃ցն մուտ սովիմբ հան
դերձել. առանց որոյ և ոչ ո̃րն փառաց՝
զհուրսն առ մեզ հրաշագործեաց զօրուն̃ս,

եթէ ոչ նախ՝ լծակից խնդրեաց բարերա-
րութիւն խուրոյ զհաւատոն մեր . ուստի և
կեանս ընձեռել զօրէ ինքնիշխան բաւա-
կանութեամբ՝ առընթեր գոլով այ՟ . քանզի
հաւատք քո կեցուցին զքեզ՝ օրհնաբա-
նեալն այ՟ բերան վկայեաց ։ Քանզի ար-
դարև սեռն տեսութիւն , և կատարեալ
իմաստութիւն , և առ ած՟ ընտանութիւն , և
բարձրեալն ծանօթութիւն՝ հաւատոց մասն՝
երջանիկ և ընտրեալ անուն , որ յարաձգել
մնայ անվթար և անփակելի , պատուակից
գոլով սիրոյ և յուսոյ ։ Օն եթէ փոքու-
սերմանի գոյի՝ հատի մանանխոյ չափոյ
նուաստի հաւատք՝ զլերանց մեծուի փոխէ
զօրեղապէս 'ի սիրտս ծովու , ապա յիրաւի
ընկալաք զայն սկզբնաշաւիղ առաջնորդ-
կենաց՝ աներկմիտ պաշտօն առ ած՟ . որ
զապանիւն և զծածկեալն՝ առանց երկ-
բայութեան 'ի հոգւոյն աչս տեսանէ , երրոր-
դութեան փառաւորելի անուամբն պատուեալս
հաւատք՝ ընդ սիրոյն դասեալ և յուսոյ ։
Օն թէ՝ և զերկին հատուածս առանձ-
նաւորականս՝ 'ի մի և 'ի նոյն խորհուրդ դի-
տեսցես , յաւէտ մեծասցիս նոքօք 'ի յած՟ .
քանզի՝ թէ հաւատաս 'ի նա , և սիրես .
որով և յուսաս աներևութից պարգևաց
նորին ։ Նմա փառք յաւիտեանս . ամէն ։

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հըռ-կաղն, առ նոյն աղերս մաղթանաց բանին։ 'ի խո-րոց սրտից խօսք՝ ընդ այ։

## ԲԱՆ · ԺԱ

ա · Եւ արդ՝ ես յետինս դաւանողաց՝ ունայն 'ի բարեաց, նայեցեալ խորհրդով մտացս 'ի սկզբնաւորն իմ եղելութիւն՝ 'ի ձեռն ձեռին ստացողին իմոյ յանէից, յուսով հաւատամ յիքն անել զոր կամի։ Քանզի հաւատացի, վս որոյ և խօսեցայ խրատեալ պօղոսիւ, ուսեալ 'ի դաւթայ, թէ և արդ կենդանի մաղթանք նց այց լինին արարացէ · որք հաւատովք ճանաչել զնա, և զզօրութի յարութե նր, ըստ առաքելոյ, և զհաղորդութի չարչարանաց նր, և որ զկնի բերին ասացեալքն։ Կցորդ է սմին և յայժ նմանաւորիս՝ հաւատալն իսկալէս և 'ի նորոգս այս փոխադրութի, որ 'ի մեղացն 'ի քաւութի, և 'ի չարագործութե յարդարութի, և յանմաքրութե 'ի սրբութի, և յանքաւելեացս պարտեաց մահու յանցանաց՝ յանդատապարտն երանութի, և 'ի ծառայական կապանացս՝ յերկնաւորն ազատութի։ Քանզի զիա՞րդ ո՛չ արդեօք չքնաղ քան զբան՝ և 'ի մթութե երկեանութե խաւարի զտեալ՝

և աստուծով օժանդակեալ և օգնեալ սիրտ մեղաւորի, որ ընդ մարմնապէս ծիծաղելն առնմին հեծէ հոգեպէս։ Որ թէպէտ և յամբարձմանէ բարձրութեան գերագունիցն կայից, ստորասուզեալ ծանրութեամբ յանդնդային վհին խորխորատ գբոյն կործանման, նորագիւտ մեղօքն անջրբելեօք, ունի և նշխար ՙնշուլից՝ փրկութեան կենաց հպաւոր, իբր կայծակն լուսոյ պահեցեալ ՚ի միտս և յոգի. որպէս զհուրն նշանաւոր և զարմանաւոր թանձրամած՝ հրաշիւք մակարդեալ վեհին հրամանի՝ ՚ի յատակս ներքինս նիրհեալ ջրհորոյն։ Աստի և մեղուցելոյն իսպառ թաղծելոյ, և անկարութիւն բարւոյն բարձելոյ, և համարձակութիւն շնորհին լքելոյ, յուսալ վերստին անդրէն միւսանգամ նախապարգևիցն փառազարդութեանց դարձեալ հասանել. քանզի և յԱստուծուստ անդուստ հանդերձի և այս՝ ներգործիլ առ սոյնս. վասն զի սա զտուողին զօրութիւն՝ ամենահնար աւետարանէ։ Յոր խունկ հաճութեան մեծապէս հոտոտի Աստուած, քան յամենայն բուրումն անուշից, և քան ՚ի խառնեալն երբեմն աղացմամբ՝ ՚ի սպաս խորանին, որ է կերպարան անձանց խոնարհից զղջեալ բեկութեամբ՝ առ ՚ի միութիւն նոյն նմանութեան։ Ըստ որում հարցեալ

փրկչին ամենից՝ ցուցանս ախտացելոյս տե-
սանելեօք, հաւատա՞յք ասելով՝ առ այդ,
թէ կարող եմ առնել ձեզ զայդ . ո՛չ պար-
գևեաց աչաց նց՟ լոյս, եթէ ոչ նախ զհա-
ւատոյն գրաւ ընկալաւ : Վասնզի զի՛նչ
քան զմեռելութի՟ քառօրեայն դիոյն՝ առ
կենդանութի՟ մեզ անյուսագոյն, առ որ
կանանցն ժամանելոց ՚ի յոյս արարչին՝
հաւատոցն հանդերձանօք, անյապաղաբար
զփառացն նց՟ տեսին զհանդէս՝ ՚ի յեղբօրն
կենդանութիւն :

Է . Իսկ աստուածին անկապուտ շնորհին
մնացելոյ զկնի մեղանայն՝ հզօրագոյն են
վկայք : Նախ՝ ենովք . զկնի ահարոն . յետ
նց՟ դաւիթ . դարձեալ և պետրոս . ընդ որս
և փոքրն եղիազար, որ ՚ի մեծէն նց՟ ողոր-
մեալ՝ մեծագունիցն վկայեցաւ : Աւելորդ
է առ այս և բանն առակի անառակ որդ-
ւոյն . թողուլ զպոռնիկն՝ որ ՚ի տնէ գո-
վեցաւ . և զմաքսաւորն՝ որ ՚ի բարեգործէն
յիշատակեցաւ . և զաւազակն երջանիկ՝ որ
յարձակումն վերջին շնչոյն՝ հաւատովքն
պսակեցաւ . և զոր անքաւելին են պարտիք՝
զհաղորդեալքն սպանման մահու արար-
չին . առ որս և գլխաւորն ընտրելոց պօղոս՝
որ երբեմն նախնին էր անօրինաց : Զորոց
ամենք ծանօթութե՟ օրինին գրերեալք ,

անդրէն կանգնեցան բիւրապատկեան գերազանցութեամբ՝ քան զնախակրօնիցն առաւելութիւն։ Իսկ որ նախ քան զօրինակին տուչութիւն՝ զաւանդն պահեալ հայրենի, մերձաւորագոյն գոլ պատուիրանի սկզբնահօրն դաւանութեան, որ և զնախնեացն պարտիս ինքեան վարկուցեալ, զնորայսն՝ իւրովքն տուժեաց կրից տաժանմամբ․ ոչ քաւեցաւ միայն ծածկեալ ՚ի յերկրի, այլ չարչարելեաւն մարմնով՝ բանականաց բընութեան կենաց կարապետ՝ յաղթօղ զօրապէս բնութեան մահու փոխեցաւ։ Իսկ մանք ՚ի բուսոյ տհաս հասակին չարութեամբն յերկարաձգեալ, ՚ի կատարեալ տիս ժամանակին՝ ոչ ՚ի բարձրութենէն կայից հոսեցան, քան թէ ՚ի ստորնականաց թըշւառութեց դժնէից կենացս՝ ՚ի կամարն երկնից համբարձան։ Եւ թէ այն ժամանեաց կանխաւ՝ զօրացեալ ՚ի չարեացն դարձ, որ մինչև յոսկեղէն նիւթ յեղանակեալ հողոյս գոյութեան, և պատկերն արքունի՝ ՚ի պատիւ կերպիս մերոյ՝ նկարեալ արքունականն քանդակուածով, անկորուստ և անփոխադիր և յաղթօղ դաւաճանութեան զմերս ենթադրեալ բնութեան, ապա առաւել յուսալի է այժմ մերկապարանոց լուսաւորութեան անքօղ և անվերար-

կու՝ տերամբ քո՛ւ ուխտեալ․ որով և միշ
հաստատեալ պահի 'ի մեզ բանն Տրունի ,
ըստ մարգարէին ձայնի , ուխտ խաղաղութ
և կնիք հաստատութեան՝ առ հաշտարարն
միջնորդ՝ երկնային անմահ կենդանի և
մշտնջենաւոր բարեխօս։ Ապա ուրեմն ըստ
այսու կանոնի ճշմարտագունի , և անփո
խադրելի սահմանի , և արարչաւանդ պայ
մանի , համբուրեմ հաւատոց շրթամբք ըղ
պատկեր բանիս , և ակն ունիմ փառացն շը
նորհի․ քանզի արդարև յարդարացուցա
նելն զմեզ Տր՝ ոչ ոք զօրէ դատապար
տանել , ըստ առաքելական բանին
սահմանի։

Դ․ Այլ և այս անստուերագիր վստահու
պատան , կամ կործանեալս՝ կանգուն
Թշուառացեալս՝ յաղթօղ․ վրիպեալս՝
դարձն կենդանական․ ամենաթշուառ չա
րագործս՝ 'ի յոյսն․ մահու մատնեցեալ
'ի կեանսն․ ընդ ապականութե վաճառեալ
'ի ձիրն․ դժոխային գործովք գրաւեալ
'ի լոյսն․ ստորնասուէր անասնակենցաղս՝ յեր
կինս․ կրկին գայթակղեալս՝ 'ի վերստին
փրկութիւնն․ մեղօք կապեցեալս՝ 'ի հան
գստեանն խոստումն․ անբժշկական վիրօք
վարանեալս՝ 'ի դեղն անմահացուցիչ․ սատա-
նակեալս վայրագութե՝ 'ի սանձն հան-

դարտութե · սրտացեալս վարատականս՝ 'ի կոչումն · ապառուամ դժնդակս՝ 'ի հեզութիւնն · ընդդիմաբան լուտացօղս՝ 'ի ներումն ։ 'Ի Քս Յս, և 'ի Հայր նորին հզօր և ահաւոր, յանուն և 'ի կամս բարերարութե հոգւոյն Ճշմարտի · օրհնաբանեալ խնկութեն՝ և մի ածութեն՝ զօրուն և արքայութիւն, մեծութի և փառք՝ յաւիտեանս · ամէն ։

*Վերստին յաւելուած կրկին հեծութե՝ նորին հրակոչի, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։ 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ ։*

## ԲԱՆ · ԺԲ

Ա · Եւ արդ՝ քանզի յաւէտ յառաջնում զղջմանն՝ յուսահատութեն բանիւ լքայ, և տարակուսանաց հեծանաւն՝ 'ի մահ ձաղկեցայ, տատանօր 'ի յուսոյն կերպարան փոխեալ՝ յարդահատել համարձակեցայց, զերրորդութիւն որ կարդալով յօգնականութի ինձ մեղաւորիս ։ Որ և անդստին իսկ յօրհնաբանելն և 'ի դաւանելն զկենդանարարն ընաւեից ած, իսկոյն և կոչումն ընտանի ձայնի ահաւորութեան անուան շնորհաձիրն բարերարի, մահացե-

լոյս է կենդանութեան, ըստ մարգարէին Նախաճառութեան, թէ որ կարդայ զանուն Տեառն, նա կեցցէ։ Իսկ ես ոչ միայն կարդամ, այլ նախ հաւատամ մեծութեան նորին. ոչ եթէ վասն պարգևաց նորա մատուցեալ յողոք դեգերիմ, այլ իբր զկենդանութիւն խնկապէս, և զշնչոյ տուրևառութիւն հաւատոյ, տուանց որոյ ոչ է շարժողութիւն կամ ընթացութիւն. զի ոչ այնքան յուսոյն հանդուցիւ, որքան սիրոյն կապանօք բևեռիմ։ Ոչ ՚ի տուրսն, այլ ՚ի տուօղն յաւէտ կարօտիմ. ոչ փառքն են ինձ անձկալի, այլ փառաւորեալն է համբուրելի. ոչ կենացն փափագանօք, այլ կենարարին յիշատակաւ միշտ ճենճերիմ. ոչ վայելչացն տարփանօք հեծեմ, այլ հանդերձողին տենչանօք՝ յերիկամանց սաստի կականիմ. ոչ զհանգիստն խնդրեմ, այլ զհանգուցչին զերեսս աղաչեմ. ոչ հարսանարանին խնճոյիւք, այլ փեսային անձկութեամբ մաշիմ։ ՚Ի ձեռն որոյ զօրութեամբ՝ վստահապէս ակնկալութեամբ՝ վերագրեցելոցս յանցանօք բեռանց՝ աներկմիտ յուսով հաւատամ ՚ի կարողին ձեռն ապաստանեալ, ոչ քաւութեան միայն հասանել, այլ զնոյն ինքն տեսանել՝ յողորմութիւն և ՚ի գթութիւն և յերկնիցն ժառանգութիւն. թէպէտ և յոյժ եմ տարագրելի։

ե՟ · Տու որդ՝ բազում պատկառանօք ամա-
չեցելոց դիմաց կորուսելոյ, զմիջնորդ աղօ-
ման կափուցմանց երկակի շրթանցս՝ ար-
ժանավայել աղխիւ կարկելոց՝ առ անհա-
մարձակ լեզուիս շարժութ՟ի, նորոգեցից
'ի յերգ հառաչման պաղատանաց յեղանա-
կութենցս աղիողորմ հեծեծանաց՝ 'ի բար-
ձունս աղաղակելոյ:

Մաղթանք զօրաւորք՝ արհաւրաց գիշերոյն:

զ՟ · Անկայլ քաղցրութեամբ՝ տէր ամ՟-
հզօր, զդառնացողիս զաղաչանս ·
մատի՛ր դթութե՟՝ առ պատկառեալս դի-
մօք · փարատեա՛՝ ամենապարգև, զամօ-
թական տխրութ՟իս · բարձ յինէն՝ ողոր-
մած, զանբերելի ծանրութ՟իս · անջրպե-
տեա՛ հնարաւոր, զմահացու կրթութ՟իս ·
աւարեա՛ միշտ յաղթօղ, զխաբօղին հա-
ճութ՟իս · բացադրեա՛ վե՛րնային, զմոլելոյն
մաւախուղ · կնքեա՛ կե՛ցուցիչ, զկորուս-
չին ընթացմունս · ցրուեա՛ ծածկատես,
զմթանողին չար գամունս · խորտակեա՛
անքննին, զմարտողին դիմեցմունս:
Տեառնագրեա՛ քո անուամբդ՝ զլուսանցոյց
երդ յարկիս · պարփակեա՛ քո ձեռամբդ՝
զառաստաղ տաճարիս, գծագրեա՛ քո

տրեամբդ՝ զմուտ սեմոց սենեկիս · կեր-
պացո՛ զքո նշանդ՝ ՚ի հետս ելից մաղթո-
ղիս · ամրացո՛ քո աջովդ՝ զհանգստեանս
խշտի · մաքրեսցես ՚ի հաղբից՝ զծածկարան
անկողնոյս · պահեսցես քո կամօքդ՝ զտա-
ռապեալ անձն ոգւոյս · անխարդախ ա-
րասցես՝ զքո շնորհեալ շունչ մարմնոյս ·
կացուսցես շրջափակ՝ զպար զօրուդ երկ-
նայնոց · կարգեսցես ՚ի դիմի՝ ընդդեմ դի-
ւացն դասու ։ Տուր հանգիստ բերկրու-
թեան մահահանգոյնս նիրհման ՚ի խորուն
գիշերիս , բարեխօսութեամբ հայցուածոց
սրբոյ Ածածնիդ՝ և ամենայն ընտրելոց ։
Ամփոփեալ պարուրեա՛ զպատուհան տե-
սութեց՝ զզգայարանացս իմաստից՝ անզար-
հուրելի զետեղմամբ՝ ՚ի ծփական խռովու-
թեանց , կենցաղական զբաղմանց · անրջա-
կան երազոց , խօլականաց ցնորից , քիշա-
տակաւ քո քուսոյդ՝ անվնասելի պաշտպա-
նեալ ։ Եւ սթափեալ վերստին ՚ի ննջմանէ
ծանրութե՝ ամենազգաստ արթնութբ ,
հոգենորոգ զուարթութբ ՚ի քեզ արձա-
նացեալ , զայս ձայն մաղթանաց՝ բուր-
մամբ հաւատոց՝ քեզ ամենօրհնեալ Թա-
գաւոր փառաց անճառից , փառաբանո-
ղաց երկնադումար խմբից երգակցեալ՝
քերկնիս առաքել ։ Ո՜վ դու փառաւո-

ըեալ ես յամենայն արարածոց յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ Նորին հրակոզի, առ Նոյն աղերս մաղթանաց բանի, ՚ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

## ԲԱՆ. ԺԳ

ա. ՏՐ բարերար հզօր ահաւոր, հայրըդ բարի՝ ողորմութեդ շնորհի, որոյ անունդ իսկ մեծիդ՝ գթութի և զընտանութի աւետարանէ, քաղցր գժնէից և անգոհացողաց։ Ընդքեզ և որդիդ քո՝ իբրև զքեզ, զօրաւոր ձեռն՝ իբրև զքոյդ, անժամանակ տէրութեամբ ահեղ՝ ընդ արարչութեդ քում բարձրացեալ։ Դու հոգիդ Այ ճշմարտութ՝ բղխեալ առ՚ի քէն անսպառութբ, կատարեալ իսկութի գոյի, էութի մշտնջենաւոր. հաւասար քո Այ, փառակից որդւոյ քո տէրութբ։ Երրեակ անձնաւորութի՝ համայն անքննելին, տրոհեալ ՚ի դիմաց՝ ուրոյն զատուցմամբ. իսկ միաւորեալ համագոյութբ՝ Նոյնագոյ բնութբ տիրապէս՝ անշփոթ և անանջրպետ՝ միով կամօք և կցորդութբ. ոչ երկցութիւն ումեմն ՚ի

յուժեմն, և ոչ քթթել միական առ նուա-
զութ̃ի միոյն ժամանել, քան թէ պատ-
ճառ սիրոյ երկնայնոյ անստուեր լուսոյ՝ որ
առ մերն է ծանօթութ̃ի, միով պսակա-
սրբասացութ̃ անսկզբնաբար ա̃ծաբանել։
Քանզի արդարև վերաձայնելս այս խոս-
տովանութիւն երեքփառաւորեանդ դաւա-
նութեան՝ զվէմն հաւատոյ պետրոս երա-
նեայ․ իսկ զդատապարտելոյս անձն մե-
ղօք՝ բարեհրաման քո ակնարկութ̃ք, ով
խնդրօղդ գերելոյս՝ հրաշանորոգ արդա-
րացուսցէ։ Քանզի թէպէտ և քո՛ իցեն
պարգևք՝ և քո՛ ողորմութիւնք, այլ ոչ ՚ի
պարգևսն ես այնքան հռչակել, որքան
յողորմութ̃ն․ զի երկրորդն՝ զքոյդ յա-
ճախէ զփառս, իսկ առաջինն՝ զճգնաւո-
րացն յայտնէ զգործս․ զի պարգևք՝ վաս-
տակոցն են փոխատրութ̃ք, իսկ ողորմութ̃ք՝
մեղուցելոյս բարերարութ̃ք։

Է․ Եւ արդ՝ մի՛ զօրասցին մարդկայինս
գործք առաջի քոյոցդ շնորհաց՝ ա̃ծ գը-
թութեց, թէ և անդր իսկ իցեն քան զօ-
րէնս հասարակաց՝ բնաւորականս հա-
մանց․ այլ յաղթօղ եղեալ քոյդ երկայն-
մտութ̃, նուազ եղիցի առ քումդ մասին
ընթացք երկրածնաց։ Քանզի և որ մաք-
րութ̃ն պերճանային օրինականացն վատա-

հութիւնք, 'ի լուսաւորել քոյդ արդարութեան գուշակ ներկայիս, ամենանուաղ անձկութեան լքեալ հրեշութեան՝ յետնեալ, և յաւէտ ընդ տարագրական ողորմելոցն, առաւել նորա գտան կարօտեալ մարդասիրութեան։ Եւ քանզի ամենայն ինչ հնարաւոր է քեզ՝ բարերար, լո՛ւր պաղատանաց գոչման հեծութեան՝ որ կարդամս առ քեզ. ողորմեա՛, կեցո՛, և մարդասիրեա՛։ Զի քո է երկայնմտութիւն, քաղցրութիւն, փրկութիւն, քաւութիւն, և փառք յամենեցունց՝ յաւիտեանց ազգաց. ամէն։

---

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հրակողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի։ 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Աստուծոյ.

## ԲԱՆ. ԺԴ

ա. Պաղատիմ առ քեզ լուսոյ ճառագայթ. արքայ երկնաւոր՝ գովեալ անպատում, որդի անճառ մեծին Աստուծոյ. խոնարհեցո՛ զունկն քո՝ բարձրեալ բարեգութ՝ կենաց ապաւէն, նորոգ մերձեցեալ կրկին տատանօք 'ի հառաչումն նըւաղս ձայնի վիրաւորելոյս։

բ. Ո՛չ ցուցեալ է երբէք, եթէ աղաչեաց ըզքեզ 'ի ձեռն աւազակացն սրոյ խողխո-

ղեալն , քանզի կարկամեալ էր . ոչ ձայն պաղատանաց զկնի արձակեաց , քանզի անկռինչ էր . ոչ մատամբքն տատանելով՝ զաղէտ վտանգին յայտնեաց տեսողին , քանզի խորտակեալ էր . ոչ աչս կողկողագինս արտասուօք ողբոց՝ բարբարիդ յանդիման կացոյց , քանզի վնասապարտ էր . ոչ ՚ի պատգամ բանից միջնորդի՝ զողորմածին կամս հաճեցոյց , զի անայցելու էր . ոչ հայթայթմամբ խորտակեալ մարմնոյն արիւնհրանգ ներկուածով ձորձոց՝ զգթածին զսիրտ ճմլեցոյց , վ՟զի անյոյս էր . նա և ոչ ծննդովքն հաստատութ՟բ՝ իբր դարշապարաւ ոտին վարեցաւ , այն զի անյարիր էր . քանզի կիսամեռն աւել կենդանւոյն՝ սակաւ ինչ նուաղ է ՚ի մեռելութէ : Մանաւանդ զի ՚ի քոյոցդ խրատեալ բանից , և բարբարեալ քոյդ ողորմութ՟բ , և փառօք քո լուսաղարդեալ , ոչ միայն զի ոչ վերջացաւ ՚ի հակառակն քո ընթացից , այլ սատահակեալ ապստամբութեամբ՝ յիւր թշնամեացն թիւ յաւելաւ . ընդ նոսին դաշնաւորեցաւ , միաբանեաց ատելեացն քոց :

Գ . Իսկ դու՝ բա՛ղմապարգև , բա՛րերար , ա՛նոխակալ , ա՛մենակեցոյց , ոչ միայն զի ոչ պահեցեր զչարագործին մեղաց յիշատակ ,

այլ և ոչ բանիւ յանդիմանեցեր . ոչ ոտն հարեր անկելոյն , այլ կարեկցաբար մատուցեալ՝ զծայրագոյն ցուցեր զխնամս։ Ո՛չ քահանայապէս ըստ ահարոնեան տկար օրինին՝ զօրաւոր առ մահուն պաշտօն՝ դատապարտիչն անիծիւք և բռնալիր քարանցն ձգմամբ՝ 'ի խորտակումն խոցելոյն արագեալ մատեար . և ոչ ոպ ղևտականն կարապետային անկատարագործ՝ 'ի յերկուցն միջի բաժանեալ խորոց՝ հնոյն լռումն՝ և նորոյս սկիզբն , ունայն 'ի հոգւոյ յապաշխարանն հանդիսացեալ՝ զվիրաւորելոյն տեսեր զվտանգ , զի մի՛ սատակիչն օրինակութե տապարաւն արմատակտրաւ՝ զմահուն պաշտօն 'ի քեզ նկատեալ , յառաջ քան զփորձ առակայից սատակեսցի . այլ հեթանոսացն պահպան անուն ասորեստանեայցն , որք 'ի հրէիցն ընկալեալ զօրէնս՝ ամբողջ պահեցին , զոր նոքա մոռացան , նոցին կցորդեալ մարմնոյդ վերարկուաւ՝ մերակերպարան խոնութե , զաղատարարն գծագրեցեր զուեախս՝ առ օտարազգիսն . և ամծաբարդ ներգործութե անապականաւ՝ ձեռն կարկառեալ , յարուցեր զմարդն նախնի՝ մեղուցեալ 'ի մահ՝ խուրովքն ծննդովք։ Օտարմեցելոյն սիրտ բերկրեցուցեր , և զվհատեալն հաստատե-

ցեր, և զթշուառացեալն միանգամ՝ կրկին զուարթացուցեր։ Նուաղանին կենարար օծմամբն և բաժակաւն լուսոյ լցեր. Հացիւդ երկնայնով արարչականդ քոյին մարմնով՝ նոր յեղանակեցեր։ Վերակացութե̃ երջանկացն ազանց ընտրելոց՝ յանձանձեցեր, գրգեցեր, և խնամարկեցեր։ Հանդարտընթաց գրաստուն տածողութե̃՝ անզղուելի պահեցեր, մինչև յարկն լուսոյ ածեր։ Ի ձեռն երկաքանչիւրոց միջնորդաց՝ նախնեաց՝ և երկրորդաց՝ տուչութե̃ կատակաց կենդանականաց, մարդասիրապէս դարմանատրեցեր։ Եւ ոչ երբեմն ընդ մովսեսի՝ թևս տարածեալ արծւոյն օրինակաւ՝ ընկալար զնա, և՚ի հանգիստն հանդարտութեան՝ երկրին բարութե̃ առաջնորդեցեր. և զբանին կերակուր՝ ջամբեալ հրամանատարեցեր վարդապետութե̃ց։

Է. Եւ այդ՝ որ զընաւն ծայրագունին բարութե̃ լուսոյ՝ յա̃մի բովանդակապէս հրաշագործեցեր, զօգտողին զգանձ քեզ սեպհականեալ՝ զքո ստացուածն առ քեզ դարձուցեր, կեցո և զիս մաքրեալ՚ի մեղաց պարտեաց, որ ձրի պարգևես և անպատրաստից. ընդ որոց և ինձ տացես քաւութիւն և բժշկութիւն՝ բարեգութ, զօրեղ, անքննին, անեղծ, ահաւոր,

օրհնեալ միշտ յաւիտենից յաւիտեանս ․ ամէն ։

---

Վերստին յաւելուած կրկին հեծութե՛ն՝ նորին հրակողի , առ նոյն աղերս մաղթանաց բանի ․ 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ ։

## ԲԱՆ ․ ԺԵ

ա ․ Ձայն դարձեալ աստուստ վերստին առ նոյն հեծութի սրտիս վտանգի ինձէն մատուցեալ , սովին նուագաւ 'ի նոյն ոճ բանի՝ զամենապարգեւդ աղաչանեցից , տագնապեալ ոգւոյս վտանգիւ խռովաւ ․ իբր մեռեալ՝ կենդանւոյ անմահիդ մաղթեմ այ , խոստովանեալ ընդ փառացդ քո՝ զիմս անարգութի , եւ առ չարեօքս իմովք՝ զքոյդ բարութի ․ որովք յաղթեալ դատիմ՝ քան թէ բժշկեալ , եւ անմեղացեալ՝ քան թէ համարձակեալ , ուխտակորոյս աւանդամոռաց ։

բ ․ Ձայն կրկին առ ակն որ առին՝ որ ոչխարին տրուպն տարագացուցիւ , որ յետին անգգայութեանն էր մատնեցեալ՝ մոլորեալ , եւ 'ի լերինն՝ ուր ոչ է այցելութի , ընդ գազանականացն դիւաց՝ եւ կռոցն վայրենութե՛ թափառեալ , ոչ մերձաւոր դուլ

սակաւ մի հօտին . ո՛չ բան ունէի , որով և զցաւոցն աղէտ պատմէի . ո՛չ ձեռն ձգողական , որ համբոյն է ազդողական ։ Իսկ դու միայն գոլեալդ յոկզբանցն յաւիտեանց՝ և յարդի ծնելոցս , գտեալ ըստ մաղթանաց գոչման երգողին զիս զմեղուցեալս՝ յաննշոյլն մոլորութե , խնամողօրէն տեսչութբ կամաց՝ հովիւ կոչեցար . և ո՛չ միայն հոգացար , այլև խնդրեցեր . և ո՛չ գտեր միայն՝ հրա՛շագործ , այլ անճառելիդ բարերարութբ սիրոյ՝ 'ի կենդանարարդ քո յուս բարձեր , և ընդ երկնային զօրուն դասեցեր՝ 'ի հայրենիդ քո ժառանգութի ։ Իսկ արդ՝ դու հզօր՝ կենարար՝ օրհնեալ՝ այցելու գթածդ յողորմութե , եթէ զնա ընկալար զապաբանեալսն աղերսանաց , որ մինն՝ 'ի միջոց մահու սահմանի էր չարչարեցեալ , իսկ միւսն՝ ըստ անբանից անըզգայութեան՝ փտարանդի բացամերժութբ յանբնական վայրի վարանեալ , 'ի բաւուչ ձայնի բարբառոյ , որ անկերպաւոր աննշանական , ածային բարեխնամութբդ անտեսեցեր զահեզերահրաշն խնամողութի՝ առ կորուսելոյն մեծ թշուառութի , յայտնեաց վերստին և արդ գթութենցդ խորք և բարերարութենցդ հասանք՝ առ անօրինեալս առաւելութբ՝ վերադարձելոցդ օրինակուբ ։

Դու բազմօրինակ մահու պարտականս առ որ 'ի բարութեց խառնից քաղցրութեց՝ յատուկ համն չար · առ անդամն մարմնոյ՝ արժանաւորս համան · առ համաճարակ ամենաբոլոր ախտացեալ հոգիս վիրաւոր · առ հաւասարեալս անզգայութեց անաս-նոց · առ օտարացեալս յընտանութե ի-մաստնոց · առ աննմանս հանգունակից բա-նաւորութեց ։ Որ եթէ տարացոյց գոյր , ես առէի · թէ նմանակից գոյր իմ , պատ-մէի · թէ հանգունակից գոյր , ես ձա-նէի · թէ հաւասար գոյր , ես գրէի · թէ զուգագործ գոյր , ցուցանէի · թէ օրինակ գոյր , ես ազդէի · թէ յանցեալն , հայ-թայթէի · թէ 'ի ներկայումս աստ , ես յուսայի ։ Բայց քանզի անցեալ է ըստ օրինակ , և հրաժարեալ ըստ նմանութի , զոր միայն քո՛ է քաւել բժշկել և կենա-գործել՝ կենդանարար համայն մեռելոց՝ նորոգութիւ ախտաղերաց ։

Գ. Ոչ եթէ նոյն սրտի տեսութի՝ եր-ջանկին դաւթայ , անօրէնութի չարեաց բարձրացեալ ամի քան զգլուխ , և ըստ ծանրութեանց բեռանց դժուարակրելոց՝ յանցմունք մեղաց · իսկ որ առ իս կրկին սխալմունք՝ գերազանցէ քան զհեղեղին ջրակուտակ ախտաղերասոյղ ամենապա

ծովուն յորդութի, և գլխոց լերանց վե-
րադրէ: Նաև չնչեցէ՛ օդ քո քաղցրութե
իբր առ նոյին, և որ զերինս հալէ զօ-
րութի, ցամաքեցուցանել զշիղջս ջրակոյտս
բազմակոհակս՝ և երկրակործան խնոցս պար-
տեաց, և լեռնակարկառ բարձրութեան
մեղացս ամբարձելոց: Նա և համառօտեալ
զբան քո հզօր՝ ամենակար հնարաւորու-
թեամբ, հակիրճ հատուցմամբ, արասցես
ահա ես քաւութե, ըստ մարգարէին, առ
երկարաձիգս անօրէնութի. և ներելով իմն
յամառութե, ով երկայնամիտ ողորմած-
օրհնեալ՝ թողցես միանգամայն, բարե-
գործեցես խակայէս, հատցես բոլորովին
զանվճարելի պարտուցս զարժանահատոյց
տոկոսեացս տուժս տարժանակիրս: Նա զի՝
և չիք իսկ առ քեզ ցասումն սրտի, և կամ
բորբոքումն բարկութե, ով ոչ կրին նեն-
գութիք, և կամ նշմարանք մթութե. քանզի
կեանք են ՚ի կամաց քոց՝ և լոյս. և ոչ արա-
րեր զմահ, և ոչ խնդաս ընդ կորուստ մար-
դոյ ըստ դաւթի և սողոմոնի:

Դ. Եթէ մարդկան կարգեցեր զայս կէտ
սահմանի մեծի պայմանի՝ ՚ի բարեվճարկ-
քո կանոնաց՝ ոչ փոխատրել անդրէն չարի
չար, այլ եօթանասնիցս եօթն թողուլ ան-
դուստ ՚ի յուրուր զիւրաքանչիւր մեղանաց

զպարտս. և այդ բան առ մեզ, որ մինչ 'ի բնութե ունիմք բնաւորաբար ուղերձեալ զքիծս չարեաց՝ անհամար բիւրուց նորոգ-կայանելոց, որք օրինաւորին երեւին յան-դատաստան սահմանի՝ ամենաբոյս փշածին բնութես, ըստ անսուտ քո վկայութե, որ թէ՝ միտք մարդոյ 'ի խնամս չարի են արձա-նացեալ 'ի մանկութէ: Օ՛վ որ զկատարեալ մաքրութին ունէր՝ աւետարանիչն կենաց-բանին՝ Յովհաննէս, և զինքն ընդ հասարակաց բնութե ըծակցեալ, հաստատեաց զճշմարտութին քո՝ առ իմն սուտն յոյժ արդարացեալ. թէ ասեմք ասէ, մեղս ինչ մեք չունել, սուտ առնեմք զնա: Եւ արդ՝ կատարեալ է բան քո խնկեալ, և 'ի գլուխ ելեալ անպակաս 'ի սուգութէ՝ առ իմն մոլորութի և դժնդակ անիրաւութի: Այսորոյ խնայեա՛ յիս ողոր-մութե՛՝ քաղցրութե՛ ճաշակաց աղբիւր, միայն օրհնեալդ յամ յաւիտենից. ամէն:

---

Վերստին յաւելուած կրկին հեծութե՝ Նորին հրա-կողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի. 'Ի խու-րոց սրտից խօսք՝ ընդ այ:

## ԲԱՆ. ԺԶ

Ա. Եւ արդ՝ դու միայն ած երկնաւոր՝ բարձրեալ՝ բարեգործ՝ քո՛ է զօ-

րութիւն , քո՛ ներողութիւն , քո՛ բժշկութիւն , քո՛ առատութիւն , քո՛ են պարգեւք , քո՛ միայնոյ են ձիրք ձրի , քո՛ քաւութիւն , քո՛ պաշտպանութիւն , քո՛ հնարք անիմանալիք , քո՛ արուեստք անդատանելիք , քո՛ չափք անչափելիք . դու սկիզբն եւ դու կատարած : Վասնզի ոչ երբէք ստուերացուցանէ զլոյս ողորմութեան քո՝ խաւար սրտմտութեան . վասն զի ոչ ես գրաւեալ ընդ մասամբք ախտից՝ 'ի վերդ քան զբան : Պատկե՛ր անպարագիր՝ անդր քան զքննութիւն կշռութեան . անչափ լայնութիւն փառաց . անտարրափակ ընդարձակութիւն՝ հատու զօրութեան . անամփոփելի առաւելութիւն բացարձակութեան . անտկարանալի բարերարութիւն գթութեան : Դու դարձուցանես՝ ըստ մարգարէին , յայգ՝ զստուերս մահու . որ իջեր կամաւ 'ի տարտարոսն ներքին որդելականացն բանտի , յորում եւ մաղթանացն դուռն էր աղխեալ . եւ գերեալ անտի զմթերից կապուած՝ վտարանդելոցն հոգւոց , սուսերբ հրամանի յաղթական բանիդ՝ զկապ սատակման մահուն խզեցեր , եւ զմեղացն կարծիս ցրուեցեր : Դա՛րձ առ իս՝ որ զընդամ զընդանաւ վհիս՝ տղմասիդ գբոյս՝ յերկաթս մեղաց , վիրաւորեալ խոցմամբ սլաքաց՝ բանսարկուին նետից :

Ժէ. Տէր դու յամի՛ որդ բարերար, լցո՛
՚ի մէջ խաւարի, օրհնութեց գանձ, ո-
ղորմած, գթած, մարդասէր, կարօղ, զօ-
րաւոր, անպատում, անքննին, անճառ. բա-
ւական՝ ըստ ո՛րչն յակոբայ. անհնարինց-
ամենից՝ դիւրապատրաստ հնարաւորու-
թիւն. հուր ծախիչ զխոխուս մեղաց. ճա-
ճանչ կիզանող ընդ հանրական թախան-
ցանցութե խորհրդոյ մեծի. յիշեա՛ զիս
յողորմութեան քո՝ օրհնեալ, և մի՛ յիրա-
ւունս քո. ՚ի ներողութե քո, և մի՛ ՚ի հա-
տուցման. յերկայնմտութե, քան ՚ի հա-
ւասարութե: Եթէ կշռեսցես զմեղանաց
խոնց ծանրութի, ընդ քաղցրութե քո՝ և
մի՛ ընդ արդարութե. զի առ սակ նախ-
նումն՝ յոյժ է նուաղեալ, իսկ ՚ի ներհակ
վերջնոյս՝ յաւէտ ծանրակիր:

Ժը. Արդ՝ մատի՛ր առ իս՝ բարութի, որոյ
յունկանն բժշկութիւն՝ հակառակ քո
համբարձելոյն. բարձ ՚ի մեղուցելոյս ըղ-
հողմ մահու խռովութեանս, զի հանդի-
ցէ յիս ամենակալ հոգին խաղաղութե:
Եւ քեզ փառք յամենայնի, յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հըն-կողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի։ 'Ի խո-րոց սրտից խօսք՝ ընդ Այ։

## ԲԱՆ · ԺԷ

ա · Արդ՝ աղաչեմ զխնամակալդ վտան-գաւորաց տաժանելեաց կրից թախծութեանց հոգւոց մշտացելոց։ Մի՛ յաւելուր հեծութեանս ցաւ․ մի՛ խո-ցեր զվիրաւորեալս․ մի՛ դատապարտեր զպատժեալս․ մի՛ տանջեր զչարչարեալս․ մի՛ գաներ զհարուածեալս․ մի՛ գլորեր զանկեալս․ մի՛ կործաներ զդայթակղեալս․ մի՛ մերժեր զհեռացեալս․ մի՛ տարագրեր զհալածեալս․ մի՛ ամաչեցուցաներ զպատ-կառեալս․ մի՛ կշտամբեր զհարթուցեալս․ մի՛ խորտակեր զբեկեալս․ մի՛ խռովեցու-ցաներ զամբոխեալս․ մի՛ ալէկոծեր զըքա-ցեալս․ մի՛ սասանեցուցաներ զդողդողեալս․ մի՛ չփոթեր զմրրկեալս․ մի՛ կեղեքեր զդի-շատեալս․ մի՛ ջաղջախեր զբեկեալս․ մի՛ գօշեր զմոռմոքեալս․ մի՛ կուրացուցաներ զխաւարեալս․ մի՛ զարհուրեցուցաներ զապշեալս․ մի՛ խորովեր զխարշատեալս․ մի՛ մահացուցաներ զհիւանդս․ մի՛ բե-ռանց ծանրութեան մատներ զտկարս։ Մի՛ անուր յաւելուր կարկամեալ թի-

կանցս · մի՛ կրկնակի ողբումն՝ դառն հե-
ծութ̃ս · մի՛ ուժգնապէս վարեսցիս առ-
հողս · մի՛ սաստկապէս՝ առ մոխիրս · մի՛
անաչառապէս՝ առ ստեղծուածս · մի՛
աՀարկութեամբ՝ առ փոշիս ։ Ա՝ի ընդ
հարկանիր խստութ̃ մեծ՝ ընդ փոքրուս ·
լոյդ՝ ընդ ստորնականիս · բնութ̃ բա-
րիդ՝ ընդ ՚ի բնէ չարիս · ողկոյզդ օրհնութ̃՝
ընդ պտղոյս անիծից · քաղցրութ̃իդ խա-
կապէս՝ ընդ համայն դառնութ̃ս · փա-
ռաւորեալդ անփոփոխ՝ ընդ ամենեւին ա-
նարգիս · կենացդ նշխար՝ ընդ կաւոյս
զանգուածոյ · տէրդ տերանց՝ ընդ տղմիս
երկրայնոյ · աննուաղ լուութ̃իդ՝ ընդ չքա-
ւոր սարկիս · անկապուտ ճոխութ̃իդ՝ ընդ
անպատսպար տառապելոյս · անկարօտ բա-
րութ̃իդ՝ ընդ ամենաթշուառ աղքատիս ։
Քանզի ո՞չ ոք հասեալ յառաւօտ , և ՚ի
ծագման լուսոյն խիթայ մթանալ · և կամ
ընթերակաց կենաց , մահանալ · կամ ազա-
տութ̃ , և պարտաւորիլ · կամ շնորհաց , և
դատապարտիլ · կամ փրկութ̃ , և մատնիլ ·
կամ նորոգման , և եղծանիլ · կամ օրհնու-
թեան , և տարագրիլ · կամ բժշկութ̃ , և
վիրաւորիլ · կամ լուութեան , և նուաղիլ ·
կամ յաճախութ̃ հացի , և քաղցնուլ · կամ
գետոց հոսանաց , և պապքիլ · կամ մայրենի

գթոց , և նենգիլ. կամ խնամոց ա̃ծեան աջոյդ , և զզուիլ:

Է. Սու որդ` ընդ ախտացելոյն սատակապէս մարմնոյն բորբոքէ` հոգւոյս վտանգաւ և ես պաղատիմ, տէ՛ր` եթէ կամիս, կարող ես զիս սրբել: Ընդ աչացուացն նեղելոց` մշտագիշերն խարխափանօք` մեծականն ձայնիւ հառաչեմ. ո՛չ որդի անուանեմ դաւթի, այլ ծնունդ էիդ ա̃յ դաւանեմ. ո՛չ միայն ռաբբի կոչեմ, որ վարդապետացն է պատիւ կարծողական զխսկն գխտելոյ, այլ տէր երկնի և երկրի հաւատամ: Ո՛չ ձեռին միայն ձգմամբ հպաւորութե̃, ո՞վ բարեգութ ա̃ծ մերձաւոր, այլ 'ի բացեայ գոլով միջոցաւ մեծաւ` ակնունիմ զօրել քո բանիդ` առ իմ բժշկութիւն: Ո՛չ թէ ինչ խարոց կասկածանաց միջոցի բանի, որ երկմտութեանն կարծի նշանակ` 'ի մէջ արկանեմ կամելոյն և ողորմութե̃, այլ կամիս որպէս բարեգութ, և կարես որպ̃ զօրաւորիչ. ասա՛ բանիւդ, և բժշկեցայց: Ընդ հարիւրապետին հաւատոց` և ես լծակցեմ. ո՛չ` մինչ անձուկ միայն բացակայութեամբ հեռի լինելով խորան 'ի խորանէ, հաւատամ ազդել քո կարողութեանդ առ յարութի̃ և բժշկութե̃, այլ 'ի վերինն երկնի բազմելով,

և 'ի ստորինս երկրի բովանդակ առ հրաշից սքանչելութիւն՝ ոչ ունիմ հատուցանել:

Գ. Շնորհեա ինձ, ով դատակնիք բանին քո վճռեաց առ պոռնկին ընդունելութի՝ հնգից հարիւրոց դենարաց պարտուց շնորհաբաշխութի՝ ած բարութեց և տր երանութեց. որ յաճախն ընձեռել՝ բազում փառաւորիս, և 'ի շատն մատուցանել՝ նուէին չափ սիրիս. և յառաւելն ողորմել՝ կրկին բարգաւաճիս. և յայսքան բարիս՝ խրատամբք գովիս. և ամի տր գոլով՝ հաւասարորդ ճանաչիս. և որ զքոյորն ունիս՝ ընդ մերում կչռիս. և անճառելեաւդ ձրիւ՝ մերայնովքս վճարիս. և ընդ երկրաւորիս՝ զանվախճանն պարտ վարկանիս. և մեծագրեալ քո զմերն՝ վեհս գոհաբանիս. և 'ի սակաւուն տուչութիւն՝ դուղն փառաւորիլ ոչ ամբարտաւանիս:

Արա՛ և ինձ զնոյն գթութիւն՝ ունողիս զգործս անհամար պարտուց. զի և 'ի ճառըս երախտեաց քումդ պարգևաց՝ նորին իսկ սակով սիրելն կարգեցի. և քեզ փառք յամի, ամէն:

Վերստին յաւելուած կրկին հեծութեն՝ Նորին հրա-կոչի, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։ 'Ի խո-րոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

## ԲԱՆ · ԺԲ.

Ա · Արդ՝ ես ծնունդս մեղաց, որդիս մահացու երկանց, արդարև ան-սահման բիւրուց քանքարաց տուժից գոլ հատուցանօղ 'ի միում աւուր ։ Եւ ո՛չ թէ առ փոքրկութիւն մարդկային մտաց հայցեմ ներութիւն, այլ առ աննուազ լիութեն փրկչիդ յն քո պաղատիմ մարդա-սիրութեն · որ չէի երբեմն, և ստեղծեր · չմաղթեցի, և դու արարեր · չև ևս եկեալ 'ի լոյս, և տեսեր · ո՛չ յայտնեցեալ իմ, և գթացար · ո՛չ կարդացեալ, և խնամարկե-ցեր · ո՛չ համբարձեալ ձեռն, և նայեցար · ո՛չ պաղատեալ, և ողորմեցար · ո՛չ կերպաց-եալ ձայնիս, և լուար · ո՛չ հեծեծեալ, և ունկնդրեցեր · գիտելով զարդեան դիպ-ուածոյս, և չանտեսեցեր · նախահայեցող-աչօք նկատեալ զպատժապարտիս չարա-գործութե, և յօրինեցեր ։ Նա արդ՝ զքո արարեալս, և զքև փրկեալս, և զայսքան-եաց խնամոց յանձանձեալս՝ մի՛ խապա-կորուսցէ մեղացն հարուած՝ գիւտք բան-սարկուին · մի՛ յաղթեսցէ յամառութեն իմոյ մառախուղ՝ ներողութե քո լուսոյ ·

մի՛ սրտիս կարծրութեան՝ երկայնամիտ բարութիւնդ · մի՛ մահացու մեղիս՝ ամենակատարդ լրութիւն · մի՛ տկարութեանս նիւթոյ՝ անպարտելիդ բարձրութիւն ։

Է · Ահա կարկառեմ զկարկամեալ բազուկս հոգւոյս յանուն քո՝ հզօր, արտացեմս ողջ իբրև զառաջինն՝ մինչ 'ի դրախտին փափկութեան զպտուղն կենաց կթէի ։ Կլաշկանդեալ գօսացեալ 'ի կոր կործանմամբ ընդ կնոջն տագնապելոյ՝ կայ անուղղելի հոգւոյս թշուառութիւն, ընդ երկիր պշուցեալ մեղացն կքմամբ՝ ստնայական բուռն կապանօք, զի մի՛ զերկնայնոյ ընկալցի զողջոյն · խոնարհեա՛ց առ իս՝ միա՛յն ողորմած, զի բարձրացուսցես ըզփայտս խոնարհ բանաւոր անկեալ, և զչորացեալս ծաղկեցուսցես 'ի բարի կրօնս վայելչութեան, ըստ աստուածաբանութեան սրբոյ մարգարէին ։ Որպէս զ'ի ծնէ կոյրն անլուսաւոր՝ չունիմ տեսարան, որով զստեղծչին ընկատեալ զկերպ մաղթեցից՝ հզօր բարեգութ՝ միայն դու պաշտպան ակնարկեալ խնամովք անճառ քոյ սիրոյ՝ 'ի շնչական խօսուն քո անօթս, յանէից գոյաւորութիւն լուսոյ հաստատեսցես ։ Ընդ երկոտասանամեայ չարեօք չարչարեալ վշտագին կնոջն տանջեցելոյ՝ գետովք մեղանաց արեան

հեղեղիմ. հայեցա՛ց 'ի բարձանց անմատոյց
լուսովդ պարածածկեալ, ուր ո՛չ է քղանցք
ձեռաստեղծական վերարկուի ձորձոյ, այլ
տարածումն հրաշից՝ ամուրէք զօրացեալ:
Ո՛չ օծութեամբ իւղով՝ պատժապարտս ընդ-
մեղաւորին մատուցեալ առ կենդանածին
ոտից գարշապարդ՝ զկաթիլս աչացս՝ փար-
սիւք հերացս ընծայեցուցանեմ, այլ զամ-
բիծ հաւատս՝ ամբարձմամբ բազկացս՝ ըս-
տոյգ դաւանմամբ հոգւոյ ողջունիւ՝ շըր-
թանց կափուցմամբ զերկիր համբուրեմ.
խառնեալ հեծութիւն աղբերցս արտաս-
ուաց, բժշկութիւն հոգւոյս աղերսեմ:
Ստանեալ մեղանօք հոգւոյս դիւութիւն
լուծեալ մեղկութեամբ, և յերկուց կայից
միայնակողմամբ անհաստատ հետովք, զըն-
թացից գործին՝ նահանջմամբ չարին՝ ըղ-
հետևականն բարձողուի չինուածոյ մարմ-
նոյս՝ առ ելս ծառոյն կենսաւիթ պտղոյն
խափանեցելոյ, պատսպարեցե՛ս անդրէն
վերստին՝ միա՛յն հնարաւորդ առ 'ի փրկուի:
Օ փառաբանարան հաստուածոյ կերպիս
'ի քէն եղելոյ՝ ամրափակ խցմամբ համրա-
ցոյց արգել հողմ բանաւորկուին. հոգիդ-
քո ազդեալ մեծդ ողորմութեամբ, ըստ յա-
ւետարանին բժշկեցելոյ, հրաշափառապէս
բարեգործեցե՛ս բանդ կենդանի՝ ինձ

խօսողութի̃ անսայթաքելի։ Ընկեալ կամ չարեօք ՚ի մահճիճս ախտից ընկողնոց մեղաց՝ դի կենդանի և խօսուն մեռեալ, կարեկցեալ խմուս թշուառութե̃՝ ողբականօք դքուանաց ձայնից, ո՛վ բարերար որդի այ̃, օրհնաբանեալ աչացդ ցօղով վերականգնեցե՛ս ՚ի կենդանութի̃, իբր զսիրելին ՚ի յանշնչական մեռելութենէ։ Սոյգդառնացօղս ՚ի գբի մեղաց կամ տարակուսեալ, ձեռն մատուցեալ՝ ա՛րև անստուեր որդի բարձրելոյ, հանցե՛ս զիս ՚ի լոյս քումդնչուլից։ Ընդ աղխողորմ թշուառութե̃ կականման ձայնի՝ այրւոյն ՚ի Նային՝ մօր միամօրին, տատանմամբ մատանցն, կոծմամբ կրծից, հոսմամբ արտասուացն, տուայտանօք տխրութեան դիմացն՝ և ես պաղատիմ վերջին հեծութե̃ս, տո՛ւր յուսահատելոյս զքաջալերութի̃ մխիթարու̃ գթած քո բանիդ, ասելով և ինձ գովեալդ բարի ստեղծիչ աշխարհի, թէ մի՛ լար գերի՝ բազմաց ողբալի. որով ընդ պատանւոյն կենդանացելոյ՝ ՚ի վշտացելոյ ծնողին սփոփանս՝ զամենապարտ ոգիս ընկալայց ՚ի քէն ընդ նմին կրկին նորոգեալ։ Ընդ այսակիր անզգայելոցն՝ դիւայլուկ և քարակոշկոծ հեղձամղձուկ եղկելի անձանցն, քամնելի գխախուխ հերացն, վայրենեբես

բանդադուշելոցն՝ 'ի քէն ողորմեալ փրկիչ բոլորից, իբրև զնոսին առ քեզ դիմեցից. հերքեալ մերժեսցես զգունդս չարացն ապականողաց՝ 'ի քո խորանէս, զի ժամանեալ հոգւոյ քո բարի՝ այսրէն հանդիցէ. լցեալ զմարմինս մաքրութ՟բ շնչոյս՝ զզեցմամբ անդամոցս, զգա՛ստ արասցես զխելագարեալս ամենաթշուառ: Ընդ գերեցե՟լ դժոխաբնակաց վտարանդելոցն հոգւոց՝ արդելեալ կամ 'ի վտանգի. զճառագայթ ողորմութ՟ե փառաց քոց ծագեալ՝ լոյս իմ անձկութ՟ե, 'ի կապանաց օցառղին զերծեալ զիս ապրեցուսցես: Կաղանորդայթ անե րևութերակ վրիպակ արահետ գարշութ՟բ մեղացս ջրդողեցեալ ոգւոյս կերպարան, կայ 'ի տագնապի. զծածկեցեալն 'ի տեսողութ՟եց՝ զչարագործին նիւթիցն այսուցմունս, քո լինքնաւորդ զօրեղութ՟բ որդ՟ւոյ, դթածաբար առողջացուսցես: Օ բազմազան տարապս ցեղիցն զանազանից ախտաւորութ՟եց մահացուցանողաց իւրականօք կորստեան բերիւք՝ դժնդակարմատն շառաւեղօք հաստատեցելովք 'ի յանդաստանի անօրէն մարմնոյս, տարակորզեսցես 'ի ձեռն ձեռինդ ամենակալի. որ արօրադրըեալ միշտ՝ և մշակես զսահմանս հոգւոց առ բանիդ կենաց արդիւնաւորութ՟ի:

իթ․ Այլ քանզի անցաւ ըստ նմանութիւն օրինակութեանց յանցուածոցս մեր, ըստ ճարակօղն քաղցկեղի, առ ընաւ անդամս մասնաւորեալ զախտին տարածումն, չէ՛ք սպեղանի իւր խորայելի՝ առ անչափութի խարանացն մատուցանել․ 'ի խարսխաց բարձիցս մինչև ցափն կառուցման լրութեան անդամոցս չէ՛ առողջութի, այլ ամենևին անբժշկութի։ Իսկ դու՝ ողորմած բարերար օրհնեալ, և երկայնամիտ Թագաւոր անմահ, լո՛ւր պաղատանացս արդահատութեան սրտիս վտանգի, որ կարդամս առ քեզ տ̃ր 'ի նեղութեան։

---

*Վերստին յաւելուած կրկին հեծութե՝ նորին հըա-կողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի․ 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ̃․*

### ԲԱՆ․ ԺԹ․

ա̃․ Նայեա՛ց ամենահայեաց տեսութի կենաց բարութեան յուսոյ, 'ի մեծաբարբառ աղաղակ ցուցանել անձինս հեծեծանաց։ Ո՛նչափ մեծութի․ անուն ահաւոր․ բարբառ կենդանի․ լուր ցանկալի․ ճաշակ ախորժելի․ կոչումն պաշտելի․ բարութի խոստովանելի․ աղօթումն ընկելի․ իսկութի դաւանելի․ էութիւն

փառաւորելի • գթութիւն օրհնաբանելի , տէր յս̃՝ ընդ հօր քում գովեալ և երկրպագեալ , և ընդ հոգւոյդ սրբոյ բարձրացեալ և վերաձայնեալ ։ Որ միայն մարմնացար վասն մեր ըստ մեզ , զի արասցես զմեզ վասն քո՝ ըստ քեզ • լոյս ա̃մի յա̃մի ողորմած՝ հզօր՝ երկնային ։ Նու այժմ ըղլուծեալ և զխորտակեալ հողանիւթ անօթըս՝ ա̃ծօրէն հրաշակերտութբ̃ , աղաչեմ գլ̃թած , նորոգ հաստատեա՛ ։ Զքոյին պատկերս մեղօք հնացեալս՝ ՚ի քրոյս հալոցաց՝ կայծակամբ բանիդ , պաղատիմ առ քեզ , վերստին ձուլեա՛ ։ Զխախտեալ շինուածս քումդ հանգստեան խորանի մարմնոյս՝ պահպանաւ հոգւոյս , մաղթեմ բա՛րերար , ՚ի բնակութիւն քեզ մաքրագործեա՛ ։ Մ՟ի հատուցաներ չարեացն իմ գործոց՝ զնոյն փոխատրութի ։ Արբեալ եմ , ըստ մարգարէին բանի , և ո՛չ ՚ի գինւոյ • Թափեա՛ զմիտս անօրէնութեան՝ թմբրութե մահու բաժակիս՝ ազատարար հրամանաւդ՝ ամենակեցոյց , զի մի՛ զքոյդ քամեցից ՚ի վերջին աւուր յետնում հատուցմանն ։

Է • Արդար ես յիրաւունս քո , և յաղթող ՚ի դատաստանի • եթէ մահու մատնես , ճշմարիտ են գործք քո • եթէ դատապար-

տես՝ աստուստ սկսեալ զտանջողականն կշտամբութի, ստոյգ են հատուցմունք քո. եթէ յանդունդս խորոց սուզեսցես, թէ զկենդանութի շարժմանս բարձցես, թէ զբանիս զօրութի ունայնացուսցես, թէ զաչացս պատուհանս ստուերացուսցես, թէ զկենացն ճաշակ՝ 'ի քեզ ինքն ամփոփեսցես, թէ զհասարակաց կերակրոյս դարմանս բարձցես, թէ զաւուրցս հաստատուն համառօտեսցես, թէ ընդ իջման քաղցրութե ցօղոյ՝ և հուր տեղասցես, թէ 'ի լրութե բանի քո սովեցուսցես, թէ զականջացս դրունս խցցես, թէ զշնորհիդ ձիր կորեսցես, թէ զգետին յատակի ոտիցս սասանեցուսցես, թէ յանձկալի երեսաց լուսոյդ քո հանցես, թէ 'ի համօրէն աշխարհէ աստի հերքեսցես, թէ փայլատակմամբ հրոյ պակուսցես, թէ անբժշկական ցաւօք դատեսցես, թէ դիւաց չարաց մատնեսցես. թէ գազանաց ժանեօք մանրեսցես, թէ հողմով ցամաքն հոսեսցես, և թէ այլ ինչ նորոգ արարած տանջանարանաց կազմեսցես՝ չար քան զտարտարոսն, և սաստիկ քան զգեհենն, թունաւորագոյն քան զորդունն, տարակուսելի քան զխաւարն, երկիւղագին քան զխորխորատն, ողորմելի քան զմերկութիւնն,

վկայեմ անձամբ անձին՝ յոյժ պարտապան
գոլ սոցա ։

Դ. Եւ քանզի յաւէտ տպաւորագոյն են նմանութիք փոխադարձութեանցն՝ առ ազգակցութիւն մերձանոցս՝ իբր պատկերակիցք միատեսակք զուգաշաւիղք՝ նշանակիչք այսր խորհրդոյ, արդ կարեւոր է խոստովանել եւ յանդիմանել զերեսացն ծածկոյթս՝ առ ծանօթութիւն խնդրողին ։ Որք՝ զի ոչ ջերմն սիրով առ ընկերին կարիս մատուցայ, յիրաւի 'ի նախնումն վըտանգին տառապեալ սառնում ։ Եւ զի ոչ զցանկականն խոխտականութի սանձեցի, յարժանի կրեմ եղկելիս՝ զանզովանալի զկիզումն ։ Եւ քանզի ոչ սիրեցի զլուսոյդ աւետիս, արդար հատուցմամբ՝ 'ի մթութիւն ըմբռնողական միգին կորստեան՝ վրիպեալ դանդաչեմ ։ Եւ զի ոչ խարեցի զմանունս փրկութեցն յանցանաց, իբր անմիտասակարք վարկանելով, պատկանապէս 'ի խածանողականացն զազիրն զեռնոց՝ խըթեալ խոցոտիմ ։ Եւ զի ոչ ձեռն կարկառի առ կիրս վտանգաւորին՝ այց առնել նմին, 'ի դէպ իսկ՝ ըստ գծագրութե այսր օրինակի, ապականութեն գրոյ նուիրեալ մատնիմ ։

Ե. Եւ արդ՝ ոչ յատուսա ամենաբարի գանձուցդ՝ չարիս, եւ ոչ 'ի լուսոյդ

նշուլից՝ խաւար, և ոչ յապաւինութենէդ՝ գայթագղութիւն, այլ ես ինձէն կորստեան որդիս գտի զայսոսիկ. մեղանք անօրէնութեան իմոյ գանձեցին նիւթեցին զայսքանեաց բարկութեան մթերս հոգւոյ. իշխանին մոլորութեան հնազանդեալ, թողի զտեղի քո՛նին, ըստ գրոյն խրատու յանդիմանութեան. Եւ քանզի յայտնեցաւ յետուստ՝ գաղտնեաց աւականաց մարմնոյս անդամոց, և արկաւ զերեսօք կերպիս՝ անվայելուչ ստուեր ամօթոյս, ըստ մարգարէին առակի, ոդեղս ցուցեալ զիս ամենևին՝ իբր մերկացեալ խայտառակեցելոյ պոռնկի, ծագեա՛ յիս զլոյս քաւութեան՝ ա՛րքայ երկնաւոր. զի թօթափեալ զմեղաց փոշիս, ըստ աւետեաց ձայնին դարձելոցն ՚ի բաբելոնէ, նստայց վերստին կանգնեալ ՚ի հողոյ, և ՚ի հաստատութիւն յուսոյդ հիմնացեալ անսասանելի, ըստ եսայեան բանին, զգեցեալ զզօրութիւն բազկի կարութեան նախնում մաքրութեանն, վասն մեծութեան փառաց քաղցրութեան ամենապարգև քո աստուածութեանդ. օրհնեալ յաւիտեանս. ամէն.

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հրա-կողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի։ 'Ի խո-րոց սրտից խօսք՝ ընդ Ա̄յ։

## ԲԱՆ. Ի

ա̄. Տ̄Ր տէր՝ անոխակալ և երկայնամիտ, ներող՝ բարեգութ՝ հզօր՝ ողորմած. ահա̄ ճշմարտութի̄ւն են գործք քո, և խոստովանեալ դատաստանք քո. վկայեալ են ընտրութիւնք քո՝ տեսողդ ծածկութից։ Ընդ երից երջանկաց մանկանցն՝ որք կիզանողական բոցովն փորձեցան, և ոչ վնասեցան 'ի բաբելովնի, զնոցա թախծութեան զերգն հառաչեմ, մեղայ, անօրինեցայ, յանցեայ, ապստամբեցայ, և պատուիրանաց քոց ոչ անսացի։ Նա. քանզի մաքուր գոլով 'ի վնասուց նոցա, և զայս խոստովանութի̄ն գոչէին. իսկ ես ընդ նոցայն՝ նովին աղերսի ձայնակցեալ ասեմ ողբոց երգութեան, և այլ յաւելից՝ ամենապարտս մահու։ Ընդ դանիելի երանեալ և ն̄ր մեծ մարգարէի, որ 'ի քում հարազատութեան ազգականութե̄ տանն յուդայի՝ շառաւիղ ընտրեալ, զնորայն առեալ ընդունական և նուիրական բանից պաղատանս, խմբիս պատժականութեան գոչմամբ հեծութեանս՝ և այլ կրկ-

նեցից · 'ի մէջ գիտութեան՝ անպատշաճա-
կանս գնացի , զարտուղի սխալեալ դժըն-
դակապէս · այս է՝ ամիւ ամ իրօք մեղան-
չելն ։ Ըստ սահման կշռութեան կամաց քոց
արտաքս վարեցի · որ է հաւատոյ կերպա-
րան՝ բասիր անօրէնութեան ։ Անգիտացն
չափոց՝ չարութեան գործոց՝ լրումն յանձա-
խութեան նիւթեցի · որ է ճշգրիտ պատկեր
յանցաւորութեան ։ Սպառնացար , և ոչ
զարհուրեցայ · արգահատեցեր , և ոչ եր-
բեք լուայ · որ է ապստամբութեան յայտնի
նշանակ ։ Քեզ արդարութիւն հանդերձե-
ցեր՝ բարերար , և ինձ ամօթ և պատկա-
ռանս պատրաստեցեր · քեզ փառս վայել-
չականս , և ինձ նախատինս յարմարաւորս ·
քեզ քաղցրութեան յիշատակ , և ինձ մաղձ
քացախեալ 'ի կատարածի · քեզ բարեբա-
նութիւն անլռելի , և ինձ ձայնս ողբոց
աղաղակի · քեզ օրհնութիւն երգոց խնկե-
լի , և ինձ մերժումն տարագրութեան ան-
յուսալի · քեզ իրաւունս բազմարժա-
նիս , և ինձ պատասխանատուութիւն ամե-
նալիրանս · քեզ բարձրութիւնս ան-
ճառ գովեստից , և ինձ զաճիւն լռելոյ
պատիժ ձաղանաց ։

Է · Եւ արդ՝ ընկալար դու բարեաց ընտ-
րութեանց անկշիռ սահման՝ զքոյոցդ

ախորժականաց կնդրկաց պաղոց վեր առ-
նալ ըստ քեզ, և ես զխմյս սատէն առ-
ամէն պարսաւանս յոգունս՝ կրկնակի բարդ-
եալ ինձ ըստ իս։ Իսկ եթէ անարատիցն
ժողովանաց այս էր յանձնառութի, իսկ
ինձ զմիս հիւսեցից շարս և տողս բանից
դարձակաց, որ քան զմիմ գժնեայս՝ յա-
ւէտ վրիպեցայ։ Մոլորեցայ անառակ ըն-
թացիւք՝ 'ի մուտս վայրենիս. յանդգնեցայ
շրթամբք խօսից՝ 'ի բանս երկրաւորս. զա-
կատեցայ անկասելի՝ 'ի պատկառելեացն
գործոց։ Փքացայ, վերացայ, որ յետ սա-
կաւ մի ժամանակի՝ 'ի հող մահու եմ իջա-
նելոց. գոռոզացայ, բարձրացայ, որ և ոչ
զգրաւական հոգւոյս՝ տուրևառութեան
շնչոյս՝ ունիմ 'ի ձեռին։ Ամբարտաւա-
նեցայ փոշիս շնչաւոր. ամպարհաւանեցայ
կաւս ձայնաւոր. հպարտացայ հողս անար-
գութե. 'ի վեր ամբարձայ մոխիրս մերժե-
լի. բաղուկ կառուցի բաժակս մանրելի։
Ծորածեցայ առաւել քան զվեհ, և դարձ-
եալ քան զհեղքեալ առ իս ինքն ամփոփե-
ցայ։ Բարկութեն բոցով ցոլացայ տիղմ
բանաւոր. քան զանմեռ ոք մեծամտեցի,
որ ընդ քառատամնեաց մահու եմ փակեալ։
Խիրկս արկի կենցաղոյս սիրոյ, և 'ի քեզ
թիկունս՝ փոխանակ դիմաց դարձուցի. 'ի

թուխս մնաց՝ ընդ խաւար խորհրդոց սլա-
ցայ · զանարատ հոգիս՝ մարմնոյս փափ-
կութե̃ յաւէտ վառեցի · զզօրութ̃ի աջա-
կան կողմանս՝ ակար արարի , անհեկանացս
կայից ուժգնութիւն տալով՝ յաղթեցի ։
Օ՜ քեզ խակ տեսի հոգացեալ վ̃ո իմ , զոր
չէ՛ ասա գրելի , և ո՛չ պատկառեցի · իբրև
զհաւ վայրենի որացայ , ըստ ովսէեան բա-
նին առ եփրեմ , 'ի նախնին իմ սովորութ̃ի ։
Յաղօթարանն վայրի՝ ընդ պատարագմունս
այսր կենցաղոյս շրջանակեցայ · ո՛չ կայուցի
յամին զերիվար մնացս՝ երասանաւ բանին ։
Ընդ հին չարութեցն՝ նորոգ ինքնատեղ-
ծութ̃իս գտի · անուրս , ըստ յոբայ , ծա-
նուանս և անտանելիս՝ ինձէն ինձ̃ սաստկա-
ցուցի · տախտած անկարկատելի , ըստ երե-
միայի , զանձն իմ արարի · իբր զլժած
անգրելի կօշման , ըստ առակարկուին , 'ի
մարդկանէ համարոյ եղծայ · իբր զհան-
դերձս ինչ ապարահից , ըստ եսայեան բա-
նին , զազրացայ · որո̃ զթրծեալ աման խե-
ցեղէն՝ փշրեցայ անարծարծելի · ը̃ բամբա-
սանացն եղուկ 'ի մարգարէն , զշրըրորդ-
չափն անօրէնութե̃ սաստկման՝ ինձ̃ պատ-
րաստեցի ։ Նոյն զինչ սաւութ̃ի առ այս՝ և
զայս յաւելուլ ընդ այս · քանզի զվրանն
խակ դիւանուէր մողոքայ՝ առի ինձ̃ այս-

րէն՝ առ դժոխոյն ժառանգութի՛, լքեալ զերկնայինն՝ յեղանակաւ իմն օրինակի նըմանակիր ձեւակերպութ՟, ո՜վ առակ պատկերի սատեղն ռեփանայ բաբելականի՝ յիսրայէլէ պատուեցեալ ցուցաւ ՚ի սինայ ։

Գ . Իսկ արդ՝ զի ՚ի նախնի շնորհին համարձակութենէ դարձեալ՝ փոխեցայ , զրկեցայ , ելայ , հեռացայ , բաժանեցայ , և անպատուաստելի կորեցայ , արդ ընկա՛լ զիս տէ՛ր վերստին կերպարանեալ ՚ի պատկեր հոգւոյ , զանարժանս կենաց՝ իբր զմահապարտ . իբր զչարագործ . իբր զպատկառեալ . իբր զկոխան եղեալ բանաւորութին . ո՜վ զանբժշկելի մանրեցեալ . ո՜վ զհասեալ յատակս մահու . որ՜վ զգարշեցեալ . որ՜վ զխոտան գտեալ քո կոչմանդ . ո՜վ միանգամայն ՚ի կորուստ վարեալ . ո՜վ դեգերեալ . ո՜վ վանեցեալ . ո՜վ տարակուսեալ . ո՜վ թշուառացեալ . ո՜վ վհատեալ . ո՜վ կործանեալ . որ՜վ խորտակեալ . որ՜վ բեկեալ . ո՜վ զթաղծեալ . ո՜վ յոգի տրտմեցեալ . ո՜վ թշնամանեալ ։ Իսկ դարձեալ ակնարկելով քո՝ գը՛թած , մա՛րդասէր , հէ՛զօր , ՚ի յաղէրս բանիս՝ որ՜վ զզղջացեալ . որ՜վ խոստովանեալ . որ՜վ ՚ի յոյս քո դիմեցեալ . որ՜վ զապաշխարեալ ։ Որ կշռես՝ գրես՝ և մեծհամարիս զհառաչ հոգւոյ , և զաղաչումն

չնչոց հեծութե՟ . զկսկիծ շրթանց , զպաղա-քել լեզուի , և զախրականութի՟ երեսաց . զկամս խորհրդոց , և զյօժարութիւն խո-րութեան սրտից ։ Որ փրկութի՟դ ես ան-ձանց , և տեսող՝ ոչ գործեցելոց . և ստեղ-ծիչ բոլորից , և բժիշկ վիրաց աներևու-թից . պաշտպան յուսացելոց , և բարե-խնամօղ ա՟ր ամենեցուն ։ Եւ քեզ փառք յա՟մ , յաւիտեանս . ամէն ։

---

Վերստին յաւելուած կրկին հեծութե՟՝ Նորին հըս-կողի , առ Նոյն աղերս մաղթանաց բանի ։ 'ի խո-րոց սրտից խօսք՝ ընդ Ա՟յ ։

## ԲԱՆ . ԽԱ

Ա՟ . Եւ քանզի ես ինձէն անձամբ իմով ինքնագրաւ 'ի մահ՝ ոչ կացի եր-բեք 'ի յոտս մարդոյ , և ոչ սիրտ բանա-կանի ստացայ , ըստ գրոյն ։ Եւ քանզի ոչ փոփոխեցայ 'ի նախակարգելոցդ , և ոչ ընդ բարուք ուղին ընթացայ , ընդէ՞ր ոչ զխոստորնական հետոցն խաւարայնոց զդէ-մըս ցուցից՝ 'ի սահման կարգի այսր ըն-թերցուածոյ ։ Ու որս ածեալ յարմար-եալ առ սոյն՝ զկերպարան տեսակի բանիդ երեսաց , ըստ վերագոյնդ նշանակելոյ՝ ան-փոխադրելի պահելով , խոստովանեցայց

վերստին դարձեալ աստանօր զմնացեալ չարութեանցն զըխծս , զոր յաջորդաւդ է իմանալի ։

Է . Օտար ժանտագործս արժանապատիժս ածեցուն արարի գնացիք անսաստութեան զգունդն բելիարայ ։ Կողքաւս կայթից՝ և ցոյցս վաղից՝ խաղալկացն դիւաց դարշելեաց ճարտար խաբողաց՝ ծուլութիւս իմով շնորհեցի ։ Պանս գաղտնիս՝ և խոցուածս անյայտս՝ ՚ի կործանեցելոցն դահճաց ընկալայ ։ Ո՛չ հերքեցի զվանեալն խաչիւն քո , քան թէ անդրէն առաւել կրկին իսկ զօրացուցի ։ Վասն իմոյ հէքս անօրէնութե՝ անուանդ քո հայհոյի ՚ի մէջ այսականաց , որք վն իսրայէլի՝ ՚ի մէջ հեթանոսաց ։ Հարուածս հարուածոց՝ մխասակարս ապականուենց ժանդոյ և թրթրոյ՝ և այլոց կերչաց վատնողաց զծաղիկ հոգւոյս , ըստ սրբոյն յովելեայ հրաշական ողբոցն , որ ՚ի ցոյցս երկրի վասն իսրայէլի՝ յառակս հինից և չարաց հոգւոց , յիս ինքն անկեցի . ստեղծանել զնն պատրաստեցայ , քան թէ սատակել ։ Իւրս կոտեալ հաւաքեցի անձին իմում՝ մարտիկս մահաղէնս . կշտամբիչս ինձ գոյացուցի՝ անիրաւս և անպատկառելիս . ներհակս ինձ զօրացուցի՝ ապառումն և անկռուելիս .

գտանիս ինձ առ ի մասունս՝ ընդ քաղց-
րաւենեացն ճաշակաց ․ առ ստացողն՝ միշտ
նենգաւորս , և առ բանսարկուն՝ յաւէտ
հաւատարիմ ։ Ո՛ւմղ աղէտիս , վիշտ վը-
տանգիս , խաւար ամօթոյս , մութ պատ-
կառանացս ․ զիա՞րդ և առ բանիս յանդի-
մանութեան համարձակեցայց ․ մեծ է ձայնս
գուժի , և անբերելի բողոքս աղաղակի ։
Քանզի թէ զհոգիս էր զիմ տեսանել ,
ոգեղս՝ և նուաղս՝ և ամենևին ներգե-
եալս , ցաւովք հեծութեանս՝ ՚ի վերջինս
վարեալ վարանումն , և մրճոտեալ աղտեղ-
եալ գունով զազրութեան՝ իբր զպաշտօնա-
տար մեհենի ․ վասն զի նոյն է սպաս տա-
նել ձուլեալ պատկերի՝ և մեղաց ախտի ։
Արդ՝ ես գնացի ընդ այս ճանապարհ կո-
րստեան հետոց խաւարի ․ եւ առ զբաժինն
քո ցանկալի՝ յանապատ անկոխ , ըստ մար-
գարէին՝ որ առ քահանայսն իսրայէլի ամ-
բաստանութեան ։

Դ ․ Ու զիա՞րդ ասացից անձին իմում մարդ-
գրեալս ընդ անմարդիս ․ և իբր անուանե-
ցայց բանական՝ անբանիցն յիմարութեան
կցորդեալ ․ և որպէս կոչեցայց տեսանողա-
կան՝ մթացուցեալ զլոյսս որ յիս ․ և
ընդէ՞ր համբաւեցայց զգայական՝ զիմա-
ռիցս դրունս փակեալ ․ կամ որո՞վք ցու-

ցայց տպաւորութի̃ նկարագրութե̃ անեղ-
ծին շնորհի՝ անձամբ ինձէն յոգի մնհաց-
եալ․ նաև ոչ շարժողական, և կամ շնչա-
կան ունիմ անուանել, թող թէ հոգե-
կան, կամ մտաց ընդունական․ անպխտանս
՚ի թիւս անօթոց․ անարգս ՚ի քարինս որ-
մոց․ արհամարհեալս ՚ի կարգս կոչեցելոց․
վատթարս ՚ի յազգս հրաւիրելոց․ արհաւ-
րօք մահու պակուցեալս, անխրախուսելի
՚ի բոլորեցունց՝ ցաւովք և տանջանօքն
եղէմի, ըստ երեմիայի բանին խրատեցեալ
պակասեալ աւուրցս՝ ՚ի հեծութէ, և ըն-
թացք ամացս՝ ՚ի հառաչմանէ, ըստ նուա-
գարանաց երգողին։ Իբր ասուի ՚ի ցեցոյ՝
և փայտ ՚ի յորդանէ, ըստ իմաստնոյն բա-
նի, ՚ի խիթմանէ սրտիս հալեցայ․ իբր զու-
տայն սարդից մաշեցայ, ըստ սաղմոսողին,
և խոտան գտայ․ իբր զամպ առաւօտեայ՝
և զցօղ վաղորդայնի, ըստ մարգարէութեան
ձայնի, սպառեցայ։ Այլ ոչ ՚ի մարդ ոք
ունիմ զյոյս, եթէ անիծեալ ՚ի տեսանո-
ղէն՝ անյուսադրելի վհատիմ․ այլ ՚ի քեզ՝
տէր իմ ոգեսէր, որ ընկղմեալ ՚ի քոյդ-
գթութեանց բարեաց անբաւից, և ՚ի բնե-
ւելոյն ժամու ՚ի խաչին մաղթեցեր մեծ-
ողորմութեան առ հայր քո բարձրեալ՝ քո
չարչարողացն։ Արդ՝ շնորհեա ինձ յոյս

քաւութեան՝ կեանք և ապաւէն · և 'ի տուր
ընչիս թշուառի՝ առից զոգիդ քո բարի ։
Եւ քեզ ընդ Հօր՝ Հոգւովդ սրբով՝ զօ-
րութիւն · յաղթութիւն, մեծութիւն և փառք
յաւիտեանս · ամէն ։

---

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հըն-
կոզի, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։ 'Ի խո-
րոց սրտից խօսք՝ ընդ Աստուծոյ ։

## ԲԱՆ · ԻԲ

Ա · Արձեալ այլաբանեցից՝ 'ի նոյն շա-
րունակ՝ բարդեալ զկշտամբանացս
եղանակ՝ դրոշմեալ անձինս, ածեալ մա-
տուցեալ՝ կրկին կացուցեալ նովին պատ-
կերաւ 'ի նոյն պայմանի · թերևս գրեսցէ
ինձ ամենագէտն՝ զայս յանդիմանութեան
դատակնիք՝ կսկծեցուցանողականս բանի՝
ճշմարիտ խոստովանութեամբ համայնից գոր-
ծոց՝ գաղտնութեանց չարեաց ։

Բ · Ոչ ոմն ձիս խոնարհական՝ կարծրբերանս
սանձակոտոր արձակերասան · յովանակս
անհամբոյր՝ վայրենական և անկրթական ·
երինջս աւազական՝ անուղղական և ան-
վարժական ։ Մարդս մոլեգնական՝ տա-
րագրական և կորստական · մանուկս մե-
ղանչական՝ անխրատական և վարատական ·

ատեանս մահապարտական՝ տարտամական և անգործական. բանականս անասնական՝ գազանական և անմաքրական։ Զիթենիս ամայական՝ անպտղական և կործանական. մարմինս հոգւոյս իմ թախծողական՝ դատողական և տանջողական. խոցեալս անբըժշկական՝ անխնամական և անկանգնական։ Ոսկի շարս կայսերական՝ արդ վատնական և անգտական. ծառայս սխալական՝ փախստական և թշուառական։

Գ. Ահա ես ինքն ինձէն կամաւորապէս անձնամատն և մարմնակործան, հոգեկորոյս և միշտ մտախաբ, կամակոր իսկ՝ և սրտաբեկ. ուշամոռաց և հանճարազուրկ. զգայազրկ և իմաստապատառ. յայրատատես և եղեռնալուր։ Ես սաստուստ և անդուստ ընաւիւք բորբոքմամբք մահաբեր երկամբք չհասեալ, ոչ միով իւիք տեսութե ՚ի գործ ընտրութե. քեզ պխտանացուս՝ տէ՛րդ բոլորից, ողբամ զորովայնըն, որ երկնեաց զիս. աշխարեմ զստինսըն, որ դիեցուցին. ընդէ՞ր ոչ մաղձ մակարդեալ ընդ կաթինն ծծեցի, և զիա՞րդ ոչ դառնութիւն ինձ ընդ քաղցրութե՝ ջամբեալ մատուցաւ։ Ոի եթէ ես ինձէն անձին իմում դժնեայ դատախազ համբարձայ այսքանեօք բանիւք, և ունիմ

տակաւին զսուր բարկութեան անխոնար-
հելի, ո՛վ դք 'ի յերկրածնաց տանի զիս ո-
ղոքեսցէ. զի՞մ խայտառակեցից. զբնա-
կութիւնս դատեալ տուժեցից. զհամօրէն
զաստակարացն զգունդ՝ դանեցից. զխո-
ցողացն զինուորութեանց դատախազեցից.
զգայականացն գլխաւորութիւնս կշտամբեցից։
Ո՛ եղա՛յ ամիւ յամի, ողորմեա գը՛թած.
ոչ նոր ինչ գտեր յիս զյանցանացս պարտ-
եաց մնաւխուզ, այլ նոյն եմ յաւէտ նո-
վին պատահմամբ պարտաւորութե, ան-
կցելի ձորձով սխալեալ առաջի քո՝ անփո-
փոխելի, և դու միայն խնկայես գթած-
օրհնեալ մարդասէր, ընդաջմէ խոյս փըր-
կութե կանխեալ ներութե անայլայլելի։
է. Ո՛րդ՝ մատն խնամակալ՝ հզօր՝ երկ-
նաւոր՝ բարի՝ ամենից հասարակ յոչէից
զմանիդ զօրութե իմաստից կայծակն՝ 'ի
գործի ազդման լեզուիս շարժութեան,
առիթ մաքրութե յամենուստ զգայակա-
նաց գայաւորութեանց յիս մանաւորելոց՝
քո ձեռակերտից. սոքօք առ 'ի քեն եղե-
լովք և բժշկելովք, կրկին հանդերձանօք,
անպակաս ձայնիւ, անհատ բարբառով,
քեզ վերընծայել գոհաբանութիւն 'ի
փառս մեծութեան հօրդ քոյ ո՟յ մերոյ,
յաւիտեանս. ամէն

Վերստին յաւելուած կրկին հեծութեն՝ նորին հառաչողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի. 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա՟յ:

## ԲԱՆ · ԻԳ

ա · ՏԷՐ ա՟ծ ա՟մի, զօրաւոր յա՟մի. անպարագիր և անվայրափակ տեղի ա՟մցուն. բոլոր խնկութբ՟ հուպ յամենեսին. անուրեք վայրից, և չէք սահման տուանց քոյ: Ո՛չ երևեալ երբէք, ոչ տեսականութի տուանց քո ծագման՝ լուսաւոր: Փառք ահաւորութե. անուն անհասութե. կոչումն մեծութե. ձայն անբաւութեան. խնկութիւն անքննութե: Անմատչելի հեռաւոր, և անընդմիջելի մերձաւոր: Տեսօղ հեծութե. նկատիչ թշուառութե. մօտակաց թախծութե. ամենաբուժ հնար անճարութեան. հայր գթութեանց. ծագօղ ողորմութեան. ա՟ծ մխիթարութեան:

բ · Հայեաց տ՟ր ողորմութբ՟՝ 'ի պատկեր վշտաց դառնութեան բազմավտանկ կրիցս կարեաց, զոր հանդէպ քո տարածանեմ. կցորդակից լեր բժշկապէս, և մի՛ 'ի խոյզ ընտրութեան կոչեր դատաւորաբար: Արդարև մեծ է վտանգ տարակուսանաց ցաւոց այսր վարանման, յորժամ իցէ մարմինն մեղօք գրաւեալ, և անձն՝ 'ի գործոց

չարեաց ոչ մեկուսացեալ․ գործնականացն գործի՝ սովորութ̃ն կարեաց կապեալ․ զանգուածն հանդերձանաց՝ մահացու կըրիւք շաղախեալ․ զգայութ̃ի սրտին խմաւոյ՝ խեթիւ խոցոտեալ․ ակնկալութիւն բարեացն՝ ընաւին բարձեալ․ և՚ի բանականութ̃ն՝ ընդ անասունս դասակարգեալ․ և զազնիւ գարշութ̃ի՝ ընդ գթութ̃ն շարամանեալ․ և տեսականացն ողջ ելով՝ խմանալիքն վիրաւորեալ։ Իսկ ՚ի սատակութ̃է յանցանացն յիշատակի՝ յաւէտ յուսահատեալ․ և տագնապաւ նախագործելոցն՝ միշտ տարակուսեալ․ և յատակութ̃ի աղերսին՝ իսպառ պղտորեալ․ և խղճիւ մտացն յուղմանց՝ կրկին ճենճերեալ։ Իսկ ձեռն ՚ի մաճի գործոյն՝ զյետնոցն հետաղօտեալ․ և կերպ ՚ի յառաջ դիմեալ՝ ուր ՚ի վերջ կոյս յետահարեալ։ Իսկ գիտութ̃ր էիցն՝ ՚ի չէիցն միշտ խաբեցեալ․ և՚ի մտացն մարտ՝ ՚ի փոքունցն յաղթահարեալ։ Իսկ ՚ի թաւանչ սրտին՝ հագագին դուռն հրթեհեալ․ և խոնաւ զօրութ̃ի քմացն՝ ա̃մ ուրեք տոչորեալ, և անարև միգով՝ յա̃մ մասանց պարփակեալ։ Իսկ լայնութ̃ի ակնկալութ̃ն՝ ամենևին իսպառ ամփոփեալ․ և անբերբերեացն տղմ՝ ՚ի զգալին տապալեալ․ և եղկութիւն կորստեանն՝ ՚ի յուշ անդ-

եկեալ. և դատակնիք հատուցմանն՝ 'ի դիւանի մտացն գրեցեալ: Այլ բարերարին ակն՝ 'ի ցասումն իմն երևեցեալ. և լոյսն բնութե՟՝ զանկուածոյ հողոյս զայրացեալ. և աչաւորութիւն էին՝ ընդ փոքրկութի բնութենս ընդհարեալ, և միշտ որոտմամբ բանից՝ բանաւոր մոխրոյս բարկացեալ, և իրաւանցն վճռօք՝ զարժանիս մահու կոչկոծեալ: Այլ որ իմն է տաղանդ՝ յանառակս աստէն կորուսեալ. և պատուական իւրն ստացուած՝ իբրև անարգ յերկրի թաղեալ. և տաժանմանցն արգասիք՝ ծուլութեանն մթով ծածկեալ, և իբրև զ'ի բաց բարձեալ նշմարան ճրագի՝ չերևեալ: Այլ պատասխանարան լեզուիս՝ յիրաւանցն օտար՝ կարկեցեալ. և անհամբոյր շրթանցս դրուն՟ք՝ օրինաւոր դատմամբ պապանձեալ: Այլ յուզմունք մտացս՝ 'ի զանազան մասունս ցնդեալ. և զկեալն 'ի վե՟ր օգտին՝ ոչ ինչ գիտացեալ. և 'ի կշռութիւն բարւոյն ընտրութեան՝ յիմար երևեալ. և ընթացք ելիցն՝ նհանջմամբ չարին խափանեալ. և վառարան իւղոյն՝ ածիւնովն հնոցի լցեալ: Այլ անուանս գիր՝ 'ի կենաց մատենէն եղծեալ, և կշտամբանք ընդ երանութե՟՝ անդ արձանացեալ:

Է. Եթէ զինուոր տեսանեմ, մահու ակն

ունիմ. եթէ պատգամաւոր, խստութն. եթէ մատենագէտ, մուրհակի կորստեան. եթէ օրինաւոր, անիծից. եթէ աւետարանական, փոշւոյ ոտիցն թօթափման. եթէ բարեկրօն, յանդիմանութն. եթէ ապաւում, կսկծման: Եթէ ջրոյն ընտրութեան փորձիմ, խորտակիմ. եթէ դեղ ինչ դառնման ձգեմ, սատակիմ: Եթէ բերս նկատեմ բարուն, 'ի կարծեաց չարեացս փախնում. եթէ ձեռն համբարձեալ, կորանամ. եթէ փոքր ինչ խրատուիլ, սարսեմ. եթէ սակաւ մի թնդիւն, ընդոստիմ: Եթէ 'ի խրախճանս ըմպելեաց հրաւիրիմ, դողամ. եթէ մեծ իդ յանդիման լինիմ, սարսափեմ. եթէ 'ի հարցումն բանի կոչիմ, կարկիմ: եթէ իրաւամբք քննիմ, համրանամ: Որդ՝ այսքան ամենաթշուառ և ողորմագին տարակուսանացս՝ 'ի վերայ միմեանց բարդելոց, որք զատորև զգայականաց սըրտիս գթութեան 'ի ներքուստ անտուստ անբժշկական ցաւօք՝ աներևակի ներտիւք խոցոտեալ, անտարաբերելի մշտակիր յարանց համապաղամուխ բևեռեալ ատուստ ընդ հոգւոյս, լցեալ չարաւով՝ հրկին հարուածով, վտանգ սատակման մահու գուշակէն: Խաւարախ մթերից՝ պատեալ զերկաթով գաղտնեացս ծածուկք՝

ազդեն ինձ տագնապս՝ վէրս պահեալս անխնամարկելիս՝ ընդ ելս շնչոյս տուրե-առութեան. յորոց նեղութեց չարաչար ծնշեալ աղաղակ ձայնիս, խառնեալ ար-տասուօք՝ կողկողագին թախծանօք հոգ-ւոյ, բարեգործիդ հնարաւորութե՛՝ յերկ-րաստեղծիցս նահատակաց ընդ իմ՛ մաղթո-ղաց, վերջին հեծութե՜ս եւ ես ընդ նոսին արտասուօք ողբոց ամենեքումբք նուիրո-ղօք՝ զաղերսանս ըղձիցս՝ 'ի սորնայնոցս աստի յերկինս առաքեմ։ Ո՜ շնորհեա՛ տէր անդորրութի՛ կենաց հանդստեան՝ ողոր-մելի վաստակեցելոյս 'ի յընդունայն երկ-րագործութի՛ս, համայնդ յամենայնում. ամենայնիւ ստացեալ քեզ փառս։

---

Վերստին յաւելուած կրկին հեծութե՛՝ նորին հրա-կողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի. 'ի խո-րոց սրտից խօսք՝ ընդ Այ.

## ԲԱՆ · ԻԴ

ա. Եւ արդ՝ որո՞վ խնդրոց արժանա-ւոր վարկանելով զիս, մաշիմ աղերսել, արքայութեանն յորմէ վրիպե-ցայ, եթէ փառացդ վայելչութե՛՝ յորմէ զրկեցայ. թէ կենա՞ցդ անմահականաց՝ յորմէ հերքեցայ. թէ ընդ հրեշտա՞կն

պարականցութե՟՝ յորմէ տրոհեցայ․ թէ ընդ-
արդարոյն մասնակցութե՟՝ յորոց ձեղքեցայ․
թէ ուռ որթոյն կենդանւոյ՝ յորմէ քան-
ցեցայ․ թէ ոստ տնկոյն բերկրութե՟՝ յորմէ
գօսացայ․ թէ ծաղիկ փառացն շնորհի՝
յորմէ թափեցայ․ թէ պանծանացն ժա-
ռանգաւոր՝ յորմէ կորացայ․ թէ հայրենի
ծոցոյն հարազատ՝ յորմէ ընկեցայ․ եթէ
զգեստուն լուսոյ պարծիմ՝ յորմէ մերկա-
ցայ․ եթէ ՚ի սատացօղ դարձին յուսացայց՝
յորմէ խորթացայ․ եթէ ՚ի լուսոյն իղձս
դիմեցից՝ յորմէ մեկնեցայ․ եթէ յիսուսի
յանկերյն յօդիմ՝ յորմէ մերժեցայ․ եթէ
՚ի թևս նորա մերձիմ՝ յորմէ օտարացայ․
եթէ յապաւէնն ապաստանեցայց՝ յորմէ
խեթացայ․ եթէ ՚ի փրկութե՟ն նորոգութե՟՝
յորմէ մահացայ․ եթէ ՚ի զգաստութե՟ն
զուարթութե՟՝ յորմէ ես լքայ․ եթէ ՚ի
կանոնն կենացն ուխտի՝ յորմէ փոխեցայ․
եթէ ՚ի սահմանն հաստադրական՝ յորմէ
սահեցայ․ եթէ յանշարժ վիմին պնդութե՟՝
յորմէ սասանեցայ․ եթէ ՚ի շարս գումար-
տակին՝ յորմէ հոսեցայ․ եթէ ՚ի քաղաքն
անդրանկաց շինիմ՝ յորմէ գերեցայ․ եթէ
հանապազորդեան հացին աղօթեմ՝ զոր
ո՛չ վաստակեցայ․ եթէ փոխադրութե՟ եր-
կանցն խնդրեմ՝ յոր ո՛չ քրտնեցայ․ թէ

պարգեւօքն պսակեցայց՝ յոր չհանդխա-
ցայ. թէ արձան ինձ կենաց գրեցից՝ յորմէ
ջնջեցայ. թէ զերախտեացդ ձիր յիշեցից՝
զոր միշտ մոռացայ։

Է. Ո՛հ հատաւ եւ կամ խզեցաւ լար կենաց յուսոյն. տխրեցայ 'ի բոլորտութենցն գարշութենէ, համայն ախտացեալ՝ ամե-սպառեալ մարմինս՝ ապականութին շրջապատեալ՝ մեռոյց ոգւոյ։ Պոյզն պալար՝ փայլունակ աղեղ լինացեալ, մնացուած ինչ պահեալ նախանձակ երկդիմի կերպին, որ զերկլին անմաքրութին նշանակէ. պարծանացն նշոյլ՝ ամենեւին ինձ շիջաւ. փրկութին մատնեցաւ. բարին ստուերացաւ. եւք կենացն՝ բնաւին փակեցաւ. մխիթարութին բարձաւ. դատաստանին ատեան մերձեցաւ. թոյնք մահուն ինձ արծարծեցաւ. սպանեալն՝ կրկին ինձ կենդանացաւ. լաստին դադարք՝ վիմօք խցաւ. շաւիղն յուսոյն՝ կուրացաւ. շնորհին ծածկոյթ՝ յինէն մերկացաւ. փառացն վայելչութի՝ ստուերացաւ. հանձարին առաջնորդական՝ խափանեցաւ. կշտամբանացն փուշ՝ բազմացաւ. անօրէնութեն ուղէշ՝ ծաղկեցաւ. բոց գեհենին ինձ՝ բորբոքեցաւ. ծառայութեն լուծ՝ սաստկացաւ. տարկութեանն կապ՝ զօրացաւ, ունողն

յարկին կառուցման՝ ահա անկաւ · բարձ-
րութեն վստահարան՝ կործանեցաւ · ըն-
տանութեն միաւորութի՝ անջրպետեցաւ ·
սրբութեն սիրող հոգին ա̃յ՝ տրտմեցաւ ։
Է · Ու քանզի զվերջինն համբուրեցի
դառնութի , տանջանս՝ խէթս՝ տխրութիս ,
վիշտս հոգեկանս , ցաւս անխնամորկելիս ,
տարակուսս անյուսադրելիս , ամօթանս ան-
պարուրելիս , խայտառականս անվերար-
կելիս , պատկառանս անհամարձակելիս ,
փախուստս անդառնալիս , հալածանս ան-
մարդասիրելիս , երկայն ուղեորութեան՝
ապաձեռն անթոշակութիս , իսկ դու փըր-
կութի զօրութի և օգնութի , ողորմութի
լուսաւորութի քաւութի և անմահութի՝
տէ՛ր յ̃ս ք̃ս , որդի ա̃յ կենդանւոյ , արարիչ
երկնի և երկրի · որ ընձեռես ջուր պաս-
քելոցն՝ 'ի ծարաւուտ վայրս անապատի ,
օրհնեալ , բարեգութ , հզօր , մարդասէր ,
երկայնամիտ , խնամակալ , հնարաւոր , այ-
ցելու · պաշտպան աննախանձ , պահապան
յաղթօղ , կեանք անկորուստ , միջնորդ-
երկնային , լիութի աննուաղ , երանութի
տօնելի · ձեռն ձգեալ սիրոյ՝ ողորմութե
քո աջոյ՝ ընկա՛լ և մատո՛ քաւեալ և սրբե-
եալ զիս զամենապարտս՝ բանդ կենդանի՝
առ հաւասարապատիւ քո · հօրդ , զի քե

վերստին հաշտեալ՝ յիս դարձցի։ Իսկ ՚ի ձեռն քո՝ խուռն կամօք մաքուր նուիրեալ՝ զօրեղն ինքնութբ զիս հօր ընծայեալ, անդէն առ նմին՝ նովիմբ միշտ ՚ի քեզ շնչյս ողջունիւ կապեալ ընդ շնորհիդ՝ ՚ի քեզ միանալ անբաժանելի։ Որոյ քեզ՝ ընդ հօր քում հոգւովդ սրբով՝ երրեակ անձնաւորութեդ՝ ՚ի միում բնութե և ՚ի մի ածութեան՝ փառք, և ՚ի ստեղծականաց էից՝ գոհաբանութիւն, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

Վերստին յաւելուած կրկին հեծութե՝ նորին հըսկողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի։ ՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

## ԲԱՆ · ԻԵ

ա · Բայց քանզի ՚ի վերայ այսքանեաց դերութեանց ամենաթշուառ վտանգաւորիս՝ մի զմխոլ ել և ես առնելոյ, զոր զկերպարանս անցիցն՝ ՚ի մասնէ վերաճառեալքդ նախագրեցին. ուստի և փոխեալ զեղանակ բանիս՝ այլ ոչ զեղկութիւն աղէտիս։

բ · Այն զի ծով է ինձ ծփանաց կենցաղոյս բերմունք յոյժ նմանագոյն. յորում կոհակօք բազմօք անթիւ դիմեցմանց՝ տա-

տանեալ հոգիս 'ի յայսմ աշխարհի՝ մարմնոյս շինուածով իբր 'ի նաւակի։ Ո՜ր եսայիաս մարգարէ զյանկարծադէպ կատարածն, որ 'ի պարսկականն հինից՝ երուսաղէմի և սամարիայ կործանմանն, նմանութեամբ այսր օրինակի կերպաւորեցայց. որ և առ իմն հոգևորական խորտակումն զուգաձայնել՝ ոչ է սխալական։ Քանզի մինչդեռ չունէի ես յանհոգութեան անտարբակեան վստահութեամբ, դոյզն կասկած արկածից 'ի միտ բերելով՝ առ խորոց փոքր միջոցին, որ 'ի մէջ հանգստեանն և աշխատութեանն, իբր այն թէ հասեալ իցէ ձմեռն յամրայնի, բքաբեր հողմով ժամանեալ՝ երեքալեանն դիմակցութեամբ, ամբոխեաց զհանդարտութիւն. Սաստի նաւն 'ի բախմանէ վայրենի ալեացն՝ խորտակեցաւ. Թևոցն ձեռնարկութիւն՝ քայքայեցաւ. կայմն ամբարձման՝ 'ի կայից իւրոց խլեցաւ. առագաստին թռչարան՝ յանկարկատելի ծուէնս պատառեցաւ. շինուածոյն շուք՝ անզարդեցաւ. առասանք ձգողականացն՝ խզեցաւ. տեսարան գլխոյն դիտակի՝ խոնարհեցաւ. ապաւանդակին պարան՝ կորեցաւ. ապաւինութիւն խարսխին՝ լուծաւ. լուծք ստուարք ամոլից կցորդութեան՝ բաժանեցան. սամիք ուղղչացն

հեռոց՝ գալարեցան · լասա հիմանն հաստարանի՝ ընկղմեցաւ · ղեկացն կառուցմունք՝ անդրէն սուզան · չըւոցն յարմարութիւն՝ պակասեցան · ողնափայտին պատապարան՝ իսկոյն բեկաւ · կապարանք զըստին հաստուածոյ՝ յօշատեցաւ · գոգք ամփոփման ծոցոյն կազմածոյ՝ անարգեցան · քսելք շըթանցն եղերաց՝ խախտեալ ոստեաւ · պաղպաջունք բազմականացն՝ անկեալ բարձաւ · վանդակապատին վայելչութի՝ յատակեցաւ · գահաւորակին հանգստարանն՝ շփոթեցաւ · մածմունք տախտակաչարք՝ ՚ի միաբանութեանց միմեանց անջատեցան · հեղյուք պնդման բեւեռացն՝ քարշեցան ։ Մորգասիք իրին՝ յիշատակարան ողբոց ինձ նմանեցաւ ։ Նաւուղին հանդէպ նաւին դեգերեալ ողբայ , ձեռն ՚ի ծնօտի եդեալ՝ արտասուաց գետս իջուցանէ ։ Նշմարք սակաւ մնացուածոցն՝ ՚ի ծայրից ծփմանց ազդելոյ ծովուն , իբր խողխողեալ բանաւոր՝ ողորմագին թախծանօք հեծէ ։ Ա՜ղի թէ զբարի նաւապետն՝ երկնաւորօքն զօրօք՝ յաշխարհիս ծովու առ ՚ի զխորտակեալս իմ տապան իմանալի գթութենս՝ առցէ աշխարհել բանիւ յարմարութի , ոչ ինչ վրիպեսցէ ՚ի առուգութենէ ։ Քանզի արդարեւ ելաց

բարեգութն տէր՝ յառակ մարդկութեա՛ն՝
զթաղեալ ազգակիցն · եկաց առ նմին և զե-
րուսաղէմ մոլեալ, և զյուդաս մոլեգնեալ·
յորոց երկուցն՝ կորեաւ վստահութի՝ յօ-
րինակ նմանութե աղարտեալ նաւի · իսկ
միւսն՝ հասեալ յաստակս անդնդոց, առա-
սան յուսոյն՝ ձեռամբ ունողին՝ յանքոյթն
արտաքսերեաց խաղաղութի :

Է · Որդ՝ իցէ՞ թէ յաւելից հայել զբազ-
մախորտակելի տապանակ մարմնոյս իմոյ՝
նորոգեալ : Իցէ՞ արդեօք տեսանել զփշ-
րեալս նաւ ողբալի հոգւոյս ողջացեալ :
Իցէ՞ արդեօք տեսանել զբաժանեցեալս մի-
ջոցաւ մեծաւ՝ վերստին կցեալ : Իցէ՞
արդեօք տեսանել զյօքնաթախիծ սիրտ
վշտացելոյս՝ բերկրեցեալ : Որդ՝ իցէ՞ ակն
ունել նայել զյաւէտ խաթարեալ կեր-
պարան բնութեա՝ կրկին հանդերձեալ :
Իցէ՞ արդեօք թէ տեսից զքակտեալ տա-
ղաւար թշուառացելոյս՝ միւսանգամ
կանգնեցեալ : Իցէ՞ արդեօք յուսալի նայել
զտարամերժեալ գերիս՝ ազատեալ : Ապա-
քէն գուցէ՞ ակնունել՝ զանկեալս 'ի շը-
նորհէդ լուսոյ՝ դարձեալ կազդուրեալ :
Որդեօք տեսից զվայելչութի ընտանիդ-
քո պայծառութեան՝ յաղորմութիւն ինձ
երևեցեալ : Եթէ տեսից երբէք զամե-

Նատխուր կերպարան հոգւոյս իմոյ՝ ժըպ-տեցեալ։ Արդեօք լուսո՞յց ընդ ձայնի գու-ժիս՝ աւետեաց համբաւ՝ ինձ տաւքեց-եալ։ Արդեօք տեսի՞ց զբխուրակործան վը-նասեցելս անօթ՝ կազմեցեալ։ Իցէ՞ թէ տեսցեն պատուհանք աչացս խմաստից ըղ-մուրհակ պարտուցս իմոց՝ պատառեալ։ Եթէ յայտնեսցի՞ օրն իմ անձկութեան՝ շնորհին քաւութե̅՝ բարւոք ինձ ծագեալ։ Արդեօք մտի՞ց ՚ի խրախճանութի̅ խորա-նին լուսոյ՝ քև առաջնորդեալ։ Իցէ՞ թէ կենդանի լինիցին ոսկերքս, ըստ եզեկիէ-լի, ցամաքեալքս ՚ի կենդանութե̅ց՝ եկաւո-րութեամբ աղողական շնչոյս զօրացեալ։ Իցէ՞ թէ յաւելից հայել ՚ի տաճար ս̅բ քո, աղաղակաւն մարգարէին ՚ի պորտոյ կի-տին, հերքեալս ՚ի լուսոյ՝ որ կա՛մ առաջի քո ամաչեցեալ։ Եթէ լինիցի՞ խաւարա-մնունդս մթացելոյ՝ ծագման առաւօտ։ Եթէ հասցէ՞ տեսանել զտագնապեալս մշտատասաւոյց՝ յեղանակս գարնանն մօտ։ Եթէ տեսից զցօղ անձրևոյն կանաչացու-ցանողն հոգւոյ՝ ինձ արօտ։ Եթէ իցէ՞ արդեօք նկատել զգաղանաբէկ հերքելի ոչխարս՝ վերստին կամաց գթութե̅ քո հօտ։

Գ. Եւ քանզի ըստ բանին յոբայ, շուրջ պատեալ են չարեաց հնարք՝ ընդ որ ո՛չ

կարացից անցանել․ իսկ եթէ լոյս ողորմութե՟ բարերար կամաց քոց՝ ցուցցի․ գթութե՟ քո դուռն՝ բացցի․ ճառագայթ փառաց քոց՝ ծաւալեսցի․ խնամք ձեռին քո՝ յայտնեսցի․ արեգականդ կենաց որ՝ տարածեսցի․ առաւօտիդ ըղձալի տեսիլ՝ մերկասցի․ առատութի՟ քաղցրութե՟ քո՝ աղբերասցի․ վտակ արարչիդ կողից՝ հոսեսցի․ ծորումն անապակ սիրոյ քո՝ հեղցի․ ծագումն աւետեաց շնորհի քո՝ երևեսցի․ պարգևիդ քո ծառ՝ ծաղկեսցի․ մասունք օրհնեալ մարմնոյդ՝ բաշխեսցի․ համառօտեալն ակնկալութի՟ հանդիպեսցի․ հաստուածեալ ձայն ողջունի քո տ՟ր՝ լսիցի․ հեռացեալդ խաղաղութի՟ մերձեսցի։

Այսոսիկ յաւէտ սովին սահմանաւ երանականաւ՝ հաւատ ընկալեալ յուսոյ հաստատնոյ, ապաւինեալ ՚ի հոգիդ քո տ՟ր, որ ընդ հօր քում պաշտի ձայնիւ քաղցրութե՟՝ ընդ քեզ փառաւորեալ ՚ի լոյս անմատոյց, որով կեանք և երանութի՟ քաւութեամբ հանդերձ՝ ընծայեալ ինձ մեղապարտիս։

Յաւանդ անկորուստ ընդ իս պահելով՝ առհաւատչեայ ճշմարիտ յիշատակի․ ՚ի ձիր անեղծութեան՝ անուամբդ անճառելեաւ ահաւորութեան հզօրի սրբոյ միայնոյ և անքննելի տէրութե՟՝ երրեակ անձնաւո-

րութեանդ. որ եսդ յիսկութեան յէութեան եւ յարակայութեան բարձրութեան՝ քաղցրութեամբ ողորմութեամբ եւ մարդասիրութեամբ պատկեալ համդերձեալ եւ թագաւորեալ։ Այո՝ առ ամենեսին ամ՟իւ ամ՟ի կարօղ ես՝ գթած. եւ քեզ վայելէ փառք յայսմ յաւիտենի, եւ ՚ի համդերձեալ մշտնջենաւորութեան յայտնութեան աւուրն մեծի, յաւիտեանս. ամէն։

---

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հըռ-կոչի, առ նոյն աղերս մաղթանաց բանի։ ՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Աստուծոյ։

## ԲԱՆ · ԻԶ

Ա · Նուագ արդ՝ ստուգապէս եւ իրաւաբար, ընդ որս որք ըստ ձայնից կողկողանացն՝ եւ զբանիցն յարմարութիւն համդերձեն, ՚ի նոյն գիր բերեալ զաւարտմունս տանցն, որովք առաւել սաստիկ մորմոքեալ ձմլեցուցանեն զաղէտս կարեացն սրտին ըղձից՝ առ արտասուացն բղխմունս. ուստի եւ բազմեալ իմ ՚ի գլուխս պարու՝ ակմբից դասու այնր երախանաց, որք ըղլալեացն յեղանակեն բանաստեղծութի, եւ ես ընդ նոսին՝ նոցին հեծութեամբ՝ աւաղական ձայնարկութեամբ՝ զանձինս տարածանեմ զվշտակրութիւն։ Որ ոչ ընաւին

մեռեալ աշխարհի, և ոչ խնկապէս կեն-
դանի ո̃յ. ոչ ջերմ սոսկ, և ոչ ցուրտ յա-
տակ, ըստ աւանդի աւետարանչին՝ գրեալ
՚ի յայտնութեանն. երիցս ատելի՝ երրեակ
տէրութ̃ն, և ամենատես արարչութ̃ն:
Առ այս են պատկանեալ թախծականացն
կերպագրութ̃ք, կրկին ողորմելի այսու
երևեցեալ, որ ՚ի մի գիծ սահմանեալ կա-
ցուցանեն զթշուառութեանցն զօրինակ,
այսպիսի կցորդութեամբ շաղկապեալ:
ը̃. Պարտուցն ժխտեալ տաղանդացն՝ ձե-
պով մեծաւ ՚ի տուժի. ես ապիկար մատ-
նեալ՝ անարժան գործովքս յիրաւի. վաս-
նիչ արքունի գանձուց՝ կրկնադատ և ան-
թափելի. պատասխանատու մեծին՝ ըմ-
բռնեալ անհրաժարելի. բիւր քանքարոց
խնդիր՝ ւես չունիմ կչիռ մի ունկի:
Անբարեխօս կայեալ ՚ի պահեստ՝ դառն
արգելանի, հեծութ̃մբ և վաստակ ցաւոց՝
ճաշակեալ յանշոյլ բանտի, անապաւէն
տանջեալ անթոշակ՝ կամ ողորմելի. այլ
յեղանակ ինձ ողբականաց՝ տատուստ կըն-
քեցի, փոխատրեցի սովին բարբառով՝ կոծ
կսկծելի, կարգադրեցի շրջաբերութ̃բ՝
՚ի նոյն պայմանի, անհատական թիւ խոր-
հրդական՝ երկեակ տասնեկի: Աղքատու-
թեանն հնոց՝ յամենուստ մասանց մրկի.

անպատսպար թշուառ վտանգեալ սրտիւ ՚ի գրաւի · տարակուսեալ հոգւով՝ ապաշնորհ այր ՚ի վրիպակի · անխնամելի հայցմամբ՝ դատաստանն յինէն պահանջի ։ Մեղաց և մահու զինուք՝ զզայարան գաղանեացս խոցի · անփրկելի մատնեալ բռնութե՟՝ չարեացս գերի · սուր սուսերաւ սաստից՝ գոյու՟ի բնութե՟ս յօշատի ։ Յիշատակաւ բեմին՝ աստատին ՚ի դատաստանի , անծագելի մուայլ՝ չարատես աչացս երևի · անձեռնկալ կապեալ՝ եղկելիս ՚ի տարակուսի , ահարկութ՟ի դիմաց՝ պատկերի վերնոյն ատեանի ։ Յոյժ անարև՝ և անվերարկու ՚ի տարատարոսի · անապաւէն մոլար՝ մորմոքե՟լ ՚ի հուր գեհենի · անյայտնելի կորուստ՝ կործանեալ ՚ի մեղաց վհի ։ Ահա զոր ունիմ արծաթ անպիտան՝ ոչ երբէք յարգի , և ոչ ընդունի և կամ համբարի՝ ՚ի գանձ տէրունի · հայցուածպղտոր և ձեռն անմաքուր՝ աննուիրելի ։ Ալ բեկեալ սրտիւ մատանց տատանմամբ՝ յոյս առեալ դարձի , զդէմս ՚ի յերկիր եդեալ պաղատիմ՝ մօրդ յի՟ · բարեխօսեա մաղթեա քաւութիւն՝ ինձ մեղաւորի · դու զօրաւոր փրկանակ կենաց՝ իսկուհի երկնի · քեզ օրհնութիւնք ձայնից՝ և բուրմունք խնկոց ՚ի յերկրի ,

և անուշից խնկոց մատուցու՝ մին յա-
մենայնի ։

Դ. Արդ՝ յառաջեալ ողբոցս հիւսուած՝ այլ մասն յաւելի · բարերարին շնորհաց արտասուաց պտուղ մատուցի · զկորստեան խորս չափելով՝ զորքանն երբէք ոչ գտի · մասնաւորօք բանիւք՝ ՚ի հանդէս նորին ջանացի · զմտացս արագեալ զթեւս՝ յերեւոյթ իրին ոչ հասի · զուշին պարտութի̅ յանվթարելեացն՝ բաժակ բարկութե̅ ՚ի ձեռն իմ առի · զտարտամութի̅ տարակուսանացս՝ իբր ճաշակումն մահու արբի ։ Եւ այժմ զյանցիցն յաճախութի̅՝ ողորմելի ձայնիւ յերգ արկի · աներեւոյթ կրակարան տապոյ՝ բորբոքմամբ մեծաւ անզովանալի · անտեսական իմն քրտյս հալոցաց՝ սաստիկ եռացմամբ անշիջանելի · սլաքս նետից պատկանեալ դեղովք՝ ՚ի շտեմարան խորութե̅ սրտի · խիթք ցաւոց խոցոտման մահու՝ ՚ի գնացս երակաց գոյութեան լերդի · կիրք երկանց անճարակ ճեպոյ՝ ՚ի պատուած աղեացս անելանելի · անզօրելի դեղոց ջերմուի̅՝ ՚ի յերիկամանց մասունս երկակի · անհնարաւոր դառնուի̅ մաղձի՝ ՚ի նախադուռն իմոյս կոկորդի ։ Եւ աղս ձայնից լքուցանողաց՝ ՚ի փողս շընչոյս խոշոր հնչի · բազմահատուած էու̅

բնութենս՝ ներհակք միմեանց ՚ի պատերազմի. երկչոտութիւն կարծեաց վարանեալ՝ ամենայնիւ կայ ՚ի վտանգի. հարազատաց դաւաճանութիւն՝ անհաշտելի ՚ի կոտորուածի. ոչ մեռեալ և ոչ կենդանի՝ թաղեալ ՚ի մեղաց գարշութեան տղմի. կասկածաւոր պատժապարտութիւն՝ վերակնարկելով քեզ բարերարի, յանակնկալս կենաց մեզ՝ արտաբերել ՚ի լոյս անձկալի:

Է. Այն ինքն որ զայս՝ բան տպաւորեալց, ընդ երջանկա՝ցըն պսակեցի. ակնարկելով քո ողորմութեան, անարատի՝ ցըն հաղորդեցի. վասն զենման նյ բանիդ, բարեգործեալ՝ քև կենդանացի. օրհնութիւն՝ դոմեալ քո շրթանց՝ ՚ի գլուխ բաշխողի՝ այսր մատենի. հաստատեցի ըղձականութիւն՝ սողոմոնեան բանիս առակի. նկարագրեմ հոգւով քո՝ բարձրեալ, ՚ի նորոգումն անեղծանելի: Ո՜վ դու միայն ես երկայնամիտ, քեզ փառք յամենայնի. ամէն:

—❧❧❧—

Վերստին յաւելուած կրկին հեծութե՝ նորին հրակոլի, առ նոյն աղերս մաղթանաց բանի. 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ.

## ԲԱՆ · ԻԵ

Ա· Եւ քանզի ընդ ողբաձայնիցն բանաստեղծութեանց վերընծայելոց զդրութի թուոցս յարմարեցի՝ կծկան եւ հեծութիւն, հառաչանք կողկողագինք, դառնութե լալումն եւ արտասուաց երգ, դարձեալ սկսայց զճառ պաղատանացս՝ խոստովանօրէն զղջականաբար՝ զգաղանածածուկն յայտնաբարբառ. զի անդրադարձութեամբ սկզբմամբն՝ եւ վերջաւորօքն բանիւք, զնոյն համաձեւութի 'ի մի թախանձ նմին մաղթանաց՝ հոգեկեցոյցն խոնարհութե՝ աստանօր եդից։

Բ· Մեղա՛յ մեծիդ բարերարութե, անարգըս մեղայ. մեղա՛յ ծագմանդ ճառագայթից, խաւարս մեղայ. մեղա՛յ շնորհացդ անբաւ երախտեաց, արդարեւ մեղայ. մեղա՛յ սիրոյդ վերնում գթութե, յայտնապէս մեղայ. մեղա՛յ ստացողիդ յոչ էութե, ստուգապէս մեղայ. մեղա՛յ գերունակ գոգոյդ գրկանաց, անբաւս մեղայ. մեղա՛յ աննուաղ լուսոյդ վայելման, նենգօղս մեղայ. մեղա՛յ ճաշակման անճառ կենաց, բազումս մեղայ. մեղա՛յ անհաս պարգեւացդ

ծրից , հանապազ մեղայ · մեղայ գովեալ մարմնոյդ ոյ , մահու չափ մեղայ · մեղայ պաշտելի արեան արարչիդ , խոկապէս մեղայ։ Ի՛. հա՛ արդարև օրհնեալ է հաւատաբանի՝ քուստադրական սրտի՝ այսր մեղայի· անյն սա՝ պատուելի աւանդ · անմոռաց պատուէր · հայրենեացն տուր · նախահարցն օրէն · համայնից թոշակ · անհերքելի բան · զօրաւոր պատասխանի · կենդանութե կամուրջ · անխորժելի վերնոյն · սիրելի սրբոց · անխզելի կապ · հրաշալի քարբառ · անշրջելի պատճառ · բաղձալի աղերս · փափաքելի սեղան · սրտաբեկ հընչումն · անհնարից ճարակ · կարծրութեան վանիչ · ածապաշտից սահման · հեթանոսաց գիրք · վաղնջուց կանոն · քրիստոնէից հարազատ · արարչութեն յաղթօղ · անջրպետ հզօր · խարոց ահաւոր · արուեստ բարձրութե · խորութի անչափ · հիացման տեսիլ · խորհուրդ կնքեալ , ընդ որ չէք ումեք անցանել , եթէ ոչ անըմբռնելի մտաց արագման՝ զսա ծանիցէ։ Զայն բարեպատեհ հրաշափառական , որ ոչ յիշատակեցաւ ՚ի վերջին դատակնիք դասուն լքելոյ· գուցէ առ նմին խզեալ համառօտ զվերժակն իրաւանց մահուն հասելոյ , յորմէ ընտրութին ապադործ եղեալ , զահմանն

յաւիտենական քակտեցէ ։ Օ̀ որդ փա-
ռաց մեծութե̃ , որով նոյն ինքն ա̃ծութի̃ն
պակեալ բարգաւաճի ։ Քանզի ո̃վ դք
դիմեալ կալաւ զեղջերաց սեղանոյ այսր
սրբութե̃ , և ոչ առ ժամայն պրծեալ 'ի
պատժոց՝ անպարտ գտաւ ։ Իսկ եթէ ա-
քար զարմեան , և սաւուղ կիսեան , և
յուդա սիմոնեան՝ առելով զայն ոչ ար-
դարացան , և ես վկայեմ՝ իրաւամբք խոս-
տովանեալ զայս պայման բանի ․ զի ակա-
մայից բունադատելոց՝ ոչ է կատարեալ
սէր , ուստի և ոչ բովանդակապէս փըր-
կութիւն ։ Իսկ ես կամաւ համբուրեմ
դարձեալ կրկնելով զերջանիկ բանիդ ը̃դ-
մկրտութեան հարազատ ։

Դ ․ Մ̀եղայ երախտեացդ մոռացութե̃ ,
վերստին մեղայ ․ մեղայ մարմնոյ ձեռն յօ-
դի հարեալ , յիմարս մեղայ ․ մեղայ առ
կեանսդ դժրողութե̃ , իսկ և իսկ մեղայ ․
մեղայ բանիդ ապախտ առնելոյ , չարաչար
մեղայ ․ մեղայ 'ի յօր սատակման՝ ինձէն
ստիպեալ , վատթարս մեղայ ․ մեղայ պար-
տականս անկենդան մահուն , ձաղելիս մե-
ղայ ․ մեղայ անպատկառս քո բարձրութե̃ ,
տաղտկալիս մեղայ ։ Մ̀երջին ինձ կրկին
աշխար հոգևոր , զի 'ի կորուստ և 'ի կոր-
ծանումն ինձ երևեցայ ․ զի անդարձ

վարատեցայ․ զի որդիս՝ թշնամի գրեցայ․
զի 'ի բարձանցն երկնից ընկեցայ․ զի
փուշս վարուց դիզի։ Եւ ես առ սմին
ողբոց աղաղակի, զի անձամբ զանձն ա-
նարգեցի․ զի բաժին կորուսչին գտայ։
Այլ իմս կսկիծ դժնդակ սրտի, զի զիս
ունին՝ առ որ չեմ, զարտաքնայարդար բա-
ժակս անմաքուր, զըռուեալ որմն դարշու-
նակ, զսին պարծանօք պաճուճեալս, ըղ-
ձս՝ 'ի մուայլ շրջեալ, զդերանակիր ակնս՝
թշուառացեալ, զջահս փառաց՝ շիջեալ,
զամիւս յամի ամ իրօք փառակալս, առ
անօրինականսն տէրունականս․ առ յայտ-
նութիւն ածայինս․ առ երեւմունսն արար-
չագիրս․ առ խոնարհութիւն սարսափելիս․
առ այն՝ զոր տեսի աչօք իսկ իմովք։ Առ որ
մեծ է պատասխանատուութիւն, քան առ
համօրէն աւետարանին՝ զարմանս, հրաշ-
մունս․ հոգս հալածականս․ անդաձմունս
անհնարաւորս․ թուականութիւնս՝ մտաց
անբարդելիս․ ելմունս անկատարս․ իջմունս
անհաստատս․ յուսահատութիւն յարմա-
րականս․ յանդիմանութիւնս պատշաճա-
կանս․ ձաղանս պատեհագոյնս․ նշովս իրա-
ւացիս․ անէծս արժանահատոյցս։ Արդ՝
պսակք են մեղաւորիս իմ կշտամբութիւնք,
և ինքնահարուած տանջանաւորութիւն։

Դ. Ու քանզի կարող եմ զայս ամ զպարտըս թողուլ, և զխայթուածս մահու ըժշկել՝ տէր ողորմութեց, ած բոլորից, քս թագաւոր՝ բարձրեալ հօր որդի, ստեղծիչ՝ գթած՝ բարերար, օրհնեալ՝ առատ՝ հարուստ, ահաւոր՝ հզօր՝ ողորմած, տեսուչ՝ ձեռընկալ՝ հաստիչ, ապրեցուցիչ՝ դարմանիչ՝ կեցուցիչ, երկայնամիտ՝ անոխակալ՝ ապաւէն, բժիշկ՝ գովեալ՝ երկնաւոր, անճառ՝ լոյս՝ կեանք, յարութի՝ նորոգութի՝ քաւութի. եթէ հայեսցես մարդասիրութե, ըստ որում քոյդ են սովորութիք, նայեցեալ ՚ի քեզ՝ կողկողիմ և ես. Եթէ լուիցես, հառաչեմ. եթէ ունկն մատուցանիցես, պաղատիմ. եթէ անսայցես, աղերսեմ. եթէ ներեսցես, աղաչեմ. եթէ առ իս դառնայցես, գոչեմ. Այլ եթէ անտես առնիցես, կործանիմ. իսկ եթէ առ ոտն հարկանիցես, լամ. եթէ զոգեպահն ոչ ընծայեսցես, մեռանիմ. ապա եթէ ահարկու դէմս ցուցանիցես, սասանիմ. իսկ եթէ սաստեսցես, դողամ. եթէ խեթիւ տեսանես, սոսկամ. ապա եթէ սաստկանաս, սարսափեմ. եթէ հալածես, հեծեմ. իսկ եթէ ընդ վայր հարկանիցես, հերքիմ. եթէ զըոց վհատութեանս ոչ առցես, տագնապիմ. եթէ խստանաս,

փախնում. ապա եթէ սպառնաս, ընկճիմ. Իսկ եթէ քննես, քարկոծիմ. ապա եթէ ուժգինս ակնարկես, սուղանիմ. եթէ ոչ անխայեսցես, մերժիմ. եթէ կոչեսցես, խիթամ. իսկ եթէ աչս յառեսցես, ամաչեմ. եթէ ձայն տացես, երկնչիմ: Օ բարեացն պարգև մատնեալ. զերանութիւնն թողեալ. զշնորհն լքեալ. զուխտն ցրեալ. զաւանդն կենաց մոռացեալ. զհամբերակութեան վստահութի կորուսեալ. զանեղծիչդ ելիցս բարկացուցեալ. զանձառութի շնորհին ընդոտնեալ. զպատուոյն պատկեր ապականեալ: Իսկ եթէ առ այս խեղդ մահու հեծուծ ցաւոյ մարդասիրեալ՝ առ խ ժամանեցուսցես՝ տէր յո քո զազդեալն գիր ընանիլ 'ի յիս, եթէ բժշկութի դադարեցուցանէ զմեղս մեծամեծս. որով ամենառատ քաղցրութե պատուաստեալ 'ի քեզ, զգոյդ կերպարան լուսոյ նկարեալ յոգի՝ վերստին գտեալ անդեցոյց քաւեալ, և սանեղծեալ կրկին 'ի փրկութի անմահից կենացն անախտականաց. և քեզ ընդ հօր հոգւովդ սրբով փառք յաւիտեանս. ամէն:

Վերստին յաւելուած կրկին հեծութե՛՝ Նորին հրա-կոզի, առ նոյն աղերս մաղթանաց բանի։ 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա՜յ։

## ԲԱՆ․ ԻԲ

ա․ Եւ արդ՝ զո՞ր յայտնեցից, և յաղագս ո՞յց նշանակեցից, և վասն ո՞րպիսեաց ձաւեցից, և զո՞րքան ծածկեալս մերկացուցից, և կամ վասն որո՞յ խոստովանեցայց։ Զներկայի՞ցս՝ զոր արդէն ունիմ, թէ զանցելոցն՝ զոր մթերեցի․ զապագայի՞ցն՝ յորոց կասկածեմ, թէ բզբաղմասահ շարժութե՛ցն՝ յորոց գլորեցայ․ զփո՞քրն ինձ համարեալ՝ որ է ո՜յ մեծ գրեցեալ, թէ զանկերպագրելին չափշատակելի․ զնուա՞զն՝ որ է առաւել, թէ զթեթևագոյնսն՝ որ են ծանունք․ Զհոգեկանա՞ցն կրից կորուսչաց, թէ զմարմնականաց ախտից սպանողաց․ զառ դրունս հեշտականա՞ցն, թէ զծայրակատար վնասակարութե՛ց․ զանէրևութի՞ցն, թէ զտեսականացն․ զառձեռն հպաւորութի՛ն, թէ զառ նոյն ինքն շունչ հեռաւորութիւն։ Զլայնակա՞նն գիւրին խածմունս, թէ զերկարաւորն նեղաձգութիւն․ զխորութեա՞նն զանչափութի՛, թէ զամենածաւալն յայտնատեսիլ․ զյօքնագլխի՞ն պռնկութիւն, թէ զառողջութե՛ն անբժշկութի՛․

զպարարումն չարին մարմնովս , թէ զառ-
վելն բարւոյն հոգւովս · զխնամողն հան-
դիսանալ՝ յոչ ախորժելիսն ինչ , թէ զբանա-
դատութիւն տուաւք ձգիլն 'ի նոյն մոլեգ-
նութիւն · զառ 'ի մահն մեղաց , թէ զըն-
դունայնութեանն կարծեաց :

Է · Արդարեւ ոչ կամիս խելագար զերծ-
եալ 'ի ձորձոյ , զաւականացս տեսիլ
յանդիմանեցի , զընդդէմն գործեալ ի-
մաստնոյն , որ՝ թէ հանճարեղքն վերար-
կեսցեն զամօթս իւրեանց · օտարացեալս 'ի
կրօնից · հեռացեալս 'ի կարգաց · 'ի սրբու-
թեան անսուրբ · 'ի կուսութեան անմա-
քուր · յարդարութէ ամբարիշտ · 'ի բա-
րեպաշտութեան մնաստապարտ · բերանովս
մերձ առ ստացօղն , եւ հեռի երիկամամբք ·
շրթամբքս պատուամատոյց , ըստ մարգա-
րէին , այլ ոչ եթէ սրտիւս : Եւ եթէ
պարտ է զքստմնելիսն ասել ստասնօր , չար
քան զտանջանսն յանդգնութի , իբր զուր
իմն պաշտօնատարս ինչ , 'ի միաս անկայունս
երկեակ ճանապարհաւ մահու վարանեալս՝
ջանամ , եւ ոչ ինչ օգտիմ · սնդիմ , եւ ոչ
հասանեմ · փութամ , եւ ոչ ժամանեմ ·
անձկամ , եւ ոչ տեսանեմ · փափաքեմ , եւ ոչ
հանդիպիմ · կարօտիմ , եւ ոչ պատահիմ ·
ունիմ զնմ երկրի , եւ եմ պատգամաւոր

աղօթանուէր ա՟մ աշխարհի․ Այլ թո՛ղ
զբազրուածս զայսոսիկ՝ բարերար, և մի՛ ու-
նիցիս․ դիւրինք են քեզ զսոսին եղծանել,
քան ինձ տաժանաւորս աջով նկարել․ վ՟
այնորիկ գրեցի առանց խնայելոյ, զի դու-
առատապէս ջնջեսցես՝ օ՛րհնեալ։ Որ վ՟
մեր մեղաւորացս երկայնամիտ անուանե-
ցար, ըստ մարդկանց բանի՝ հեծութեան
սրտի՝ եղրի երջանկի․ յայժ նեղեալ անձն
և ձանձրացեալ ոգի՝ բանին յիշատակաւ,
որ զոյն պատմէ․ յո՟մ կրից մահացուցա-
նողաց վտանգեալ, անկեալ 'ի վիհ գար-
շութեան մեղաց՝ անդնդականաց ապակա-
նութե՟ց․ քանզի չհաւատամ, թէ լսես իսկ
ինձ, ըստ յոբայ ձայնին։ Արդ՝ ես ինձէն
ինքնագրով անձնադատ դերի՝ կամաւո-
րապէս մատն եղեալ բնութե՟ս, արգելի
փակեցի կնքեցի առ յինէն՝ յո՟մ մասանց՝
զկենացն հնար, զի 'ի փրկութե՟ մեղօք կա-
պելոյս՝ կրկին մեծասցիս գովեալ։

Գ․ Եւ քանզի 'ի մարգարէէն բարուք
խրատեալ փոքր գոլուք, մաղթել ընդ-
նմին հոգւով քո երգեալ՝ յուսով հա-
տատնով 'ի քեզ ապաստանեալ, առէ՛ք ընդ-
ձեզ բանս, ասէ ովսէէ, և դարձարո՛ւք առ
տ՟ր ա՟ծ ձեր, և ասացէ՛ք ցնա, կարօ՛ղ ես
թողուլ զմեղս․ զի ընդունիցիք զբարիս,

և փայլեսցեն ՚ի բարութե՟ անձինք ձեր։
Ահա ա՟ծ խօսեցաւ, և ո՞վ է որ ո՛չ լուի-
ցէ. նոյն ինքն վկայեաց, և ո՞վ է որ ո՛չ
հաւատասցէ։ Արդ՝ այսուքիկ վճիռ պաշ-
տելի. նուիրեալ պայման. սահման նշնա-
դ՟յ. կենաց աւետիս. կէտ տէրունի.
դուռն բարութե՟. սփոփանաց հրաւէր.
ճշդրիտ պատկեր. անստգիւտ գանձ. ան-
մոռաց յիշատակ։ Այսու առ այն և ես
հաւատ ընկալեալ, ստուգատ վկայեմ ամին՝
ընդ մարգարէին, կարօ՛ղ եմ յա՟մի թողուլ
զմեղանս բազմաբեղունս. և ես զօրացիս
կրկին բարձրացեալ՝ առ ամենաթշուառ
կործանեալ հոգիս։ Յա՟մի իշխես. ա՟մի բա-
ւես. ա՟մ ուրեք համանես. ամենից բը-
նութե՟ց յաղթես. զա՟մ կարծրութի փշրես.
զա՟մ ընդդիմահար վանես. զա՟մ խստութի
վատնես. զա՟մ սրացեալ ընդոտնես. զա՟մ
դառինս անուշես. զա՟մ դժուարամուքե-
լիս քաղցրացուցանես. զա՟մ զպարտս շնոր-
հես. զա՟մ յանցանս թողուս։ Կարօղ եմ՝
զօրաւոր հզօր հնարաւոր ամենարուեստ՝
զամենեցուն զմեղս ընկղմել՝ և չքացուցա-
նել բառնալ ՚ի միջոյ. իբր զճանճանչ փոքու-
կայծ ակամն՝ սահմանեալ ՚ի չափ ոչէից՝ ան-
կեալ ընկլուզեալ կորուսեալ ՚ի անեզե-
րատարածն ծովու։

Է. Ո՛րդ՝ բանին մաղթանաց վերծանո-
ղացն այսմ մատենի, ողորմեա՛ վասն խաչի
և չարչարանաց մահու որդւոյ քո՝ հայր
գթութեան։ Ակնդրն առաքողի՝ ողբեր-
գութե ձայնի՝ այսմ արտօսրածին նուա-
գի, որ զայս դեղ փրկութե կենաց՝ մեզ
յարմարեցոյց, եղիցի բժշկեալ յանուն քո
հզօր։ Ար հետս ելից խոստովանութե մեզ
նկատեցոյց այսու պաշտմանս պատշաճա-
կանաւ, լիցի անարատ յիւրոցն պարտեաց։
Ար զհպարտութեն թևս՝ հարդել մեզ վար-
դապետեաց՝ 'ի սոյն կանոնի կենաց պատ-
գամի, եղիցի զերծեալ 'ի չար կապանաց
մահու արկածից սկզբնականաց՝ վերջնոց՝
և միջնոց, երրորդութե բարեգործեալ,
'ի նորոգութի լուսաւորութե. ընդ որում և
մեք գրեսցուք՝ երջանիկ գտեալ ընդ սմին։

Ընդդիմամարտ դիւաց այս նուագ աղօթից. և
դիւատարասա ջերմեռանդնագ ախտաւորութեանց
աստուծով փարատիչ.

Ը. Ո՛րդ՝ այսքանեացս անբաւից հրաշից
հանդերձից հայր ամենաստեղծ՝
անունդ ահաւոր. ձայն սոսկափելի. կո-
չումն ընտանի. բան համբուրելի. աղ-
դումն սքանչելի. հրաման սոսկալի. էութի
անքննելի. գոյութի անճառելի. խկութի

անբաւելի · զօրութիւն անզննելի · կամք ամենաբարի · տէրութիւն անսահմանելի · մեծութի՟ անչափելի · բարձրութի՟ անբովանդակելի · ողքանութի՟ անկշռելի · առաւելութի՟ անհասանելի · պատճառ որդւոյ հայրութե՟, այլ ոչ նախադրութե՟ · քեւ և 'ի ձեռն քոյդ անպարագիր զօրութեանդ՝ սաստեա՛ տագնապօղ և դիւական տենդիս ջերմութեան, որ սպրդեալ մուծաւ ընդ մեզաց՝ զի փախիցէ 'ի մարդոյս, զարհուրեալ 'ի սխրալի և յանբաւելի արեան վտակի՝ դառինդ երկնաւորի · որով սրսկեալ միանգամ 'ի մշանջենաւորս՝ համայն մաքրեցաք ։

Ղ · Եւ արդ՝ յայս պատկառելի խոնարհութէ արարչակերտս խորհրդոյ, ամաչեսցէ՛ սատանայ 'ի գործս չարեաց իւրոցն հրեշտակաց · տանջեսցի և հալածեսցի, հեռասցեալ և արտաքս առաքեալ 'ի շինուածոյ խորանէ քումդ բնակութեան՝ յարտաքին խաւարն ։ Եւ ջնջեալ մաքրեա՛ զարտասուս ողբոցս 'ի դիմաց մերոց, և զհառաչումն ձայնիս հեծութե՟ 'ի սրտից մերոց ։ Եւ յիշատակաւ հարման հեղումիցն՝ քառամնափուշ տաժանատեսիլ ոգեպահանջից, որով պնդեցաւ մահ ինդ քո յաշարակ խաչին, ցաւեսցի չարին ։

Նաեւ 'ի կողաշերձ սայրասուր սլաքէ ուժ-
գին բախմանէ, որով զվէրն մեծ ընկալեալ,
խոցման սատակեցի սկզբնարար մահուն։
Նաեւ զի խոնարհեցոյց զգոլեալն գլուխ՝
յաւանդել զոգին 'ի ծոց քո՝ բարձրեալ,
ապստամբութեան անբարի բարուցն բելիա-
րայ՝ 'ի կո՛ր կործանեցի, ամիւ հերքեալ
'ի կորուստ։ Նաեւ զի զօղեալ ծածկեցաւ
ամահն խակութեան յորովայնի երկրի, այսու
ամբարձեալն հպարտութեան՝ կործեալ գո-
ռոզն՝ 'ի յատակս մահու դժոխոց՝ մթին
ստուերին՝ յաւեալ դխսեցէ. և յիշեցէ
զառաջին հարուածն անբժշկական, որով
մահացաւ դխմամարտութիւն թիւնից վի-
շապին՝ կենարարն կրիւք ամենազօրին։
Այլ զի 'ի փառս քո՝ հայր ողորմութեան, իբր
'ի գովեստ որդւոյ քոյ՝ հոգւովդ. որով զայս
խոստովանիմ. քանզի ոչ պիտակ ինչ սոսկ
զօրութեն ունի զմիւսակն՝ առ մի խորհրդա-
կանն խորութէ, այլ զանսկիզբն բանդ անձ-
նաւոր՝ ընդ անժամանակդ հօր փառաւորեմք։
Նաեւ քեզ միայնոյ որ երրորդութեանդ, հա-
ւասարապատիւ տէրութեանդ, համաբուն՝
անբաժին էնքնութեանդ՝ օրհնաբանութի, գո-
հութի, զօրեղութի, և անճառ վայելչութի
մեծութե, բարեվիճակ հարթութե, զուգա-
կշիռ հաւասարութեան՝ յաւիտեանս. ամէն։

վերստին յաւելեալ կրկին հեծութն̃՝ նորին հըրա-
կողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի. 'ի խո-
րոց սրտից խօսք՝ ընդ այ̃.

## ԲԱՆ · ԻԹ

ա · Եւ արդ՝ դու միայն սկիզբն բար-
եաց, գթութիւն անճառ՝ որդի
բարձրեալ միոյդ այ̃, որ զողջոյն զօրն՝ թո-
ղութե̃ ցուցեր փրկարան, և ոչ կորստեան
դատապարտարան, յեղանակեալ ինձ զա-
ւուրն չար՝ առ մեծ աւետիս ակնկալութե̃.
Ախիշկ՝ ախտացելոյս. հովիւ՝ մոլորեալ
ոչխարիս. տէր՝ ապաւինեալ ծառայիս.
գինի անապակ՝ մեծ տրտմեցելոյս. սպե-
ղանեաց դեղ՝ վիրաւորեցելոյս. ազատուի̃՝
մեղօք գերեալոյս. օրհնութիւն բարեաց՝
մերժելոյս. կնիք շնորհաց՝ խոտելոյս. օ-
ծումն կոչման՝ կապտելոյս. կանգնումն
վերստին՝ կործանեցելոյս. պատսպարան
հզօր՝ գլորեցելոյս. օժանդակ վէհ՝ գայ-
թակղեցելոյս. դուռն բարձրութե̃՝ տա-
րակուսելոյս. սանդուխք երանութեան՝
եղկելոյս. ճանապարհ շաւղաց՝ մոլորելոյս.
թագաւոր ներող՝ պարտելոյս. քաղցր յու-
սադրութիւն՝ լքելոյս. ձեռնկալ կենաց՝
հերքելոյս։ Մեծդ միայն՝ և ամենառատ,
որ զլիութի̃ բարեաց սահմանեալ, հեղուս
անչափ յաճախութե̃՝ քան զոր խնդրեմք և

խմանամբ , ըստ պօղոսի գոհաբանութե՟ն ։ Վասնզի իննուց յինից՝ և թուոց՝ երից և չորեակ տասանց՝ 'ի վաղորդայնէ տուընջեանն՝ առ մուտս արևուն , անդուստ առ նմին յաւէտ կարկառմամբ՝ իսկ և իսկ 'ի սոյն՝ անարգել սրտիւ , 'ի վե՛ր է քան զաղերսանաց ակնկալութ՟ի՝ մարդկան բարեգործել մեծամեծաց շնորհատրութիւն ․ իսկ առ իմս թշուառութեան և անարգութ՟ե զքոյդ եղեալ փառս՝ ամենակարող զօրու՟թ ահեղ՝ բոլորից ա՟ծ՝ օրհնեալ տէր ք՟ս , որո՛վք սահմանեցի կշռութեամբ չափոյ՝ հաստողիդ ընդ հողոյս հաւասարութիւն կցորդեալ ։ Վասնզի մինս յայսոսիկ անբաւ և անհետազօտելի , ամենեւին բարի՝ անմասն բարկութ՟ե խաւարի ․ ուստի յայժնուաղեն քում մեծութեան՝ սատեղացն թիւք , զորս գոյացուցեալ յոչէից , յորջորջմամբ անուանց կնքեցեր ․ և կամ հիւթ երկրի 'ի յօդս յեղեալ , զոր 'ի չգոյից հաստեալ , տարածումն յատակի կառուցեր , քան ինձ նախագրեալ համարդ սակաւութեան , որովք քեզ նմանիլ վարդապետեցեր ։

Է ․ Ահա՛ ծածկեցաւ և ընկղմեցաւ 'ի քոյդ լոյս կամաց երկայնմտութե՟ն՝ հանուրց չարութիւն , իբր դոյզն մայլ՝ 'ի տաղ

տրեւու · և որո՛ց աստուստ խոկ կերք ընու-
թեանց զհասարակաց բարուց ցուցանէ ։
Քանզի ո՛վ ոք 'ի մարդկանէ մեղաւ, և ո՛չ
զղջացաւ · ո՛վ ոք զայրացաւ, և ո՛չ ամաչ-
եաց · ո՛վ ոք գարշեցաւ, և ո՛չ պատկառ-
եաց · ո՛վ ոք սխալեաց, և ո՛չ ապաշաւեաց ·
ո՛վ ոք կործանեցաւ, և ո՛չ հեծեծեաց ·
ո՛վ ոք գայթակղեցաւ, և ո՛չ սարջացաւ ·
ո՛վ ոք պարտեցաւ, և ո՛չ ինքեամբ ըմբե-
րանեցաւ · ո՛վ ոք պատրեցաւ, և ո՛չ յոգ-
ւոց ելաւ · ո՛վ ոք ճաշակեաց լեղի, և ո՛չ
դառնացաւ ։ Ո՛վ ոք անկաւ 'ի բարձրու-
թենէ, և ո՛չ ընդոստեաւ · ո՛վ ոք կորոյս
մեծութի̃ն, և ո՛չ աշխարեաց · ո՛վ ոք զրկե-
ցաւ յերանութենէ, և ո՛չ ելաց · ո՛վ ոք կապ-
տեցաւ 'ի շնորհէ փառաց, և ո՛չ ողբաց ·
ո՛վ ոք գտաւ ինքեան վնասակար, և ո՛չ
ստգտաւ · ո՛վ ոք մերժեցաւ յերեսացն ա̃յ,
և ո՛չ հառաչեաց · ո՛վ ոք լուաւ զա̃յ սպառ-
նալիսն, և ո՛չ սոսկացաւ ։ Ո՛վ ոք ընդ մի
չարեացն՝ հազարս չաւաղեաց · ո՛վ ոք մեր-
կացեալ յաւուրս ձմերայնոյ, և ո՛չ զոփա-
ցաւ · ո՛վ ոք անօրինեցաւ, և ո՛չ քարամբք
զմիտսն կոծեաց · ո՛վ ոք ետես զարուկն
յիւրում մեծութեան, և ո՛չ զկծեցաւ ·
ո՛վ ոք կատարեաց չարիս, և ո՛չ զինքն խոկ
նզովեաց · ո՛վ ոք ախտացաւ, և ո՛չ զանձն

դսրովեաց · ո՛վ որ յամօթալեացն գործ-
եաց, և ո՛չ զիւրն մարմին ձաղեաց · ո՛վ որ
'ի պատկառելիսն հպեցաւ, և ո՛չ զօրն իւր
անիծեաց։ Ո՛վ որ զգործեցեալսն յիշեաց,
և ո՛չ տապացաւ · ո՛վ որ զգաղտնիսն մտա-
բերեաց, և ո՛չ խորովեցաւ · ո՛վ որ զծա-
ծուկսն նկատեաց, և ո՛չ մահ կորստեան
խնդրեաց · ո՛վ որ զաներևոյթսն կերպա-
ւորեաց, և ո՛չ կրկին յերկիր կորացաւ ·
ո՛վ որ ընդ մեղացն հեշտութե՝ բոց անշէջ
հնոցի ո՛չ խառնեաց, ո՛վ որ զմխսատակարսն
բնութեն, և ո՛չ պապակեցաւ · ո՛վ որ զկա-
մաւ ներգործեալսն, և ո՛չ սատակման ին-
քեան աղօթեաց · ո՛վ որ զանճառելիսն, և
ո՛չ խռովեցաւ · ո՛չ որ զանկրելիսն էութեն,
և ո՛չ թախծեցաւ · ո՛վ որ զմեծամեծսն, և
ո՛չ մաշեցաւ · ո՛վ որ զանբծութեն ապա-
կանարարսն, և ո՛չ տոչորեցաւ · ո՛վ որ զտա-
րագրութեն պատճառ յանցմանս, և ո՛չ
տագնապեցաւ · ո՛վ որ զերեսացն աղտեղի
տեսիլ, և ո՛չ բարկութե վերնոյն զանձն
պարտ վարկաւ · ո՛վ որ զմի 'ի կարևորացն
մեղաց յաչս կերպացոյց, և ո՛չ զինուք մա-
հու խոցեցաւ · ո՛վ որ զխայտառականացն,
և ո՛չ վայս վհատութեան ընդ հեծութիս
ձայնիւն հեւսեաց։ Ո՛վ որ յորքայական
գահոյիցն անանկացաւ, և ո՛չ կարկամեալ

'ի վայր գլորեցաւ. ո՛վ որ ընդ պսակին պերճութե՝ հող 'ի գլուխ եղեալ, և ո՛չ կրկին չարչարեալ յոգի մահացաւ. ո՛վ որ ընդ պայծառ պատմուճանին՝ քրձազգած եղեալ, և ո՛չ տխրեցաւ։ Ո՛վ որ զկեանս իւր կորոյս, և ո՛չ արեան արտասուս երկնեաց. ո՛վ որ ընդ արկանելեաց լուսոյ խաւար զգեցաւ, և ո՛չ նուաղեցաւ. ո՛վ որ 'ի վերայ սգոյ սիրելւոյ ո՛չ թառամեցաւ։ Ո՛հ այս կերպարանք ծնգրտագոյնք՝ պարտաւորիս յանդիմանութե, տխուր դէմ. քաղեալ ծամծամնչ. ցամաքեալ խոնաւութի. երիթացեալ շուրթն. անշքեալ տիպ. տոտմեցեալ ոգի. պղպջեալ ձայն. կրկնեալ պարանոց։ Ու զի թէ որ զխկունն խակ նշանակեաց է, ո՛չ անօրինէ, անանբարտաւան մեռ. անհպարտ սիրտ. անխնդրող պարգևի՝ թշուառ. անաղերսալի պաշքեալ. ինքնակշտամբելի դեգերեալ. խրաւամերժ սովեալ. արդարալուկ քաղցեալ. պատշաճադատ հարուածեալ. ինքնակեայ մահապարտեալ. արժանապէս հանեալ. անձնանէծ եղկելի։ Ու զայս թարգմանեալ ցուցանէ արդարադործ փարխեցին կշտամբեալ, և մեղապարտ մաքսաւորն բարեհամբաւեալ։

Դ. Ու արդ՝ եթէ զշարխն՝ հնարաւո-

րութի բանաւորկուլին գտողին զմեզ գայթակղեալս, զնորան 'ի մեզ սերմանիս առօրն համարեսցի, զիա՞րդ ոչ զբարիսն տընկեալս 'ի մեզ հոգւոյ արութիս՝ 'ի խնամակալութենէ կամաց կեցուցչիդ՝ օնևօն գրեսցես՝ տէ՛ր բարեգութ, հզօր և յաղթօղ. քաւիչ մեղուցելոց. կարօղ յամի՝ առ ամ փրկութի ։ Եթէ զանդունդս առերկինս փոխես, և կամ զխաւար մթութե՝ 'ի լոյս հաստես, եթէ զդառնութի լեղւոյ՝ 'ի մանանայի քաղցրութի կալմես, և կամ զկոծ սատակութեան վշտաց՝ 'ի պարս դասու բերկրութե հարսանեաց կարգես, դիւրինք և հնարաւորք են քեզ այսոքիկ ։ Նաևս քան զոսին բաւես առ նոսին՝ տիրեալ համայնից ահաւորապէս. և քեզ փառք յաւիտենից յաւիտեանս. ամէն ։

---

Վերստին յաւելուած կրկին հեծութե՝ նորին հրակողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի. 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ.

## ԲԱՆ. Լ

ա. Նուարդ՝ ճշմարտեսցի բան քո ողորմած՝ բոլորից ած՝ ներօղ և օրհնեալ, 'ի բազմագթելին դարձաւորութի աւուրն պատկերի զզջման մեղաւորին, թէ

և առ յետին իսկ շունչն իցէ ընտրութիւն, և կամ 'ի մէջ չարութեան՝ փոխադրութիւն։ Մ՝անաւանդ զի՝ դժնեայ կցորդս այս անձնիշխանական՝ միշտ մարտիկ․ խաբօղ շողոքորդ, յարեալ 'ի ստութիւն, ըստ առա-կողին, արածօղ հողմոց դժուարունելի․ հաստողին փախչօղ․ գերեալ որսողին․ մա-րեկան մարմնոյս՝ ներհակ անկակից, յօդ-նապատճառեան ամենավարան․ զոր քո է գիտել զքանեացն յաճախութիւն։ Նու զինի մեղանացն, ողորմոգինս իմն ողբարկութիւս վհատականս՝ տաժանակոծս՝ բազմաւաղե-լիս, քո առաջի տր գթարկութիս՝ գրեալս արտասուօք, թառանչս թշուառութեանց կարգելոց՝ անքաւս չար վտանգից մեղա-տագնապ պատկառեցելոյն։

Է․ Նու զի մի՛ կրկնաբանութիւս 'ի շատխօ-սութիւն կրթեալ, առաւել քան զայն այսու ողբալի․ քանզի ո՛չ երբէք համար-ձակի խնդրել իւր զարքայութիւն, այլ ըզ-տանջանացն թեթևութիւն․ ո՛չ ընդ կեն-դանեացն 'ի լոյս, քան թէ ընդ գերեզմա-նականացն՝ զգայական շնչոյն 'ի խաւար․ ո՛չ ընդ ամբարձեալսն, այլ ընդ բեկեալսն և ընդ խորտակեալսն։ 'Ի հանդստեան իւ-րում վատատեալ․ 'ի խրախութեան՝ ինքեան արտմեցեալ․ դիմօք ժպտեալ, և մտօք խոց-

եալ. կերպ ՚ի ծաղր, և աչք ՚ի յողբումն. երեսք զուարթանս ձևացուցանէ, և սրտատուքն զդառնութիւն սրտին ճշմարտէ։ Ըմպանակք երկու՝ յերկոսին ձեռին, մինն արեամբ և միւսն կաթամբ։ Երկու բուրանոցք կայծակնաւորք, մինն խնկով և միւսն ձենձերիւ։ Սկաւառակք կրկին կրաւորականք համոյ, մինն քաղցու և միւսն դառնութե։ Բաժակք զոյգ՝ առ երկուս բերմունս, մինն արտօսր և միւսն ծծումբ։ Տաշտք կրեցեալք ՚ի ծայրս մատանց, մինն գինի և միւսն լեղի։ Պտուղք տեսանելեաց ներհակաց, մինն ՚ի լաց և միւսն ՚ի վրիպումն։ Խանութք հալոցականաց հակառակութեց, մինն արծարծէ և միւսն շիջուցանէ։ Հայեցուածք դիմաց երկուց, մինն դոյզն ողոքանօք և միւսն անխնայելի բարկութե։ Համբարձումն երկակի բաղկաց, ոմն ՚ի հարուածս և ոմն ՚ի մերժումն։ Դէմք կրկնակի կերպից, մինն տխրեալ և միւսն ցասուցեալ։ Աշտաբանք՝ ընդ միոյ երկու, մինն սատեացս և միւսն ապաւինեացն։ Ապաւինութիք կարծողականք, մինն փոնէ և միւսն թերևս։ ՚Ի մի բերան երկակի բարբառ, մինն եղկութիւն և միւսն խռովութի։ Երկուս ազդմունս ՚ի միում սրտի, մինն կեղակարծ

յուսոյ և միւսն ճշգրիտ կորստեան ։ Ամպ ըրթագոյն ահագնատեսիլ՝ կրկին տեղացմանց , մինն նետս և միւսն քարինս ։ Որոտումն ահեղ՝ երկոցունց բերմանց , մինն կարկուտ և միւսն հրացան ։ Յայտցուածքն՝ երկուց վտանգից , մինն լալոյ և միւսն մահու ։ Առաւօտ սգոյ՝ երկուց բողոքմանց , մինն սաստից և միւսն ըսպառնալեաց ։ Արեգակունք երկու՝ ՚ի յերկուց ծայրից , մինն խաւարի և միւսն կիզման ։

Դ. Եթէ հարուածոց աջ կառուցանի , ինքեան վարկանի . և եթէ ձեռն պարգևաձիր , ոչ խոր ակն ունի ։ ՚Ի պարծանս ուրուք՝ կորանայ . յամբարձումն գլխոյ՝ ընկճի . ՚ի չարեացն յիշատակ՝ հեծէ . ՚ի ձառս մաքրոց՝ պատկառէ . ՚ի պատմութիս հանդերձելոցն՝ երերի ։ Եթէ օրհնի յումեքէ յայտնի , ՚ի ծածուկ զանձն անիծանէ . եթէ գովեստ յումեքէ լսէ , պարսաւանօք զինքն կշտամբէ ։ Եթէ գսրովեսցի սաստկապէս , ինքեամբ ինքեան վկայէ . եթէ ձաղեսցի ուժգին , սակաւ հատուցումն՝ առաւել պարտուցն գրեսցէ . եթէ ըղձումն մահու ինքեան լիցէ . այս առէ , և դարձեալ կրկնէ ։ Եթէ որոգայթ մահու ձգեսցէ յերկնէ , հազիւ զդէմն

համբառնայցէ ։ Օ՜ խորոց իրաւանցն մատեան՝ խիճեալ · զպատասխանութեանն յոյս՝ կքուցեալ · զհամարձակութեանն ընթացս՝ փակեալ ։ Այլ եթէ ոչ էր անփրկանաւոր կորուստ գերելոյն , զխորովլն երթալ ոչ ինչ դանդաղէր ։ Որդւոյն վայ մեղաւորին՝ որ տարակուսեալ կայցէ ՚ի վերայ երկուց ճանապարհաց , ըստ հոգեւոր բանի իմաստնոյն ։

Դ · Այլ արդ՝ զիա՞րդ ոչ ողորմեսցիս՝ բարեգութ , այսքանեացս ձայնարկութեանց՝ կողկողագինս հեծեծանաց , որ անուամբս այսու մեծացար , թէ ողորմած եմ ես տր ։ Ահա առ չարութիւն գերւոյս , բարութի քո · առ մահապարտիս դատանութի , քաղցրութի քո · առ կորուսելոյս յայտնութի , ճառագայթ քո · առ յանդգնելոյս մոլուի , ողորմութի քո · առ խակութի ճշմարտակարիս , հեզութի քո · առ կործանելոյս այցելութիւն , աջ քո · առ ընկղմելոյս վերբերութի , ձեռն քո · առ բժշկութի անողջանալի խոցուածոյս , մատն քո · առ պակուցելոյս պաշտպանութի , ոգի քո · առ ապախտաւորիս իմ վստահութի , երկայնմտութի քո · առ օծումն ամենադժնէիս , զօրութի քո · առ մեղաւորիս քաւութի , հրաման քո · առ փախուցելոյս ապաւի-

նութիւն , ոտք քո · առ սրացելոյս պատըս-
պարութիւն , բազուկ քո · առ վրիպելոյս
առաջնորդութի , լոյս քո · առ տարակու-
սելոյս հնարաւորութի , հանճար քո · առ
անխծելոյս կրկին ստացումն , օրհնութիւն
քո · առ վհատելոյս քաջալերութի , խրա-
խոյս քո · առ վշտագնելոյս մխիթարութի ,
բաժակ քո · առ նեղելոյս ընդարձակութի ,
կամք քո · առ ատեցելոյս կոչումն , սէր
քո · առ հաստատումն սասանեցելոյս , բան
քո · առ հոգւով վիրաւորելոյս , կաթուած-
արեան քո · առ աներևոյթ մթերս ցաւոցս ,
ակնարկութիւն քո · առ յուսահատելոյս
անդրէն ընտրութի , իշխանութի քո · առ
պատուաստումն կորեցելոյս , կցորդութի
քո · առ խաւարաւ մահու ծածկելոյս ,
նշոյլ կենաց քոց · առ խռովեցելոյս իմ
հանդարտութիւն , խաղաղութի քո · առ
վայրագութիւն օտարացելոյս , ողջոյն քո ·
առ մոլորելոյս դարձաւորութի , ձայն քո ։

Ո՛վ դու տիրես ամի գթութեամբ , և
չիք ՚ի քեզ մասն ինչ խաւարի · և ոչ է
բարութիւն առանց քո · և քեզ վայելէ
փառք յաւիտեանս · ամէն ։

վերստին յաւելեալ կրկին հեծութն՟՝ Նորին հրա-
կոչի , առ նոյն աղերս մաղթանաց բանի ։ 'ի խո-
րոց սրտից խօսք՝ ընդ ա՟յ ։

## ԲԱՆ · ԼԱ

Ա՟ · Եւ արդ՝ քանզի բազմացուցի պայ-
մանաւ բանիս՝ զաղէտ տագնապի
հեծութեան ձայնիս մեծ հառաչանաց՝
անսփոփելի խմյս վտանգի , զի դու՝ ողոր-
մած սկզբնահայրդ խոստովանութե՟ ան-
յայտ ծածկութից՝ որդի ա՟յ կենդանւոյ
տ՟ր յ՟ս ք՟ս , քաղցրութե՟ նայեսցիս քաւել ։
Արդարև կարող ես · Ճշմարտապէս բա-
ւական ես · եթէ կամիս , հնարաւոր ես ·
կամիս առաւելապէս , որպէս և կարես ։
Հարստանաս մեծապէս ընդ տալն , քան
եթէ ընդ առնուլն · բազմանան քեզ գանձք
'ի ցրուելն , քան 'ի ժողովելն · յաճախեն
ստացուածք քո 'ի սփռելն , քան 'ի ճշդելն ·
կուտին քեզ համբարք 'ի տարածանելն ,
քան 'ի շտեմարանելն ։ Հաւատամ այսմ
ա՟մբ՝ տէր , գտանել քև ելք փրկութե՟ ·
հաւատամ անարգս՝ ընդ պատուականին ·
յուսամ ընդ աբրահամու , և ընդ աննայի ·
զի մինն բանիւդ քո հաւատայց , և միւսն
քահանայապետին բարբառոյ անսայց ։
Վասն որոյ և ամ՟ 'ի խորին ծերութեան՝
անհամար որդւոց հայր հաստատեցաւ ·

զառանցեալն և զամուլն արգանդ սառայի՝ անդաստան պտղածին արդեան օրհնուէ՝ բազում ժողովրդոց՝ մարգարէից սրբոց՝ և թագաւորաց ընտրելոց՝ հայել յուսացաւ։ Իսկ միւսն՝ զանհանդերձելի երկիր՝ որովայնին սենեկի՝ եօթնեակ զաւակօք բարգաւաճեցոյց․ որ է թիւ մի անբաւութե, զընտան նշանակելոյ զէութի՝ ածութեն կատարելութե՝ սահման անհետազօտելի, և աւազանին նորածին որդւոց՝ անհատ յորդութի։ Այս թիւ պանծալի՝ որում ոչ է կէտ կցորդի, և ոչ սպառուած վախճանի․ այլ կայ ոմն է՝ ուրոյն ընտրութե նուիրեալ՝ յաւէտ անճառ վիճակաւ համայն յաւիտենիւ, դժուարաթարգմանելի մերոց իմաստից։

Ը․ Արդ՝ համարեա՛ յարդարութի անյուսալի փրկութե հոգւոյս՝ զամենակալան ձայն կողկողանաց սրտիս հեծութե, ընդ նախադրելոցն երջանկաց եդեալ և դասեալ զայս դաւանութի փոքր հաւատոց՝ իմոյս խնդրուածոց․ զի կեցից և ես առ նոքօք՝ բերկրեալ ընդ նոսին, բուռն հարեալ քան զիմոց գործոց՝ զքոյդ շնորհաց։ Մանաւանդ զի՝ կրկին բարձունք են և փառաւորք՝ և քան զչափ կշռութե բանի գերագոյնք՝ իմուամ խուովութեան

հաշտարանք , և հզօրապէս քաւարանք , և
կարծեաց թերութեան մտաց սլացեալք ։
Ընդ արեան քո ահաւորի՝ և ըստ մարմնոյ
ծնօղդ քո խնկելի ։ Պարք առաքելոցն ·
դասք մարգարէիցն · գունդք մարտիրո-
սացն՝ ձիաւորեալքն հետևակ՝ սպառազէն
արիութեամբ՝ մերկամարտիկն մրցութբ ·
գումարք միանձանց · բոյլք բանականաց
ընտրելոց · ժողովք բարեկրօնից · հոյլք
հոգեղինաց՝ յերկրէ երկնաւորաց · զին-
ուորութիւնք վերնականաց՝ ընդ մեզ կցոր-
դելոց ։ Նուանդք երախայրեաց · մատուց-
մունք զուարակաց · լուցմունք զամբարաց ·
բուրմունք խնկոց՝ իւղոց հանդերձանօք ·
յաղթանակք փրկական նշանաց · կառուց-
մունք խորանաց ա͞ծաբնակաց · ձեռք քա-
հանայից՝ շնորհիւ կատարելոց ։ Նո շար-
ժումն անձին յիշատակ ա͞յ · առ փոփոխու-
մըն գարշապարի · առ կարկառումն աջոյ ,
և ամբարձումն բազկի · առ բարիս՝ գո-
հութի , և առ գթել՝ աղաչանք · առ բանս
ընտանիս · առ խօսս հասարակաց · առ ձայնս
բնաւորականս · առ գործոց յաջողուածս ·
առ առաքինութեան ջերմութիւնս , որ 'ի
տունջեան և 'ի գիշերի՝ ընթացմունս օգ-
տակարաց հոգևորաց՝ քև առաջնորդելք ·
'ի նիրհել և 'ի զարթնուլ · 'ի պատերազմի

ազգաց ․ ՚ի մարտս դիւաց ․ ՚ի հակառակութիւնս հերձուածողաց ․ առ փորձունս, առ մեծամեծս ․ առ ձգումն ըմպելեաց և ճաշակումն կերակրոց ․ և որ ինչ միանգամ ՚ի կիրս մեր կերպանան, եթէ հեշտականս՝ եթէ տատամնելիս ․ վասն ոմանց աղօթս՝ ծնաւ ՚ի նոսին, և յաղագս ոմանց՝ զի զերծ-տրասցես սքանչելապէս հնարիւք անճառիւք ․ հաստատեալ յամենեցունց, թէ բաւական ես ամի, կաթնաբոյծ հաստակաց, տիոց պատանեաց, մանաց վայրենեաց, ստամբակաց գոռոզաց ․ մինչ զի առ թատերս տեսարանաց, և առ կոյս խառնիճաղանճ բազմութեց, և կամ առ կաքաւս կայթից անախորժականաց կանանց հզօրիդ՝

ոչ ես մոռացեալ։

Է ․ Արդ՝ դու ստացար զամենեսեան, և քո են ամենեքեան, և ողորմեսցիս ամենեցուն՝ միայն բարեգութ ․ զի թէ և մեղիցեն, քո են ․ վս զի ՚ի քում համարի են ․ քանզի գիտեն զզօրութի քո, ըստ առակողին մաղթանաց։ Որում և ես կցորդիմ թշուառս բանիւ վկայեալ սորին յանցաւորապէս ․ յանդգնիմ ասել, թէ որ կարդայ զքեզ գովեստիւ, ծանուցեալ զքեզ թէ իցես, թէ և եօթամբք իցէ վարակեալ՝ կրկնապատիկ պատժաւորութք, առ այս

օրինակ կիրթ ձեռնարկութեան, զիմրդ ոչ քո լիցի։ Յորս է տեսանել 'ի մէջ արջնատես ագռաւուց՝ սպիտականիշ երամս աղաւնեաց. 'ի մէջ խորխտականաց ձիոց անմաքրից՝ որոջս հանդարտաբարս. 'ի թխշանց գաղանականաց՝ գառինս նուիրելիս։ Հեզութիւն 'ի խստութեան. կատարելութիւն 'ի թերութեան. խոնարհութիւն յամպարհաւաճութեան. ճշմարտութիւն 'ի ստութեան. միամտութիւն 'ի մանկութեան. անբծութիւն յայլամտութեան. բարօրութիւն 'ի չարութեան. պարկեշտութիւն 'ի լկտութեան. ողորմութիւն յանգթութեան. ապաշաւանք յանյուսութեան. քաղցրութիւն 'ի բարկութեան. հաշտութիւն 'ի թշնամութեան. անոխութիւն 'ի խածանողութեան. քաջալերութիւն 'ի լկտութեան. օրհնութիւն 'ի նետաձգութեան։ Յոր ոչ բաւականացայ երբէք 'ի դատել ճշգրտապէս, թէ ո՛վ յերկրածնաց սատի կանխեացէ ժառանգել զքեզ. որ միայն անաչառաբար կշտամբես խրատամբք զարդարութիւն՝ տաամբարիշտ մարդուրն, և տա պտունիկ զղջացեալն. տա ամենեսին բարեգործ՝ միայն թագաւոր օրհնեալ 'ի բարձունս, և յաւ յաւիտեանս. ամէն։

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հըռ-
կողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի։ 'Ի խո-
րոց սրտից խօսք՝ ընդ ա͞յ։

# ԲԱՆ · ԼԲ

ա · Եւ արդ՝ ես յետնեալս 'ի նախադ-
րութենէ արժանաւորաց գրեալ
ինձէն ընդ պարտաւորսն պատժոց, հայ-
ցեմ զողորմութիւն ընդ ամենեցուն մաղթա-
նաց։ Ընդ նկունս և անհամբերձակս ·
ընդ տկարսն և փոքրկունս · ընդ ընկեցիկսն
և արհամարհեալս · ընդ տարադրեալսն և
առ քեզ դարձեալս · ընդ երկուացեալսն
և ճշմարտեալս · ընդ կործանեալսն և յա-
րուցեալս · ընդ ընկճեալսն և հաստատ-
եալս · ընդ գլորեալսն և կանգնեցեալս ·
ընդ մերժեալսն և ընկալեալս · ընդ ատե-
ցեալսն և կոչեցեալս · ընդ ապշեալսն և
զգաստացեալս · ընդ անառակեալսն և
զոպեալս · ընդ հեռացեալսն և մերձեցեալս ·
ընդ հերքեալսն և սիրեցեալս · ընդ պատ-
կառեալսն և զուարթացեալս · ընդ ամա-
չեցեալսն և խնդամտեալս։ Նմա ես պատ-
մեմ աստանօր դարձեալ՝ ոչ զմեղսն երու-
սաղէմի, ըստ մարգարէին հրամանաւու-
թեն, որ առ ժողովուրդն նախկի, և կամ
տանն յակոբու զանօրէնութիւս ն͞ր, այլ

իմյս ժամանեցից յայտնութե . քանզի ա-
ւաղ ընդ աղէտս մահու յարելով , ըստ
մարգարէին , յանդիմանեցից զիս ինքն՝ ին-
ձէն իմովս ձայնիւ , ըստ սաղմոսողին . ո՞չ զի
յանձնառական յայսմ համայնապատում
խոստովանութե՝ ոչ կարօտացեալ կրկնա-
կին , միանգամայն խոպան սրբեցայց՝ օրհ-
նեալ հրամանաւ էիդ ։

Է . Եւ արդ՝ կրկնելով ծունր բարերա-
րիդ քաղցրութե , տարածեալ զանձն իմ
առաջի , զ'ի մահ գլորմանն ցուցից կերպա-
րան . որ 'ի հող խոնարհեալ մածայ ընդ
երկրի . և ընդ անցաւորս այս կենցաղ
կորստեան՝ անսանական գետնաքարշութե
սողնոյ սահեցմամբ՝ կամօք բևեռեցայ ։
ԱՌ'ի քեզ ո՞ր յեցեալ՝ իբր 'ի հաստարան
կենաց գաւազան՝ 'ի յարմարոյն դաւթի
ընծայեալ մարմնով՝ անձկառ շաղկապմամբ
յանեղ աստուածութիդ , կանգնեցայց անդրէն
կիսայար՝ պատկառեալ 'ի քոյդ երախտ-
եաց՝ 'ի վայր կորացեալ դիմօք , աչօք 'ի
բարձունս յառեալ ողորմագին տեսութե
'ի քեզ՝ մերձ 'ի հեծութի , բնաւին ողոր-
մութի , բոլորովին քաղցրութի , զլի՛
լուսոյս արտասուօք լցեալ՝ պաղատանս
յուսոյ առաջի մեծիդ վերընծայեցից ։
Տէր ամենատուատ անհնուագ երկայնմտու-

Թէ՝ քո դառնացուցչիս, միայն դու 'ի
յամի սահման փրկութե, ած բոլորից ·
անճառ մեծութի · անբովանդակելի բնու-
թի · անքննելի խելութի · հզօր զօրութի ·
կարող բարերարութի · անպակաս լրութի ·
անճառ ժառանգութի · վայելչական վի-
ճակ · առատ պատրաստութի · անստուեր
խնամատութի · տենչալի տուրք · անձկալի
ձիր · բաղձալի բերկրութի · անտխուր
հանգիստ · անտարակոյս գիւտ · անկապուտ
կեանք · անծախելի ստացուած · անփոխա-
նորդելի բարձրութի · ամենարուեստ բը-
ժիշկ · անսասանելի հաստատութիւն ։
Դարձուցիչ մոլորելոց · գտիչ կորուսե-
լոց · Յոյս ապաւինելոց · Լոյս խաւարելոց ·
քաւիչ մեղուցելոց · ծածկարանդ փախու-
ցելոց · անդորրիչ խռովեցելոց · փրկութիդ-
մահացելոց · արձակիչդ կապելոց · աղա-
տիչդ մատնելոց · պատսպարանդ սահեցե-
լոց · վշտակիցդ գայթագղելոց · երկայն-
մտութի տարակուսելոց ։ Լուսոյ տեսակ·
ցնծութե ցոյցք · օրհնութե անձրև · հո-
գի երեսաց · զօրութի դիմաց · հովանի
գլխոյ · շարժարան շրթանց · ազդումն բա-
նի · կառավար անձին · բարձումն բազկի ·
ձգումն ձեռին · երասանակալդ սրտի ։
Ընտանի անուն, մերձաւոր ձայն · կցոր-

դութի՟ հարազատ · խնամածութի՟ հայրե-
նի · խոստովանեալ անուն · պաշտեցեալ
պատկեր · անպարագիր տիպ · երկրպագ-
եալ տէրութի՟ · բարեբանեալ յիշատակ ·
խնդութե՟ մուտք · անվրէպ շաւիղ · փա-
ռաց դուռն · ճշմարտութե՟ ճանապարհ ·
երկնաձեմ սանդուղք ։ Դու այլ բազմութ՟
բանից գովեստից անհամար կարգաց՝ և
տանց անբաւից, զոր ոչ բերէ բերան երկ-
րածին, և ոչ տանի գործի մարմնեղէն, և
ոչ կշռեն խղճք հոգեղէնք ։

Գ · Դու քեզ հայի ա՟մ ակն տեսողի՝ ա՛ծ զ-
ամենայնի · նայեա՛ ՚ի պաղատանս հառաչ-
ման ձայնի քոյոց ծառայից, և թէ յաղախ-
նեաց որք աղաչեսցէ ։ Դու ընկա՛լ զցօղ ող-
բերգութե՟ լալոյ արտասուաց աչացս ցան-
կալիրի՝ յանարատ ոտս մարդեղութե՟ քոյ՝
ք՛ս, և օրինակաւ խորհրդոյ հերաց կնոջն
յանցաւորի՝ զառ քեզ դարձն և զդաւա-
նութի՟ · և համբուրիւ շրթանցս առ ճաշակ
փրկութե՟ կենացդ հաղորդութե՟՝ համա-
ընչապէս զանքակ միութի՟ · և զնոյն զթու-
թի՟ նորին ողորմութե՟ ընկալեալ ՚ի քէն՝
բա՛րերար, գրաւականեսցե՛ս զմեծդ պար-
գև՝ ընդ փոքու հաւատոյս · և ՚ի ձեռն
զթութե՟ սիրոյ քոյ առ քո անձկալի ա-
նունդ խոստովանեալ ծառայիս, դարձցի՛ն

ձմերունք հողմոյն խստութե՝ ’ի յօդ հան-
դարտութե . և մրրկին սաստկութի՝ ’ի սիկ
ախորժութե . և կարծիք երկիւղին՝ ’ի մեծ-
վստահութի . և պատուհաս պատժոցն՝
յերանութեան պատահումն . և վտանգք
թախծանացն՝ ’ի հոգևոր խրախճանութի .
և ալէկոծութի ծփանացն՝ ’ի խոր խաղա-
ղութի . և ղեկացն թևարկմունք՝ յանքոյթ
նաւահանգիստն . և բերք բեռանցս մե-
ղաց՝ փոխարկեցի ’ի թոշակ շնորհաց ։
Իսկ յայսքանեացս ամենից բիւրուց բա-
րութեցս ’ի քէն եղելոց՝ մեծացի անուն
հզօրիդ խնկեալ և խոստովանեալ . ամա-
չեցէ բանսարկուն չարեաց՝ հերքեալ և
հալածեցեալ . ունայնացին մուրհակք մե-
ղացս . խզեցին խաղրքն . որոշեցին որո-
գայթքն . կապտեցին կապանքն . վանեցի
վիհն . վերացին մէգքն . պարսեցին
պատրանքն . ջրեցին մեղքն . պատառեա-
ցին պարտիքն . խորտակեցի լուծն . քակ-
տեցին քեղիքն ։ Իսկ ընդ մույլ մթութե
չարեացն յանցանաց , և դիւացն բանակաց
պաշարողաց՝ արև փառաց քոց ժամանեա-
ցէ՝ կեցուցանել փրկել և լուսաւորել ,
յաջմէ և յահեկէ , ’ի դիմաց և ’ի թիկանց .
և եղիցի նշոյլ առաւօտու հոգւոյ գար-
նայնոյ ընդ ակնկալութե սպասողացն քում-

երեւման ։ Օ՛ի դու ես բարերար առ ա-
մենեսին, եւ հնարաւոր են քեզ ամենայնք ․
եւ ամենեցուն զկեալն կամիս, եւ զփըր-
կութիւնն բաղձաս ։

Գ ․ Ո՛վ ամենապարգեւ ձեռն Յի՛ Քի՛, եւ
տուխս գործցիս կարկառմամբ շնորհի ա-
ջոյդ քո ո՛րյ ընակեալ մնացեալ, եւ ոչ հե-
ռացեալ յանձկութե՛ սրտէ սիրոյ սենե-
կիս ․ եւ աներծական քո նկարագիր՝ նշխար
պանծալի լուսոյ քրիստոնէական փրկաւէտ
կոչմանս՝ ընդ իս պահեսցի, միջնորդեալ
ընդ քեզ ՚ի մատեան յաւիտեան՝ կտակաւ-դ
կենաց՝ հոգւոյդ աւետեաց՝ երկնից յօրի-
նողիդ ։ Ո՛ւ քեզ միայնոյ պատճառիդ, եւ
միոյդ ՚ի միոյ պատճառէ, եւ ունողիդ ըղ-
պատճառ միոյ, երրեակ անձնաւորութե՛ եւ
միոյ ա՛ծութեդ վայելէն փառք յերկնա-
ւորացն վեհից, ՚ի սրբոցն դասուց, յա-
ւիտեանս յաւիտենից ․ ամէն ։

---

Վերստին յաւելուած կրկին հեծութե՛ նորին հըր-
կողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի, ՚ի խա-
ղաց սրտից խօսք՝ ընդ ո՛յ ։

## ԲԱՆ ․ ԼԳ

Ա ․ Ո՛րդ՝ զյարմարութիւն պաշտաման
բանիս՝ ՚ի խայրեաց հոգւոյս քեզ

նուիրելոյ՝ օրհնեալ բարեգութ , կցոր-
դելով ընդ խնկազգեստին զուգամանա-
պէս՝ խառնեցես 'ի յանուշութիւն կաղ-
մութեան իւղոյն մարխամու՝ կնոջ բարե-
պաշտի ։ Զոր հաւասարեալ նոյնուբ ընդ
երջանիկ պոռնկացն՝ 'ի քէն ընկալելոցն՝
յաւէտահրաշ յարգանօք , պարարեցիս
մեծապէս իմովս բանիւ նուաստիւ , ըն-
կալեալ յանհաս և 'ի բարեբանեալդ գլուխ
բարձրելոյդ , անկշտամբելի 'ի բամբասա-
նաց սաղմոսին , մի՛ օծցէ զտերև ոստոց
գագաթան՝ իւղ մեղաւորին ։ Իժևա-
բասցես զօրանալ կրկին յաճախութեամբ՝
բուրման խոստովանութե այսր մատենի՝
'ի բազում ազդեալ , համասփիռ ամենա-
տարած և աշխարհալիր տանն տեսակաւ ,
ըստ օրինակի համեմատութե նոցայն յի-
շատակի ։ քանզի դու նոյն տէր զգաստա-
ցուցիչ՝ նախնի չարախորհից կանանց մե-
ղաւորաց ։ Արդ տուեալ զմարգարէին
կերպարան՝ քումդ ճշմարտատիպ պատկերի
յեղանակեցեր , անտուպ առ սոսին ան-
ճառ ներգործութբ՝ 'ի յիս վերաբերեալ
զծայրագոյն շնորհին կատարումն ։ Ընդ
անսահմանական գարւոյն կերակրոյ , զբազմա-
համբար պտուղ ցորենոյդ՝ կենացդ հա-
ցի ։ ընդ ապականացու արծաթոյն , զար-

քունականդ պատկեր · ընդ յիմարաբար թմբրութե գինւոյն, զբաժակդ արեան արարչիդ · ընդ խուղոյն առելոյ 'ի յայրատ կնոջէն հնոյ ժողովրդեանն, զօծումն շնորհին առ իս դարձելոյ · ընդ զերծման գլխաշուք կտաւոյն, զանապականութեան վերարկուն · ապարանջանին պճնութե, զթուխս բարեմասնութեան, օրինին և աւետարանաւն՝ հանդերձ գործնական առաքինութեամբն · ընդ ունկանն գնդի՝ վայելչականն զարդու, զանսասուեր յիշատակ տէրունականդ ձայնի · ընդ քայլոյս պերճութե լանջացն, զյոքնահաւաք աւանդս ուղղութեան քոյինակրօն ըծոյդքաղցրութեան ։

Ե · Բայց զի՞ է յայտնի ինձ պարծել · և ո՛չ վերստին 'ի սոյն պատկառել ։ ԱՅԼ յա՛յլ օրինակ փոխեալ զմատեան մաղթանաց այսր ողբերգութե, որ ինչ ինձ է յարմարաւոր, ամ՛ս հատուցից զպատիժ պարտուցս իմոց մեղանաց, 'ի մարգարէից սառից բերեալ համառօտս՝ 'ի սոյն յարկ մուծից սաստիկ դատախազ · ընդ ողբոց նոցին ըծակցեալ, քան թէ ընդ բերկրումն նոցա պարել · յորս հաւաչանս, ձայնս հեծութե, բողոքս բարկութե, նախատինս խորտակման, լալումն կարեւոր ։ ԱՅԼ մեծիդ-

ա̃յ գթութե̃ ամենաժամին՝ կանուխ ազ-
դեցաւ յիմ յուսատրութիւն. առ որս՝
զղջմունս, խոստովանութ̃իս, աւետիս,
պարգեւս, լուսոյ երեւմունս, խրախոյս
ա̃ծայինս, փառաց ժառանգութ̃իս, հրա-
շից յայտնութ̃իս, սքանչելեաց տեսութիս:
Յորոց ոմանք յայս ընձեռեն, եւ ոմանք վե-
հատութ̃իս բաղում մատուցանեն. յորս
ես կամաւ կործանեալ՝ կորստեանն վիճա-
կեցայ: Ոի եթէ զգեստ ա̃յ զվարդագու-
րին պատրուակ առաջ եղեկիել, յորում
արար ժողովուրդն կուռս կարկատունս,
որով պոռնկել ասէ՝ ՚ի նմ̃. իսկ ո՛րքան
պատիժ անմաքրութ̃եա եղիցի՝ զա̃ծ զգե-
ցողիս նեխոյ եւ արատաւորս: Ո արմանամ,
թէ զիարդ ոչ կիզում. հիանամ, թէ ի՛բր
ոչ այրիմ. ափշիմ, թէ ո՛րպ̃ չյափշտակիմ՝
տանջեալ, լքեալ, չարչարեալ, ջախեալ,
մաշեալ, խորտակեալ, կոտրեալ, բաժան-
եալ ՚ի յօրինակէ ժանեաց կորուսչին, ընդ
գրոյն: Եւ այս միայն է պահեցեալ ինձ
նշոյլ յիշատակի՝ փրկութե̃ յուսոյ, զի
ք̃եան աւետարանն՝ կեանս է ամենեցուն,
՚ի կերպարանաց պատկերի բանին ծանու-
ցեալ: Որով առ մեղաւորն՝ դարձն. առ
պարտաւորն՝ շնորհն. առ եղծումն՝ նորո-
գութ̃ին. առ անօրէնութ̃ին՝ քաւութ̃ին.

առ վէրն՝ բժշկութիւն · առ վտանգն՝ ան-
դորրութիւն · առ պատիժն՝ ներումն · առ
պատերազմն՝ հանդարտանալն · առ հուրն՝
անձրևն · առ պատուհասն՝ պարգևն · առ
ակնկալութի սատակմանն՝ ձիրն · առ գոր-
ծարան մահուն՝ կենացն ազատութի ։
Է · Եւ զինչ է ինձ զայսքանեաց յիշմանց
'ի թիւ արկանել, և ոչ զանձառելեան ա-
տանօր դասել ։ Յիշատակաւ հօրն բարձ-
րելոյ՝ յորդւոյն կցորդութի · յանուն մեծ-
նին՝ առ հայրն ընտանութի · սոցին ակ-
նարկութեամբ՝ ընդ հոգւոյն հաղորդութի ։
Խաչին փրկանք · բանին սփոփութի · բար-
ւոք վարձ կամացս՝ առ կշռութի գիտողին ·
աւազանն կենդանարար՝ հաշտութեան միջ-
նորդութի ։ Եւ այլք ամենայնք անթիւք
բարիք 'ի բարերարէն բարդեցեալք, ա-
զատք 'ի հարկէ, արձակք 'ի ընծայ, իշխանա-
կանք՝ և ոչ իշխեցեալք ։ Այսոքիկ են՝ որ
ինձ 'ի մէջ գտանութեան մահու՝ կեանս
անապականս աւետարանեն · քանզի եթէ
ոչ զայսոսիկ ունէի, կանխաւ արդեօք կո-
րուսեալ էի խիկ և խիկ ըստ բանի երգողին ։
Ո՛չ փրկութեամբ որդւոյ՝ զհայր փառաւո-
րեմ, ոչ նուաստութեամբ հոգւոյ՝ զորդի
նախադասեմ · համափառ ունիմ զերեսեան՝
և նոյն արարչութեամբ ։ Քանզի և 'ի դէմս

հոգւոյն սրբ՝ այս են աղաչանք, նախըն-ծայ սկզբան պատարագին՝ յորում գառնդ երկնաւոր զենանի, զայս աղօթեցի։

Աղօթք. որ նախ քան զպատարագն մատուցանի։

Դ. Ամենակալ բարերար մարդասէր ած բոլորից, յօրինօղ երեւութից եւ աներեւութից, փրկօղ եւ հաստատօղ, խնամօղ եւ խաղաղարար, հօր հզօր հոգի՛, հայցեմք բազկատարած մաղթանաց գոչմամբ հեծութեան՝ յանդիման եղեալ քեզ ահաւորիդ։ Ամաչիմք մեծաւ դողութբ սաստիկ երկիւղիւ՝ մատուցանել նախ զբանականս զայս պատարագ՝ քում անզննելին զօրութեդ, իբր աթոռակցի փառակցի եւ արարչակցի՝ հայրենի անկապուտ պատուոյդ, եւ քննողի ծածկութե խորոց խորհրդոց ամենակատար կամաց հօրդ եմմանուելի՝ զքեզ առաքչի, փրկչի եւ կենդանատուի եւ արարչի ամի։ Ի ձեռն քո ծանուցաւ մեզ երրեակ անձնաւորութի միասնական ածութեանդ յորոց մի եւ դու ճանաչիս անհաս։ Ե. Եւ ի ձեռն քո առաջինքն նահապետական տոհմին շառաւիղք՝ տեսանօղք անուանակոչեալք, զանցեալսն եւ զգալոցսն, զեղեալսն եւ զոչ գոյացեալսն, անստուերաբար բարբառով

քանի վերապատմեցին ։ Սգի ո՞չ քարոզ-
եալ զքեզ մովսէսի , որ ՚ի գնալն քո ՚ի
վերայ ջրոցն՝ անպարագիր զօրութի , ա-
հեղ շրջարկութբ տածողականաւ՝ թեւա-
պարփակ պաշտպանողօրէն՝ գթասիրեալ
՚ի ծնունդս նորոգս՝ զաւազանին խորհուրդ-
ծանուցեր ։ Զոր կերպարան օրինակութե՝
նախքան զկատարուցանել զլյծդ մածուած-
վերջնում վարագուրիդ՝ յօրինեցեր կա-
րօղ տիրապէս զբովանդակ բնութիս ա-
մենից բնաւից բոլորից գոյից ամ էից՝
յանէից ։ Քեւ ստեղծանին ՚ի նորոգութե
յարութե ամ եղեալքս առ ՚ի քէն՝ յայնմ
ժամանակի , որ է օր վերջին այսմ կենցա-
ղի , և օր առաջին՝ երկրին կենդանեաց ։
Քեզ հնազանդեցաւ միութբ կամացն ոգ
հօրն խորում, ազգակիցն քո՝ էակիցն հօր՝
անդրանիկն որդի՝ մերով կերպիւ ․ զքեզ
աւետարանեաց Ճշմարիտ ամծ՝ հաւասար և
համագոյ հօր իւր հզօրի , և զառ ՚ի քեզ
հայհոյութին անքաւելի քարոզեաց , և իբր
զամծ ամբարտակն զքո հեստելոցն՝ չարաբա-
նական բերանս կարկեաց , և զիւրն շնորհ-
եաց՝ արդարն և անարատն՝ գտիչն ամի ․
որ վասն մեղաց մերոց մատնեցաւ ․ և յար-
եաւ վն զմեզ արդարացուցանելոյ ։ Նմա
փառք ՚ի ձեռն քո , և քեզ բարեբանութի

ընդ Հօր ամենակալի, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

*Դարձեալ կրկնեսցի 'ի նոյն կարգ բանի, մինչև վերահասութիւն լուսոյ հրաշալւոյս յայտնեսցի ազդեալ աւետարանել վերստին զերկրին խաղաղութիւն։*

Ն. Աղաչեմք և աղերսեմք արտասուալից հառաչմամբ յամ՟ անձնէ՝ զփառաւորեալ արարչութիւնդ՝ անեղծ և անստեղծ՝ անժամանակ հոգւոյդ գթածի. որ բարեխօսդ ես վս՟ մեր յանմռունչ հեծութիւն՝ առ ողորմածդ Հայր. որ զսրբսն պահես, և զմեղուցեալսն մաքրես՝ և տաճարս կազմես կենդանի և կեցուցիչ կամաց բարձրելոյդ Հօր։ Արդ՝ ազատեա՛ զմեզ յամ՟ անմաքուր գործոց, որ ոչ է հաճոյ քումդ բնակութեան. և մի՛ շիջցին առ 'ի մէնջ՝ լուսոյդ շնորհաց փայլմունք՝ 'ի տեսականացս աչաց խմաստից. վս՟ զի զքեզ ուսաք միանալ 'ի մեզ 'ի ձեռն աղօթից, և ընտիր վարուց խնկելոց։ Նու քանզի մինդ յերրորդութեանդ պատարագի, և միւսդ ընդունի՝ հաճեալ ընդ մեզ հաշտարար արեամբ անդրանկի իւրոյ. իսկ դու ընկալցիս զմեր պաղատանս, և յարդարեսցես զմեզ օթևանս պատուականս ամ՟ պատրաստութե՟ 'ի վայելումն ճաշակման երկնաւոր

գտանինդ , առանց պատժոց դատապարտութե̃ ընդունել զայս անմահացուցիչ մանանայս կենաց նորոյ փրկութե̃ն ։ Եւ հալեցի՛ ՚ի հրոյս յայսմանէ գայթակղուե̃ա մեր որպէս մարգարէին կենդանախարդկ կայծակամբն՝ ՚ի ձեռն ունելեացն մատուցման ․ զի յա̃մի քոյդ քաւողեսցի գըթութի̃ , ո̃չ որդւովդ ո̃չ հօր քաղցրու̃ի ․ որ զանառակ որդին մերձեցոյց ՚ի հայրենի ժառանգութի̃ն , և զպոռնիկն յառաջեցոյց յերկնային արքայութի̃ն՝ արդարոցն երանութեան ։ Այո՛ այո՛ և ես մի եմ ՚ի նոցանէ ․ և զիս ընկա՛լ ընդ նոսին իբր մարդասիրութե̃ կարօտեալ մեծի , շնորհօք քո ապրեալ , զարեամբ քո̃ սրբեալս ։ Ո՛ ի յայսմ ա̃մի՝ յա̃մի ծանիցի քո ա̃ծութի̃դ՝ ընդ հօր փառաւորեալ համապատուաբար ՚ի մի կամս , և ՚ի մի իշխանութի̃ գովութեան ․ զի քո՛ է գթութիւն , և կարողութիւն , և մարդասիրութիւն , զօրութիւն , և փառք յաւիտեանս յաւիտենից ․ ամէն ։

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հրա-
կողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի. 'ի խո-
րոց սրտից խօսք՝ ընդ ա̃յ.

## ԲԱՆ · ԼԴ

Ա · Արդ՝ առ այսոքիկ թշուառացեալ չնչոյս իմոյ իղձք, և առ քեզ դաւանութիւնք յարմարականք, որ բովանդակես բանիւ զա̃մ՝ ա̃ծ, զոր 'ի նախնին ձայնեալ՝ և յերկրորդումն ցուցից. Իսկ յանդիմանութիւնս գրաբանականս՝ 'ի կոյս բազմութեան ազգաց, և թարգմանութիւն ժողովրդոց, զայս արդահատութիւն մաղթողականս նուիրեցի, զոր ներքնաշարեալքդ սահմանադրեն գոհաբանութիւնք.

'Ի հանդիսարանս խօսից առեալ՝ բանս մաղթանաց, որով հոգին աստուծոյ հաշտեալ՝ հասանէ յօգնականութիւն.

Բ · Աղաչեմ զանփոփոխելի տէրութիւն ամենազօր հոգւոյդ հզօրի, առաքել զցօղ քաղցրութեան քո, և բարեգործել 'ի յանձին՝ և յիշխանական ազդման զգայութեան՝ զամենալից շնորհս բազմապարգև քո ողորմութեան. Իւ հերկեալ ըզբանական անդաստան՝ մարմնեղէն կարծրացեալ սրտիս, յընդունակութի արգասեաց հոգևոր սերմանդ. Որում ամենիմաստ էութեանդ խոստովանիմք զա̃մ պար-

գես 'ի մեզ ծաղկեալ և աճեցեալ․ որ ձեռնադրես առաքեալս․ լցուցանես մարգարէս․ ուսուցանես վարդապետս․ բարբառեցուցանես համերս, և բանաս զփակեալ ականջս խլից․ ո՜վ ազգակիցն քո՝ էակիցն հօր՝ անդրանիկին որդի, քոյին գործակցութե̃ ներգործելով զայս ա̃մ՝ քարոզեաց զքեզ՝ ա̃ծ հաւասարակից իսկու̃նդ հօր։

Շնորհեա՛ և ինձ մեղաւորիս խօսել համարձակութե̃ զկենդանարար խորհրդաւետեաց աւետարանիդ․ հետևել արագաթուիչ ընթացիւք մտաց՝ ընդ անհուն տարարէզս քոյինաշունչ կտակարանաց։

Եւ 'ի մատչել իմ 'ի գլուխ հանդիսի՝ մեկնութե̃ բանի՝ նախաժամանեսցէ առ իս գթութի քո, խօսելով յիս զարժանն և զպիտանին և զհաճոյսն քո՝ 'ի ժամանակի, 'ի փառս և 'ի գովեստ ա̃ծութե̃դ քո, և 'ի լուութի շինութե̃ կաթուղիկէ եկեղեցւոյ։

Ես կարկառեմ 'ի վե՛ր իմ զամենամերձ աջ քո․ և զօրացո՛ զիս շնորհօք գթութե̃դ քո։

Փարատեա՛ 'ի մտաց իմոց զմէգ մթութե̃ մոռացութեան, ապաքինեալ ընդ նմին զխաւար մեղաց, ամբառնալ ուշիւ իմաստից՝ 'ի կենցաղոյս երկրէ 'ի բարձունս։

Լուսաւորեա՛ 'ի յիս վերստին՝ զծագումն անստուեր հրաշից գիտութեան ա̃ծութե̃

քոյ՝ Հե՛զոր, արժանի լինել՝ տանել և ու-
սուցանել յօրինակ բարեաց ա͞ծասէր լսո-
ղաց։ Եւ քեզ ա͞մ փառք՝ յա͞մս, ընդ-
Հօր ամենակալի, և ընդ որդւոյդ միածնի
և բարերարի, այժմ և յանվախճան յա-
ւիտեանս. ամէն։ Իսկ զհաւատոյ սահման
բանի՝ ընտրութե՛ն շնորհի՝ կենաց կանոնի՝
տա Համագոյ սուրբ երրորդութե՛ն՝ զայս
վարդապետեացի, զոր շաւիղ կարգիդ վե-
րանկարէ։

Երրորդութիւն անպայմանական նորոգ տեղծարա-
նութեան, ազդեալ յաստուածոյ. յոր ինչ 'ի Նիկիոյն
սահմանեցաւ հաւատ։

Գ. Խոստովանիմք և դաւանեմք, պաշ-
տեմք և երկրպագեմք զզուգա-
փառ միութի ամենասուրբ երրորդութե՛ն։
Մ՛ութի անձանց, միշտ բարի, նոյնագոյ,
հաւասարապատիւ, անհաս իմաստից թեւոց
սլացման, 'ի վեր քան զօրինակ և անդր քան
զնմանութի, գերազանց գոլով սահմանի՝
անպարագիր բացարձակութե՛, յառաջ
քան զհի՛մն յաւիտենից անտարրափակ
էութե՛ց, ստեղծականացս կարգաց, օրհ-
նաբանութե՛ անթարգմանելեաւ՝ ամենա-
հարուստ մեծութե՛՝ յաւէտ պսակեալ.
հասարիչ ժամանակաց՝ և որ 'ի ժամանակի

էն կերպաւորեալք · ինքն պատճառ հան-
դերձից՝ և յարմարապէս յօրինից՝ տեսա-
կանաց և աներևութից ։ Ո՛չ անուամբ
չափեալ , և ո՛չ յորջորջմամբ նշանակեալ ·
ո՛չ որակութ̃ե նմանեալ , և ո՛չ քանակութ̃ե
կշռեցեալ · ո՛չ օրինակաւ ձևացեալ , և ո՛չ
որպիսութ̃ե ծանուցեալ · ո՛չ ’ի թերութ̃ե
տարածեալ , և ո՛չ ’ի լրմանէ ամփոփեալ ·
ո՛չ ուրեք երբեքի՛ գրաւեալ , և ո՛չ ’ի
տեղւոջ վայրի երևեալ ։

Գ · Հայր գթութեանց՝ ունող ա̃մի , և ա̃ծ
հանուրց՝ որ յերկնի և որ յերկրի , բաց ’ի
բանէն միայնոյ՝ որով զա̃մ ինչ ունի ։
Ստեղծիչ և տուիչ շնչոց ամենից , բաց ’ի
հոգւոյն իսկակցէ՝ որով զհամայնն կազ-
մեաց ։

Ե · Ս՝ինն յերջանկափառ համագոր աշխա-
ւորութ̃ե երից անձնաւորութ̃եց խո-
նարհեալ ’ի վերուստ՝ աստուստ ’ի ստո-
րինս · որ էրն իսկ ’ի բնէ անբաժ ’ի ներք-
նոցս՝ անկապուտ մնալով փառացն աթո-
ռոյ , և անկարօտ դիմացն ծնողին իւրոյ ։
Ս՝տեալ ’ի սենեակ կուսին արգանդի պար-
զաբար , և ելեալ անտի յօդաւորաբար
մարմին էապէս՝ անորոշելի , անթերի մարդ-
կութեամբն , և անպակաս ա̃ծութեամբն ։
Ս՝ի որդի հօրն միայնոյ , և միածին անդ-

րանիկ՝ ա̄ծամայր տիրածին կուսին , ա-
րարիչն՝ յեղականուա̄ն մարդ եղեալ ճշմարիտ
սկզբնածին . ահա ոչ զկնի եղելոց երկ-
րաստեղծիցս նմանութե̄ , այլ նոր և չքնաղ՝
Թագաւորաց վեհափառ , որ ոչ ցուցաւ 'ի
դարս , և ոչ գոյացաւ 'ի ժամանակս , անդ-
րանիկ՝ ըստ սաղմոսողին , քան զա̄մ Թագա-
ւորս երկրի . անապական խառնութը̄՝ կեր-
պացեալ զմերս 'ի մարմնի , ըստ օրինի հող-
ւոյ ընդ մարմնոյ , և ոսկւոյ ընդ հրոյ , և
կամ յայտնապէս իսկ ասել՝ լուսոյ ընդ
օդոյ . ոչ փոփոխեալ և ոչ անջատեալ։
Այն ինքն եկեալ կամաւորութը̄ 'ի խաչն
մահու , իբր զգառն անարատ՝ 'ի սպանդ-
վարեցաւ , և հանդերձեաց զօրէն ինքնիշ-
խանութը̄՝ զարարածոց իւրոց փրկութի .
չարչարեալ իսկութը̄ կենդանեօք՝ եդաւ
'ի շիրմի անորոշելի յա̄ծութե̄ն . եռօրեայ
Թաղմամբըն՝ 'ի դժոխս սանդարամետակա-
նացն վհատելոցն բանտարգելիցն՝ քարոզ-
եալ ցուցաւ նորոգումն և լոյս ։ Նա ա-
ւարտեալ զանօրինականացն զփրկանաւորն
զանտեսութի , ա̄ծապէս վերակենդանացեալ .
և կառաւարեալ 'ի Թևս հողմոց՝ ելեալ 'ի
քրովբէս՝ ամպով անքննութե̄ ծածկեցաւ .
համբարձեալ դեր 'ի վերոյ ա̄մ երկնի ,
նստաւ ձախուը̄ յաԹոռն իւրական սկզբ-

նաժառանգ հօրն հաւասարութե̃ , յորմէ
և ընդ խոկ ոչ մեկուսացաւ , անկորուստ
առեցելոյն , և աննուազ սեպհականօքն ։
Որով և եկեսցէ 'ի դատաստան հատուց-
ման , քննել զծածկեալսն կշռութե̃ չա-
փոյ՝ արդար իրաւանց · որում սպասեմք ,
և յոր աղօթեմք , հաւատացեալք յա̃մ՝
ա̃միւ ամենակալ տէրութե̃ նորա · որ ար-
դարև մինն է միայն 'ի միայնոյն՝ 'ի միոյն
փառակցու̃ յաւիտեան երկրպագեալ ։

Ղ̃ · Բարեբանեմք միշտ և օրհնեմք ընդ
որդւոյ և ընդ հօր՝ և զհոգի էութե̃ նո-
ցին , ամենազօր , ճշմարիտ , կատարեալ , և
ա̃ծ · որ յանէից գոյացոյց զբոլոր եղեալքս
ա̃մ · ինքնագործ հոմիշխան երկուցն ևս
ընդ նմին՝ անեղծ և անսահման թագաւո-
րութե̃ · որ ի̃չ պատճառն առաջին , և
բանն աչաւոր նորին ինքնութե̃ , նոյն ինքն
և հոգին բարձրացեալ ։ Բարի ինքնակալ ,
ամենից բաշխիչ զհօրն պարգևս՝ 'ի գո-
վեստ անուան փառաց միածնին · որ ազդ-
եաց յօրէնան · շնչեաց 'ի մարգարէսն ·
փչմամբ ազգակցին ապաւորեցաւ յառաք-
եալսն · կերպիւ աղաւնւոյ ցուցաւ 'ի յոր-
դանան՝ 'ի մեծութիւն փառաց եկելոյն ·
փայլեաց 'ի գիրս աւանդականաց · արար
հանճարեղս · զօրացոյց իմաստունս · լցոյց

վարդապետս · օծ տէրութիւն · օժանդակ-եաց թագաւորս · ետ վերակացուս · հրա-մանատարեաց փրկութիւն · շնորհեաց ձիրս · հանդերձաւորեաց քաւութիւն · զմկրտեալս 'ի մահն քն՝ 'ի ընակութիւն իւր մաքրազար-դեաց · զոր հայր և որդի , զնոյն և հոգին ներգործեաց · և ինքն է ած խնկեալ ա-րարչէս՝ ամենայն յաւէ :

Է · Քանզի ոչ նախաթուելովն յերրոր-դութեան՝ որք մեծ ինչ քան զմիւսն · և կամ զկնի անուանիլն՝ նուաստագոյն առ-նմանն · և կամ 'ի մինն ասելով՝ խառնա-կութիւն գոլ դիմացն · և կամ յերիցն որո-շումն՝ ուրոյնութիւն եւ կամացն : Քանզի անմեծար հայր ամենեւին , եթէ ոչ զբանն ու-նիցի ինքեան զօրութիւն · ո՞չ ոչ գոլով ընդ-նմա հոգւոյն՝ անհաղագ ումն և անկեն-դան՝ և առ ամենայն հրամանն նուազեալ : Իսկ բանն՝ եթէ ոչ անուամբ հօրն ծա-նիցի , որք ումն՝ և կամ լքեալ , և կամ 'ի մահացու ումեմնէ ոչէր : Նոյնպէս և հոգին՝ եթէ ոչ 'ի պատճառէն նշանակեսցի , ապա-շուք ումն թափառեալ՝ իբր զշունչ ինչ անդասելի : Այլ եթէ ոք հակառակն բանիւ՝ յաւակնի կապտել զհայր 'ի յիւրմէ բանէն , որ թէ էր երբեմն , յորժամ և չէր , և անբանութեան բամբասանօք պատ-

ուել վարկանի զվեհին մեծութի, և կամ ատրկութի տացէ բղխողին՝ ոչ բնաւորաբար գոլով հոգւոր, որով այլ իմն գոյու̃ օտար՝ մուծանել, և կամ ամբոխումն ինչ այլայլական՝ յանարատ պատիւ միութե̃ նր երրորդութե̃ն, զայնպիսին՝ քարամբք պարսից՝ հաւատոյ բանից, իբր զգժնդակ դեւս զխմամարտիկս գազանականս՝ հերքե̃լ ՚ի միջոյ՝ ՚ի բաց հալածեմք. եղեալ ՚ի նըզովս զնոյնս ընդ նոսին, փակեմք ընդդէմ նոցին զկենացն մուտ եկեղեցականս գաւթի: Սուրբ զո̃ր երրորդութի̃ն փառաւորելով ՚ի նոյն տէրութի̃ միակցորդ հաւասարութե̃, զուգաձայն սրբաբանութ̃բ, հանգունատիպ հարթութ̃բ, օրհնեալ և փառաւորեալ յերկնի և յերկրի, ՚ի ժողովս անդրանկացն, և յազգս երկրածնացս բանականաց, յաւիտեանս յաւիտենից.

ամէն:

Է̃. Արդ՝ զայս գոչումն ծածուկ խորհրդոց կերպաւորելոց յայսմ մատենի, ամենայնուր ականջաց մեծիդ ո̃յ ընծայեցուցի. սովիմբ սպառազինեալ, և ապա մտի ՚ի հանդէսն: Այլ ոչ եթէ կարօտեալ իմոյս ինչ ձայնի այսու մեծանաս, որ մինչև ըստեղծեալ էր քո զա̃մ՝ նախ քան զլինելն երկնի, փառաբանչօքն անմահից՝ և երկ-

բաստանեղծս բանաւորաց , դու քեղէն 'ի քումդ լրութեն՝ փառաւորեալ իսկ էիր , այլ զի զմերժեալս զիս յորդեգրես՝ անճառ քաղցրութի , ճաշակել զքեզ բանիս հաղորդութե֊ ։ Իսկ զի՞նչ պարտ իցէ ըստ արքունական հրամանիդ՝ կենաց կանոնիդ՝ առնել ադօնայի տէր , և զհրամայեալ պատուէրդ ոչ առնել ․ որ ինձէն իսկ զիս զօկեղէն տախտակս խօսուն՝ նուիրել քումդ պատգամի , զգրեալս մատամբդ ոյ՝ եղծի , որ և խորտակելն է իրաւացի ․ և ես տխրատեսակ մրուր՝ զերկրորդն նմանութի առնալ հայթայթեմ ։ ՏԷՐ տէրդ՝ քանզի բաղմօք պաղատեցայ դրուակօք խանդաղատականօք , որ ոչ է գրեալ 'ի յայս կարգ ձայնի , լուր բարերգութ , ըստ սմին բանի՝ այնմ ամի ։ Եղիցի և այս աղերս բարբառոյ հայցման աղօթից՝ յօդեալ ընդ նոսին․ թերթս 'ի մաքրոց և 'ի կամօրարից այս նուէր հացի՝ պանից բաղարջոց՝ իւղով զանգելոց՝ 'ի սեղան փառացդ քոց մատիցէ ։

Թ․ ՏԷՐ դու բարերար և յամի մարդասէր , քոյդ մի՝ ոյ մեղ ․ հզօր և ամենակալ․ որ յաղթես գթութե֊ խնամոց քաղցրութեանց , ոչ հասարակականաց միայն մարդկութեա՝ իմոց գթակցաց , առ որս յաւէտ է ամենախութի և բխուրամանեայ հակառա-

կութի , այլ և հրեշտակացն անախտակա-
նութե . նաև՝ և ևս քան զայս՝ սրբասնե-
լոցն անարատութե , յորոց մի էր և հե-
ղինս . որոց ցոյցք լռութեն՝ ՚ի քորեբ
լերինն նշանակեցաւ յերկիս օրինակս , ՚ի
շարժումն մեծ , ՚ի հողմն ուժգին , ՚ի
հուրն կիզանողական . իսկ քոյդ հեզութի
երկայնմտութե՝ ՚ի հանդարտութի մեղմու-
թե օդոյն քաղցրութե . քանզի կամաց ո-
ղորմութեց՝ դու միայն ես , ըստ գրեցե-
լումն : Ա՜ զի թէ և հաճոյք դատն մե-
րասերքս՝ առաքինութե՛ն յեղանակեալ
յայլ նմանութի վերնային , սակայն երկ-
րածինք են և նոքա , ընտրեալք ՚ի մարդ-
կանէ . իսկ դու ոչ ունիս չորանալ՝ խնկու-
թե՛ բարիդ . յամի օրհնեալդ . ամենեւին
փրկութիդ . ամիւ հանդիսադ . համայնից
անդորրութիդ . համօրէն ախտացելոց՝ դեղ
առողջութե . աղբիւր ջրոյ կենդանւոյ ,
ըստ երեմիայ : Դա՛րձ առ իս և ողորմեա՛
ինձ . որ այնքան ծարաւես պապքիս անկա-
րօտդ ամծ՝ իմում փրկութեան , մինչ զի
զուարթնոցն երկնից անմահից օրհնաբա-
նողաց բան իմն ընծայեցեր մարդկօրէն
փրկական քահանայապետս և քաւչապետա-
բար՝ անեղծական յարակայութե՝ մշտնջե-
նաւոր պաղատանս օրհնեալդ քո գթութե՝

՚ի մերոց դիմաց կենցաղականաց՝ վասն իմ լքելոյս հաշտութեան մաղթել, ողորմե՛ա երուսաղէմի. որ է լուսաւոր խորհուրդ-քոյց ելանելոյ մեծիդ քայանութե՛ն, առ-հրեշտակականն թափուր տեղի սորան-կելոց, ՚ի ձեռն մարդկան՝ քո կցորդութ՟՝ աւետարանեալ առակաւ այսր օրինակա-

կանս երուսաղէմի:

Ժ. Արդարև լուար՝ բարեգութ. ան-սացեր թա՛գաւոր. ունկնդրեցեր կեանք և յոյս. ՚ի մէտ առեր երկնաւոր. յարգե-ցեր հե՛զօր. նկատեցեր ծա՛ծկագէտ. տե-սեր խնա՛մակալ. կարեկցեցեր ա՛նպատում. խոնարհեցար՝ մի՛շտ բարձրեալ. նուաստա-ցար ա՛հաւոր. յայտնեցար ա՛նձառ. ամփո-փեցար ա՛նսահման. քանակեցար ա՛նքննին. մածար ձա՛ռագայթ. մարդացար ա՛նմար-մին. շօշափեցար ա՛նքանակ. կերպաւորե-ցար ա՛նորակ. լցեր խնկապէս զաղաչողացն բաղձանս: Դու իսկ եղեր թշուառացե-լոյս ինձ՝ ձայնիւ զուարթնոցն՝ բարի բա-րեխօս. միջնորդ կենդանի. պատարագ անմահ. սպանդ անվախճան. նուէր մաք-րութե՛. ողջակէզ անծախ. բաժակ անսա-պառ: Ահա ողորմած, մարդասէր, օրհ-նեալ, մի՛շտ կատարեսցես առ մեղուցելոյս զբարերարութի՛ կամաց քոց կենդանա-

ուաց, գովեալ երկայնամիտ · և քեզ վայե-լէ փառք յաւիտեանս · ամէն ։

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հըզօ-կողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։ 'ի խո-րոց սրտից խօսք՝ ընդ այ ։

ԲԱՆ · ԼԵ

Ա · Դու արդ՝ տէր զօրութեանց, մեծութե՟ ահեղ, անտարակոյս տեսաւորու-թե՟ն, կամք ամենընդարձակ, առատութե՟ն անպակաս, ո՛վ ոք զօրեսցէ տօնել հանդի-սիւ պարերգութ՟՝ 'ի միոյ կաթուածոյ ցօ-ղոյ քումդ բարութե՟, որ ցանկ դեգերիս պատրաստել պատճառս հնարից՝ խնամ փրկութե՟ ։ Դու զոր մեծն է գրեցից՝ պատ-մել յապաւնիւն · քանզի ոչ անուանեցար հրեշտակասէր, և որ զպետութիս նոցունց հաստատեցեր, այլ և զերկինս զամբարօք նոցին՝ զմատանց քոց գործ, ոչ գրեցեր երբեք սիրել զնոսա · այլ առեր 'ի պատու-մեծաց գովեստից՝ առաջին դասեալ զմար-դասիրութիւն ։ Վասն որոյ կրկին մեծա-ցուցեր քեզ անուն անճառ 'ի խորհուրդս սոսկալիս · զերկնայինս լուսակերպիցն կո-չեցեր զնոսին սպասաւորս և գլխաւորս յատուկ մատակարարութեանց · իսկ զմարդ-

Նային ծնունդս մահկանացուաց՝ տխրական և ա՟ծական պաշտելի անուամբդ պերճացուցեր ։ Ընցեալ վերստին ըստ սահման կշռութե՟ չափոյ , լցնեցեր քեզ կտակս դրոց՝ ճառից անբաւից՝ զանապակ ծորմանն ծայրագունին վերնում բարութե՟ն ։ Նաւս և 'ի մարդանալդ քո միդ յեռութե՟ն , ումանց վասն ինքեանց , և կիսոց վ՟ այլոց՝ զեղեր առատութ՟ զտուրս կենաց · որուեստս բազմօրինակս · սքանչելիս ա՟ծագործս · նշանս ճշմարտատեսիլս ։ Որ՟ զի թէ անդամալուծին պակասելոյն 'ի հաւատոյն , հոգաբարձացն առաջարկութեամբ զցոյցս յուսոյն՝ գթացեալ ողորմեցար , և ո՟րչափ զօրեսցէ առաւել բան քո ամենակար՝ առ ախտալից մարմնոյս մաքրութի՟ աղաղակողիս հառաչման · քանզի արդարև մեծ են չարիք հրաշից՝ քան զանմաքրեալս հոգի՝ ո՟ր հատանել , զլուացեալս պատկեր՝ անտիրելի աղտոյ ներգործել · նա զի և երկրորդս առաւելութ՟ յաւազանին շնորհ յաճախեալ՝ զփառսն հայրենի բարձրացուցանէ ։

Է · Դու ես տէ՛ր որ սրբես զմեղ , ոչ՟ ընտրեցելոյն քոյ նախատպաւորեցեր մովսէսի · դու ես , որ 'ի մեղս և յանօրէնութի՟ս՝ վերակացու եղեր տոհմին յակոբայ ,

մինչ յեգիպտացւոցն երկրի՝ ընդ խաւարն հեթանոսաց ընտանենային։ Դու ես, որ օրէնսգէտ առնես զմեղաւորսն ՚ի ճանապարհի, ըստ բանի երգողին դաւթայ. դու ես, որ փոխարկես զքարեղէն սրտից կարծրութիւն՝ ՚ի լոյծ կակղութիւն՝ մարմնոյ գթութիւն՝ բանի ընդունելութեան։ Դու ես, որ բաւես ընձեռել սիրտ այլ, և ճանապարհ մի՝ երկնչել ՚ի քէն՝ զբովանդակ կենացն սահման. դու ես, որ տաս զերկիւղ քո ՚ի միտս խստութեան՝ առ քեզ ուշ ունել հաւատովք, ըստ մարգարէիցն ձայնի։

Է. Օրհնեալ քո շրթանցդ զաշխարհաստեղծ բերանոյդ՝ զածեղէն անձրեւացդ զկեցուցանօղդ կաթուած՝ մատո՛ լըսելեացս դրանց բացարան, որով զօձին խորամանկութիւն՝ բանսարկուին թիւնից՝ բարձցես և բժշկեսցես։ Ամենակալդ ձեռօք՝ զխօսնականացս շարժողական գործի ըմբռնեալ՝ ազդեալ զօրութիւն ձայնի, որ տաս բնաւից ընտրութիւն բանի. զի դաստիարակեալ պատշաճականն մի՛ յանդգնաբար խօսելով իբր զնախնին՝ լքայց ՚ի յուսոյդ, և անբանութեան մատնեցայց վանեալ յորսողէն։ Լուսաւորեա՛ վերստին զխաւարեցեալ հոգւոյս աչս՝ կենդանաբաշխ աջոյդ կարկառմամբ, զի մի՛ համար-

ձակութեն չիջեալ լապտեր՝ չնչմամբ վի-
շապին՝ ՚ի ներքոյ գրուանին ստորածած-
կեցայց ։ Նորա՛ զանօրէնութիւն իմ տէ՛ր ,
և ընկեա՛ ՚ի խորս ծովու . որ է փոքր առակ
մեծութե քումդ անբաւութե , ըստ մար-
գարէին , զինս ընկղմել չարութի ։ Կանգ-
նեա՛ կործանեալս անձին՝ նշան վստահու-
թե , զի մի՛ յուսահատութե կոթող կա-
ռուցեալ՝ զծածկեցելոցն բողոքեսցէ ։
Ո՛ց հզօր և գթած՝ զբժշկարանիդ կե-
նաց վարդապետարան , զի զառ ՚ի ներքոյն
մշակութե կորուսչին սերմանց՝ մանկաղա-
կամացդ՝ հուպ առ արմատ խուզեալ հըն-
ձեսցես ։ Դէմ եդեալ հետևել առ քեզ
բոլորից ա̃ծ՝ պետրոսեան օրինակութե̃ն ,
՚ի կենցաղիս ծովու մեղանացս ալեաց՝ ընկ-
լուզայ . մատո՛ ժամանեա՛ զաջդ կեցուցի՛չ
յօգնականութի ինձ սասանեցելոյս ։ Ընդ-
քանանուհւոյն ձայնի՝ ՚ի խորոց սրտիս
աղաղակիմ , սովեցելոյս սաստականապաս
կաղկանձողական ամենաթշուառ վտանգա-
ւորիս , ապրուստ կերակրոյ փշրանաց հա-
ցի՝ ՚ի բազմազեղդ քո սեղանոյ մատուա-
րեսցե՛ս ։ Որա՛ փրկութի նիւթոյ խորտա-
նիս՝ որդւոյս դառնութեան , որ եկիր
խնդրել և կեցուցանել զիս զկորուսեալս ։
Զի քո՛ է մեծութիւն , յաղթութի և

զօրութիւն . և դու ես քաւութիւն և բժշկութի՟, նորոգութի՟ և երանութի՟ . և քեզ վայելէ փառք և երկրպագութիւն յաւիտեանս . ամէն ։

Վերստին յաւելեալ կրկին հեծութե՟՝ նորին հըր֊կողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։ 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա՟յ ։

ԲԱՆ . ԼԶ

ա . Եւ քանզի անթիւ են յաճախեցին, և գերազանցութե՟ միշտ առաւելեալ, փրկանաւորդ արդասիք շնորհաց՝ առ պարտուցս իմոց առաւելութե՟, չարչարանացդ համդէս և յանձնառութիւն ։ Զափդ ամփոփիչ ամենից հոգւոց՝ գծից արարիչ՝ 'ի գործարանի մահուն՝ նշանի խաչին հեղուսեր, զի զձեռնարկու՟ն իմ ընդդիմութե՟ կամաց քոց՝ լքցես ։ Զընթացողականդ ծակցութե՟՝ երկոցունց ոտիցդ կեցուցանողաց՝ յանարգելուլես պատճառ՝ 'ի պատժարանի փայտին մածուցեր, զի զփախուցեալս վայրագութե՟ թշուառացելոյս՝ դրաւականեսցես գթածաբար ։
բ . Ս՛հ դօսանալ ձեռաց կափողայն հրամայեցեր՝ օրհնեալ դադաթանդ, որ զթըրզենուլն տունկ աւժամայն չորացուցեր ։

զի և զաւխս ներելոյդ օրինակ՝ կանխա-
աւետարանեցես ։ Ո՛չ գանողացն ապի-
րատութե՟ն զխոստովանելոյդ ա՟ծ՝ սպառնա-
ցար, որ զարուսեակն մթացուցեր, զի մա-
հացելոյս անձին՝ բարութի՟ հանգստեամբ
հանդերձ գործեսցես ։ Ո՛չ զհայհոյչացն
հնարաւոր չարաբանութի՟ կապտեցեր, որ
զլուսնին պատկեր՝ երանգաւ արեան գու-
նեցեր, զի զանհամարձակ լեզուս՝ 'ի գո-
վեստ քեզ զօրացուսցես ։ Ո՛չ նախատո-
ղացն մոլեգնութե՟ սաստեցեր, որ զաստերս
սասանեցեր, զի զթշուառացելոյս գլուխ՝
գթութենդ օծմամբ իւղեսցես ։ Ո՛չ 'ի մո-
լորեցուցիչն կարդալ զքեզ ա՟ծապանիցն՝
զօդուած ծնօտիցն բաժանեցեր՝ քակտե՟լ
'ի միմեանց, որ զկարծրութի՟ վիմացն հեր-
ձեր, զի զանուանակս բարեաց հոգիս՝ 'ի
բերմանէ ընդունայնութեան ողորմութե՟
հանդարտեցուսցես ։ Ո՛չ զպահապանացն
սուրս՝ ընդերաց իւրեանց մատուցեր, որ
զորովայն օձին սահեցման հողոյ մատնե-
ցեր, զի զտառապելոյս մարմնոյ ոսկերս՝
իբր 'ի գանձարանի պահեալ, կենաց յա-
րութե՟ արժանացուսցես ։ Ո՛չ 'ի կնքելն
զշիրմին փականս՝ կենդանակիր քո գերեզ-
մանին՝ անդրէն յորսայսելոյ զնոսին՝ յան-
դունդս երկրի սուզեցեր, զի 'ի տապանակի

անձինս՝ զնշխար լուսոյդ հանգուսցես ։ Ո՛չ ՚ի համբաւելն զքեզ կորուսեալ , և իբր զերկրաւոր մարմին գողացել , համայ-նաջինջ և ամենասպառ՝ զսերմն ծննդոցն կործանեցեր , զի զիս զանարժանս յիշատա-կի ընտրութե բարեաց՝ անկորուստ և ան-ջնջելի՝ ընդ փրկեցելոցն հաղորդեսցես ։ Ո՛չ յարծաթոյն կրկնակապէն կաշառա-ցգութիւն , որ ՚ի գանձարանէ հօր քում նուիրաց՝ քեզ գրաւ մատնութե և անար-գութե մատնաւորեցին՝ զուրացողացն մո-լեգնելոց , ըստ հին հարուածոց հանւոյն մոլաբու՝ ՚ի յարձան քարի յեղանակեցեր , զի զիս զվրիպեալս ՚ի հաստատութենէ՝ և ընդ իշխանութեամբ մահու վաճառեալս՝ ար-եամբ քո փրկեալ՝ ՚ի հաստատութի վիմդ-կառուսցես ։ Օրհնեալ կրկին , օրհնեալ վերստին , յամի միշտ օրհնաբանեալ՝ յա-ւիտեանս յաւիտենից ․ ամէն ։

Վերստին յաւելուած կրկին հեծութե՝ նորին հրա-կողի , առ նոյն աղերս մաղթանաց բանի ․ ՚ի խո-րոց սրտից խօսք՝ ընդ այ ․

## ԲԱՆ ․ ԼԵ

Ա ․ Արդ՝ այդ գումարտակ վերադասե-ցեալ բարեշնորհութե քոյդ պար-

գեաց առ իմն երախտիս, ո՞չ ամենագութ բարեբար գոլեալ և ամենազօր, թէ և սակաւք շարագրեցան աստանօր եղեալ, այլ արքայազունք են, և իշխանականք ինքնակալութեց. որդիք զօրութեց, ծնունդք վեհից. մեծափառք, լուսանորոգք, և հրաշապատիւք։ Յաղթողական վերամբարձութե̃՝ դրօշիւք հռչակեալք ըստ գլխոց գլխոց՝ պսակապաճոյճ գեղազարդելոց, բերեալ ընդ ինքեանս անթիւ պետութիս օրհնաբանողաց, համբոյրս՝ հեզս՝ երջանիկս և խաղաղականս՝ ա̃ծային հարազատութեց՝ այնոցիկ նահանգաց, զորոց մարգարէն մաղթեաց ասելով, զարթ՛ տր զզօրութիս քո, և եկ կեցուցանել զմեզ. ոյք յոյժ զօրէն հալածել զմեզս, և զանյուսութեն կարկուտ հալել և փախուցանել, քան թէ նախամարտիկն զինուորութիւն երկնային պարուն՝ զգիշերավարն խաւարասէր սկզբնաներհակ՝ բարւոյն ա̃յ։ Քանզի և զընաւն այսքանեացս ձրից՝ որ 'ի բարձրելոյն ինձ անձրևեցաւ, ակարիս՝ թշնամւոյս՝ և ապախտաւոր ծառայիս, անճառ է ասել. իսկ եթէ համարձակեսցի ոք զօրել խօսել, զանկաւս 'ի բազմացն՝ քան թէ զինկութի համանգամայնիցն. առ այսոսիկ՝ զառաջին նիւթն յիշելով՝ յորմէ հասանե-

ցուն, իբր զանկար ոք նկուն՝ ՚ի զօրութե
մեծէ հերքեալ պարտեցի։

Է. Այլ թէպէտ և այսպէս գրեցի, և դարձեալ զնոյն վկայեմ առ թերի խակութի հողոյս՝ և կատարելութի հասողին, և առ բարիսն՝ իմ չարժանութի, սակայն ամենայնիս աննախանձ և բազմողեղուն գովեալ արարչութեդ զօրեղութեն վանեալ են կարծրութիք արտաքերուն սրտի բանսարկուին. որ բարին առակաւ՝ յուսահատ վհատութեն, սպառնամամբ խոյանացման աղբերացս երկուց, որ ՚ի զգայականս եդեմայ բղխել պատրաստեաց տընկօղն, զի ոռոգեալ ծաղկեսցի նովաւ՝ որ ՚ի յիս բարեգործուն կենսատունկն դրախտ, ահա մի՛ ցամաքութե արտասուացս՝ աղանդահնար պատրանօք՝ չարաչար խորամանկեսցէ վերստին հանել ՚ի փափկութե նախնում վիճակին։ Իսկ յորժամ կացցէ ած՝ համբարձեալ հրաշիւք արուեստից՝ ՚ի մէջ սատուածոց հաշտարանացն խաղաղութե, բարձեալ ընդ ինքեան զշնորհացն կտակ, առ որ ամ մնասակարութիք խարդախութեց՝ և կարճմտութիք սրտնեղութեց, իբր ընդ վիմեղէն լերին պնդութեան բաղխեցեալ ցնդին՝ ջրոյ օրինակաւ սակաւու հեղեալ, և կամ հողոյ՝ խորտակմամբ փշրեալ։

է̃ · Արդ՝ չև իմ կշտամբանքս՝ ըստ ձայ-
նին յոբայ՝ 'ի մարդկանէ լիցեն , այլ յա-
մենատես աչաց վերին հրամանիդ՝ մնեալ
ընդ խղճիս տագնապ երկիւղիս , սոսկմամբ
սասանեալ յա̃մ կարծեաց , ապաւինիմ և
արդ անձամբ բեկելով 'ի յոյժ հաստա-
տութե̃ կենդանի անեղծ · զի ողորմութե̃
նայեցեալ 'ի յիս՝ իբր 'ի պարտաւոր կո-
րստեան պատժոց , առաջի բարերարութե̃
երկնայնոյդ յանդիման եղեալ՝ ապաձեւն
անթոշակութե̃ , զքոյդ երախտիս անպա-
տուժ փառաց բերելով ընդ իս՝ յոյժ քեզ
արկանեմ · որ ո՛չ մոռացմամբ զբաղեալ
նիրհես , և ո՛չ թարթափմամբ աչաց ընդ-
միջեալ՝ զհեծութիւն կրից անտեսես ։
Մ եռացո՛ յինէն աղաչեմ զքեզ , խաչիւդ-
լուսոյ՝ զխեղդ վտանգիս · հոգարկութե̃
տրտմութե̃դ՝ զտարակուսելի տխրութի̃ս ·
փշանիւթ պսակաւն՝ զբողբոջ մեղացս ·
զարկուածով գանին՝ զհարուած մահուս ·
ապտակին յիշմամբ՝ զկարիս ամօթոյս · թշ-
նամանօք թքոյն՝ զանդոսնելի գարշութի̃ս ·
լեղւոյն ճաշակմամբ՝ զհոգւոյս դառնութի̃ ։
Ահա՛ քո են այս ա̃մ բարութի̃ք անբովան-
դակելիք՝ ո̃յ միոյ միածին որդի · առ որովք
զչարութի̃ս իմ յիշատակեալ՝ զամենօրհ-
նեալ անուն քո կարդամ բարձր աղաղակաւ

իմանալեացս պաղատանօք ։ Տէ՛ս ՚ի խոստո-
վանութի̃ զղջման պարտուն̃ ամաչեցելոյս ,
և տո՛ւր ողորմու̃ի որդւոյս սատակման մա-
հուն անմահի ․ զի ՚ի բազմութե̃ իմոցս մե-
ղաց՝ վերստին կրկնեալ նովին աճեցմամբ
առաւելութե̃՝ քո ողորմու̃իդ առատարա-
նեացի , հաշտեալ հնչմամբ ահաւորութե̃
յերկնի և յերկրի ։ Եւ քեզ ընդ հօր հոգ-
ւովդ սրբով՝ փառք յաւիտեանս ․ ամէն ։

---

Վերստին յաւելուած կրկին հեծութե̃՝ նորին հրա-
կողի , առ նոյն աղերս մաղթանաց բանի , ՚ի խո-
րոց սրտից խօսք՝ ընդ ա̃յ ։

## ԲԱՆ ․ ԼԲ

ա̃ ․ Բայց արդ՝ ոչ երբեմն յայլ ըն-
թերցուածի՝ որ ՚ի սկզբնաւորա-
կանացն կարգի՝ զմեղանացն զխաւարային
ծնունդս գլխաւորացն՝ օրինացն՝ մարմնա-
կանացն անդամոց՝ գրեցի , յորոց տիրեցայ
ժառանգս մահու , նոյնպէս և յայսմ սահ-
ման ընտրութե̃ բանի՝ զլուսածնելոյն զա-
ղատարարին օրէնս հոգւոյն կենաց՝ որ ՚ի
ք̃ս յ̃ս՝ յիշատակեցից նուագս յոքունս ,
իբր յանբաւ բազմութե̃ց ծովու՝ կա-
թիլ մի առեալ ։

բ̃ ․ Քանզի են արդարև կայսերականք

ումանք 'ի բարձրութեան գահի բազմեալք·
Թոշակաւն շնորհաց լցեալք և հաստա-
ցեալք։ Թագաւորն՝ և սիրեցեալք իւր·
արքայն՝ և պատուաւորք իւր · դասակեալն՝
և իշխանականք իւր · բարեհռչակեալն՝ և
հնչմունք իւր · յաղթողականն՝ և փողք
իւր · զօրաւորն՝ և մարտիկք իւր · գովեց-
եալն՝ և փառք իւր · փեսայն՝ և պարա-
ւորք իւր · դշխոյն՝ և օրիորդք իւր · փե-
սաւէրն , և հանդերձանք իւր · ազատու-
թին՝ և շնորհք իւր · այցելուին՝ և ձեռն
իւր · խոստումն՝ և քաւութի իւր · պահ-
պանութին՝ և աջ իւր · պարգեւն՝ և զարդ
իւր · նշանն կենաց՝ և ամրուի իւր · կնիքն՝
և նկարագիր իւր · ամպն՝ և հովանի իւր ·
տրուեսան՝ և հրաշք իւր · հոգին՝ և անեղ-
ծութի իւր · բանն՝ և կատարած իւր ·
ուխտադրութին՝ և լուսն իւր · զօրուին՝
և հրամանք իւր · լուսաւորանն՝ և սքանչե-
լիք իւր · մանանայն՝ և անապականութի
իւր · վէմն կենդանի՝ և վտակք իւր · սիւնն
հրոյ՝ և ճառագայթ իւր · որոտումն՝ և
ազդմունք իւր · յոյն վերին՝ և փրկու-
թի իւր · ծառն օրհնութե՝ և պտուղք
իւր · բարունակն՝ և բարութիւնք իւր ·
Ու զի մի՛ զընաւն ասելով՝ յամենայնէն
վրիպեցայց , իբր յարեգակնէ այլայլեալ

աչաց տկարութե՛ , 'ի շատն ասել լռեցից՝
և'ի սակաւն ժամանեցից , բաւականացեալ
ամենապիկար կարիւ ։

Է․ Բայց աւա՜ղ յաւէտ աստանօր՝ թըշուառացելում եղկելի անձինս ․ քանզի կարգ բանիս բերէ ինձ խառնել ընդ ձայն աւետեացս՝ բողոք գուժիս ․ վա՜ զի ընդ այսոսիկ առ ընթեր սորին գայ , արդարութե՛ն՝ և կշիռքն ․ վճիռն՝ և հատուցմունքն ․ քննութե՛ն՝ և լոյսն ․ յանդիմանութե՛ն՝ և ղամբարքն ․ մերկութե՛ն՝ և պատկառանքն ․ յայտնութե՛ն՝ և ամօթն ․ ամբիծն՝ և փաստակքն ․ թիւրեալն՝ և պատիժքն ։

Ը․ Դարձեալ վերստին աշխար՝ կրկին եղկելոյս ․ քանզի գայ հասանէ առ հասկ հասակիս՝ անհնարին բարկութե՛ , մանգաղն՝ առ հունձսն , դատաւորն՝ առ ատեանն ․ հզօրն՝ առ բեմն ․ սպառնացեալն՝ առ կորուստն ․ բազուկն՝ առ դատաստանն ․ գաւազան խրատուն՝ առ հարուածն ․ սպառազինութե՛ն՝ առ նախանձն ․ հովիւն՝ առ ընտրութե՛ն ։ Քանզի բանն՝ զոր խօսեցայ ընդ իս , նա դատի զդատապարտեալս 'ի վերջնումն աւուր հատուցմանն ։ Ա՛յլ կանխեալ բարեգութ , նախընծայ քաղցրութե՛՝ առ նուաղ հեծութիւն փարանական երկիւղիս ․ և զօրուն ընձեռեալ ձեռամբդ-

օրհնութեն՝ 'ի յետին տագնապիս՝ առա-
ջինդ քո օգնութիւն մխիթարել բժշկել,
քաւել և կենագործել։ Եւ քեզ փառք
յամի՝ յաւիտեանս յաւիտենից․ ամէն։

---

*Վերստին յաւելուած կրկին հեծութեն՝ Նորին հըր-
կողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի։ 'Ի խո-
րոց սրտից խօսք՝ ընդ այ։*

## ԲԱՆ․ ԼԹ

ա․ Եւ քանզի զկերպարանն առաջին
ւքի 'ի վնասակարին թելադրու-
թե՝ խմոլս ծուլութե կորուսեալ խապառ,
ցուցից արդ այժմուս զհնոյն յիս տեսակ․
ողորմելի հեծութե թախծեալ 'ի հոգի,
անաչառ խայտառականօք հրապարակաւ՝
'ի յեկեղեցիս բազմութե ազգաց՝ վերա-
պատմեցից բարձր ձայնիւ, բարբառով
մեծաւ աղաղակելով։

բ․ Մատեանս չնչական՝ բարդեալ 'ի
յինքեան ներքոյ և արտաքոյ ողբս՝ և վայս՝
և ձայնս, ըստ տումարի տեսլեանն եզեկի-
ելի․ քաղաքս անպատուար և անմահար-
ձան․ յարկս ունայն 'ի դռնափակաց ամ-
րութեց․ ալս տեսակաւ, այլ ոչ համեղու-
թբ․ ջուրս աղտաղտին՝ անախորժելի ծա-
ծաւեաց արբման․ գետինս՝ անօգուտ հեր-

կատարածութեն · սաստմանս լքեալ՝ հեղեղա-
վայրս կենցնոյ · խորտակեցեալ և տատա-
կաբեր անդաստանս · ա՞ծախնամ երկիրս
անձնաւոր, որ բանսարկուին պատրանաց
մշակեցայ · և զընծիւղ փայտս պտղաւո-
րոյս · հատանելի ծառս ունայնաբերոյս ·
կորկնամեռ՝ խօսուն տունկս անյոյս · ամե-
նաչէջ ճրագարանս անլոյս ։ Որդ՝ վերա-
ծին առ սոյն բերելով զայս նմանութե ա-
ւազականաց, բազմօք կրկնեցից · որ ամօ-
թոյն դառն պատուհաս՝ պահեալ կայ հի-
քոյս, կրճտումն ատամանց, և անկէտ լա-
լումն աչաց եղկելոյս · հայրական ցասումն
անսպուժելի՝ դառնութե որդւոյս · ա-
պականութիւնն աննորոգելի՝ մեղուցեալ
մարմնոյս ։ Նոր կշտամբանի գտողիս չար-
եաց՝ ախտացեալ հոգւոյս · տարտամ տագ-
նապի տարակուսանաց՝ ելից գերելոյս,
զոր երկնային զօրքն մատուցանեն՝ թշուա-
ռացելոյս · ՚ի խորձունս որոմանցն վկայելով՝
վտանկեցելոյս · ՚ի ձայն ահարկու՝ զան-
բժշկութին ազդել լքելոյս ։

Գ · Նա՛ արդարև երգս կատակերգու-
թե ջնարահար պոռնկի · յածեալ և կոծ-
եալ քաջ հնչեցուցեալ, ողբս ողորմելիս
և զկծեցուցիչս, ըստ առակաւոր բանին
եսայեայ՝ որ ՚ի պատգամին տիւրոսի ։ Զի

Թէ նա՛ ողղխպուածն փոքր անցից ապա-
նեացն՝ 'ի մօտոյ իմն տպաւորեալ, բողոքէր
դիմակս դիմակս՝ կերպից կերպից աւազա-
կանաց, ըստ կոծողացն կաքաւելոյ, իսկ առ-
իս ո՛րչափս և ո՛րպիսիս ձայնս մրմնջեցից
վհատեցուցիչս․ որ գալստեանն տ͞ն սպաս-
եալ առանց վրիպանաց, մնացի անպատ-
րաստ և անհանդերձելի։ Արդ՝ եթէ
զդատաստանացն ահաւորութ͞ի կրկնեցից,
բազմացուցից ինձ աշխար․ ապա եթէ
զփորձն խնկութ͞ե ցուցից յաճախէ ինձ
երկիւղ․ իսկ եթէ զկերպարանացն տեսիլ
գրեցից, առաւելուն ինձ հատուցմունք,
զի կանխաւ նկատեալ զայնս՝ և ո՛չ անտ-
գան ապաշաւեցի։ Այլ խնայեա՛ յիս՝
գթա՛ծ, մա՛րդասէր, հզօր, բա՛րերար,
ամենապարգև ք͞ս թագաւոր, օրհնեալ
յաւիտեանս․ ամէն։

---

Վերստին յաւելուած կրկին հեծութ͞ե՝ Նորին հըր-
կոլի, առ նոյն աղերս մաղթանաց բանի․ 'ի խա-
րոց սրտից խօսք՝ ընդ ա͞յ։

ԲԱՆ․ Խ

ա͞․ Ամենակալ ա͞ծ բարերար ստեղ-
ծիչ բոլորից՝ լո՛ւր հառաչա-
նաց ձայնիս վտանկի, և յերկիւղէ տագ-

նակի ապագայից կարծեաց՝ փրկեա՛ կարող զօրութ՟ զերծեալ 'ի պարտեաց. քանզի բաւական ես յա՟մի՝ առ ա՟մ հնարս զօրանալ անբաւ մեծութեամբ և իմաստութ՟ անսահմանելեաւ ։

Է. Եւ քանզի ուշիւ մտացս՝ տեսեալ 'ի հեռուստ զհանդերձելոցն հանդէս ահաւորափայլ՝ նկատեմ ինձէն աստանօր կանխաւ զտիւն լուսոյ՝ ո՟րդյն յուսոյ, զօրն խաւարի՝ պատժապարտիս պատուհասի. ուստի ո՛չ զօրէ որ յելիցս՝ առ պատսպարան փախստեան ։ Ո՛չ անդունդք խորոց. ո՛չ վիհք վհից. ո՛չ բարձրութիւնք լերանց. ո՛չ անձաւք քարանց. ո՛չ կարծրութիւնք որձանաց. ո՛չ ծերպք ծակաց. ո՛չ փապարք փոսից. ո՛չ սորք հեղեղաց. ո՛չ բաւիղք խորշից. ո՛չ շտեմարանք յարկաց. ո՛չ ծածկութիւնք սենեկաց. ո՛չ եմնկք հողաց. ո՛չ ծործորք դժուարաց. ո՛չ վերադրութիւնք բլրոց. ո՛չ արձակմունք չնչոց. ո՛չ անբաւութիւնք ծովուց. ո՛չ սահմանք յորձանաց. ո՛չ հեռաւորութիւնք եզերաց. ո՛չ ողբմունք ձայնից. ո՛չ հեղեղք արտասուաց. ո՛չ տատանմունք մտաց. ո՛չ համբարձմունք ձեռաց. ո՛չ պաղատանք շրթանց ։

Ը. Ի յայսցիկ սաստկութեանց մասանց անձողպրելեաց՝ դու ես տէ՛ր ք՟ս՝ հնարք և

դադարք դիւրութեան և անդորրութեան փրկութեան ամենամեղս հոգւոյ · արդ՝ հայեա՛ 'ի յանզերծ վտանգից շրջադրութիւն՝ միա՛յնդ քաղցր առ ամենեսեան ։ Խղճեա՛ սուսերաւ յաղթական կենաղէն խաչիդ՝ զցանցս վարմիս , որ յամենայն կայից պաշարեն 'ի մահ զգերիս · և հա՛ն 'ի յանդորր՝ զոտս սասանեալ թիւր ընթացողիս ։ Բժշկեա՛ զհրատապ ջերմնական տոչորումն՝ մղձկեալ սրտիս · մերժեա՛ զդիւային չարահնարութեանս շշուկ՝ քո պարտաւորիս · հալածեա՛ զյուսահատ անձկութեան հոգւոյս մթութիւն՝ չարի կենակցիս · ցրուեա՛ զծխամած թանձրութիւն՝ բռնութեան մեղացս երևոյթ՝ մահելոյս 'ի յիս · կորո՛ զզազիր թխատիպ կրիցս՝ ապականութեանս կարիս ։ Նորոգեա՛ զպատկեր լուսոյ՝ պաշտեցեալ փառաց մեծութեան անուան հօրիդ՝ յոգիս · զօրացո՛ զշնորհիդ փայլումն՝ 'ի դեղ դիմացս , և 'ի կերպարան տեսութեան մտացս հողեղինիս , յարմար յերկնաւորմանդ կացո՛ յարդարեալ՝ որ զքոյդ բերէ նկատումն՝ նշուլազարդ մաքրութեամբ զտեալ զմնացեալս մեղաւորիս , աստուածային կենդանի՝ անեղծ՝ երկնաւոր լուսով քո ծածկեալ՝ յօրինակս երիս ։ Զի դու միայն ես օրհնեալ ընդ հօր՝ 'ի գովեստ հոգւոյդ սրբոյ՝ յաւիտեանս յաւիտենից · ամէն ։

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հրաշակերտի, առ նոյն աղերս մաղթանաց բանի. 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ.

## ԲԱՆ . ԽԱ

ա . Որդի այ կենդանւոյ օրհնեալ յամենայնի. հօրդ անհասութի անքննին ծնունդ. որ տկարանայ առ'ի քէն և ոչ ինչ. Որ 'ի ծագել անստուեր նշուլից՝ ողորմութե քոյ փառաց, հալին մեղք. հալածին դևք. ջնջին յանցանք. խզին կապանք. խորտակին շղթայք. կենդանածնին մահացեալք. բժշկին հարուածք. ողջանան վէրք. բառնին ապականութիք. տեղի տան ախրութիք. նահանջին հեծութիք. փախնու խաւարն. մեկնի մէգն. մերժի մառախուղն. փարատի մռայլն. սպառի աղջամուղջն. վերանայ մութն. գնայ գիշերն. տարագրի տագնապն. չքանան չարիքն. հալածին յուսահատութիքն. և թագաւորէ ձեռն քո ամենակար, քաւիչդ այմ:

բ . Որ ոչ եկիր կորուսանել զմարդկան ոգիս, այլ կեցուցանել. թող ինձ զանթիւ չարիսն իմ՝ բազում ողորմութբդ. զի դու միայն ես յերկնի անճառ, և յերկրի անզննին. 'ի տալըր գոյի, և յեզրս ծագաց աշխարհի. սկիզբն այմ, և յայմ. ամենայն ըմամբ օրհնեալ 'ի բարձունս. և քեզ

ընդ հօր և հոգւոյդ սրբոյ փառք՝ յա-ւիտեանս . ամէն ։

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ Նորին հըռ-կոչի , առ նոյն աղերս մաղթանաց բանի . 'ի խո-րոց սրտից խօսք՝ ընդ ա՟յ .

ԲԱՆ . ԽԲ

Ա . Տ՟Ր ա՟ծ գթութեան՝ փրկութեան և ողորմութեան , քաւութեան և նո-րոգութեան , բժշկութեան և առողջութեան , լուսաւորութեան և կենդանութեան , յարութեան և անմահութեան , յիշեա՛ զիս յորժամ գայ-ցես արքայութեա՟մբ քո՝ ա՛հաւոր՝ հզօր՝ բա-րերար՝ և ամենաստեղծ կենդանի՝ գոլեալ ամենակատար , մերձ 'ի հեծութի՟ համայն եղելոց ։ Ընդ խաչեցելոյն ընդ քեզ՝ ապա-ւինիմ , որ ոչ ըմբռնեալ վասն քոյ՝ և ոչ կապեցեալ , ոչ կախեալ՝ և ոչ բևեռեալ , ոչ կռփեալ յանուն մեծիդ՝ և ոչ անար-գեալ , ոչ ըկեալ՝ և ոչ նշկահեալ , ոչ խորտակեալ՝ և ոչ մահացեալ , և արքայու-թեան արդարոց՝ մասին անձկալեաց լուսոյ՝ արժանի ցուցեալ . իրաւամբք ուխտի երդ-մնականաւ ամենիւն ազդեալ զանփոփո-խութիւ բարեացն տուելոյն , փառաւորե-ցեր առ յայս փրկութեան խաչառ լքելոյս ։

Է. Օրհնեա՛լ՝ օրհնեա՛լ, և դարձեալ օրհնեալ, և զիս ընկալեալ նովին հաւատովք, կանգնեա՛ 'ի կործանմանէս՝ բա՛րերար. բժշկեա՛ 'ի հիւանդութեցս ախտից՝ ծղրդման. յեղերաց մահու դարձո՛ զիս 'ի կեանս՝ կենդանութի. քո՛ եմ և ես, կեցո՛ ընդ նմին՝ ապաւինութի. անձամբ մեռելոյս՝ կենդանական շունչ ընծայեցո՝ յա՛րութի կեանք անմահութե. անպակաս բարութի, անսպառ շնորհ, անփոփոխ ներողութի, ա՛ջ ամենազօր, ձե՛ռն ամենիշխան, մա՛տն ամենարար։ Կամեա՛ց տէր՝ և փրկեցայց. ակնարկեա՛ միայն գթութե՝ և արդարացայց. ասա՛ բանիւ՝ և վաղվաղակի անարատ գտայց. մոռացի՛ր զթիւս չարեացն՝ և անդստին համարձակեցայց. առատաձեռնեա՛՝ և որդէն 'ի քեզ խակ պատուաստեցայց. փառաւորեալդ յա՛մի յաւիտեանս. ամէն։

---

Վերստին յաւելուած կրկին հեծութե՝ նորին հըսկողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի. 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ.

## ԲԱՆ. ԽԳ

Ա. Բժշկական կրթականութե ամենափորձ հնարաւորութե՝ պա-

Ճառ կենաց անախտականաց , Թագաւոր
զօրաւոր երկնաւոր՝ տ՟ր յ՟ս ք՟ս · ա՟ծ ամենե-
ցուն , իմանալեաց և տեսականաց · ահա դու
՚ի յիս , ըստ մարգարէին՝ որ ընդ ասելոյն՝
Նոր կցորդութ՟ե · առ որ բարեզարդ դա-
շամբ այս բանի՝ ընդ քեզ միութեան ,
լուսաւորեցայց կրկին ողջացեալ շնչով և
մարմնով , ա՟մի կարող և անվանելի ։
Է · Որ ոչ կորստանաս սպեղանեաց , առ-
պատրաստութ՟ի պատանաց՝ հոգեկան վի-
րաց · ոչ ժամանակի · ոչ միջնորդի · ոչ
աւուրց երկարաձգութ՟ե · ոչ փոփոխս մա-
տուցանելոյ · ոչ հատման · ոչ խարման · ոչ
սրագործութ՟ե , ըստ երկրաւորս դեղա-
տուութ՟ե , առ որս միշտ է՝ վրիպութ՟ի և
ամենասխալ տարակուսութ՟ի ։ Ն.ՎԼ. քեզ
արարչիդ հոգւոց և մարմնոց , ա՟մ ինչ՝ լու-
սաւորեալ է · ա՟մ ինչ՝ առաջի է · ա՟մ ինչ՝
գրեալ է · ա՟մ ինչ՝ դիւրին է · համայնն՝
հնարաւոր է · իմաստն՝ գլխաւորեալ է ·
խոստումն՝ լցեալ է · կամելն՝ կատարեալ
է · քո կամքն՝ աւետարան է · քո վճիռն՝
ազատութիւն է · քո մատեանն՝ շնորհ է ։
Ո՛չ փակեալ ես ընդ օրինօք · ոչ պարու-
նակեալ ես ընդ կանոնաւ · ոչ արգելեալ
ընդ նուաղութ՟ե · ոչ խոնարհեալ ընդ հնա-
զանդութ՟ե · ոչ պարագրեալ ընդ փոքր-

կութբ • ոչ չափեալ ես ընդ սահմանաւ • ոչ վրիպեալ 'ի բարկութե • ոչ այլայլեալ ինչ 'ի ցասմանէ • ոչ սխալեալ 'ի խստուէ • ոչ ամբոխեալ 'ի խռովութե • ոչ դղրդեալ յանգիտութե • ոչ փոփոխեալ յողորմութե • ոչ պակասեալ 'ի բարձրութե • ոչ լքեալ յայցելութե • ոչ տկարացեալ 'ի փրկութե ։ Դու սկիզբն՝ և լրումն ամի • և 'ի քէն է ամ • և քեզ փառք և երկրպագութի յաւիտեանս • ամէն ։

---

Վերստին յաւելուած կրկին հեծութեն՝ նորին հրակողի , առ նոյն աղերս մաղթանաց բանի ։ 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ ։

## ԲԱՆ • ԽԴ

Ա • ՄԾ անսահման , ծնունդ այ հարազատ անթարգմանելի • արարիչ բնաւին եղելոց , քս թագաւոր • լոյս 'ի խաւարի սրտից մթացելոց • ընդ մեզ լրմամբ , և ընդ առաքչիդ խնկութբ • մերայնովս զքոյինդ ծանուցանօղ հրաշապէս • Հայր քո օրհնեալ երկնաւոր անճառ՝ որ առաքեացդ զքեզ 'ի վերուստ , ում փառակիցդ ես արարչութբ , այնքան հոգացաւ փրկութե իմոյ տարագրեալ գերւոյ ,

մինչեւ զքեզ իսկ մատնեաց մարդկան։
Իսկ դու կարող գոլով ՚ի վեր քան զվիշտս՝ զանատեսութեն աւարտեալ խորհուրդ, հաճեցար ընդ պարտեցելումն՝ զմահուն ճաշակել բաժակ՝ անթերի մարդկութբ, եւ անպակաս ածութբ։ Դու հոգիդ որ կենդանարար՝ ոպ̄ քոյ, եւ հօր քոյ խնկակից, եւ համապատիւ էութբ ծնողիդ՝ եւ ծնիցելոյդ։ Ս՚ի երրորդութի կատարեալ ՚ի դիմաց երից անորոշելի հաստուածոց. անսկիզբն եւ անժամանակ. բնաւին բարերար. համայն կենդանարար. բոլորից խաղաղարար. ստեղծիչ գոյից, եւ յօրինիչ ամենից. անքակութբ՝ եւ միով բնութբ փառաւորեալ։

Է. Իսկ եթէ հայրն գթած երկնաւոր հզօր՝ մին յէութէ՝ վասն մահապարտս յանցանաց մարդոց զմիայնակ ծնունդդ յանքննելի ծոցոյն՝ ոչ անխնայեալ յորդիդ ՚ի համապատիւդ եւ ՚ի սիրելիդ, այլ կամանուիրեաց մահու՝ չարչարողացն զենու, ըստ մարգարէութեն զաքարիայ. վասն զի զարթնուլ սրոյն ՚ի վն հովուին, եւ հարկանիլ նոյն ինքն հօտապետին, եւ ցրուիլ ոչխարացն հօտին, ոպ̄ օրինակն նուրբ նախագրին՝ եւ ուխտադրութի խորանին՝ եւ նուիրումն արեան սպանդին՝ եւ առակ

խորհրդոյ աբրահամեան պատարագին , զփրկութի թշուառացելոյս՝ 'ի կամաց կեցուցչին յառաջագոյն նկարագրեր . և արդ հիմ որամիս՝ անձն իմ կործանել՝ ոչ յաճուստ հնարաւորութեց , այլ 'ի քումդ ինքնագործ հակամիտութեց . կամ ընդէ՞ր զիս խաւսես՝ յուսահատութ սատանայականաւ զմիտս հարեալ . յուսամ յաճ , խոստովան լեր նմա , և նա հոգայ վասն քո , ըստ դաւթեան սաղմոսին , և այլ մարգարէի կենսախրախոյսն բանի :

Դ . Իսկ յեղանակ խնամարկելոյ հասարաղին՝ 'ի վեր է քան զաւհման կշռութն մտաց հրեշտակաց և երկրականաց . և եթէ բնաւ կրկնեսցի , ոչ լինի չափեալ . քանզի անբովանդակելոյն՝ և բարերարէն է անճառելի : Նաղի ումն օրհնեալ՝ զումն օրհնաբանեալ յերրորդական համագոյութենէն տնաւքեաց . իսկ նա 'ի հաճութի կամաց առաքչին մեռաւ . և միւսն ահաւոր՝ 'ի յերկուցն հաւանութի՝ մեծաջան բաղձանօք մաղթէ : Իսկ համաբարւոյ միակամութեն ցուցակ՝ առ 'ի զնոյն բարի ներգործել , որք հոգին՝ կենդանւոյն , և բանն՝ բանականին , պայծառութի փառացն , և կերպարան՝ էութեն : Ու կեանան փոյթ . առ ողորմութին սթափ . առ ձեռնկալութին

պատրաստ · առ փրկութ՟ին կամ՟ · առ ա-
ռատութ՟ին յորդ · առ յաճախութ՟ին զե-
ղուն · առ անբաւութ՟ին լի · առ աննուա-
զութիւնն փարթամ · առ երկայնմտութ՟ին
ձոխ · առ անհասութ՟ին բարձրեալ · մի եր-
րորդութ՟ի կատարեալ ՚ի յանձանց երից ·
օրհնեալ յաւիտեանս · ամէն ։

Վերստին յաւելուած կրկին հեծութ՟ե՝ նորին հըռ-
կողի , առ նոյն աղերս մաղթանաց բանի ։ ՚Ի խո-
րոց սրտից խօսք՝ ընդ ա՟յ ։

ԲԱՆ · ԽԵ

ա · Եւ արդ՝ յոյս բարեաց տնկեալ ՚ի
սրտի՝ անձն իմ կործանեալ , և
գօտեաւն հաւատոց պնդեալ զերիկամանցդ
երկակի մասունս՝ զկրկնապղտոր խորհր-
դոցդ զցանկականիդ գործարան , խոստո-
վան լեր բարերարին ա՟յ ։ Զմտացդ՝ իբ-
րև զգործոց · զխորհրդոցդ՝ իբրև զբրու-
թեց · զանտեսիցն՝ իբրև զյայտնեցելոց ·
զսրտիդ ծածկութ՟եց՝ իբրև զբարբառումն
ձայնից · զակնարկութ՟եցն՝ իբրև զարդի-
նականաց մեղանաց · զաղդել շրթանցդ՝
իբրև ՚ի գլուխ ելելոց չարեաց · զոտիցդ
հետոց՝ իբրև զպատուիրանաւն ա՟յ վաղ-
ղաց · զձեռացդ ձգումն առ ցասումն՝ իբրև

'ի հեղումն արեան գործողի · զծիծաղելն
ընաւին՝ իբրև զկամաւորական լքումն
շնորհի · զերդմնականն, որ թէ 'ի հան-
դէպս՝ թէ 'ի տարադէպս՝ իբր զգործակ-
ցութի խաբողին ։ Զամբարտաւանութին՝
իբր զհին կործանիչ նախաստեղծին բարձ-
րութե · զսրտին նեղութի՝ իբրև զթերութի
հաւատոց · զմեղկութին՝ իբրև զպարտութի
զօրաւորին պնդութե · զտրտունջն առ
վտանկս կրիցն՝ իբր զուրացութի ուխտին,
որ առ Տրն · զապարասանութին՝ իբր զթուն
իմն անգթութեն · զամբարհաւաճութին՝
իբր ոչէիւք առ վեհսն գոռոզութի · զհը-
պարտութիւնն՝ իբր զկամաւոր հարազատ
գտողին չարեաց ։ Զակամայիցն՝ ընդ կա-
մաւորացն · զբռնացելոցն՝ ընդ հաւանա-
կանացն · զեկամտիցն՝ ընդ բնաւորակա-
նացն · զանօրէնութիսն՝ ընդ ապաստուա-
ծութեանն · զփոքունսն՝ ընդ սաստկա-
գունիցն · զնուազունսն՝ ընդ հոլովիցն ։
Զանձաւիցն իմոց՝ իբր զձաւելեաց դի-
տողին · զանդրելոց մխասուցն՝ իբր զնկա-
րելոց տեսողին 'ի յարձան մագնեստիս վի-
մի · զթեթևագունիցն առ խտիր մտաց՝ իբր
զատուար ծանրութի բեռանց · զխնդիր
չափոյ ծածկելոցն՝ իբր զճշդով պահան-
ջումն սատերն սակի՝ 'ի բերանոյ կիտին

կորիւնի՝ չորեքդրամեան կշռութեամբն · զանդնդականացն գործոց՝ իբր 'ի յականջս նոյ արագ ժամանելոց ։ Օ այսուիկ յաճախեալ կուտեալ կրկին յանձնառութե̃ ՝ վերստին պատմեալ առաւօր մեծաւ հեծութե̃ զչէոցն՝ իբրև զեղելոց ՝ ընծայեալ նոյ զպարտուն վանեցեալ անձինդ · զի ընկալցիս 'ի փոխատուէն զշնորհօք թողու̃ պարտուց մեղաւորին · զոր տէրն արդարացոյց ՝ և հրաշափառապէս հուչակեաց ՝ ամենապատիկ ներբողիւ կրկնեալ զգովեստ զդշխմանն՝ քան զպարսաւանս մեղացն ։

Է · Նարդեամ և դիզեամ անձինդ մեղապարտի՝ բազմապատիկ յոքունս ՝ զքոյն խոհերս բազմամասնեայս՝ անձն իմ կշտամբեալ յոքնախթանդ բանիւ ։ Օ չարութի̃ն ՝ զանօրէնութի̃ն ՝ զվրիպութի̃ն ՝ զա'ի մարտին հանդիսէ փախուստ · զպարտութի̃ն ՝ զմոլեգնութի̃ն ՝ զամբարշտութի̃ն ՝ զապշութի̃ն ՝ զթմբրութի̃ն ՝ զքունն արթնական ՝ զառ 'ի յընթացսն՝ զնիրհումն ՝ զխորհուրդն օտարոտի ՝ զբանիցն նանրութի̃ ՝ զգաղութե̃ն հաճութի̃ ՝ զյամենայն 'ի նմին ՝ զփափագելն՝ նոյ առելեացն ՝ զաներկլիղութի̃ն ՝ զանսաստութի̃ն ՝ զանհարթութի̃ն ՝ զթերութի̃ն · զթիւրութի̃ն ՝ զլուծութի̃ն ՝ զճշդութի̃ն ՝ զանկապ տը-

ձակումն ։ Օ՜ ծիծաղականն , զվրնջո-
ղականն , զկատակերգականն , զգայ-
թագղականն , զպատրողականն , զանդէպ
քաջութիւն , զանյարմար մարտն , զառանց
օրինի արիութիւն , զխեղդմունս հոգւոյն ,
զատատանողականն զերկչոտութիս , զբազ-
մատեղնեան ձիւղսն զրահետականս · զան-
պատկառ փարաքմունսն , զգժտութիւն ,
զգժգմնութիւն , զանդատ ատելութիւն ,
զմարմանջմունսն դիւրըմբռնողականն ,
զփոքունյն զանկշռութիս , զխոստմանցն
դժրողութիս , զուխտիցն մոռացութիս ,
զնմանեացն պղակերպութի , զկեղծեացն
քողարկութի , զփառամոլութեն մորոսու-
թի , զյօնիցն յաւակնութի , զպղրատու-
թիւն , զինքնասիրութիւն , զնախագահիցն
տենչութի , զհատուցանելն եղեռնակա-
նացն , զնոցինն՝ զանշահ աղձատանսն ,
զվայրապար բերմունսն , զընթացակցու-
թիւնսն խորամանկութե բանսարկուին ։
Օ՜ բանին սերմնակաթուի , զվաճառումն
կենացն՝ ընդ գնոց ստատակմանն , զկորուստ
ատանդիցն , զհայրենեացն ծախս , զկապա-
րանն ձգողական՝ զփոկով լծոյ երնջոց ան-
խզելի ըմբռնմամբ՝ զանօրէնութիս , զյա-
րաթաթաւ տղմաբնակութիւնս , զլքումն
լաւացն , զընթադրութիս անկարծիցն ,

զկնի դարձին՝ առ նոյն դարձ դաժանակն։ Օնորոգ մտացն, զօտար խորհրդոցն, զանկայուն կամացն, զհաշման հագագին, զեռութի չնչոյն, զևան քան զատհման կանոնացն դրութե՝ զնշխանականին զամենասփիռ բացարձակութի․ և զոր չէ՛ ձառելի, և կամ գրելի, և կամ պատմելի, և կամ յերեսս դիմաց բերելի։

Գ․ Եւ արդ՝ զիարդ բժշկեսցիս՝ անձն իմ եղկելի, 'ի յայսքանեաց ախտից խոցոտեալ, բարձեալ թողեալ այլ մի տարագիր անողջանալի, ըստ մարգարէին․ քանզի մի 'ի վերադրելոցդ՝ բաւականացես զօրեղատակման, թող թէ այսքան դարք սպանողաց՝ դժնէից դահճաց՝ շուրջ պաշարողաց։ Մանաւանդ զի ոչ այսու և եթ նըմանադրութե կշռի տարացեալ տարժանեցելոյս․ այլ զորօրինակ անթիւ բազմութի կայտառաց կարձաց խայթողականաց՝ 'ի ստորին մասունս ծայրից ատնոցն զօրհասական թոյնս բերելոց, և յաման մաշկեղէն արկեալ՝ ամփոփէ զելիցն շաւիղ՝ կապարանին շրջափակութե․ ցուցանի արտաքուստ բարւոք, իսկ 'ի ներքուստ համբաւեք չարի, և սպահեստ կորստեան, և կոյտ կսկծման, և գործոնեայք սատակման, և ժչակք մահու։ Արդ՝ այսոքիկ են ամբա-

բեալքն քո՝ անօրէնութեան տաժանեաց
թշուառաքիրտն թոշակք՝ անձն պարտա-
կան կրկին սատակման. որ կամաւորաբար
ընկալար 'ի քեզ, զոր թշնամին սերմանեաց
'ի վերայ ցորենոյն՝ յագարակի աշխարհիս-
մի այր անմաքուր՝ ամբարիշտ և ծոյլ. բնա-
ւին առեցեալ, սիրողդ մնացդ ախորժմամբ
զլցեալսն ա̃մ անառակութեամբ. և զոր
առաքե̃լ ցուցանէ զթիւս բանիցն՝ սարսա-
փելեացն կշտամբողաց, աստուստ սկսեալ
մինչև 'ի կատար կանոնի այնր պայմանի,
և որ հասեալ են առ է՝ յո̃յ իրաւանցն վ̃ր,
եթէ որք զայսպիսին գործեն, և կամ կա-
մակից են. արժանի են մահու: Արդ՝ ես
ինձէն զիս ինքն պարտ վարկայ կրկին հա-
տուցման՝ կորստեան սատակման՝ 'ի մահ
դատապարտութեան. այլ անխայեա՛ յիս
ողորմութեամբ՝ բա՛րեգութ, կենդանի,
հզօր, կա՛մարար, կա՛րող, հնա՛րաւոր,
օրհնեալ յաւիտեանս. ամէն:

---

Վերստին յաւելուած կրկին հեծութե̃՝ Նորին հըռ-
կոչի, առ նոյն աղերս մաղթանաց բանի. 'ի խո-
րոց սրտից խօսք՝ ընդ ա̃յ.

## ԲԱՆ. ԽԶ

ա. Արդ՝ վրիպեալս ես յուէտ ամենա-
պատիժ, միշտ դժնեայ վայրենա-

բարդ՝ անձամբ անձին մահու կշտամբիչ․ արածօղս զերամակս զաղխս՝ փայրագասունս խողից արօտականաց՝ գարշութե̃ մեղաց, նախատ վարձկանութե̃ց։ Հովիւս տածողական զհօրանս ուլուցն ամսաբնակաց՝ ՚ի վրանս հովուացն, ըստ երգոյն երգոց առ խս առակին․ որ ո՛չ խկ ծանեայ զիս երբէք գիտել, թէ յո՞վ․ և յո՞յր պատկեր, և վասն ո՞յր գդայցայ։

Բ̃․ Ահա ՚ի յոտս տանողականս կրողաց երկուց՝ միակցորդ խորհրդականաց, ըստ ձևոյ հրեշտակի կառուցար, իբր ՚ի Թուխս Թևոյ կրկնաբարձ բաղկաց վերատանողաց՝ յաշխարհն հայրենական հայել․ ո՞վ յիմար, զիա՞րդ քեզէն կորացար յերկիր, զաստեացս միշտ հողացեալ դիպուածս, ընդ ցխս անապատականս համարեցար։ Իբր զծիրադ բազմաբերանեան՝ ՚ի յաշտանակի մարմնոյդ հաստեցաւ գլխոյդ բոլորութի, զի և այսու ՚ի յօրինակէն շնորհէ մի՛ օտարասցիս զա̃ծ տեսանել, և զմնացականացն իմաստասիրել։ Բանականութե̃ն յարդանօք՝ կրկին Ճոխացար, զի զյաղթանակ բարեմասնութե̃ն՝ որ առ քեզ եղեն, անարգել լեզուով խօսեսցիս։ Զեւինդ հաստամբ՝ յարմարատեան մատանցդ շաուաեղջք՝ զգործնականացն տնօրինել ըղ-

տնտեսութիւն , իբր կցորդ համացեղու-
թե՟ ամենաբաշխ աջոյն այ՟՝ ա՟ծ կոչեցար :
Նորից հարիւրոց՝ և տասանց վեցից յօդիւք
շաղկապեցար , յարեալ 'ի քեզ ընդ նոսին
'ի նոյն՝ և պատշաճական մասունս չափոց
ազդողականաց՝ հինգ զգայութե՟ց , զի մի՛
և երևելիդ նիւթականութե՟ քումդ տե-
սութե՟՝ մնասցդ դիտման անդատ եղեցի .
զի ոմանք ստուարք են՝ և զօրաւորք . և
այլք փոքունք՝ են և պիտանիք . կէսք կարծ-
րակերպք՝ և ազդողականք . են և գողտրա-
կանք՝ և պատուականագոյնք . դարձեալ
կարևորք՝ և պատկառելիք : Իսկ թարգմա-
նութիւք սոցին տեսուե՟՝ 'ի քե՛զ են նկար-
եալ իբր յարձանի անջնջականի՝ ա՛նձն իմ
եղկելի , ո՟պ զի և տարր ժամանակաց՝ և շա-
րունակ հետևման աւուրցն առ պսակ ամին ,
իբր կանոնաւ իւիք սահմանեալ մասամբքդ՝
անսխալ և անայլայլելի պահեսցի :
Գ . Դարձեալ այլ օրինակ հոգևորական ,
որ զսիրոյն յօդուած շաղկապէ 'ի մի առ-
եկեղեցի , քև խորհրդածի . իբր զի առանց
ընաւից զուգամասնութե՟՝ կապակցել ծով
հաւանականաւ զվեհն ընդ փոքուն , ճեմա-
եալ է հաստուածոյն անարատուե՟՝ յանուն
քե՟ ժողովելոցն . ո՟պ 'ի հաստուածն և 'ի նուա-
զութե՟ միոյ յանդամոցս անարգագս պատ-

ուսատեղոյս 'ի մարմնի, կրճատեալ ինն է յօրինուած կազմուածն մարմնոյ քում սենեկի զգայականի, և շրջեալ է ընտանութիւն պատկերին յանարգ փոփոխումն։ Եւ արդ՝ ազդախեօք, և ևս բազմօք անզուգական հրաշակերտութեամբ եղական պատկեր Աստուծոյ՝ կշտամբեալ իսպառ ոգի իմ գերի, և թէպէտ յաւագին նմանութեան կողոպտեալ զտար պատուիրանին յանցաւորութեամբ՝ 'ի դրախտին կենաց, այլ աւազանին լուսազարդ շնորհիւն զհոգւոյն փչումն առեալ, և նմանութիւն ես կերպարանին. և արդ ընդէ՞ր կորուսեր զփառսն երկնաւորս, իբր նախաստեղծն երբեմն զվիճակն երկրաւոր՝ յադին դարաստանի. ընդէ՞ր փակեցեր քեզէն քեզ զերկին, և զվերելից դուռն աղխեցեր. ընդէ՞ր խառնեցեր ընդ ջրոյն մաքրութեան՝ զախտ արտասուացդ տարժանութեան. ընդէ՞ր զլուացեալ զձորձ վերարկուին՝ գարշելի գործովք զաղրացուցեր. հի՞մ զեղեալ հանդերձին մեղաց պատմուճան՝ անառակութեան վարուք քեզ արկեր. ընդէ՞ր զտանողացդ ոտից սրբութիւն՝ ճանապարհաւն ժանդից աղտեղեր. ընդէ՞ր կրկնեցեր իրաւազատին՝ զուխտադանցութիւն հին պատուիրանին։ Ընդէ՞ր մերժեցար 'ի պտղոյն շնորհաց, իբր զԱդամ 'ի ծառոյն

կենաց · ընդէ՞ր նենգեցեր քեզէն քո կամաւ՝ զանստուեր յուսոյն յարակայութի · ընդէ՞ր պատկառանք անհամարձակելիք՝ քոյին դիմացդ նպաստեցեր · ընդէ՞ր զլինեցար ընդդէմ քո ներհակ , ո՞չ ընդունարան խելագարութե · ընդէ՞ր որսացար 'ի ծուղակ մահու՝ թողեալ զարահեան փառահութե · ընդէ՛ր կարթիւ պատրանաց ածար՝ հաղո՛րդդ մարմնոյ կենդանարարին ։ Այլ վերստին յուսացեալ 'ի նա՝ կարդամ նմա , ապաւէ՛ն եւ լոյս , քաւիչ՝ նորոգիչ՝ փրկիչ՝ կեցուցիչ՝ եւ կենդանարար · ողորմած խնամօղ մարդասէր եւ անոխակալ բաղմագութ , օրհնեալ յաւիտեանս · ամէն ։

---

Վերստին յաւելուած կրկին հեծութե՝ նորին հրակոյն , առ նոյն աղերս մաղթանաց բանի · 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

ԲԱՆ · ԽԵ

ա · Եւ արդ՝ զի՞նչ գոյ ասել ամաչեցելոյս յերեսաց մեծիդ ահաւորութէ , բայց եթէ համրանալ , եւ հող 'ի բերան եղեալ լռել 'ի սրտի , ըստ մարգարէութեն խրատու , ահա 'ի բարւոյն կարկառեալ 'ի յոյս ։ Իսկ եթէ զփականս շարժողութե շրթանցս բացից բանադատե-

ցից՝ խօսել կամեցեալ, դարձեալ զնոյն ձայն կրկնակական եղերերգութեն լալեաց բազմութեն՝ խէթ մնացս յառաջադրէ։

Ե. Եւ արդ՝ ողբակից մեծ մեղաւորին անօրինելոյ կամաւ առ 'ի մնաց՝ զնորին գոչումն երկրորդեցից և ես ընդ նմին. մեղայ տէր՝ մեղայ, և անօրէնութեանց իմոց ինձէն վկայեմ։ Հիւսեալ ընդ նմին զբանս յիսներորդի սաղմոսին, անթիւս գրեմ զպարտուցս սակ անձինս մեղանաց՝ քան զհիւղ երկրի հողմահոս փոշւոյ՝ ընդ օդս ամենայն տարածեցելոյ։

Զ. Մեղայ յերկինս և առաջի քո, ընդ անառակ որդւոյն պատկառեցելոյ՝ հայրենի գթոյդ վերստին դարձեալ՝ թախանձ արկանեմ. զողորմելին ձայն աղերսանաց՝ արտօսրածին ողբովք գոչման՝ 'ի տխուր դէմս մատուցեալ առաջի քո տարածանեմ՝ հայր գթութեանց ած բոլորից, չեմ արժանի կոչիլ, և ո՛չ բնաւին առ այս անուանիլ, ո՛չ միայն որդի, այլ և անպիտան ապաբան վարձկան։ Ընկա՛լ զսովեալս տարագրական, պարտական մնասուց. և զցաւքաղցեալս՝ լլկանաց նեղցս նուաղեցելոյս՝ կենաց քո հացիւդ բժշկեսցես։ Լեր ընդառաջ քո ողորմութեամբդ՝ 'ի սկզբնաւորս ապաւինութեն. զգեցո գթած և անոխա-

կալ՝ անօրինեալս մեղապարտի՝ զնախակապուտ հանդերձին ծածկոյթ. աւանդակորոյս ձեռացս աղտեղեալ մեղօք՝ զկնիք մատանւոյն համարձակութեան՝ ամենաուստ կամօք մատուցեալ. զգարշապարացս թըշւառութի՟ մերկութե՟ ոտիցս՝ պատսպարութե՟ աւետարանական ամրավերարկուոգւիցս կօշկաց՝ 'ի յօձին թիւնից միշտ ամրացուցեալ: Օ՜ զուարակդ պարարակի եղինդ երկնայնոյ, որ է միածին որդիդ քո օրհնեալ, խնկապէս մարդասիրութե՟՝ կարօտելոյս բարեաց՝ նուիրեա՛. որ մատուցեալ միշտ՝ և անպակաս մնաս 'ի լրութեան, յարակայ զենեալ 'ի սպանդարանի անթիւ սեղանոց անսպառութե՟, բոլոր յամենեսին՝ և ընաւ յա՟մուլ, էութե՟ յերկինս՝ և խնկութե՟ 'ի սորինս, աննուազ մարդկութեամբ՝ և անթերի ա՟ծութե՟. փշրեալ՝ և բաշխի 'ի մասունս անհատս, զի զհամայնն հաւաքեսցէ առ 'ի նոյն մարմին իւրումն գլխոյ. քեզ փառք ընդ նմին՝ հա՛յր ողորմութե՟ յաւիտեանս. ամէն:

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հըր-
կոզի, առ նոյն աղերս մաղթանաց բանի։ 'Ի խո-
րոց սրտից խօսք՝ ընդ այ։

## ԲԱՆ · ԽԲ

ա · Բարձրեալդ, հզօր, անսկիզբն, անեղ,
անբովանդակելի, աննիւթելի ակ-
նըդ նկատող, ծնող անքննին փառաց մի-
ածնիդ, խրատացուցես զիմս ողորմութի
հերքեցելոյս ընդունելութեան՝ առ երկ-
նայինս և առ երկրաւորս։ Յօնեա՛մ զկեալս
կորուսելոյս՝ վերնականացն պարերգութբ ·
աւետարանեա՛ բանիւդ օրհնութեան՝ զկեն-
դանութիւն իմ մահացելոյս · զարբեա-
տութի կամացդ յայտնեա՛ գովեալ՝ բոլո-
րից գոյից եղելոց · ստացի՛ր անուն քեզ՝
անձառ, և ինձ թշուառիս՝ նորոգ փըր-
կութիւն · կորուսցե՛ս զգիր մուրհակի մե-
ղուցելոյս ամբաստանութեան · զվճիռ հոգ-
ւոյս մահու՝ ջնջեսցե՛ս կայլակօք արեան
որդւոյդ սիրելւոյ · վստահութի փրկութե
բարեաց՝ արեամբ քո՛ քո նկարեսցե՛ս · ցոյց
զսքանչելիս քո բարեգթութեան՝ 'ի ձայն
հարսանեաց քում հարազատի։ Մ՛ի փա-
կեսցես դխնդրելոյս առ քեզ զառագաստ սը-
րահի՝ կենացդ յարկի · մի' տրոհեսցես 'ի
բազմականացդ, և 'ի բարեացդ քո զըկես-

ցես · մի՛ պահեսցես 'ի գանձարանիդ ըղ-
նիւթեալ իմ պարտուցս անօրէնութի ·
մի՛ կնքեսցես 'ի քսակ բարեացդ՝ զզազ-
րութեց իմոց գարշութի · մի՛ երկարս ինձ
զվէր մեղացս՝ 'ի յախտալից մարմնիս ծած-
կեսցես · մի՛ զփտութի նեխութե ցաւոցս՝
ինձ անկակից մահու մնացուսցես · այլ
բա՛րձ բանիւ քոյդ ողորմութեան՝ զժան-
տութին ապականարար , որ զի զատեալ 'ի
հիւծմանց ախտից՝ առողջութե պատրաս-
տեցայց · հնարաւորեա՛ գթութեցդ հայր
մեծ խոցուածոյս՝ զօրեղ սպեղանիս , կա-
րեոր կործանմանս՝ բարի այցելութիւնս ,

Ո՛չ ի քո եմ տէր ոգեսէր , թէ և առ մի
նուագ ըխուրս մեղիցեմ , բայց ո՛չ գրեցայց
համայն մեղուցեալ՝ տուիչ կենաց իմոց
բարերար՝ 'ի շնորհ պարգևաց կենաց քոց
ապաւինեալ · զի ճանաչելդ զքեզ՝ բովան-
դակ արդարութի է , և գիտել զզօրութիդ
քո՝ արմատ անմահութե , որպ և կանխաւ
իսկ գրեալ իմաստունն · և դարձեալ՝ տի-
րելդ քո ասէ՝ ամցուն , խնայել տայ քեզ
յամ · և դարձեալ՝ մօտ է քեզ յորժամ և
կամիս , կարօղ գտանել ։

Է · Լյս սաղմոնի յուսոյ աղերսանք՝ ի-
մոյս տուեալ տիպ · քանզի ո՛չ այլ ոք բազ-
մամեղ՝ որ քան զնա՝ ինձ զուգաշաւիղ ։

Երբեմն որդի, այլ ատելի. երբեմն միջնորդ խաղաղութե̃ն՝ ո̃չ ժողովրդեանն, և յետոյ խորոց որոշման՝ բազում խռովութեան. երբեմն օրէնք կենաց կացեալ, և յետոյ մուրհակ մահու հաստատեալ. զերկնաւորին պաշտօն ընդ ունեալ, և զօտարին անուն ծանուցեալ: Անպատճառ օցտող. անկարօտ զրկօղ. անսովելի գօղ. գրգեալ տրտնջօղ. փափկացեալ փախստական. սեղանանենգ սարտուցեալ. անպատասխանի ա̃սաապարտ. քաղցրանոյց հայհոյիչ. զաւակ հայրատեաց. կատակարանացն մատնիչ. մովսէսի չարախօս. մոռացօղ երախտեացն. իմաստուն սխալական. ամենագէտ յանցաւոր. ամօթապարտ զղջացեալ. առարակուսեալ աշխատօղ. աղաչաւոր կռապաշտեալ. յամրային դարձաւոր. կաղակարծ ընկալեալ. կասկածաւոր հաշտու̃ի. յապայս յիշատակ. յերկբայս փրկութ̃ի. չաւատալի գիւտ. 'ի մասնէ մ̃նացուած. խարդաւանեալ գերի. կիսակտուր պըրծեալ. կամաւոր անձնամատն. տմարդի յղփացեալ. բազմավրէպ հանճարեղ:

'Ի յընթացս բանից երկեակ որոշմանց՝ ա̃մ ուրեք բանս արկեալ ողբոց և ձայնից, մեծ պարսաւ՝ և փոքր գովեստ՝ իբր 'ի վ̃ր ինքնագրաւ կորստականի, երգիծանութ̃ի

խառնեալ ընդ աշխար. բան նր՝ թելադիր բարգաւաճութե՟ ա՟մ հասակի, և խոստութի՟ն նորին՝ ՚ի շրթունս բնաւից՝ թառանչ թախծութե՟ ողորմելիս իմ՟ն ազդեալ է. Զարմանամ, վհատիմ՝ տարակուսեալ՝ ապշու՟է. զի թէ նա այնքան գթեաց, ինձ զի՞նչ պատահեսցէ. զիա՞րդ անկամէջարձեալն. զիա՞րդ սասանեցաւ հաստատեալն. զիա՞րդ կործանեցաւ կառուցեալն. Ի՞բր օտարացաւ ծանուցեալն. զիա՞րդ զակատեցաւ զաւակն ընտրութե՟. զիա՞րդ սրացաւ մերձաւորն. զիա՞րդ աղօտացաւ փայլեցեալն. զիա՞րդ պատանդեցաւ ազատեալն. զիա՞րդ անօրինեցաւ ուսուցիչն. զիա՞րդ նուաղեցաւ հռչակեալն. զիա՞րդ անարգեցաւ փառաւորն. զիա՞րդ փոքրկացաւ մեծատունն. զիա՞րդ ամբարշտեցաւ բարեպաշտն. զիա՞րդ ամբարհաւաճեցաւ ընտրօղն. զիա՞րդ ունայնացաւ պատարունն. զիա՞րդ կորեաց զուխտն՝ որ ընդ բարձրելոյն։ Պատկառեմ ասել, թէ՝ և ընդ սանդարամետականին կապեցաւ. զի՞ կայր նորա՝ և կռոց. ուստի՞ սէրն ընդ պատկերաց. վ՟ էր կամքն ընդ խարանաց։ Զիա՞րդ ոչ յիշեցաւ յանդիմանութիւնն սամուէլի՝ առ սաւուղ եղեալ. հմայք ասէ՝ մեղք են, և ցաւս և աշխատութիւն

ածէ թերափ ՚ի վ՟ր։ Զխո՟րդ ոչ հայրենի յանդիմանութի՟ն, կուռք ասէ՝ հեթանոսաց՝ դևք և անշունչք են, և նման նոցա լիցին պաշտօնեայք ն՟ց։ Տէր միայն ածէր զն՟ա, մովսէս նախագրեալ յառաջաձայն ձաղանօք՝ սաստիկս ին՟ն ամբաստանէ, ոչ էր ընդ ն՟ն աստ ա՟ծս օտարոտի, զոր ոչ ճանաչէին հարքն ն՟ց։ Ո՞ւր է մահամատոյց պղպղնեայ արձանն փագովրայ • ո՞ւր տգեղն և անպանծալին սիդոնացւոց՝ իդոլական ամենանզով ձուլածոյն • ո՞ւր կռնայի կերպին անդրելին խայտառակութիւն զաղիր տեսակին, որով ամօթոյ մարդարէքն զանասնօրէն դիմեցուցին անխտրաբար, յանուն չարութեան անժուժկալ դիւին՝ անա՟ծաբար ձօնեալ մոլէին։ Տարաւ զէութիւն բարեբաստութե՟ն՝ որ զնախնին որսաց ՚ի կորուստ • յաղթեաց մեծութի՟ն՝ իմաստիցն առաւելութե՟ • գերեաց գոռոզութի՟ն • յիմարեցոյց փափկութի՟ն • վանեաց արծաթն ծառայեցուցիչ • յոգի դատեցաւզայրն տօնելի՝ հին զէնն կործանողին • ՚ի գրկացն ա՟յ հանեալ՝ ՚ի յոսս ստամբակին դթեցոյց • մեռոյց մեղկութի՟ն • թմբրեցոյց ծուլութիւնն • արբեցոյց շուայտութի՟ն։ Ո՞վ դիւրապատիր մարմին երկրածին, որո՞վք ձայնարկութ՟ք զքեզ աւաղեցից •

քանզի ոչ տիրապէս առ նա հանդիպի ընդդիմաբանութիւն, այլ ամենից սխալողաց՝ կամաւ վրիպելոց. վն զի նուազ է իմանալ, թէ անիրաւ է պարծել յիմաստամարմնոյ, եթէ ոչ աստուծով դասեալ ընտրեացն. որ զի թէ առ այս պայմանի՝ յիմար ոք իցէ, և 'ի հաստչին կամս յուսասցի, ոչ ևս 'ի նորայոց անտի ինչ կրեսցէ:

Է. Այլ քանզի սաստիկս և քստմնելիս ունի սողմն զդարձին իւրոյ յիշատակարան՝ ինքնապատուան կշտամբութե, իբր մեռեալ իսկապէս համայն աշխարհիս անձնասիրութե. զոր եթէ զիսկն ոք նկատեսցէ, ունայնութին է իմանալի. այլ և 'ի մատեանս քահանայիցն՝ և 'ի գիրս աքիայ սիրոնացւոյ, յորում զփոյթն իւրում ընթացիցն՝ արտասուելիս իմն յեղանակէ:

Ո ուր ջան. անօգուտ վաստակ. անմիտ հետեւումն. անշահ արշաւանք. անկայուն երկք. օտարին իմաստք. ոչնչից հոլովք. բամբասելի բերք. անյարմար վարկածք. անտի սերմանիք. աւազափուլ շինուածք. ապականացու ստացուածք. քամահանաց տաժանմունք. ինքնամարտ կռիւ. ընդ ոգւոյ իւրում դատ. ընդունայնաթօղ քիրտըն. վնասակար փափաք. կորստական շաւիղ. վրիպակ ճանապարհ, կործանական

կրթութ̃ն · մոլորապատիր վարժութ̃ն · հա-
նապազախալ տեսութիւն · ակնոյայրատ
պչրութ̃ն · պոռնկակերպ կերպարան · ախ-
տաբորբոք նիւթ · դժնեատեսիլ գոյն ·
յոքնատխուր գեղ · յոլովամեղծ ծուխ ·
շոգի ցնդելի · վաճառ մերձ 'ի յառ · տա-
ղաւար քակտելի · ընդ վայր աղաղակ · ան-
պատճառաւոր ծաղր · արհամարհելի աս-
պարէզ · անձնավաճառ գիր · սատակչա-
կան երգ · անմ̃ծ մտածմունք · ստայօթ
ճառ · զայրացուցանօղ զրոյցք · եպերանաց
խծբիծ · խելագարութ̃ե խնդիր · ամօթա-
նաց ցոյցք · խայտառականաց յայտնութ̃իք ·
առակ ապառնեացն · ապաշաւանաց գործ ·
ըմպահկանաց պատմութ̃ի · հեղգացելոց օ-
րինակ · խորխորատ ծածուկ · որս խաւա-
րային · մահագուշակ վիհ · անյատակելի
անդունդք · ուղեկցութ̃ի սպանողաց · յի-
մարութ̃ե բարբանջմունք · դարանակալաց
վայր · խարխուլ յարկ · շինուած սասան-
եալ · կամուրջ խախտեցեալ · երեւոյթ փախ-
չելի · խաբօղ շողոքորթ · անոգայ մատնիչ ·
ընդդէմ բարձրելոյն հակառակութիւն ։

Օ այս ծ̃մ մասունս բանից խոստովանա-
կան կանոնադրութիւն , 'ի սիրտս բնաւից
նախասերմանեաց ժողովողս՝ կանոնադիր
դարձելոց ողջման , ո՞չ զի մի՛ պարծեսցի ոք

'ի մարդկանէ բամբասաւորօք զինուորեալ նետիւք՝ զանձն և զընկերն խոցոտելով · քանզի կռապարիշտ է քողով ծածկեալն, որ զկերպարանսն միայն ունի, և զոչ ախոր-
ժելիս ստեղծչին կատարէ:

Ե · Լուարդ նա՝ որ ոչ այնքան մեղաւ, որքան զղջացաւ, մի՛ իսպառ պախարակեսցի · այլ յիշեսցի՛ այրն այն 'ի բարի, իբրև զհիմն յուսադրութեան՝ 'ի տէրունի ատեան դիմելոց, յորժամ հոգւոյն էջ յայցելութի ա՛ծութեամբն անբաժանելեաւ՝ կենագործել զանդ խոստովանեալսն · զոր մեռեալսն՝ ահա կենդանեացս անտարակոյս բերին աւետիս: Ընդ որում մաղթեալ իմ պարտաւորի՝ իմաստութեանն ոչ ժամանելոյ, 'ի մեղանացն մասն կարգեալ, բարեբանեալ մեծիդ պաղատիմ · լի՛ց ըդնուազդ իմ բանագրութի՝ 'ի յերջանկին հանճարեղութի · նիւթեսցին ներկայիս հոյցմունք՝ 'ի բարգաւաճին յարգաւորութի՝ 'ի գերաշխարան սրբային աղերս · այցելութի խնդրոցս դիցի՛ քո ընտրեցեալ վեհ ազգայորդւոյն, զոր միածինդ օրինակեցեր: Յարեանն կցորդութե՝ զքո փառակիցդ ճաշակեցաք · տուր փրկութի քոյ ծառային՝ ամենահնար զօրեղ ահաւոր, 'ի ստեղծողին փառս անձեցուցեալ՝ զանբա-

ւելի մեղացն ջնջումն ։ Յիշատակաւ խոր-
հրդոց բարեաց՝ ընդ ողորմելեան նորո-
գեսցես․ որ ամենահամ ախորժաճաշակ
բազմապաճոյճ առակագրութե՝ զմ̃ծու-
թիւնդ քո քարոզեալ՝ 'ի մատեան լուսա-
զարդ կտակի եկեղեցւոյ, ընծայեաց հետ
բարութե՝ խոստովանութե մատչել առ
քեզ՝ հայր ։ Քանզի ոչ հեռի յողորմու-
թենէ առ այս ցոյց բանի է իմանալի, թէ
անյուսութեանն կաթուած չէր անկեալ
'ի յեւանդն սրտին ըղձից, որ զձեպ զղջ-
մանն փոքր ինչ կասեաց ։

Է․ Արդ 'ի յուշ բերեալ զոր 'ի քեզ
անճառելի բարեմասնութիւք, զգթութիւն
քո ողորմունեսցես․ որով զկոչկոճեալն 'ի բա-
զում դարուց՝ բամբասանաց քարաձգութե,
երանութե վերարժանացո․ որ յոքնահոսան
արտասուաց ելիւք՝ զմէջ յատակի յարկին
հեղեղեալ՝ ապարանիցն իւր խրախճանու-
թեան՝ սաստակսկիծն ապաշաւանօք,
հօրն կրիցն գերաղանցեաց՝ ողորմելի որդ-
ւոյն հեծութե․ զոր 'ի յաչաց բանիդ քո
արտօսր՝ առ որ մերոյս 'ի յիւրն անխտա-
կրեաց, երկայնամիտ ներողութե՝ միա-
ցուցեալ խառնեսցես՝ գըթած․ և զան-
յարմարն առ նա կարծեցեալ զաղմանին
բարեբանութի, 'ի փառս էակցի որդւոյդ՝

կնքելով նովաւ՝ կեցուսցես զնա քաղցրութեամբ՝ ընդ աղքատս ժողովրդոց ։ Ո՜վ այս պուետիկոս ոճն բարեշնորհ՝ արդահատէր ընդ սողոմնի , ամեւ վարձս վարկուցեալ համակցորդ զուգաձայնութբ՝ իբր կենդանեօք նովաւ՝ ընդ նմին վասն նորին աղերսելաւ քեզ , զոր յաւելուած կարգիդ անտեսէ ։ Քանզի և օստացույն 'ի նմանէ ստեղծեալն՝ բազմահրաշաւորն՝ մարդարէաձևան պատմագրութի՝ ածութեանն արդարացուցիչ՝ զսողոմն ողորմեալ կարգէ · որ զի անպարտաւ է աղօթելն , քան չարաբանելն վասն նորին ։

է · Ո՛ր և ես մաղթեմ մեծ վստահութբ՝ նմանակից այսր հեծութեան՝ և զիմս ընդ նմին ընծայել գոչումն · զի թէ կորուսցես զմեզ դատել ըստ գործոց , ոչ պակասին փառք քո , զի իրաւամբք քո ճանաչիս · իսկ եթէ գտցես , այնքան բարձրանաս , որքան մեծութեդ քում վայելէ · քանզի յաւէտ օրհնաբանելի ես դու երկրորդաւս՝ ողորմածութբ , քան նախահրաման սաստկութբն ։ Դարձիր տր՝ դարձիր քաղցրութբ 'ի խնամս գթութե՝ ձրի և ամենաառատ պարգևօք սիրոյ՝ մխիթարել յաւէտ զտրտմեալս հառաչաւորս սաղնապաւ տապոյ տոչորման անբժշկականի ։

Ձեռն եդեալ փրկութեան՝ նորոգեսցե՛ս վերստին, քաւեալ և պատսպարեալ, 'ի մեղսակործանս խորտակմանէ։ Եւ քեզ միայնոյ սկզբանդ և անսկզբանդ, ընդ սկզբանդ, և սկզբնաւորիդ սկզբանց՝ ս՟բ երրորդութեանդ և միում ա՟ծութեանդ՝ փառք և իշխանութիւն՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հըռկողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի։ 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա՟յ։*

## ԲԱՆ. ԽԹ.

Ա. Եւ արդ՝ մի՛ տիրեսցեն անօրէնութիւնք քում պատկերիս կայսերական արքայութեանդ վերնում՝ ա՟ծ բոլորից լուսոյ. մի՛ կապտեսցէ գոռոզն ապստամբ՝ զզարդ փչմանդ շնորհի՝ 'ի քո ստեղծեալս կերպէ. մի՛ թագաւորեսցէ մեղքն խափանեալ՝ մարմնոյս մահացուի՝ առ 'ի դրաւել զիս 'ի նոյն։ Չի՛ք իմ թագաւոր առ իշխել շնչոյս՝ բայց 'ի քէն ք՟ս, որ անբռնադատ հնազանդեցուցանես լծոյն քաղցրութեան. որ բառնաս զկարիս մեղաց ամենակատար բանիւ. որ արեամբդ քո ստացար, և մարմնովդ կերակրեցեր. որ

կարգեալ սահմանեցեր ուխտ կենաց ան-
փոխադրելի · որ յոգի քո կնքեալ կցորդ-
քեզ գրելով՝ հօր քում մատուցեր ժա-
ռանգակցապէս · որ յանուն զենման միշտ
յիշատակաւ քո չարչարանաց՝ առ նոյն
բարերար աղօթել համարձակեցեր , ստեղ-
ծիչ ամենից և կեանք ։ Դու ես ա͞ծ ա͞մ
հոգւոյ , որ մեծացուցեր զայս տուրս շը-
նորհաց՝ քան զա͞մ գործոց քո հրաշս · ո՛չ
զերկինս իւրովքն զարդուք և հրեշտա-
կացն պայծառութեամբք · ո՛չ զերկիր և
զմարդկութիս , և որ առ սոսա են զարմա-
նութ͞իք · ո՛չ զսահման լայնութե͞ ծովու ,
և որ 'ի նմա են եղելութ͞իք · ո՛չ զանդուն-
դըս աղխիւքն հանդերձ , և որ 'ի նմա են
աներևութ͞իք · ո՛չ բարձրացար յօրինմամբ
այսքանեօք վեհիւք , որչափ առ խմ կա-
րեկցութ͞ի՝ յասելն քո ո͞բ մարգարէիւն՝
քաղցրութեանց յուսոյ բարութ͞ի , ո՞վ է
ա͞ծ իբրև զքս կարօղ , թողուլ միշտ զմեղս
և ջնջել զանօրէնութիւնս ։ Ահա՛ արդ-
խնկեալ են բանք քո՝ ողորմած , և խոստո-
վանեալ բարերարութ͞իք · փառաւորեալ
խորք խորհրդոց , և երկրպագեալ զեղ-
մունք շնորհաց ։

է͞ · Արդարև ո՛չ ոք բաւէ յելիցս թարգ-
մանել խօսիւք նիւթական լեզուի՝ 'ի մա-

սանց այտի քումդ գթութեց՝ զոր առ իս ցուցեր՝ յօրինիչ. քանզի և մեծ իսկ է զօրութիւն՝ զհնացեալն անդրէն նորոգել ըստ առաջնումն պայծառութեան, քան յանգոյից ստեղծագործել։ Նու զի ոչ է քո տկարութի, որ զօրութիդ ես ամի, առ որ բան քո միայն ազդեալ՝ զլրութի գործոյն գլխաւորէ, ահա յարիցես փառաւոր լինել՝ բարեգործ, 'ի ստացուածս այս կրկին անյուսալի փրկութեանս. զի իրաւամբք ուխտի բարձրացի, հաստատուն եղեալ մեծապէս՝ օրհնաբան աւետեաց քո ձայն 'ի քաւելոյդ շնորհ ծանուցեալ, ողորմութե լուսոյդ ուղերձեալ, քան 'ի ճանապարհ ստեղծանելոյն։ Օի առ մինն՝ արարիչ միայն ճանաչիս. իսկ առ միւսն՝ առաջնով կոչմամբն՝ և երախտաւոր. ընդ կերպացուցանելոյն՝ և քաւիչ. ընդ նորոգելոյն՝ և բարերար, ընդ հաստելոյն՝ և ողորմած. ընդ կազմելոյն՝ և հնարաւոր. ընդ յօրինելոյն՝ և հեզ. ընդ նկարելոյն՝ ամենազօր. ընդ առաջնորդելոյն՝ և լոյս. ընդ տածելոյն՝ հովիւ. ընդ դարմանելոյն՝ խնամիչ. ընդ ողջ պահելոյն՝ բժիշկ. ընդ ձեռնկալութեն՝ զօրավար. ընդ անպարտութեն՝ թագաւոր. ընդ արարչութեն՝ քաղցր. ընդ ամենատուր պարգևացն՝ առատ, ընդ

միշտ անսալյն՝ ներող․ ընդ ոչ բարկանա-
լոյն՝ անոխակալ․ ընդ կարեացս վշտակցե-
լոյ՝ ծածկագէտ․ ընդ յանձանձելոյ գթոյն՝
ապաւէն․ ընդ գերունակ գործոյն՝ ա̄ծ․
ընդ անսպառ բարութեան՝ օրհնեալ յա̄մ։
է․ Արդ՝ ո՞վ ստեղծեր մինչ ոչն իսկ էի,
և ծանուցար ինձ գոյացուցիչ, և այժմ
զհոգի մաղթողիս մարմնոյս տաղաւարաւ՝
յարդարեալ անդրէն վերստին յանարա-
տութի մաքուր սրբութե՝ նախնի լինե-
լութեան․ զի բազմասցի առաւել աճեցուն
եղեալ՝ յաճախ տուչութի անսահմանելի
քոյդ սքանչելեաց՝ նորոգ ներկայիս, քան
զանցելոց հնոյն ստուերականաց։ Այլ
ընդ ձաւելոյս զթիւս մեղացս՝ որքան մի-
տացս թևս ընթանալ զանբերելին յիշա-
տակել, արդարացայց յանուն քո հզօր․ և
'ի պատմելս ինձէն զանձին իմոյ բիծ, և
դու թողցես զամբարշտութիւն բազում
մեղանաց խոստովանելոյս՝ հզօր ծածկա-
տես ամենափրկիչ․ զի մի՛ ծայրագոյն լը-
րութբ աւետեացս, դարձեալ նախնումն
կարօտացայց՝ երանելով սաղմոսին՝ զշնոր-
հօք փրկեալն մկրտութեամբն․ և փշուլք
մեղաց յոգի խոցոտեալ, ձեռն քո մխեսցի
յիս առաւելապէս այժմէն վերստին,
ծանրս առնելով զբեռն պարտեացս՝ քան

զքաղցրութի պարգևացդ · այլ աղաչեմ զիս օրհնաբանեալ հոգւովդ սրբով , աղաչեմ զքեզ՝ տէր ած , յօրինաց մեղաց և մահու : Ո՛ւ լիցի , թէ անկցի ընդ տկարութեամբ սահմանաւ ճշմարտութեանդ ծագումն՝ իբրև զդրոյն օրինակ · քանզի ուր քաւութի է թագաւորեալ , վտարեալ են մեղք · և ՚ի խրախոյս կենդանի բանիդ , ոչ է յուսահատութի · և ամբարձեալ քոյոցդ շնորհաց , հալածեալ են պարտիքն · և մերձ գոլով ձեռինդ քո՝ ոչ գոյ անհնարութի , այլ ամենևին լուսաւորութի , բովանդակապէս զօրութի , անպարտելի կարողութի : Ո՛ր է փրկութիւն · կենդանութի · նորոգութիւն · ողորմութի , միանգամայն և քաղցրութի , արքայութի , անեղծութի , և փառք յաւիտեանս · ամէն :

Վերստին յաւելուած կրկին հեծութե՝ նորին հրակոչի , առ նոյն աղերս մաղթանաց բանի , ՚ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ ·

ԲԱՆ · Ծ

Ա · Այլ արդ՝ քանզի որ ոչ է առանց քի քո՝ ողւոց փրկութի , և ոչ առանց տեսման աչաց՝ առ լոյս զուարճութիւն , և կամ առանց արուեստին նշուլից՝

արեւու երբէք քաղցրութիւն, այսպէս և ոչ առանց խոստովանութեան ծածկութից՝ և ստգտանաց անձին՝ քաւութիւն։ Ո՜վ զի՞նչ օգուտ քեզ է մաքրութիւնդ, եթէ ընդ փարիսեցւոյն դատեսցիս. և կամ զի՞նչ վնասեսցեն զիս պարտիքս, եթէ ընդ մաքսաւորին գոլեցայց. և կամ ո՞ւր ասի պարսաւեալ մարգարէն յովէլ, երիցս կրկնելով զանձինն եղկութիւն. և կամ զի՞ գուցէ որյն դատաստան՝ առ ՚ի յիշատակ աւուրն մեծի. և կամ ի՞ւր արդեօք անմաքուր իմացի շրթամբք եսայի՝ հեռին ՚ի գործոց տանն իսրայէլի. և զիա՞րդ ած պարտաւոր պաշտի ադամեան մարմնովն՝ իմոյս կարեկցեալ յանցաւորապէս առ հայր աղօթել. և կամ յո՞րս՝ թարգմանի առած առակին, թէ սիրտ իմաստնոյն ՚ի տան սգոյ, և սիրտ անմտին՝ ՚ի տան ուրախութեան։ Ո՜վ է որ զխաբելն ադամայ՝ անձին իւրում ոչ գըրեսցէ, և զմեղս ամենից՝ ինքեան ոչ համարեսցի, իբր երջանիկն աբբայից զհարցըն, կորոյս զի՞ւրն արդարութիւն՝ որպէս անախտակիր գոլ բնութեանս. և ոչ բերկրի սիրտ՝ առ զուարթութիւն երեսաց աւետեօք յուսոյն, ըստ ասացելոյն, եթէ ոչ յառաջելոյն քո ուսեալ՝ ամենայնիւ ահա ըստ այ արամեցի։

Է̅. Արդ՝ ըղձալի է ինձ յաւէտ աստանօր խրատն հին՝ նորոգ ընկալեալ՝ հոգևոր հանճարեղին, զոր տէրն իսկ երկրորդեաց, երթալ նստել, ոչ յառաջին բարձին հպարտից ընդ ամբարշտացն նան-րախորհուրդ ժողովելոց, ուստի դաւիթ և երեմիա՝ ուխտիւ կանոնի սահման հաստատեալ հրաժարեցուցին. այլ ընդ զղջացեալսն սրտիւ պատկառեալսն մեղօք՝ և ՚ի դատաստանաց մեծին պակուցեալ ահիւ հատուցմանն, յետնոցն հաւատարեալ աստէն ՚ի յերկրի կամաւ խոնարհութեան, ուստի բարձրեալն ա̅ծ պարարեալ բերկրի. որով ընդ նախադասեալսն ՚ի բազմականսն երանութե̅ համարձակեցայց, թէ ես՝ և թէ նա՝ հետևեալ սովիմք: Առ որ զերծեալ ՚ի բամբասանաց բանի մարգարէին, որ ՚ի վէսս ոմանս ակնարկի, մի՛ յիս ասէ՝ մերձենար՝ մաքուր եմ, և ո՛վ զիս տեսանիցէ: Այլ զանկշիւն խոնարհութե̅ երջանկին դաւթի՝ ինձ նպաստ առեալ ասել ընդ նմին, ես իբրև զանասուն համարեցայ, հերքեալ ՚ի զգայութէ̅. և հասին չարիք ինձ շուրջանակի. և նեխեցան և փտեցան վէրք իմ ՚ի յանզգամիս անբժըշկութիւն: Եւ զայլոց ոմանց ընտրելոց ՚ի յասորեստանի՝ զկամաւորն կշտամբութի̅

մեղապարտութե՟՝ անձանցն անարատից ․ ընդ որս և զեզրի մեծի քահանայի զասելն՝ ես ինձէն առեալ բարբառիմ, թէ և ո՛չ զերեսս բաւական իցեմ համբառնալ՚ի վեր առ քեզ՝ մատուած ։

Է․ Որդ՝ ես ճշգրիտ պատկեր ա՟մ երկրի՝ զիմս խառնեալ ընդ նոյին պարտիս, և ՚ի նոցայոցն զառ իս դառնութի՟ կրկին առաւելեալ, նոքօք հեծեծեցից ․ թէպէտ և չէ՛ ինչ պիտոյ գարշութե՟ գունոյ՝ դարձեալ տգեղութիւն ։ Ոհա՛մ որդ մեղայ՝ զի անմտութե՟ գործեցի զոչ հաճոյսն քո՝ բազմօք սխալեալ յանցաւորութե՟ք ․ նայեա՛ յիս գթած, որ՟ երբեմն յուրացութեն ըմբռնեալ պետրոս՝ զի յոյժ ունայնացայ ։ Լուսաւորեա՛ ինձ զողորմութեդ քո ճառագայթ՝ ամենևին բարերարութիւն, զի ընկալեալ զօրհնութի՟ քո տէ՛ր, արդարացայց կեցից և մաքուր եղէց յանստեղծ իցն քո՝ խմոց ըմպողաց ։ Չունիմ համարձակութի՟ զմեղապարտ ձեռինս համատուած՝ առ քեզ տարածանել մինչև մատուսցես զօրհնեալդ քո զաջ՝ ՚ի նորոգութի՟ դատապարտելոյս ։ Որդ՝ յաղթեա՛ վերստին խմուս յամառութե՟՝ քոյին հեզութեամբդ առ իս ժամանեալ մարդասիրապէս ․ և զամենայնն յա՟մի ա՟մբ քո կարողութե՟դ, զառաջին

չարին՝ միջնովքն և վերջնականօքն թող ինձ հընարաւոր անհասից՝ քո թագաւոր լուսոյն արդարոց։

գ. Չեմ արժանի յիշել զանուն քո օրհնեալ, զի մասնակից եմ բարեգործից՝ մահու հարուածոց։ Ու կնիքն․ առ շնորհն․ առ փչումն․ առ պարգևն․ առ աւանդն․ առ ձիրն․ առ անունն․ առ որդեգրութիւն․ առ պատիւն արքայական․ առ պատկերն․ առ դրոշմն․ առ օծումն․ առ ճոխութիւն․ առ համարձակութիւն․ առ ընտանութիւն․ առ կեանսն․ առ լոյսն․ առ երանութիւն․ առ յոյսն․ առ փառսն․ առ անխոնարհելի բարձրութիւնն․ առ պսակն անկապտելի․ առ խոստմունսն ծածկեցելոցն, որ քև՝ տէր քո, բազմօք աւետարանեցաւ ինձ յամառելոյս՝ իժիս և քարբիս՝ ունկնախից և լսելափակ անլուր ականջացս․ որ միշտ յառաւելութեան քումդ բարութեան՝ յոքնապատիկ յաւէտ քան զոյն չարիքն իմ յաճախեալ, իսպառ կործանեցին․ մերժեալ 'ի կենաց՝ ընդ մահ կապեցին, ծառայ կարգեալ ապականութե՛։ Ու արդ՝ դու միայն իրաւակշիռ և ճշմարտադատ բարերար՝ օրհնեալդ 'ի գթութե՛, մեղայ քեզ՝ անօրինեցայ՝ անիրաւեցայ․ վասն որոյ և եղծայ՝ զեղծայ՝ յանցեայ՝

ամբարշտեցայ • և ոչ լուայ խոստովանեալ և երկրպագեալ գովեալ քո բանիդ • որ դու իսկ երևեցար անճառելեաւ քո սիրովդ, զոր գրելն իսկ մեծ է, և նշանակելն սարսափելի։ Քեզ արդարութիւն և փառս և մշտնջենաւոր գովութիւն, և ինձ պատկառեցելոյս 'ի քէն՝ խնամակալ, քաւութիւն և ողորմութիւն և բժշկութիւն, օգնութիւն և պահպանութիւն սրտի և ոգւոյ • բարերարեալդ յամենայնի յաւիտեանս • ամէն։

---

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ Նորին հըսկողի, առ Նոյն աղերս մաղթանաց բանի, 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

## ԲԱՆ • ԾԱ

ա • Եւ արդ՝ առ երկրածին ոք պաղատեցայց այլս մահացու ամենապատիր ե՛թէ, ընդունայն է աղաղակելն • առ մահկանացու բանական ե՛թէ, սուտ իցէ փրկութիւնն առ յուսոյն վստահութեան • առ մարդ ոք եղծական ե՛թէ, ընդ տկարութեան բանին՝ և նանիր է զօրութիւն • առ իշխանս երկրաւոր գահից ե՛թէ, անցաւոր է ընդ ինքեանս և իւրեանցն բարութիւն • առ եղբայր ոք հարազատ ե՛թէ,

կարօտ է կամելոյն առ անձինն անդորրու-
թիւն ․ առ հայրն իմ երկրաւոր ե՛թէ ,
պակասեալ են խնամականքն ընդ աւուրց
նուազութեն ․ առ մայրն իմ որ երկնեաց
ե՛թէ , կասեցան գթութիքն ընդ նահան-
ջել կենդանութեն ․ առ թագաւորութիս
աշխարհի՞ արդեօք , որք զմահացուցանելն
միշտ արուեստաւորեն , քան զկենագոր-
ծելն ․ այլ առ քեզ՝ բարերար ած օրհ-
նեալ 'ի բարձունս , որ կենդանի ես՝ և
զկենդանութի տաս ամի ․ որ և յետ վախ-
ճանին զօրես անեղծապէս նորոգել։

է ․ Որ եթէ փախնումք 'ի քէն , դու զկնի
ընթանաս ․ եթէ տկարանամք , զօրա-
ցուցանես ․ եթէ վրիպիմք , շաւիղ դի-
րութեան ուղղես ․ եթէ պատկառեմք ,
քաջալերես ․ եթէ ախտանամք յանձն և 'ի
մարմին , բժշկես ․ եթէ գարշանամք մեղօք ,
մաքրես ․ եթէ ստեմք , քո ճշմարտութեդ-
արդարացուցանես ․ եթէ յանդունդս ներ-
քինս սուզեալ գլորիցիմք , յերկինս ցու-
ցանես ․ եթէ 'ի կամաց մերոց ո՛չ դառ-
նամք , դու դարձուցանես ․ եթէ մեղան-
չեմք , ողրաս ․ եթէ արդարանամք , ժպտիս ․
եթէ օտարանամք , սգաս ․ եթէ մերձե-
նամք , տօնես ․ եթէ տամք , ընդունիս ․
եթէ յամրանամք , երկայնամտես ․ եթէ

մեք ժխտեմք, դու տատապէս շնորհեալ ընձեռես. եթէ լքանիմք, տրտմիս. եթէ արխանամք, խնդաս:

Դ. Որպէս հարիւրորդ երկրորդ սաղմոսն օրհնաբան հրաշալորական՝ զվհատելոյս զսիրտ սփոփէ, և մեծ լոյս կենաց աւետարանէ առ փրկութեն հանդէս, որ յաղթականն է դխւոց, և տարակոյս բանսարկուին. որ իբր զխաչին տէրունի նշան բարեբաղդ պանծալի սքանչելափառ՝ անխոնարհելի բարձրութը լուսոյ և անպարտելի վերնոյն զօրութեամբ՝ կանգնեալ է ախոյեան անվանական և անշարժական՝ ամիւ յաւիտենական՝ ընդդէմ անբարի բարուց բռնութեն բելիարայ. որ ունի յինքեան գանձս հոգևոր օգտից գիտողաց մտաց՝ ընծայելայս զպարտումն մահու և զլուծումն մեղաց, և լոյսս կրկնիս՝ յերկուս յաւիտեանս, և զնորոգումն խոստման անեղծութե արդարոցն, կանոնս բարեհրաւէրս և կենդանատուրս՝ գրեալս հոգւոյն ոյ. որով ամ խնկ երդ սաղմոսացն՝ մաքուր սրտից է տեսանելի՝ կատակ կենաց մարդկան նկարեալ:

Դ. Ոի թէ ՚ի նախնումն տկար կերպարանն՝ զայս աւետիս և վստահութի ընդգոզեալ ունէր՝ կործանման մահու

նախաժամման մեծ աւետագրիր՝ և կեանս երկնակրօնս վերնակենցաղս՝ միշտ անձառելիս . և այն՝ ջնջական գիրն , և յեղանակաւոր օրինակն , և պաշտօնն դատապարտիչ վհատութե յանցաւորացն , և խափանելի կտակն երկրային , և տկար հաշտարարութի միջնորդացն , և թերուն բանից մաղթողացն : Որ զի թէ մնասէի փրկուին խոստովանելի է , անտուստ վկայեալ յետ այնքանեաց մեղանաց անբժշկականաց . որ արեամբն արդարոց ելից զնուիրեալն մեծի թագաւորին հրաշանուն քաղաք հայրենի , ըստ մարգարէագիր անսուտ պատմութեն . որ և զմեծն իսկ տեսանողաց՝ բազմերախտիս ձեռնկալութե՝ խնամածօրէնն պաշտպանութեան՝ նախնակերտ յարկին տեսչութե , մանկավարժ ինքեան և նախնի , մեքենայիւ մահու սղոցեաց , 'ի յերկուս մասունս խղեալ՝ դժնդակ տանջանօք մաշեաց իբր խորհրդով ապստամբութեան՝ զյուսայն փրկանակ կտրեալ : Նա որով զչար յաւելուածն մոլեգնական՝ զքրէական վերնամարտուին՝ 'ի բարձրեալն յանդգնութի . քանզի ոչ պատկառեաց երբէք զստեղծողին պատիւ և զանուն՝ յիւրաբընակ խորանէն մերժել . հալածեալ զայ հոգին , բելիարայ զանձն դաւանեաց :

Քանզի զնոյն տաճար տիրական՝ խնկար-
կութեան հաստողին սահման՝ հռչակա-
ւորն երկրի տեսարան՝ զարդարելին ազանց
սրբարան · ուր տեսիլք հրեշտակականք և
ծխային հրամանք յաղթողականք՝ լուսա-
ւորապէս յայտնութբ՝ ազդեալ երևէին ·
զայն վայր երկնանման ահաւոր սքանչելա-
տես՝ քևանայ ումեմն քառադիմակի՝ նա-
խանձարկու պատկերի՝ աներածոյն աննա-
պատի , պաշտօնեատեղ գործելի և դիւա-
ձենձեր զոհարան պատրաստեալ կազմեաց ։
Օրհեալ զարքայն երկնաւոր՝ 'ի յար-
քայական կայից · զամենահարուստն ու-
նայն 'ի ստացուածոց խուրոց · զտանու-
տէրն՝ անհանգիստ և թափառական տա-
տանեալ ։ Նեհեղզերուզայ ձեղուն նկար-
եալ , և զանուանն ահեղ՝ վտարանդի արար-
եալ · դերի տարեալ զաւանդ գուլելոյն ,
ողբալի՝ զողորմածին մասն նուաղեցուց-
եալ · աղուեսուն փոքու ապարանք՝ զբրա-
հրն լուսոյ կարգեալ , և բնաւից ունողին՝
և ոչ գլխոյն տեղաւոր յիւրայնոցն եղ-
եալ · հատեալ զցանկ հզօրին , բախտից հր-
մայից՝ զսեղանն մեծախորհուրդ արեանն
սրսկման՝ երևեցուցեալ ։ Լայնեալ հետս
բաղումն՝ ընթացելոց 'ի դայթակղութի ·
հովիւ կորստեան՝ հօտին սատակման · մո-

լրութեան բուռն վարդապետ. և այն՝ գիտութեամբ կրօնիցն օրինաց, հայր ունելով զմեծն եղեկիա՝ զնմանակիցն դաւթի.

Ե. Այնքան սաստեալ զամենայն չարեաց, որ և զԱ̃յ պատիւն՝ որ զարքայութեանն փառս ընծայեաց նմա, հայհոյեալ և թըշնամանեալ. և զաղօթկերացն բազմութիւն ուսերաւ մահու խողխողեալ։ Ընտանի դաւաճան. մերձաւոր վտանիչ. հարազատ սատակիչ. կցորդակից սպանօղ։ Ու ա̃ծ ոչ գոյր դառնալ, զի ուրացեալ էր զնա. զաբրահամ ոչ էր կոչել, զի խորթացեալ էր ՚ի նմանէ. խաչակաւ ոչ էր աղօթել, զի նզովեալ էր ՚ի նմանէ. իսրայելու ոչ էր պարծել, զի տարագիր էր անուան կոչմանն մեծախորհուրդն շնորհի. զդաւթեան երգ ոչ էր նուագել, զի կշտամբիչ էր նորին. ՚ի քաւարանն ոչ էր մերձենալ, զի պղծեալ էր զնա: ՚ի տապանակն ա̃ծագին ոչ էր ապաւինել, զի ընդ գարշութե̃ ձուլածուին էր փոխանակեալ. առ մովսէս ոչ էր կարդալ, զի անքաւելի էր պարտիքն՝ որ առ նա. առ ահարօն ոչ գոյր աղաչել, զի [illegible] էր առ նա. առ մերձաւոր մարգարէիցն գունդ ոչ էր դիմել, զի սպանօղ էր նց̃։ Նու նր̃ քաւութի

մեղաց, և արքայութիւն թագաւորութեան վերստին պարգևեալ տուաւ. զի քեզ՝ բարերար, բազմացուսցես կարգեսցես գովեստս անճառս և անլռելիս՝ 'ի յազգս տոհմից և 'ի դարս ժամանակաց. և զդուռն յուսոյն մաից անփակելի պահեսցես՝ 'ի փառս քոյդ բարձրութեան և 'ի փրկութիւն դատապարտելոյս. անմահութեանց պարգևաց տուիչ Քրիստոս, գովեալ յաւիտեանս. ամէն։

---

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ Նորին հրակոյլ, առ նոյն աղերս մաղթանաց բանի, 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ Աստուծոյ։

## ԲԱՆ · ԾԲ

Ա. Օրհնեալ տիրաբար 'ի քում էութեան, անսահմանելի և անփոխադրելի. խնկաւէս բարի, պաշտօն խընկելի, և երջանկութիւն խոստովանելի ամենայն երկրի. երկայն յուսոյ ամենապատրաստ տեսութիւն. գթած ողորմած, որ ոչ պահես ոխս բազմութեան ամաց մեղանաց՝ քթթել մի ական. որ հրաշաւորս զարմանալիս՝ գեր քան զամենայն ազինս նախնեացն՝ անսահման առաւելութեամբ կրկին ընդ մեզ հաճեցար հեղուլ զողորմութիւն վերնահոս վտակս ամենախնկաւորս 'ի շնորհաբաշ-

խութենս նորուն։ Եւ զանտուստ զմուտս լուսաւորանի պատուհանին անձկուն նշուղիցն աղօտականաց, չափով գիտութեցն ըստ սողոմոնի, եւ իւր իսկ նմին, եւ ինձ ընդնորին՝ բացեր ընդարձակեցեր թշուառացելումս զտուագասան անջրպետարան ելիցն ողորմութե՝ ձրի պարգեւացն ճծականաց. զոր ընդ մէջ իմն մասնաւորօք աւետաւոր յիշատակաց եւ 'ի հնումն զայսր տպաւորութի օրինակաւ նկարագրեր, զդարձարձւքն առ իս, եւ ես դառնամ առ ձեզ. եւ յորժամ դարձցիս եւ հառաչեսցես, յայնժամ կեցցես։ Նա զի եւ զաղջամղջին սեւութիւն գունոյն՝ փոխարկել 'ի ձեան պայծառութի. եւ զարանցն արեամբ ներկելոցն՝ յեղանակել 'ի պատահումն գեղմյն, ըստ եսայեայ եւ զաքարիայ. եւ 'ի մէջ բարկութեն՝ դարձեալ զսդ զողորմութի. քանզի անապատանալ քաղաքացն իլի, եւ դարձեալ բնակիլ. եւ ճանապարհացն ամայի լինել 'ի չգոյէ մարդկան, եւ անդրէն հետեւիլ. եւ լքանիլ 'ի սովյն ոգւոյ, եւ դարձեալ զօրանալ ձեռամբ. եւ գնալ այ 'ի տեղի իւր զայրացմամբ, եւ դառնալ ողորմութբ. ըստ ներողութե՝ զելան, եւ 'ի մէջ սաստից սպառնալեացն՝ կրկին պաշտպանութի, եւ 'ի սրտին խռովութե՝ յուղղումն խնամոց

գթութեան ։ Այս մարգարէիցն ձայն խըն-
կելի , որ զօրհնեալդ քո գալստեան զաղա-
տարարդ հրաման կանխաւ ազդէին ։

Է . Եւ զոր չէ՛ բանիւ նիւթեղէն լեզուի
ընդ թիւ արկանել վասն անբաւութեան ,
փոքունք են եւ նուաղունք օրինակք եւ նը-
մանութիւնք , հինք եւ ժամանակաւորք՝ առ
աւետեացդ քո յայտնութիւն , եւ խաչիդ
փրկագործութեան ։ Որ յամենայն վայրի կառու-
ցեր զխորանն վկայութեան արեան քո ուխ-
տի , որք մեծաբարբառ միշտ աղաղակեն՝
քան զդատակնիք մահուն հաբելի՝ զյաղ-
թանակ բարեաց քումդ հանդիսի , կեանս
կրկինս եւ անմահականս՝ շնորհաց , մկրտու-
թեան , յարութեան , նորոգութեան , առ քեզ
ընտանութեան , ընդ հոգւոյդ այ միութեան ,
քաւութեան , ազատութեան , լուսաւորութեան ,
մշտնջենաւոր մաքրութեան , խնկաւէտ երա-
նութեան , ընդ վերնայնոցն կցորդութեան՝
անկապուտ փառաց · 'ի շրթունս մեր ձայ-
նիւ բարձրելոյն հաշտեցուցիչ բանից ա-
ղաչանք ։ Եւ զոր ահաւորն է ասել , կար-
գեմ աստանօր՝ յիշատակ եղեալ մեծիդ-
եարախառեաց՝ Աստուած իսկ լինել ընտրութեամբ
շնորհին , եւ ընդ հաստողին միանալ՝ տրունի
մարմնոյդ ճաշակմամբ , եւ ընդ լուսոյդ կե-
նաց խառնութեամբ · զոր կատարումն երջանիկ

խոստմանն , ըստ պօղոսի բանին , ոչ ունէր օրէնն ։ Այլ դու փրկութի , եկիր հայրենիդ քո հարստութբ , արարեր և կատարեցեր զկուսոյն յերկարաձգութի , որ առ քեզ պահեալ անհամառօտելի՝ քաւիչ ամի ։ Եւ քեզ փառք ընդ հօր քում՝ ՚ի գովեստ բարեբանութեան հոգւոյդ քո սբյ , յաւիտեանս յաւիտենից ․ ամէն ։

---

Վերստին յաւելուած կրկին հեծութե՝ նորին հըռակողի , առ նոյն աղերս մաղթանաց բանի ։ ՚ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ ։

## ԲԱՆ ․ ԾԳ

ա ․ Տէր զօրութեանց՝ բոլորից դիւից Թագաւոր , օրհնաբանեալ ողորմութի ած ամենեցուն ։ Որ յաղթես սահմանի լայնատարած ընդարձակութե ․ ամ անբաւութեց դու ես ոլքանութի ․ մինչ զի կարծրն՝ քեզ հաստանուտ է , և լոյծն՝ քեզ պնդակազմ , և չիք քո իր անհնարաւորական՝ յաղթօղ զօրութիւն ահեղ ․ հուրն՝ ցօղ իմն է զովական , և անձրևն՝ բոց կիզանողական ։ Զքարն բաւես ցուցանել կերպարան աղդման , և զբանականն դնես անխօս և անշունչ արձան ։ Զպարտաւորն ողոքեալ՝

պատուական առնես, և զկարծեցեալն մա-
քուր՝ խրատամբք քննեալ դատիս ։ Զմա-
տուցեալն ՚ի մահ՝ բերկրութ̅բ բարեաց
արձակես, և զամաչեցեալն՝ զուարթ տե-
սութ̅բ օծեալ՝ դարձուցանես ։ Կանգնես
զմատնեալն հողմոց գլորման, և զսասան-
եալն՝ ՚ի վստահութ̅ի վիմիդ հաստատես ։
Զախտացեալն բազմահառաչ՝ երջանիկ
կարգես, և զյառաջատեալն՝ դարձեալ
անդրէն ՚ի յետս նահանջես ։ Նոյն յորժամ
սպառին առ ՚ի մէնջ բարիքն, զառաւել
զարմանալին յայնժամ ներգործես .
քանզի վասն քո գիտես թողուլ զմեղս՝ և
ջնջել զանօրէնութիւնս, և քաւիչ լինել
անիրաւութեց՝ և զմեղս մեր ոչ յիշատա-
կել, ըստ եսայեայ և երեմիայ ։

ժե. Այլ առ շնորհ նորոգ փրկութեանն՝
բազմօք գոհաբանութ̅բ հետեւեալ, ՚ի
յանձնութ̅ի անբաւից՝ լուեալ առ սմին
խոկոյն կարկեցայ . քանզի կրկնեալ զլու-
սոյդ անսպառ բարիսդ, որ ՚ի քէն առ իմ
յամառս թշուառութ̅ի, քոյին աղերսիւ-
առ քեզ մաղթեցից, յարմարեալ դարձ-
եալ ՚ի նիւթս բանիս զառատ ողորմութ̅ե
այսր մատենի, լցից թախծութ̅բք և հե-
ծեծանօք ։ Այլ առեալ խառնեցից ՚ի
տուողիդ հաճութ̅ի, ընդ ցաւոյն՝ զդեղն .

ընդ վհատութեն՝ զխրախոյսն · ընդ յու-
սահատութեն՝ զյիշատակդ անուան հաս-
տողիդ · ընդ տխրութեանս՝ զփոփանսդ ·
ընդ խմուման դառնութե՝ զքաղցրութիւն
կենարարիդ · ընդ պատիժ օրինին՝ զշնոր-
հըն · ընդ պարտս անիծիցն՝ զազատարար
օրհնութիդ · ընդ մարմնոյ մահուն՝ զա̃մւ
նորոգութիւնդ ։

Դ · Հաւատամ հզօրիդ բանի , ուստի
վկայեմ · լուր լռութե սրտիս՝ տէր յ̃ո ,
որ հնչումն է առ քեզ մեծութե ձայնի
երկար գոչելոյ ։ Որ մարմնակից և պատ-
կերակից մեր եղեալ , և քահանայապետա-
պէս անօրինակդ՝ զօրինակին խորտակեալ
զլուծ , ընդ զենման մահու անասնոյն՝
բարեբանեալ մարմնոյդ նուիրմամբ , ան-
մահապէս միշտ մատուցանիս , և աննուա-
զաբար քաւութի շնորհես , ոչ սակաւա-
մեղիցն միայն , այլ և որոց հատեալ է ա-
նկալութի առ ելս կենաց ։ Զի որքան
զօրէ մարմնոյ անգամոց առ մեզս կենդա-
նութիւն , թէ և բիւրուց ամաց ունիցի
յերկարաձգութի , յորժամ ա̃ծդ բոլո-
րեցուն մ̃ սորին կամաւ և յօժարութբ
ըենումն ընկալեալ , մահու համբերես բաշ-
խեալ 'ի քաւութի ։ Զի ոչ եթէ մաք-
րութեդ աղբիւր՝ պարտական գոյ մահու

յօրըստօրէ կատարիլն , այլ կամօք քովք՝ հոգւոյդ գործակցութբ , 'ի հաճունի հօր՝ և 'ի մեր հաշտութի ցանկ մատուցանիս ։ Իսկ եթէ ամենիցդ ա̃ծ անքննին՝ իմոյս վա̃ իմ առ իմ փրկութի , 'ի դէմս իմ , իբր թէ ընդ քոյդ էութե ես իցեմ մարմնով՝ պարունակողիդ կցորդ միացեալ ․ և դու բարերար , յաղագս իմ 'ի յիմս կերպի՝ փոխանակեալ ընդ իմում պարտեաց , և մահ ընկալեալ անպարտդ՝ զմահապարտիս մնասուց պատուհաս , և 'ի յիմ անուն յանցաւորպէս , ոչ թէ կամաւ ընդ քեզ ես կրեցեմ , բաղում մեռեալ՝ և մնաս կենդանի ․ ոչ ուրացողացն ձեւօք , այլ դաւանողացն հաւատովք ա̃ծ-ապէս նուիրեալ և 'ի մասունս անհատս բաշխեալ ։

Է ․ Սէր ոմն ողոքաւոր՝ չաւատալեացն պաշտօնատար ․ մեծ լինձ և անկշռելի սասմին դատէր՝ անյարմարագիր անձին յուսադիր , հաւատամ զփառս և զերջանկութի , քան թէ մարտիրոսութբ իսկ՝ թող թէ ուղղութբ իմս թշուառութե՝ յանցաւոր մարմնս փոխանակ ընդունել ։ Իսկ զանձառութի խորհրդոյս՝ այսու դիտեցի ․ դաւանէր իսկոյն , որ զի և մաքրոցն անձինք տուանց նուիրման այսր յիշատակի՝ չե̃ են իսկապէս կատարեալք իսպառ , եթէ ոչ

ընդ այս հրաշակերտութիւն մեծութեան՝ հոգւով խառնեսցին։ Արդ թէ մեղաւորիս մասին, կրկին մատուցար բաժին ասելով՝ յուսայր, իբրև այն՝ թէ ես ինքն եղեր ճշմարտիւ, գրաւեալ զինս դաժանութի ընդ քում համեղութե, պատարագեալ քաղցրանիւթ զանգուածոյ նըշխարաւդ կենաց լուսոյ։ Այսու ամիւ 'ի վերնատանն նախանուէր բարեշնորհութե՝ անհնարաւոր ախտիցն ձարակ՝ զմարմին և զարիւն իւր բաշխեաց 'ի քաւութի, 'ի վեր կարծեցուցանէր քան զնահատակի վկայեցելոյ արեամբ կատարմամբ · յուսոյս օրինակ յարգաւորութե գրել զիս 'ի փառս, այսմ փրկանօք հաւատալի երևեցուցանէր, քան թէ քաւելոյ և ողորմելոյ և շնորհելոյ, որչափ ածականիդ առ մարդ զօրութի · և տիրական ածախառն մարմնոյն կամաւորական նուիրումն առ անապական սպանդին մատուցումն · և անմահն՝ առ մահկանացուս · լոյսն ահաւոր՝ առ ստուերայինս · յաւիտենականն՝ քան զանցաւորս · բարձրեալն՝ քան զերկրաւորս · անստեղծն՝ քան զեղականս · բարին իսկութե՝ քան զթիւրեալս բնութե · մանաւանդ զի իւր է կամելն, և իւր կենագործելն · օրհնութեն առիթ՝ քան զանիծիցս պատճառ։

Է. Արդ՝ տուր խոցելոյս 'ի սիրտ և յոգի՝ աղաչեմ գթած, զառ 'ի յերկնուստ ընծայեալ զդեղդ կենաց. մատիր քաղցրութեամբ՝ առ ախտացեալս մեղօք. քաւեա՛ 'ի պարտեաց՝ ամենակատար բաւականութ̃ի։ Իսկ առ 'ի յինէն՝ այս է ճշմարիտ և անխաբելի կերպարան բանի, որ զի հաստիչդ ամենից՝ 'ի ս̃րբս բնակես. և ըստ տարաղուսերմանն՝ և հնձելն է իրաւացի, ըստ ճըշմարիտ բանին պօղոսի. և աչացուացն՝ 'ի տապ արևու ոչ է զօրութ̃ի։ Այլ դու բարերար հաստիչ յոչէից՝ յորդես յաւէտ խնկապէս համայն, և զդաւանելն ըզքեզ՝ բաւական առ. կենդանութ̃ի. և ոչ ես ընդ սահմանաւ փակեալ օրինի, այլ յաղթես՝ մանաւանդ թէ խզես զկապ կանոնի, և դու միայն մնաս պայման աւետեաց՝ համօրէն յանցաւորաց տարակուսելոց։ Եւ քեզ ընդ հօր՝ հոգւոյդ սրբոյ փառք և իշխանութ̃ի յաւիտեանս. ամէն։

Վերստին յաւելուած կրկին հեծութե՝ նորին հըսկողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի, 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̃յ։

## ԲԱՆ. ԾԴ

Ա̃. Եւ արդ՝ յա̃մի առ ա̃մ անկայունութ̃ի քո է ողորմութիւն, սկզբնալոյսդ

աչաց տեսանելեաց և սրտի իմաստից՝ յն․
քո՛ է բարերարութի՛, կեանք և անմահութի՛ւ։
Դա՛րձ առնիս գթութե՛, և հանդերձեսցես
դառնալ ինձ առ քեզ կրկին բերկրութե՛․
զի առանց քոց կամաց՝ ոչ ունիմ լինել նո-
րոգ փոփոխեալ․ և եթէ ոչ կամք քո գը-
թացին, ոչ զօրեմ փրկիլ մահու պարտա-
կանս․ և եթէ ոչ կառավարդ յարդարեսցես
պատրաստել ինձ հեշտ ճանապարհի՝ որ
առ քեզ բերէ, վիհ է ինձ խորոց յաջմէ
և յահեկէ։

Ը․ Ահա ոչ պարծիմ՝ ա՛մ իրօք նախատ-
ելոյ․ ոչ պանծամ գովելոյ․ ոչ խոխո-
տանամ լքելոյ․ ոչ մեծաբանեմ պապանձ-
ելոյ․ ոչ ըմբոստանամ ձաղելոյ․ ոչ եր-
ջանկանամ եղկելիս․ ոչ արդարանամ ամ-
բարիշտս։ Ո՛չի ոչ երբէք հարթ ընթանայ
երիվար՝ առանց սանձակալի․ և ոչ նա-
համբառնայ հանդէպ՝ առանց ուղղչի․ և
ոչ արօր կշխու ինչ գործէ՝ առանց մաճա-
կալի․ և ոչ երկուորեակք լծոցն ՚ի ճահ
ճեմեսցին՝ առանց եզողի․ ոչ ամպ վերա-
չուէ՝ առանց հողմոյ․ ոչ աստեղք ցնդին
և կամ գումարին՝ առանց ժամանակին․
ոչ արեգակն փոխաբերեալ ուր շրջանակի՝
առանց տարրական օդոյ․ և ոչ ես նորօք
հանդերձ՝ առանց բարեգործիդ հրամա-

նաց ակնարկութե՟։ Ո՜վ դու միայն ես տուիչ կենաց բանականաց, և խնամիչ կարգաց հոլովման արարածոց, և 'ի քէն է ինձ փրկութի՟, ըստ սաղմոսողին. և դու ձայնես բարբառ խնդալից աւետեաց հնչման՝ յականջս լսելութե՟ ամ՟ հասակի, եկա՛յք 'ի հանգիստ իմ բնաւին աշխատեալք, և ես մաքրեցից զձեզ 'ի պարտեաց։ Իսկ զի՞նչ օգուտ 'ի լուացմանէն, եթէ կրկնակի զազրացայց. և կամ ո՞ր օգուտ 'ի ճաշակմանէն, եթէ գեհենին մատնեցայց։ Եւ կամ զի՞մ որդյաբրահամ պարծեցայց՝ խորթացեալս 'ի գործոց նորին. որդիս գարշութեան հօր ամովրհացւոյ, և մօր քետացւոյ կամ քանանացւոյ, ըստ մարգարէին որ ասէ՝ յանկաւոր ձայնի. ժառանգս մերժելի եթովպացի՝ և ոչ սենեկին սառայի, ըստ տեսանողին առ իս առածի. եղբայրս շամբնի՝ և կամ գոմորայ. համբաւս անլուաց և անաղէլի՝ խակակութ պորտոյն խակութե՟ ոողայ և ոողիբայ, ըստ եզեկիէլի կրկնանախատան կշտամբութե՟։

Գ. Եւ քանզի 'ի ծուփս բազմավտանգս ալէտանջ հողմոյ սաստկապէս զզուեալ՝ ուժգին ըլկանօք խոպան տագնապմամբ 'ի ծովին, փոխեալ ընկեցեալ 'ի վտակն վայրենական ողողիչ. առ որս՝ զմատուննս ձե-

ուացս այսր անդր տարաբերեալ , իբր 'ի հոսանաց բռնութեց գարնանայղյր գետոց , որոտաձգեալ յակամայ ընթացս ողորմագին գլորման՝ ջրակուլ ոգեսպառ պղտորարբութբ՝ դաժանահոտ սկախառն մամռարմատ խառնախուռ՝ մահաբեր երկամբք վանեալ , ըստ որոց յուղխիցն հեղեղիցին՝ հեղձուցեալ ։ Այսու առակաւ և ես եղկելիս՝ խօսին , և ոչ իմանամ · գոչեն , և ոչ ինչ լսեմ · բարբառին , և ոչ զարթնանամ · հնչեն , և ոչ փոխադրիմ · փողեն , և ոչ գումարիմ · վիրաւորիմ , և ոչ ևս զգամ , կուոցն գարշութեան նմանեալ՝ թափուր յազդմանէ բարեաց իմաստից ։ Արդարև չար առաւել յաւէտ իսկապէս քան զօրինակդ՝ ճշմարտութիւնս , ատելի և մեղադրելի , և ատենին քի արժանապէս մատնելի ։

Է · Եւ քանզի անդառնալի ուղղոյն յիշատակ՝ սատեացս պարտեաց՝ զայս կտակ թողի որոց ընթեռնուն , իմոյս բանիւ տառծ կարգաւ հանապազորդութբ , այս կացցէ սահման յանձնառական խոստովանութեան՝ մշանջենաւոր ձայնարկու առաջի քո՝ ամենակալ · զոր գիրդ ընդ մարմնոյս , և բանդ ընդ հոգւոյս , զանսահմանելիդ մի՛շտ թախանձեսցէ , իբր յանեղծական

մաղթողէ ընկալեալ աղերս 'ի քիմս ձայնէ՝ բարեգութ մարդասէր, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

---

Վերստին յաւելուած կրկին հեծութն՝ Նորին հըսկողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի, 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ։

## ԲԱՆ. ԾԵ

ա. Ես վասն զի սլացեալ ոգւոյս թեւօք 'ի թիւս անբաւից ծննդոց մարդկան՝ եդի 'ի կշիռս իմանալեացս մտաց, ո՛չ գտի զոք համեմատ ինձ պարտաւոր. և առ այս զգուշութեան սաղմոսին զբանն 'ի քերգ ինձ առի՝ դառն կշտամբութեան գաւազանաւոր գործակալ. ո՞վ յարիցէ ընդ իս 'ի չարիս՝ հաւասարել յանօրէնութիւնս։ Եւ քանզի այս ըստ ամին մասին՝ կնքեցաւ և ճշմարտեցաւ առ այրս մահու, և ես վկայեմ կրկին հաստատեալ. առ այսր խրատունս գրեմ՝ ինձ միայնոյ զեղծանիլ իսպառ, քան իմոյս բանիւ բաղմաց տարագրիլ. թերևս սովիմք առ այսու արդեօք՝ և ինձ շնորհեսցես, շնորհողիս զպարտիս իմոցն։

բ. Եւ արդ՝ զինչ քեզ աղերս հաճոյական 'ի յայսմ և 'ի սմին, և ծուխ անուշից

ընդունելի խնկոց մատուցից՝ գովեալ Թա
գաւոր երկնաւոր քս̃, եթէ ոչ զառ 'ի
յինէն անիծեալսն՝ օրհնել մաղթեմ.
զկապեալսն արձակել. ազատել զդատա-
պարտեալսն. բարեգործել զնզովեալսն.
պսակել զԹշնամանեալսն. սփոփել զտրտ-
մեցեալսն. դարմանել զխորտակեալսն.
խնամել զսարտուցեալսն. պատսպարել
զնենգեալսն. զվիրաւորեալսն 'ի մարմին՝
յոգի բժշկել։ Եթէ օրհնութիւն բանիւ
առ ոք մատուցայ, լուիցես. իսկ եթէ ա-
նիծիւք, մի՛ հայեսցիս ընդունել գրթած։
Ես տառապեալս ամենաթշուառ՝ 'ի վեր-
ջին սպասաւորութիւն մաղթանաց այսր մա-
տենի, 'ի բովանդակ մտաց շնորհեցի իմոցն՝
փակեալ առ 'ի քէն զանիծիցն դժնդակ
ըղձիցն չարաշուք ձայն. և դժնէից նեն-
գողացն իմոց՝ ընդ բարիսն 'ի բոլոր սրտէ
հաշտութիւն արգահատեցի. վասն որոց և
ծունր պաղատանաց կրկնեցի. ո՞րչափ դու
ինձ ահա յայց ելեալ առաւել ողորմեսցիս
ըստ քոյդ մեծութիւն՝ գովեալ խնամակալ,
կեանքդ՝ մահացուիս. հզօրդ՝ տկարիս.
ամենակարդ՝ վարանելոյս. իմաստութիւնդ-
աղբիւր՝ յիմարիս և Թմբրեցելոյս։ Քանզի
յաւէտ սխալեալ անկայ իբր զողողակ մը-
Թայլին ոչ ընդելական՝ 'ի հաղբս մահու-

անզգայապէս . չիմացայ զկորուստն . չգի-
տացի զորոգայթն . չտեսի զմբռնօղ որսոյն
ծածուկ մերձենայս . չկարծեցի զխաբումն
կերպարանաց կեղծաւոր վարմին . չնկա-
տեցի զգայթակղութին շուրջանակի . չշօ-
շափեցի զպատանդիչ զցանցարկ կարթին .
ժամանեցին ինձ չարիք , և ես ոչ կարացի
ճանաչել , ըստ սաղմոսողին ։

Դ . Քանզի և ոչ իմաստակի ումեմն ար-
տաքնոյ բարուք թուեցայ , չար ասել
զմեզ՝ առ չիմանալոյն պատճառի , և ես
վկայեմ իմով բանիւ . քանզի իբր զանըդ-
գայ պաճարս անսանոյ մեռանիմք՝ և ոչ
զարհուրիմք . կորնչիմք՝ և ոչ հիանամք .
թաղեցեալ լինիմք՝ և ոչ խոնարհիմք . տա-
րագրիմք՝ և ոչ տագնապիմք . եղծանիմք՝ և
ոչ զղջանամք . մաշիմք՝ և ոչ մտաւեմք .
պակասիմք՝ և ոչ պատրաստիմք . գնամք՝ և
ոչ զգուշանամք . գերիմք՝ և ոչ ևս զգամք ։
Իսկ հանգիստ ասել երջանկին Յոբայ ըղ-
վախճան մարդոյ , և ես խոստովանիմ զայն
ընդ նմին , եթէ ոչ ունէի զբեռն աշխա-
տութեն մահացու գործոց ըստանձնեալ ։
Մանաւանդ զի՝ որոգայթն գաղտնի , և
հնարագիւն աներևակի . տարբր ժամանակիս
յանէից , անցեալն անյայտ , և ապառնին
կարծողական , ես անհամբեր , և բնութի

թերահաւատ • ոտք անհաստատք , և միտք ցնդեալք • կիրք հարկաւորք , և բարք անժուժկալք • մարմին մեղսամանկարդ , և յօժարութիւն երկրասէր • դիմամարտութի անկակլից , և խառնութի ներհակական • բնակութի կաւեղէն , և անձրևք ուժգնակիք • կարկիք անթուելիք , և պատահարք ամենագրաւք • միտք չարախնամք , և տենչմունք բարկատեացք • կեանք տուօրեայք , և զբաղք սակաւաւորք • խաբմունք յիմարութե , և խաղալիք տղայականք • աշխատութիք ընդունայնք , և վայելմունք երազականք • համբաւք ոչնչից , և պահեստք հողմոյ • նմանութիք ստուերաց , և կերպարանք ծխծաղելիք : Քանզի իբրև եկն եհաս պատուիրանն , ըստ պօղոսեան բանին , անպատրաստ գտեալ զիս ինքեան , մեղքն կենդանացան յանդիմանեալ յարդարութեցն , և ես մահացայ կենացն , և
կենդանացայ կորստեանն :

Է • Դողացան օտարք չարին գումարք՝ զըստացուածս սրտիս իմաստից , ըստ գրոյն կանխաբանութե • որով եկն եհաս իսկոյն աստանօր իմաստութե ինձ նուաղանալ , ըստ առակողին , և առաւելուլ ոչ բարւոյ ցանկութի : Ոչ յաւեցի զակն ոգւոյս 'ի գլուխն իմ կենաց քս , որով ընդ ուղիղն

հետևեցայց ։ Քանզի կամելով ուժգինս ընթանալ՝ ընկլայ սաստկապէս · յանշաւին ձգտիլ՝ իմոյն ոչ հասի · ՚ի մեծագոյնն ամբառնալ՝ սաստուստ գլորեցայ · յերկնային ուղղոյն՝ անդնդոց մատնեցայ · ՚ի զգուշանալն առաւել՝ յաւէտ վնասեցայ · յանարատն պահիլ՝ մանր խորտակեցայ · կարծելով ընդ ահեակն մրցիլ՝ յաջն գլթեցի · ՚ի զերկրորդն խուզել՝ զնախնին կորուսի · ՚ի խնդիր սակաւուն՝ ՚ի կարևորացն զրկեցայ · ՚ի յուխտին պահել՝ դաշինն դրժեցի · առ սովորութեանն կորիլ՝ կորուսիչս գտի · ՚ի փոքունցն փախուցեալ՝ մեծամեծացն մատնեցայ · զոր ես ինքն ինձէն ըստեղծեալ՝ չարաչար դատախազ անձին կարգեցի ։ Յորոց փրկել զմատնեալ գերիս դու միայն զօրեսցես, կենաց մատուցեալ՝ զընծայեալս մահու՝ զհոգիս · զի դու միայն՝ տէր յս, ճանաչիս բարերար, անսահման փառօք՝ ընդ հօր և հոգւոյն սբյ օրհնեալ յաւիտեանս յաւիտենից ·

ամէն ։

Վերստին յաւելուած կրկին հեծութե՟ նորին հսկողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի․ ՚ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա՟յ։

## ԲԱՆ · ԾԶ

ա · Իսկ ղաւխթան մահու գիպուածս՝ դժոխարմատ ծառոյս դառնութեան պտուղք, ընտանիք թշնամիք, հարազատք հակառակք, և որդիք դաւաճանողք, ստորագրեցելովք մասամբքդ նշանակեցից՝ գրեալ յանուանէ, որ են այսոքիկ։

բ · Սիրտս նանրախորհուրդ, բերանս չարախօս, ակնս յայրատատես, ականջս վրիպալուր, ձեռնս մահաձիգ, երիկամունքս անփորձ, ոտնս մոլորաշաւիղ, ընթացքս աներկիւղ, հետք խոտորնակ, շունչք ծըխախառն, գնացք խաւարային, գոյութի՟ լերդի վիմական, խորհուրդ ծորեալ, կամք անկայուն, չար անփոփոխ, բարեմասնութի՟ սասանեալ, անձն տարագիր, աւանդ վաճառեալ։ Գազան վիրաւոր․ Թռչուն նետահար․ փախստական քարայծ․ ըմբռնեցեալ վտասապարտ․ աւազակ ծովակուր։ Ոխնաւոր նենգաւոր․ մարտիկ անպատրաստ․ սպառազէն անժուժկալ․ մշակ հեղգացեալ։ Աղօթական անխրախոյս․ բեմական ստորնաքարշ․ քահանայ անկնդրուկ․ օրինական աննուէր։ Դպիր

կշտամբեալ· խմաստակ խելագար· ճարտասան անճոռնի։ Կերպ անպատկառ· դէմք անամօթ· երեսք լպրշեալ· գոյն անհամբոյր· տիպ տմարդի· դէղ ծանակեալ։ Խորտիկ խանգարեալ· ճաշակ գարշեցեալ· այգի գաղձնաւոր· որթ որդնահար· պարտէզ փշաբեր· հասկ ուտճահալ· մեղր ՚ի մկանց ճարակեալ· անպատսպար անկեալ։ Անապարծ յուսահատ· անհամոզելի նզով· անհաշտական բաժանեալ· ունայնաբան շաղակրատ· պաճարամիտ գոռոզ· անասնօրէն ապիրատ· դժոխային ագահ· աներասան յանդուգն։ Ա՛ոլեգնութի անձն· ձեռնաձգութիւն սպանօղ· տատասկացան երկրագործ· երջանկութիւն եղկելի· մեծութիւն վատթարեալ· վայելչութի անշքեալ· կարողութի տկարացեալ· բարձրութիւն խոնարհեալ· փառաւորութիւն ընդոտնեալ· պատուիրանաղանցութի յարակայ· սխալանք ինքնակամ։ Ա՛տակարար կամակոր· խորհրդակից նենգաւոր· բարեկամ հատուածեալ· հաղարապետ գողամիտ· մերձաւոր կծծի· բաշխօղ ժլատ· վերատեսուչ կարկամ· ոգի անախտակիր· իղձք անսէր· բարք ատեցօղ· աղէք անգթականք· գնացք անխոհեմ· աներևոյթք վնասեալք· ծածուկք անիծեալք· դիպուածք

թշնամանեալք։ Սաձաւական վառնից · շահարար շուայտեալ · պաշտօնեայ որբեցող · գանձուց ոստիկան երկմիտ · պատգամաւոր բանսարկու · դռնապան քնէած։ Աղքատ հպարտ · մեծատուն ժխտող։ Իշխանապետ անօրէն · պահապան մատնիչ · բնակակից չարախօս · սուրհանդակ անժաման · թղթաբեր պարտաւոր · առաքեալ խռովարար · միջնորդ անիմաստ։ Աբեղայ արտալած · Թագաւոր թարմատար · կայսր ոգեկործան · իշխան տիրադաւ · զօրաւոր զրկօղ · դատաւոր ակնառու · ռամիկ ինքնագործ։ Նախատողն ծաղր · սիրելոյ աշխար · բանագրի դարով · յանդիմանչի դատախազութի։ Բանդի և ՚ի վեհագունիցդ կոչմանց՝ էր ուրեք որդեօք՝ զի էր · իսկ ՚ի վատթարականացդ մասանց՝ եկն երբեմն եհաս՝ զի եղէ։ Արդ՝ այսքան վնասակարութեք խարդախութեց յաճախագունից, յորոց յոմանց խաբեցայ իբրև զյիմար, և յոմանց տիրեցայ իբրև զտկար՝ կամաւ մատնեալ զիս ինքն մահու։

Է · Արդ՝ զորս ՚ի վերագրելոցդ մասանց՝ քեզ ատելեաց, և իմ կորուսչաց՝ ՚ի սպաս պաշտաման քեզ ընծայեցից · զորպիսի սպականութի պարագրեալս՝ ամենայնդ-

քո մեծութեան հանդէպ կացուցից · և
կամ ո՞րքանեօք երկայնմտութեամբք համբե-
րեցես այսքանեաց պարտուց · ո՞րքան նե-
րես · ո՞րպէս լուեցես · զիա՞րդ խնայ-
ցես · ի՞բր ոչ մատնեցես հարուածոց դա-
նից զարժանիս սատակման մահու ։ Լ.որդ՝
պասցիկ աննշոյլ մթութեանց՝ հոգւոց խա-
ւարի՝ ողորմութեամբ լուսոյ քո պատահեսցե-
ցես՝ բժշկել քաւել և կենագործել՝ զօ-
րեղութեամբ անվթարելի · և քեզ փառք յա-
ւիտեանս · ամէն ։

---

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ Նորին հրա-
կողի, առ Նոյն աղերս մաղթանաց բանի ։ 'Ի խո-
րոց սրտից խօսք՝ ընդ Աստուծոյ ։

### ԲԱՆ · ԾԷ

Ա · Քրիստոս Աստուած անուն ահաւոր ·
մեծութեան տեսակ · անքննին
բարձրութեան պատկեր · անսահման զօ-
րութիւն · կերպարան փրկութեան լուսոյ ·
պաշտպան կենաց · դուռն արքայութեան՝
վերնում հանգստեանն · ճանապարհ հան-
դարտութեան · ապաւինութիւն նորոգ և
անախորժական երանութեան · ամենակալ
ինքնիշխանութիւն՝ բոլոր էականութեան ·
օրհնութեան կոչումն · աւետեաց ձայն ·

բերկրութ՟ն բարբառ․ անմահութ՟ն դեղ․
որդի անճառ ա՟յ միոյ։ Որ ինձ անհնա-
րին է, քեզ դիւրին է․ որ ինձ անհաս
է, քեզ սահմանեալ է․ որ ինձ անանցն է,
քեզ հպաւոր է․ որ եղկելոյս ինձ ծած-
կեցեալն է, քում երանութ՟ն մերձաւոր
է․ որ ինձ անկարելին է, քեզ կատարեալ
է․ որ ինձ անկշռելին է, քում անճա-
ռութ՟ն չափեալ է․ որ ինձ յուսահատու-
թ՟նն է, քեզ սփոփանայ է․ որ ինձ անբը-
ժշկականն է, քեզ անվտանգելի է․ որ ինձ
հեծութ՟նն է, քեզ խնդութ՟ն է․ որ ինձ
ծանունք են, քեզ թեթեւագոյնք են․ որ
ինձ եղծեալն է, քում զօրեղութեան
գրեցեալ է․ որ ինձ կորուսեալն է, քեզ
ըմբռնեալ է․ որ ինձ անճառն է, քեզ
համարեալ է․ որ ինձ մռայլն է, քեզ ճա-
ռագայթ է․ որ ինձ անթիւն է, օրհնեալդ
քում ձեռին բովանդակեալ է․ որ ինձ
սոսկալին է, քեզ հեշտալի է․ որ ինձ
փախչելին է, քեզ վանելի է․ որ ինձ ան-
մատոյցն է, քեզ դիւրահերքելի է․ որ ինձ
մահաբերն է, քում էականութ՟ն զօրու-
թեան՝ ընդ ոչ գոյն համարեալ է։

Է՟․ Ահա դու ողորմած ա՟ծ բոլորից տէր
յ՟ս ք՟ս, և այսմ զօրես առ ելիցն հնար՝
եթէ գթասցիս․ վասն անուան փառաց

մեծութե՟ հօր քո օրհնելոյ, վասն կամաց գթութե՟ ոգւոյդ քո ս՟բյ, տե՛ս 'ի տաժանաւորս կրից յանդիմանական յայտնութիւն, և 'ի խորոց սրտի ինքնամատոյց դատախազութիւն. Նայեա՛ 'ի բնութե՟ս ամենապատաղ խակութիւն, և պարգևեա՛ բժշկութիւն վիրացս, և հնարաւորութե՟ կորստեանս. զերծումն բազմամասնեայ մահուս, և շաւիղ կենաց ապականելոյս. Նորոգութե՟ եղծմանս, և մուտք յուսոյ ամբարշտելոյս: Եթէ ես զաննմանն ինձ կամս ցուցի, ո՛րչափ առաւել դու զընաւորականդ քո զընտանի բարերարութիւնդ. եթէ 'ի փշոց պտուղ ընծայեցաւ քաղցրութեան, ո՛րչափ առաւել 'ի ծառոյդ կենաց՝ ճաշակ անմահութեան. եթէ ես խմոց ատելեաց ողորմութե՟ մաղթեցի, դու քոյոյս զխա՛րդ ո՛չ կրկին մատուսցես հզօր՝ յաննուազ առատութենէ:

Է. Որդ՝ տե՛ս 'ի քոյդ մեծութի՟՝ բարձրեալ, նայեցեալ 'ի յիմ փոքրկութիւն. ընկա՛լ զակաւ խոստովանութի՟ս անհամար մեղաց, որ զընաւն համայն տեսանես. և ո՟մ զվիճին գթել՝ ո՛չ գրեցեր, և զաւազոյս փոքու սասանել՝ մի՛ համարեսցիս. և իբրև զղաւթին՝ ընդ մեղայն ասել՝ իսկոյն անցուցեր զպատիժ պարտուցն, և առ իմ

ձայնիս հեծութի՝ զնոյն գործեսցես եր-կայնմտութի · որ տաս մղցուն առատապէս անաչառութբ՝ ո՛չ յաղթօղ բարի բաղձ-մամբ · և ո՛չ նախատես զյետնեալ ստրուկս՝ որպէս ողորմած և ամենաստեղծ · ստացի՛ր զերամին, և մի՛ կորուսաներ զըռուժեալս արեամբ քո, և զըռուծեալս ստեամբ քո՝ գըթած ։ Զի՛ քո է փրկութի, և ՚ի քէն է քաւութի, և քեզ վայելէ փառք յամի

յաւիտեանս · ամէն ։

---

*Վերստին յաւելուած կրկին հեծութե՝ նորին հրա-կողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։ ՚ի խո-րոց սրտից խօսք՝ ընդ այ ։*

## ԲԱՆ · ՁԲ

Ա · Օրհնեալ տէր յա ընդ հօր, ՚ի կամս հաճութե հոգւոյդ քո որյ · և օրհնեալք եմ առ ՚ի յօրհնելոյդ օրհնե-ցան · օրհնեալ միայն՝ որդի օրհնելոյ · չիք իմ թագաւոր իշխեցօղ ընչոյս բաց ՚ի քէն՝ քո ։ Այս է օրհնութիւն յակոբայ՝ ասէ եսայի, յորժամ բարձից զձեռս նր ։

Բ · Որդ ողորմեա՛ց ինձ՝ տէր բարեգութ՝ ըստ նախնւոյդ քո սովորութե, և օրհնեա՛ զանօթս քո բանական, ըստ ձայնին դաւ-թի՝ և ըստ մովսէսի · զի բանիւդ քո

փրկութե՟ ժամանեալ, հասից քաւութե՟ օրհնեալ առ 'ի քէն։ Այսպէս ինձ հրաշագործեա՛ ողորմած արքայ երկնաւոր, որ՟ անկելոցն 'ի բազմաժամանակեայ մահճացն խշտիս, ժողովելոցն 'ի սրահին բեթհեզդայ։ Յորոց մի էր և կրկին թերահաւատն՝ երից տասանց և ութի միոյ ամօք ախտացեալ յօդիցն լուծմամբ, որում ոչ անխայեցեր զբժշկութե՟ն ձեռնտուութի՟, իբր գիտելով զանբոյժ չարութիւնն՝ որ նիւթեացն քեզ յաւուր մատնութե՟ դառն գիշերին տիրամարտութե՟՝ երախտաւորիդ, մեծիդ և բարերարիդ։ Որ թէպէտ և կանխաւ իմն զգուշացուցեր, թէ մի՛ մեղանչեր՝ զի մի՛ կրկնեսցին կրկին քեզ չարիք, ոչ ինչ վերջացաւ լինել ձեռներէց սկզբնաւոր անհամբուրելի՝ դատողացն զքեզ 'ի խաչին։ Եւ դու այնպիսւոյ անյարիր ջատուկ մահու ծնդեցեալ չարաշուք առն ողորմեցար, անճա՛ռ բարութի՟. սխրալի՛ մարդասիրութի՟. սարսափելի՛ ներողութի՟. սոսկալի՛ երկայնմտութի՟. անբաւելի՛ քաղցրութի՟. փառաւորելի՛ հեզութի՟։ Որ միշտ յաղթիս 'ի գթութե՟, և ոչ թըշնամանիս. պարտիս յողորմութե՟, և ոչ պարտաւիս. բռնադատիս 'ի մարդասիրութե՟, և ոչ անգոսնիս. հարկիս 'ի բարութե՟, և

ոչ հայհոյիս · ստիպիս 'ի սիրոյ, և ոչ բամբասիս ։ Պաղատիս դարձին իմ առ քեզ, և ոչ ձանձրանաս · արտադես զկնի ապերասանիս, և ոչ լքանիս · ձայնես չլսողիս, և ոչ սրտմտիս · փութաս մեղկելոյս, և ոչ խափանիս ։ Առ չարս՝ ես բարի · առ ամենապարտս՝ ես ներող · առ մեղաւորս՝ ես քաւիչ · առ խաւարեալս՝ ես լոյս · առ մահացեալս՝ ես կեանք ։

Գ · Այս են գիրք ա̃մ հոգեշունչ օգտակարութե̃ն, որ յաճախս ծնանին երկնաւոր պտուղս՝ անճառս և զարմանալիս ։ Արա՛ և ինձ թշուառացելումս՝ օրհնեալ ամենապարգև, արի՛ առ զմահիճս խշտացդ մեղաց 'ի վայր կործանմանդ, և հետևեալ ժամանեա՛ յանդորր հանգիստ անաշխատ կենաց ։ Խղեսցե՛ս ամենակարող սուսերաւ բանիդ հրամանի՝ զերկղապնդեալ մահազգեստ պարփակութի՝ դժոխայնեայ կապանացս · և լցի ինձ զհանգոյցս խեղդողական ոգեպահանջ սատակութե̃ս, առաքելով զարժանաւորս մահու՝ յազատութիւնն վերին անանց բերկրութե̃ն, կենսաբեր և ա̃ծային քո բանիւդ ։ Մի՛ տակաւ տակաւ ազդեսցես, և մի՛ օր 'ի յօր յերկարաձգեսցես, զի մի՛ ստուար ծանրութի̃ բեռանցս մեղաց՝ տիրեսցէ թիկանցս ազդերաց, և

կործանեալ զիս կորացուցէ՝ հայել ՚ի գժոխս • և ուժգնակի գոռոզ բռնութբ՝ անպարապ հոգևորական զինուն արարեալ մահու ծառայեցուցէ ։ Այլ օգնեա ինձ՝ բարի վշտակից՝ հեծութե կարեացս մահու երկանց , առեալ յինէն զփայտ սատակմանն , որ երբեմն յուսոյ պահակին • որով կառուցես զվայելչականն յաղթանակի արի զօրութեն , պնդապէս հաստատով յուսոյն կարծրութեան՝ ընդ քեզ բևեռել անսայթաքելի ։ Եւ քեզ ընդ հօր՝ հոգւովդ սրբով՝ փառք և իշխանութիւն յաւիտեանս • ամէն ։

---

Վերստին յաւելուած կրկին հեծութե՝ Նորին հրակողի , առ նոյն աղերս մաղթանաց բանի ։ ՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ ։

## ԲԱՆ · ԾԹ

ա • Հաւատամ և վկայեմ մտաց գիտութեամբ՝ ՚ի քէն ազդեցեալ ոգւոյս իմաստիւ ուշիւս տեսման • զի ըղձալի են քեզ՝ բարերար , աղաչանք մեղաւորաց՝ քան զխնդրուածս արդարոց ։ Ոչ ի մինն զպարտութի անձինն յայտնեալ՝ շնորհիդ քո սպասէ • առ որ ծանուցեալ զընութենս չափ , և մեծ կշտամբիչ աստէն

համբարձեալ՝ ինքնագոր մարտակից նմին իսկ ինքեան, և գտան գօրովինչ և ծածկատես դատախազ։ Իսկ միւսն՝ յարդիւնս բարեացն իւրոց նայելով, յանձին հարեալ ձեռն վստահութե, մոռանայ զհաս֊ման բնութեն, և պարգևաց՝ քան ողորմութե դիտեալ ակն ունի։ Ա՜ որոց առմինն՝ անթիւ են ստեղծուածք ճառից, որ զողորմութեցդ քո՝ փողով բարբառոյ ազդէ. իսկ առ միւսն՝ լռեալ են քոյդ՝ անքննին ահաւոր և ամենախնամ. ամաչեմ ասել, թէ և երկրաւորիս գործոց պատմութիւն գքոյդ յառաջեալ։ Արդ՝ ո՛րտէր, և մի՛ զօրասցի քան զքոյդ՝ աջ հողեղինի. մի՛ կշռեսցին ողորմութիւնք քո՝ ընդ ջանից մարդկան։

Է. Ու արդ՝ առողջքն անդամօք՝ անկարօտք են բժշկութե. և տեսանողականքն աչօք՝ չունին պէտս առաջնորդի. և փարթամքն ընչիւք՝ ոչ դեգերին առ դուրս լիոցն. և ամի յղփացեալքն՝ ոչ սպասեն փշրանաց սեղանոյ հացի. և ո՛րքն վարուք՝ ապէնիազ են ողորմութե։ Ու արդ՝ ինձ դթասցիս ողորմել՝ բարձրեալ երկնաւոր հզօր, ամենատխուր վարանեցելոյս։ «Քանզի թէ էի իբրև զյօբ, ասէի զանձն իմ իբրև զնա արդար և անարատ, թէ

իբրեւ զմոլեկս , ասէի վստահութիւն զնո-
րայն , ծանիցէ տէր զայնոսիկ՝ որ իւրն
են․ եթէ իբրեւ զդաւիթ , ասէի՝ արարի
զիրաւունս և զարդարութիւն․ և դարձեալ՝
զմեծն քան զբնութիւն մարմնոյ, զմեղս թէ
տեսանէի 'ի սրտի իմում՝ մի՛ լուիցէ ինձ
տէր։ Թէ էի իբրեւ զեղիա , ասէի զանձն
իմ այր այ․ թէ էի իբրեւ զերեմիա, զքաջ-
ճշմարտութիւն յանձն օրինակէի․ թէ էի
իբրեւ զեզեկիա , պարծէի զբարւոքն և
զիրաւացին՝ գնացի առաջի քո արդարու-
թեամբ․ թէ և իբրեւ զպօղոս , ասէի զիս
բնակարան՝ աղդարան՝ և ընդունարան այ
բանին։ Բայց ես անօրէնս 'ի մէջ գիտունն
օրինացն, ոչ միայն չունիմ զանձն իմ քեզ
ընծայել յարգանօք բանից իբրեւ զնոսա, և
զբնաւին չարս՝ ոչ զբարիսն զայնոսիկ ա-
ռաջի քո յիշատակել, այլ և ոչ զամենուստ
գծից զբարեհռչակեալ անուանդ հզօր՝ ամ-
բարշտեալս լեզուով գովել։ Այլ դու առ
ամ հնարս զօրաւոր՝ մատո ինձ ոգի փր-
կութեան․ աջ պաշտպանութեան․ ձեռն օգնե-
լութեան․ հրաման բարութեան․ լոյս ողորմու-
թեան․ բան նորոգութեան․ պատճառ քա-
ւութեան․ գաւազան կենաց օգնութեան։
Ով դու ես լոյս ապաւինութեան՝ տէր
յիսուս քրիստոս, օրհնեալ ընդ հօր հոգ-

ւովդ սրբով յաւիտեանս յաւիտենից · ամէն ։

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հըրակոզի, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։ 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̄յ ։*

ԲԱՆ · Կ

ա̄ · Եւ արդ՝ ո՞չ զի ոչ վայելէ օրհնաբանութիւն 'ի բերան մեղաւորի՝ 'ի ճշմարիտն առակէ կանխաւ իսկ ուսայ, զխա̃րդ յաւելից կրկնել զնոյն գովութիւն աղաչաւորս բազմապատկաւ, որ համապաղ ընդունիմ անէծս 'ի սաղմոսին բարեբանութեան ։ Ո՛չ իբր երգեցից ինձ վտանգս, և արձանացուցից նախատինս · և 'ի մերկութեան գրկի՝ փուշս ընդ շուշանաց ժողովեցից ։ Ո՛չ խա̃րդ ընդ դաւթի համարձակեցայց ասել, թէ զատամունս մեղաւորաց փշրեսցես ։ Ո՛չ խա̃րդ դարձեալ, թէ մի՛ անօրէնք բնակեսցեն առաջի աչաց քոց ։ Ո՛չ խա̃րդ, թէ դա՛տ արա ինձ տէր ըստ արդարութեան քո, ըստ անբծութեան իմոյ որ յիս ։ Ո՛չ խա̃րդ, թէ կատարեսցին չարիք 'ի վերայ մեղաւորաց ։ Ո՛չ խա̃րդ, թէ խորտակեսցին բազուկք մեղաւորի և չարի, և զայլն որ զկնի ։ Ո՛չ խա̃րդ, թէ տեղասցէ 'ի վ̃ա մեղաւորաց որոգայթ հուր և

ծծումբ։ Օ՜ խարդ, թէ սատակէ տ՜ր ըզ-
շրթունս նենգաւորս՝ և զլեզուս մեծա-
բանս։ Օ՜ խարդ, թէ փորձեցէր զսիրտ
իմ, և ոչ գտեր անիրաւութի՜։ Օ՜ խարդ
զյաջորդն սմին, թէ ես պահեցի զճանա-
պարհս խիստս։ Օ՜ խարդ զևսն, թէ ես
արդարութեամբ երևեցայց երեսաց քոց։
Օ՜ խարդ, թէ և ես եղէց անբիծ ընդ նմա։
Օ՜ խարդ զմիւսն, թէ հատուսցէ ինձ տ՜ր
ըստ արդարութ՜ իմում, և ըստ սրբութ՜
ձեռաց իմոց։ Օ՜ խարդ անձամբ ինձէն
զսուտն իմ ծանակեցից՝ ասել ընդ ն՜յն,
թէ լուացայց սրբութեամբ զձեռս իմ։
Օ՜ խարդ ՚ի մէջ նանրութ՜ զամբարշտացն
աթոռս բամբասեցից։ Օ՜ խարդ զերջան-
կին պարծանս՝ թշուառացելումս կերպա-
ւորեցից, թէ զոտս արա ինձ տէր՝ զի ես
յանբծութեան իմում գնացի։ Օ՜ խարդ
օտարս ՚ի բարեաց՝ գխողլիդ գաղտնեաց
արդահատեցից, թէ մի՛ համարիր ընդ ամ-
բարիշտս զանձն իմ։ Օ՜ խարդ ես ինքն
գոլով՝ զայլս անիծեցից, թէ տուր նոցա
տէր զգործս նոցա. և ՚ի կարգ բանիցն
համարձակեցայց։

Է. Քանզի թէ զյետինս բանիցն՝ ա-
ռաջնովքն սատանօր եդից, կրկին ծան-
րանան ինձ ցաւք, և յաճախեսցեն զաւ-

նութիւնք ։ Բայց ՚ի շեղջեցելոցն արտա-
ուայց՝ գոյն մի չափեալ, բաւականացայց
հանապազորդեան յանդիմանութե՛ սաղմո-
սարանին ընտանի ձայնիւն, որ զպարտա-
ւորեալս միշտ կշտամբէ. առ որս՝ և Աստ-
ուած քառասներորդի իններորդի հատ-
ուածի բանի յանդիմանողի՝ զիս գարշե-
ցուցեալ, հանապազ խայտառակէ. լսցեալ
զբերանս ՚ի փառաբանութենէ, եղկելի
զանձն իմ ցուցանէ. ծածային ձայնիւն
գտանախազեալ, յանկնկալութենէ կենաց
լքանէ, միանգամայն և վիրգս մահու ինձ՝
իբր ՚ի պատանչէ առաքէ ։ Քանզի թէ չար
է անէծս առնուլ յօտարէ, ապա անձամբ
զանձն անիծանել՝ կրկին չարաչար. իսկ
եթէ չառնուլ նախատինս ՚ի մերձաւորաց՝
օրէնք են, ապա ՚ի տեառնէն հայել զայսո-
սիկ, կրից արեան տաժանմունք՝ վիշտք
աղէտից, և խէթք մահուց ։ Բայց թէ առ
խոնարհութե՛ անձին իւրում մատնեսցի,
ջնեալ և կշտամբեալ անիծիւք ՚ի լեզուէ
իւրմէ, ՚ի խոստովանեալ և յամենիշխան
շրթանց բերանոյ վերնոյն՝ օրհնեսցի. զի
ծնգրատեալ թարգմանեաց զդարձն իւր առ
նա՝ զհետս կենաց ոչ լքանելով. սահմա-
նաւն սիրոյ՝ զպարտեացն արմատ կրճատ-
եաց, ոչ տիրեալ ՚ի խարդաւանաց չարա-

բանողաց․ ոչխար հօտին քի̃ գտաւ բը-
ժշկեալ՝ դիմելով 'ի յայն բուժիչ աղեացն
արկածից։ Բայց և անբանական բա-
րոյից է՝ սուտն կենդանեաց 'ի մէջ դա-
լարաց ծաղկածին վայրից՝ կենաձիր բա-
նից՝ թմբրութեամբ մնաց 'ի յարօտս մա-
հու ճարակել։

Է․ Դու արդ՝ քանզի իմ է տուակս վերջին
կշտամբողական, և ոչ իս ակնարկէ զդիպ-
ուածոյն չար պատահմունս․ որ ինձէն
անձին նիւթեցի միշտ զեղմունս կիղանո-
ղականս հրոյ տոչորման, հասեալ 'ի յերկ-
նուստ զգուխ գագաթանս խմստանարանի
բազմակնի։ Քանզի զիա՞րդ 'ի յարդիւնս
ինձ օդոից սաղմոսն եկեսցէ, յորժամ
անպտուղ 'ի բազմերգութէն լինիցիմ, ոչ
նուագել հոգւով, ըստ թելադրելոյն պօ-
ղոսի։ Զիա՞րդ ընդ մարգարէին և զաէ-
րունին խառնեցից՝ մեծս մեղաւորաց՝
նկունս պխտանեաց՝ ասել ընդ նմին, թէ
'ի բա՛ց կացէք յինէն ամ̃քեան՝ որ գործէք
զանօրէնութիւն։ Զիա՞րդ ոչ ունելով 'ի
բազմացն պատուիրանաց կատարեալ՝ շնոր-
հին և օրինին՝ բարբառեցայց զերջանկին,
որ նախ ինքն արար՝ զոր մեզ կանոնեաց,
թէ քանզի ծառայս քո պահեցի զայս․ և
որ զհետն գան ասացեալքն։ Զիա՞րդ

թափուրս 'ի լրութէ իմաստից կենաց՝ ընդ-
երկիւղածս տն օրհնեցից ։ Ո՛վ խաչդ ընդ-
մեծին մաղթանաց զիմս յօդեցից , թէ զմին
խնդրեցի 'ի տնէ՝ զտեսիլ վայելչութեան
նորա , և զհրամանատրութի տաճարի նր ։
Ո՛վ խաչդ 'ի հրաժարելին ինձ ձեռնամխե-
ցից , յորժամ լսեմ , թէ ուղղոց վայելէ
օրհնութիւն ։ Ո՛վ խաչդ շրթամբք իմովք
զանձն իմ անիծից՝ տեսլով զկնի յոլովից
աւուրն , թէ երեսք տն 'ի վր չարագոր-
ծաց՝ սատակել զյիշատակս նոցա յերկրէ ։
զխաչդ զմիւսն դարձեալ , թէ չարք վաղ-
վաղակի սատակեսցին ։ Ո՛վ խաչդ զկերպա-
րանացն իմ նմանութի , թէ բազուկք ամ-
բարշտաց խորտակեսցին ։ Ո՛վ խաչդ սա-
տակման ինձ պաղատեցայց , թէ ահա մեղա-
ւորք կորիցեն ։ Ո՛վ խաչդ զբազմայածեան
լեզուս 'ի յօրհնեալն բան մխեցից , թէ
տասցի պահել զճանապահս իմ , զի մի՛ մե-
ղայց լեզուաւ իմով ։ Ո՛վ խաչդ փշովք մե-
ղաց հեղձեալս՝ զանարատին պարծեցայց ,
թէ այլ զիս յանբծութեան իմում ըն-
կալար ։ Ո՛վ խաչդ ես մեղաւոր և կր-
կին պատժաւոր՝ զհանդունակիցսն դը-
բովեցից ապրել 'ի նոցունց , թէ 'ի մար-
դոյ մեղաւորէ նենգաւորէ փրկեա՛ զիս
ա՛ստուած ։

է. Ո՜ խորհուրդ իբր ոչ կռապաշտեալ ան-
պատկառապէս պերճացայց ունայն պան-
ծանօք ասել ընդ դաւթի, միթէ մոռաց-
եալ իցէ մեր զանուն այ, կամ ձգեալ
զձեռս ՚ի մաղթանս օտար աստուածոց.
քանզի որ ՚ի մեզս գարշութե խոնարհեա-
ցի, առաջի կայ նորին կառուցեալ առեալ
՚ի պաշտօն յաւնականացն ախտարծարծիցն
պոռնկապատիր պատկերացն կերպարան՝
աստարտայ և քամոսայ և մեղքոմայ որ-
ուարձանի, և թարահատայ թարմատարի.
ընդ զազրատեացն կանացեաց՝ իշանդամիցն
պատկառանք՝ անվերարկու ծանակուեք:
Ի՞բր ոչ պատկառեցից սովիմբ ասել ընդ-
նահատակին, որ զայս դիմադրաւութիւն
առ բարին ունէր միշտ, թէ փոքր մեռա-
նիմք զօրհանապազ. և որ ՚ի կարգին է սո-
րին՝ սաղմոս: Ի՞բր յիմարս յարս և վատ-
թարս՝ ասել ժպրհիմ, թէ բերան իմ պատա-
մեսցէ զիմաստութի, և սիրտս զհանճար.
Ի՞բր մարդելոյզ կերպարանաւոր՝ զմարդա-
հաճոյիցն ոսկերս ցրուել մաղթեցից: Ի՞բր
զկրկին երկրորդեալն մեծանունն բա-
րութիւնս, թէ հաճոյ եղէց առաջի տն
յերկրին կենդանեաց: Ո՜ խորհուրդ ունօղս
անբաւուց մեղաց՝ զարդարոյն առեալ կար-
դացից, թէ ոչ մեղք իմ և ոչ յանցանք.

տուանց մեղաց ընթացայ, և ուղիղ եղէ։ Ո՜ խո՜րդ զիս ինքն մատնեցից կորստեան՝ յասելն զայս բան, թէ մի՛ ողորմիր գործողացն զանօրէնութի։ Ո՜ խո՜րդ, թէ ո՜չ հալի մոմ առաջի հրոյ, այնպէս և մեղաւորք յերեսաց այ։ Ո՜ խո՜րդ գրգեալս ապականացու փափկութեամբ՝ սահմանեցից զանձնմանն ինձ բան, թէ խոնարհեցուցի պահօք զանձն իմ. և զազգակիցս նորին ընդ նոյն, թէ ես 'ի նեղել նց՝ քուրձ ըզգենուի. և իբրև զսգաւոր և զտրտում՝ խոնա՛րհ առնէի։ Որպէս հանդարտեցից զնմանեացն իմ պատիժ միշտ յիշատակել, թէ սակայն մրուր բարկութեանն այ ոչ սպառեսցի, և արբցեն 'ի նմանէ ամ մեղաւորք երկրի. իբրև զեան առ սմին, թէ զամ եղջիւրս մեղաւորաց փշրեսցես։ Ո՜ խո՜րդ զապերախտութին յակոբայ 'ի ձառտուեալ հենգնեցից, որ ընդ ստուերին ըզճշմարտութին ընկալեալ, մոռացայ ընդնոսին՝ նոցին թերութի զերախտիսն քո ածայնովքն արուեստիւք խաչին փրկանօք, քան նոքա զզօրավարութին մովսէսի՝ ցպյն սքանչելեօք, որ զօրինակն նկարագրէր տէրունական տնտեսութեանն։ Ո՜ խո՜րդ զյարուցելոցն 'ի վի՛՝ դիւաց զաղէտս ցուցից, իբր նոքա զտաճարացեղից

խուժադուժ ազգացն՝ ասելով, թէ արկին զդիւականս բարեացն որ 'ի մեզ՝ կուր վ-նասակարացն թռչնոց, այս է՝ այսոցն օդայնոց. որպէս զանկեալ զսերմն բանին 'ի ճանապարհին, և զմխաբանեալ զկամս ընդ չարին՝ սուրբ անուանեցից. իբրև զնմանակիցն առ 'ի նոյն շաւիղ չարին պատերազմի՝ գուպար գաղտնամարտ մտացս օգտելոց, զոր ես զօրացուցի՝ գործակցեալ հընարից բանսարկուին: Նա ոչ ունիմ ազերսել, թէ մի՛ լուեր և մի՛ դադարեր՝ տ՛ծ. և խորհեցան 'ի վերայ ս̃րց քոց և ասացին, զոր 'ի կարգէ սաղմոսին է աղօթել: Քանզի յոյժ պատեհագոյն է առնուլ զայսոսիկ 'ի վերայ բռնութեան մալէկան դիւաց՝ միշտ ճակատելոց՝ առ ներկայիս խռովութիւն, և ընդ նոսին՝ նոցին մշակաց:

Է. Յորոց դու տէ՛ր քո՛ որդի բարձրեալ մեծիդ հյ՝ պահեսցե՛ս և ամրացուցե՛ս, երկնային զօրութ շրջափակութ՝ յա՛մ ընթացից խաբողին հողմոց՝ խաչիւդ լուսոյ զմեզ պաշտպանեալ. որ զի՝ թէ և գտցին յիս անօրէնութիք բազմօրինակք, այլ ոչ հայհոյութիք: Որ ոչ հանդեար 'ի կորուստ նմանեացն իմոց ամբարշտելոց, այլ ամենագորով թախանձմամբ ընդ եղծ-

ման ջրողողն զաղբադործաց՝ կրկին վշտա-
ցար, տաղտկալի զմահու նոցա դիպուածն
քեզ գրեցեր, ասելով զզարմանալիսն լսո-
ղաց բան, ածեալ զմտաւ ոչ ես յաւելից
անիծանել զերկիր վ՟ա գործոց մարդկան: Եւ մխիթարիս մեծ ինձ պատարեալ ընդ-
կեանս անմաքրից՝ և պարտաւորաց սա-
տակման. որ երբեմն առակաւ դդմենւոյն՝
զանխայելն ՚ի կործանելիսն ցուցեր՝ ողոր-
մած. և առ այլ ումեմն՝ նեղեցար սաս-
տիկ վտանգեալ, ընդ յամրանալ անձրևին
առ ուրացողացն դարման: Նմանելիս
ցուցեր բարութեան տեսակս յիշատակաց
տօնելիս՝ ՚ի վերջին աւուրս. քև ՚ի ձեռն
առաքելոցն քոց՝ ողջոյնս հասարակաց ան-
համբուրիցն հեռաւորաց քաղցրաճաշակս
հրամայեցեր: Ահա և յիս ցօղեա կեն-
դանի զհայրենի գթութ՟եցդ զուէր, զի և
ես փրկեցայց քաւեալ ամենառատ քո այ-
ցելութ՟եդ: Եւ քեզ ընդ հոր՝ հոգւով-
սրբով փառք՝ յաւիտեանս. ամէն:

*Վերստին յաւելուած կրկին հեծութե՛ Նորին հրա-կողի, առ Նոյն աղերս մաղթանաց բանի։ ’Ի խո-րոց սրտից խօսք՝ ընդ Այ։*

## ԲԱՆ · ԿԱ

ա· Եւ ընդէ՞ր է ինձ բնաւն որ ’ի սաղմոսին այնպիսեաց բանիցն՝ ’ի կիր արկանել· որ ’ի Նախատինս՝ միանգամայն և ’ի Նշաւակ ինձ յարակային, հանապազ երգել իմովս տաւղօք։ Քանզի՝ զիա՞րդ արդեօք զշուք երջանկին ինձ դատապարտելոյս նմանեցուցից՝ ասելով ընդ նմին, թէ ոչ մերձեցաւ առ իս թիւրեալն սրտիւ։ Զիա՞րդ զկարգադրութիս տանցն՝ ’ի յայսմանէ զկնի թուելոցն զարհուրեցուցչաց՝ ընդակից կայից կանոնաց օրինաւորին՝ զինուորին և թագաւորին, և մարմնական հրամանատուին, որք և երկնայնոցն են համբուրելիք՝ ասելով, ոչ յուսահատ եղեց ’ի կենաց պատմօղս աւետեացս և Նորայս աշակերտ՝ անման յամենուստ բարեկարգութեանց։ Զիա՞րդ ըստ իրաւախոհ արդարոյն, ընդդէմ մեղաւորացն՝ մահու զինեցայց առակաւ առաւօտին ’ի սկիզբն արթնութեանն միշտ պատրաստական լինելոյ, որ և ոչ զանդամս մարմնոյս գանեալ խրատեցի· զիա՞րդ մանակցեալ մեծին արութե՝ սատակեցից ’ի

քաղաքի տեառն զանօրինեալսն, որ և ոչ զբուսեալ բիծս հոգւոյս իմոյ մեռուցի: Օ՜ իա՞րդ սառեցից գրողին չև յայտնելոցն, թէ զմոխիր որպ̃ հաց կերայ. զիա՜րդ, որ ոչ միացուցի յիմոցս կրից կարթիւ մի պղտոր՝ ընդ յստակ արտօսր աչերց երգողին՝ ասեմ ընդ նմին, թէ զըմպելիս իմ արտասուօք խառնեցի. և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի: Օ՜ որս ինձ գրեցից մեղօք մահացեալս, յորժամ սիրողն այ̃ ’ի բոլոր սրտէ՝ զյանցմունս նախնեացն իւր վարկանիցի, թէ մեղաք մեք ընդ հարս մեր՝ անօրինեցաք և յանցեաք. և որ ’ի վախճանն յանդի սաղմոսս՝ իրաւամբք առիս, քան առ իսրայէլ: Որո՞վք յարգեցայց դասիլ ընդ բարիսն, յորժամ մարդկային հնարից այս դեղ պատուեցաւ՝ որ ոչ յիս գտաւ, ’ի գարշութե̃ կերակրոց ’ի մահ սովեցեալք՝ և յաճախութե̃ ճգանց ’ի հոգւոց նուաղեալք, ըստ խորութե̃ ինքնօրէն կրօնից՝ հրէից և հեթանոսաց: Օ՜ զիա՜րդ՝ արդարութի̃ իմ մնայ յաւիտեանս, զոր ոչ
բնաւ իսկ կատարեցի:

Է. Ուղի մի տաղտկացայց յամեալ ’ի բանիս, ’ի համառօտել զայն փութացայց: Օ՜ ի՜նչ ունիմ ասել ’ի տեղի բանիցն՝ զոր ա̃ծաշունչ ձայնն նուագեաց օրհներգուն

դաւթի , թէ բոլորով սրտիւ իմով խնդ-րեցի զքեզ . զխո́րդ ընդ սմին զմեծն քան զայս , թէ յա̃մ ճանապարհէ չարեաց ար-գելի զոտս իմ . Իբր ընդ եղեալս և զայն մատուցից , թէ 'ի սրտի իմում թագուցի զբանս քո՝ որպ̃ զի մի՛ մեղայց քեզ ։ Ո՛րպ̃ զունայնութե̃ցս իբր զլրութե̃ց ճաւեցից ընդ պարս մաքրոց , թէ 'ի պատուիրանաց քոց խոկացեալ , ատեցի զա̃մ ճանապարհս չարաց ։ Օ՜ խո́րդ զհեզգոյն ճշմարտութիւն իմում սուտութե̃ս մշտնջենական երդմնա-հարութ̃ի կարդեցից՝ ուխտեալ ընդ հա-ւատարմին , երդուայ զոր հաստատեցի պահել զդատաստանս արդարութե̃ քո ։ Օ՜ խո́րդ ինձ հրեշտակ մահագոյժ ան-հրաժեշտ վճռի՝ զբանին պատգամ կրկնե-ցից , թէ հեռի է 'ի մեղաւորաց փրկութ̃ի ։ Օ՜ խո́րդ չարս խոկացէս՝ զբարեացն գը-րեցից՝ որք 'ի տ̃նէ առնուն զնոյն հատու-ցումն՝ զայս տուն յեղյեղել , թէ բարի առնէ տէր ուղղոց սրտից ։ Օ՜ խո́րդ ըզ-համառօտն փոխատրութ̃ի անաչառութե̃՝ վրիպեցելյս ինձ սահմանեցից , թէ ըզ-թիւրեալսն յափշտակութ̃՝ տանի ընդ այ-նոսիկ , որ գործեն զանօրէնութ̃ի ։ Օ՜ խո́րդ զծածկեալսն պանծանս՝ ամաչեցելյս ինձ պատուատեցից՝ աւել զնորայն , թէ

տէ՛ր ո՛չ բարձրացաւ սիրտ իմ, և ո՛չ զբօսան աչք իմ․ և որ յետ սորին պատմին ասացեալքն։ Ո՛վ խորհուրդ զանձառն քան զմարմին բան՝ ՚ի ցոյց առից քաջալերութե վստահելոց, ես գանձ գեհենին՝ ասել ընդ օծեալն ոյ հոգւոյն, թէ յառաջագոյն տեսեր, զի ո՛չ գոյ նենգութի ՚ի լեզուի իմում, ՚ի սկզբնաւորն նախաձայնեալ սաղմոսի՝ մինչև ՚ի լրումն աւարտման բանիս։ Ո՛վ խորհուրդ դատակցութե դժնէից մարդոց համարեան՝ այրս մահու և որդիս սատակման՝ բարբառիմ զբարեշնորհին, ո՛չ ահա զատելիս քո՝ տէ՛ր ատեցի․ և զմնացուածն սորին կարգի։ Ո՛վ խորհուրդ մեծաւն փառահութե տօնելի վեհին՝ ա՛նձն իմ և դու-աշխար աշխարհի՝ զանդատ քո ոգի յառաջ ընծայեալ՝ մեծացուցանես ը պսակելոյն, թէ փորձեա՛ զիս՝ տէ՛ր և տե՛ս, թէ իցէ՛ն անօրէնութիք ՚ի ձեռս իմ․ և զյաւելուածն որ զհետ սորին։ Ո՛վ խորհուրդ ես գոլով և յոյլոց աղօթեմ ապրել՝ յուսացելոյն յած-ձայնակցեալ, պահեա՛ զիս՝ տէ՛ր ՚ի ձեռաց մեղաւորի, և ՚ի մարդոյ չարէ։ Ո՛վ խորհուրդ համբարձայց ընդ փառաւորեալն մաղթել ոյ, թէ դու ես յոյս և բաժին իմ յերկրին կենդանեաց։ Ո՛վ խորհուրդ իբր հանդիսացեալ ընդ ձգնաւորին՝ զմրցանակն յաղթա-

նակի թագաւորին մատուցանելով՝ զա-
ռաւելեալն քան զօրինակ աղերս աղօթից ,
թէ ինձ սպասեսցեն արդարք քո մինչև
հատուսցես ինձ :

Դ • Բարեբանեալ է և այս իմաստ հո-
գւոր՝ և տէրունի գործոյն նմանի , որ
զփորձիչն պատկառեցոյց , յորժամ զա՟մ
արհամարհիցէ՝ և զսկզբնապատճառն եղե-
լոց միայն ընտրիցէ՝ ասելով , թէ երանի
ժողովրդեան , որոյ տ՟ր ա՟ծ է ն՟չ : Մեծ է
և այս բարձրութիւն շնորհի՝ և զգուշական
համարձակութիւն լսելոյ երանութ՟ն , թէ
ս՟րք քո օրհնեսցեն զքեզ : Իղձալի է և
այս ընտանութիւն մերձաւորական հոգւոր
հաղորդութեան՝ յա՟ծ յուսալ և ՚ի նոյն ար-
ձանանալ՝ բանիւ սաղմոսին բերկրեալ , թէ
զկամս երկիւղածաց իւրոց առնէ տէր • և
զկարգ բանին կատարէ , մինչև զողբալին
և զզուարճալին աղդեսցէ , թէ պահէ տ՟ր
զա՟մենեան որ սիրեն զնա • և զա՟մ մեղաւորս
սատակէ տ՟ր • ՚Ի գլուխս լման գրոց նուա-
գարանաց սաղմոսի՝ իբր թէ զօրինակն
իսկ եցոյց վերջին հատուցման՝ արդարոց
և մեղաւորաց : Զուգակցորդք են մի-
մեանց և զկնի երգեցեալքս • զի թէ ըն-
դունի զհեզս տ՟ր՝ և խոնարհ առնէ զամ-
բարտաւանս մինչև յերկիր , ապա ինձ

Ո՜րքան եղկութիւնք կան առաջի · իսկ եթէ
հաճի Տէր ընդ ժողովուրդ իւր, և բարձր
առնէ զհեզս ՚ի փրկութիւն, ապա հերքեալս
՚ի բարեմասնութեանց ես՝ ո՞ւր հաստատեցայց ·
իսկ եթէ օրհնելի է Աստուած ՚ի սուրբս նորա տիրա-
պէս, ապա օտարս ես ՚ի մաքրութեանց՝ ընդ
որս դասեցայց · իսկ եթէ ՚ի կանխերգիցն
մերձ այսր եդից յիշատակարան իմն կըշ-
տամբութիւն, թէ սիրեցէք զՏէր ամենայն սուրբք նորա,
զի ստուգութիւն խնդրէ Տէր՝ և կրկին հա-
տուցանէ ամբարտաւանիցն, ապա յորում
գնդի ես գտայց՝ գերեալս ՚ի գազանեաց
գտողին չարեաց ։ Քանզի զո՛րօրինակ տա-
տանին տագնապաւ տերևք տնկոց եղևին
ծառոց՝ շարժեալք ՚ի հողմոց ուժգին բա-
խելոց՝ հոսեալք ՚ի խոնարհ, այնպէս ջա-
նացայ ջարդել զընթացից իմոց վերար-
ձակութեան քաջաբեր ուղէշս՝ զյարմար-
եալս ձեռամբ անեղ մշակին ։ Որ հաս-
տատեցեր արմատացուցեալ վերստին դար
ձեալ՝ նոր պտղաբերութեամբ անապակա-
նաւ, յանդաստան կենաց խնամոց քոց
կամացդ՝ ամենապարգև թագաւոր Քրիստոս,
օրհնեալ յաւիտեանս · ամէն ։

Վերստին յաւելուած կրկին հեծութե՛ն՝ նորին հըսկողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի․ 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ̃․

## ԲԱՆ · ԿԲ

ա̃․ Այլ արդ՝ ընդէ՞ր ոչ 'ի վերադրեցէ՞ն սաղմոս նախաձայնական՝ և յայլ մարգարէից մասն ինչ յօդեցից։ Քանզի զինչ վայելուչ իցէ կերակրոյն, եթէ անզգայեալ ցաւովք ուտիցեմ․ և կամ զո՞ր շահ սաղմոսն ունիցի, եթէ ոչ 'ի միտ առնուցում։ Քանզի նզովեմ զիս ինքն 'ի նոսին, և ոչ խնանամ․ լուացեալ լինիմ, և ոչ պայծառանամ․ արևու ծագեալ, և ոչ լուսաւորիմ․ մեղր ճաշակեմ, և ոչ քաղցրանամ․ ռետանիւ ըմանիմ, և ոչ բժշկիմ․ միշտ կանխեմ 'ի նոյն, և դատարկ երևիմ․ հանապազ ձայնիմ, և ոչ երբէք խրատիմ․ ողոքիմ դարձեալ, և ոչ զգաստանամ։

բ̃․ Արդարև՝ մեղք և անօրէնութիւնք իմ յիս, և ես մաշիմ 'ի նոսին, ըստ մարգարէին՝ որ 'ի դիմաց պարտաւորացն՝ բանի․ և տ̃րունական առակին հին ակոցն և նոր գինւոյն։ Ա ո̃ զի թէ սատակին անօրէնք և մեղաւորք 'ի միասին, ըստ եսայեայ ձայնին, ապա և ինձ դժնէիս նոյն բաժին հանդերձեալ պահի։ Քանզի ասեմ ըղսաղմոսն, թէ հատուցանէ այնոցիկ՝ որ

առաւել առնեն զանբարտաւանութիւն · և կցորդեմ սմին զընթերցուածն, թէ օր տն 'ի վր հպարտից և ամբարտաւանից · ասեմ, թէ օտար եղեն մեղաւորք 'ի մօրէ, և որ ինչ կարգ սորին ցուցանէ · յարեմ առ սմին, թէ կործանեսցին անօրէնք երկրի, և ամբարիշտն բարձի՛ յերկրէ, և անիրաւք մերժեսցին 'ի նմանէ ։ Ո՛ղք ինձ կարդացէք առ ձայնն, թէ զօ՛րօրինակ վառի եղէգն 'ի կայծականց հրոյ, այնպէս այրեսցին մեղաւորք 'ի բորբոքեալ բոցոյն · լացէ՛ք առ սաղմոսն, թէ արկցէս 'ի վր նոցա կայծակունս հրոյ · աշխա՛րս պատմեցէք 'ի բանս ածեան վճռին՝ մարգարէիւն ազդեցեալ, թէ ո՛չ կամիցիք լսել ինձ, սո՛ւր կերիցէ զձեզ · կոծեցարո՛ւք առ սաղմոսն, թէ մա՛հ հովուեսցէ զնս · աղէ արտասուս՝ ողորմ հառաչմամբ ընդ հեծութիւնս իմ յամարեցէ՛ք, յորժամ բարձրեալն ընդ իսրայէլն և ինձ ասասցէ բանիւ սաղմոսին, թէ ժողովուրդ իմ ո՛չ լուաւ ձայնի իմում · աւա՛ղ կարդացէք թշուառացելոյս, յորժամ այլ մարգարէ զնոյն դիցէ, վա՛յ նոցա՝ զի վազեցին զինև ։ Բարբա՛ռ փողեցէք 'ի սիրտ մղձկեալ նո՛ր աղաղակի, յորժամ տեսանօղն աստուծով ամաչեցուցեալ զիս կշտամբեսցէ՝ ընդ ապարասան տանն

յակոբայ, տեսէ՛ք արհամարհոտք՝ զարմա-ցարո՛ւք և եղծարո՛ւք։

Դ. ԵՒ դարձուսցե՛ս և ամփոփեսցե՛ս զբարձրացեալ զսուր բարկութեան ահաւորիդ սպառնալեաց՝ 'ի սաստուցելոյս յերկնաց մեծիդ. և խնամովք անչափ բարեբաշխութեան առ իս ժամանեալ, օծումն կենաց պարգևատրեսցե՛ս քո աղաչողիս։ Եւ քեզ փառք՝ յերկինս 'ի բարձունս, և 'ի մահացուաց յերկիր 'ի խոնարհ, 'ի սահմանս բոլոր ազանց, և յ̃ամ յաւիտեանս. ամէն։

---

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ Նորին հրակողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի. 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̃յ։

## ԲԱՆ. ԿԳ.

Ա. Բարերար և բազմագութ, մարդասէ՛ր և երկայնամիտ՝ միայն Թագաւոր, ընդ Հօր քում պատուեալ և օրհնաբանեալ ա̃ր ա̃մի, որդի ա̃յ կենդանւոյ։ Անպատճառդ միշտ խնում կորստեան. որ ամենևին անփորձ ես 'ի չարեաց. որ ո՛չ կամիս զմահ մեղաւորի. որ փրկութիւն ես 'ի քոց կամաց ընծայեցեալ. որ դարձուցանես զմոլորիկ մեղաց՝ 'ի յօդ քաւութեան. որ զհուր բարկութեան՝ յանձրև փոխարկես։

Որ զյետնեալ զկինն 'ի բարեաց՝ կրկնակի գտիւ նահանջեր՝ երկեակ բնութի 'ի նոյն արձանի, ոչ խառնապէս ընդ անպարտան, և ոչ համայն ընդ պատժաւորսն։ Որ զլուծութի ծովուն սահմանաց՝ իբր զկարկառս քարանց կառուցեալ յեզանակեցեր։ Որ զկարծրանիւթ վէմն անապատին՝ 'ի վիժակս վտակաց հոսեալ բղխեցեր։ Որ ըղյորդանանու ջրոյն սրաշարժ վայրէկուն՝ հրաշաւոր անդրադարձութ՝ 'ի յետնորդս հեթանոսաց լուացումն աւազանին 'ի թիկունս առաքեցեր։ Որ զպատուաստեալ պարիսպն երիքովի, յօրինակ կործանման բռնութեն սատանայի՝ իբր զթեթեւութի յարդի ցնդեցեր։ Որ զհաստատուն ջուր նորին 'ի յառակ այլայլութե առ 'ի բարին փոխարկութե՝ քանանացւոցն վրկութե՝ խորհրդական աղիւն համեմեալ անուշեցեր։ Որ զմեռոյին դառնութի, իբր զմահաց անհաւանութի, կենացն փայտիւ 'ի քեղ յարմարեալ՝ պիտանի արարեր։ Որ զաւեալն 'ի գետոյն՝ 'ի գծագրութի անսահմանդ քո հրամանի անորակելի գունակութեան՝ 'ի նոր երանգ բոսորային՝ մածեր արիւն 'ի ցամաքի։ Որ զանկենդան ցուպ գաւազանին, 'ի կերպարանութի՝ առ 'ի զքեղմերոյս նկարագրել, այլ և յօտարոտնիցն

ընտրութիւն՝ 'ի տիպն տպաթյն կերպի-
վիշապի՝ նմանեալ ցուցեր։ Որ զերջանիկ
ձեռն աջոյն մովսիսի , 'ի ցոյցս տեսութե՟
ապագայից հրաշից մարդեղութեանդ քո՝
բարձրեալ , և քե՛ ախտաւոր մարմնոյս մա-
քուր լինելոյ անփոփոխ փոխատրութե՟՝
կրկին գուշակեցեր։ Որ յայսքանեացս չար
ջադրութ՟ի , բարեխնամապէս արուեստի-
սիրոյ զանակնկալն գիւտ մեղաւորաց կո-
րստականաց , նշանակեցեր՝ օրհնեալ ամե-
նազդութ։

Է․ Որ բուսուցանես յերկրէ դալարի
զմեռեալն՝ յանշնչականէն․ որ զանշարժն՝
իբր զընթացող կառավարես․ որ յանարդ-
որդանդ է՝ կոչես քեզ պատկերակից․ որ
սաս պատմանեկաց՝ ազոլիս ըմբոշխնելիս․
որ 'յայտս մարքուրս՝ հերս ընծայես․ որ
զապալարթ սեւութե՟ վարսից 'ի ձեան կեր-
պարան զարմանադործես․ ցուցեալ՝ թէ
առ ա՟մ՝ սահման հեռաւորական , յաղթող
ես հզօր․ որ փոփոխես զշրթունս բնա-
ւորականս , բստ բանին յոբայ , 'ի կամս
հաւատարմաց։ Որ սասանես զերկիր , և
զսիւնս նորին 'ի հիմանց , նշանակեալ
հաստատուածին գոյի՝ թէ դու միայն մնաս
անկործնելի․ որ հոլովես զտարերս՝ իբրև
զանցաւորս , և դարձեալ 'ի նոյն կոչես՝

իբրեւ զկայծակունս · յայտ արարեալ՝ թէ և
առ մեղաց բազմութ՟ի՝ դիւրապէս ունել
կամ թողուլ՝ դշնապէս զօրաւոր իցես ։
Որ զարուսեկին անզգայ էութիւն՝ իբր
երասանաւ իմն դաստիարակես · երևեցուց-
եալ այնր իրի կերպիւ՝ թէ զբնութ՟ես
չար դիմեցումն՝ յորժամ և կամիս՝ հան-
դարտ առնիցես ։ Որ զանբարբառ բոլո-
րակ լուսնին՝ կարգես ունայնս և պատա-
րունս · լուսաւորել զպատճառն առ աւե-
տիս տեսողաց՝ թէ 'ի նուազութ՟է բարեաց
զպարտաւորս մարմին՝ դու ածես 'ի լրու՟ի
առաջնաստեղծ հարստութ՟են ։ Որ զպատ-
կերս անխօս աստեղաց՝ իբր զդասակս
դշզն հօտից՝ տրոհես և ժողովես · յոյս իմն
կենաց առ այս խորհրդաբերեալ՝ քաղց-
րահայեաց տեսութ՟ի · թէ և անապաշաւո-
րաց լեզուաց՝ կարողապէս բաւես ողորմել ։
Որ 'ի մէջ մահու և կենաց՝ շաւիղ փառա-
հութեան ուղղես 'ի ծովու · վկայութիւն
եդեալ հաւատոյ , թէ և յանկասկածա-
ւորն վայրի՝ քեւ պաշտպանիմք անգայթագ-
ղելի · որ իբր զջուր կաթսայից 'ի հրոյ ե-
ռացեալ , որպէս զմեղաց մրրիկ պղտորեալ՝
բանիւ կամաց քոց խափուցանես ։ Որ
հայիս յերկիր և տատանես զնա , զի ան-
բանիւն՝ զմտաւորս զգաստացուցանես · որ

Իբր զակատ մի անձուկ նաւի՝ 'ի վ̅ր̅ շար-
ժութեան ալեաց՝ զանբաւ թանձրութիւն
գետնոյս դղրդես, որով ծանուցեալ լինիս
ամենից հաստատածոյ՝ թէ իցես աներկ-
բայելի, որ 'ի բան քո զօրեղ՝ հիմնացեալ
ունիս զա̅մ̅: Որ սերմանես զարտաշնչաց-
եալ մարմինս յերկրի, և զնոյն անկորուստ
պահեալ՝ կրկին կենդանածնես. որ ապա-
կանացուս աւանդեալ՝ անեղծս ընտանաս.
որ ընդ մահացու նիւթոյս՝ զնշխարդ կե-
նաց խառնես, որ հրամանաւ ակնարկուե̃
'ի խուն վայրկենի կազմեցեր՝ պատրաստ
կացուցեր զանզարդութ̃ի ամենից եղանա-
կաց: Քո՛ է զօրութ̃ի և կարողութ̃ի, որ
շրջանակես զժամանակս ամաց հոլովման
աւուրց՝ յայլ նմանութիւն բարեպատեհ
տեսողութ̃ե: Որ կարդաս զանմռունչսն՝
իբրև զկենդանիս. որ ազդես միայն, և
նոքա ընթանան. որ միայն հենուս ան-
կանես անճառ արուեստիւ հնարագի-
տութեան՝ մէգ և տաւօտ: Որ յետ նա-
խակարգ յօրինուածոյն առաջնաստեղծ
լինելութեանն, արարեր զփառաւորեալն
մեծամեծս հրաշակերտից հանդիսից,
ըստ գրոյն երջանկութեան կանխահիացն
զարմացման, այլ իմն գոյացութիւն տօ-
նելի տեսակի՝ անեղծ աշխարհագործուե̃

եւս քան զսոյն՝ 'ի մարդանալդ քո, որոց ոչ գոյ թիւ։

Է · Որ ահա զխստան մեր՝ քեզ գրեցեր · որ զարդարութին քո՝ մեզ շնորհեցեր · որ ընդ քեզ կրեցեր զհաշտութեն մերում փրկանակ · որ ոչ երբէք լքանիս յողորմութե · դարձո զամբարշտեալս՝ 'ի պաշտօն բարի երկիւղի · զթմբրեալս՝ 'ի զգաստութիւն արթնութե սրտի · զանմաքուրս՝ 'ի սրբութիւն պայծառութե կերպարանի · զբազմաբիծս՝ յանբծութի հանդարտական նր պատկերի · զբեկեալս՝ յողջութի, որ 'ի դիպմանց ոչ խորտակի · զլացեալս՝ 'ի խնդութիւն զուարթութե անտխրելի · զյուսահատեալս՝ 'ի սէր միաւորիչ անքակտելի · զամաչեցեալս՝ 'ի վստահութիւն հաստատութե անշարժելի · զխաւարեալս՝ 'ի լոյս երանութեան անմեկնելի · զմահուդերեալս՝ 'ի կեանս, որ ընդ եղծմամբ ոչ անկանի։ Զի փառաւորեսցի անուն քո՝ յիսուս, խոստովանեալ յամենայնի, ընդ հօր և ընդ հոգւոյդ սրբոյ՝ 'ի բարձունս երկնի և 'ի ստորիս երկրի՝ և 'ի բնակիչս նոցա, յաւիտեանս յաւիտենից ·

ամէն։

վերստին յաւելուած կրկին հեծութե՛՝ նորին հըս-կողի, առ նոյն ազերս մաղթանաց բանի. 'ի խո-րոց սրտից խօսք՝ ընդ ա̄յ.

## ԲԱՆ · ԿԴ

ա̄ · Եւ արդ առ ա̄մ բան՝ յա̄մի ուղիղ ես՝ ա̄ծ · խրատամիք դատիս · ար-դարութե̄ կշռես · ճշմարտութե̄ չափես · օրհնութե̄ հետեւիս · բարուոք ընթանաս · ստուգութի սիրես · յստակութի կամիս · լուսաւորութիւն համբուրես · փորձիւ յանդիմանես · երկայնմտութեամբ քննես ։ Ո՛չ ունիս նենգութի՝ եւ ոչ գոռոզութի, այլ ամենեւին հեզութի, հանդարտութի եւ ողորմութիւն ։

բ̄ · Արդարացար վերին խնամութի ան-այլայլական հօրդ հանճարոյ՝ կրկին վերա-եալ անզեղջ գովեստիւ յորդեգրեցելոցն շնորհօք, ըստ բանին սրբուն՝ որ աւետա-րանաւն կենաց 'ի քէն ընկալաք · որ ոչ 'ի կոծելն ողբացի, եւ ոչ 'ի փողելն կաքաւեցի ։ Ասացեր անօրինին՝ թէ մի անօրինիր, եւ ես 'ի նոյն չարիս պնդեցայ · մեղաւորին՝ թէ մի ամբառնար եղջիւր 'ի բարձունս, եւ ես զընդդէմն քեզ գործեցի · եւ ոչ զգացի երբէք զառածելս, թէ 'ի ձեռին քո են եղջիւրք արքայութե՝ հպարտից ամբար-ձելոց, խոնարհեցուցանել եւ բարձրացու-

ցանել, ըստ ամբակումայ, դաւթի և զա-
քարիայ: Օրհնութիւն ինձ կամեցար՝
ողորմած, և ես անիծեալս՝ մեծ տարագ-
րութբ խոտորեցայ յարժանին ինձ մասն·
սիրեցի բարկութի՝ և ոչ բարութի· շօ-
շափեցի ըստ դրոյն՝ զխաւար՝ և ոչ զլոյս·
կենդանի ձայնիդ քո գթած՝ ապաուամն
պատասխանեցի: Զորդն՝ անմահ ստա-
ցեր բանիւ եսայեայ, և զհուրն՝ անշէջ, և
զնշաւակութիւնն՝ անվախճան, և զտեղին՝
յաւիտենից, և զօրինակ նմին՝ սոսկալի, և
ես ոչ խմացայ, ըստ սաղմոսողին, և ոչ մտա-
ւեցի· այլ 'ի մուայլ մտաւորական կուրութե-
նացի: Յուցեր մարգարէիւն, թէ զօրհ-
նութիւն ստացի՝ որ զօրէնս դնէ, և ես
համառօտել զնոյն փութացայ: Երան
հոգևոր վիմի գրեալ մատամբ քո՝ տէր յս
քս, զդաւիթ իւրովքն բանիւք կանգնե-
ցեր, առելոյն ինքեան ընտրութբն առ-
ստոյն, թէ պահեցի զօրէնս քո յամ ժամ,
յաւիտեան· անդրադարձութբ բանին
մէջնորդեալ զերկին համատաութիւն, թէ
և յաւիտեանս յաւիտենից· ընդ որս՝ և
զարին նմանիս պարծանաց՝ առ ինն խրա-
խոյս, և ոչ զկծեցայ· Ճեպեցայ 'ի տունս
բահաղու, և ոչ իմ· 'ի յերկուս հետս
երկմտութեան՝ կրկին կաղացի կասեալ 'ի

բարեաց , ըստ երգիծանելոյն հեղինու ։
Ո՛ւնիմ զմովսէս իւրովքն օրինակօք՝ եկ-
եալ ՚ի մեռելոց , և զդասս մարգարէիցն՝
գրեալ ՚ի յոգի , և զմատեանս առաքելոցն՝
ընդ մտացս մտոն յեռեալ , և զա՛րդ հասա-
րակաց՝ կտակաւն աւետեաց՝ յարուցեալ
՚ի թաղմանէ անթիւ ննջեցելովք . և անհա-
ւատագոյն քան զհնդեսին եղբայրակցութե
այնր մեծատան , որ է առակ իմն յարմա-
րական , նմանեալ զդայականացն մասանց՝
անողորմիցն յղփացելոց , մնացի իբրև զսալ
դարբնաց անոստ՝ յամառեալ քարացեալ
սրտիւ , որպէս օրինակն է բելհարայ , և
ոչ ապաշխարեցի ։

Գ. Ա՛ՅԼ աղդեմ վերստին առ սոյն կեր-
պարան լքեալ կրկին ողորմութի՝ բարի ,
ա՛հաւոր , մա՛րդասէր , խնա՛մակալ , կենդա-
նի , սուրբ , լուսաւո՛ր և անվախճան թա-
գաւոր , զօրութե պանծալի խաչիդ խոր-
հրդոյ , ՚ի կարծրացեալս մեղօք անբեր ան-
դաստան՝ երկիկամանցս յիմարութե և ան-
պտուղ սրտիս լքութե . զի առեալ նպաստ
օժանդակութե ՚ի գթութէ կամաց ամե-
նակալիդ , որոտասցէ՛ բղխեսցէ՛ հոգիս ,
ընծայեալ աչաց վշտագնեցելոյս՝ վտակս
արտասուաց արբուցանողաց՝ ինձ ՚ի փր-
կութիւն և ՚ի մաքրութիւն , և քեզ ՚ի

հաճութ̃ի ընդունելութ̃ե՝ ամենապարգեւ-տէրդ բոլորից, փառաւորեալդ յաւիտե-նից · ամէն։

Վերստին յաւելուած կոկին հեծութ̃ե՝ նորին հըս-կողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի։ 'Ի խո-րոց սրտից խօսք՝ ընդ ա̃յ։

ԲԱՆ · ԿԵ

ա̃ · Եւ արդ՝ ես նախնիս ամբարշտաց · գլուխս մեղաւորաց · պետս անի-րաւաց · առաջինս պարտաւորաց · պատ-կերս յանցաւորաց · առաւելեցիս ըստ վատ-թարութ̃ե, այլ ոչ ըստ բարեբաստութ̃ե, ահա՛ զանճառելիցն իմ̃ց ճառեցի · զպատ-կառելիսն խայտառակեցի · զգաղտնիսն հրապարակեցի · զծածուկսն յայտնեցի · զթաքուցեալսն ցուցի · զամփոփեալսն տա-րածեցի · զդառնութ̃եա մաղձ ժայթքեցի · զգործակցութ̃ի չարին՝ մատնեցի · զամ-բարեալ թարախ վիրիս՝ քամեցի · զխորս պարտեաց իմ̃ց՝ ծանուցի · զպատրուակն կեղծեաց՝ առի · զքօղ ողեղութ̃ե՝ վե-րացուցի · զամօթալեացն զգեստ՝ մերկա-ցուցի · զզարշելիսն՝ յանդիմանեցի · զմրուրն մահու՝ փսխեցի · զպալարս հոգւոյս խած-ուածոց՝ քահանայապետիդ քե̃ բացի։

Զանձինս վտանգ՝ ոչ անխնայեցի · մարմնոյս
սիրոյ՝ ոչ աչառեցի · զարմատն հնութե՝
տեսիլ արարի · բնութեանս կարեաց՝ ոչ
ողորմեցայ · զմիաբանութեն կապ՝ խզեցի ·
զդղեակ սրտիս՝ քանդեցի · ընդ կամացս
ոգւոյ՝ իբր ընդ դարանակալի մահու՝ կըռ-
ուեցայ · զպահեստ անյայտից՝ արտաքս
հանի · զմթերից գանձ՝ մեծին գուշա-
կեցի · զդատախազն՝ դատաւորին հանդէպ
կացուցի · զապառնեացն զփորձ՝ այժմէն
իսկ գտի · զդաշն կործանողին՝ կորեցի ·
զուխտն խաբողին՝ ցրուեցի · զկատարած-
մարտին յաղթութե՝ ՚ի քեզ տէր յս՝ ա-
պաստանեցի · զպատերազմին խումբ՝ գըր-
գռեցի · զդիմադրութի դիմեցմանն՝ բանիդ-
ոյ յուսացայ · զխաւարասիրացն փաղանգ՝
լուսեղինացն զինուց սադրեցի ։

Է · Դու արդ՝ ստեղծիչ ա՛մ եղելոց քո
որդի բարձրելոյդ այ, զաստէն դսրովեալս
յապականեաց բանից, և զհարուածեալս
յայրքանեաց գանից՝ մի՛ կշտամբեսցես
կրկնակի դատել ՚ի մեծի աւուրն ։ Ահա
հզօր անքննին անճառ բարերար թագա-
ւոր անմահ, առ այս կերպ պատկառանաց՝
ինքնապարսաւս խոնարհութե, որ ինձէն
զանձն՝ մեծաւ ձաղանօք յոգի դատեցի,
լ՛ց նուագօք այսր մատենի՝ անարգանօք

ամօթոյ՝ զդէմն սատանայի. և զերեսս կերպի պատկառեցելոյս՝ նշանաւ խաչիդ զօրացո՛։ Ս՝խացի կնիքդ լուսոյ՝ 'ի դեղ տեսակիս. ամրութ̃եդ նշան հաստատեսցի՝ 'ի տիպ դիտակիս. երևակ կենացդ փայտի ձևասցի՝ 'ի պատկեր այտիս. արուեստ-հրաշից՝ 'ի ճակատիս շո՛ւք նշանակեսցի։ Ս՝ի պայպայեսցի քինէն՝ դրոշմդ լուսապա-ճոյճ. մի՛ բարձցի 'ի տեսանելեացս բբոց՝ ճաճանչդ օրհնութեան. մի՛ մերժեսցի 'ի գլխոյս՝ առ հաւատչեայդ վստահութ̃. մի՛ սասանեսցի 'ի բերանոյս ամրութ̃ սեմոց՝ փառք ծննդրութ̃եդ։ Պահպանակդ եր-կրպագելի՝ 'ի զգայարան սրտիս միասցի. չորեցս նիւթոց խմոյս գոյութ̃՝ քառա-թևիդ նշոյլ առդեսցէ. ձեռինս կարկա-ման՝ փրկչիդ իշխանութ̃ի օժանդակեսցէ. մատուցման հաստուածոյ մատինս՝ խորհրդ դարանդ համարձակութ̃ բարեգործեսցէ։ 'Ի մեկնելս խմուժ, մի՛ հեռասցի սրբու-թիւնդ. մի՛ լքցի պատիւս՝ 'ի պատիլն պար տաւորիս. մի՛ մերժեսցի 'ի յոդւոյս՝ ան-դաւաճանելիդ փրկութիւն. մի՛ ջնջեսցին գիծք կենդանատուիդ՝ 'ի քո՛ դրեցեալս շնչոյ. մի՛ եղծցի նկարումն արեան զօրութ̃՝ 'ի տիրատիպ խորանէս. ընդ իս բնակեսցէ յիմում դերեզմանին. 'ի ծորել մարմնոյս

Թշուառի՝ օծումն շնորհիդ առ իս պահես-
ցի․ 'ի նորոգութեն աւուր՝ սովաւ հան-
դիպեցայց փառաց փեսայիդ․ 'ի քոյոց այ-
տի ծանուցայց, քոյովքդ վաստակօք պըճ-
նեցայց, երախտեօք մեծիդ յարդեցայց,
աւաղանին զգեստիւ պերճացայց՝ քաւեալ
ողորմութբ։ Մատո՛ բարեգութ՝ զվե-
րարկուդ անապականութե տաժանեցելոյ
մեղօք մարմնոյս․ մի՛ յարիցէ ընդ քոյս՝
բանսարկուին․ հնացուցիչ հո՛գւոյս՝ վատ-
նեսցի․ խաւարաբնակացն պատիրք՝ մի՛
ընդ իս վերբերեսցին։ Օրհնեսցի ան-
ուամբ քո գըթած՝ վիհն իմ հանդստեան․
ողորմութբ քո լցցի գուբն իմ գերուե․
ընդարձակեսցի քեւ ինձ՝ տեղին թշուա-
ռութեան․ անդո՛րր եղիցի խընամօղ՝ ինձ
բանտն բարկութե․ սնուսցէ զիս յաճումն՝
արգանդն մթութե․ յուսով քո շտեմարա-
նեսցէ զիս՝ յարկն այն անձկութե․ ձեռամբ
քո պահեցայց՝ 'ի խշտին տարտամութե․
Թեւօք քո ընկալցայց՝ 'ի տունն տագնապի․
դու գո՛վեալ ընդ իս՝ 'ի սենեակն վտանգի։
Լուա՛ղս ինձ սատանօր՝ 'ի Թիւս հաղա-
րայ, զի երբեմն էի վերնային, եւ այժմ
անդնդային․ երբեմն տօնելի, եւ այժմ
աշխարելի։

Է․ Լուսաւորդ՝ կըկին դու օրհնեալ 'ի

բոլորից գլխից՝ յերկնայնոց և՚ի ստորնայ-
նոց՝ և՚ի սանդարամետականաց մեռելոց՝
անպարտականդ այս տարագրութեան։
Ես վրիպեցայ․ ես ստորացայ․ ես յիմա-
րեցայ, պարտեցայ, և խոտան գտայ․ ես
լքայ, կամեցայ, և կործանեցայ․ ես մոլո-
րեցայ․ ես մատնեցայ․ ես մերժեցայ․ ես
խորթացայ, գերեցայ, և գայթակղեցայ․ ես
նզովեցայ․ ես թշուառացայ, աքսեցայ, և
վատթարացայ․ ես ընկլուզայ․ ես խաբե-
ցայ․ ես անօրինեցայ, ես ապականեցայ,
մահացայ, և սպառ եղծայ․ չի՛ք քո առ
այս՝ ինչ մասն չարի, որ ես միայն անփո-
փոխ բարի։ Արդ՝ կամք քո յիս, և խա-
ւարն ինձ ճառագայթ․ ճրագ յուսոյ քո
անդ, և գիշերն վաղորդայն․ մարմնոյ քո
հաղորդեալ, և յամօթոյն կարծեաց ազա-
րեալ։ Իսկ ես ոչ գրեմ զանձն իմ կեն-
դանի՝ վ̅ն անփախչելի վախճանին․ դարձ-
եալ՝ զիս ոչ վարկանիմ կորուսեալ՝ վասն
աներկևան Նորոգմանն։ Որ և փակեալ
համարիմ ինձ զելս կենացդ՝ վ̅ն անքաւել-
եացն պարտեաց․ դարձեալ՝ բացեալ ինձ
զդրախտն՝ վ̅ն փրկութեանն աւետեաց․
քանզի ոչ այնքան մհատութեանն գոյժ
տագնապէ՝ որչափ փրկութեանդ քաջալեր-
եալ ձեռն կարկառէ։ Արդ՝ առո՛ւր ակէր

տուր ողորմութի, առ իմ ձայն գոհաբանեալ, օրհնեալ յաւիտեանս․ ամէն։

Վերստին յաւելուած կրկին հեծութե՝ նորին հրակողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի, ՚ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ։

## ԲԱՆ․ ԿԶ

ա․ Արդ՝ որ ոք և տացէ զայս դեղ մաղթանաց այսր մատենի պարկեշտականի պատարագել սմա, եթէ ՚ի մեղաւորաց իցէ մատուցեալն, եղէց և ես խնդրաբանիւ կցորդեալ նմա․ իսկ եթէ յարդարոց գուցէ յառաջեալն, գտայց և ես սովիմբ՝ ընդ նմին ողորմեալ նովաւ։ Ապա թէ երջանկացի այնպիսին ինքեամբ՝ ինձ միայնոյ գրեալ զեղկութին, և ես ինձէն վկայեմ այսմիկ։ Բայց յիշեսցէ նա զսողոմոն և զբանս նր զհոգեշունչս, թէ ով որ վստահասցի սիրտ սբ ունել, և կամ ով պարծեսցի մաքուր լինել ՚ի մեղաց․ և զի ոչ յարեաւ մարդ երկրածին՝ ազատեալ ՚ի պատասխանեաց․ և ոչ ընտիր՝ ինքնարշաւ վազիւքն, և ոչ՝ թէ և ՚ի թռիչս ամբարձման թևոց բերիցի․ առ որ զգոյշ լինիցի կրկին երկուցեալ ՚ի վիմին խոկ հաստատութե՝ ուսեալ ՚ի պօղոսէ, գուցէ ան-

կեալ 'ի յերկիր՝ սահմանողն այսմ կանոնի իրաւագատի՝ կշռեալ նմանեցի։ Այլ տացէ զայս կշտամբութիւն մաքուրն՝ նիւթ պսակաց, առ 'ի չիջանել անընտրողաբար յանձեռնահասն բարձրութէ․ և պատժապարտն՝ առիթ ազատուէ, որով ամբարձեալ 'ի կործանմանէ հոգևորական մահուն՝ ապրեսցի յուսով։ Իսկ ինձ եղիցի պատգամս այս բանի՝ արձան փորագրեալ՝ ամենեւին անեղծանելի, որ փոխանակ իմոյ եղկելւոյս անձին մահացուի՝ անդադար հնչմամբ հեծուէ լալոյ՝ առանց լռելոյ միշտ աղաղակէ․ լիցի և ոսկերացս քակտեցելոց 'ի հողապատեան շիրիմ վերարկուին՝ անմռունչ ձայնիւ զայս խոստովանել․ հասցէ և մարմնոյս 'ի հող լուծելոյ՝ բարբառով իմն անազդելեաւ՝ ծածկատեսիդ զայն

պաղատել։

Է․ ՏՐ գթութեց, աղբիւր ողորմութեց, պարգևք բարութեց, որդի բարձրելոյ տէր յս̃ քս̃, ողորմեա խնայեա, մարդասիրեա․ նայեա 'ի վտանգս․ ակնարկեա 'ի բեկութիւս․ խոնարհեաց 'ի թշուառութիւս․ տես 'ի տարակոյս անձեռնհաս տագնապիս․ հասիր հաղորդել կորստականս կարեաց։ Շօշափեա բժշկապէս՝ զամենաթշուառ ախտաւորութիւս, ունկն մա-

տուսցես քաղցրութ՟բ՝ ողորմագին հեծու-
թեանս · լո՛ւր 'ի խորոցն անդնդոց մահուն
գերեզմանի՝ անմռնչելի հառաչմանս · մտցէ՛
յականջս ամենալուր լսելեացդ՝ ձայն պա-
ղատանաց փառնեալ անդամոցս ։ Եւ մի՛ զի
գրաւական կենդանութ՟ես անապական է ,
անփոփոխ լիցի և սիրոյդ քո գթութ՟ի ·
կցո՛րդ լեր հեզութ՟ե՝ տաժանաւորս տկա-
րութեան ։ Մեռեալ պատկերիս՝ մի՛ ոխս
պահեսցես · ընդ անշունչ կերպարանիս՝ մի՛
'ի դատ քննութ՟ե մտցես · մահու տանջե-
ցելոյս՝ մի՛ հարուածս յաւելցես · ընդ բեկ
եալ խեցեղէն անօթոյս՝ մի՛ ուժգնութ՟բ
մարտիցես · վհատ կոշկոճելոյս՝ մի՛ բար-
կութ՟ի կրկնեսցես · կործանեալ շինուա-
ծոյս՝ մի՛ պատուհաս մատուսցես · շանս
սպանելոյ՝ մի՛ քարինս արձակեսցես · լո-
ւոյս ջախջախելոյ՝ մի՛ սաստիկս որոտա-
ցես · հողոյս անպատուելոյ՝ մի՛ իբր ամբար-
հաւաճի ուժգին մռնչեսցես ։ Զմոխիրս
մերժելի՝ մի՛ 'ի դատ ընտրութ՟ե կոչեսցես ·
զփոշիս ցնդելի՝ մի՛ իբր զքո դիմամարտ
դացես · զտիղմն տաղտկալի՝ մի՛ իբր զոսոխ
վարկանիցիս · զգարշութիւնս անգոստանե-
լի՝ մի՛ իբր զբռնամարտիկ վանեսցես · ըղ-
խէթս 'ի բաց ընկենլի՝ մի՛ նիւթ գեհե-
նին պահեսցես · զայսքանեաց բազմապա-

տին բանից կշտամբեալս՝ մի՛ վերստին յան-
դիմանեսցես ։

Դ. Այս ամենաթշուառ և խաւարարգել շիրմին են ահա սրտաբեկ և յոքնաթախիծ արգահատութիք. հաստատեսցէ՛ օրհնեալդ քո բան՝ անփոփոխական լինել, ըստ սրտի արգահատելոյս. քանզի և այժմ մինչ կենդանեօքս խօսիմ, մեռեալ եմ անհասից. որ՜ ՚ի կորուստ մահուն սատակման՝ ամենազօրիդ հրամանի՝ անէ՛րծ եմ հաւատովքս ։ Արդ աղաչեմ զքեզ՝ տէ՛ր յս̄ քս̄, հայեա՛ց յիս ողորմութբ̄, և մի՛ թողացուսցես լինել անակից ինձ բելիարայ. և զմահաղէկոյց տապանին ազդումն անկենդանաւորն թնդման՝ թշուառն թաղման՝ աղաղակ ձայնի հառաչման լսելեաց՝ քեզ հաշտեցուցչաց՝ յարդեսցես լսել, միայն բարեգործ, հոգեսէր, հզօր, մարդասէր. և հոգիդ քո բարի բնակեսցէ՛ ընդ իս՝ լոյս առնելով ինձ ՚ի խաւարին ։ Մնասցէ՛ն ընդ իս կենարար քո կրից պաշտեցեալ մասունք. զի իբր զաւանդ գանձու զիս պահեալ ՚ի քեզ, կենաց նորոգման ընծայեցուսցեն. օձաց անվատնելի զինուց ինձ պատկանեսցին, ընդ իս յարակայեալ քարինք պարսից՝ հոգևոր հնարից՝ զչարին հալածել զգունդ ։ Մարան

որ առ իս՝ քեւ տէ՛ր վանեսցի․ զի եթէ յա-
րիցէ 'ի վ՟ր իմ պատերազմել, տեսեալ ըզ-
քաղաքն ունայն 'ի զօրաց՝ և զազդողակա-
նացն գործի ապաձայն, զքեզ տ՟ր ունիմ
մշտնջենաւոր և աննիրհելի պահապան ։

Դ․ Օի եթէ այժմ իսկ կանխաւ արագ-
եալ յառաջ քան զօրն կատարածի, և ան-
շաւիղ արգելան ինձ պատրաստեսցէ, առա
քեզ զաղօթսն տէրունականս՝ նմին գան
մահու․ եթէ 'ի վայր զիս հնարի կործա-
նել, զծնրադրութ՟ի աղաչիցն․ եթէ 'ի մա-
խիր երկրի թաւալել ձեռն բերիցէ, երե-
սացն ո՟յ 'ի նոյն մածուցումն՝ զնա հերքես
ցէ․ եթէ վատակս ինչ ցաւոց նիւթես-
ցէ, քրտունքն յուռթի արեամբն զան-
գեալ փրկչին աշխարհի՝ զնա խուեսցէ․
եթէ յընթացից բարեաց պշունչս իմ պա-
տանդեսցէ, կապանք ամենաստեղծին՝ զիս
արձակեսցէ․ եթէ յուրացութ՟ի պարգևաց
լուսոյն բռնադատեսցէ, հայհոյութ՟ն
համբերութ՟ի յա՟ծամարտից՝ զնոսին ընդ-
նոյն կարկեսցէ․ եթէ հարուածս նետից
գաղտնաձիգ զինուց՝ ինձ արձակեսցէ,
կարթ հնարից աղեղան փառաց հօրն կա-
պարձից՝ նմին պատահեսցէ։ Եթէ քողով
լուսոյ խաւարականի՝ մտանել ընդ աչս
անամօթեսցի, կափուցմն գլխոյն ձորձով

պատեցեալ լռմանն ամենից՝ զնա տանջեսցէ . եթէ մոլեցի զվստահութի ձեռինս կապել, եղէգն մատուցեալ 'ի յաջ գդացուցչին՝ զնա չարչարեալ ըմբերանեսցէ . եթէ ձաղանօք այպանման՝ զիս կատակեսցէ , տանելն ծաղու ամենազօրին՝ զնա հեղգնեսցէ ։ Եթէ բժժանօք ինչ յուռութից՝ կախարդել խորամանկեսցէ , ապտակըն դիմաց հզօրին տն՝ զնա սաստկապէս ամաչեցուսցէ . եթէ 'ի մուտս գիշերային մթութեն խաւարաւ խաբէութե լինեալ մարտիցէ , 'ի ճառագայթից լուսոյ երևման քո տէր՝ խայտառակեսցի . եթէ 'ի միջօրէական տապոյ փորձութեցն՝ արեգակնակէզ վառնիչ խորշակին՝ զիս 'ի յարմատոց խախտել կարծիցէ , 'ի զօրութե նշանիդ լուսոյ խլեալ գօսասցի ։ Եթէ 'ի փչմանն շնորհէ ունայն զիս առնել հնարաւորեսցի , թուքն զոր ընկալաւ տէրն քրովբէից ընդ մեղաւորիս , զնա պատկառեցուսցէ ։ Եթէ ժանիք խածօղք ինձ ցուցանիցէ , լռութի երկնաւորին բերանոյ՝ զնա պապանձեցուսցէ . եթէ խածմունս աղուականս հոգւոյս աղդեսցէ , բևեռացն հարմունք հաստողին բնաւից՝ զնա կսկծեցուսցէ ։ Եթէ յընթացս անիրաւութեց խորհրդոց զիս մոլորեցուսցէ ,

սևեռք ոտից անհասանելւոյն՝ զնա կապեսցէ • եթէ հրապոյրս ինձ դժնեայս արբուսցէ, քացախն ընդ լեղւոյն խառնեալ 'ի յարբումն բարբարին՝ զնա դառնացուսցէ ։ Եթէ առաջին ճաշակմամբ փայտին զիս գտցէ, սոսկալի խորհրդով խաչին ըմբռնեալ՝ խայտառ պարտաւորեսցի • եթէ ընդվզել ընդդէմ հնազանդութեան տն հրամանի զանձն իմ ուսուսցէ, բերումն պարանոցի անսահմանելւոյն՝ զնա կործանեսցէ • եթէ 'ի մահ սատակման զիս վանեալ վիրաւորեսցէ, ստուար տէգ զինու մխելոյն 'ի կող՝ ստեղծչին ադամայ՝ զնա հերձեսցէ • եթէ երկամբք վշտաց դժոխականաց զիս պարփակեսցէ, պատանացն կըտաւ՝ էից ունողին՝ զնա ըմբռնեսցէ • եթէ յատակս մահու հայել զիս խարդախեսցէ, բնակել կենդանւոյն 'ի վէմն մահու՝ զնա մեռուսցէ • եթէ խնդասցէ ընդ մարդկորէնս իմ գայթակղութի, կրկին կորասցի կարկամեալ կամաւ, յորժամ անմահն տծ յարուցեալ փառօք՝ ընդ իւր նորոգեալ զբնաւ մահացեալս ։ Եթէ ընդ լուծանել փոքր կապանաց հաշտարանէից՝ բերկրեսցի, դողասցի կրկնեալ վերստին իսկոյն ընդ վերջին շղթայս անզերծ տագնապին ըմբռնման՝ սատակագունի յանվախճան տանջա-

նարանին ։ Եթէ ընդ առաջին հարուածն դժուարեսցի, գոյժ կորստեան յետնում ստամբմանն անշէջ գեհենին՝ որ պատրաստեալն է նոցա և նորին հրեշտակաց, նմա պատմեսցի՝ որ յաւուրն մեծի՝ մեծին ատենի ։

Է. Տուր ինձ ապաւինելոյս 'ի քեզ՝ տ՟ր յ՟ս, միայն Թագաւոր ինքնակալ զօրեղ՝ արարիչ երկնի և երկրի՝ և ամ՟ զարդուն որ 'ի նմա, որ գալստեանդ քոյ ակն ունիմ, և ողորմութ՟ե փրկչիդ սպասեալ յուսամ. 'ի յոյս քո անկանիմ, և զգարշապարիդ հետս համբուրեմ. զպարտութիս խոստովանիմ, և զմեղանս հրապարակեմ. կշտամբանաց քարամբք կոծիմ, և հառաչանօք սրտիս տապանիմ. 'ի խէթ խղճիս խոցոտիմ, և բոցով շնչոյս ճենճերիմ. աղի ցօղով արտասուացս այրիմ, և երիկամանցս ազդմամբ կիզանիմ. յուսակտուր օդով ցամաքիմ, և դառնաշունչ հողմով շիջանիմ. Թախանձանաց բանիւս երերիմ, և կողկողագին հեծութ՟ե դողամ. տաժանելի կրիւք տուայտիմ, և տագնապաւ հոգւոյս տատանիմ. 'ի կոծ մրրկաց ծփիմ, և 'ի բախմանէ ալեաց սասանիմ. 'ի լռութ՟է համբաւոյն սարսեմ, և յիշատակաւ ահին կորնչիմ. կերպարանօք ատենին հալիմ, և

սպառնալեօք մեծիդ մեռանիմ, լո՛ւր՝ բազմագութ, քաւիչ, մարդասէր և երկայնամիտ. քաղցրութիւն անճառ, որ բարի և ախւ ատենչալի: Քանզի կարօղ ես յամենայնի և առ ելս շնչոյս իմոյ՝ փրկութեան մեծի. և քեզ ընդ հօր հոգւոյդ սրբով փառք՝ յաւիտեանս. ամէն:

Վերստին յաւելուած կրկին հեծութե՝ նորին հրակողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի. 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ.

## ԲԱՆ. ԿԵ.

ա. Բայց քանզի յոյժ արդար է բան իրաւանցն քո Այ առ իս՝ քան առ ակզբնահայրն չարեաց սատանայ: Զի վս նր յայն սակս յայտնեցաւ, զի լուծցէ զգործս նորին. և վասն իմ՝ զի զհնացեալ պատկերս նորոգեսցէ. առեալ զկերպարանս բոլոր էութի՝ կերպին խակութե մեծին Այ՝ միացոյց ինքեան անշուշտ խառնութբ. նր ոչ են շնորհեալ 'ի բազմացն, և ինձ զբովանդակն եհեղ առատութբ. վս նր ոչ երբէք չարչարեալ, և վս իմ հանապազ պատարագի. նա անհաղորդ է կենացն, և ես միշտ վայելեմ 'ի փրկութեն. նա վանեալ է խաչիւն, և ես զօրացեալ նշա-

նաւն ։ Ո՛վ հերքեալ ՚ի լուսոյն , և ես միացեալ ընդ փառացն ․ նո՛ր ո՛չ խոստացաւ հանդիստ և յերկրի , և ինձ զերկինս սեփհականեաց ․ զնորայն կորեաց զառհաւատչեայ , և զիմն՝ առանց խղճելոյ յարակյեաց ․ զնա յերամակս խոզիցն արգել , և յիս ինքն զօրացաւ ․ զնա կարծոց օրինակեաց , և զիս ծառագայթ նշանակեաց ․ զնա սողնոց նմանեցոյց , և զիս խուռին անուամբ կնքեաց ։

Է ․ Իսկ ես զերախտին ո՞յ լքի՝ զայնքանեաց բարեաց արարողի , և չարին զկնի միտեցայ՝ հայել ընդ նմին յատակս դժոխոց՝ ահա՛ անարժանս բարեաց ․ անձիրս երախտեաց ․ անընդունակս սիրոյ ․ տուամբք մեղաց ձգեալս ․ յերկիկամուն խորոց խոցեալս ․ քանցեալ ծառս արմուենեաց ․ գինիս յեղաշրջեալ ․ ցորեանս հեղեղեալ ․ մուրհակս ջրեալ ․ վճիռս պատառեալ ․ կնիքս այլակերպեալ ․ նմանութիս փոխեալ ․ արկանելիքս կիզեալ ․ ըմպանակս կորուսեալ ․ նաւս ընկղմեալ ․ մարգարիտս մանրեալ ․ ակնս պատուական սուզեալ ․ տունկս գօսացեալ ․ նեցուկս խորտակեալ ․ փայտս ամենեին փտեալ ․ մանրագորս աղաւաղեալ ․ յարկս տապալեալ ․ խորանս խարխալեալ ․ բոյսս արմատաքի խլեալ ․

ձէթս հեղեալ 'ի գլուխս աղբեաց · կաթնս հոսեալ 'ի կոյտս մոխրոյ · այրս մահու 'ի յարեանց գնդից ։ Քանզի միշտ խրատեալ ընդ երուսաղէմի՝ առակաւ բաբելոնի՝ 'ի մարգարէիցն ձայնից՝ անձն իմ ողբալի, և ոչ ինչ խրատեցեալ · որ աստէն անդունեալ եմ, և անդէն խայտառակեալ · աստ դսրովեալ, և անդ կշտամբեալ · աստ ձաղեալ, և անդ նախատեալ · աստ Թշնամանեալ, և անդ յանդիմանեալ · աստուստ ապշեալ, և անդանօր լքեալ ։ Աստ հեծումն, և անդ հառաչանք · աստ կարծիս, և անդ կատարած · աստ խէթ, և անդ հատուցումն · աստ արկածք, և անդ հանդերք դատաստանի, ուր ոչ է բան իրաւանց, և ոչ ձայն պաղատանաց · ոչ Թիւք աւուրց, և ոչ ելք ժամանակաց · ոչ ուղք յուսոյ, և ոչ դրունք ողորմութեանց · ոչ աջ պաշտպանութեան, և ոչ ձեռն այցելութեան ։

Գ · Այլ դու ապաւինութի · դու ինքն փրկութի · դու այցելութի, դու և քաւութի · դու երանութի · քև բժշկութի · քո ողորմութիւն, միայն հզօր՝ կենդանի՝ անճառ տէր յն քն բարերար ած · օրհնեալ՝ օրհնեալ, և դարձեալ օրհնեալ, ընդ հոգւոյդ քո ի՟յ յաւէտ բարձրացեալ

'ի փառս Հայրենի խնկութեան մեծիդ՝ յաւիտեանս յաւիտենից · ամէն ։

---

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հըկոյլի, առ նոյն այլեւս մաղթանաց բանի, 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

## ԲԱՆ · ԿԲ.

Ա · Եւ արդ՝ 'ի յիշատակ ահարկութեան վերագրեցելոց՝ որք յանձուստ են սպառնալիք ինձ ժամանեցեալք, զխորհրդադադարեցայց 'ի նորոգ ողբերգութեանց, եւ կամ որպէս զցամաքումն առցէ հեղեղք արտասուացս ։ Ո՜հ եթէ զչորեքփակեան առաջս գետոց յորդահոսան ծաւալմանցդ, որ զեդեմ եւ զերկիր առ հասարակ ոռոգանեն՝ լիապէս բաւականութեամբ բաշխեալ ինձ, եւ զբղխումն ելից իւրեանց՝ առ աչս իմ եդեալ, զանձինս մեղաց սաստկութեան զբոց զովացուցանել ոչ բաւականասցին ։ Եւ կամ մարգարէին որոյ ըղձականութիւն՝ կրկին ինձ լցցի գլուխս ջուրց բազմութեան, եւ ճրագարան տեսութեանց կերպիս՝ աղբերց կայլակմունք, զբեկման ոգւոցս չափել զվտանգ՝ ոչ ձեռնարկեսցեն · եւ ոչ եղերականք ջայլից համօրէն՝ բանահիւսից կանանց լալականաց՝ 'ի սիրտ եւ յագի վիրաւորելոց, զաղէտ վտանգիս 'ի յերգ-

արկանել, և կամ 'ի նուագս ձայնից բերել ը̄ ․ Ամէ օրն լինելութե̄ նշովեալ, և ոչ յոբայ՝ կամ երեմիայ ․ քանզի տօնելի է օրն նց̄՝ զորոց մի 'ի նոցանէ ոչ արժէ աշխարհ, և ոչ տարագրելի ․ ապա ուրեմն զի՛ս նկատ եղեալ զոչ արժանիս լուսոյ՝ և կամ միոյ մասնաւոր բարւոյ, զհանդիպումն աւուրն անխծին՝ յորում ես գտայ կորստեան որդիս և մինչու դրացիս, մշակս մեղաց և արբանեակս անօրէնութե̄ց ։ Որ ոչ կացի յուխտին կենաց՝ զոր դու սահմանեցեր՝ տ̄ծ բարերար ․ ոչ գնացի 'ի քո պատուիրանն կենդանական անմահացուցիչ ․ ոչ վաստակեցի 'ի հունձս արմտեացն, որով 'ի մուտս ձեանն՝ աւուրցն խաւարութե̄՝ կերակրել պատրաստեցայց ․ ոչ կառուցի ամրութի̄ որմոց՝ և ոչ ձեղուն յարկաց ձգեցի որով 'ի շնչմանէ մրրկաց օդոց պահեցայց ․ ոչ համբարեցի նշխարս պաշարաց 'ի յուղին անեզրական, որով զտագնապ սովոյն իմ բժշկեցից ․ ոչ հանդերձաւորեցի քեզ աղերս աղօթից, որով առաջի քո կալ համարձակեցայց ․ ոչ կազմեցի թոշակ փրկութեան՝ վարուց մաքրութե̄, որ զնորոգութի̄ ինձ երաշխաւորէ ․ ոչ ետու զընտրութե̄ հաշիւն 'ի կենցաղոյս ճանապարհի՝ իմոյ մատնչին, զի 'ի դատաւորին

ձեւանէ՝ տատէն խակ փրծայց · ոչ լրութեան
ձեւոյն օրհնութեան մատեայ յանդիման, որով
օրէնսդրին մասնակից գտայց սրբեցեալ։
Ո՛չ դիմաց եդու զգուշութիւն, և ոչ թիկանց
պատսպարութիւն, ոչ աջոյս իմ զինուորութիւն
և ոչ ահեկիս պարածածկութիւն, որով 'ի
պատերազմիս վտանգէ զերծայց · զերի-
վարս ոչ զգեցուցի զրահիւք, և ոչ զմար-
տիկս՝ սպառազինութեամբ, որով զճակատն
յարդարեցից։ Ոտս կանուխն ոչ կազմեցի
պատուղ, և անագանին ոչ ժամանեցի, և
ահա տարակուսիմ ունայն 'ի բարեաց ·
մաքրութեան ծաղիկ ոչ ունիմ, և ոչ խուղ
ողորմութեան, և գիշերոյն մնայլ՝ աննշոյլ ·
'ի նիրհումն մահու ննջեալ եմ, և տագնապ
կոչողին փողոյ սոսկալէ · զզարդ հարսան-
եացն կրկին մերկացայ, և զձէթ վարուցն
վերստին լքի, և դուռն մտին հարսանեաց
աւասիկ փակի։

Է · Եւ արդ՝ զիա՞րդ առից մխիթարութիւն
յայսքանեաց վշտաց, և կամ ընդ ո՞րքանեաց
տարակուսանաց խաւարի՝ լուսաւորութիւն
յուսոյ կենաց խառնեցից · և կամ ո՞ւր
արդեօք զգարշապարս ոտին կառուցից ·
և կամ յո՞ր վստահութիւն զաչս իմ յառեցից ·
և զի՞նչ անդորրութիւն ծփանացս նկատե-
ցից · և կամ յո՞ր ըղձական դիւրութիւն ձեռն

համբարձից։ Ո՜վ եթէ ՚ի ձեղուն բարձրութեան երկնի, անտի անձրևաց հուրն սոդոմայ, որպէս ասացեալ է. իսկ եթէ յատակ խորութեան երկրի, սա եբաց զկոկորդն ըմբռնողական՝ և եկուլ զդադան բանակօքն աբիրոնի։ Եթէ յանդգնեցայց փախչել յունողէն, գուցէ կալցի զիս վիշապն ահագին։ Եթէ ընդ գազանս ինչ թափառեցայց, արագունք են խնդրել զկեր ըստացողին առաւել առ իս՝ քան երբեմն զեղիսէին՝ առ մատաղ մանկունս բեթելացիս քրմորդիս։ Եթէ յամենատարած օդոյս պարզութիւն, այն եղև եգիպտացւոցն խաւար շօշափելի։ Եթէ ՚ի թռչունս բարձանց, նոքա են կոչեցեալք ՚ի սպանդն զօհին՝ բռնորայ դիականցն։ Եթէ ՚ի տկարան խիզախեցից, վտանգիմ ՚ի պղծակացն, և զի՞ պիտոյ են ինձ առիւծունք։ Եթէ յարջոցն պատառողաց ապրեցայց, մժխքն արեան ծարաւիք ինձ պատահեսցեն։ Եթէ յանհողս ուրեք նստիցիմ, մժղուկքն անարգագոյնք՝ իբր ցնցուղս հրոյ եռացման՝ զինև մաղեսցին։ Եթէ յեղջերէ միեղջերուոյ փախնուցում զերծեալ, նկուն ճիրանք աղկաղկաց մնոցն մորմոքողաց՝ զիս կեղեքեսցեն։ Եթէ ՚ի սենեակս շտեմարանաց խորշից ղօղեալ ամփոփիցիմ, տաղա-

կատեսակ գարշութի գործոցն՝ մեղաց օ-
րինակքն՝ զիս զազրացուցեն։ Եթէ ՚ի
վայրս ինչ անդստանաց կացեալ զետեղե-
ցայց, շարք շանաճանճոցն տարմից՝ զինև
պատեսցեն։ Խողում տեսել զխառնիճն և
զջորեակն զզօրն զօրաւոր՝ ընդ թունա-
ւորն թրթուր, և ընդ անկենդանական ե-
րևիլն, հանդերձ ջրակարծ կարկառիւն, և
ապականագործ եղեմամբն․ որ առ աչաց
տեսիլ՝ ապաղէնք և նուաստագոյնք, բայց
՚ի յակնարկելն այ՝ յաւէտ գոռոզաբար
ուժգնութեամբ հարին՝ հանին՝ վանեցին
զհպարտն ամբարհաւաճութի փարաւոնի
բռնութեն բուռն գաւազանին՝ յաղթօղ
վիճակաւ․ որ են կերպարանք թաքուցե-
լոցն կրից ըկողաց՝ անձնականացն անե-
րևութից՝ եգիպտացւոցն անօրէնութեց՝
յոգի և ՚ի մահ տանջողաց՝ գաղտնի մտա-
սողաց։

Դ․ Ո՛վ դու ամենազօր արարիչ բնաւից
տէրդ բոլորից, ՚ի յատելեան հանդիսացիր
հերքել զնոսա․ և ինձ ողորմեա՛ կրկին գը-
թութեամբ՝ ձեռն մատուցեալ փրկութե
տարակուսեցեալ կործանեալ վարանեալ ՚ի
մահ պարտելոյս։ Զի դու միայն ճանա-
չես ած փառաւորեալ միշտ ընդ հօր հոգ-
ւովդ որդ՝ յաւիտենս յաւիտենից․ ամէն։

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ Նորին հրա-
կողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի. 'Ի խո-
րոց սրտից խօսք՝ ընդ Այ.

## ԲԱՆ · ԿԹ.

ա. Եւ արդ՝ փառս զի 'ի ձեռն մեծիդ
և ամենահնար արուեստաւորիդ
իմս եղանութեան Տն և Այ՝ իբր 'ի քրոյս
ընտրութեան փութոյ քոյ սիրոյ՝ հանապազ
եռամ, և ոչ երբէք պարզիմ. միշտ խառ-
նիմ զուգիլ՝ և ոչ ևս միանամ. ահա զուր՝
արծաթագործդ երկնաւոր՝ իմ Ճարտարա-
պետ, 'ի մնոտիս վաստակեալ առ իս աշ-
խատիս, ըստ մարգարէին յայտնի առակի,
և չարութիս իմ ոչ հալեցաւ. զոր ինձէն
մոլեալ չարաչար՝ իբր զխելագար դիւա-
բախ իմն ողորմելի՝ յանդգնեալ անկարգա-
խօսիմ՝ զիմս զպարտիսս աճեցուցանել,
քան հաշտուէ շնորս ինձ այսու կազմել։
Եւ զի մի' անընդել դիպուած՝ և անկիրթ
պատահումն՝ և անհաւատար հանդիպումն՝
պատրաստութիք հանդերձելոց տանջանա-
րանացն ինձ երևեսցին, ամենևին անմո-
ռաց պահեաց աստատին 'ի յիմում մարմնի՝
նշխար մնացուածոց նախնումն անիծիցն.
զոր 'ի փոքուէ տարրէ անարգէ՝ զմեծն է
ուսանել.

բ. Քանզի խաղաղն ինքնաբերականն գիւտք

տոհմային՝ բոտոտք ճապուկք շարժողականք, և ազգի ազգիք · որդունք աղեաց գազանակուրք, խաղաւարտք հրակայծանք · և բինծք բոցակինծք · և անիծք անկերպաւորք · և երամակք ոմանք քրձնածինք զազրաթորմիք կսկծեցուցիչք և մարմաջողականք ։ Նպատակք այլոց վայրենեաց, ըստ նմանութե գիտաց գիշերամարտից՝ և ժեկնադէն բարբարոս գնդից խաւարասիրաց, և գազանութբ քանասար գայլոց արաբացւոց՝ կորակոր գնացիւքն, արջնաթոյր գունովն, կրկնապարոյր կուածադկոցաւն, որ զօրէն ունի խայթոցաց կարճի, իբր դժնիկ փշովք խոցոտեալ՝ ծծեն ձգեն զարեանն խոնաւութի, և յանկողինս մնչճաց հանգստեանն՝ վաստակս կրից ցուցանեն ։ Եւ կարկառեալ ուրուք ձեռըն՝ հատուցանել զհատուցումն նը նոցին, վաղվաղակի զգան զձեռս վտանգին՝ զոր ազդեն մարմնոյն · և անդէն խկոյն լերկամարմին փոքր հասակաւն՝ իբր թեւօք իմն թռիչս արձակեն, և ըստ մարախի ձեւոյ ոստոստեալ՝ այսր անդր տարաբերին · և ըստ բազմապատիկ նենգութեան բարոյից դաւօղ աղուեսուց՝ խորամանկեալ խուսափեն ՚ի պատուածս բազում ելից, զի յերկիւղէ մահուն ապրեսցին ։ Եւ այնքան

չքոտի և անքատ անձամբքն՝ ոչ միայն զռա-
միկսն և զխառնիճաղանճս, այլ և զթագա-
ւորս հզօրս և ահագինս՝ փախուցանեն
հանեն տարագրեն 'ի դատիկոն յարկի ա-
պարանիցն բարձրութեան, և կամ 'ի բացի
ընակեցուցանեն. քաջք արանց արեաց,
որք իշխեցին ամբոխից, և տիրեցին ժողո-
վրդոց, և առին զքաղաքս ազգաց, զպար-
տութի իւրեանց զօրաւոր ձեռինն՝ ինք-
եանք վկայեն, թէ քանզի ոչ կարացաք 'ի
դիմի հարկանել վէհիցն բռնութե, վա այնո-
րիկ խոյս տուեալ հասաք յայս տեղի։

Գ. Ու զի՞նչ է ինձ զփոքունց և զանկա-
ծից ծաղրականաց ոմանց դիւթեց 'ի կիր
արկանել, որք զօրեղ և անհերքելի ջատա-
գովք են ածութեն՝ յիշատակել ինձ ըղ-
հանդերձեալն, որք 'ի մարմնոյս անօրինե-
լոյ՝ ընծային պտուղք դառնութե։ Ընդ-
որս և եկամուտ սատակչականացն ախտից
գիւտք, և կերչացն կոյտք անողոքելիք.
յորոց չէ զերծանել, քան թէ հարկաւ
մարմնոյն վտանգի՝ զապագայիցն ողջոք ի-
մաստասիրել. և ոչ տեղի է գտանել ապա-
տանի՝ փախստեամբ անկանել առ նա. այլ
առանց կամաց քումդ ակնարկութեան՝ և
մարդկային կարք և հնարք վրիպեցան։
Իսկ դու բարերար՝ զամ ունիս բաւակա-
ն

նապէս զկենացն հնար՝ եթէ կամեսցիս փրկել, նորոգել, քաւել, բժշկել և կենագործել. և քեզ փառք յաւէտ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

Վերստին յաւելուած կրկին հեծութե՜՝ նորին հըռ-կողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի, 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ̃.

## ԲԱՆ. Հ

ա. Եւ քանզի համբարձեալ զընթացս բանիս 'ի փոքունց սատի երկրայնոց՝ չհամարելոց ընդ գոյս եղելոց 'ի մեծագունիցն տեսակս, սասցից զտօնելի հանդէս խրատանց տհաւորին անաչառութեան։ Որ զի թէ մերձաւորագոյնք իցեն այ̃՝ իբրև զնախածանօթ հայրապետութիւնսն, և կամ մաքրագոյնք՝ ո̃պ մարգարեան, կամ անբծագոյնք՝ իբրև զառաքեալսն, կամ ընտրելագոյնք՝ որպէս մարտիրոսան, եթէ ոչ դու մարդասիրեսցես աննուազ բարիդ՝ և անփոփոխ խնամակալութի՜դ՝ և անպակաս ողորմութի՜դ, ընդունայն է ինձ փրկութիւնն առ 'ի նոցանէ։

բ. Ոչ եթէ առ նոյն ինքն աբրահամ ձայն արձակիցեմ, իբր ողորմագին առակ

ընչեղին ինձ վարդապետէ, 'ի տապոյ անտի
պապակեալ, կաթի միոյ ջրոյ ոչ բաւակա-
նանայ. քանզի և նա փակեալ է ընդ կար-
եօք համարակաց անհնարութե՛. Իսկ ե-
թէ առ մոլէս, և նա զգածեալ է տխա-
րութե՛, որ ոչ զօրեաց առնն փրկութե՛,
որ զհայթայթանաց կրկուտն՝ 'ի պահպա-
նութեն, աւուր ժողովէր. Իսկ եթէ առ
ահարոն, և նա ինքնին իսկ կարօտացա-
մաղթողի. Իսկ եթէ առ դաւիթ, 'ի մէջ
բարեացն առատելութե՝ սադատեալ է և
նա. Իսկ եթէ առ նոյ՝ և յոբ՝ և դանիէլ,
զայս եղէկիէլ մարգարէ մեկնեաց՝ յան-
ուանէ իսկ յիշատակեալ զնոսա, և զայն
ընդ նոսին իբր 'ի դիմաց տն ազդեալ, կեն-
դանի եմ ես՝ ասէ տր, թէ ոչ ապրեցուս-
ցեն զուստերս և զդստերս իւրեանց 'ի
բարկութեէն՝ որ հասանիցէ, բայց եթէ
ինքեանք միայն ապրեսցին. Իսկ եթէ առ
պետրոս վէմն հաւատոյ, 'ի քումդ խնամոց
խուն մի խիթացեալ՝ և նա ընդ կրիւք իմն
գրաւեցաւ. Թողում աւել զբազմացն գու-
մարութի՝ խոնարհեալ առ կարիս կարիս,
թէև յաւէտ երջանիկք իցեն. Ընդ որս
և յոփասու ումն մարգարէի՝ 'ի մէջ տծա-
ւաքն սպասաւորութե՝ մարդկօրէնն դայ-
թագղութիւն՝ մնոյ հոլովից անթարգմա-

նելի , թէ՛և ՚ի դէմս իմն մեկնութեան
ձևակերպեցի ։

Է · Եւ քանզի չափեալ սահմանեցաւ զօրութիւն փրկութեան մարդկան , և ցուցան նորա ողորմեալք բարերարիւք՝ և զօրացեալք ամենակալիւք · կոչեցեալք պաշտպանողիւք՝ և քաւեցեալք հնարաւորիւք · շնորհեալք աղաչեցուցչիւք՝ և բժշկեալք անախտականիւք · կենագործեալք անապականիւք՝ և լուսաւորեալք նորոգողիւք , այսուհետև գիտացեալ զաւակն որքանութեանց հողածին բնութեանս , որք մխիթար են օրինակաւն նմանաբար հարազատապէս վհատութեան յուսահատելոց , ահա՛ տուքեղ դիմեցից՝ որդի այ կենդանւոյ քս օրհնեալ յամի ։ Մանաւանդ զաւակն ազգակից այսմ մաղթանաց տատանօր յիշեալ , զմերագրելոցդ բան վերստին արդարացուցանէ · բարի է , ըստ իմաստնոյ ումեմն երջանկի , անկանել ՚ի ձեռս տն , և մի՛ ՚ի ձեռս մարդկան · զի ոպ մեծութիւն նր , և ողորմութիւն նորին ։ Եւ այս բան՝ թէև զդաւթին իմ գծագրեր , որ զերեքմանեան հարուածն տծեան առաջի եդեալ՝ ընտրեաց ինքնին կամաւորաբար զդատակնիքս մահուն սատակման՝ իբր զկենդանի քի հաւատոցն յանձնութէ , քան զեր-

կուսն ես այլ փրկութիւնս՝ որք տանջենն և ոչ ողորմին ․ սակայն և իմս օրինակութ՟ի բանիս պատկերի ճարակեցելոյ հնարս կենաց կորուսեալս անձին՝ ոչ է այլայլեալ յարմարութենէ ․ զի ոչ եթէ զփրկեալսն նուաստացուցանեմ 'ի մատենի այսր ողբերգութ՟ե, առանց որոց ոչ է մատչել առ տ՟ր, այլ զփրկողին անուն պսակեմ, և ըզշնորհ նորին՝ առ ամենեսին բարեհռչակեմ․ և զընթացին բարձունսն 'ի թռիչս վարուց՝ խոստովանիմ բանիս պայմանաւ,

Յաւէտ կարօտեալ ողորմութ՟են դեղոյ։ Տ․ [illegible] հա՛ դու կեանք, դու փրկութ՟ի, դու բժշկութ՟ի, դու անմահութ՟ի, դու երանութ՟ի, դու լուսաւորութիւն, արա՛ ինձ անդորր 'ի մեղացս աշխատութ՟եց, զի և քե՛զ լիցի հանգիստ 'ի մշտադատս հեծութ՟եց՝ ձանձրացուցիչս թախանձանաց ․ որ ոչ այլ ինչ, քան թէ փրկութեամբ մարդկան պարարիս, օրհնեալ յաւիտեանս ․ ամէն ։

Վերստին յաւելուած կրկին հեծութե՟՝ նորին հրա-
կողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի։ ՚Ի խո-
րոց սրտից խօսք՝ ընդ ա՟յ։

## ԲԱՆ․ ՀԱ

ա՟․ Եւ քանզի երջանիկքն և փառաւոր-
եալք սրբոցն պարք, յորոց ոմանք
դոյզն ինչ գթեցին, և յաճախագոյնս հաս-
տատեցան․ փոքունս սասանեցան, և մե-
ծագոյն վառմամբ նշուլից հոգւոյն մաք-
րութե՟ լուսաւորեցան։ Յորոց մինն՝ ըզ-
զանկուածոյն յայտնէ զհասարակաստեղծն
տկարութի՟, իսկ միւսն՝ զգերազանցն քան
զընութե՟ն օրէնս, վարս և առաքինութի՟ս
հրեշտակականս։ Եւ արդ՝ նոքա որ օրհ-
նեալքն են յամենիշխան բերանոյ ա՟ծուե՟
հօրն քո՟, ընտրեալքն՝ տօնեալքն՝ խըն-
կեալքն և բարեբանեալքն, իբրև զան-
դամս քո՟ պաշտեցեալք, և իբրև զօթե-
վանս հոգւոյն սրբոյ յարդարեալք․ յորս
չէր ինչ նշմարանք և կամ գիւտք խաւա-
րի, այլ ամենևին անկեղծութի՟՝ և լուսա-
ւոր արդարութի՟, և որքան մարթ է՝ ըզ-
մարդն ա՟յ՝ ա՟յ նմանեցուցանել։ Երեսք
պարզք և անպատկառելիք․ կրօնք բար-
ձունք և անխոնարհելիք․ կեանք զգաստք
և անստգտանելիք․ պաշտօն առ ա՟ծ կարծր
և անփոխարկելի․ ընթացք արխականք և

անկասելիք · Ճշմարտութիւն միատարր և անցնդելի · դիմագրաւութիւն զօրեղ և անհերքելի · տեսաւորութիւն պայծառ և անապշելի · իմաստասիրութիւն վերնական և անկոխելի · պատկեր մաքուր և անաղարտելի։ Որոց կերպարանս և զյիշատակս անուանցն աղաչել՝ աստուած իսկ վարդապետեաց, և նոքօք հաճութիւն ՚ի մէջ խռովութեան՝ արարչիդ բան լուսաւորեաց։

Բանք պանծալիք հաշտեցուցիչք ՂԳ։

Է. Ողբ ես անպիտանս յամի, և որքան բան զօրէ՝ պարսաւեալս · որ մինչդեռ արթունս եմ, ննջեմ · մինչդեռ ըղդաստ երևիմ՝ թմբրիմ · ՚ի բարեպաշտելս իմում՝ գայթակղիմ · մինչդեռ աղօթեմս՝ և վրիպիմ · ՚ի յընթանալս իմում՝ և կասիմ · յարդարանալս իմ՝ և մեղանչեմ · ՚ի խաղաղանալս իմում՝ ամբոխիմ · մինչդեռ արշաւեմս՝ առ ՚ի յետոյն հակամիտեմ · ՚ի չուելն իմում՝ ընդ կրունկն դառնամ։ Ընդ լուսոյն մասին՝ և խաւար յարեմ · ընդ քաղցրութեան ճաշակ՝ օշինդր խառնեմ · ընդ կուտս բարեացն՝ չարիս հիւսեմ · ընդ կանգնելն՝ և կրկին գլորիմ։ Ողկիմ և ոչ պտղաբերիմ · ասեմ, և ոչ առնեմ · խոստանամ, և ոչ կատարեմ · ուխտեմ, և

ոչ վճարեմ։ Կարկառեմ, և անդրէն ամ-
փոփեմ․ ցուցանեմ, և ոչ ընծայեմ․ մեր-
ձեցուցանեմ, և ոչ մատուցանեմ։ Ի ճա-
րակել խոցուածոյս՝ անդրէն վիրաւորիմ․
'ի հաշտեցուցանելն՝ վերստին խռովեմ․
զուր հանդիսանամ, և իրաւամբք պարտա-
ւորիմ․ գրիմ, և իսկոյն եղծանիմ․ նաւեմ,
և 'ի գիծն թուլանամ․ սկսանիմ, և 'ի հան-
գիստն ոչ ժամանեմ։ Կարգիմ, և դարձ-
եալ սասանիմ․ լնանիմ, և կրկին հեղում․
շարունակիմ սատ, և անդ 'ի ստորևս հո-
սիմ․ բարգիմ, և անդէն տոչորիմ։ Հիմն
արկանեմ, և ոչ գլխաւորեմ․ սակաւ վաս-
տակիմ, և բիւրս վատնեմ․ դոյզն գան-
ձեմ, և անթիւս սպառեմ։ Օ այս խրա-
տեմ, և ես ինքն անփորձ եմ․ միշտ ուսա-
նիմ, և երբէք 'ի ճշմարտութի գիտութե
ոչ հասանեմ։ Օ՜ չիջեալ չարիսն՝ նոյն-
չափ արծարծեմ․ սուղ ինչ քաջալերիմ, և
առաւելապէս լքանիմ․ լարիմ, և խակ և խակ
առ նմին մեղկիմ․ զայս կարկատեմ, և
զայն պատառեմ․ խլեմ զեղիճն, և տա-
տասկ տնկեմ։ Ընդ ամբառնալն՝ և այսրէն
բեկրիմ․ մտեմ 'ի բոյնն աղաւնի, և ան-
տուստ ագռաւ ելանեմ․ գամ սակաւ մի
սպիտակ, և սրանամ դառնամ բնաւին սե-
ւացեալ․ ասեմ զիս քեզ դառնալ, և սպա-

Նովին նուիրիմ. ընդ յանդիման լինելն, և
Թիկունս դարձուցանեմ։ Մաքրիմ, և այլ
մրձոտիմ. լուանիմ, և նովին զազրանամ.
կերպարանիմ զդաւթին, և գործք զսա-
ւուղին կատարեմ. շրթամբք ճշմարտեմ,
և ստեմ երիկամամբք. աջով մատակարա-
րեմ, և ահեակ կողմամբս աւերեմ։ Ընդ
երկրագործութե՛ ցորենոյն՝ որոմն սեր-
մանեմ. 'ի բարձրագոյն իմաստիցն՝ վայր
իջեալ ես ինքն գտանիմ։ Հրեշտականամ
յերեսս, և 'ի խորհուրդս դիւանամ. 'ի
յոտս հաստատիմ, և 'ի միտս տատանիմ.
սուտ ձևանամ, և իրօք խոտորիմ. կեղծա-
ւորիմ արդար, և արդեամբք ամբարշտեմ։
Դասիմ 'ի պարս հեզոց, և ընդ այսս կա-
քաւեմ. 'ի մարդկանէ գովիմ, և 'ի տեսողէդ
պարսաւիմ. 'ի հողածնելոցս երանիմ, և
յորդւոցն լուսոյ աւաղիմ. հաճոյանամ
յետին ռամկին, և Թագաւորին մեծի
յաչաց ելանեմ։ Զատեանն դատաւորին
Թողեալ, խառնակրօնիցն աղերսեմ. հերք-
եալ 'ի վեհիցն, սոսկականացն սպրդիմ.
մարմնով արտաքուստ պճնիմ. և անձամբս
երփնիւ ճային ճանաչիմ. հպաւորիմ դաշն
հաստատել, և ուխտակորոյս արտաքս մեր-
ժիմ։ Այսօր մաքուր հոգեկիր, և վաղիւ
մոլի խելագար. զտէրունի պատուէրն

լքեալ, թելադրութե՛ օձին հետեւիմ. արխ-
անամ զօրապէս, և վատթարագոյնս ընկըր
կիմ. զծանրութի՛ աւուրն բառնամ, և՚ի
ժամ փորձուն անմասն ելանեմ. ՚ի բա-
ցուստ ձոռոմն խօսիմ, և ՚ի պատասխանա-
տուութե՛ն պահու պապանձեալ կարկիմ.
՚ի յելս արեւուն հարուստ երևիմ, և ընդ-
երեկս ունայն դեգերիմ: ՚Ի յաթոռս
ծերոց բազմեալ, և խելայեղեց կցորդիմ.
ննջեմ խեթիւ, և արհաւրօք զարհուրեալ
զարթնում: Զանդաստանս կամացս՝ չա-
րաչարս հերկեմ. փոյթ խնամով ՚ի չարիս.
միշտ անաւակ որդիս. անդարձ տարադըր-
եալս. անզղջական զաւածեալս. անմխի-
թար սրտմեալս. ինքնագրաւ դերեալս.
մահու և ապականութե՛ ծառայեալս. անո-
ղոքելի տանջեալս. անփրկելի մատնեցեալս.
անպատուաստելի հատուածեալս. անար-
ծարծելի շիջուցեալս. անկազդուրելի խոր
տակեալս. անհանդերձելի կործանեալս:
Լու եթէ պարտ է զսաստիկն սատանօր
սել անօրինեալս անձին նախատինս, ահա
գրեմ, գրեմ և ոչ անխայեմ ՚ի խուխս
նիւթեալ գեհենին: Ստացուածս նախան
ձու նորոյս ադամայ երկնայնոյ, որպէս և
կայենն առաջին՝ հնոյն և հողեղինին. որ
ունիմ զբնաւն սատուաւ ՚ի յանձին զնշա-

նակ ամբաստանութեա , ոչ զչնչոյս տուր-
եւառութի , այլ զբանիցս կշտամբութի ․
է ։ Ու արդ՝ ո՞ւր իցեն փրկութիքն , ուր
սկզբնահայրն հաւատոց՝ 'ի յուսահա-
տութեն վայրի՝ զանգթութեն իմ չարիս
կրկնէ ․ մեծն մարգարէից՝ քարամբք բա-
նից կոշկոծէ ․ որին բարեփառ՝ աշտէին
նիզակաւ՝ 'ի մահ սատակէ ․ պատկեր Ճըշ-
մարտին՝ ընդ աքարու համայնիւ ջնջէ ․
ա̃ծարեալն վեհից՝ յարագողացն վրիժուց
մատնէ ․ մարգարէածին տեսանօղն՝ ընդ
ամաղէկացւոյն առաջի ա̃ն սպանանէ ․
նախանձաւորն ա̃յ՝ երկնատեղաց բոցովք
վառանէ ․ ստուերին լրումն՝ և նորայս ըն-
կիղբն՝ հեծանոցին ընտրութեամբ հոսէ ․
պետն առաքելոցն՝ ընդ սափիրայի 'ի կենաց
զրաւէ ․ զարմանալին քննութե̃ հոգւոյն՝
բուրումն ինձ մահու՝ ընդ կենացն քա-
րոզ խառնէ ։ Արդ՝ անաչառք և ինձ կա-
Ճառք երջանկացն , և ուժգնութե̃ հրա-
մանի վերնոյն՝ որի սպառաղէնք ․ ընդ
Հրեշտակացն՝ և մարդիկ ․ ընդ տիեզերաց
երկրի՝ և տարերք ․ ընդ անզգայիցն՝ և
շարժողականք ․ որովք դատեալ միշտ լի-
նիմ տուժիւք լկանաց՝ յօրինակ և յիշա-
տակ սոսկալեացն ապագայից ․ իբր հողմով
փոթորկի ալեաց յաւէտ մրրկեալ կենացս

վստահութ՟ի , մինչ անկայուն 'ի հաստա-
տութեանց ։ Որ եթէ ոք իմաստութ՟է
'ի քննին առեալ խուզեսցէ զլուղակացն
բազմատեսիլ զանազանութիւն , զմնունս
փոքունս ընդ մեծամեծացն դասեալ , որ
առանց թուոյ և քանակութ՟ե համարոյ՝
թինդս առեալ անբաւ երամոց , եւան զե-
ւան սլանան 'ի մարմնիս ծովու , վկայեսցէ
և հաստատեսցէ ճշմարիտ լինել զասացե-
լոյս բանագրութիւն ։

Է ․ Եւ դու ինքն օրհնաբանեալ անմահ
թագաւոր՝ բարի երկնաւոր մարդասէր
ք՟ս , ո՟յ կենդանւոյ միածին որդի , հզօր
բա՛րձրեալ ա՛նքննին ա՛նճառ քա՛ւիչ ա՛հա-
ւոր , սաստեա՛ 'ի ձմեռն ամբոխեալ ալեաց
ոգւոյս ծփանաց ․ արձանացո՛ զծարաւս
մոլեգին շարժման սրտիս խռովութեան ․
ընդոտնեա՛ 'ի սանձս կապոյ երասանաց
ըմբռնման՝ զշնդեալ մտացս վայրագութ՟ի ։
Նոզեցի՛ խաղաղութիւն հրամանաւ մեծիդ-
ամենավարան բերոյս սասանման ․ սատակեա՛
խափանեա՛ զբազմագլխեան անդամս ուր-
ուականս գազանեաց ամօթոյս՝ երկրակեն
ցաղս հինից ։ Կրեսցե՛ս աղօթս մտամա-
տոյցս զայս նորընծայ առ ողորմադէրս
թախծագին ձայնի ողբերգակութ՟ե այսր
մատենի ։ Զա՛ն 'ի խորոց մահուս անդնդոց՝

չքնաղ ապրեցեալ ընդ մարգարէին փրկելոյ · ընկա՛լ զխոստովանութի՟ անձնադատ բանիս 'ի հօտ անուշից · շնորհեա՛ մխիթար դառնութեան վշտաց ուժգին հեծութե՟ յուսահատելոյս ։ Եւ քեզ ընդ հօր հոգւովդ սրբով փառք պատիւ և իշխանութիւն՝ յաւիտեանս · ամէն ։

---

Վերստին յաւելուած կրկին հեծութե՟՝ նորին հրակողի , առ նոյն աղերս մաղթանաց բանի ։ 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ՟ ։

## ԲԱՆ · ՀԲ

ա՟ · ԵՒ ահա ձե՛զ ասեմ ո՛վ եկեղեցիք միանձանց՝ և աշակերտութիք կրօնաստանաց , որք մերկամարմին մատանցձեռօք՝ առ ակնկալու՟ յուսոյն պարգևաց բարեացն անբաւից՝ այն զինուորեալք , որոց զայս սեղան հանդերձանաց խորտկաց բանից ընծայեցուցի , ընկալարո՛ւք զայս աւանդութի՟ խոստովանութե՟՝ 'ի շինուածփրկութե՟ հոգւոց ։ Ծաներո՛ւք սովիմք զմարմնոյս պարտութի՟ · յիշեցէ՛ք զմարգարէականն՝ ընդ առաքելականին առեալ մեզ 'ի խրատ , զի մի՛ պարծեսցի ամ՟ մարմին առաջի այ՟ , և զո՛չ ոք է արդարն և ո՛չ մի ։ Զտէրունականն մի՛ մոռանայք , 'ի կատա-

րածն իսկ պատուիրանին գոգջի՛ք զձեզ ծառայս անպիտանս. մի՛ եղիցի լինել ձեզ որսք խաբողին. զգուշացարո՛ւք և գրոյն, թէ կերակուրք նո՛ր ընտիրքն։ Քանզի և ես իսկ, որ զայս նուազութի մանաւոր պարզ ձեզ ջամբեցուցի, վկայեալ զանձնէ կամաւորական ստգտանք բիւր բամբասանաց՝ անբժշկական մեղանաց, 'ի սկզբնահայրն սկսեալ մինչև 'ի սպառումն ծննդոց նորա՝ կամայականն յանձնառութեամբ հասուցի եդի զիս ամենայնիդ պարտական չարեաց։

Ե. Լուայ յումեմնէ ոչ պարտաւորէ, և ո՛չ հաճեցայ, 'ի յասելն նո՛ր անյարմարապէս առ այն, որոյ առաջի ոչ է արդարանալ մարմնոյ երկրածնի, թէ ոչ երբէք շնացայ, ոչ պոռնկեցայ, և ոչ զաշխարհիս ինչ համբուրեցի ճաշակս մահու։ Այլ ո՛չ ընդհատ ինչ յանօրէնութէ. թողցէ՛ նմա տէր ած զայսոսիկ. թէև ճշմարտիւ իսկ գրեցաւ, ոչ ընթացաւ, որքան թէ գըթեաց, 'ի յասել զանյարմարն 'ի դիմաց ժողովրդեանն իսրայէլի բանիւ զաքարիայ, օրհնեալ տր, և մեծացաք, որ է փարիսեցւոյն ձայնի կերպարան։ Բայց ես քանզի գիտողին տյ մատնեալ եմ դատաստանի, որ զկիրս աներևութիցն մտաց ի՛

կշռուս եղեալ՝ համարի դատել զիս Նորօք ամենիրաւ հատուցմամբք, ո՛չ կերպարանեցայց տեսողին. ո՛չ կեղծաւորեցայց քննողին. ո՛չ սուտեցից զոչ գործեցեալսն նկատողին. ո՛չ խաբէութ՟բ ընդ միտ ինչ մտից մեծին. ո՛չ 'ի տեսիլ բարւոյ ցուփութեան՝ զչարս քողարկեցից. ո՛չ 'ի պատկեր ընտանի՝ զապիկարս երբէք յարգեցից. ո՛չ խենեշեցայց 'ի զարդ օտարոտի. ո՛չ պճնեցայց այլով պայծառութ՟բ. ո՛չ պաճուճանս յարմարեցից ազգեղութ՟ես գեղոյ։ Ո՛չ որք մեղաւոր իբրև զիս. ո՛չ որք անօրէն. ո՛չ որք ամբարիշտ. ո՛չ որք անիրաւ. ո՛չ որք չարագործ. ո՛չ որք վրիպեալ. ո՛չ որք սխալեալ. ո՛չ որք մոլեգնեալ. ո՛չ որք խարդախեալ. ո՛չ որք շաղախեալ. ո՛չ որք ամաչեցեալ. ո՛չ որք դատապարտեալ. ես միայն եմ, և այլ ո՛չ որք. ես ամենայնն, և յիս ամենեցուն։ Ո՛չ հեթանոսք, զի ո՛չ գիտէին. ո՛չ հրէայք, քանզի կուրացան. ո՛չ ադէտք և խառնիճաղանջք, քանզի յիմարք էին իմաստից։ Պետ վարժից կոչեցայ՝ յանձինս դատախազ. ռաբբի ռաբբի անուանեցայ, և զգովեստն առ ա՟ծ՝ եղծի. բարի ասացայ՝ առ եղկութեան ժառանգութ՟ի. ո՟ք վկայեցայ 'ի մարդկանէ, որ եմ անմաքուր առաջի ա՟յ. արդար դաւանեցայ՝ ա՟մ իրօք

ամբարիշտս․ հեշտացայ 'ի գովեստ մարդ-
կան, զի ծաղր եղէց յատենին քո․ յա-
ւաղանէ կոչեցայ արթուն, և ես 'ի քուն
մահու ննջեցի․ 'ի փրկութեն աւուր հսկօղ
յորջորջեցայ, բայց զզգաստութեանն աչս
կափուցի։ Ահա՛ դատաստան․ ահա՛ յան-
դիմանութի․ ահա՛ նոր կշտամբանք, և հին
դատապարտութի․ ահա՛ ամօթ դիմաց, և
տագնապ հոգւոյ․ ահա՛ խնդիրք փոքունց,
և կշիռք մեծամեծաց։

Է․ Ո՞վ դու միայն' տէր ամ մարդա-
սէր, անոխակալ և երկայնամիտ, համար-
եա՛ց մեղապարտս անձին' ընդ վերջին պար
տաւորութե աւուրն ահաւորի' զայս կսկը-
ծեցուցանօղ ինքնաբանական նախատինս։
Ո՞ր լուայց 'ի քէն զայսոսիկ' գըթած,
փոխանակ զի ես ինձէն անձինս գրեցի։
Արդ' բարձցե՛ս և վերացուսցե՛ս զպահ
պարտաւորութե կանոնիս' ընդ քեզ կա-
պելոյս տենջանօք հոգւոյս։ Հա՛ն զնախա-
տինս պատկառանաց խայտառակութեես․
ծածկեա՛ աջովդ կարողութե զորդեղ տե-
սակ մարմնոյս մերկութեան․ մատո՛ հան-
գստեան զթոպեալս ուժգին մեղացս բե-
ռամբք․ կարգեա՛ ինձ սահման հեռոց բա-
րութե' առ ելս կենացդ․ պահեա՛ յիշա-
տակ ինձ ողորմութեան' և զկնի մահու'

կեանք ամենեքին, օրհնեալ յերկինս, և
գովեալ յերկրի. բարեբանեալ միշտ յամի՝
յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վերստին յաւելուած կրկին հեծութե՝ Նորին Հըռ-
կողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի։ 'ի խօ-
րոց սրտից խօսք՝ ընդ այ։

## ԲԱՆ. ՀԳ

ա. Թագաւոր բարձրեալ հզօր ահա-
ւոր՝ օրհնեալդ միայն տր յս քս,
քո է փոխարկել յանակնկալս կենաց յու-
սահատութե զսասանկիչ անէծս՝ առ կե-
ցուցանօղ օրհնութիւնս. զպարսաւանս վհա-
տութե՝ առ զուարթացուցիչ գովութի.
ընդ ամօթոյն՝ համարձակութի. ընդ պատ-
կառանացն՝ պատիւ. ընդ տարագրութեն՝
յոյս բարութե. ընդ բաժանմանն՝ անկա-
լութի միութե. ընդ սպառնականացն բա-
նից՝ ողոքական սփոփանս. ընդ միանգամ
դատապարտութեն՝ կրկին ազատութի։
բ. Ողորմեա՛ տէ՛ր՝ մահու մեղապարտիս
յաւուր արձակման շնչոյս կենդանութե,
մինչ աչացս ողորմագին հայեցուածս 'ի
բարձունս կողկողեցի, զբազմարկածեան
ուղւոյն զանզերծ ընթացիցն զանփախչելին
ճանապարհ յաչս բերելով՝ մտացս տեսանե-

ամբ փառանկեալ · և 'ի յերգ բնակութե յարկիս նկատեալ յելիցն շաւիղ, թշուառացեալ կիսամեռութեամբ, դիմօք այլայլութե, տատանմամբ մատանցս, կարկամ հառաչմամբ, նուաղ հեծութբ՝ նրբական ձայնիւ, յոգի թախծութե յոքնամասնեայ տարակուսանաց՝ 'ի խորոցս աներևութից զգործեցելոցս ողբալով հառաչեմ: Կարօղ ես բարերգութ՝ և անդ հրաշագործել յաւէտ զօրեղութբ՝ ասելով, թէ ո՛չ եղիցիր յոգւոյդ խորտակմանէ · և կամ թողեալ լեալին քեզ մեղանք քո · կամ թէ երթ 'ի խաղաղութի սրբեալ 'ի մեղաց: Իսկ զոր յայնժամու ոչ ժամանեցից պաղատել, այսօր ընկալցիս մարդասիրապէս, ո՜վ երկայնամիտ բազմաշնորհ ամենակեցոյց: Զորժամ՝ որ այժմս բանապանծայծ խորխտաձայն սիգացօղ բարձրապարանոց՝ անկեալ դնիմ դի անկենդան · կարկեալ 'ի խօսից · կաշկանդեալ ձեռօք · լքեալ անդամօք · խփեալ շրթամբք · կափուցեալ աչօք: Տախտակ անշարժուն · կոճղ կիսայրեաց · արձան անդղայ · պատկեր անբարբառ · դդութի անշունչ · ողորմելի տեսիլ · աշխարհելի կերպարան · ողբալի օրինակ · եղկելի դէմք · արտասուելի նմանութ · լռեցեալ լեզու · ցամաքեալ խոտ · թօթափեալ

ծաղիկ • ծորեալ գեղ • շիջեալ ղամբար • դատարկ կոկորդ • խոտանեցեալ սիրտ • աղխեալ աղդարան • սպառեալ աղբիւր • թալկացեալ մարմին • ժողխեալ ոսկրայն • քակտեալ տաղաւար • կոտորեալ ոտք • բաժանեալ յօդք • հատեալ ծառ • ողոցեալ որմա • թողեալ տուն • հնձեալ արտ • ստորախուզեալ բոյս • օտարացեալ բարեկամ • մոռացեալ պահեստ • թաղեալ գարշութի • մերժեալ սաեղն • բարձեալ խէթ • անարգեալ կմախք, և իբր զանպիտան տառոն կոխեալ։ Կարօտեալ այլոց մաղթանաց, որք զհաւատոց թշուառիս՝ ձայնիւնուագեալ աղերս հառաչման, ցօղով արտասուաց՝ բարեբարիդ գթութե՛ ՚ի բարձունս տարածանեն։ Ո՛վ առ քեզ դարձն յեղանակեն յարգահատելով, զոր օրհնեմ• զնշան խաչիդ փրկութե՛, զոր երկրպագեմ• զյարութե՛ն ճշմարտութի, որում հաւատամ• զփառացդ քո յայտնութի, զոր փառաւորեմ• զդատաստանիդ ահաւորութի, զոր խոստովանիմ• զբանիցդ յանդիմանութիւն, յորմէ զարհուրիմ• զհոգւոյդ սրյ ինձ ուղեկցութի, զոր պաշտեմ• զծմանդտեառնագրութիւն, զոր և համբուրեմ• զթագաւորելն ընդ քեզ՝ տէ՛ր յս, որում պաղատիմ։ Արդ լքաւ՝ մերժեցաւ՝ բար-

ձաւ՝ տրոհեցաւ՝ փախեաւ՝ սրացաւ՝ տե-
ղի ետ կցորդութ̃ի զուգութ̃ե կենցաղոյս
կենդանութեան . և յուսոյդ որ ՚ի քէն
պարգև՝ մնացական և անջնջական յիշա-
տակարան պահեցաւ ։

Դ. Տէ՛ս ողորմութեամբ ՚ի տարակուսանս
վտանգելոյս՝ միայն բարեգութ փառա-
ւորեալ որդի ա̃յ , քաւել՝ բժշկել՝ կենա-
գործել՝ պաշտպանել՝ նորոգել՝ նկարել՝
կանգնել՝ հաստատել՝ վերստին ստեղծա-
գործել յերջանիկն անարատութ̃ի . քո՛ է
կարողութ̃ի , քո՛ է փրկութ̃ի , քո՛ ողոր-
մութ̃ի . չի՛ք քո անկարութ̃ի , այլ ամենևին
զօրութ̃ի , բարձրութ̃ի , իշխանութ̃ի , ան-
վախճան թագաւորութ̃ի , իսկութ̃ի , ինք-
նութիւն , ամենատեղի բացարձակութ̃ի ,
բարերարութ̃ի , լուսաւորութ̃ի . փառա-
ւորեալ տիրապէս , անպակաս և անյաւել-
ուած , խնկեալ խորհրդով անթարգմա-
նելեաւ յերրորդութ̃եդ սրբում , գոհա-
բանեալ յաւէտ և ես առ սմին ՚ի նոյն
պաշտօն հաւասարութ̃ե միապատիւ զու-
գականութեան , երէկ և այսօր՝ և յաւի-
տենից յաւիտեանս . ամէն ։

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հըա-կողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի, 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ Աստուծոյ:

## ԲԱՆ . ՀԴ

ա. Տ'էրդ երկնաւոր՝ Տէր բոլորեցուն, ու ամենայն բան՝ յամենայնի միշտ երկայնամիտ, Աստուծոյ կենդանւոյ անքննելին որդի: Ահա անդ է ողորմելն խիկապես, յորում հատու անհնարութեն վաստակոյն. անդ է բարեգործելն, յորում տեսութի իմաստից խափանեցաւ. յայնմ ժամու է մարդասիրելն, յորում տկարութեանն վտանգ-պաշարեալ տիրեաց ներքոյ եւ արտաքոյ: Անդամօր է բժշկութեն աստուածային քո ձեռինդ, յորժամ ընաւ անդամոցն տեղի եա կենդանութեն. այն վայր է այցելութե, յորում ելք հնարից ոչ գոյ: Այն է քո մեծութիւն, յորժամ զյուսահատութե վերն ողջացուցանես. այն է հարազատ քումդ ազգակցութեն, եթէ յանակնկալն ժամու արտեսատուորեսցես փրկութիւն: Այն է հանդիսարան քում յաղթանակի, եթէ զվտակեալն մուտս կենաց 'ի սպառուածն շնչոյս՝ բացցես. այն են քո շնորհք վայելչականք, եթէ զչարեացս խնոյ մուտց եղ՝ զբարեացդ քո յիշեսցես: Յայնժամ ես անոխակալ, եթէ ապախտաւորիս՝ ընդ-

երախտաւորացն խնամարկեցես . 'ի սոսին ծանեայ գիտացից, եթէ նայեցար 'ի նուէր բանիս՝ նախնի գթութեդ, եթէ զսովորութիւն չարեացս բարձցես :

Է . Յաղագս այսորիկ հիւսին բանք, և եղանակին նուագերգութիւնք, յորժամ տերն բարի՝ չարն ծառայի՝ զբարեգործացն պարգևեացէ . որ մինչ իրաւամբք մնացէ բանտի, նա յարքայական ապարանս զնա հանգուցէ . մինչ հրաւիրեալ է 'ի գուբ աղմոյ, նա 'ի բազմականս ամենապատիկս դահուց գրգեցուցանիցէ . մինչ բրելոյ զաչսն դիտեացէ, նա 'ի բարձրունի բերկրութեն հայեցուցանիցէ . մինչ ծայրատութեն մտացն սպառէ . նա մտանի համարձակութեն մտացուցանիցէ . մինչ հայի հարուածոց գանից, նա գթոց գիրկս արկանիցէ . մինչ պատրաստեալ յուսայ կորստեան, նա երևելի տեսողաց բազմաց առնիցէ . մինչ ակն ունի սատակման մահու, նա ընդ կենացն և փառս ընծայեցուսցէ . մինչ համակն գլխոյն նայեցի, նա զնոյն պսակաւ պայծառացուցանիցէ :

Այս պտուղք օրհնութեն՝ գթած, ըսքանչելարմատ քում շառաւիղաց . այս արդասիք կենաց՝ արարչականդ քո հրամանաց . այս իղձք խորհրդոյ՝ խոստովանեալդ

քո տենչանաց · այս նշոյլք լուսոյ՝ ամե-
նասփիւռ ճառագայթից · այս ախորժու-
թիւն ճաշակաց՝ բարերանեալդ քո քաղց-
րութեան ։

Դ · Բա՛ն միայնոց են այսոքիկ տէ՛ր · 'ի քէն
ազդեցաւ գրել ինձ զոսին · ահա՛ զքայդ-
ջատուկ աղերս աղաչեմ՝ օ՛րհնեալ , 'ի
քոյոց այտի պարգևեալ շնորհեա՛ · բա՛ց
տէ՛ր զգանձս քո բարիս , ըստ աղերսանաց
տուակին ։ Մ՛ի խառնեսցես 'ի համբարս
բարեացդ քոյ՝ 'ի չարեացն իմոց · մի՛ շտե-
մարանեսցես զատելին քո՝ որ են ոխու-
թիւնք և ցասմունք , ընդ սիրելին քո՝ որ
են գթութիւնք և ողորմութիւնք · մի՛ պահես-
ցես 'ի ստացուածս քո պաշտելին՝ զանա-
խորժելին քո՝ որ են մթութիւնք և դա-
ժանութիւնք , և զիմ՛ ընտանելիքն՝ որ են մեղք
և թշուառութիւնք ։ Մ՛ի գրեսցես աջովդ
օրհնութեան 'ի մատենիդ կենաց՝ զմուրհակ
պարտուց իմոցս անիծից · այլ զանհնարա-
ւորսն ինձ համարեալս՝ մեծացուսցե՛ս կըր
կին տուել զանուն քո տէ՛ր՝ 'ի նոսին ,
ցուցանել զդոյն ինձ դիւրինս և հեշտա-
կանագոյնս ։ Շա՛տ են իմ պարտիքս և
անդր քան զթիւ · այլ ո՛չ այնքան հրաշալիք
իբրև զքո ողորմութիւդ · բազու՛մ են մե-
ղանքս , այլ յաւէտ են նուազեալ առաջի

քոյդ ներողութե՟ն · յաճա՛խ են չարութի՟ւքս ,
այլ յաղթակա՛ն են համայնից՝ հրը՛ղոր ա-
մենակալ՝ քոյդ մարդասիրութի՟ւ · ի՛նձ են
անհամար՝ խղճյս անձին բիծք , այլ քեզ՝
յոյժ գրաւեալ են ընդ սահմանաւ ։ Ո՛չ են
այնքան զօրաւորք առ կենդանութի՟՝ զենք
մեղանաց պատկառեցելոյս պաղաբերութե՟ ,
որքան յիշատակ մահու կենդանւոյդ՝ առ
վանումն կործանողին բռնութե՟ ։ Ո՛չինչ
աղդեացէ փոքր խաւար՝ աւուրդ ո՟յ ·
զխա՛ւրդ բաւեսցէ դոյզն ինչ աղջամուղջ՝
մեծիդ ճառագայթից · զխա՛ւրդ համբարձցի
կշռեսցի ընդ խաչի քո կրից՝ խակութիւն
հեշտութե՟՝ մարմնոյս տկարութե՟ ։ Ո՛չինչ
երեւեսցի յաչս ամենակալիդ քո առատու-
թեան՝ կոյտք մեղանաց իմ տխեղերեաց ·
ահա կոշտ մի հողոյ դիւրափխրելի՝ 'ի
կարծրութէ բախման վանեցեալ , իբր ըղ-
պջակ անձրեւոյ բաղմողեղ հոսմամբ քո
կամացդ՝ չքացեալ պայթեալ անդստին ։
Ո՛չինչ պիտոյ են քում զօրութե՟դ ամե-
նահնարդ կարողութե՟՝ ժամանակաց առա-
ւելութի՟՝ առ յանցուածոց իմոց քաւու՟թ ։
Ո՛չ քթթել մի ական , ո՛չ խուն մի տեսու՟թ
ածանցական , ո՛չ սակաւ մի նայեցուած
փոյլական , ո՛չ կխամմանեալ յամրութի՟ ,
ո՛չ փութացելոց ոտից յեղեղուա՟ն , ո՛չ յե-

լից բարձրութենէ միոյ կանգնոյ կաթի ակնունելոյ, ոչ գիծ մի չափոյ՝ մտաց հետևեցելոյ, ոչ նշուշից արագութիւն, ոչ շնչոյ տուրևառութ՟ի, ոչ ինչ յայսմ յանգոյ և յանտպաւորական նմանութ՟է անձև օրինակաց յաւէտ անկայից՝ այնքան առժամայնք, կամ հարևանցիկք, որքան եղծմունք, ցնդմունք և հալմունք մեղացս սառնամանեաց պահեստի՝ քումդ զօրու՟ե՝ ա՟ծ ամենայնի տէր յ՟ս ք՟ս որդի անքննին կենդանւոյդ հ՟ր։ Որ տաս պարգևես արևքաղցրութ՟ե՝ չարաց ընդ բարիս. և անձրևես երկրպագանչիւրոցն անաչառապէս։ Աշուես սահմանես խրատամբք՝ և զվտանգս կրիցն հաւասարաբար. որոց մեծ է հանգիստն առ ակնկալութ՟ի պարգևին, փոքր խթանաւ փորձութ՟ե՝ զստակաւութ՟ի պարտուցն սաստէն վճարես. իսկ որ զերկիր ընտրեցին, ներես ողորմութ՟բ, տալով և սոցա զարման ընդ նոցա՝ միշտ առ քեզ դարձին սպասես։ Եւ քեզ փառք ամենազօրիդ՝ առ ա՟մ հրաշագործութ՟ի բարեխնամօղ երկայնմտութեան, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

Վերստին յաւելուած կրկին հեծութե՝ Նորին հըռ-կողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի։ 'Ի խա-րոց սրտից խօսք՝ ընդ ա՜յ։

## ԲԱՆ · ՀԵ

Ա. Եւ արդ՝ ընկղմեալ ղմղջեալ եւ խա-պառ ծածկեալ 'ի յանձառութէ տառապելութե՝ բազմամասնեայ յաճախու-թեան մեծիդ երախտեաց, որ ամենաառատ լումամբ անընդատելեաւ՝ յաջմէ եւ յահեկէ՝ 'ի դիմաց եւ 'ի թիկանց համբարեալ կան անբաւութիւնք։

Դարձեալ առ նմին կրկնապատիկ երկրորդութիւն՝ ա՜ծային հոգւոյն աղերսեալ, որ ինչ յառաջինոցն սահմանեցաւ աւանդութի՝ առ ա՜ծ լուսաւորութի եկեղեցւոյ դաւանութեան՝ մեկնապէս եդեալ աս-տանօր։ Եւ որ առ անշնչականս նիւթեղէն՝ ցու-ցանի երանաւոր կերպադրութի անճառելի։

Բ. Մատուցանեմ ընծայեմ դարձեալ աստանօր աւանդ գովեստի դա-ւանման ճշմարտականի։ Ո՜վ է ոք երբեմն հերձուածականին չարափառութե՝ ամե-նապատիրն խաբէութե՝ նենգողին կար-թիւն հատուածեալ 'ի բաց հերքեցայ՝ ել-եալ 'ի դրախտէն, արդ միաւորականաւս այսու ուղիղ ամբծութեամբ՝ 'ի յաւանդ-խակապէս շնորհի՝ անդրէն միասնգամ

համբարձեալ սովիմբ՝ ՚ի թուխս թևոց լու-
սոյ, ահա յերկինս ժամանեցից հետևեալ։
Է. Իսկ քանզի յարգանդէն՝ յորում
յղացայ հոգևոր երկամբք ծնիցեալ, զմեծ
և զերջանիկ դշխոյ անարատ՝ ամենից կու-
սից խնկուհի՝ զպանծալի մայրն իմ գո-
վելի՝ պարտ է կանոնաւ սահմանի բանի
արձանագրել յայսմ մատենի. զի ծանիցի
ցուցցի՝ և այլոց ևս ապագայից ազգաց
պատմեսցի ողքանութի փառաց խնկելոյն՝
արժանաւորապէս պաշտամամբ պատուեալ՝
իբր մաքուր մարմին՝ ընդ գլխոյ մարդե-
ղութեան բանին ՚նոյ, ՚ի յիշատակ Ձաւիս
հաւատոյ՝ երրորդութե՛ն, դաւանութե։
Իւ արդ՝ ՚ի յայս օրինակ հոգենկար պատ-
կերի բանի, որ զխորանէս լուսոյ յարմա-
րի, ընկա՛լ զիս՝ գլ՛թած օրհնեալ, քա-
ւեցեալ և սրբեալ ՚ի սմին։ Զա՛ն սովաւ ՚ի
հոգւոյս զնախատինս մեղացս. տնմեղս և
անբիծս ընդ հովանեաւ սորին բաղմեցո.
յաւէ՛լ զոկարս ՚ի տունն դաւթի, և ան-
տուստ փոխեալ ՚ի տունդ ՚նոյ, ըստ մարգա-
րէին ձայնի՝ որ ՚ի քեզ՝ յխուս ակնարկի։
Ո՛չ սոսկ զմօրիցն, և մի՛ անօգուտ զելիցն
հետևութի արասցես. մի՛ զհաւատոյս ջեր-
մութի՝ ցուրտ համարեսցիս, և մի՛ զհամ-
բոյր ողջունիս՝ անկարգ ինչ վարկանիցիս.

մի՛ զպաշտօնն՝ ապաշնորհ գրեսցես, և մի՛ զերկրպագութիւն՝ անխորհուրդ լքցես . մի՛ անպտուղ լիցի տեսականութի պատկերին, և մի՛ աննշոյլ կերպարանին սքանչելութի . մի՛ անհուր ողջակիզին սպանդ-մեացի, և մի՛ պատարագ ուխտի այս Ճառի՝ արտաքոյ ցրեսցի . մի՛ Ճաշակդ լուսոյ՝ ինձ մահու լիցի, և մի՛ բաժակ քո կողեցդ արեան՝ 'ի դատապարտութի եղիցի :

Դ . Աղաչեմ զքեզ՝ տէ՛ր Յս մեր յէութենէդ, որով զգիտութի հօր քո և հոգւոյդ սրբոյ ճաշակեալ ծանեաք . քանզի 'ի քէն խսկ վարդապետեալ զամենապարգև կարգս եկեղեցւոյ, և'ի սմին աղօթանուէր լուսարան կենաց փրկութե բարեաց, տարածեալ զսիրտս՝ ձեռաց համբարձմամբ՝ զայս կնդրուկ բանի ընծայողիդ 'ի սմա՝ տիրողիդ բնաւից երեքսրբենիդ մատուցեալ, յաւէժ ընծայեցուցանեմք այսու բարբառով բարեշնորհութեան :

Յաղ որ 'ի Նիկիայն սահմանեցաւ բան, այլ իմն խորհրդածութիւն ածայլն աւանդութե :

Ե . Փառաւորեմք վերաձայնեալ նուագօք օրհնութե երգոց՝ 'ի հաւատ պաշտաման բանի՝ զբարեհրաման պատճառըն եղելոց՝ զերրորդութիւն անսկիզբն՝

անհամեմատ բարձրութեամբ՝ անհասա-
կան խորհրդոց և անըմբռնելի իմաստից,
անզննելի զգայութեց և անբերելի եղե-
լոց. քանակութի վերնականն երկնի, և
անսահման ներքնոյին խորոց. լրութիւն
սպառմանց, և նախադրութի սկզբանց.
մի՝ յերից անշփոթ կերպից, և երիս՝ միոյ
անհատուածելի իսկութեց. ՚ի վեր քան
զմտաց անարգելութիւն՝ յարաձգեալ ամ
ուրեք բովանդակ։ Անփոփոխ բարի. ան-
սասանելի ուղղութի. անխառն կերպարան
սիրոյ. մեծութի անյաջորդ. բարձրութի
անխոնարհելի. անվատանելի տեսականութի.
բարերարութի աննուազելի. կամք կայուն.
հրաման կենդանի. ակնարկութի փրկչա-
կան. երանութի ճշմարիտ. ակնկալութի
հաւաստի. խոստումն անստելի. աւանդ-
արգասաւոր. ստոյգ աւետիս. վերամբար-
ձութիւն անձեռնարկելի։

Դ. Մի հայր՝ միոյնոյ որդւոյ՝ միական
հոգւոյն պատուեալ. ամենահարուստ բա-
րութբ՝ ամենեւին ունայն ՚ի չարէ. օրհ-
նաձայն գոհաբանութբ՝ անքննին ներ-
բողիւ գովեալ։

Ե. Մին բարձրեալ աչաւոր անուն՝ հա-
մապատիւն կցորդութեանց, անպատումն
ազգականութեց, եռալուսեանն զուգակ-

ցութեանց, անյաւելուածն լրականուե՟ց, ինքնիշխան կամաւորութ՟բ պատուասիրեալ առ հայրն հանգունատիպ՝ գործակցութ՟բ հոգւոյն սրբութե՟՝ խոնարհեալ իջեալ 'ի յերկնից, աննուազ գոլով յընտանի փառացն, հաճեցաւ մտանել յարգանդ մայրենի ա՟ծածին կուսին մաքրութեան. յորում աճեցոյց զբոյսն օրհնութեան՝ 'ի լուսասահման անդաստանին անարատութե՟. ընդ ամե՟նակատարն էութե՟ համանեալ յանանջրպետ միակութի՟, թափանցական խառնութ՟բ յա՟ծութե՟ն ոգի բաղկացոյց պդյութի՟ շնչյս հրաշալէս: Որով անստամբակելի երասանաւ սանձաց կրթութե՟՝ զստահակութի՟ս իմ հանդարտեցոյց. և կամաւ ընծայեալ խաչին՝ ամբարձաւ ծաղիկն պտղոյն կենաց՝ 'ի ծայրս լրութե՟ անմահականն անկոյ. 'ի մահ վիրաւորեցաւ՝ ա՟ծութե՟ն անընդմիջելի 'ի մարատէրն մարմնոյ, որով կենսացոյց զգործին պարտեաց, արարչութե՟ն խնութե՟՝ 'ի նմին յաւէտ անբաժանօրէն ընդ նիւթական մարմնոյն վշտացեալ: Իջեալ 'ի վայրս խաւարային դժոխոց, եհան զկապուտն իւրաստեղծ 'ի կապանաց օձտողին. և իբր 'ի նիրհմանէ քնոյ զարթուցեալ, յինքն նհանջեալ զդիմեցուսն մահու,

կանգնեցաւ կենդանացաւ ա՟ծապէս՝ եղեալ 'ի յերկրէ հացն կենաց և հովիւն հօտից բանաւորականաց ։ Հաւատարիմ եղեալ յաշխարհի · և երևեցեալ նոյնութ՟բ՝ ամենևին աննուազելի , որ՟պ եկն համոյն , և համբարձաւ բովանդակ · բազմեցաւ նըստաւ 'ի գերունակն գահոյս՝ նախնականին պարզութե՟՝ արարչական փառաւորութ՟բ ։ Զոր խոստովանիմք ա՟ծ բարերար և ա՟ր բոլորից · որ դատի զա՟մ երկիր արդար ընտրութեամբ յաւուրն մեծի · որ ինքն է սկիզբն՝ և ինքն կատարած · նոյն առաջին՝ և նոյն առյապայ , անպակաս բովանդակութեամբ թագաւորեալ 'ի լոյս անմատոյց ։

Է · Օրհնաբանեմք ընդ հօր և որդւոյ՝ և զանբաժանելի բղխումն՝ նոցին փառակից հոգւոյն ա՟ծութե ։ Որ ստեղծ զընտուս և կենդանածնէ զա՟մ · որ անդստին իսկ 'ի բնէ համապարփակ մթութե աշխարհակալն միգի՝ շրջէր նկարէր և կերպարանէր ամենունակ ջուրբքն անբաւութե երկրատարածն ծովու՝ 'ի կատարումն արդեան խորհրդոյս՝ զի՟բ աւազանն լուսոյ ։ Նախ արար , և այժմ գործէ · գոյացոյց , և միշտ կատարէ՝ արուեստս , սքանչելիս , նախատեսութիւնս սրբասնելոց , ազդմունս

ա՟ծօրէնս, զօրութ՟իս զարմանաւորս, մարգարէս, առաքեալս, վարդապետս՝ վարժօղս կրթութ՟ե հանճարոյ ։ Սրբարարն մատուցման արեանն քո՟՝ յարդարեաց · քաջութ՟իս անձանց՝ առողջութ՟իս մարմնոց՝ ըստ նմանութ՟ե քո՟՝ ողորմութ՟ե հրամայեաց ։ Մկրտեաց և գեր քան զջուր, ինքեան միայն բաւականութ՟ե՝ նորոգեաց լուսաւորեաց · հանապազ նովին բարեգործութ՟ե զօրանայ ։ Վկայեաց միածնին ա՟ծութեանն՝ 'ի հոսանսն յորդանանու · օրինակաւ տեսութ՟ե ամպոյ՝ ցուցաւ ձայնիւ հօր 'ի լերինն Թափորական ։ 'Ի նոյն տիպ նմանութ՟ե՝ հովանի եղև յակոբեան տոհմին՝ 'ի յելսն եգիպտոսի · յուղեգնացութ՟ի զօրավարութ՟են մովսիսի՝ հողմով սաստկութ՟ե՝ զփարաւոն ընկղմեաց ։ Քահանայս կատարագործէ · իմաստունս կազմէ · թագաւորս զօրացուցանէ · քաւութ՟իս ընձեռէ · կեանս շնորհէ մահացելոց՝ 'ի նորոգութ՟ի յարութ՟են ։ Նոյն ինքն է օծումն մարդացելոյն ա՟յ · մշտնջենաւոր հաւասարութ՟ե ընդ հօր երկրպագեալ՝ 'ի պատիւ մեծութ՟ե որդւոյ · անսահման փառաւորութ՟ե օրհնեալ յաւիտեանս · ամէն ։

Նորին ասացեալ 'ի խորհուրդ սրբոյ եկեղեցւոյ, ընդդէմ պիղծ աղանդաւորացն Թոնդրակեցւոց, նոր մանիքեցւոց։

Թ. Դաւանեմք 'ի հաւատ ուղիղ և անխոտորնակ ամբծութե̃՝ համբուրիւ շրթանց ողջունեալ զկառուցեալս խորան յանշնչական արձանաց՝ ա̃ծային բնակութե̃ եկեղեցւոյս շինուածոյ։ Որ գերազանց գտաւ և երկնի ամենազարդ բարձրութե̃. որ 'ի նոցին խակ յառաջբերականացն դասուց հիմնեցաւ, յաշակերտաց վերնոյն խնկեցաւ, 'ի սպասաւորաց բանին պաշտեցաւ։ Ակիզբն առեալ կենացս այս գանձու՝ 'ի վերնայարկն սրահէ, խորհրդակատարն վայրէ, զոր հոգին ա̃յ լցոյց, փայլեցուցեալ 'ի նմա զօրութի̃՝ յաւուր մեծի պենտակոստէին. նախ զտունն բարետեսիլ՝ յօրինակ սրբութե̃ կատարման շնորհի այսր եկեղեցւոյ կանխամեծար առաւելութե̃, յորում ապա և 'ի նմին բնակչացն՝ տուաւ լուսանորոգ բարբառու̃ի։ Ուստի արիւն հզօրին ա̃յ բաշխեալ մատուցանի՝ յաւէտ քան զհաբելին մահու դուժարկու, մեծաւ բարբառով ձայնի բերկրութե̃՝ կենդանութի̃ անմահութե̃ 'ի սմա ազդելով։ Քանզի ոչ է կար զօրութեան ուրուք ընդ երկնաւ յանդիման արեգակե

կան՝ 'ի սպասաւորութի խորհրդոյ այսր ահաւորութե ձեռնարկել, եթէ ոչ ընդ թեւօք սորին պահեսցի. նա զի ոչ երկնիւք բաւականանայ այս նուէր տրունի մարմնոյ, եթէ ոչ զայս ձեղուն օրհնութեան՝ ծածկոյթ ունիցի. վս զի մահու անիծիւք հերքի այր ըստ օրինին, որ արտաքոյ խորանի այս վկայուե՝ զածային պատարագն մատուցանէ. մանաւանդ զի պարտաւոր արեան կոչեսցի, որ ոչ զանձինն օրինակ արիւն՝ յայս նուիրան ընծայեցուսցէ: Ա՛ի՝ 'ի սմա լուացումն 'ի մահն քի, զի մի յանդգնաս անարգել ածութին՝ 'ի ծանուցելումն զնախնին կրեսցէ: Ա՛ի ձեռնադրութի 'ի պատիւ օծութե լուսոյն, զի մի յամբծութին խաբէութի խառնեսցի: Ա՛ի և շնորհօք, քան թէ ապաշխարութ՝ քաւութի, զի մի ճշմարտութին կերպարանօք խորամանկեսցի. Ա՛ի յընտրութին ապառնի՝ հաւատ, զի մի սպառնալիք հատուցմանն՝ զոյգս ինչ օտար համբաւոյ գրեսցի: Ա՛ի երկաքանչիւրոց գթութեց մերոց իրաւամբք կշտամբութի, զի մի կիսամանեսցի առ մարդն ներքին և առ արտաքին՝ չարի և կամ բարւոյ փոխատրութին՝ կարծիցի յանմահ զօրութի արքայական որդեգրութեն, զի ընդելութը երկ-

րայնովս՝ առաւելութիւն վերնումն թագա-
ւորութեան յայտնապէս ճշմարտեսցի։ Ա՛ն
յոյս կենդանութեան առ անեղծութիւն որոց,
զի աներկեւանութիւն խոստացելոյն՝ ՚ի միտս
ունկնդրացն ծանուցեալ հաւատասցի։

Ժ. Այս դշխոյ պաշտելի՝ անշնչական եկե-
ղեցի՝ տայ կեանս, և մահու իշխէ, ըստ
օրինակի ադամեան պտղոյն յարմարապէս
ճաշակելի․ գերագանց քան զբանականս՝
յանշնչութեան հրաշագործէ․ մինչ զի կա-
տարումն ընձեռէ և նորոգ հաստատէ,
վերստին նկարեալ ՚ի մեզ զկերպարանն
փառաց լուսոյ։ Գրեալ ևս է տեսակ մե-
ծութեան վերնումն կամարին՝ սկզբնաւոր յա-
ռաջակառոյց քան զբնակիչս հոգեղինացն
՚ի նմին զօրութեանց։ Նոր իմն ընծայէ թուխս
մարմնոց՝ ընդ թեթևութիւն հոգւոց, պատ-
ուականին հարստութեամբ՝ զանարգն յար-
գաւորեալ։ Ո՛չ ինքնակիր մեղօք զագրա-
նայ, եթէ ոչ՝ ՚ի մարդոց չարաց, և կամ
անհաւատից կոխիցի։ Տիպ իմն է զարմա-
նաւոր՝ յաղթող իմաստից մերս տեսութեանց․
անբանն ՚ի բանաւորէն կառուցեալ, նմին
օժանդակեալ՝ իբր վեհագոյնն յաւէտ նը-
ւաստի։ Մեծ է քան զմարդ, որքան ըստ
բեցելոյն մոխրի՝ ցուցն յաղթողական․
առաւել քան զբանաւոր, որքան զհա-

րոյն՝ գաւազանն խորհրդական ծաղկեց-
եալ․ գերազանց քան զմտաւոր, որչափ
քան զեղխաս և զեղխէոս՝ գետահերձ մաշ-
կեակն սքանչելահրաշ՝ փայլեալ արուես-
տիւ։ Օգնութիւն պարգևէ կրկին ամենա
կատար սրբանեալ ձեռաց՝ մաքրաբար,
քան թէ զինապէս․ մարմին նիւթական՝
քարի և հողոյ դոյակից, հարազատ զգայա
կանաց և սրբոց։ Իբր զվէմն անմահ կեն-
դանի՝ ՚ի կործանումն է և ՚ի կանգնումն․
ոմն զդատաւորն ամենից հոգւոց՝ հանդի-
սանայ հրաշապէս աղդմամբ՝ յանէծս և
յօրհնութիւնս․ իբրև տեսող աներևութից՝
զոմն հրապարակէ, և զոմն տածէ․ տա-
խիքն կոչէ գրեալ յանուանէ՝ իբր զտի-
րօղ հրամանատար էիցս։ Իբր զեաւն յա-
ւիտենական՝ անհարուածելի է ՚ի դիմա-
մարտից․ ըմբռնէ զհոգևորս՝ իբր զհնա-
րաւորութի մեծին արուեստի․ անմեղս և
անվրիպունս՝ ըստ քի հետոցն ընթանայ․
բարձր ձոխութեամբ անպատկառաբար
համարձակապէս՝ զօրէն գովելոյ գլուխ
ամբառնայ։

ԺԱ․ Ո՛րքան մեծ ունի սրբութի, մինչ
զի զորս ըստ պատկերի այ եղեն, կանոնա-
խարէ։ Յետ յոգունց ընտրութեց փոր-
ձից՝ թէ համարձակեսցի մարդ ոք սխալ-

եալ՝ 'ի գաւիթս նորին մտանել՝ ո՛չ պղծի . այլ ընդ անպատրաստից թերութեանց դըժուարի . ո՛չ նղովի , այլ տեղի տայ ոչ գիտողացն զշնորհին զչափ . ո՛չ լքանի ինքեամբ՝ պարտաւոր իւրոյն գտեալ , այլ 'ի մերոց գործոց խրթնանայ . ո՛չ թողացուցանէ երկիցս մատչել յըմբռնումն ոտիցն կենդանատուաց , ըստ տիրական անճառ խորհըրդոյն . ո՛չ կրկին յաւուր՝ զնոյն ցուցանէ , զի մի՛ անընտրաբար՝ նուիրանն խայտառակեսցի : Աջակցէ կարեաց զօրաւոր՝ իբր անախտակիր ապականութեանց՝ որ 'ի մեղ շարժմանց . առանց բարբառոյ տիրապէս հրամանաւ դատի :

ԺԷ . Սաղի և տապան իմն է մաքրական , կրկին երջանկական , 'ի հեղձմանէ կենցաղոյս ալեաց պահապան : Ո՛չ բազմօք անբանիւք գազանաց դասուք՝ և սակաւ մարդկամբ , այլ ընդ երկրայնոցս և զվերինսն յինքն հաւաքէ . ո՛չ յալիս խռովութեան բերի , այլ 'ի բարձրութին երկնի համբառնայ : Իբր զաշակերտ հրահանգեալ հոգւոյն նոյ՝ փախչի 'ի նենգութէ ո՛չ 'ի բողոք մահու՝ մարմնոյ հարուածոց , այլ 'ի կենացն աւետիս՝ ըմբռնեալ ածէ . ո՛չ նոյն ձեռնարկեալ գործի , այլ հաստողին հրամանաւ շինի . ո՛չ մոլեալ ընդ բեռելեալ ,

այլ միածինն ա՟յ՝ հոգւովն սրբով զնա հանդերձէ . ոչ յարաշարժ հանապազափոխ , այլ մշտակառոյց հիմամբ անսասանելեաւ զնա հաստատէ ։ Պարծեալ իբր զտապանակն անխօս փայտեղէն մածեալ տախտակօք առանց զգայութեան՝ տեսողականաց մեզ առաջնորդէ . որոյ կերպարան անքանակ էին յառաջ հետեւեալ՝ ի հանդերձանս լուսոյն կենաց՝ տեղի պատրաստէ ։ Ընդ ողնելի անտառս սատակէ , եթէ ոչ խաչապէս յոգի բերիցի . սպանանէ վառեալ վաղվաղակի առ ժամայն , եթէ անսանայինն ըմակցութեն երկրասիրաբար գետնակոխ սոյլիւք՝ իբր զանօթ ինչ ձեռնողնեին բարձեալ տանիցի ։ Ոչ լեզուաւ մարդոյ , այլ բանիւ հրեշտակաց խօսի . ոչ ունկան գոյականութի , և արագապէս մատուցեալ լսէ . ոչ ձայն կերպաւորական բարբառոյ , և զպատգամս գործոցն յի՝ համօրէն ազանց պատմեալ հռչակէ . ոչ խաղալեաց շարժականութի , և ա՟ծայնով իմն կենդանութեն հագագաւ ազդէ ։ Ոչ ոսկերաց և ջլաց յօդուած , և երկուք հազարօք կանգնօք լայնութբ՝ իբր զգունդըն անհամար՝ բարձրեալն ո՟յ , զկենդանական զօրուն գումարտակ՝ հեբրայական վառեալ ամբոխին , և այժմ ընդ նոսին՝ իբր

զանմաքուրս ՚ի սրբութե՜ զոմանս ախտիւ-
մեղանաց ջեռեալս՝ հաստուածեալ յինքե-
նէ, հեռի ուղեկցէ, ապրեցելոցն ՚ի տա-
ժանաւոր ախտաւորութեցն: Նոյն իսկ
էութի՜ն ա՜յ մարմին եղելոյ՝ անուամբ այս
վիմի նշանակեցաւ, պատուամբ կողին
զընաւս արբուցեալ: Ո՛չ արեան երակաց
ընթացք, այլ լուսոյ վերնոյն շառաւիղք՝
թափանցանց միութե՜ զայն կենդանացուց-
եալ նորոգ պաշտպանէ. ո՛չ սողոմօն կամ
զօրաբաբէլ՝ մահկանացուաց ստախկանու-
թի, այլ ամենից ունողին իմաստ զաս գը-
ծագրէ. ո՛չ աննուիրական հասարակաճա-
շակ իւղով տա ՚ի յակոբայ պարարի, այլ
ահաւորին արեամբ՝ և փառօք մեծին օծա-
նի: Ո՛չ տուն երկրային նիւթոյ՝ քան թէ
մարմին երկնային լուսոյ ա՜յ՝ զորին որ-
դիս կնքեալ ձեռնադրէ. ո՛չ կենցաղոյս
յերկրէ յղացմունս, այլ արքայութեանն
երկնից ժառանգս կրթէ. զ՚ի ծոց իւր
գրգեալսն՝ գոգոյն աբրահամու ընծայե-
ցուցանէ: Փեսայ հարսնութե՜ սորա՝ որ-
դին ա՜յ կենդանւոյ. օրիորդք խնձոյից սո-
րին՝ հայրապետացն գումարք: Այն ինքն
մոռացումն առնէ այսակիր բարձանցն կը-
ռամոլութե, զի զերկնայնոյն ա՜յ ունի ըղ-
ծանօթութի. օտարութի է տմիւ դիցն

դրօշելոց, զի 'ի համօրէն քարինս սորա՝ քն̃
երկրպագի. քակտումն է յայտնապէս ու-
րուական ըղձիցն անտառաց, զի 'ի բնաւից
մայրից աշխարհի՝ նմանութ̃ կենացն փայ-
տի՝ 'ի սմա տէրն նուիրի. խորտակումն է
համայն դիւապատիր յուռութիցն արձա-
նաց, զի քարն գովեալ կարկեհան ականք
և վիմօք կենդանեօք՝ այսրէն հաստատի:
ԺԴ. Այս յարկ չքնաղ և ա̃ծընկալ՝ ա-
զա́տ է միանգամայն 'ի յամենուստ ծա-
ռայութ̃է. ոչ օրինակ վերնոյն սիօնի, քան
թէ ճշմարտութ̃ի նորին ճանաչի. ոչ կռա-
պաշտութ̃են կամաւ՝ բագին, և կամ ըծով
օրինին՝ տեղի պարտաւորութ̃է, այլ տե-
րունի բարերարութ̃են պարգևարան 'ի մէնջ
համբուրի: Ոչ սասանի երբէք՝ յայլ իմն
կերպարան ձևոյ փոխարկեալ, այլ 'ի նոյն
շուք փառաց մեծապէս ընդարձակի. սոյն
ինքն և երկին երկնի՝ յերկրի լուսապայ-
ծառ կերպիւ հռչակի: Որ̃ չէ՛ առանց
հօրն քն̃, և ոչ առանց այսր մօր արգանդի
յոգի կատարիլ: Նոտուն շրջի անբովան-
դակելին, եթէ ոչ 'ի սմին տան տաղաւա-
րեացի. ոչ ունի տեղի գլխոյն հանգստեան՝
տէրն բոլորից, եթէ ոչ 'ի յայս կայարան
կենաց մտեալ ագանիցի: Բան 'ի կամար
վերնայինն երկնի՝ 'ի յայս հիւթաւոր բը-

նականութ՟ի առաւել պարծի · անբաւութ՟ի
ա՟ծեան լուսոյն , որ՟պ զդէմս մարգարէին՝
և զօրինակս սորին ծածկեցին , որ՟պ փախ-
եան 'ի փառաց երեսաց նորին , և նմանու-
թ՟ե սորուն՝ որ 'ի տաճարին՝ ո՛չ հանդար-
տեցին , 'ի տօն հանդիսի մեծի գովեստի ,
և 'ի բանականացս դասուց խմբեալ նուա-
գի ։ Ըստ օրհնի կրկին բաղձանօք , քան
'ի դրախտն վայելչական ։

ժդ՟ · Այս մայր հոգւոր՝ երկնաւոր՝ լու-
սաւոր , քան թէ երկրաւոր՝ շնչաւոր՝
մարմնաւոր , զիս գգուեաց որդի · կաթն
ստեանց սորա՝ արիւնն ք՟ի ։ Եթէ ա՟ծած-
նին իսկ պատկեր զայն ոք գրեսցէ , ո՛չ
անօրինի ։ Իբր զնշան խաչին փրկութեան՝
զօրութիւնս զարմանազանս՝ և արուեստս
բազմօրինակս կատարեալ հրաշագործէ ·
բեմ ահաւորին ատենի՝ 'ի սմա հաստատել
տեսանի · սովաւ խորթաբարոյից հերձ-
ուածողաց՝ մոլեգնաճառ բերանք կարկին ։
Ունի և քարինս իմ՟ իմանալիս և բանաւո
րականս , որով զգազանամիտս անմաքուրս՝
բացուստ 'ի բաց տրոհեալ տարագրէ ։
Ծնանին և ա՟ծս ոմանս եղականս՝ պատ-
կերս մաքուրս՝ միոյն ա՟յ ք՟ի ։ Ունի և ըղ
դիրն իւր ընդ արևելս՝ 'ի տեղի խոստման
բնակութ՟են մերոյ առաջնոյ · ձեռամբ իմ՟

ցուցանէ յայտնապէս՝ զգաղտնեանն ո՛չ շաւիղ . զփայլականն տուակ տիրականն՝ 'ի դէմս բերեալ մեզ վարդապետէ . զփրկութիւն 'ի յերկից անտի ծագման արուսեկին՝ քննեան երեւմանն 'ի վերջնում աւուրն , արարածոց երկրի թարգմանէ : Դեւս հալածէ . ախտաժետս բժշկէ . դիւաց բռնութեանց զօրէ : Արգանդ որովայնի սորին՝ աւազանն կենդանարար . 'ի պար հարսանեաց սորա՝ դասք առաքելոցն : Այնքան ճոխացաւ բարգաւաճեալ երանութ̄ , մինչ զի նոյն ինքն փրկչին անուամբ՝ վայելչապէս յորջորջեցաւ . տիրամօրն լուսոյ կոչմամբ՝ 'ի մերձաւորաց միածնին ձայնեալ կնքեցաւ : Ծփելոց մեղաւորաց՝ նաւահանգիստ հանդարտութ̄ե . խարախձանս րան՝ վերնոցն դասուց . բժշկարան անսխալելի՝ տարակուսեալ պարտաւորաց : Սրբութիւն անպատում՝ 'ի սմա փառաւորի՝ օրհնեալ յա̄մի :

ԺԷ . Իսկ եթէ որ ձեռն չարութ̄ե՝ 'ի վերինն արքայութ̄ի յանդգնաբար համբառնայցէ , և դիւս ինչ մարմնաւոր , և կամ հնարք մարդկային , և կամ արուեստ երկրակենցաղ՝ զաւհմանեալ աւանդութ̄ս առձեռակերտս եկեղեցի վարկանիցի , և ո՛չ պարգև առաւել կենաց , և ակնկալութ̄ի

ա̃ծային, և հոգւոյն ս̃րբոյ յայտնեալ լուսաւորող նախագրութ̃ի, և երախտեաց բարձրելոյն՝ ամենատուր լիականութ̃ի, և կամաց արարողին՝ խնկաւորեալ խորհրդարան, և առաքելոց ձեռինն աջոյ՝ բարեհանճար հիմնարկութ̃ի, և միանգամայն տաել՝ դուռն երկնից, և քաղաք ս̃յ կենդանւոյ, և մայր կենդանեաց՝ ազատ 'ի պարտեաց, և ճշգրիտ տեսակ կերպի երևակիս բանականի, իմանալին՝ խորհուրդ հոգւոյս, և շոշափելին՝ պատկեր մարմնոյս, և սրբութեանցն անդանձաւիցդ՝ գերազանցեալ նոր սրբութ̃ի, և քնեանն նշանաւ՝ պայծառապարծպաակեցեալ, զայնպիսի ոչ խոստովանօղն՝ մերժէ յերեսաց իւրոց հայրն ամենակալ՝ 'ի ձեռն բանին իւրոյ էակցի, բարձեալ 'ի նմանէ և զաւանդ շնորհի հոգւոյն փառակցի. փակեցէ զդուռն կենացս այս առագաստի յանդիման նորին: Իսկ մեք զորս գրեցաք՝ սմին և վկայեմք, հաստացեալ յորում կարգեցաք. յանուն և 'ի փառս ամենակալ երրորդութ̃ն և միում ա̃ծութեանն, յաւիտեանս յաւիտենից,

ամէն:

Այն իմ հաստ յերրորդութ̃ն. և այս՝ 'ի մայրն իմ լուսափառ՝ խոստովանեալ դաւանութ̃ի:

Վերստին յաւելուած կրկին հեծութե՟՝ նորին հրա-
կողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի. 'ի խո-
րոց սրտից խօսք՝ ընդ այ՟.

## ԲԱՆ · ՀԶ

ա · Ողորմած, բազմագութ՝ հզօր՝ ահաւոր՝ մարդասէր՝ օրհնեալ՝ կենդանի՝ անճառ. որ ոչ ելանէ երբէք ըստ բան քո՝ իր անձեռնարկելի, որ և միայն է անհնարաւոր։ Քո՛ է հատուցանել պտուղ քաղցրութե՟՝ ընդ փշոց խստութեան, սկզբնահայրդ այդմ նորոգ և զարմանաւոր կանոնաց կենաց. քանզի բարի առնել ատելւոյն, և աղօթս 'ի վերայ հալածչին, և փրկութի՟ հայցել խոցողին, և սպանողին ներումն խնդրել՝ 'ի քէն ընծայեցաւ պտուղս այս հրաշից. որոյ քաղցրութի՟ն անճառ է քան զօրինակ, և բարեբանեալ կամաց քոց ախորժելիք, և գովեալ շրթանց քոց ճաշակելիք. հոգի երեւայց՝ և զօրութիւն գեղոյ մերոյ տէր քս՟ օրհնեալ 'ի բարձունս։ Մեք մարդք երկրածինք և ամենավրէպք, և բարեմասնեայց ձեռաց՝ չարիս դարձուցին. իսկ դու լոյս և տուիչ լուսոյ՝ ոչ լսես անէծս. ոչ ախորժես չար. ոչ կամիս կորուստ. ոչ ըղձանաս մահ. ոչ յուղես 'ի խռովութե. ոչ

տիրես 'ի ցասմանէ . ոչ հարկիս 'ի բարկութէ . ոչ մթանաս 'ի սիրոյ . ոչ պղպջիս 'ի գթութէ . ոչ փոփոխիս 'ի բարութէ . ոչ թիկանց շրջումն , և ոչ երևաց անդրադարձութի , այլ ամենևին լուսաւորութի՝ և նկատումն փրկութե ։

Ը . Եթէ բուեսցես , կարող ես . եթէ բժշկես , զօրաւոր ես . եթէ կենդանացուցանես , բաւական ես . եթէ շնորհես , առատ ես . եթէ ողջացուցանես , հնարաւոր ես . եթէ պարգևես , ամենալի ես . եթէ արդարացուցանես , ամենարուեստ ես . եթէ մխիթարես , ամենիշխան ես . եթէ նորոգես , ամենակալ ես . եթէ հրաշագործեսցես , ամենաթագաւոր ես . եթէ վերստին հաստատես , արարիչ ես . եթէ կրկին գոյացուցանես , ած ես . եթէ հոգաս ընդ մեր , ամենատէր ես . եթէ կոչես 'ի մեղաց , այցելու ես . եթէ չարժանեացս ընձեռես , օրհնեալ ես . եթէ քորսողէն զերծուսցես , փրկիչ ես . եթէ զեղցես 'ի քոյոցդ 'ի մեզ , հարուստ ես . եթէ նախքան 'ի մէնջ խնդրելն՝ դու կարկառեսցես , անկարօտ ես . եթէ լայնես ներողութեանս , անդորրիչ ես . եթէ զվերջացեալս կոչես , խնամակալ ես . եթէ զսասանեալս հաստատես , վէմ ես ։ Թ . Ե պաշտելոյս ար-

բուցանիցես , աղբիւր ես · թէ զծած-
կեալն երեւեցուցանես , լոյս ես · թէ զօգ-
տակարն իմ ծանուցանես , բարի ես · թէ
զբիծսն անտես առնիցես , երկայնամիտ
ես · թէ ընդ փոքուս 'ի դատ ոչ մտանի-
ցես , բարձրեա՛լ ես · թէ ծառայիս ձեռն
մատուսցես , ստացօ՛ղ ես · թէ աջովդ քո
պաշտպանեսցես , յանձանձի՛չ ես · թէ վհա
տելոյս դարման մատուսցես , կերակրի՛չ
ես · թէ զանգէտս պարարեսցես , վարդա-
պե՛տ ես · թէ զդիմեալս առ քեզ ընկալ-
ցիս , ապաւէ՛ն ես ։

Դ · Եւ արդ՝ քո են այսոքիկ՝ տէր ողոր-
մութե՛ , ոչ միայն գրեալ , այլ կատարեալ
եւ գլխաւորեալ՝ նախնի նահատակդ համ-
բերութե՛ վկայից · որ վասն իմոյ փրկութե՛
հանդիսացար զօրապէս յասպարիսի ճակա
տուն , զի կակղեսցես զկարծր բնութի՛
մարմնոյս գոռոզութե՛՝ վարժմամբ կրթութե՛
չարչարանացն վտանգի · եւ յանպարտակիրդ
մարմին չափեալ զբնութե՛ս մերում զտա-
ժանականն տագնապ տուժի , զի զգթու-
թի՛դ որ առ մեզ՝ արդեամբք ցուցցես 'ի
քեզ օրինակեալ · օրհնեալ յաւիտեանս ·
ամէն ։

Վերստին յաւելուած կրկին հեծութե՛ն՝ նորին հըսկողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի, 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ․

## ԲԱՆ · ՀԷ

ա̃ · Եւ քանզի որ է օրհնաբանեալ և լուսաւորող՝ կշռութեան երկուց ընտրութեա՛նց՝ արարածոցս սասանութեա՛նց՝ յեղանակելոյ յայլ իմն էութի երկնակենցաղ անփոխադրելի, ամբարձելոցն խոնարհութե, և կործանելոցս վերբերութե, ստրապելի ուրբաթու մեծի պասեքիս, յորում եկն եհաս ժամ բարեպատեհ գըրել ինձ զայս նուագ ձայնի հեծութե՝ զուարճախառն երկիւղիւ, աչս ըղձալի համարիմ առել սատանօր 'ի քոյոց այտի՝ զոր ընդ իմ կրեցեր՝ Ած բոլորից։

բ̃ · Կացեր յատենի քում ստեղծուածոյն իմոյս կերպիւ․ ոչ խօսեցար՝ տուիչդ բանի․ ոչ բարբառեցար՝ հաստիչդ լեզուի․ ոչ ձայն արձակեցեր՝ ստանիչդ երկրի․ ոչ մռնչեցեր՝ ամենազօրեցիկ փողդ մեծութե․ ոչ երախտեօքն քո յանդիմանեցեր, և ոչ չարեօք նոցին ըմբերանեցեր․ ոչ մատնեցեր ամօթոյ՝ զմատնիչսն զքեզ տանջանաց մահու․ ոչ 'ի կապելն զքեզ դիմադարձեցեր, և ոչ յապտակելն դժուարեցար․ ոչ 'ի թքնուլն թշնամանեցեր, և ոչ ընդ-

կուփելն երբեք խռովեցար. ոչ ընդ կատակելն սրտմտեցար, և ոչ ընդ խաղ արկանելըն երեսս փոխեցեր։ Մերկացուցին զըզգեստ պատմուճանին իբրև 'ի տկարէ, և դարձեալ ագուցին իբր անփրկանաւոր ըմբռնեցելոյ։ Եթէ ոչ էր արբեալ կրկնակի քացախ՝ զանգեալ ընդ լեղւոյ, ոչ էր հեղեալ մաղձն իմ մթերեալ նախնի դառնութեն. ճաշակեաց վհատութ̃ք, և արգել անդէն տարակուսանօք. առին մոլեգնաբար, և դարձեալ մատուցին անպատկառապէս։ Վանիւ հարուածոց յետին անարգութե̃ 'ի մէջ խառնիճաղանջն ամբոխի դատապարտեցին. ծունր կրկնեցին նախատանաց, և պսակ եդին արհամարհութեան։

Է̄. Ո՛չ ետուն հանգիստ կենդանարարիդ, եթէ ոչ՝ զգործի մահուն կրել քեզ պատրաստեցին. ընկալար իբր երկայնամիտ. առեր իբրև զհեզ. բարձեր ո̃պ համբերող, ըստանձնեալ իբր զպարտական՝ զփայտն վշտաց։ Որ̃ զծաղիկ շուշանաց հովտաց՝ ուսով բերեալ զղէնն կենաց, զի յարհաւրաց գիշերայնոց՝ զխուրակերտս դաւհաւորակս մարմնեղէն գոյութե̃ս՝ պահպանեսցէ 'ի դատապարտութեն վայրի՝ իբր 'ի խորախճան խնձոյից։ Հանին արտաքս իբր

իբ

զողջակէզ․ կախեցին իբր զխոյն սաբեկայ՝ ձգեալ զեղջերացն․ տարածեցին 'ի սեղան խաչին իբր զպատարագ․ բևեռեցին որպ՟ չարագործ․ պնդեցին իբր զապստամբ․ զխաղաղութ՟ն երկնաւոր՝ իբր զաւազակ, զանկապուտ մեծութ՟ն՝ իբր զտառապեալ, զոր 'ի քրովբէից պաշտեցեալն՝ իբր զքամահեալ, զսահմանդ կենաց՝ իբր զարժանաւոր սատակման մահու․ զաւետարանիս նկարիչ՝ իբր զհայհոյիչ օրինին․ զՏ՟ր և զկատարումն մարգարէից՝ իբր զհակառօտիչ գրեցելոցն․ զճառագայթդ փառաց՝ և զկնիք անքննին խորհրդոցդ հօր՝ իբր զներհակ ծնողիդ կամաց․ զօրհնեալդ իսկապէս՝ իբր զտարագրեալ․ զկապդ օրինին լուծիչդ՝ իբր զայր 'ի նզովս գրեալ․ զհուրդ ծախիչ՝ իբր զհերքեալ իմն կալանաւոր․ զահաւորդ երկնի և երկրի՝ իբր զհաւասարի պատժաւոր․ զ'ի լոյս անմատոյց ծածկեալդ՝ իբր զհողածին ըմբռնեալ։

Դ․ Ով քաղցրութիւնդ և երկայնամիտ բարերարութ՟ն ողորմածիդ գթութ՟ն, որ վասն ապախտաւոր և անօրինեալ ծառայիս՝ տէրդ բոլորից՝ զայս ա՟մ կամաւորապէս և հաւանողական հաճութ՟բ տարեալ՝ մարմնոյդ միութեամբ 'ի քեզ ընկալար․ և մինչև 'ի քնարան շիրմին տապանի՝

անպակաս 'ի լրութենէ ամբողջ նմանութեն ած անքննին՝ զնոյն կրեալ նախատիպս անճառ համբերութե, յարեւար կենդանի ինքնիշխան բարձրութբ լուսոյ՝ աննուաղ մարմնով, և անթերի ածութբ ։ Օրհնեալ փառօք, գովեալ գթութբ, բարեբանեալ միշտ ողորմութբ, յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

---

Վերստին յաւելուած կրկին հեծութե՝ նորին հրակողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի, 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ ։

## ԲԱՆ. ՀԲ

ա. Եւ արդ՝ անկեալ յերեսս հողանիւթ կերպիւս, 'ի վայր խոնարհեալ ծնրադրական երկրպագութբ, զբարեգործիդ ողորմածութե՝ զկենդանարար ոտս համբուրեմ, զայս օրինակ մաղթանաց մեծիդ ընծայեցուցեալ ։

բ. Աղաչեմ զքեզ միայն խնամակալ, մարդասէր, գըթած, կեցուցիչ, հըզօր, այցելու, պաշտպան. մի' ունայնացի վաստակն աշխատութե փրկականդ կրից մարդացելոյդ վասն իմ այ. մի' սուտ եղիցի քրտանցն կաթուած խառնեցել արեամբ՝ 'ի մատնութեն աւուր գիշերին. մի' լիցի

սաւերացեալ լուսոյդ երախտիս · զոր ձրի և առանց փրկանաց թշուառացելումս ինձ պարգևեցեր · մի՛ ջնջեսցին շնորհացդ աւետիս, զոր կողից քոց կայլակք նորոգեցին · մի՛ անշահ եղիցին կրիցդ պտուղք, զոր կարօտութեամբ խմումն մատուցեր : Մի՛ պարծեսցի բանսարկուն վանեալ՝ զքո ստացեալս խուրացուցանել · աՀա յաղթեսցե՛ս կամօք քո՝ ըղձից չարին · վերստին ապշեսցի միանգամ զարհուրեալն · կրկին պարտեսցի խայտառ դատեցեալն : Մի՛ անխայեր զազատարարդ քո բան, որ զստեղծեալս քո քեզ ընծայեալ՝ վերստին առ քեզ դարձուցանէ · զանձառն արարեր բարերարութիւն՝ յանակնկալ ժամուն յուսահատութեան, յորժամ բնաւ իսկ կորեալ և օտարացեալ էր կենդանութեան շարժողութիւն · մեռեալ անմահդ՝ և զմահացեալս նորոգեցեր · եթէ զկանոն համաձևութեան օրինին փոխեցեր, արդ զդիւրինն և զհեշտականն և զևս հնարաւորն մի՛ արգելցես՝ ըսկզբնաձիր ողորմածութեան բարեգութ օրհնեալ և երկայնամիտ թագաւոր : Ըզգեա՛ բանիւդ ամենազօրաւ՝ որ զգոյութիւն լուսոյն ստեղծեր ՚ի նախնումն աւուր, և վաղվաղակի փոփոխեալ գոյց ՚ի լոյս անդր · և փոխանակ զի ես ոչ խնդրեցի հետևել

լուսոյդ, դու եղցես ինձ յայդ՝ Ճառա-
գայթ ծագման հայրենի կերպիդ, և կո-
չեցայց առաջի քոյ ծառայս դատապարտ՝
ողորմելով շնորհելով առ 'ի քէն. ո՛չ է ժա-
մանակ յերկարաձգութե առ 'ի զպարտսն
հատուցանել, այլ շնորհեա՛ ինձ տառա-
պելոյս զերեսս քո՝ լո՛յսդ 'ի խաւարի սըր-
տից վհատելոց: Արգե՛լ և կնքեա՛ զըն-
թացմունս ելիցն, որ միշտ զեղուն բարիքն
հոսեալ 'ի յուշոյս իմ՝ տեսութէ. պահեա՛
ինձ զշնորհ ամենապայծառ գանձուցդ-
մնացականաց, որով պատուական գտեալ՝
քո անուանեցայց, պաշտպանեալ 'ի քէն՝
անսահման բարի:

Է. Ահա ողորմեա՛ ինձ՝ գթած, աղա-
չեմ զքեզ ողորմեա՛ ինձ՝ հզօր, կրկին
ողորմեա՛: Մ՛ի փոխարկեր երկունս ցա-
ւոց՝ ընդ չարեաց իմոց բարիդ ամենեւին.
մի՛ բառնար 'ի վտանգելոյս՝ զառ 'ի քէն
պարգեւեալդ շնորհ. մի՛ կապտեր զփչումն
ամենօրհնեալդ հոգւոյ. մի՛ լուծաներ ըզ-
խնկեալ զնիք արքունական պատկերիդ:
Մ՛ի յայտնեսցին փուշք մեղանացս՝ 'ի սըր-
բութիս մտացս. մի՛ խզեր զկապ միութե՝
զընդ քեզ սիրոյն պնդութե. մի՛ մերժես-
ցես զարուեստ զօրութե՝ լեզուոյս յարմա-
րութե, մի՛ պակասեցուցաներ զաջողուած

տօջոյս՝ տու 'ի զլուսոյդ մասունս բաշխել։ Մ՚ի գրեր 'ի դպրութե՟ կենաց մատենիդ՝ զմահուն պարտիս․ մի՛ պահեր․ մի՛ ինձ համարիր․ մի՛ յիշեցուցաներ․ մի՛ ամաչեցուցաներ․ մի՛ նախատեր․ մի՛ ոտն հարկաներ․ մի՛ արձանացուցաներ զմեղկութեանցն․ մի՛ ամբարեր զկորստեանցն․ մի՛ իբր սադրեալ ինն ամբաստաներ։ Մ՚ի յարուսցես ընդ իս զծառն անիծից․ մի՛ արձակեր 'ի յիս զսաղարթ չասուցն․ մի՛ ընծիւղեր զծաղիկ մեղացս․ մի՛ բերցես ընդունաց զնաման պարտուցս․ մի՛ արտաբերեր զեռութի պտղոյն։ Մ՚ի թուեսցես 'ի ձիւղս երկրատեղծ մտածանցդ՝ զգիւտս գործոցս․ մի՛ մատուսցես բան ընդդեմ ահեղ՝ զանօրէնութիս իմ յիշատակել․ մի՛ մատնեսցես խմոցս կամաց զաւանդս հոգւոյս՝ վարել 'ի գերութե․ մի՛ տատեն զիս փառաւորեր՝ զի անտանօր դատապարտեացես․ մի՛ նուաղութեբ այսր անցաւորի՝ ըղյաւիտենական բարիսն տուժեր․ մի՛ 'ի սակաւուն այսմ ժամանակի՝ զանվախճանելի զփառսն չափեր․ մի՛ ընդ հոլովիս վչտաց հեծութե՝ զանախտական զկեանսդ գրաւեր․ մի՛ ընդ սուտերի այսր մ'թութե՝ զանձառելիդ լոյս փոխանակեր․ մի՛ զերանանակ մնացս լքցես՝ ըստ արտուղի հետս

հետեւել · մի՛ զկամուրջ կենցաղոյս գրես-
ցես՝ ինձ հանգստեան բնակութի̃ ·
մի՛ զհովիտ հանճարոյս ստուերական պա-
հեր՝ ՚ի հանդերձեալն ինձ հրապարակել ։
Եթէ ամբարես զառանց համարոյ գործոցս
իմ չարիս , մեռայց կենդանւոյն · եթէ
շտեմարանես ՚ի սրտի , տատասկին կիզեալ
անբոց այրեցայց · եթէ քննեսցես զանօ-
րէնութիւնս , առանց յանդիման քեզ
լինելոյ՝ խայտառ հալեցայց · եթէ անկակից
ինձ թողցես զմեղսն , ՚ի նոյին վատնեալ
մաշեցայց ։

Դ · Իկնարկեա՛մ մի՛շտ զօրեղ ամենակա-
րօղ՝ փախնուլ չարութե̃ցս որ յիս , զի
բարիդ քո եկեալ փոխանորդեսցէ · հրա-
մայեա՛ գթած , խնամակալ , գովեալ , լոյս
անշիջանելի , զօրութ̃բ անսահմանելեաւ ,
զի նոր հաստատեսցի գոյութ̃ի բնութ̃ես
մարմնեղէն յարկի անդամոցս · յորում հան
գուցեալ անլքանելի՝ բնակեսցես բաղ-
մեալ անխորժ տենչանօք՝ միութ̃բ հոգւոյս
իմ ընդ քեզ · զապականութիւն մեղացս
մերժեալ խայտառ՝ յանարատութիւն զիս
պատրաստեսցե՛ս՝ ամենակեցոյց թագաւոր
անմահ տէր յի̃ քս̃ , օրհնեալ յաւիտ-
եանս · ամէն ։

Վերստին յաւելուած կրկին հեծութե̃՝ նորին հըս-կողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի. 'ի խո-րոց սրտից խօսք՝ ընդ այ̃.

## ԲԱՆ · ՀԹ

ա̃ · Յիշեա՛ տէ՛ր, տէ՛ր գթութեանց, սիրօղդ իրաւանց՝ ա̃ծ ճշմարիտ. Նայեա՛ վերստին 'ի բնութե̃ս կերպարան մշտասխալական. զննեա՛ ինձ դարձեալ զա-մէնընթաց տարածմունս՝ եղից արեանս շարժողութե̃. բժշկապէս մատի՛ր տեսա-նել, զի մարդ եմ հաստատեալ մօք խա-կութեան թերի խորհրդոց՝ յա՛յն ինչ, զոր դու խակ վկայեցեր տեսօղդ ոչ էից՝ միա՛յն դու անմասն ստութեան խաւարի: Ապա իրաւունս է գրել՝ ինձ ընդ մեղուցեալսն մարդկօրէն վրիպանաց սխալմամբ՝ պարտ-եալ կրկին՝ իբր զերկրածին մահացու-մարմին, քան բանիդ քում սուտ երևել. քանզի արդարև գիտակ իսկ ես, թէ չար է արարն՝ և ընդարբոյս չարութի̃ն մեր, և ո՛չ փոփոխին խորհուրդք մեր յաւիտ-եան, ըստ հոգեհանճար իմաստնոյն կան-խազէկցյ առակի:

բ̃ · Թեթևացո՛ զսաստկութի̃ տանջանա-ցըն, որ պատրաստեալ և մնայ ինձ՝ արկա-նել զորդիս գեհենին՝ զարդ մահուն յա-ւիտենականի. բարձ զամօթոյս պարտիս,

որ պահեալ է յայտնել Թշուառականս
յետին ատենին յանդիմանութե։ Իսրա
խաղաղութե՝ յառաջապարգև ողորմութե
քո ընծայեցա․ զի մի՛ անտանելիքն ահա-
ւորութե ՚ի ցոյց ինձ եկեալ կերպարա-
նեսցին , անյոյս ապշութի ընդ կենաց զղջ-
ման առաջի կարգեալ , դատաստանն ահա-
ւոր․ անկաշառ և անխաբելի դատաւորն․
ամօթն սոսկալի․ կշտամբանքն սարսափելի․
յանդիմանութիւն անփախչելի․ տագնապն
անձողոպրելի․ պակուցումն անխրախու-
սելի․ դողումն անվճարելի․ լալումն
անսփոփելի․ կրճումն ատամանցն ան-
բժշկելի․ ապականութին անողջանալի․
անէծքն սարսափելի՝ ածային քո բանից․
փակումն գթոյն , և արգելումն ողորմութեն։
Որ ընդ գալարելն երկնի՝ և ընդ երկրի
դղրդելն ընդ կարծրութի յատակիս , ըստ
կուտակելոյ կոհակաց խռովութե ծովու-
իբր փախստեան կերպ ցուցանելով , մի
զմիոյ հետս խափանեն կասեալ յերկո-
ցունց․ և տատանեալ սասանեալ լայնատա-
րած գետնոյս թանձրութեան ՚ի հիմանց
անտի , ընդ ուժգնակի բախման թնդելոյ
ներքնային խորոց՝ հարթէ զլեռինս , և
հալեալ հրդեհին բնութիք վիմաց և ամ
տարերաց գոյից․ այլայլին երկինք՝ յանեղծ

փոփոխութիւն , և յեղանակին արարածք տարերօք իւրովք 'ի նորոգ նմանութիւն ։ Ծածկութիւք գործոյս հրապարակին , և աներևոյթք կրից մեր յայտնին ․ վարք կրօնից ներգործեցելոց՝ 'ի մարմինս մեր նըկարին ։ Թագաւորն երկնից՝ յատենի նըստի , վճիռ հատուցմանն 'ի ձեռին իւրում ։ Ահ վայ ինձ եօթնիցս անգամ կրկին եղկութե , ըստ չափոյ կշռութե այսր համարու , որ զանբաւութիւ թուոց պարագրէ ։ Ո՜ ինչ գործեցից ողբալիս հոգի՝ յայնմ մեծի աւուր վտանգի ․ քանզի սաստիկ է յիշատակն խոկ յառաջեալ քան զյանդիպումն ․ զոր ոմն մարգարէ՝ զօրինակին նմանութի 'ի դէմս բերելով , զձեռ տագնապի անզերծ փախստեանն նշանակէ ասելոյն ․ զօրօրինակ եթէ փախնուցու ոք 'ի ձեռաց առիւծու , և պատահեսցէ նմա արջ ․ և փախնուցու յերեսաց արջոյն , և մտանիցէ 'ի տուն , և յեցուսցէ զձեռն իւր 'ի յորմ , և խածանիցէ զնա օձ ․ և դարձեալ կրկին սաստկացուցանէ առ նոյն կերպարան իրի՝ զտեսիլն քստմնելի , ո՞չ ապաքէն՝ ասէ , խաւար է օր տն , օր խաւարոյ և մթոյ , օր ամպոյ և մառախղոյ ։

Է ․ Յորժամ հրեշտակն պահպանողական կենակից , հզօր ոտիկան՝ իրաւամբք

ամբաստանեսցէ , և հատուցանողն ահա-
ւոր՝ արդարութեամբ յանդիմանեսցէ :
Սպասաւորք Թագաւորին առանց խնայե-
լոյ խուճապեն , զոմանս 'ի կեանս հրաւի-
րեն , և զոմանս յամօթն դատապարտեն .
կիսոց՝ դէմս լցեալս ծաղու ցուցանեն , և
ինձ՝ ահարկուս և քստմնելիս երևեցու-
ցանեն . ոմանց՝ պսակս լուսապաճոյճս մա-
տուցանեն , և այլոց՝ կորուստ մահու բո-
ղոքեն . արդարոցն ձայն աւետեաց , և ինձ
դոյժ անփախճան վշտաց : Յորժամ առ-
բարիսն՝ մահու յաղթութ̅ի խայտառ մե-
ռանի , և ինձ չարագործիս կրկին յարա-
կայի . ուր դրանն բաղխել՝ ոչ ինչ օգտի-
ցէ , վճար եղեալ գթութեանն առ իս :
Յորժամ դպրութ̅իք հրաշիցն զարմանալ-
եաց , որ են ծածկեալքն յայժմուցս հա-
սարակաց վարուցն տեսակք՝ մարդկային
բնութեանս գործոց , յաղագս որոյ եղեն
գոյութ̅իք ա̅մ էից՝ յիւրաքանչիւր մար-
մինս անպակաս գրութ̅բ իսկոյն երևին . և
խորութ̅իք անձաւիցն կնքեցելոց յիմաստից
աստեացս՝ առ̅ջի աչաց մերոց կերպարանին :
Ուր այժմ շահավաճառութիւնք ողբոց և
արտասուաց զերկինս գրաւեն , և անդ իբր
զապաժաման ընդունայնութիւնք՝ արհա-
մարհեալք լքանին . հառաչմունք հեծութ̅՝

ո՛չ կանխաւ աստի առաքեալ , չէ՛ երբէք գտանել անդէն . ողորմութիք ճշդով սերմանեալ , ո՛չ պայծառ փառամամբ գնան առաջի ։ Ո՛ւր տապանն նախայանցից , և կտակարանն տիրանորդից , և նշանն ահաւոր այժմուցս՝ յանդիման եղեալ մեծաձայնս դատախազեն . յորում սոսկալի վայրի՝ ոմն զուխտն կցորդութե՛ հայրենի , և ոմն զխորանն վկայութեան անտեսից , և ոմն զարիւն մեծին ո՛յ՝ ամբաստան իմն իրաւացի առաջի իմ տարածանեն ։ Ոտանջանարանն բազմապատիկս՝ անձամբ անձին ատեն խոկ պատրաստեցի , զիա՞րդ մխիթարեցայց համառօտեալս յուսոյ . զի եթէ զօրքն լուսոյ՝ դասուք արդարոցն , որ փառաւորեալքն են երանութե՛ , սարսեն դողալով , ո՛չ բաւեն բերել զահաւոր տեսիլ երեսաց մեծ դատաստանին , ես եղկելիս՝ աւանդակորդս սատակման որդիս՝ ո՞ւր երևեցայց . որ ո՛չ միայն չե՛մ պատկերոց , այլ և պատուհասն իմ անտանելի՝ և կորուստն անսպառելի ։

Է . ՈՎ արարեա՛ ամենապարգև՝ զօրութիւն անճառ՝ ձեռն փրկութե՛ 'ի կորուստ գերելոյս . զի օգնեալ 'ի քէն՝ դարձայց միւսանգամ 'ի դրանց դժոխոց , ամենապատրաստ հանդերձեալ ամենևին

անվտանգելի՝ պըծեալ ՚ի պատժոց · տատանօր տեսեալ մնացս իմաստիւ զապագայից դիպուածս , բաւականացեալ ՚ի լուր երկիւղին ՚ի տագնապէ տանջանաց՝ ահին համբաւով , կամօք քո բարեաց զերծեալ ապրեցայց · և մի՛ մատնեցայց կորեանցն աւխծուց , որք խնդրեն ՚ի քէն զիս ՚ի կերակուր՝ ծախել տառամանքն գազանութե՟ · զի զորովայն մահուն լցուցեալ՝ զասատուստ պարարեալս՝ անդ ձգեալ Հալեն , ուր անսպառ պահի մնացուած մըթերցն՝ ՚ի ծախուսն յաւիտենից ։ Ո՜չ դու միայն բաւես կորզել ՚ի ժանեաց սատակման՝ ՚ի կեանս և յերանութի՟ , ընաւից ապաւէն թագաւոր լուսոյ՝ տէր յ՟ք՟ ,
օրՀնեալ յաւիտեանս · ամէն ։

---

Վերստին յաւերուած կրկնին Հեծութե՟՝ Նորին Հըսկողի , առ մայրն երանութեան՝ ապերս մալթանաց բանի ։ ՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ անրուհոյն ։

## ԲԱՆ · Ձ

ա՟ · Եւ արդ՝ ՚ի վ՟ր այսքանեաց յուսահատութե՟ց և աՀարկու սրտաբեկութե՟ց , պակուցանողական սաստկութե՟ց ա՟ծայրին բարկութե՟ց , տագնապեալ ոգւով թախծութե՟ խոյառ , աղաչեմ զքեզ տ՟ր

ծածկին ։ Հրեշտակ 'ի մարդկանէ · մարմ-
նաւորիլ քերովբէ · երկնաւոր արքայու-
հի · անխառն իբրև զօդ · մաքուր ոչ լոյս·
անշաղախ ըստ նմանութե պատկերի արու-
եստին բարձրութե · գերազանց քան զընա-
կութի անկոխելին սրբութեց · երանաւոր
խոստմանն տեղի · եդեմ շնչական · ծառ
կենացն անմահից բոցեղէն սրովբէ պարու-
նակեալ, 'ի բարձրեալն հօրէ զօրացեալ և
հովանացեալ, հանգստեամբ հոգւոյն հան-
դերձեալ և մաքրագործեալ, բնակութե
որդւոյն յարդարեալ և տաղաւարեալ ։

Միածինն հօր՝ և քեզ անդրանիկ · որդի
քո ծննդեամբ՝ և տէր արարչութեամբ ։
Ընդ անաղտ մաքրութեդ՝ և անբիծ բա-
րի · ընդ անարատ սրբութեդ՝ և խնամա-
կալ բարեխօս · ընկա՛լ զմաղթանս այսր
աղերսանաց՝ քում դաւանողիս, և մատո՛
ընծայեա՛ ընդ սմին խառնեալ զբանն իմ
նախնի՝ մեծիդ ներբողի՝ 'ի քոյդ պաղա-
տանս ։ Հիւսեա՛ միացո՛ զմեղուցելոյս դա-
ւըն հեծութիւն ընդ քումդ երջանիկ և
խնկաւորեալ հայցուածոց՝ առ՛նկդ կենաց
պտղոյն օրհնութե · զի 'ի քեն միշտ օգ-
նեալ և բարեգործեալ, և 'ի մաքրական քո
ծնելութիդ ապաւինեալ և լուսաւորեալ,
կեցից քի որդւոյ քոյ և ածն ։

է. Օժանդակեա՛ թեւոցդ աղօթիւք՝ խնա՛մ տովանեալ մայրդ կենդանեաց՝ և ելից իմ յերկրէս հովտէ, առանց ըլկանաց հեռանել 'ի կեանս օթեվանացդ պատրաստութե. զի թեթեւասցի կատարածն իմ ինձ՝ ծանրացելոյս անօրէնութեամբ ։ Արասցես տօն ինձ բերկրութեան՝ զօրն իմ տագնապի՝ ողջացուցիչ երկանցն եայի . բարեխօսեա՛ խնդրեա՛ աղաչեա՛, զի ըստ անճառելի մաքրութեդ և ահա զբանիդ հաւատամ զընդունելութի ։ Արտասուօք օգնեա վտանգեցելոյս՝ գտեալդ 'ի կանայս . ծնունդ խոնարհեցո առ իմ հաշտութի ծնողդ տդ . ընդ իմում թշուառիս հոգա՛՝ խօրան բարձրելոյն . ձեռն տուր անկելոյս տաճար երկնային . փառաւորեա՛ զորդիդ քո 'ի քեզ՝ ածօրէն ինձ հրաշագործել քաւութիւն և ողորմութի աղախին տդ և մայր . բարձրասցի պատիւ քո ինեւ, և ցուցցի փրկութիւն իմ քեւ ։

ը. Եթէ զիս գտցես՝ տիրամայր . Թէ ինձ ողորմեսցիս՝ սրբուհի . Թէ զկորուսեալս շահեսցիս՝ անարատ . Թէ զհարթուցեալս յանձանձեսցես՝ Երջանիկ . Թէ զամչեցեալս յառաջ մատուսցես՝ բարեշնորհ . Թէ յուսահատելոյս ինձ միջնորդեսցես՝ միշտ որ կոյս . Թէ զմերժեալս ընտանե-

ցուցես՝ մեծարելոյ ա̃յ ։ Թէ յիս ցուցցես զգթածութի՝ լուծիչդ անիծից ։ Թէ զծփեալս հաստատեսցես՝ հանգիստ ։ Թէ ՚ի խռովութեցս յուզմանց փոխեսցես զիս՝ խաղաղարար ։ Թէ վրիպելոյս ինձ հնարաւորեսցես՝ գովեալ ։ Թէ վասն իմ մոցես ՚ի հանդէս՝ մահու նահանջիչ ։ Թէ զդառնութիւնս իմ անուշեսցես՝ քաղցրութի ։ Թէ զբաժանմանն իմ խորոց քակեսցես՝ հաշտութի ։ Թէ զանմաքրութիւն իմ բարձցես՝ եղծման ընդոտնիչ ։ Թէ զմառնեալս մահու փրկեսցես՝ կենդանի լոյս ։ Թէ զլալեացս ձայն հասցես՝ բերկրութի ։ Թէ զխորտակեալս կազդուրեսցես՝ դեղ կենաց ։ Թէ ՚ի կործանեալս յիս ակնարկեսցես՝ հոգելից ։ Թէ ողորմութ ինձ պատահեսցես՝ կըտակ նուիրեալ, օրհնեալդ միայն ՚ի շրթունս անբիծս լեզուաց երջանկաց ։ Ահա կաթիլ մի կաթին՝ քումդ կուսութ՝ յանձն իմ անձրևեալ՝ կենաց ինձ զօրէ, մայրդ բարձրելոյն յի արարչին երկնի և բնաւին երկրի ։

Ով որ անճառապս ծնար բովանդակ մարմնովն և համայն ա̃ծութբն, որ փառաւորեալն է ընդ հօր և հոգւոյն սրբոյ էութբ, և անքննութբ մերոյին բնութբս միացելով ա̃մ՝ և յա̃մ, մի յերրորդութէն ։ Նմա փառք յաւիտենից յաւիտեանս ։ ամէն ։

*Վերստին յաւելուած կրկին հեծութեն՝ նորին հրակողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։ 'ի խաւոց սրտից խօսք՝ ընդ այ ։*

## ԲԱՆ · ՁԱ

ա · Ընդ ածածնին մաղթանաց՝ ահա և զվերնոցն անմահ հրեշտակացն լուսակերպից զաղերս հայցուածոց, որ վասն խմդոչեն առանց լռելոյ հանապազորդեան արգահատութե մաքուր բերանոց՝ ընկա՛լ բարեգութ ։ Որք են բարիք բարեգործեալք 'ի բարերարէդ՝ անկիրթք չարեաց, հաստեալք յանձնիշխան հրամանաց էիդ · զօրութիւնք հզօրք՝ ակնարկութե բարձրելոյդ · որք, մաքուրք, անարատք, օրհնեալք, վայելչականք, յաղթօղք և անպարտելիք · և ըստ ընթացից տեսութեան մտաց՝ արագունք ։

բ · Որք և պաղատօղս անկցին թզենւոյն եռամեանն դատարկութե, որ զբնաւ յաւիտեանս պարունակէ ժամանակն՝ զանցեալն ընդ ներկայիս և ընդ ապառնւոյն, յամայր յամրութեամբն յերկարաձգելոյ՝ յոյգի աշխարհիս արմատացելոյ, սին ստգարթիւն պաճուճելոյ՝ զրկեալ 'ի պտղոց, որ է ճշգրիտ պատկեր թշուառ մարդկութեանս, սոքա բարեխօսք՝ հանդերձիչք այլ և խնամակալք · որ դեգերին հանապազ

առ մեզ՝ ընդ մերում կրիցս կարեկցելով, բարեմասնութեան մեր սպասեն. և յաւիտենական կենդանութե̅ փրկութեան մեր աղօթեն՝ զայս բան առելով, զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ: Վանզի արդարև մեր են այս աղաչանք ՚ի բարերարեդ-ն̅դ վասն մեր կարդեալ առ Նոսա. զի Նոքա բանիւ են ստեղծեալ, և մեք ձեռօք ներգործեալ: Որք և գալոց են ընդ միածնիդ՝ վկայք սոսկալի դատաստանին հատուցման, Ճշմարտաբան դատախազք յանցաւորութե̅ երկրայնոցս, յահաւորին ատենի՝ յայտնիչք խրատամեք զմատակարարութիւն՝ որ առ մեզ. որ և անտանօր կարեկցեն ազդեալ հառաչմամբ զնշանուէրն նուագձայնի, ողորմեա՝ դու ստեղծեր մի՛ կորուսաներ:

Է. Արդ՝ ընդ գոհ. բանութե̅ ձայնիցն խնդրուածոց՝ անմահականացն վեհից՝ և ՚ի մեր հեծութիւս հառաչեցիս՝ բնաւորից արարիչ, որ յաղթես գթութե̅դ քո վերնոցն և ստորնայնոցս. քանզի քո՛ է բարերարելառ մեզ և առ Նոսին: Արդ՝ վ̅ս բարեզարդութեան անախտականացն, հրաշատեսիլ հրակերպից, անշաղախ մաքրոցն, անմեղեցն, բոցանիւթիցն, հոգեղինացն, և անվանելեացն. ամենաձեցուն առաւելութե̅ ՚ի

բարձրն ընտրականութեան գերափայլ յաճախ գիտութեամբ՝ անցուրտ ջերմութեամբ ջեռուցանօղք՝ ինքնաբուն տապոյն ծծմբութեան ըստ ինքեանց զմերս սառնասեր սրտից անբոցբոք շիջուցին, այրել անաղօտ 'ի մեծախորհուրդ սրբուն սեղանիս՝ որ 'ի խորանիս, առանց նիրհելոյ և դանդաղանաց սպասել հրամանաց երանականաց կեցուցիչ կամաց ամենաստեղծիդ • Քրովբէօրէն առաքինութեամբ յԱստուած միացեալք անբաժանելի։ Որք երկնաւոր պետութիւնք են մեծք, և զինուորութիւնք անբիծք աչաւորք, երկնաւորիդ Աստուծոյ՝ աղատաղնեայ պաշտօնեայք, 'ի

յամպոյդ լուսոյ՝ ցօլք նշուղից։

Է. Որովք և ինձ մեղաւորիս հողեղինի մարդասիրեսցես ողորմել Յիսուս աղաչանօք իմոյն հրեշտակի, դարձուցանելով զիս անէր՝ 'ի բարիդ քո հետս լուսոյ. զի զաւանդ հօգւոյս իմ պաշտպանութեան, զոր հաւատացեր նմին տեսչութեան, զընկալեալն 'ի քէն 'ի կենցաղ աստեացս՝ ուրախութեամբ սրտիւ յիս բերկրեալ, անմեղադրելի առ 'ի քէն օրհնեալ՝ խնդալից դիմաց զուարճութեամբ՝ քեզ արքայ բարձրութեան փառաց անհասից՝ 'ի խրախճանս կենդանախումբս բերկրեցելոցն պարուց մատուցեալ ընծայեցուսցէ՝ գովեալ ողորմած։

Եւ քեզ անքննին ընդ Հօր անհասի՝ Թուակցութե̅ Հոգւոյդ անճառի՝ վայելէ փառք պատիւ և երկրպագութիւն, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

Վերստին յաւելուած կրկին հեծութե̅՝ նորին հրակողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի։ 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̅յ։

## ԲԱՆ · ԶԲ

ա̅ · Տէր բարերար բազմապարգեւ Թագաւոր, կենաց պատուական, լուսոյ կերպարան, լայնատարր հանգստարան. որ յաղագս մեղուցելոյս եկեալ մարմնացար. գործեցեր զանպատումն, և հանդերձեցեր զհրաշալիսն, մինչև կատարեցեր զաւետեալն ընդ ամենալիր ա̅ծութեանդ։

բ̅ · Արդ՝ վասն առաքելոցն ք̅ոց յերկնաստեղծ քո ձեռացդ ձեռնադրելոց, և հոգւովդ սրբով օծելոց, զորոց զգովեստն արժանաւորութե̅ ըստ իմում կարի՝ առ 'ի փառս քո տ̅ր ա̅մի՝ յայլում բանի պաշտեցի, և ինձ ողորմեսցիս յիշատակաւ սիրոյ նոցին ընտրութե̅։ Շաւիղ ինձ եղիցի նոքօք՝ և հանդերձեսցեն յերանութիւնն փափաքելի. ձայն բարի հոլութե̅ նոցին՝

'ի յողջոյն ինձ կենաց քաղցր լուիցի։
Ա՛ասն կալայց 'ի յանեղծութի՟ փրկութե՟ տօնեցեալ յուսոյն՝ ընդ առաջնորդացն կենաց , սկզբնաշնորհիցն պատուոյս , փառաւորեալն դասուց , գետոցն բանականաց , աւետարանչացն բարձանց , իշխանացն պանծալեաց , լուսապայծառ թագիւ պճնելոցն , 'ի վարդ անկապուտ զօրութե՟ շնորհին պայծառացելոց , իւղոյն զուարթութե՟ տիրական լուսոյն կատարելոց ։

Գ · Ը՛նդ աշակերտաց մեծիդ հրամանի բարձրեալդ ա՟յ քո՝ և մարտիրոսացն ընտրելոց նահատակութե՟ , որք մահացու և վշտաչարչարն մարմնով , փառնդաւոր և ամենակիրն անդամօք , երկրաւորական և հողապանդուածն բնութե՟՝ մարտուցեալ ընդ աղր գոյից ա՟մ նիւթից՝ պսակեցան բարձրացան և կենդանացան հոգեպէս · արիաբար ելեալք 'ի յերկրէ , ըստ մարդարէին , վկայք ճշմարիտք ամենափորձն մահու · խմանալեացն անատեսիցն և ծածկելոց՝ աներկբայ բարեացն՝ յուսով տեսելոցն տատեն նկատիչք · աշակերտք առաքելոցն և չարչարակիցք նոցին · որ համատարեալ գործովք ընդ նոսին , կատարեալ լրմամբ անպակասելեաւ՝ պարէն 'ի խրախճանս անկեան երանութեան · որոց հաճոյական և

ընդունական մաղթանօք , որխնընծայ վաստականուէր քրտնակնդրուկ աղերսիցն յորդմամբ` ընկալ զիս նորոգ ըստ նոսին մասին անեղծ փրկութեամբ` 'ի քեզ արձանացեալ:

Զ. Ընդ խաղացեալսն հուրբ և սուսերբ` արեամբ ներկելոցն , և ճգնաւորացն որք հարցն միանձանց` և քեզ հետևելոցն ծրդի ոյ , անպարտելի քաջութբ̃ և անպատիր զգաստութբ̃ , ընդ դժնեայ գոռոզ մարմնոյս բռնութե̃` որխապէս մարտուցեալ , սովիմբ վանեցին զանմարմինն բելիար . և մշտամարտ հանդիսիւ յասպարիսի կենցաղոյս` առանց զզուանաց ծանրաբեռնութե̃ 'ի լոյնածաւալ ծփանաց աշխարհիս ծովու` տապանակաւ մարմնոյս թանձրութե̃` զթեթևութի հոգւոյն թռուցեալ` 'ի նաւահանգիստն կենաց հասին . և իբր սիրօղք վերնում վիճակին` առանց յետնոյն մնածութե̃ , զթագն յաղթութե̃ համարձակապէս` պայծառ ճոխութբ̃ պճնեալ խակապէս` 'ի գլուխ կապեցին . վն̃ նոցին արժանաւոր մաղթանաց և նուիրական հայցուածոց` և զիս զմեղաւորս 'ի պատժականաց` ընկալ ընդ նոսին :

Է. Նաև աչօ խառնեալ զանմաքուրս բան` ընդ նախագրեալ երջանկացն փառաւորական

աղերսարկութիւն, որ վ՞ իմ գոչէն քեզ ՚ի հաճութիւն, և ես ընդ նոսին՝ իբր դառնուի եդեալ ընդ քաղցու, կամ տատասկ ընդ ողորկութեան, ագեղութիւն ընդ վայելչութեան, և տիղմ ընդ գեղեցկութեան մարգարտի, կամ հող ընդ յստակութիւն ոսկւոյ, և կամ քարինս անարգս ընդ պայծառութեան արծաթոյ, բացասութիւն ընդ ճշմարտութեան, կամ աւազ ինչ ատամնաւոր ընդ կակղութեան զանգուածոյ հացի. այդ լուր՝ հզօր հնա րաւոր գովել, զնոցայն վասն իմ, և զիմս ընդ նոսին՝ ՚ի նոցին գովեստ, ՚ի փրկութիւն իմ և ՚ի փառս քո՝ ամենադութ, բարերար, օրհնեալ, երկայնամիտ, կարող, անքննին, անճառ, անեղծ և անստեղծ։ Դու ես պարգևք, քո են շնորհք. դուսկիզբն և պատճառ բարեաց ամի։ Ոչ ես դատապարտիչ, այլ ազատիչ. ոչ ես կորուսիչ, այլ գտիչ. ոչ ես մահացուցիչ, այլ կեցուցիչ. ոչ ես տարագրիչ, այլ ժողովիչ. ոչ ես մատնիչ, այլ ապրեցուցիչ. ոչ ես ընկղմիչ, այլ վերածիչ. ոչ ես գլորիչ, այլ կանգնիչ. ոչ ես անիծիչ, այլ օրհնիչ. ոչ ես վրիժառու, այլ շնորհիչ. ոչ ես թշուառացուցիչ, այլ մխիթարիչ։ Ոչ եղծանես, այլ գրես. ոչ սասանես, այլ հաստատես. ոչ ուն հարկանես, այլ սփոփես. ոչ պատ-

ձառս յօդես մահու, այլ հնարս խնդրես
կենաց . ո՛չ ես 'ի կամս շարժեալ սատակման ,
այլ 'ի փրկութիւն ողորմութեան : Ո՛չ մոռանաս
զայցելութիւն . ո՛չ լքանես զբարի . ո՛չ արգե-
լուս զգթութիւն . ո՛չ բերես վճիռ կորստ-
եան , այլ կտակ ազատութեան : Ո՛չ թշնամա-
նիս յառատութեանց . ո՛չ բամբասես 'ի շնոր-
հաց . ո՛չ հայհոյես 'ի պարգեւաց . ո՛չ նախա-
տես 'ի ձրի ձրից . ո՛չ անգոսնես յերկայն-
մտութեանց . ո՛չ եպերես 'ի ներութեանց . ո՛չ
բանսարկես 'ի բարութեանց . ո՛չ անպատուես
'ի քաղցրութեանց . ո՛չ քամահես 'ի հեզութեանց .
ո՛չ առաքին այսոցիկ տրտնջմունք , այլ ան-
լռելի գոհաբանութիւնք : Նորա զմեղս իմ
հրեղօր . լո՛յծ զանէծս իմ օրհնեալ . քաւեա՛
զպարտիս իմ ողորմած . ջնջեա՛ զյանցանս
իմ գթա՛ծ . մատո՛ մատն այցելութեան , և
անդստին խակ կատարեցայց . զի՞նչ քեզ
տէր՝ քան զսոսին դիւրագոյն , և կամ զի՞նչ
ինձ պարտաւորիս կարևորագոյն : Ի.մւ
կենդանագրեա՛ բարեխնամ քրիստոսեղծ
պատկերիս՝ փչումն կրկին 'ի շունչ նորոգ-
ման լուսաւորութեան մաքրական շնորհի՝
զամենամեղս ոգւս պաշտպանեալ :

Է . Ա՛ծ տէր ողորմած՝ ինձ օր տարա-
ժամ 'ի համառօտս երբե՛՝ անթոշակ ա-
պաձեռնութեամբ՝ ընդ անկատար ուղին

հետևել. մի՛ մատուցանէր բաժակ դառնութեան՝ 'ի ժամ ծարաւոյ. մի՛ փակէր գըթած՝ իմ հանդէպ՝ զյաջողուած հոգևոր օգտիս, և մի՛ իբր յանկարծադէպ հինից ասպատակ՝ գիշեր մահուն ինձ պատահեսցէ. մի՛ տայ տօթոյն յանպատրաստ պահուն՝ զարմատս հատեալ ցամաքեցուսցէ, և մի՛ լուսնական դիպուածք հասեալ գաղտնեօք վնասեսցեն. մի՛ պահեսցի ինձ սառն մեղացս, և մի՛ հոսանք ուղխից կենցաղոյս զիս ողողեսցեն։ Մի՛ հանգիստն մահ բերիցէ, և մի՛ ննջումն 'ի սատակումն յառաջեսցէ. մի՛ քունն ինձ կորուստ լիցի, և մի՛ նիրհումն ապականութ͞ի գործեսցէ. մի՛ վախճանն անյարմար՝ 'ի վերայ իմ արշաւեսցէ, և մի՛ շնչոյս վերարձակութիւն ըմբռնեալ՝ 'ի խոնարհ լիցի։

Է. Դու ես տ͞ր. դու գթած. դու բարերար. դու երկայնամիտ. դու ամենակարօղ. առ ա͞մ բան անհասութ͞ե անճառ զօրաւոր, քաւել՝ փրկել՝ կենագործել, լուսաւորել, վերստին հաստատել, 'ի ժանտոց կերչաց գազանաց՝ և կամ յատամանց վիշապաց 'ի կեանս կորզել, 'ի խորոց անդնդոց 'ի լոյս բերկրութ͞ե ածել, և 'ի հեղձմանէ ծփանաց մեղաց՝ ընդ արդարս երջանկաց՝ փառօք բազմեցուցանել։ Ամենայն ոգի

քեզ ակնկալեալ յուսով սպասէ, կարօտեալ քում շնորհաց. եթէ երկնայինք, և եթէ երկրաւորք. եթէ անկածն մեղօք, և եթէ ամբարձեալն արդարութբ̃. եթէ ա̃ր, և եթէ ծառայ. եթէ տիկին, և եթէ աղախին. և 'ի ձեռին քո է շունչ կենդանական բոլորեցուն։ Եւ քեզ ընդ հօր և հոգւոյդ ս̃րբյ փառք՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

Վերստին յաւելուած կրկին հեծութե̃՝ նորին հրակողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի. 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̃յ.

## ԲԱՆ · ՁԳ

Ա̃ · Բարձրեալ անքննին. զօրութիւն ահեղ. տ̃ր արարածոց. թագաւոր երկնի. ստեղծիչ հրեշտակաց. դդյարան մտաց. հաստիչ հրեղինաց. պետ բարի հոգւոց. աջ ապաւինութե̃. անդորրութե̃ հանգստեան. տեսարան լուսաւորութե̃. պայծառութի̃ բերկրութեան. ճանապարհ երանութե̃. պատճառ կենդանութե̃. առիթ բանաւորութե̃. փրկութի̃ առանց չարութե̃. առաջնորդ խաղաղութե̃. պարիսպ ամրութե̃. պատուար պահպանութե̃. ցանկ բոցոյ մեծի օրհնութե̃. սահման անխախտելութե̃, կիշէմ յայսմ ողբերգութե̃ մատենի բանիս

խոստովանութեն՝ և զոր 'ի մարդկային ազնէ թշնամիս մեր՝ 'ի բարի, և արա կատարեալ նոցին քաւութի և ողորմութի։ Մ՚ի բարկացիս նց̄ վն̄ իմ՝ տէր, իբրև զսբս բամբասողաց՝ առ յանձախ սիրոյդ որ ի քիս, այլ որպ̄ պչալըս կշտամբողաց և իրաւամբք նախատողաց՝ ներեա յանցանաց նց̄։ Նու արդմատուցեալ երկրպագութեամբ առաջի քո՝ ա՛րդարադատ, ոմանք առ մեզ ծանասկարագոյնք՝ սակաւուք թերևս՝ և յիրաւի բամբասելոցս, և ես առ քեզ՝ ամենապարգև, անթիւս և անկշռելիս բազմօրինակ ուխտազանցութիւնս։

Է. Արդ՝ յիշեա զքո մեծութիւնդ՝ տէր. նայեցեալ 'ի յիմս անարգութիւն. և ընդխնդրելս իմ 'ի քէն բարի իմոցն ատելեաց, և դու առ քոյս՝ ըստ քում մեծութեանդ՝ անձառելիս հրաշագործեսցես։ Մ՚ի սատակեսցես զիմն խածանօղսն, այլ փոփոխեսցես. խլեալ զխոտանս բարս երկրաւորս՝ զբարիսն արմատացուսցես, և յիս և 'ի նոսին։ Մանաւանդ զի դու լոյս ես և յոյս, և ես խաւար և յիմար. դու խնկուէ̄ բարի գովելի, և ես համայնիւն չար ապիկար. դու տէր սորիցս և երկնից, և ես անիշխան շնչոյս և ոգւոյս. դու բարձրեալ 'ի կարեաց զատեալ, և ես տաժանաւոր և

վտանգաւոր. դու 'ի վեր քան զեզրս երկ-
րիս, և ես կամ անարգութե̃ գարշութե̃.
դու՝ ըստ մարգարէին, մնաս յաւիտեան
յանբաւ բարձրութե̃, և ես միշտ կործանիմ՝
ըստ նորին բանին. 'ի քեզ ոչ է մթութի̃
կամ նենգութի̃, և ես բովանդակն խակ
եմ՝ որ զաւանդն իմ ոչ պահեցի: Հա՛ն զիս
'ի բանտէս. արձակեա՛ 'ի կապանացս. զերծո՛
'ի շղթայիցս. փրկեա՛ 'ի խեղդմանէս. ա-
զատեա՛ 'ի տագնապէս. քակեա՛ 'ի յեր-
կաթիցս. լո՛յծ 'ի պաշարմանցս. արտաքսեա՛
յերկմտութե̃ցս. սփոփեա՛ 'ի տխրութե̃ցս.
հանգո՛ 'ի նեղութե̃ցս. փարատեա՛ 'ի վշտացս.
հանդարտեա՛ 'ի խռովութե̃ցս. ապաքինեա՛
'ի ցաւցս. մերժեա՛ 'ի հեծութե̃ցս. հեռացո՛
'ի յողբոցս. կազդուրեա՛ 'ի կականմանցս:
Տ̃ ողորմութե̃ և պարգևատու քաղցրու-
թեան, մի՛ զգրաւեալս արեամբ հզօրիդ՝
անտես արարեալ ընդ վայր կորուսաներ.
կանգնեա՛ զհասեալս յափն մահու՝ 'ի բազ-
մավտանգ հիւանդութե̃ս:

Գ. Ա՛հա բարդեցան կուտեցան շրջանակք
ամացս ընդունայնութեան, յորմէ հետէ
յայտնեցեալ ցուցայ յոչ պէտս երևեալ,
'ի յանդաստանէ մօրն իմոյ սեննեկի՝ փուշս
դժնիկի՝ մեղաց շառաւիղի. մի՛ լինիր ինձ
խայթոց խոցոտիչ՝ որո̃վ անդ տոհմին յու-

դայի, և կամ զաւակին եփրեմի։ Եւ քանզի
բուսուցեալ անկեցի յոգիս՝ փոխանակ ցո-
րենոյն բարեսերմութե՟՝ խոտս խայթողա-
կանս ինքնաթոյնս ընդարմացուցիչս, ըստ
դրոյն բանի՝ որ էրէցն է քան զաւետիսն,
զիա՞րդ ո՛չ կոչեցից զանձն իմ՝ դարշելի
անդաստան անիծաբեր փշովք մեղաց հեղձ-
եալ։ Ո՛չ սերմանեցի արդարութիւն, ըստ
բանին յովսեայ, և զիա՞րդ հնձեցից և ժո-
ղովեցից զկենաց պտուղն։ Ընկաւ ստինք
կուսութե՝ անձինս մաքրութե, ըստ մար-
գարէին բանի՝ որ առ իսրայէլ, կարօղ ես
տ՟ր՝ ՚ի նոյնն հաստատել։ Լայնեցի ընդար-
ձակեցի, ըստ մոլեկան բարուցն յուդայի,
զանկողին կամացս՝ դիւացն հոմանեաց, ՚ի
ձեռս քո՛ է ամփոփել դարձեալ ՚ի նոյն ըղ-
գաստութիւն։ Եթէ մարմնապէսն կցոր-
դութի ընդ տեսանողին՝ անարատ գործ-
եաց զպոռնիկն, իսկ դու փրկութի՝ հո-
գեպէս միացեալ ՚ի յիս՝ կրկին մաքրես-
ցես. եթէ արեգակնս այս անկենդան՝ ըս-
տեղծեալ առ ՚ի քէն երկրիս մատակարար,
և զկարակումն մօրից ցամաքէ, և զտհաս
պտուղս հասուցանէ, իսկ ստացօղդ ամե-
նից՝ հոգիդ այ՟՝ ո՞րքան զօրեսցես զտիղմ
չարեաց աղտոյ՝ և զթարախ պղծութե մե-
ղաց մթերից՝ խոկոյն սպառել։ Ո՜վ այր

կանխաւ իսկ ժամանեցի հայցել առ 'ի քէն բարի՝ առաւելեացն իմոց 'ի կարգ այս բանի, զի զհերքեալ փառաւորս պարտուց մահու՝ յամենախնամ աչաց հզօրիդ մի՛ մերժեսցես՝ օրհնեալ գթութի · արդ՝ կենագործեա՛ զիս զամենամեղս անդամօք մարմնոյս՝ ընդ բնութե հոգւոյս խորհել միշտ զքոյդ: Իսկ բարեգործացն խնդրել բարիս, բնութեան են օրէնք՝ անբռնադատ կրիցն յարակցապէս առ սոյն բերումն:

Քանզի արդարև առ միդ այդ պատուէր՝ ա͠մ հասակ զօրանայ · իսկ միւսոյդ երկրորդի՝ առաջնոյդ խնամով հանդիպել, ա͠ծականիդ է նմանութի · յաղագս այսր իւր՝ նախնի դասեցի զթշնամեացն իմոց աղերսանս, քան զերախտաւորացն բարիս:

Է · Եւ արդ՝ յիշեա՛ զն͞ս կրկին ընդ միոյ, որ 'ի քո անուն բարձրացեալ՝ զանարժանս զիս ընկալան · և տուր նոցա տէր ամենառատ բարերար և անոխակալ, վարձս արդարոյ և մարգարէի, թէև ես յաւէտ թափուր իցեմ յարժանեաց, ըստ հաւատոց ն͞ց և առ յոյս նոցին ակնկալութե, որ առ պարտաւոր գերիս՝ ողջամիտ կամօք ակնարկեն, ոչ թէ 'ի մասանցդ քո կեցուցչացդ՝ 'ի պահպանարան հոգւոյս ծածկութի՝ լիովլ ունիցիմ: Եւ զպատժաւորս՝

անամփոփելի 'ի քոց տեսութեանց, և անխաբելի 'ի յուղիղ կշռութեանց՝ քաղցր գթութեամբդ անսահմանելեաւ մերձեցեալ առ իս՝ մաքուր արարցես, անխայտառակելի պահելով 'ի տիեզերական յանդիմանութեան: Եւ ոչ շուք ինձ վայելչական դնել ախորժեն ինձ անարժանիս՝ սիրելիքն քո՝ վասն քոյ, նայեցեալ 'ի կրօնս զգեստուս բարեկերպութեան, չգիտելով զբիծս գաղտնեացն՝ երջանիկ կարգան եղկելոյս, և դու հնարաւոր ամենապարգև օրհնեալ մարդասէր՝ առ բնաւս ողորմած, վասն ամենաթշուառիս հեծութեան՝ հաշտեաց ընդ նմա ըստ հաւատոյ նոցա· ընծայեալ նոցին մատո՛ պարգևեա՛ զանեղծ մեծութիւնդ՝ և զանթառամելի զպսակդ՝ յահաւոր աւուրն յետնում հատուցմանն ամենափորձ ընտրութեան:

Է. Որ դու ես գրաւ փրկութեան մեծութեան անվաճանելի և անծախ գանձուց սորկիս և սովեցելոյս, 'ի վաճառ վերնային շահուօգտութեան՝ բանիւդ որ 'ի քէն՝ յորդեալ ձոխանամբք: Տուր ինձ սահման՝ ջրոյ հանգստեան· արձանացո՛ անփոփոխ՝ պատրաստական վստահութեան· կարգեա՛ օրհնաբանեալ՝ անկեղակարծ յուսոյ ամրութեան· տո՛ւր ամենախնամ դու՝ անաչառ պաշտպանութեան· սատանեցելոյս՝ բարեաց անդորրութիւն:

տարակուսելոյս՝ լուսոյ ապաւինութիւն · աշխարելոյս՝ մեծ երջանկութի · վհատելոյս՝ կենաց օգնութի · լքելոյս՝ անգայթագղելի օժանդակութի · նահանջելոյս՝ անսայթաք վերընթացութիւն։ Զի քո է բնաւդ, և 'ի քեն է ամենայնդ, և 'ի ձեռն քո բաշխին հաստատութիք պիտանացուաց համայնից կենաց · և քեզ վայելէ փառք՝ յաւիտեանս յաւիտենից · ամէն։

---

Վերստին յաւելուած կրկին հեծութե՝ նորին հըր-կողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի։ 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ։

## ԲԱՆ · ՂԳ

ա · Արքայ երկնաւոր · թագաւոր բարձրեալ · տր բոլորից · ամենից ակընկալութի · սանձօղ տեսականաց · հաստիչ իմանալեաց · պատճառ եղանութեց · կազմիչ հանդերձելոց · տուիչ լուսոյ · առիթ առաւօտու · պատրաստիչ վաղորդայնի · երևեցուցիչ երեկորի · տարրիչ խաւարի · առուեստաւոր բարեհնար · իմաստութեան գործոնեայ · քաւարան օրհնեալ · հալիչ մեղանաց · հալածիչ ցաւոց · քակտիչ դառնութեանց · պահպանարան հանգստեան · հնարք նիրհման · յորմարիչ քնոյ · պար-

դեւիչ ննջման · չնչոյ յարակարգութիւն · զգայութեան տեւողութի · ցրիչ ցնորից · յեղանակիչ անրջոց · փոխարկութի զարհուրմանց · այլայլութի տխրութեց · խափանիչ խիթմանց · ընդարձակիչ կարծեաց · համադրութի ծփմանց · ահագնութի խարդախմանց · հարուածիչ դիւաց · փախուցիչ ախտից · ընկլմիչ գայթագղութեց ։

ե̅ · Պաշտպանեա երկնաստեղծ ձեռամբդ · զօրացո՛ բարձրացեալ քո աջովդ · ամփոփեա ամենակալդ թեւօք · ծածկեա ածեան խնամօքդ · ամրացո՛ վերակացուէ վերնայնոցդ · շուրջանակի պարսպեա՝ գումարտակօքդ անմահից · 'ի յամենուստ պարփակեա՝ կըցորդութէ հրեշտակացդ · վանեա զընդդիմամարտն իմ՝ զինուորուէ զուարթնոցդ · պատսպարեա զսասանեալս՝ ածածնիդ մաղթանօք · զբանակս անդրանկացդ՝ բարեկարգեա ինձ պահապան ։ Նա՛ց ընդ աչացս դիմաց՝ և զմտացս իմ տեսանելիս · զդաստ տրա ընդ ոգւոցս՝ և զծանրաբեռն կրիցս դանդաղութի · վերացո՛ տէ՛ր 'ի զգայուէցս՝ զմածեալս յիմարութի · բա՛րձ միայն բարեգործ՝ զպատրուակս թանձրութիւն ։ Ընդ սկզբան բերմանս լուսոյ՝ զողորմութի քո ծագեա · ընդ ելից արեւուն՝ արդարուէ արեգակնդ 'ի յանձկութի սրտիս մտցէ ·

ճառագայթ քո փառացդ՝ 'ի յիմաստից խորհրդանոց ջահեցի. խաչիդ աւետանագրութիւն՝ ընդ շունչս և ընդ մարմինս համասփիւռ տարածեցի: Յանձն առնեմ քեզ յաւուրս՝ զքո յարմարեալ տաղաւարըս պահպանաւ ոգւոյս՝ որ 'ի սմին: Զի դու ես ած անքննին, առ ամենեսին բաւական, և յամենայնում բովանդակ, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

---

*Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ Նորին հըսկողի, առ նոյն այերս մաղթանաց բանի. 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ:*

## ԲԱՆ. ՁԵ

ա. Եւ արդ՝ վասն զի արթնականն մեր զուարթութիւն՝ քեզ ննջումն իմն է համարեալ, իսկ 'ի խոր թմբրութիւն լռելն՝ վն ուղիղ հաւատոյն 'ի քեզ՝ անթարթափ բացութիւն աչաց, ուղղեա՛ հոգւոյդ քո իմաստութեամբ զյաջողուած ձեռին գործոյ՝ ընդ հեծութեան ձայնիս մաղթանաց: Զօրացո՛ տէր՝ 'ի հանդէս բարի ճգնաւորական արի վաստակոյ. կցո՛րդ լեր կարեացս տկարութեան. թեթևեա՛ կացո զաշխատութեանս այս սկիզբն. արագեա՛ միշտ կարօղ՝ զյառաջադրեալ ձեռակերտս. դիւ-

րաւորս ընթացս 'ի յաւարտումն լրմանն։ 'Ի փախճան իրին՝ բերկրութբ զիս հասո· ժամն կացուցես՝ 'ի հանդիպումն յուսոյն· կցորդ լեր ուղւոյն՝ ճանապարհիս ընթացից· 'ի թուիչս ամբարձման՝ փութացուսցես յօգտակարն· ընդ աջմէ իմ լեցիս՝ 'ի վտանգի ծանրութեն· զձայն քո լուր՝ 'ի յանձկութեն պահու· ձեռամբ քո կեցո՝ 'ի կորստեանն ժամու· մատամբ քո ազդեա՝ 'ի սահմանին անձկութե· հարթեա զխորրոց՝ ամենաչար խափանմանն· հոգեղինին առաքմամբ, ըստ ամբակումայ, ինձ հնարեա· բան ինձ շնորհեա՝ 'ի յատենի բաղմութեն· իմաստութի յիս անկեա՝ 'ի հանդիպման քննութեան։ Ամփոփ կամաց քոց հովանացիր հրաշապէս· հանդարտեցո փայ ախուդ կենաց՝ զծովուս մրրիկ· սանձեա զասատեաց կենցաղոյս պատկեր՝ քոյին հրամանաւդ· քանզի թէ ըստ ողորմութի քո տէր՝ կամեսցի, այս լուծութի կոհակաց կարծր է քան զվէմ· և թէ 'ի ցամաքի անտես առնիցես, իբր զանկայուն՝ պնդութի յաստակիս 'ի ներքոյ ոտի հոսեալ սաստանի։ Է· Արդ ընկալ յո զպաղատանացս ձեռնարկութի՝ քեզ 'ի հաճութի, և արա ինձ զամենակարծն գայթագղութի՝ մեծ վստահութիւն։ Ապ 'ի ջրահեղձոյց ամենակոր-

ծանն դարու, որք 'ի հարթ տարածման դեանի առանց երկիւղի յանհոգս կէին, յողորմութենէդ ամայի մնացեալ՝ կորուսան. իսկ ընդ հովանաւոր մածուածով լաստիւն յոգնատատան հիմանն հայթայթանօք՝ յանուն գթածիդ յեցեալ պահեցան. ընդ որս՝ և զաղաչօղս մշտատատան՝ 'ի նաւահանգիստըն խաղաղութե մարդասիրապէս պըծեալ ապրեցո. վարձս 'ի քոյոց ընդ իս բերելով հոգևոր շահից, զստորաբերս այս ստուարութիւն պարտուցս լքեալ բանից առակաւ, 'ի քեզ տր անկայց միացեալ խոստ անբաժանելի՝ օրհնեալ յմմի: Ու կցորդելով այսմ մաղթանաց հոգեղէնքն ամենամաքուրք՝ ընդ հողեղինացն մարտիրոսաց, որք ջրով և հրով փորձեցան, և յելից զերծմանն ընդ մեր խնդրեցին, և մեզ յիշատակ թողին օգնութե, ասասցեն ընդ մեզ համաբանաբար զուգամասնութբ՝ եղիցի եղիցի:

---

Վերստին յաւելեալ կրկին հեծութե՝ Նորին հրակողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի, 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ.

## ԲԱՆ · ՁԶ

ա. Ընդ այսր հառաչանաց թախծութե ողբոց՝ 'ի բաղմոց կերպից շարա-

կարգելոց , և ամենից հոգւոց ողորմեա՛ գովեալ և երկայնամիտ Թագաւոր։ Նա և այնոցիկ առաւել՝ որոց հատեալ է ակնկալութի փրկութե կենաց . որք ննջեցին անպատրաստաբար՝ շիջեալ լապտերօք իւղոյն պակասութեան։ Ահա յիշեա՛ տէր իմ գթութե , և 'ի յայս ևս պատճառ իրաւունս ինձ գրեա՛։ Քանզի թէև 'ի փառս ահաւորութե սքանչելեաց մեծիդ՝ հակառակօքն հանդերձեցեր զկազմած մարդոյս , զոմն ծանր՝ և զոմն թեթև . զմին զով՝ և զմիւսն հրային . զի դիմադրութին 'ի հակառակացն հարթ պահեցեալ՝ արդա՛ր կոչեսցուք հաւատարիմ հաւատարութբն . և 'ի յայսմ դարման առաքինութեան վերաբերեալ ընդ ամբարձելոյն , զխոնարհութին առ կաւն դիտման անմռուաց պահեալ՝ պահ ընկալցուք ճգնաւորականն։ Այլ քանզի յայսմ կանոնէ ուխտի վրիպեցաք , և անասնաբար սահեցմամբ ըստ հողոյն զիջման՝ ընդ երկիր մածաք , այլ ոմն ախտիւ՝ և այլ ոմն անզգթութբ . միս մասն մոլութբ ամենաբաղձ կերակրոց՝ իբր զաղան մշտաբոյծ՝ յօրակայ կապեալ ընդ բնութես։ Իսկ 'ի քաւիցս՝ ոմն անըմբռնելի և անողոքելի սլացմամբ 'ի բաց ոստուցեալ՝ վայրենապէս ամբարտաւանէ՛ . եթէ ջեռնումք

տապօրլսիրոյն որ 'ի քեզ՝ նշխարաւ բոցոյն որ 'ի մեզ, ցուրտն առընթեր կենակից նմին՝ զնոյն կասեցուցեալ, բարւոյն ընդ միջէ՛. եթէ օդականաւն հրեշտակայնովն յաւիցիմք 'ի քեզ, ծանրութ̃ի թանձրու անդրանիկ նիւթոյս այս հողոյ՝ 'ի ստորև քարշեալ խափանէ:

ԺԵ. Դու արդ՝ յամենուստ պարտեալ և խոպաւ լքեալ՝ իբր զապիկար հաշմեալ հերքեցայ կորեայ վանեցայ. վատնեալ 'ի բաղմաց՝ 'ի մահ դրաւեցայ. վասն որոյ 'ի պարգևականէն զրկեցեալ՝ յողորմութե̃ն կողմ նայիմ. և պատկառեալ դիմօք համայնից ունօղս՝ զընաւից աղերսաբանեմ զմեռելոցն՝ քեզ կենդանեաց. քանզի կարօղ ես յաւէտ հնարիւք և կորստականացն ըստ ի մեռելոցն. ամ̃ ինչ քեզ զօրելի է. նա՛ զի՝ և ընդ անակար կարելոյդ՝ և կամելդ է ախորժելի:

ԺԶ. Արդ՝ այսց երկուց բարդաւած շնորհաց նորոգչաց՝ առ միմեանս եկեալ՝ կարելն ընդ կամելն, բարձեալ եղիցի և յուսահատութե̃ն վհատութ̃ի ազգաց մեղաւորաց. և ժամանեալ հասցէ՛ աւետեացդ լոյս՝ հոգւոց բժշկութե̃ քումդ հրամանի՝ տէ՛ր ամ̃ի, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հրակողի , առ նոյն աղերս մաղթանաց բանի , ՚ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̅յ ·

## ԲԱՆ · ՁԷ

ա̅ · Եւ արդ՝ քանզի ՚ի գլուխ կատարման հասեալ սակաւամասնեայ կտակի այսր ողբերգութեան , այժմ տէր՝ վախճան դադարման առնուլ ընդ այսց բանից մաղթանաց՝ ինքնանախատս կշտամբութեան՝ և որ յիս կրին չար սովորութիւք · Որ քեզէն կարգեցեր սահման աւետեաց անկնկալութեան դատապարտելոյս՝ ասելով , ոչ են կամք առաջի հօր իմոյ՝ եթէ կորնչիցի մի ոք ՚ի փոքրկանցս · և դարձեալ , այս են կամք հօր իմոյ՝ զի զամենեսին ինձ յանձնարարեալն ոչ կորուսից ·

բ̅ · Ահա օրհնեա՛լ ես ՚ի գթութեան · բարեբանեալ միշտ ՚ի քաղցրութեան · խոստովանեալ յերկայնմտութեան · ծանուցեալ ՚ի յայցելութեան · քարոզեալ տ̅ր ՚ի փրկութեան · ներբողեալ դու յառատութեան · պատուեցեալ ՚ի պաշտպանութեան · փառաւորեալ ես ՚ի փրկութեան · երկրպագեալ յանբաւ բարձրութեան : պաշտեցեալ ՚ի յանքննութեան · գովեցեալ միայն ՚ի յաղթութեան · վերաձայնեալ ՚ի մեծ զօրութեան · խնկաւորեալ յողորմածութեան · համբուրեցեալ յանճառ

հեզութե՟ · ճաշակեցեալ 'ի խոնարհութե՟ ։ Ընդ քեզ և ծնողդ քո երկնաւոր ա՟ծդ բոլորից մխիթարութե՟ · ըստ որում հոգիդ քո նր՟ բարութե՟ , որ զանկեալ զգրաստ թշնամւոյն՝ և զգայթագղեալ մարդն անբանութե՟՝ կանոնեցեր ոչ անտես առնել ։ Արդ երախտիս հզօրիդ 'ի յիս , և առաքինութի՟ մեծիդ 'ի բարձունս տօնեալ անդադար յանվախճան փառաբանողաց · որովք զայս ձայն աղերսական յարդեալ ընկալցիս՝ մարտիրոսացն պաղատանօք 'ի հոտ հաճութե՟ բուրման անուշից ։ Եւ այսու փրկանօք հաշտարար բանի՝ զնախնեացն պարտս և զանէրևոյթ վէրս՝ միջնովքն և վերջնովքն մահացուցանողօքն զանձն և զմարմին բժշկեա՝ ամենակարող · զներքինս և զարտաքինս · զտիպքն և զգիծքն , և զխարանս հարուածոցն · բարձեալ և մաքրեալ դեղովք ողորմութեանդ զկտեալ խածուածս բազմագունիս , որք գարշելիս ընդ ախորժելեացն քեզ ցուցանեն զէութիւն բնութեանս ։

Դ · Եւ եթէ հասից յամս ծերութե՟ քև առաջնորդեալ՝ արժանիս մահու , մի՛ թողցես զտկարութի՟ս · մի՛ անարգեր զալիսն · մի՛ կորացուսցես զկործանեալն · մի՛ զիջուսցես զլքեալն · մի՛ վայրաբերեր զխո-

նարհեալն • մի՛ շնչման հողմոյ մատներ զտա-
կայծեալն • մի՛ ընդպահկեսցես զդեգե-
եալն • մի՛ անվերարկու տաներ զսառուց-
եալն • մի՛ անդարման լիցի տագնապեալն ։
Մ՛ի տանից տածելոյ՝ յարկն խարխալեալ •
մի՛ անպատիւ՝ պատկերն հնացեալ • մի՛ պա-
րարտութին անհամեալ • մի՛ շուք շնորհին
անարգեալ • մի՛ հնութին քամահեալ • մի՛
նաւ հոգւոյս ալէկոծեալ • մի՛ երկարութի
յուսոյն կորեցեալ • մի՛ լար շաւիղին խղեալ •
մի՛ ուշ իմաստին բարձեալ • մի՛ դղին կող-
ման զեղծեալ • մի՛ ամբարձմանն թևք փե-
տեալ • մի՛ զուարթութի դեղոյն տգեղեալ •
մի՛ ճաճանչ նշուլին քաղեալ • մի՛ պատու-
հանք աչացս փակեալ • մի՛ լուսաւորութի
նորին խափանեալ • մի՛ պատկերն խօսուն
անկեալ ։ Հ՛ա աղաչեմ զքեզ՝ բարեգութ,
տէր սրբովք պաղատիմ, լո՛ւր սոցին ինձ
կանխաւ, զի զանազանն մի՛ մոռասցիս ։
Դու առաջնորդեցեր ինձ, ըստ սաղմոսո-
ղին, և ապրեցուցեր, հա՛ն տր՝ ընդ երգո-
ղին՝ և՚ի կարծեացն կասկածանաց, յորմէ
երկնչիմ։ Իսկ ես չեմ արժանի ՚ի քէն՝ և
ո՛չ հասարակական կերակրոյն վարձու, այլ
դու կարօղ ես սովորաբար՝ և առ զլացօղս
բարեգործել ։ Ո՛չ են զարմանալիք անճա-
ռից բարեաց՝ միայն հրաշագործ առ տմ

երկայնմտութիւն, ընդ հօր և հոգւոյդ սրբոյ օրհնեալ հանապազ՝ յաւիտեանս յաւիտենից · ամէն ։

---

*Վերստին յաւելուած կրկին հեծութեն՝ նորին հըսկողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի, 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ·*

## ԲԱՆ · ՂԸ

Ա · Եւ արդ՝ ջուր կամաց և կաթ արտասուաց՝ բեկութեամբ հոգւոյս՝ մնացս լքմամբ՝ խորտակմամբ սրտիս հեղեալ առաջի՝ զմարգարէին յիշեցուցանեմ զարտամաթացույն սամուէլի, զոր առեալ էհեղ 'ի սկաւառակէ յանդիման քո՝ ամենատես, առ ժողովրդեանն օրինակութիւն զանձն արկանելոյ խոստովանութբ և հնազանդութբ կենդանարարդ գարշապարաց ։ Բ · Եւ արդ՝ ընկա՛լ զայս հիւսուած բանի աղիողորմ հեծեծանաց, և հաստատեսցես յայս նուէր բանի՝ անարիւն զոհի՝ Թա՛գաւոր երկնի · և օրհնեալ սրբեա՛ զտառ մատենի այսր ողբերգութե · և գրեալ դրոշմեսցես յարձան յաւիտեան՝ ընդ հաճոյականացն սպասաւորութիւս ։ Կացցէ առաջի քո մըշտնջենաւոր, և յիշատակեսցի 'ի լսելիսդ քո հանապազ · բարբառեսցի շրթամբք ընթերց-

լոյ քոյ , և խօսեցայ բերանովք հրեշտակաց քոց . տարածեցայ հանդէպ աթոռոյ քոյ , և ընծայեցայ 'ի սրահ սրբութե քոյ . խնկեցայ 'ի տաճար անուանքոյ, և բուրեցայ 'ի սեղան փառաց քոց . պահեցայ 'ի գանձարանի քում , և համբարեցայ 'ի ստացուածս քո: Պատմեցայ 'ի յականջս ազգաց , և քարոզեցայ 'ի լուր ժողովրդոց . Նկարեցայ 'ի դրունս իմաստից , և տպաւորեցայ 'ի սեամս զգայութեց . իբր կենդանեօք՝ զիմս պատմեցէ խոստովանեալ զանօրէնութի . և թէպէտ վախճան ընկալայց իբր զմահացու , այլ յարակայութե բանի այսր սոփերի՝ գրեցայց կենդանի: Մնասցէ սա անեղծ 'ի կամս քո տէր՝ ինձ պատժապարտիս համբարձեալ միշտ՝ անդուլ դատիչ . անաչառ կշտամբիչ . անպատկառ յանդիմանիչ . անամաչելի դսրովիչ . անողոքելի պարսաւիչ . անհամբոյր ծանակիչ . անմորդասիրելի մատնիչ . անփրկելի տանջիչ . անկաշառ կառափիչ . անխնամելի յայտնիչ . ապառուշ հրապարակիչ . աշխարհալուր բողոքիչ: Փոխով մեծութեան ազդման առանց լռութե և կամ դադարման՝ զիմոցս պարտեաց խոստովանեցայ:

Դ . Այն գիր՝ իմով ձայնիւ՝ իբր զիս ընդ իմ աղաղակեսցէ , տարածեսցէ զծած-

կեալսն · հռչակեցէ՛ զգաղտնիսն · կակա-
նեցէ՛ զկատարածն · հնչեցէ՛ զմոռաց-
եալսն · յայտնեցէ՛ զաներևոյթսն · բար-
բառեցէ՛ զբարուրսն · քարոզեցէ՛ զխո-
րոցն · պատմեցէ՛ զմեղացն · մերկացուցէ՛
զանտեսիցն · ցուցցէ՛ զկերպարանս թաքու-
ցելոցն ։ Շօշափեցին սովաւ որուքն ·
գտցին գայթագղութիւքն · յանդիմանես-
ցին անձառք · քամեսցին չարեացն մնաց-
ուածքն ։ Եւ թագաւորեսցեն կեանքդ
շնորհաց ողորմութեան քո ք՛ս՝ ՚ի գանձս
պահեստի ոսկերացն ցամաքելոց · որով ՚ի
ժամանակս կենդանականս սկզբնաւոր լու-
սոյ մոխ գարնայնոյն՝ նորոգման աւուրն
պայծառութեան՝ քոյովդ ցօղով յոգի ա-
ճեցեալ այսու փրկութ՟ անմահականաւ ,
և անցամաքելի վերամբարձութ՟ շառա-
ւիղս ձգեալ իմանալեացն բարեաց՝ դարձ-
եալ դալարացայց և կրկին ծաղկեցայց ,
ըստ քոյինաշունչ գրոյն յուսադրութ՟ ։
Եւ քեզ միայնոյ փրկողի՝ և հոգւոյդ քում
հօր խնկալցի՝ միասնական տէրութեանդ
և անճառ երրորդութեանդ՝ խորհրդական
գովեստիւ փառք և երկրպագութիւն յա-
ւիտեանս · ամէն ։

Վերստին յաւելուած կրկին հեծութե̃՝ նորին հրակողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի. 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̃յ.

## ԲԱՆ · ՁԹ

ա̃ · Ա̃Ծ և տէր · կեանք և արարիչ · ողորմած · գթած · լոյս · երկայնամիտ · անոխակալ · մարդասէր · ամենագութ · պարգևատու · փրկիչ · օրհնեալ · գովեալ · բարեբանեալ: Դարան ամրութե̃ · պատսպարան վստահութե̃ · առանց նենգութեան բարի · առանց խաւարի ճառագայթ · քաւիչ մեղաց · ողջացուցիչ վիրաց · անհասանելեաց հնարք · անմատչելեաց հըպաւոր · անյուսութե̃ ելք · անուն քո խոստովանեալ՝ ա̃յ որդի · և հօր քո ընդ քեզ հզօրի և ահաւորի, և հոգւոյդ ամենակալի՝ և ընդ քեզ երկրպագելւոյ՝ փառք և պաշտօն գոհաբանութե̃՝ յաւիտեանս · ամէն:

---

Վերստին յաւելուած կրկին հեծութե̃՝ նորին հրակողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի. 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̃յ.

## ԲԱՆ · Ղ

ա̃ · Բարեբանեա՛լ ա̃ծ երկնաւոր, միայն արարիչ, տ̃ր ամենակալ · մեծութե̃

ահեղ․ գթութի̃ օրհնաբանելի․ ողորմութի̃ խոստովանելի․ բարերարութի̃ երկրպագելի․ խնամակալութի̃ պաշտելի․ մարդասիրութի̃ տօնելի․ պահպանութի̃ խնկելի․ բարձրեալ անքննին․ մերձաւոր կամարար․ ապաւէն անկասկածելի․ մխիթար սրտից․ փարատիչ վշտաց․ ապաքինիչ ցաւոց․ սպառու̃մն վհատութ̃եց․ բարձու̃մն պարտեաց․ փոխարկիչ կարեաց․ կարգաւորիչ կրից․ յարմարիչ բանից․ սանձարկու լեզուի․ շրջադրութի̃ շնչոյ․ կացուցիչ հագագի․ ամփոփիչ խորհրդոց․ կրթարան կամաց․ արձանացուցիչ յուղմանց․ հանդարտութի̃ մրրկաց․ խաղաղութի̃ ծփանաց, որ ունիս զթևոց ամենընթաց իշխանականիս, և իմաստութեամբ նուաճեալ առ քեզ դարձուցանես ։

Է․ Գոհաբանեալ միշտ երախտաւոր, որ հեզութբ̃ անհպարտութե̃ երկայնամտեալ հանգչիս տենչանօք անճառ հրաշիւք՝ յան ձինս սրբոց ։ Թագաւոր էից համայնից, ա̃մբ ծանուցեալ գթած․ սկզբնահայր և նախաշաւիղ սիրոյն ընթացից․ ճանապարհ կենաց, որ առաջնորդես քաղցրութեամբ՝ դիմելոյս 'ի լոյսդ վերին, Զեռնկալու մեծվստահութե̃, որ ոչ թողացուցանես գայթագղելոյս 'ի վայր կործանել․ յուսոյ

կերպարան, ճշմարիտ առ հաւատչէիւ աղաչողաց մտանց յայտնի երևեալ. ապաւինութիւն հանգստեան, որ ոչ երբէք մտանես վտանգի դատապարտութեան. Ազատութիւն շնորհաձիր, որ տաս լիապէս առանց փոխատրութեան փրկանաց. առատութիւն աննախանձելի, որ քոյին փառաւորութեամբ՝ զանարգ նիւթ հողոյս ճոխացուցանես. Պայծառութիւն անստուեր, որ ճառագայթիւք ահեղ բարձրութեան պարածածկեալ զթշուառս՝ կրկին բարգաւաճառնես. Քաւիչ մեղանաց բազմաց, որ զհերքեալս 'ի փրկութենէ առաջնոյն պայծառութեան նորոգեալ՝ վերստին վայելչացուցանես. Հնարաւոր դիւրահաս՝ առ ամենայն անբաւ գերամբարձութիւն յաւէտ յառաջեալ. ելք վստահութեան առ խոստացելոցն վայելս. երանութիւն անձկալի, յոր զկենդանութիւն շնչոյս լքանելն է ախորժելի, զի զքեզ գտից՝ կենդանի. Կամք անփոխադրելի՝ առ 'ի քաւութիւն գերոյս զօրացեալ ամենագովելի. անսխալելի դեղ կենաց, որ և մեռելոց՝ բնաւին եղծելոց առնես զսքանչելիս. Ամենաստեղծ աներկբայելի, որ ըզհուրբ կիզեալն, և զհողմով հոսեալն, և զժանեօք գազանաց ծախեալն, 'ի քթթել ական նոյին հիւթականութեան անպակաս

յարուցանես ։ Անհաւասար համարձակութիւն, յորում ա̃ծօրէն պանծանօք պարծելն է իրաւացի ։

Է • Հայեա՛ց տէ՛ր՝ յերկնից զուարթ քաղցրութբ̃ յամենակործան վտանգ նեղելոյս, և արա՛ անդորր հանգստական դիւրաւոր՝ ՚ի բազմատագնապս հեծութենէ ։ Ու զյարուցեալ գումարս սատակչացն, եթէ սպառազէնք այսական դժնեայ հնարաւորութե̃ բուռն մարտակցաց պատկանել զինուք, եթէ մեղաց ադեղ և քո ատելի կերպարանք, եթէ ցաւոց և ախտից վտանիչ և կորստական նշմարանք, մերժեսցես հանցես հատցես խափանեսցես և հալածեսցես՝ հեռի սահմանաւ իսպառ տարագրեալ անդարձ որոշմամբ վերստին կորստեանն. և կառուսցես կացուսցես նպատակ կենաց և ամուր մահարձան՝ զնշան խաչիդ՝ ապաւինելոյս ՚ի քեզ՝ փրկութի ։ Ու յայսմ անպարտ և անպատիր և անվանելի արուեստից ահաւորիդ մեծութե̃՝ լուծցին որոգայթքն գաղտնածածուկ սատանայականք • կապտեսցին մեքենայքն • վատնեսցին գայթակղութիքն • խայտառակեսցին հաղբիցն դրութիք • յայտնեսցին երևոյթք որսոյն • գտցին նենգողին ծուղակք • վերասցին վարմին վերարկուք •

տոչորեցի՛ն որոմանցն բոյսք • նզովեցի՛ն բռնաւորի՛ն չարաբանութի՛ւնք • կտրեցի՛ լար խաբէութե՛ ՚ի մահ որսողի՛ն • պարսեցի՛ն պատրողի՛ն բանսարկութի՛ւնք • պակասեցի՛ն զէնք զրպարտողի՛ն • անկցի՛ն սուսերք մահաբերի՛ն • սուզեցի՛ն սադրողի՛ն պատրաստութի՛ւնք • արձակեցի՛ն տոռունք տագնապողի՛ն։ Այլայլեցի՛ն սուտ կերպարանք կեղծաւորի՛ն • սատակեցի՛ն խրոխտականացն խիստ յարձակմունք • ցրուեցի՛ն կռցորդութի՛ւնք կերչացն • բաժանեցի՛ն ազի՛նք աւազակացն • քայքայեցի՛ն բոյլք բարբարոսացն • քանդեցի՛ն ամրոցք ապստամբողացն • արգելցի՛ն ամպրոպք յանդգնելոցն • փարատեցի՛ն փորձողի՛ն անձրևք • հալեցի՛ և ցամաքեցի՛ եղեամն աղանդաւորի՛ն։ Խորտակեցի՛ եղջիւր գոռողի՛ն • մանրեցի՛ն ամբառնալի՛ք դրօշի՛ցն կերպարանաց • փշրեցի՛ն ամբարհաւանութի՛ւնք հպարտացելոցն • նահանջեցի՛ն դիմեցմունք ճակատելոցն • քակտեցի՛ն միաբանութի՛ւնք զօրացն բելիարայ, թէ անմարմի՛նք, և եթէ մարմնաւորք • փախիցե՛ն ընդ նոյն ճանապարհ ՚ի մի շաւղաց հետոց՝ յեօթն տարակոյս • ՚ի գուբն ի՛նձ փորեալ՝ ի՛նքեա՛նք ընկճեցի՛ն։ Յեղանակեցի՛ն ձմեռունք ձանձրանուցչի՛ն • հատցի՛ կապն կցորդութեան՝

մշտաջան աւազակին . Նողկացի մտացս կայից՝ համբոյր շողոքորդին . ընդ միջեալ մեկնեցին՝ նետաձգութիք նեղչին . կացցէ 'ի սասանման՝ նաւ խարդախողին . խլեցին յարմատոց անտի՝ ատամունք խածանողին :

Դ . Սա̃ փայտիդ օրհնութեն կենաց , յորում պրկեցար ա̃ծդ անըմբռնելի . յիշատակաւ բեւեռացդ , որով 'ի գործի մահուն մածուցար՝ արարիչդ երկնի և երկրի . արեամբդ տէրունականաւ , որով զվիշապն մեծ կարթիւ ածեալ որսացար . Լեղւոյն դառնութբ̃՝ զոր արբեալ , զդեղատուուի̃ կորուսչին արտաքս հեղեր . պատմաբանուբ̃ ընձական ձաւիւք կրից սարսափելեաց , որով զլրբուի̃ հակառակողին ըմբերանեալ ամաչեցուցեր . անուամբդ անհասականաւ ամենայնիւ անթարգմանելւոյդ . յորմէ դողան և դատապարտին սոսկացեալ սաստիկ սարսափմամբ՝ բնութիք ա̃մ երևութից և աներևութից , եղիցին այս ա̃մ պարգևք շնորհաց՝ խոստովանելւոյս 'ի պաշտպանուի̃ , 'ի բժշկուի̃ և 'ի քաւուի̃ : Եւ մահաբեր դառնաթոյն օձին , և որ 'ի նմա աղտեաց ախեղերադաւ չարութիւնն , 'ի սատակումն եղիցի նորին . նոյն ինքն 'ի կորուստ և յանբժշկական հարուած տանջանացն՝

տուեալ մատնեացն, կապեացն և ըմբռնեացն։ Լուիցի ողորմութ̅ի ստեղծողիդ ընդ իս, և շունչ ոգւոյս իմ ընդ քեզ անբաժանօրէն կապաւ միացեալ 'ի մի։

Ե. Եւ որ ոք ընթերցցի զայս աղերս ձայնի՝ մաղթանաց գոչման՝ աղօթից հայցման ծերոյ և տղայոյ, կուսի և երիտասարդի, և եթէ յաղախնաց ոք պաղատեսցի ա̅ծսիրաբար, հաւատարապէս անաչառութ̅ ընկալցին 'ի քէն մասն երանութեան՝ պարտուց ազատութ̅ե, հաստատեալ վերստին յանարատութ̅ի նորոգ մաքրութ̅ե, նկարեալ դարձեալ զգոյդ կերպարան անփոփոխելի։ Ր.հա տիրապէս հնարաւոր՝ զօրեղ՝ անպատում անհաս՝ անիմանալի, տեսցե՛ս աստանօր 'ի հառաչանս կողկողանաց այսր հեծութ̅ե, որ 'ի բոլորից շրթանց ընծայեալ քեզ մատուցանի, վ̅ս հօր քո երկնաւորի և բարերարի, և հոգւոյդ սրբոյ փառակցի և կենդանատուի, ա̅ծածնիդ բարեխօսութ̅բ, և խնդրուածովք ամենայն ս̅րբց։ Զի դու ստեղծեր զա̅մ. և 'ի քէն եղե՛ն ամենայնք. և դու տիրես ա̅մ. և քեզ փառք յամենեցունց՝ միդ յիսկութէ անժամանակ երրորդութեդ, զուգակցապէս փառաւորեալ յանբաւս, և յաւիտենից յաւիտեանս.

ամէն։

Վերստին յաւելեալ կրկին հեծութե՝ նորին հրակողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի. ՚ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ.

## ԲԱՆ · ՂԱ

Ա · ՏԷՐ՝ տէր գթութեց և ած ողորմութեց · անուն մեծութե · ձայն ահաւորութե · կոչումն սաստկութե · լուր անհասութե · բարբառ դողութե · հնչումն հիացման · յուսադրութի բարերարութեան ամենողորմ քաղցրութեան։ Յորմէ երկուցեալ սատանին ամ բնութիք եղելոց · ՚ի քո սպառնալեաց ահիդ պակուցման՝ սաւառնին սերոբէք · ամփոփին քերոբէք · պարուրին պարք լուսակերպից · երկնչին հիացմամբ բոլոր պետութիք վերնոցն · նոյնք ցնծան դողութբ մեծաւ ՚ի մի նաւակատիս բերկրութե · զարհուրին դեք · ընկրկին չարութեցն գունդք · պակասին խաւարասիրացն հոգիք · անդնդոց մատնին հրեշտակք օտարին։ Կայլին նշանաւ խաչին՝ յարձակմունք դիմամարտին · փակին ՚ի սորին բանալի՝ քինաւոր ամաղեկացիքն · անխզելի հանգուցիւք պաշարին խումբք հակառակորդին · արգելին անղերծ զընդանաւ՝ մահաղինացն կամաւք · պնդին ՚ի մետաղս ահեղ հրամանիդ՝ այսա-

կանացն գումարք • պապանձին կարկեալ՝ ընդդիմաբանիցն դատակցութիք • պարաւանդին հիւծմամբ կորստեան աներեւութիցն ժողովք • անլոյծ շղթայիւք նեղին՝ առաքելութիք դերաքրիստոսին ։

Է • Ահա կարկառեմ մատամբք ձեռին՝ զտեառնագրուն նշանիդ 'ի ժամ գիշերիս, որ ոչ մթանաս խաւարաւ անգիտութե՝ ամենեւին տեսականութե, քան թէ 'ի լոյս անմատոյց հանդուցեալ բնակես ։ Ընկալ զաղաչօղս փառանգաւոր գոհաբան՝ ընդ պաշպանութե թեւոց հզօրիդ • փրկեա 'ի ցնորից՝ եկամուտ պղտորութեց • սուրբ արա զզգայարան հայելեաց՝ սրտիս նկատմանց • ամրացո փայտիւդ կենաց 'ի տխրական անրջոց • արեամբ քո սրսկեա զշրջարկութիս կայից • զհետս երումոցն՝ կաթուածով կենարար կողիդ գծագրեա • երդոցն պահպանարան՝ քառակերպիդ ձեւակերպութ եղիցի • հանդէպ տեսութե աչացս ամբարձման՝ փրկականդ քո կրից խորհուրդ առ դիցի • ընդ բարաւոր յարկիս՝ չարչարանաց քոց գործի հաստիցի • զծառոյդ օրհնութե՝ հաւատք յուսոյ իմոյ կախեսցի ։ Որդե՛լ տէ՛ր սովաղատակիչն հոգւոց • մացէ անխափան՝ պաշտպանն լուսոյ • և ընդ սաստիկ ծանրութե ցաւոցս՝ և զեռն պարտեացս թե-

թեւոցն, զոր 'ի լուսարանի մտացս ամփոփ-
ման մահճացս անկողնի՝ ուշաբերեալ զյու-
սահատութեանցն դառն պտղոցն՝ խոստովա-
նիմ ամենագիտիդ զանհամար մասունս
գործոց չարաչար անօրէնութեանցս ։

Է. [illegible]անգամ զխոստակեալս 'ի բազմածուփս
աշխատութեան . քանզի զտագնապ տարակու-
սանաց ոգւոյս կործանման, զդառնութիւն
ընդ վշտացն . զհեծութիւն ընդ կարեացն .
զանձկութիւն ընդ թշուառութեանցն . զհա-
ռաչմունս ընդ խորտակմանցն . զբեկութիւն
ընդ ափշութեանցն . զթմբրութիւն ընդ շլրտ-
մանցն . զարբեցութիւն ընդ յիմարութեանցն .
զթերամտութիւն ընդ խելագարութեանցն .
զսառուցումն սիրտն, եւ զհրային ջերմութիւն
աղուականն անտին ։ ( )Ժանդանք լեր տկա-
րութեան բազմախուռն տարտամութեան, բա-
րեգործ աջովդ շնորհի . ձեռամբդ նորո-
գողի . մատամբդ կենսաբաշխի . փառօքդ
մշտափայլի . յարակայութեամբդ անեղծի .
երեսօքդ զուարթականի . իսկութեամբդ էիդ
պաշտելի . քաղցրութեամբդ երկրպագելի ։
Հատ զչարաչար հեծութիւն՝ կորստականս
խեղդման . զնոր գիւտ չարին . զհին խարդա-
խութիւն բանսարկուին . զօտար աղդեցմունս՝
'ի մահ կրթողին . զանյարմարական երեւոյթս՝
հանապազորդեան եղեռնագործին . զառ-

աչս հնարագրութ̃ն դժնդակ դիւին · զօ-
ղորքական բոցաշնչութ̃ի ձգող կախարդին ։
Պահեա՛ 'ի տեղւոջ հանգստեան մեռօրի-
նակ այսր դադարման , յաներևոյթ մտա-
ծութե̃ց · 'ի մասնաւոր սխալութեանց · 'ի
մեծագոյն գայթագղութե̃ց · 'ի փոքրագոյն
ոտնաառութե̃ց · 'ի խաբեբայ չար ձանձրու-
թե̃ց ։ Հեռացո՛ զանհանդէպ մտածութ̃ի
'ի զգայութե̃ց ծառայիս յանցաւորի · զկիրս
բասրելիս · զկարս թշնամանելիս · զդիպուա
ծըս պատկառելիս · զհետս վրիպելիս · զպա-
տիրս ձաղելիս · զխորհուրդս անգոսնելիս ·
զաւելաբանութիւնս նշկահելիս ։ Ընախալ
հոգւով և անշաղախ մարմնով զապաւին-
եալս 'ի քեզ հանդերձեա՛ , 'ի շնչմանէ հող-
մոց · 'ի զարկմանէ բռնութե̃ց · 'ի բախմանէ
փոթորկաց · 'ի յուսմանէ մրրկաց · 'ի յար-
ձակմանէ գազանաց ։ Ի կափման աչացս՝
հայեցուած սրտիս մի' ստուերասցի , այլ
զուարթասցի պայծառասցի վայելչասցի՝
ընդ քեզ փայլեսցի՝ տէ՛ր յ̃ս ք̃ս , լուսաւոր
վառմամբ անշիջանելեաւ ։ Նանիւ քո սրբ-
եա՛ զպատսպարանս բազմականիս՝ 'ի խորա-
մանկութե̃ց , 'ի զբաղմանց , 'ի քո ատելի
յիշատակաց , 'ի վերնամարտ մտածմանց ,
'ի գրեական մորոսութեանց , 'ի տիրանենգ-
անշնորհութե̃ց · յաստուածընդդէմ հերձ-

ուածութենց։ Գնդիւք վերնայնոցդ՝ վե-
րակացու ինձ լիցիս, պետութիւք, իշխա-
նութիւք․ զօրաւորօքն անյաղթականաց՝
մաքուր մատակարարաց՝ որ ածութեդ․
առաքեալքն՝ աւետեաց աւետարանաւն․
մարգարէքն՝ կատակարանօքն․ մաղթանք եր-
ջանկացն՝ 'ի կատարածի աւուրն ընծայեալ։
Սրովք ներհեցից երկիւղիւ ըստ քեզ՝ սրբո
մութ, և զարթեայց շնորհօք քո՝ կրկին
ուրախութ․ եթէ վհատութ նինջեցից,
յարեայց դարձեալ հոգևորական բերկրու-
թեամբ․ եթէ ընկողմնեցայց մեղանօք,
կանգնեցայց վերստին զատեալ 'ի խղճէ ա-
նաղտ ամբծութ։

Է․ Տուր խնդրուածոց ամենահաւաչ
ձայնիս հեծութեն՝ միայն բաղմոգութ,
բարեխօսութ սրբոյ ածածնիդ, և ամ ար-
դարոց, և նահատակաց ընտրելոց։ Նուքեզ
փառք յամենեցունց՝ խմոլս գոչմամբ վեր-
առաքեցեալ սրբովք զուարթնոցն անմա-
հականաց դասուց՝ 'ի գովեստ հօր քո որ
մերոյ, և հոգւոյդ սրբոյ բնաւից հաստա-
ղի և նորոգողի յաւիտեանս յաւիտենից․
ամէն։

*՚Ի փայտն երջանիկ բարեբաստութեան՝ ժամաճա-
րին խորհրդածութեան. աղաչանս եդեալ ընդ կեր-
պարանս թարգմանութեանն.*

## ԲԱՆ . ՂԲ

ա. Ողջանամ զքեն բարեգութ միայն մարդասէր, արարիչ երկնի և երկրի, որդի այ կենդանւոյ, այն ինչ զարթուցեալ՝ անձկութբ սիրոյ քոյ յիշատակի՝ ՚ի լռութի հնչման՝ փայտիդ հրաւիրման. Որով բախեալ զձայնարձակութեցն զաղդողական, սթափեցաք կանգնեցաք, ՚ի վեր յարուցեալ ՚ի մեռօրինակս թմբրմանէ. ուստի իբր կոչմամբ սփոփանաց բանի՝ բերեալ ձգեցաք ՚ի ժամ պաշտաման օրհնաբանութե, յանդիման լինել քեզ ուրախութբ՝ հանդէպ հատուցմանս բեմի.

բ. Ահա փառք քեզ՝ անսահման անուն՝ և անբովանդակելի զօրութի, որ այսքանեօք հնարաւորութբք՝ ընդ փրկութե խնամ հոգացար. գոհաբանեալ անեղծ իսկութի, որ կերպարանեցեր հրաշիւք աստատին ըղ հանդերձելոցն նմանութի, հանդարտ գործեաւ վայելչականաւ փայտի անօթոյ՝ առ քունս անյարիր՝ սատանիկս որոտացեր. Ոչ թէ ընդ ծուլութեա դանդաղութի՝ զյանդիմանութի խրատուդ խառնեցեր. ՚ի հայրենի սիրոյդ հեզութի՝ զուժգնութի ձայթ-

մանն յարեցեր • յընդոստ զարկուած եր-
կուց միջնորդաց՝ մարդասիրապէս քաղցր
անձրևեցեր • ոչ մեղմութբ̅ մեղմական վան-
գիւ նիրհմամբ ընկղմեցեր , և ոչ անխնա-
մաբար ահաւորութբ̅՝ զտառապեալ հոգիս
զարհուրեցուցեր ։ Ծնրադրական երկր-
պագութի̅ ստեղծչիդ բոլորից , որ այժմէն
ցուցեր համայն յայտնապէս՝ զօրինակ ա-
հեղ բարբառոյն՝ մեծի աւուրն յարուե̅ •
կենդանացուցեր 'ի դադարմանէ դժոխա-
կան անբանութե̅ • 'ի խնդիր ելեալ կոչե-
ցեր զպակասամիտս՝ 'ի գինիդ ուրախուե̅ •
արարեր զոյն՝ լինել հանդերձիչ անարատ
հարսինն՝ առ սէր փեսայիդ • երկուցեր
փոքր այս խթանաւ՝ զապարասանին դլիթ-
խարութի̅ • լուծ ստուար կրթութե̅՝ ըս-
տամբակին ուսոյ՝ զայս իր գործեցեր • վա-
րապան վանիչ՝ չարախօսին կզակաց եդեալ
կազմեցեր ։ Փառաւորեալ յաւէտ անբաւ
բարձրութի̅ մեծիդ ո̃յ , որ փոխարկեցեր
զփայտին պարտիս՝ յազատութի̅ շնորհիդ
կենաց • իմաստնացուցեր վերստին դարձ-
եալ՝ զխմարս ցնդեալ՝ հոգևորական հան-
ճարովդ • կարկառ կուճմամբ՝ զանբժըշ-
կութի̅ հարուածոց օձին՝ առանց մոռաց-
ման միշտ թարգմանեցեր • ընդ երրորդու-
թեանդ գծագրութիւն՝ զկապն երեքկին՝

իմ միաստակարին 'ի կատարածին սովիմք
կրկնեցեր ։

Է. Գովեստ ներբողից՝ բուրմամբ խնկոց վերառաքեմ քեզ՝ ամենախնամ, զի 'ի սատապատիր կռոցն բազմաստուածութենէ՝ առաւել յաճախագունիւք որսացար զանձն իմ պարտաւոր 'ի քո երկրպագութի . խորոխտ և ահարկու նուիրեալ փայտիւս՝ ըզճշմարտութիւնն քարոզեցեր . մեծացուցեր այսր պատճառաւ պատշաճականաւ՝ զնոր աւետարանութեդ պատիւ ։ Այն ինքն աղաղակ բարձրութեան գոչման սպասալինութեդ քո՝ արքայ պետութեց կայսերաց երկրի ըր քո . նշան խրախութե աւարման հանդիսի մարտի քոյ՝ յիսուս , յորում իմանալին փարաւոն կայեալ ըմբռնեցաւ . կափիչ հանապազորդեան՝ գլխոյ գազաթան հպարտացեալ չարագործին՝ շերտս այս տաշեցեալ ։ Ավաւ գումարին 'ի պատերազմի որդիք սիօնի ընդդէմ աշխարհակալին խաւարի . տօն իմն մծաւանդ կըրթութե կարգեալ 'ի հեռուստ՝ այս դրօշուած իւղեալ՝ առանց հնանալոյ և կամ խափանման . նշանակիչ ժամանակի ապագայից հատուցման 'ի բացուստ անդր ծանուցմամբն . ազդակից հանդունանման կենացն փայտի՝ որ 'ի դրախտին ըյ . կոչա-

րան բարուոք հաւատքման փոյթ ընթացիւք՝ ՚ի յարկն օրհնութեան ․ պատկեր տեսակի անկոյն գիտութե՝ ՚ի կարգ ընտրութե բարւոյն և չարի ․ յիշատակ մեծ տեառնագրութեան յերեսս կերպիս հոգւովդ սրբով՝ զնշան խաչիդ ․ նախազեկոյց աւետամատոյց փառաց գալստեան՝ ՚ի դշխոյն պահեալ նբ թագաւորիդ ․ յորդորիչ քաջալերական՝ մարտապարեցն խրախճանութե ․ անախտական սիրարկու՝ անձնահամբոյրն կցորդութեան՝ շքեղաշուք քողընծայ ամենածին կուսի թագուհւոյ , յորդարիչ ծածուկ պճնութե , որ ՚ի հոգին է վայելչութի ․ նմանութիւն պատգամին սինայ , որ ՚ի տերունեացն արտաքս առաքիւր ․ միշտ օրիորդ պանծալի անշաղախ սրդւոյ մայր անարատից՝ սովաւ փառաւորդէր ։

Գ ․ Վերագոյն քան զերկքովին փողն եղջերեայ՝ զբռնութիւնն բելիարայ՝ սովաւ հարթեալ տապալեցեր ․ քարինս արձակեցեր պարսիւս այսու փայտեայ՝ ընդդէմ գողիադու ․ գայիսոն նորոգ կառուցեր՝ վկայ ահարկու կործանմանն սատանայի ․ զ՚ի խոր անձեցեալ արմատս մեղացն՝ մեքենայիւս այսու խլեցեր ․ զմոռացեալ գործոցս իմ պարտիս՝ այսր երախտեօք ընդ իս կապեցեր ։ Ո՜ որ եթէ այլ իմն ձայն բա-

նիդ ո՞ր անուանեմ նախապատուամեծաւո-
րութեան՝ ոչ սխալեմ, քան թէ ճշմարտեմ.
՚ի տկար ամանս այս նիւթոյ հոգեկրի՝ մե-
ծութի գործոյդ յիսուսի՝ առաւելապէս
պատմեալ հաշակի. ընդրաւոր օգնակա-
նութիւ վերնապարգեւս և քոյինատուրս՝
՚ի յայսմ անպատապար ապաւինութէ՝ երկ-
րակնոց զարմանագրեցեր։

Է. Խոստովանեալ անուանդ ամբիծին՝ մար-
գարէից բարեխնամութե, ինկեալ խոր-
հրդով սրբամանուէ՝ անգծագրելի կեր-
պարան լուսոյ. որ կրկնածիր նշանաւս այ-
սու՝ նետս արձակեցեր հեռածիգս ձայ-
նատրականս՝ օդաչուս և յարմարաթռիչ՝
ունօղս յինքեան հոգի կենդանի. որով ան-
սխալ հանդիպմամբ ընդատակն խաւարային
աղեղնաւորին գաղտնութե՝ յաւէտ կոր-
ծանմամբ ՚ի յետս ընկճեցեր։ Իբր զպատ-
նէշս ամրաբերդ բերդամարտութէ՝ կանգ-
նաւորս անվայրարկելիս՝ աստուած անտա-
նօր զկառեալ դիպուածս այս փայտի զարկ-
ման՝ հրեշտակ կամարար՝ թշնամեացն ներ-
հակ վերյուղարկեցեր։ Նաւիւ հրամանի
մեծիդ ակնարկութե՝ օծութբ շնորհիդ
արեամբ քո խառնեալ՝ զայս եղջիւր խեթ-
կիչ՝ մոլի գոռոզին, իբր զխաչիդ փրկանակ
յեսանեալ սրեցեր։ ՚Ի մեծ աղդմանէ այսր

տաղաղակի գեր քան 'ի վերնոցն՝ քանդեալ
վերացաւ դրանդն ամրութե՟ կամաց՝ ան-
վայելուչ և ամեներկչոտ խենեշութե՟ կար-
ճամբին, ընդ հրեշտական սրտին իմաստից՝ և
ստուերական տանն կործանութե՟։

Գ. Փառաբանութի՟ քեզ վերընծայեմ՝
անմահ թագաւոր. զոր արարեր և հաստա-
տեցեր աջովդ քո հզօր՝ աղաչեմ զքեզ՝
կրկին ներգործեա։ Ընդունեցեր սովա-
հեցբեալ առ 'ի մէնջ՝ զխէթ դժնդակ խո-
րամանկութե՟ բանսարկուին. զտաժանա-
կան տապ մեղաց. զհողմն դառնութեան
շնչման խաբողին. զտարր արկածից մահու-
երկիւղի. զառ 'ի յօդից ցնդմանէ զհասա-
կար ջերմունս տխրեցուցիչս. զայսախառն
հեծեծութիւնս թալկացուցիչս, Ցրուեա՛
վերստին քոյինաղէն հեծանաւս՝ օժան-
դակեալ թևօք նշանիդ՝ զամպս հրածինս.
զորոտմունս կարկտաբերս. զցաւագին ցոլ-
մունս հրախառն կեղծաւորութե՟ փչման՝
բաղմոտանի վիշապին. զսուր սատակման,
զճակատամարտ դիմեցման, զկարուցելոցն
'ի վերայ վայրենական խորհրդոց, զդիւացն
կապաւս։ Յորմէ զարհուրին յայսմ իրէ
փոքուէ՝ տեղի տուեալ մեծաւ դողութե՟,
կիրթ իմն ծանօթութե՟ յայտնի գիտաց-
եալ, թէ յայս աղգ ձայնի՝ յառնէ տէր 'ի

դատաստան։ Իւ խրախուսին յոգի արու-
թեամբ՝ զրահեալ պնդագէս սուսերա-
հոգւոյն՝ ած՟արեալ մարտիկք ամենայն՝
'ի ձև կանոնի այսր յիշատակի, որ զամե-
նափորձ հրոյն ընտրութե՟՝ գոչմամբ ան-
կերպագրելեաւ՝ համօրէն աղանց քարոզէ
'ի յօրինաւոր ասպարէզ՝ երջանկաբար նա-
հատակութեան։

Է․ [illegible]արաւ ահա փող աւագափող, համ-
բարձաւ սովաւ ած՟ օրհնութե՟․ պատմե-
ցաւ սովիմբ ած՟ երկրի․ հնչեաց 'ի լսելիս
բաժանման հեթանոսաց․ ձայն պահապա-
նաց մեծին զօրացաւ, ըստ բանին եսայ-
եայ, և 'ի նոյն բարբառ առ հասարակ ցըն-
ծացուք։ Հնդեցան ջրոյն առակաւ՝ 'ի
ձեռն սորին՝ թշնամիք խաչին․ անպատ-
ուեցաւ ճաշակն պաղոյ առաջին փայտին․
տօնեցաւ նիւթս այս խորհրդական՝ կե-
նաց անուանեալ․ անարգեցաւ երկաթ՝ առ
'ի պէտս պատերազմի․ իբր զօրութի ած՟՝
'ի սանձս երիվարին մեծին նշանի՝ այս
փայտ կենաձայն յարմարագրեցաւ․ ամփո-
փեցաւ օծեալս ցպով հոլովին երկնայնոյ՝
սուր իշխանութե՟ մարդկային ձեռին։ Ո՛չ
գծեաց 'ի քար տաճարին մուրճ ինչ գոր-
ծողի․ իսկ յած՟ակերտս խորան՝ փայտս
այս նուիրեալ ընդ խաչին թևոց սլացեալ

զօրէ։ Ո՛չ ՚ի գլուխս ամսոցն, և կամ յեօթնիցս եօթներորդս յոբելինիցն՝ յանկեան ուրեք խափանմամբ փողէ, այլ ընդ ծագս տիեզերաց՝ և ընդ ծիրս եզերաց՝ ՚ի ծոցս ջուրց բազմութ̃ե ծովուց և կղզեաց նոցա՝ յաճախ սաստկութեամբ՝ անարգել ճայթմամբ իմն տ̃ծայնով հնչեցեալ աւետարանէ։ Կատարեցան սուսերք սատակողին՝ այս փայտի ցուցմամբ, յանօգտակարէ անտի մեղ փոխաձևեալ ՚ի խոփս և ՚ի մանկաղս։

Է. Ո՛չ արձագանք արձանաց ՚ի խորոց ինչ դանչութ̃է՝ խիստ առաքեցեալ, և ո՛չ դժնդակապէս, ըստ իմաստակի ումեմն օտարի, զօդ վիրաւորեալ. ո՛չ անախորժ սրութ̃ե ընդ ունկն մտեալ, և ո՛չ զամ̃ն ուղղոյն անկամակութ̃ե չար թնդեցուցեալ. ո՛չ ոսկերցն փուշ խրտուցման՝ յանձն բուսուցեալ, և ո՛չ մտացն այլայլ ապշութիւն առաջի արկեալ. ո՛չ զանգակ նիւթոյ պղնձոյ դանդաչեցուցեալ, և ո՛չ քար ընդվիրգս սալի՝ առանց քաղցրութեան առ նոյն զարկուցեալ։ Պարփակարան անխորտակելի նորոյս սի̃ոնի. մի սա՛ ՚ի սպասուցն կազմուածոց արարչաւանդիցն գլխաւորաց, զոր եկեղեցականքս քրիստոնէից՝ ընդդետականացն՝ զգուշաւորապէս բարձ-

եալ յանձանձէն . օրինակ ձայնի հրեշտա-
կին, զոր առաքողին բան՝ հաւուն կոչմամբ
այսու տեսակաւ զայն տպաւորեաց . նոր
գործի շնորհի նուագարանաց աւետարա-
նին՝ զարթուցիչ հոգւոյն ա̃յ առ մեզ, քան
առ օրհնաբանութի̃ սաղմոսարանին՝ 'ի վր̃
եղիսէին ։ Սկզբնապատ նախընթացութե̃
աղէյարմար ջութակաց՝ բարեհաւիղ ող-
բերգարկուե̃ց՝ բարացուցական բամբռան
բառացի բարառնութեանց . սրինկ նորոգ-
այլ իմն տեսակաւ առեալ մեզ՝ ընդ հնոյն
փոխանորդութե̃ . ոչ հեթանոսօրէն ուր-
ուաձայն հնչման, և կամ հրէաբար խակա-
խորհութե̃ , զոր մարգարէն տերամբ ազ-
դեցոյց՝ 'ի բաց արա յինէն, այլ զսա սիր-
եաց և կրկին պատուեաց մաքրական տած-
մամբ՝ աշխարհու դիւաց և ամենայն չար
պատահարաց ։

Թ. Նաև արդ ընկա՛լ օրհնութե̃ յարգեալ
գովեստիւ զայս տուր սրբութե̃՝ ինձ պահ-
պանութի̃ և քո փառատրութի̃ . քո պաշ-
տօն՝ և իմ գոհութի̃ . անաղանդ արուեստ
բարձրութե̃՝ արարչական փառաւորութե̃դ.
Մ՝ոցէ ձայնդ այդ ծ̃ծարեալ՝ ընդ պատ-
ուաստ յօդիցս շաղկապութե̃ , հանել 'ի
հոգւոյս զպատիրս դիւաց՝ և զմուտս անի-
ծից՝ և մեղաց ապականութե̃ ։ Նրասցես

լինել զայս իր՝ նշանակիչ ջնար ջահաւո-
րական՝ անջրելի նամակ՝ ջատագով անխա-
փանական տէրունական անօրինականացդ։
Ահա պարգեւեալ սովաւ՝ բարեգութ, ա-
ղաչեմ հեզոր՝ կրկին մեզ շնորհեալ պաշ-
պանութի ՚ի դիմամարտից՝ յաներեւոյթ եւ
յերեւելի։ Ընծեռեալ մեզ ձեռն ամենա-
լի, որ բանաս եւ մատուցանես պատրաստա-
բար բաշխմամբ ՚ի մասունս բազմապիսիս,
օգտոց քաղցրութիւն, անձրեւաց շահեկա-
նութիւն։ Պակասեցին քոյով հրամանաւ
այսու բարբառով՝ հողմ տապախառն, շըն-
չումն ցաւաբեր, յարձակմունք հինից չար
խարդախութեց. սովաւ խափանեցին ամ՝
դիմամարտութիք զինուորութեց դժնեայ
մատնչին. հալեցին հատցին եւ մեռցին
յերջանիկ ձայնէ՝ օծեալս այս փայտէ՝
որդն եւ ուտիչ, եւ ամ նմանք սոցին, որ ՚ի
մերոց մեղաց զօրացեալ՝ ընդ մեզ պատե-
րազմին։ Արմատացո մեզ սովաւ տունկ
երանութե զյուսոյդ ՚ի քեզ մեծ պաշտ-
պանութի՝ սանձիչ բոլորից տէր արարա-
ծոց, զայս ծառ սաբեկայ, որ ունի կախ-
եալ ՚ի դիտակ ոստոցն՝ զաւանդ ն̃ք նորոգ՝
այժմու փրկութես ծաղկեալ քե՝ ք̃ս, ՚ի
պտուղ կենաց անմահականաց։ Փախիցեն
յանհուն հեռաստան խորին խաւարի՝ այսք

փայտի փառաւորելոյ բարեղէկոյց ձայնար-
ձակութե̃ նէսարք ներհակք ստապատիրն
ստորնականաց՝ բազմաձեռնեան խարդա-
ւանողաց։ Ներժեսցին սովաւ ՚ի յանդոց՝
պողպատահմական արօրադրութեանց մերոց
սահմանաց՝ և ՚ի քո մշակեալ կենդանի երկ-
րէ՝ վէրք վտանգիչք, և հոյլք մորմոքեցու-
ցիչք. կորեսցին սովաւ՝ յաւելուածք կըրկ-
նատզեղ և անվայելուչ պատահմանց՝ ՚ի հը-
նարից չարին ՚ի մեզ յայտնելոց. իսկապէս
վանեսցի սովաւ, որք յերկաքանչիւրոց բը-
նութեանցս մերոց վերերևին ինքնաստեղ-
ծութիւք մերձաւոր դաւաճանողաց, յու-
մեմն օտարին վրիպակ մտածմունս, և յայ-
լումն գարշ գոյութիւք՝ անմաքուր զեռնոցն
ապականողաց։ Փրկեա տէր յիսուս ա-
ղաչեմ զքեզ, փրկեա՛ բարերար. կարկա-
եա՛ առ իս զաջդ ամենազօր, և օգնեալ
ինձ սովաւ՝ զերծո զիս յամենեցունց ըն-
դիմացողաց։

Ժ. Զօրանեսցի միացի հրաման քո ՚ի սոյն՝
առ ՚ի փոխարկել զանդամանդեայ սիրտ
յիմարեալ՝ ՚ի քոյին բանիդ արդիւնաւորու-
թիւն. հարցես մխեսցես զոյս նեցուկ հը-
րաշից քումդ սքանչելեաց՝ ՚ի սիրտս ծոր-
եալս և յոգիս լքեալս, և հաստատեսցես
կազմեալ պնդապէս՝ ՚ի կայումն ուղիղ ան-

տեսանելի՛ . իսկ զանընդոստն կակղացուս-
ցես զարթնուլ և զգաստ լինել յոգի հե-
զութե՝ աստուածաւանդ քո պատուիրանիդ, ողջ
զպօղոսն և զմատթէոսն ։ Զիջեցո՛ մարդա-
սէր պատուելոյս այս փայտիւ՝ զերախտիս
խաչիդ, որով զանձառն ներգործեցեր .
բարձ յինէն՝ կեցուցիչ, զվտանգ պար-
տացս՝ պանծալի ծակօք ամբառնալեաց նոր
տապանակիդ ։ Լացցին կամօք քո հըզօր՝
՚ի յայս ձայն կենաց՝ լսելիք սրտից յամա-
ռեցելոց . լուիցեն յայս մեծի բարութե
քումդ ակնարկութե՝ ականջք խլից . պար-
զեսցին ՚ի ձեռն սորին՝ լեզուք համրացե-
լոց . լուսաւորեսցին ՚ի սոյն՝ տեսարանք ա-
չաց, հայել մաքրապէս ՚ի քեզ պշուցեալ
անայլայլաբար . զղջասցին դարձցին կաղ-
դուրեալ կամք յափրացելոց . ընձեռեալ
տացես տէր՝ տագնապելոյս անձրև ար-
տասուաց ։ Խզեսցի քև սա մեղ՝ լուր ցըն-
ծութեան . ձայն ուրախութե . բարբառ
բերկրութե . նուագ հանդստեան . նիւթ
երանութե . պատճառ փրկութե . առիթ
քաւութեան . մերժումն վշտաց . խզումն
խեղդմանց . ընդարձակութի նեղութեց .
համառօտումն խեթմանց . հալածումն հե-
ծութեց . թեթևութի թառաչմանց . յա-
ղաճոյութի կարեաց . կարգադրութի կրից .

սփոփութ՟ի վհատմանց • բժշկութ՟ի ցաւոց • տեւականութ՟ի հեղգութ՟եց • ուշադրութ՟ի անտեսիցն ։

ԺԱ • ՚Ի յոյս կամուրջ ցանկալի անխոտոր և անխոտորնակ , և 'ի վերնաշաւիղ բարձրաբերձ սրբահետ սանդուղ երկնաչու , առ հայր քո օրհնաբան աչաւոր անուն՝ ձգեալ մատուցես՝ բարերար , հոգւոյդ առաջնորդութ՟բ միանալ 'ի քեզ անընդմիջելի • որով և որք միոյ՝ միայնոյ և միանական տէրութ՟եդ՝ և անեղծ արարչութ՟եդ՝ 'ի կենդանեաց և յանշնչականաց հաստելոց՝ վայելչական գոհութ՟բ փառք և իշխանութ՟ի յաւիտեանս յաւիտենից • ամէն ։

---

Վերստին յաւելուած կրկին հեծութե՝ նորին հըրկողի , առ նոյն աղերս մաղթանաց բանի , 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ ԴԳ ։

## ԲԱՆ . ԴԳ

---

Աղօթք Թարգմանօրէն վասն սրբալոյս իւղոյն մեռոնի ։

Ա • Սուրբ աչաւոր անուն բարձրեալ անպատում • անձկութ՟ե փափաք յարախորժելի • 'ի սրբերգենիցն փառատրողաց միշտ սրբաբանեալ՝ բնակեալդ 'ի սըր-

բում · լի և ամենատեղուն բարութե̃ առատաձեռն աննուաղելի · լոյս բարի, և ծագումն գովելի · երկրպագեալ փառաւորելի, ահեղ և անզննելի · ամէն և յամենայնում։ Ի.յսու բանիւ դաշամբք յուսայ՝ ուխտ ընդ քեզ միաւե̃՝ հզօր, այո՛, ամէն, ալէլուիայ · գովեալ թագաւոր հանուրց · ա̃ծ բոլորից · ստեղծիչ գոյից · և տ̃ր կամարար · միայն առիթ պատճառաւորաց · փրկիչ և օծեալ մշտապաշտելի։

ե̃ · Ուստի մեկնապէս թարգմանեալ ՚ի մեզ զայս գանձ անվաճառ՝ և հարստութի անփոխադրելի՝ յիսուս ք̃ս արքայ երկնաւոր · որում դողութե̃ մեծաւ սպասեն անմահականացն ահեղից լուսաբերան բոցաշնչութիւնք, կրկնեալ քեզ յօժարութե̃ ՚ի հաճութե̃ անխոտոր մտաց՝ ծունր գոհուե̃ · ստեղծօղ էութե̃ց, որ են ՚ի տեսման և ՚ի ծածկութե̃։ Որ ե՛սդ և էիր միայն բովանդակ՝ ամենևին անպակասելի, առեր զմերս խոկապէս համայն, զի ՚ի լրութենէ քումմէ լցուսցես · օրհնեալ և բարեբանեալ՝ ծանուցեալ յաւէտ միշտ անքննութե̃ ողորմութե̃ մեզ ՚ի փրկութի, ՚ի փառս և ՚ի գովեստ անճառ բարձրութե̃՝ ահաւորիցբարերարութեան։ Սկզբնածիր օծման շնորհի՝ մեծախորհուրդ հրաշազարդուե̃ ·

քանզի լոյս քո մեզ ծանուցեալ՝ ճառա-գայթ անհաս . ծագումն անսահման . արե-գակն անաչառաափիռ . մատաղ սահմանիչ երկակշիռ տարրութեց . ճրա՛գ ոտից՝ և լոյս հետևմանց, որով ՚ի ցոյցս իմաստից եկ-եալ տեսութ̃բ՝ բանիս այս յարմարութ̃ե, տօնեմք պարերգութ̃բ հրեշտակօրէն յըս-տակամտաբար՝ փրկչավայելուչ կնդրկաւ-խնկեալ զպարգևաբաշխ առատատրութիւն ամենիմաստից՝ յիւղ զուարթ անբիծ դա-ւանման : Քանզի ՚ի սկզբան անդ՝ կապ-տեցելոյ ողորմելի տխրականութ̃բ ՚ի փչմանէ բարձրագոյն շնորհին՝ հայրն իմ սկզբ-նաստեղծ՝ և հնացեալ յաւէտ մեղացն գերմամբ ՚ի մահ գրաւեցաւ . կապեալ ընդ եղծման ապականութ̃ե անզերծ հան-գուցիւ , ՚ի ծառոյն պատճառաւորեալ յանկումն անյարիր ամենակործան գլոր-ման , հերքեալ ՚ի լուսոյ՝ այսր խաւարին վայրի մատնեցաւ . իսկ դու գըթած տէր ողորմութ̃ե քանզի յաւէտ քան զնոյն ծան-եար զոր ստեղծեր , և զի չէիցն ակնկալութ̃բ չեկաց յոր ինչ էրն , որով անկարողանայր իսկապէս տեսանել ՚ի լոյսն վերին անմատոյց գերակայութ̃ե անսահմանելւոյդ , ոչ մըշ-տափոյլ յարակայ վառմամբ անաղօտելի տարածանեցեր , այլ գիշերայնոյն ռանալ-

պիղծ մթին արհաւրաց՝ ձեռնկալութիւն ձիթոյ՝ շարամանութ՟բ նիւթոյ պատրուկի ընդ նոյն զանգելոյ՝ յօրինակ քո անախտ միութ՟բ ընդ մեզ խառնելոյ՝ մարդասիրապէս հիւսեալ կազմեցեր ․ զի որ 'ի ստուերս մահու տարագրեալ դասք՝ կանխակորուստ անկոչն՟ պարտեաց , 'ի պատճառ իրին՝ ազգակցաւ պտղոյն ջահաւորեցեալ հաւատոյն վառմամբ՝ 'ի նոյնն դարձցուք խնկաւորութիւն ․ որպէս և փայտին մահու՝ մածմամբ քո 'ի նա՝ ածեալ մածուցեր զմեզ , տուակաւ մեծի խորհրդոյն՝ միաւորեալ 'ի փայտն կենաց ։

Դ․ Նուարդ՝ ո՟ր ոչ է օր լոմամբ՝ առանց գիշերոյ , և ոչ տնօրէնութ՟ն յարկի՝ առանց ձիթոյ պխտոյից խնդրոյ ․ քանզի իբր օրինակն հասարակային ոչ նուիրաւոր՝ զմարմնաւոր աչաց տեսութ՟ն լուսաւոր առնէ , նոյնպէս և մաքրեալն քոյինաշունչ շնորհին ընտրութ՟բ անխմանալեաւ՝ զաներևոյթ հոգիս միութ՟բ 'ի մեզ անտեսիդ՝ հրաշափառապէս պայծառացուցանէ ։ Ոի ո՟ր յիջումն լուսարանի ո՟բ աւազանին՝ լուացմամբ մարմնոյն՝ զանձինն հաւատամք առնուլ սրբութ՟ն , սոյնպէս 'ի յօծումն իւղոյն պարարեալ յուսով՝ զհոգւոյն զօրու՟ն սովիմբ և 'ի սոյն՝ համարիմք ունել ա՟մի-

աներկմտելի։ Եւ ոչ հրամանդ տէրունական օրհնաբանելի՝ զքաղցրութիւն մեղաց ախտացելոցն նախանձէիր. իսկ ոչ հաւատունողացն առ այն բժշկութիւնն հրաշալի՝ յանդիմանակաց անտուստ առ նմին մարմնոյն տեսակի՝ հաւատարիմ վկայ անդարձիցն հաստատէիր, այնպէս իւրս այս փըրկութե լուսով կատարեալ՝ հեղեալ 'ի մեզ օծանէ զարտաքին խորանս. իսկ զներքին մարդս աներևակ՝ ծածկապէս մտեալ նոր

կենդանածնէ։

Է. Պատկեր պանծալի այս զանդուածնիւթոյ՝ արարչեդ երկնի. քանզի որք զիւղոյն կրեցին օծութի՝ որ յողորմութեն շահընծայութիւն, և դու 'ի գովեստ քեզ զայս բան սահմանեալ, թէ ողորմած եմ ես տր. քանզի որոյ սիրոյն անուան կցորդիս ած, նոյնպէս 'ի մասնէ և այսու զիջեալ գծագրիս՝ ըստ անտեսութեն որ առ մեզ։ Վեհագոյն մեծութե խորհրդոյ յարմարաւոր դիմակերպութիւն՝ այս ձորդ պարզաւորութեան՝ երկրի թանձրութե՝ հողանիւթ գոյականութե. զի ոչ այն մասն 'ի կենդանեացն՝ ոչ 'ի կերակուր հրամայիւր անդ՝ ըստ օրինին, այլ արարչութեդ բոլորովին պտուղ ոռոշիւր, նոյն նմանութբ ևս և աստանօր՝ իբր զօրութի՝ տն մատ-

չէր յայս տեսանդ՝ հաճութեան էիդ ո՞յ վայելչապէս տուեալ նուէրի, հոգւոյս հարազատ զուգաձանապարհ, արարողիդ պահեալ և ուխտեալ. քանզի ոչ շունչ արեան՝ և ոչ ճենճեր ինչ զուարթութե՟՝ օրինակ հոգւոյս իմոյ և կորոյս՝ ընդ անդամաթիւս մայն ծախի, այլ արքայութեդ վերնում վիճակի՝ տէրունական բազմականին ձօնեցեալ ճաշակ՝ այս նիւթ ջահաւորական մշտաբորբոք անաղօտելի։

Ե. Ո՛չ էր մատչելի ՚ի նախագահութիւն արու անդրանիկ՝ դատիչ քննողաց, եթէ ոչ օծմամբ ինչ նշանակէր. ոչ քահանայուե՟ ՚ի յանկոխելին տեղի ձեռնարկէր, եթէ ոչ այսու կատարեալ լինէր։ Յակոբ զքարն պատկեր վիմին՝ ՚ի խորհուրդ երկար՝ խորանին ընտրութե՟՝ օծմամբն տպաւորեալ կերպացոյց. առ որ զիջումն անճառ բարձրելոյդ՝ տեսութբ՟ սանդղոցն յարմարուե՟, և զիս ՚ի վեր տանելոյն անդուղեկցուբ՟ն, զարձանն իւղեալ կառոյց նպատակ՝ ՚ի ցոյցըս ապառնեացն յիշատակի։ Ահարոնեան քահանայութե՟ն պայծառութի՟ հրամանամեծիդ ո՞յ՝ օծմամբն ճոխանայր. որով ՚ի գլխոյ անտի ՚ի մորուսն զեղեալ՝ գերափառ իւղոյն՝ զարմանազան կենդանագրութի՟, ըստ սաղմոսողին, զփառաց նախնւոյն առա-

կէր զանդրադարձութիւն ․ և զշնորհիդ կե-
նաց սրբութեան՝ ընդ մեզ խառնութիւն ։
Խաղաղութիւն ոչ էր պանծալի անդանօր
պատկերաւն ստեղծագործիդ, եթէ ոչ եղ-
ջերբ իւղոյն օրհնութեան ձեռնադրեալ՝
պսակաւ պճնութեան թագին՝ յանուն քո
ք͞ն գլուխ ամբառնայր։ Եւ զխո͞րդ զնախ-
նին վեհից մոռացայ՝ զծառայն մեծիդ՝ և
զկերպարանն անպարագրելույդ ․ ո՞չ ահա
Մելքիսեդեկ՝ յօրինակ Ճշմարտիդ ահաւո-
րութեան՝ ’ի ձիթաստանեաց լերինն, ուր յե-
տոյ ոտք մարմնացելոյդ Ա͞յ զետեղեալ կա-
ցին, ’ի վերնոց անտի հրեշտակաց՝ ’ի պտղոց
տեղւոյն խաղեցաւ ․ ուստի շիրմի սկզբնա-
հօրն պաշտպան՝ եպիսկոպոսական արքայա-
պատիւ Ճոխութեամբ՝ ’ի քէն հանդերձեալ
նստաւ, մինչև յայտնեցար երևեալ լր-
մամբ՝ համայն իսկութիւն ադամային կենա-
գործութեանդ ։

Ղ․ Եւ արդ՝ քանզի քո են շնորհք, և քեզ
վայելեն գոհաբանութիւնք՝ օրհնաբանեալ
որդի Ա͞յ, դու ինքն յարմարեա՛ բարենըշ-
մար տպաւորութեամբ զաղաչանս իղաւորա-
կանս՝ խնկապատարս՝ զմուսալիս՝ պատ-
ճառ քեզ փառաց, և ինձ մեղապարտիս ա-
ռիթ բժշկութեան ․ մատո՛ տէ՛ր յ͞ն, վիրացս
աներևութից՝ զայս ձէթ լուսանիւթ ․ և

ա՛րկ 'ի սոյն խորանս խոցս մահացուի՝ ըղ-
կաթուած օրհնութեան իւղոյդ փրկութեան՝
անապակ գինեաւ սիրոյդ, միութեամբ արար-
չականաւ պատսպարեալ պատանօք խնա-
մոց . զի յիշատակարանս թարգմանօրէնս
բանիս մաղթանաց՝ վայելչական իմն յար-
մարութեամբ՝ 'ի թեւս հոգւոյդ զկարգ իւր
գտցէ: 'Ի վերայ դաւթի՝ հոգի քո բա՛րձրեալ՝
յայնմ օրէ խաղաց, յորմէ օծութեամբն
նուիրեցաւ: Սաւուղ յա՛յր յայլ՝ և 'ի մար-
գարէս ոմանս անտուստ լոկ գրեցաւ,
յորժամ օծումն ժամանեցաւ գագաթան
նորին: Արքայութիւն ասորեստանեայց՝ օծ-
մամբն գրաւեալ՝ մատուցաւ 'ի կցորդութիւն
տանն իսրայէլի: Կայսերս ոմանս նշանա-
ւորս վեհս և երևելիս՝ 'ի խժականաց բար-
բարոս ազգաց՝ իւղս այս կենսացնցուղ ցօ-
ղով անձրևեալ՝ իբր կարթիւ որսացաւ 'ի
քրիստոնութիւն հպատակութեան մեծի Այ:
Նանն որ առ կիւրոս երկնաւորին պատ-
ուասիրութեան՝ զօծեալն ձայն՝ նմին մեծ-
վարկաւ: Զայն սաղմոսողին՝ գեր քան ըղ-
մարգարէութիւն՝ զօծեալն անուն նա-
խայարմարեաց, կանոնափակ ընդ միջարկութեամբ
պատուէր աւանդեալ, մի' մերձենայք, և
մի' մեղանչէք: Ու հեղիաս առաքելութիւն
աստուածային հրամանատրութեան, նշանակ իմն

հանելոյ ՚ի պաշտամանէ անտի բաղձողու , զօծելութիւն ՚ի քորբէ ազդեաց յէուայ և ապայելի։ Իւղ թափեալ անուն փեսայիդ՝ ՚ի հոտելից բանից իմաստնոյն վերավկայեալ կանխաւ իսկ գրեցաւ . որպէս զի հոտին՝ ո՜յ յաւէտ պատկեր և նշանակիչ , զ՚ի փոքուս զմեծդ կերպադրութի քև նկարագրեալ՝ ընդ քեզ միացուք առմամբ քո շնորհիդ ։

Է . Սու զի՞ ես երկարս՝ պատուածօրէն՝ բացականագոյնս՝ գծագրականս և առակաւորս շարագրեցից առաջի վերնոյդ և ահաւորիդ մաղթողական բանաստեղծութիւնս . տէրդ և կենդանարարդ՝ արարիչդ երկնի և երկրի՝ ՚ի յօծմանէ անտի սկսար քարոզել զաւետարանն արքայութե . վկայեալ անատուստ ՚ի յօհաննէ՝ օծեալ և գառն ո՜յ՝ բարձող մեղաց աշխարհի ։ Ո ի թէպէտ ընդ օծմանն օրհնութե՝ հոգին էր քեզ իսկաբար լրմամբ , և ա՜ծութեն խոանութիւն բովանդակապէս , այլ անունն պաշտի խորհրդեամբ շնորհին հրաշափառապէս ազդելոյ ՚ի ո՜բսն . զի զարկութի ադամեան մարմնոյն՝ մեծանալ յաւէտ այսու յորջորջմամբ պատրաստ արասցես ։ Նացեալ զառածս մարգարէութեն եսայեայ՝ դու ինքն ա՜ծութիւնդ մարդացեալ՝

ընթերցար, հաւատարիմ առնել զբան ծա-
ռայից քոց՝ տէր. և իբրև ծանուցեալ եղեր
օծութ՟ն 'ի կարգ անդ բանին, թէ հոգի
տ՟ն 'ի վերայ իմ՝ որով և օծ իսկ զիս, այս
փակեցեր 'ի հանդիսափառն օծելութենէ՝
զորքանութ՟ի երկաքանչիւրոցն յայտ արար-
եալ խորոցաւ սահմանի՝ ընդարձակ հե-
ռաւորութեամբ մեծաւ կնքեցեր, զմերս՝
կաթուածով ինչ շնորհազարդեալ, և ըղ-
քըդ՝ խնկութ՟բ ընդ հօր՝ և ընդ հոգւոյդ
հաւասարութ՟բ թարգմանեալ: 'Ի Նախա-
ծանօթ մերակերպութե՛ն՝ պանծալի իմն գո-
վեստիւ օծեալն կոչմամբ՝ 'ի հրեշտակագդ
փառատրողաց՝ արարածոց երկրի ծանու-
ցար: Օ՛ որ մարգարէն կանխաւ գուշակ-
եաց զ'ի յորդանան, և յընտրեալն լեառն
թաբօրական՝ հայրենի ձայնիւդ եկաւորութ՟ի
թէ որ պատմէ 'ի մէջ մարդկան զօծեալ
իւր: Օ՛ որ սաղմոսին ձայն կանխաւ պատ-
մէ՝ հզօրիդ փառաց զայս պատիւ առ 'ի
զառեալդ ձեռնադրելոյ, օծ զքեզ ա՟ծ՝ ա՟ծ
քո իւղով ուրախութեան:

Ը. Որդի երևեաց մերոց տ՟ր ք՟ս. որ է օծ-
եալ անուանդ խնկոյն, որով զփչրումն կեն-
դանութեան 'ի դէմս մեր լոյս՝ բարերա-
րութ՟բդ քո աղեցեր. իմաստութ՟բ ու-
մեմն երջանկի՝ մարդասիրութ՟ի խոստովա-

նելի , ասելով առ ոմն , թէ եդ վկայութի առաջի տն օծելոյն . զնոր աւետեաց վըկայելով . թէ կօշիկս անգամ ոչ առի յտմ մնեղեաց : Երգոյն երգ՝ խուղեփեցական գինի՝ զաստուծով ծանուցեալ զխորհուրդըն՝ ՚ի գովեստ հարսին նր եկեղեցւոյ՝ զմուռս առաքինութե հանդերձ տմ առաջին խուղոմն . և ես զմուռս և կնդրուկ մաքրութե վարուց տմ փոշեաց անուշից՝ խուղովքն զանդեալ՝ անդստին և այսր յառաջաբերեաց : Դանիէլ զկենսատու մահուքն՝ քս թագաւոր երկնի , ՚ի վէր քան զօրինակ կոչումն ձայնի՝ զայս անուանագըրեալ վկայեաց յայտնի , թէ զկնի վաթսուն և ինն եօթներորդացն՝ սպանցի օծեալն , և օծեալ առաջնորդ զքեզ յորջորջեաց : Ճրագակիր աշտանակն զաքարիայ ադդովայ՝ որ ՚ի բարեքեայ՝ խուղոյն բարեբաշխ բացատրութե ՚ի մասունս եօթանց առաջադրութեանց գնդիցն վառելոց՝ ՚ի ջահէ անտի զօրութե աննկատմաբար վիճակաւորեալ , զ՚ի քոյդ լրութե ՚ի մեզ փրկու և օծելութի գերաբնապէս նախաղեկուցեր : Ո՛ր ըստ օրինին անտուստ գուշակմամբ ՚ի խորանին որ ՚ի տաճարին՝ ամէնընդել իմն կրթութե սովորաբար մատուցեալ լինէր , պանք բաղարջընծայք , և նա-

շինչք՝ իւղովք խառնեցեալք, և զուարակք եզանց խուզարկեալք, և տիրական անուամբ ձայնեցեալք, և հաւուց ոմանց Թաթաւմամբ յազգակից ճարպին 'ի յարիւն, այսր խորհրդոյ՝ առձեռն տեսակք և նշանակիչք յարմարականք քեզ՝ միածին ծնունդ օրհնաբանեալ մեծիդ Տն · միայն դու օծեալ նորոգ և զարմանանալի՝ ինքնութե համայն էութեամբ՝ խնկաւէս լրմամբ ամենայնիւ անպակասելի:

Թ. Ու զի՞ ևս իցէ բազմապատիկս նշանակել առ այս մեծ խորհուրդ անհասանելի, և ոչ ճաշակել զքեզ՝ քաղցրութի · իմանալ քև զայս՝ թէ զինչ իցէ իւղն, եթէ ոչ զախրութին 'ի փայտն պարտեաց՝ սովիմբ բըժշկեալ ըստ սաղմոսողին, զուարթ գործեսցես: Ու զինչ պարարութին, եթէ ոչ՝ զկերակուրն մահու՝ սովաւ մոռասցուցեալ 'ի սմանէ: Ու զինչ օծութին, եթէ ոչ՝ զմոխրոյն Թշուառ տեսութին՝ 'ի ձեռն սորին փոխարկեսցուք 'ի պայծառութի յաւէժ ուրախութե · անուամբ քո փրկեալ յոգի զօրութե՝ հօր անուանեսցուք: Ու զինչ արդեօք մարգարէին հոգևոր ըղձականութի ամենատենչ բաղձանացն իցէ իմանալ, որոյ ծերութին առակի 'ի ձէթ պարարութե, և կամ օծանելն իւղով զգլխոյն վերամբարձութի,

եթէ ոչ՝ զհին խորդախուն սգոյն սաստ-
կութե՛ ՚ի մահ կործանմանն՝ կենագործ-
եալ դեղովս այս կենաց՝ պատրաստեալ օ-
ժանդակեսցես։ Եւ զի՞նչ ճրագին լուսա-
ւորելոյ շնորհակալութի, եթէ ոչ՝ ՚ի մէջ
խմն անյուսութե մեղացն միգի և կռապաշ-
տութենն խաւարի՝ կերպակցապէս միութբ
՚ի յիս եմմանուէլ։ Եւ կամ զի՞նչ մար-
գարէն ճածաբանեալ ՚ի սփոփանս զուար-
թարարս օրհնութե՝ նշանակ յայտնի վայել-
չապէս ոմանց ասեալ, ածցին իւղով ՚ի
մրրոյ պարզելոյ. և կամ իմաստութնն՝ ՚ի դի-
մաց հարսինն՝ ասէ օրիորդացն, հաստա-
տեցէք զիս իւղով, և գեղեցկավարդ խըն-
ծորով յարկեալ ծածկեցէ՛ք, և ՚ի պարտէզ
իւղենեաց տածեալ գրգեցէ՛ք, եթէ ոչ՝
այսր ահա ընտրական նիւթիւ՝ հոգւովդ
քո լցեալ՝ ՚ի սոյն լոյս տեսցուք զանխմնա-
լիդ ՚ի մեզ բարձրութի գովեալ։ Եւ արդ
քե՛զ միայն՝ խնամակալ, պատճառ բարի
բնաւից եղելոց, ձեռն համբառնամ տա-
րածմամբ բազկացս՝ երկկամանցս գործակ-
ցութբ՝ սրտիս հեծութբ՝ լեզուիս և շըր-
թանցս ձայնարկութբ, լո՛ւր ողորմութբ
տէ՛ր, պաղատանացս խնդրուածոց առ քեզ
կարդալոյս. շնորհաւորեալ այսու պար-
գևօք՝ գոհաբանութի քեզ վերընծայեմ՝

իէ

Հզօր աջաւոր բարձրեալ անքննին, անփակ փափագմամբ միշտ համբուրեցեալ, սուրբ սուրբ և միայն միշտ սուրբ, օրհնեալ հանապազ յաւէժ անդադար երգաձայնութեամբ։ Ընձեռեա՛ առաւել բարերարութի՛ խաղաղ վրիպելոյս․ տո՛ւր յոյս քաղցրութե՛՝ ոչ մասին միոյ մատուցման լուսոյ՝ արժանաւոր ինչ հանդիպելոյս, լայնել քև բարի գնրբութի՛ ծածուկ խորհրդոյս՝ գրգութիւն խառնեալ ընդ աղերս՝ ասել ընդ դաւթի, ընկալաք ա՛ծ ղողորմութի՛ քո, և զծածուկս գաղտնեացդ անտեսից՝ իմաստութե՛ քոյ յայտնի արարեր։

Ժ. Լուարդ՝ մեծութի՛ քեզ՝ ամենակալ տառաձեռն աննուաղելի՝ ամենափոյթ 'ի գթութի՛՝ մշտայօժար 'ի բժշկութի՛, զի միացուցեր խառնեցեր ընդ մերձաւոր գիւրագիւտ ընտանի նիւթոյս՝ զհրաշս անճառս քումդ սքանչելեաց աջաւորութե՛։ Քանզի զոր երկին ա՛մ բարձանց՝ երկիրս լոյսութե՛՝ և անդնդոց ներքնոց խորութե՛՝ ծովուց բազմութե՛՝ ոչ զօրէ տանել, այլ իբր զդոյզն 'ի մեծէ բերի, 'ի փոքր գոյս տեսականեցեր զօրութե՛՝ սահմանեալ ճըշմարտապէս անհրապուրելի․ զի մի՛ նորոգ իմն երևելով յայլ էութե՛՝ առ այս հարևանցի երևականութի՛ ինչ վարկանիցի,

վիրաւորել՝ քան թէ բժշկել անընտրաբար զկարծիս մտաց։ Վասնզի ո՛չ մարմին՝ քեզ հաւատարապէս՝ օրհնաբանեալ որդի ո՜յ, խոկութի և ոչ օրինակ՝ ՚ի յարդեանցն ցորենոյ արարչապէս միշտ հանդերձեցեր, և կայլակ կողիդ՝ զարիւն խաղողոյ, և արդանդ կենաց հոգևոր ծննդեանն՝ զառատութիւն ջուրց յոլովութե, Նոյնպէս և զհոգի անմահիդ փչման՝ սովաւ և ՚ի սոյն արդիւնաւորեցեր. երկուք կենաց՝ որոյ կերպարան յառաջ եկելոյն՝ և ոչ հեթանոսութեամբ է փոխարկութի, որպէս ոչ տեառնագրութե խաչական փայտի ինչ երկրորդութի, նստելոցս յերկրի խաւարի՝ ըստ նմանութե քո տէր՝ ծագեցեր։ Վասնզի յայս կերպարան շնորհի՝ զանպակաս լրութի անհասիդ յայտնեալ աշխարհի լուսաւորեցեր, զի մի՛ անանկն կարօտասցի՝ և մի՛ ընչեղն բարձրամտեսցէ, ըստ օդոյ հաւասար բաշխման, և լուսոյ արեգական տարածման, և ջրական վտակաց զեղման. զի հաւասարապէս բաշխիւր երկրածնաց մանանային զուգամասնութի՝ փոքունցն առաւել, քան մեծամեծացն։

ԺԱ. Իսկ այս նիւթոյ տեսաւորութի խորին խորհրդոյ՝ և ՚ի բնուստ անտուստ հըրաշապէս ունի զթարգմանութի, որպէս զի

ոչ երկմիտ ինչ շութափութ̅բ անհաստա-
տապէս պտեղի փոխէ, և ոչ նենգողաբար
զբնակութ̅ի ինքեան լքանէ. քանզի ոչ վերջ-
նականօք աճառովք հերքի, և ոչ յընդդի-
մակցէ ումեքէ ողողեալ արտաքս ելանէ։
Մ̅ն զի որո̅վ պատահումն գունոյ յեութ̅ի
մարմնոյ՝ անփոփոխ իմն և անհրաժեշտ, որ
գոլով̅ գոյացուցանէ՝ և ոչ գոլով̅ ապա-
կանէ, այսպիսեաւ իմն յարմարութ̅բ՝ ի-
ղոյս զօրութ̅ի անդստին ՚ի յիւրոց անտի
կերպարան զառեալն ունողի՝ միասնական
զուգութ̅բ ընդ մեզ իսկ կցորդեցեր՝ տէ՛ր
յ̅ս ք̅ս, ընդ իւրն գոյի՝ և զօրինակն լծակ-
ցելով. քանզի զանխմանալին տեսութ̅ե ա-
չաց և մնաց ըղձից՝ ՚ի դէմս բերեալ կեր-
պաւորեցեր. ՚ի պաղոց երկրի ճնշեալ մղե-
լով՝ զարմանալեօք հրաշագործութ̅բ մա-
տակարարիլ մեզ պատրաստեցեր։ Մ՛նա-
ւանդ զի ոչ յոլովից խառնից ՚ի մի եկելոց
խմբակցութենէ զանազան ծաղկանց, ըստ
հնոյն և սուտերին բազմաբուրեան այլայ-
լութ̅ե, զոյս իւղ օծութ̅ե հրամանատրե-
ցեր, այլ իւր զօրինակ փոխեալ զայն առ-
այս՝ դու ինքն խառնեցար ՚ի սոյն մաքրու̅թ
վերնալոյս ձիթոյ։ Որ թէպէտ անճառ են
համեղութ̅իք քում անուշութ̅ե, և ընդ-
օրինակաց իւրեք ոչ համեմատի, այլ ծաղիկ

դաշտի՝ և շուշան հովտաց՝ և նարդոս ըն-
տիր՝ և եղեգնախունկ խառնեալ հալուէիւ՝
յարմարութե̅ հոտոց քրքմոց՝ փթթեալ ող-
կուզոյ և ազնիւ գինւոյ, ոչ սակ՝ քան թէ
իւղոյ միութե̅ պատշաճագոյն օրինակեցար
փառաւորեալ անունդ անքննին, որ զա̅մ
ընուս, և յիրի իմէքէ ամենևին ոչ կարօ-
տանաս: Նուաղի ոչ չփոթելովք 'ի հակա-
ռակաց բռնադատութե̅ց՝ բաժանեալ կա-
մաց՝ մեկին առակի, այլ 'ի սիրոյ հաւա-
նութե̅ ա̅ծայոյս 'ի մէնջ պարտրիս, վ̅ն մեր
ըստ մեզ՝ առ ա̅մ վայելչական նմանութիւն
օրինակեցեալ. առ որս լոյս բարի՝ և հուր
ջեռուցիչ, տալ սիրոյ առանց մասին ինչ
շնչման անդթական սառնացրութե̅՝ այս
զանգուած նիւթոյ՝ կաթուածոյ ձիթոյ՝
մաքուր մտաց տեսեալ իմանի, որով յի-
րաւի սովաւ 'ի յա̅ծ է միանալի: Ընդ սո-
ղոմոնի օծելոյ որդեգրեցելոյ ա̅յ՝ երգեմ
բերանով հարսինն՝ երկնաւոր փեսայիդ
բարեբան գոհաբանութի, համբուրեալ 'ի
յիղձս մտաց՝ զհոտ իւղոց քոց քան զա̅մ
խունկս. և իբր զբանս կենաց յաւիտենա-
կանաց ունողի, ըստ հոգելից բանի իմաստ-
նոյն՝ և ա̅ծաբան աւետարանչին, զհետ քո
'ի հոտ իւղոց քոց ընթասցուք. լուացեալ
զերեսս ջուրբք կենաց, որ 'ի վեր է քան

զերկին օդոյս այսորիկ, և օծեալ զգլուխս անախտական իւղովդ երկնայնով՝ յանդիման եղէց քեզ ուրախութբ, զուարթապէս՝ և ոչ տխրաբար:

ԺԷ. Այս իւղ խնկելի՝ պաշտելի և երանելի, ոչ սոսկ օծումն ուղղոյս սենեկի, և կամ հերաց վարսից գագաթան նպաստ ինչ մատուցանի, եթէ ոչ տրունական կենսատու խաչիւդ տնագրեցի: Այն իւղ զարմանահրաշ օրհնութ լուսոյ՝ զհրէայն և զխուժն՝ զհնդիկն և զբարբարոսն՝ զսկիւթացին և զելլենացին՝ զդուժն դժնէաբար՝ և զարհաւրատեսակ շանագլուխն սոսկալիթխար, զահերն աղատ՝ և զսարուկն ծառայածին՝ քրիստոսեան արարեալ՝ անուամբ քո կնքէ. և հոգւոյդ տէրյ ընծայէ, և հօրդ երկնաւորի՝ հարազատ որդի հաստատէ: Նազմօրինակ են սոքա արուեստից տեսմունք յարմարեցեալք, նախ նիւթոյն՝ ապա զօրութն: Քանզի իբր անօթ փայտեղէն մինչև օծեալ իցէ՝ դիւրաբար հերձի, և անօգուտ եղեալ անպատուի, նոյնպէս և մարդ՝ ոչ իւղեալ սովաւ՝ հեշտեաւ խորտակի, և մեկուսի եղեալ առ 'ի քէն՝ ոչ լուսաւորի: Ստան սա քո՝ յիսուս, որով զհրաշալիսն զարմանագրես. քանզի իբր անդծելի կազմութ կարծր

պահպանակաւ՝ ամենապատրաստան շրջարկութեամբ պաշտպանեալ՝ ծածկէ յայլագունակ խրթնի եկամտից. մինչ զի այսու մաքրութեամբ թաթաւեալն ՚ի սմա՝ ոչ ներկի արեամբ, և ոչ տխրատեսակ երփնիւ այլայլի։ Նա զի և թափանցանց իմն խառնութեամբ հոգեպէս՝ ընդ թանձրութեան մերոյս գոյութեան մտեալ անցանէ. զի թէ անէծք սաղմոսոգին՝ ձիթոյ առակաւ՝ ընդ ոսկերս չարին համայնիւ բաշխի, որչափ ևս հոգիդ սոյն ճարպով լուսոյ՝ զաներևոյթ ներքնոյն տեսակս կենագործեալ ողջացուցանէ. ագդումն տուեալ ՚ի խորոց անտի չնչման հագագին՝ մինչև ՚ի սպառուած ծայրիցն եզերաց՝ զընաւն ընկղմէ զախշատակ մարմնոյ մահուն արկածից. քանզի կենդանական զօրութիւն քո միշտ անհաւոր՝ տէր յիսուս քո՝ ՚ի սմին խառնեցեալ ընդ սոյն իւղ բնակէ։

ԺԷ. Այս օծումն բարետեսին՝ և առբունամարտիկ մերկամրցանակ ըմբիշս՝ իբր զօրաւոր հնարից կերպարան ճգնաւորական՝ անըմբռնելի ձեռաց ներհակին՝ օրինօք պաշտի, դիւաց և ախտից հզօր ահարկու։ Քանզի յոքնապաճոյճ պճնութեան բանին եղեկիելի առ իմանալին փարաւօն, հենգնաւոր առակագրութեամբ՝ ողբականօք

շարայարմարեալ, յորժամ եղեր՝ ասէ, և հանդերձեցար ընդ օծելոյ քերովբէին, ուր արձանքն հրեղէնք հաստատեալ կառուցան։ Օրհնաբանեալ ահաւորութի ամենավայր ձեռընկալութե, որ միշտ անձեռն ես բա-նից՝ և գերազանցեալ քննութեց. որ աւե-տարանաւն կենաց խնկիս յարակայ՝ իբր նորածին օծեալ 'ի քաղաքի դաւթի. և 'ի քահանայապետին հարցմանէ, դու ես օծ-եալն որդի օրհնելոյն. և յերանաւորն դա-ւանութե պետրոսի՝ օծեալ միայն որդի այ կենդանւոյ. և յապահաւատ քննողացն, եթէ դու ես օծեալն՝ ասեն, ասա մեզ համարձակ. և 'ի կանոնականացն քոց՝ հա-ւաստաւք յօծեալդ ուսուցիչ և տէր ամե-նայնի. և հերովդէս յառաջ քան զոյն՝ զօծեալդ անուն յայտնապէս հարցեալ. և զիմ՞րդ գրեն՝ դու իսկ ասացեր, զօծեալն այ զորն դաւթի՝ զանկիզըն որդի՝ ժա-մանակաւ որդի։ Քանզի այսպէս ընկա-լաք վայելչաբար զայս թարգմանեցեալ. որ 'ի մեզ բերի ծայրն կատարման խորհրդա-կան կոչմանն՝ վիճակ քրիստոնէից նախա-պատուութեան։

ԺԴ. Այնքան ունի ահաւորութի՝ միան-գամայն և սրբութի՝ իւղաւորական խնկաւորութի՝ սակալի անուանս օծութե,

մինչ զի որպէս ոչ է համարձակել ուրուք յերկրայնոցս ած̃ անուանիլ՝ այլ ած̃ային, նոյնպէս ոչ բերէ մարմին՝ զքրիստոսդ անուն անձին համարել, այլ զքրիստոնեայն. անտանելի նախնւոյն մեծութե̃ մկրտչին՝ ջուրբ զհոգին հրաւիրողին . քանզի չեմ ես ասէ՝ օծեալն, այլ առաքեալ առաջի նր̃։ Սովաւ շրջէին՝ որպ̃ բանն ազդէ աւետարանչին մարկոսի, առաքելականացն լծակցութիք, իբր աղաւնից հարազատ ձեռինդոյ՝ այսու վարեցեալք . քանզի իւղով օծանէին՝ և առանց մարդկային հնարից՝ անուամբ քո բժշկէին։ Սան զի որպէս խաւար 'ի լուսոյ՝ և ցաւ յառողջութէ, գիշեր 'ի տուընջենէ՝ և մահ 'ի կենաց, այսպէս և 'ի սոյն իրէ տիրապարգևէ՝ ամ̃ չարին երևոյթք մերժին խափանին և բնաւին ամփոփին։ Քանզի որպէս ճանճք զաղիրք՝ և փոքր զեռունք սարդից և ունկնամոից՝ իբր 'ի դեղոց մահու՝ յայս նիւթոյ սպառեալ պակասին, սոյնպէս լուութբ̃ շնորհի օրհնութեան սոյն իւղ զօրացեալ՝ և զայսս վանէ, և զմուրհակս չարեաց ջրէ, և զվճիռ մահու պատառէ։ Ոչ է աւազան կատարեալ՝ առանց օծման օծանդակութե̃։ Եթէ աւազակացն մահու խոցման զմարդն առաջին, այս դեղ փրկութեան մատուցեալ

տուաւ · եթէ անճարակ վիրացն յակոբայ և իսրայէլի , սոյն իր պատուական յիշատակեցաւ · այս իւղոյ փափաքեալ դաւիթ՝ իբր ձիթենի պտղալից 'ի տանն այ՝ յուսով յորակայի , լքեալ զթլփատութիւն անդըստին , զմկրտութեան շնորհս գուշակէ : Ու-զի՞ է ինձ պայմանէ ճառել , և համայնին կարծել հասանել , որև ոչ վերինքն զօրեն ձեռնարկուէ ինչ բանի՝ զայն խորհուրդ 'ի մասնաւորէ ինչ ճառելով նշանակել , թողում ասել՝ թէ յիսկութէ :

ժե · Փառք քեզ միշտ և յաւէտ անմահ Թագաւոր՝ 'ի յայժմու երգեցեալ օրհնաբանութեանս , զոր արարեր և կատարեցեր առ իս՝ բարեխնամ գթած և երկայնամիտ , հարուստ և առատ ամենայաղթօղ · անդըստին 'ի հայրցն գծագրելով զօրինակն՝ մինչև 'ի լրումն ամեր զխնկութիւն ճշմարտապէս : Դու լոյս իսկ բնութէ և արեգակն մշտապայծառ՝ և զաշակերտացն դաս՝ լո՛յս անուանեցեր , որով զարարածս ամ երկրի՝ ճառագայթիւք երջանիկ շնորհի նոցին լուցուցեր : Ընկալար զիւղն անուշութեան յումեմնէ՝ 'ի յոտս , յօրինակ ընդունելութէ մաղթանաց առ քեզ · և 'ի միւսմէ պոռնկէ՝ 'ի գլուխ , նշանակ սիրոյ գթութեանդ առ մեզ · մշտափափաք բաղձանօք

անսահմանելիդ 'ի սոյն հաստատեալ, մինչ զի ուխտիւ անփոփոխադրելեաւ՝ օրէնս յարակայս օրհնաբանելիս՝ քըյինահրամանն պատուէրս կենաց՝ ընդ համօրէն աշխարհ քարոզել զսակաւաձեռն խաղոյն յարդարութի, զարմանս հրաշից լսողացն՝ առ ապաշտնեացն յուսադրութի։ Դուք օծուն ունիք զորբյն՝ ասաց երջանիկն առաքելութեանց, մեկնեալ զխորհուրդն որ 'ի մեզ զեղեալ՝ յառաւելութենէ կենդանարարիդ անպակաս բովանդակութե։ Աւասիկ յաւէտ ի՞մ յարմարաւոր և հանգունաւորի՝ առ 'ի մասնաւորն նմանուի լուսոյդ և հոգւոյդ սրբոյ՝ այս կաթուած օրհնութե 'ի վերնոյդ բարեբաստութեց՝ անսպառաբար սրսկեցեալ 'ի մեզ, և առ ի լոյս, իբր զնախաթիւ դոլառեղծուածոց՝ և արարչուեդ պատկերակից, որով զխաւար մթութե մեղաց հալածես. իսկ հուր, զի յոմ առը արարածոց հաւասարապէս ունի զուգութիւն՝ ըստ էականին կշիռ բաշխութե, ծածուկ և յայտնի, լուեալ և ծանուցեալ. և եթէ ոչ ընդ հարցի 'ի հակառակէն, ոչ յինքնասաստ յօժարմութէ բաղձայ բորբոքիլ։ Դարձեալ և օծումն, զի արքայաբար որդեգրեալ՝ ընդ քեզ 'ի ժառանգուի հօրդ մատուցես. ողորմութեդ ապգայ ա-

նկարեալ 'ի մեզ աննեղծանելի՝ 'ի հանդերձ-
եալ փառսն փայլեսցուք · դարձեալ և հո-
գի , զի մաքրեալ զարկածս խաբէութեն՝
որ 'ի բանսարկուին ներգործութե , նո-
րոգ փոփոխմամբ հոգւով և ճշմարտութբ՝
հօրդ երկնաւորի երկրպագեսցուք , բևեռ-
եալ ընդ քեզ յուսոյն հաւատովք՝ ամե-
նապարգև ։

Ժէ. Ահա արդարև յաւէտ խոկայէս՝ խու-
ղըս այս լուսապատոր խնկալիր՝ վերնակա-
նիդ սիրոյ տեսութի ։ Սն որոյ և պօղոս
իսկ պատշաճ վարկաւ 'ի ճառ գոհաբանու-
թեանն՝ ասելով յայտնի , որ օծ զմեզ
ձեօք հանդերձ 'ի քս յիսուս՝ ած է , որև
կնքեաց զմեզ՝ և ետ զառհաւատչեայ հոգ-
ւոյն 'ի սիրտս մեր · և դարձեալ , մի՛ ասէ ,
տրտմեցուցանէք զհոգին սբ այ , որով կնքե-
ցարուք յաւուրն փրկութե ։ Պատկառելի
և անվանելի օծութեան յորջորջութի՝ իբր
'ի նորումն՝ յաւէտ քան 'ի հնումն · քանզի
բանն դաւթեան սաղմոսին՝ զտիրական
տնօրինականացդ սկզբնաւոր կրիցդ խոր-
հուրդ՝ ճշմարտաբար վերասահմանէ , ժո-
ղովեցան կուտեցան իշխանք ժողովրդոց՝
վս տն և վս օծելոյ նր ։ Մարգարէութի
մեծ տպաւորեալ զանսրբելի արեանդ պար-
տիս՝ հրէտխումբ չար մոլեգնութեն՝ որ

'ի տէրդ յանդգնութիւն, ոմն է որ ձգիցէ զձեռն իւր յօծեալն տեառն՝ և քաւեսցի. քանզի թէև յաղգայնոյն սպանաւ սաւուղ, այլ ոչ իսպառ մերժեցան յամօթ և 'ի նախատինս ազգաց օտարաց, մինչև որեանդ ո̃յ հաղորդեալ գտան: Գրաւական մեծ յիշատակի ապագայից ժառանգութեան՝ աղօթանուէր աղերսարկութիւն առել սաղմոսիւն, վասն դաւթի սիրելոյ քո՝ մի դարձուցանէր զերեսս քո յօծելոյ քումմէ. և դարձեալ, նայեա́ և տես յերեսս օծելոյ քո, և արա́ ողորմութիւն ընդ օծելոյ քո:

ԺԷ. Զեւրինդ քո՛ ք̃ս, երկրպագեալ պարգևատրութիւն՝ այս հիւթ լուսակիր. քանզի ոչ այլ մեծ բարձրութիւն յարքայութեան ճոխութենէ՝ ասէ մարգարէն 'ի դիմաց քո տէր, քան թէ՝ գտի զդաւիթ ծառայ իմ, և իւղով սրբով իմով օծի զնա: Սուտի կիրթ իմն յիշատակաւ՝ զքոյդ համբուրեալ լուսոյ օծութիւն՝ տէր յ̃ս ք̃ս, ծանիցուք զքեզ անփոփոխ մշտնջենաւորութիւն, թէ դու ես ա̃ծ՝ և յա̃ծ միայն թագաւոր թագաւորութեանց, և ճշմարիտ օծեալ իւղելոց, փառաբանեալ երկրպագուե̃, երէկ և այսօր: Վասնզի զոր օրինակ պատրոյկ թացեալ 'ի ճարպում՝ ոչ երևեցուցանէ լին̃

նշոյլ՝ մինչև հուրբ լուցեալ վառիցի, սոյն-
պէս և այս օծութիւն լուսոյ առ 'ի մեզ հեղ-
եալ՝ 'ի հանդերձեալն ջահաւորի։ Այս է
կերպարանին մեկնաւոր բացերևութիւն, 'ի
նախնեացն և այսր բերեալ բարենշան իմն
յարմարութեամբ՝ հրաշապայծառ երանգա-
գունեալ։

ԺԸ. Արդ՝ այսոցիկ պատճառ վերագոյն
մասանց կեցուցչաց ածականաց՝ արար-
չութեանդ հարազատաց, առանց որոյ ո՛չ է
գրիլ քրիստոնեան, և ո՛չ նազովրեցի անուանիլ,
և ո՛չ յիշատակիլ յորդիս յուդայի, և կամ
խրախոյս բառնալ յանուն Աստուծոյ յակոբայ,
այս հիւթականութիւն օրհնութեան ձիթոյս,
յորում սուրբ երրորդութիւնդ խառնեցեալ
միաւորի․ ճառագայթ շնորհաց․ շուք մե-
րոց դիմաց․ նկարագրութիւն երեսաց․ բա-
րեձևութիւն պատահմանց․ լուսաւորութիւն
աչաց․ տեառնագրութիւն բբաց․ վայելչութիւն
այտից․ զարդ կերպարանաց․ պահպանարան
շրթանց․ հանդերձիչ կրօնից․ յարմարիչ
վարուց․ շաղկապ հաւաքմանց․ զօրութիւն ան-
ձանց․ ուժգնութիւն դիմեցմանց․ խափա-
նիչ յուռթից․ քակտիչ հմայեկաց․ նա-
հանջիչ ձեռնածուաց․ խայտառակիչ կա-
խարդաց․ գտիչ աղանդից․ բռնախոյեան
դիւաց․ փարատիչ ցաւոց․ կատարիչ կնքե-

ցելոց · տենչանք երախայից · անզննին տը-տաքնոց · հիացումն հեթանոսաց · նախան-ձարկու անհաւատից · մերկացուցիչ գաղտ-նեաց · յորդանք յետնոց · փառք ստրկաց · պճնումն կանանց · աճեցումն տղայոց · հրճուանք ծերոց · ձեռնադրիչ նուիրելոց · զգուշութի մաքրոց · պսակ թագաւորաց · ճոխութիւն աղքատից · յառաջադրութի կայսերաց ։ Քանզի զոր օրինակ աման ինչ կնքեալ՝ նշանակիչ իմն է ներքնայնոցն մե-ծագնութեն , նոյնպէս բարձրութի շնոր-հին 'ի մեզ սովաւ ծածկեցեալ յանուն քո՝ տ՜ծ տէր յ՜ ք՜ս , վայելչական իմն տե-սակաւ ծանուցեալ նշանակի ։ Իսկ անունն իսկոյն անդստին 'ի նոյն յորջորջեալ կոչ-մամբ , ըստ հոգելից արանց իմաստնոց՝ որ յեգիպտացւոց անուն սկսեալ , 'ի դէմս ա-ծելով զիւրն կերպարան՝ ահաւոր խոր-հրդոյ պատկեր ։

Վասն սրբալոյս իւղոյն մեռոնի ։

ԺԹ. Քանզի մեռոնս այս օրհնաբան-եալ , զոր մարգարէն կանխա-լոյս ասաց՝ գրեթէ զայն աղերսեալ խընդ-րէր , ըստ քերթութեանն բառի , որ ըստ խորութեն հոմերոնի՝ թարգմանեալ իմա-նի , ինձ մայր · այսինքն է՝ առ 'ի յինքն

ձգօղ զմերս բնութի զօրապէս, և կայուն հաստատել չքնաղ փոփոխմամբ զջուրց լուծականութի՝ առ աւազանին լուսաւորութի. և իբրև զդեղ՝ մածուցիչ կաթին՝ ’ի նոյն ինքն յեղանակել զցնդեալս իմ վայրագութի, և զաղբերց հեղեղեալ մշտահոսութի։ Իսկ մառնամուտ՝ որև այս միռոն, ըստ այլում բառի ցուցանի. այսինքն է՝ մթին, որև խաւարչուտ գոլ և ծածկեցեալ՝ կամ անտեսական. որև սոյն կոչումն դիմառութե չէ օտարացեղ. քանզի արդարև յիրէ անտի անունն նշանակի. վս զի անքննին է այս խորութի յաւէտ՝ քան զամ սրբութի սրբոց։ Ո՛չ ոչ եթէ ջրոյ օրինակաւ զաղտ ինչ լուանայ, և կամ հացի բնութե զսիրտն հաստատէ, այլ նորոգ իմն յարմարութե ’ի մասունս ազդողականացն անօրինապէս տեառնագրի. սակայն անհասութեն վերնականաւ՝ և զանունն ունի անքննին։ Քանզի որպ ած իսկ և իսկ ’ի լոյս անմատոյց ասի, իսկ անսահման փառաւորութեն՝ յեղանակաւ իմն անբաւութեան՝ ’ի խաւար անզննին ծածկեալ իմանի, փակեալ արտաքուստ ’ի ձեռնարկութեց մերոց իմաստից, նոյնպէս և այս ծորումն լուսոյ՝ ’ի լեզուաց ոմանց ճարտարաց ’ի ճահ ճեմութեց՝ գրականապէս անուանադրու՝

մնալ առ ձայնի, վ՟ն ոչ զօրելոյ երկրածին բնութեան զխակն գիտելոյ։ Իսկ զերկաքանչելիս ա՟ծ ականացն՝ անդստին յինքեան հարստաբար տիրապէս ունի. քանզի 'ի կոչումն անուան բարձրելոյն նմանակերպեալ՝ կրկին մեծանայ խուզս այս նուիրեալ ամենաբուրեան աղնիւ կնդրկաւ. վասն զի ա՟ծ մեր՝ հուր ծախիչ է, ըստ մովսէսի. և դարձեալ լոյս է, ըստ յովհաննու. ուստի և եսայի ճշմարտապէս զսոյն ակնարկէ, եղիցի՝ ասէ, լոյսն իսրայէլի 'ի հուր։

Ի. Դարձեալ՝ այլ իմն կերպարացուցանելով զբանս՝ առ 'ի նոյն պատկեր յայտնուէ իրի. վ՟ն զի ոչ մոռանամ զիմն նորկութի՝ որ 'ի գթութէ մեծիդ քաղցրացաւ՝ վերստին գովեստիւ օրհնել. քանզի՝ մեռայ, որ է դառնութիւն, այսինքն՝ նշանակ իմն յարմարական չարչարաւոր կրից տաժանմանց, որև միւռոն սուդաբանեալ մեկնապէս ըստ մեզ՝ մեռելութեան աղդականութի։ Քանզի այսու օծմամբ հոգեւորականաւ՝ խղեալ կամ հատեալ 'ի սնոտիապէր մահակերպարան տաղտկազարդական հեշտութեանց հակառակողին, որ օդախոնաւ մեղկութբ զքնարս ձայնատրական՝ և կամ զարկուած վերածածկութե մըզնարհեստ ուժգնաբարբառ խորխատահըն-

իր

չոկան կազմուածոյ թմբկիս գործականու-
թեան՝ ջրացիր իմն գիջութը՝ անվայելուչ
թուլաթաշնակեալ՝ 'ի ստորև կորստեան
քարշէ զօրինակ մերս գոյութե, կապիք
յուսով վերստին դարձեալ ընդ անճառ
խորհրդոյ խաչի քո՝ ք'ս · մկրտեալք 'ի մահ
կենդանուոյդ՝ անվախճան կենացդ սովա-
հաղորդիք, 'ի քեզ իսկ ած համայնիւ
խրախուսեալ՝ իսպառ ամենևին անհաս-
ուածելի:

իա · Այս իւղ՝ զդրօշեալն քառակուսեան
յանուն քո յս՝ նշանի բարձրելոյդ հա-
ւասար հաստէ · շնորհ ընծեռեալ զու-
գափառ և նմանատիպ արեան կեցուցչիդ՝
նոյն անվանելի փառօք սպակեալ մեծա-
ցուցանէ: Փայտ անուանի իւղոյ օրհնու-
թեան, ըստ մարգարէին կանխաձայնութե,
զի հաստատակաց կազմեցեալ բուսոց անտա-
ռաց զօրապէս ուղղեալ՝ 'ի խակութէ չա-
րին արկածից և օտար կարծեաց՝ 'ի ստեղ-
ծողդ վերաբերեալ առ նոյն նիւթս կենաց՝
հասուն ներգործէ: Զի և որ 'ի մեզ մը-
տից պատուհանաց մշտաբացիկ թափան-
ցանցութիք՝ յանուն մեծութե ահաւորիդ
զօրութե՝ 'ի խոհական իմն համեստութի
քև տեառնագրեցեալ առ 'ի յըղձակերտ
օթեվան հոգւոյդ՝ անաղդելի պատրանաց

չափին՝ խաւարաՀողմ խարդախողին , այսու լուսով զարդեալ ամփոփիմք 'ի նուագ գոՀութե՟ երեկորեան պաշտաման՝ ընդ երկնայնոցն զամբարաց՝ առ օրինակ վառման շնորՀիդ որ 'ի մեզ . 'ի սոյն յիշատակ փրկութեան բարեացն՝ սովաւ տնկեցեալ ծառդ , և ծաղկաւէտ եղեալ պտղածնի . 'ի սպաս ընթրեացն պատրաստութե՟ յեանուամ գիշերի՝ 'ի մեծիդ գալստեան . աՀա զայս լոյս ճրագի Համարեալ 'ի կիր արկանեմք :

ԻԶ . Դարձեալ՝ ըստ գծագրացն գումարութե՟ քսան և չորից շարագրուե՟ որ յալփափետաց անտի վերաթուի մինչև 'ի քսաներորդ երկրորդն կարգի , յորում զայս խորՀուրդ խորուե՟ անտուստ թարգմանեալ՝ ճաշակ Հեշտալի որոց Հաղորդին՝ ջամբել պատրաստեմք ամենակազմ յարմարութե՟ . քանզի յութներորդէ անտի գրոյ՝ 'ի չորեքՀարիւրն փոխաբերեալ՝ ստուգաբանօրէն քննուե՟ ընդ ձիթոյն անուան՝ նիւթ ճշմարտագրի . որ է կերպարան արդեան խմորոյ՝ յինքն բերողի զզանգուածն զօրեղապէս . որ ոչ սակաւն 'ի յոլովէն պարագայի , քան թէ 'ի նոյն իրն դարձուցեալ , ըստ աւետարանական առակին , զո՟մ առ ինքն վերաբերեալ անձեցուն առնէ :

ԻԴ. Այն իւղ հեզութե՛ միշտ համբարձ-
ման և խոնարհութե՛ օրինակ և նմանու-
թիւն, առ ոմն կակուղ պատուական մա-
տուցեալ ջամբի, հարթակշիռ և բարեյար-
մար բանի կերպարան. իսկ համայնից լու-
ծականաց՝ հոսանուտ և սատորածորելի նիւ-
թից՝ գերափառ վերաշրջական հրաշափառ
խորհրդոյ պատկեր. քանզի և յաման ինչ
մորթոյ արկեալ՝ ոչ ըստ գինւոյ ձեոյ և
կամ ջրոյ թացութե՛ մեղկէ, այլ ՚ի սահ-
ման պատաշաճին պահէ: Այսպէս ընկալ-
եալ զքոյոցդ բարեաց անհաւասար առա-
ւելութի՝ որդի այ՜ կենդանւոյ, զօրբանուէր
այս օծելութի՝ ՚ի ճակատ դիմացս արեամբ
քո գրեմք. և ՚ի բնութի շնչոյս՝ հոգւով
քո տպաւորեմք, հաւատացեալ խորհրդով
մտացս, եթէ յաւէտ յայտնեսցի նորոգ-
փայլեցեալ բազմաճաճանչ ծայրարձակու-
թեամբ՝ ՚ի տարածումն յոգնատեսիլ զար-
մանահրաշ ընդարձակութե՛ պտուղ իւղոյ
ընծայե՜լւոյս՝ ՚ի փառս ապառնեացն հան-
դերձելոցն: Այս ճարպ հոգևոր երջանիկ
և վերնանշոյլ՝ ՚ի դէմս երեսաց իմս պատկե-
րի՝ քումդ նշանաւ ջահաւորեսցի:

ԻԵ. Եւ քանզի՝ իբր անհաս ոչ ըմբռնա-
կան այս մեծ զօրութի՝ արագ սլացմամբ
՚ի թևս թեթևս մտաց պայմանի, անդր քան

զկարծիս ուղղոյ իմաստից՝ անհուն հետե-
ւման անհետ փախստեան՝ լոյն իմն միջոցա-
խաղաւ որոշեալ, փակեցաւ յինէն. ո՛չ օրի-
նակեցաւ կցորդաւ. ո՛չ նմանեցաւ զուգա-
մասնութ՟բ. ո՛չ սահմանեցաւ ձեւակերպու-
թեամբ. ո՛չ կշռեցաւ ընկերին չափով, այլ
ահա ընդ ա՟ծեան խաչիդ նշանի՝ հաւա-
սարութ՟բ արեան կեցուցչիդ՝ հոգիապէս
գերազանցեցաւ։ Նոյն արդ՝ օրհնեա՛ զմեզ
տէ՛ր սովաւ և՚ի սոյն. և ես և անուանդ քո ա-
հաւոր, լուսաւոր, երկնաւոր, և զարմանա-
ւոր, ՚ի գովեստ փառաց անճառից մաքրա-
կրօնից՝ բուրվառաւ խնկեալ, ս՟բ՝ ս՟բ,
անքննին, անպատում, բարձրեալ, ողոր-
մած, վեր երգեալ՝ ճշմարիտ, բարերար և
ս՟բ, որով սովաւ փրկութի. տուր և քա-
ւութի. պարգեւեա՛ բժշկութի. հանդեր-
ձաւորեա՛ շնորհ. առատաձեռնեա՛ երանու-
թիւն։ Օծումն այս ձիթոյ՝ երկնանձրե-
լուսոյ՝ անարատ դրոյց. քլուղեալս այս
թեղան բանաւորական՝ մի՛ մնասցէ, և մի՛ գը-
րաւեսցէ ախրականութիւն աղտոց մեղա-
նաց՝ շաղախել երբէք զոդուոյս կերպարան։
Ողջցի սոյն ինքն որոց մատչին օծանիլ սո-
վաւ՝ հարսնապաճոյճ պանծանօք պճնել
գեղայօրէն ս՟բ վայելչութ՟բ՝ երջանկապէս
յօդի զարդարեալ։ Ողջցի հուրս այս

լուսափառ և ծածանիր՝ մերձեցելոյն 'ի սոյն ընտրութի՝ մուխ կրկնեալ և բարեփափաք ջերմութե այլ յօրինուածոյ, որով ամենայնիւ ամենապատրաստ պնդութբ՝ 'ի կարծրականումդ անսասան վիմիդ յարակայեցեալ միշտ արձանացայց՝ 'ի քեզ հաստատեալ աներկմտելի։ Լիցի նշանակ վերնամրձանակ ոյսր պարգևի սովաւ վառելոյն, ո՛չ ողողիլ ջուրբ. ո՛չ այրիլ հուրբ. ո՛չ ցրտանալ 'ի սառնութե. ո՛չ վնասակար հողմով շիջանիլ. ո՛չ աղտեղիլ յուրուական ինչ պղծութե. ո՛չ զպահեալսն՝ չարին մատնել, և ո՛չ 'ի սորա ելից՝ զմթերս գանձուն կենաց՝ յիմարաբար արտաքս հանել. ո՛չ անպատսպար մնալ 'ի թևոց քոց օգնականութե, և ո՛չ ղեկացեալն 'ի մեզ օծութիւն՝ անմաքրապէս 'ի բաց մերկանալ։ Այլ եղիցո՛ւք քև 'ի սոյն հրացեալ. սովիմբ պարարեալ. սովաւ լուսաւորեալ. այսու արդարացեալ, ազատացեալ՝ պսակեալ և թագաւորեալ։ Ի քեզ միայնոյ միայն օծելոյ՝ յամենեցունց օրհնութիւք երգոց, ալէլուք լեզուաց, հնչմունք ձայնից, յաղթանակութիւք գովեստից, բարեբանութիւք շրթանց, սրբաբանութիւք սաղմոսաց, ընդ հօր և հոգւոյդ որ՝ յաւիտենս յաւիտենից. ամէն։

Այն իմ ձեռնարկութի 'ի սրբութի, և այս սր-
ձանագրութի 'ի սրբութեցն սրբութի։

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հրա-կողի , առ նոյն աղերս մաղթանաց բանի · 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ ·

## ԲԱՆ · ՂԴ

ա · ՏԷր յաւիտենական · բարերար և ամենակալ · առեղծիչ լուսոյ , և յօրինիչ գիշերոյ · կեանք 'ի մահու , և լոյս 'ի խաւարի · յոյս ակն ունողաց , և երկայնմտութի տարակուսելոց , որ ամենարուեստ իմաստութք քո՝ դարձուցանես յայգ զստուերս մահու , աննուազ ծագումն և անմուտ արեգակն · քանզի ոչ զօրէ ծածկել զփառս տէրութեան քո խաւար գիշերոյ : Որում կրկնի ծունր երկրպագութե ած եղելոց՝ երկնաւորաց և երկրաւորաց , և սանդարամետականաց · որ լսես զհեծութի կապելոց , և հայիս յաղօթս խոնարհաց , և ընդունիս զխնդրուածս նոցա · ած իմ և թագաւոր իմ · կեանք իմ և ապաւէն իմ · յոյս իմ և վստահութիւն իմ · յիսուս քս ածդ ամի · սուրբդ հանգուցեալ 'ի հոգիս սրբոց · մխիթարութի վշտաց՝ և քաւարան մեղուցելոց , որ գիտես զամ յառաջ քան զլինել նց · առաքեա զպահպանողական զօրութի աջոյ քո , և փրկեա զիս յերկիւղէ գիշերի և 'ի դիւէ չարէ : Այլ զի զյիշատակ

սոսկալի և սուրբ քո անուանդ՝ միշտ համ-
բուրեալ շրթամբք հոգւոյ՝ ըղձութեան շըն-
չոյ, կեցից պահպանեալ ընդ այնոսիկ՝ որ
կարդան զքեզ 'ի բոլոր սրտէ.

Է. Եւ 'ի դրոշմէ խաչի քոյոյ նշանիդ, զոր ծայրին արեամբ քո ներկեալ նորոգեցեր, և 'ի նոյն շնորհ որդեգրութեան զմեզ մկըրտեցեր, և 'ի փառս պատկերի քո նկարեալ յօրինեցեր, այսու պարգևօք ծածկանօք՝ ամաչեսցէ սատանայ. քակտեսցին մեքենայքն. բարձցին որոգայթքն. պարտեսցին մարտուցեալքն. պակասեսցին զէնքն սայրասուրք. մերժեսցի մէգն. փարատեսցի խաւարն. մեկնեսցի մառախուղն։ Բազուկ քո հովանասցի, և աջ քո կնքեսցէ. վս զի գթած ես և ողորմած, և անուն քո կոչեցեալ է 'ի վերայ ծառայից քոց։ Եւ քեզ ընդ հօր՝ հոգւովդ սրբով՝ փառք և իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

Վերստին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հըսկողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի, 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

## ԲԱՆ · ՂԵ

Ա. Արեգակն արդար. ճառագայթ օրհնեալ. լուսոյ կերպարան. փափագ անձկութեան. բարձրեալ անքննին. զօրեղ

անպատում · բարւոյ բերկրութե՛ն · յուսոյ տեսութե՛ն · գովեալ երկնաւոր · Թագաւոր փառաց · քո՛ արարիչ · խոստովանեալ կեանք։ Դու արդ՝ զթերութե՛ն վրիպանաց բազմաբը-խեալ ձայնի եղկելոյս՝ ամենազօրդ բանիւ լցեալ, մատուցես յաղերս հաճութե՛ հօր քում բարձրելոյ։ Որ վ՛ իմ ’ի փորձ եկիր անբծից, կերպարանեալ զիմ նմանութիւն՝ ամենևին կենաց օրհնութիւն, վերնոց և ներքնոց բարեխնամօղ տեսուչ համայնից։ Զի թէ յանձն առեր մեռանել վ՛ իմ՝ ա՛ծ և տ՛ր բոլորեցուն, որչափ հաճեսցիս առաւել և այժմ վտանգաւորս կրից կարեկցել, ընդ իմ պարտաւորիս միշտ աղօթելով ազգակցաւ մարմնոյդ առելոյ ’ի մէնջ

առ համապատիւդ քո հայր։

Է· Դու վ՛ արեանդ պատուականի միշտ մատուցելոյ ’ի հաճութե՛ կամաց առաքչիդ՝ բարձցի՛ն վտանգք մեղուցեալ դատապարտելոյս· թողցի՛ն պարտիքն · ապաքինեսցի՛ ամօթն · մոռասցի՛ն պատկառանքն · բարեգործեսցի՛ն դատակնիքն · սատակեսցի՛ն որդունքն · վերասցի՛ լալն · հանդարտեսցէ՛ կրճումն ատամանցն · սպառեսցի՛ն ողբքն · հատցի՛ն արտասուքն · մերժեսցի՛ սուգն · հալածեսցի՛ խաւարն · վտանեսցի՛ հուրն սատակուն · հերքեսցի՛ն տանջանարանքն բազմօրինակք։

Դ · Լնկեսցեն գթութիւք կամողիդ և պար-
գևողիդ կենաց ամենից · ծագեսցի լոյսդ ·
արագեսցէ փրկութիւդ · հասցէ օգնութիւդ ·
ժամանեսցէ այցելութիւդ · կանխեսցէ ցօ-
ղդ ողորմութե · յառաջեսցէ արբուսցէ
զանդաստանս պապաքեալ՝ անկեալ ոսկերացս
թշուառութե ՚ի վիհն մահու · ծաղկե-
ցուսցէ պտղաբերեսցէ բաժակդ երկնա-
ւոր արեան կենարարիդ՝ զերկիրս խնամ-
եալ աւուրն լուսոյ · որ անծախապէս միշտ
պատարագի յիշատակ կենաց փրկութե հոգ-
ւոց ննջեցելոց ։ Օի ամենայնիւ մահաց-
եալ հոգիս մարմնովս մեղաց՝ շնորհօք քո
դրթած՝ ՚ի քեզ զօրացեալ քև նորոգե-
ցայց , զատեալ ՚ի մեղաց անմահ կենդա-
նութե ՚ի յարութեն արդարոց , հօր քում
օրհնեցեալ ։ Ընդ որում քեզ փառք , և
հոգւոյդ սրբոյ բարեբանութի՝ վայելչա-
կան գոհութե , այժմ և միշտ և յաւիտ-
եանս յաւիտենից · ամէն ։

ՎԱԽՃԱՆ

Յիշատակարան Մատենիս Դրութեան։

Ըստ հոլովման ընթացից ամենակալ յառաջ շարժութեան, որ ըստ լրապատարն նշուլագեղն արփիածածանչ՝ լուսակիրն օրակշիռն մղափարատն ակնապարար՝ականն արեւու՝ ստեղծականն արուսեկի, որ համեմարէ հոլովէ կուտէ ամաց յոլովութի ՚ի չափս դարուց՝ շնչասպառ և կենդանանորոգ տուողեկան յաւիտենից, ՚ի յաւարտումն կատարման իններեակ յոբելինին, ՚ի սկիզբն պսակելոյ մոի տասնեկին՝ Յաբեթական տոհմիս տումարի․ յետ երից ամաց անցելոց՝ որ զկնի գալստեան ՚ի կոյս և ՚ի կոյս կողմանց հիւսիսոյ դիմաց արեւելից՝ յաղթօղ և մեծ կայսերն հռոմոց Բասլի, յորժամ ընդարձակ և մակագաւիթ կանոնաւ ըսփիւռ տարածէր՝ լիասահման և անխարոց ՚ի սուսերակարկատ կոթողս կարծր արձանաց՝ ՚ի ձգումն ձեռին՝ և անխղելի լարս պարանաց երկարագունից՝ անթարթափ ՚ի նոյն վերասլացեալ ՚ի յաջ և յահեակ՝ սեպհականել յաւելուլ բաժինս մասանց վիճակաց՝ խմբից աշխարհաց ՚ի ծոց իւր։

Արդ՝ ՚ի յայնմ անդորրութե միջոցի, յորում եղերեալ ընդոտնեցան թշնամիք եկե-

ղեցւոյ, ստացեալ հիմնեցի, կառուցի, կարգեցի, կուտեցի, արձանացուցի, դիզի, բարդեցի, կացուցի, ցուցի, հաստատելով 'ի հրաշակերտութ̅ն միագոյ իւր՝ զբազմատեղնեան դրուագս դրութ̅ն այսմ սոփերի արգասաւորի, ես Գրիգոր կրօնաւոր քահանայ, յետին բանահիւսաց, և կրտսեր վարժապետաց, գործակցութ̅բ եղբօր իմոյ ընտրելոյ՝ Յովհաննէս կոչեցելոյ՝ Նարեկայ մեծափառ և բարձրապատիւ ուխտի վանականի. որք իբրև զմի մարմին բանական՝ 'ի յերկուց առ մի կերպարան շինելոյ դիմաց կենցաղավարելով, ո՛չ միայն հարազատք, այլև միաշունչք միակրօնք համապատիւք զուգահաւանք, 'ի քառից աչաց՝ առ մի և նոյն շաւիղ խորհրդոյ տեսեալք:

Արդ՝ հայցեմք 'ի ճաշակողացդ յայսմ սեղանոյ՝ յոքնօրէն և ախորժահամ հանդերձելոյ՝ յիշատակել զմեզ 'ի մաղթանս ուղիղս և 'ի պատկանաւոր խնդրուածս, սեռն սիրով 'ի միոս բարիս. որով և դո՛ւք եղիջիք գրեալ 'ի մատեանս կենաց վերին դըպրութեանն:

Յիշատակ վարուց հոգեկիր հռետորի սրբոյն Գրի-գորի։

ՍԱ մենափայլ նշողիւք ճառագայթից շընորհաց հոգւոյն այ՝ լուսապատար պայծառազարդեալ՝ Հրեշտակն ՚ի մարմնի սբն Գրիգոր՝ էր յԱնձևացեաց գաւառէ Վասպուրական աշխարհին · որդի տեառն Խոսրովու Անձևացեաց եպիսկոպոսի · ՚ի ժամանակս կայսերութե յունաց Վասլի և Կոստանդեայ · յաւուրս Սենեքարիմայ հայոց արքայի · և ՚ի Հայրապետութե տն Վահանայ կաթուղիկոսի։ Որ սնեալ ՚ի կարգկրօնաւորութե ՚ի վանս Նարեկայ, որում և եղև առաջնորդ, ուստի և հռչակեցաւ Նարեկացի։ Այն սա երկնահանճար վարդապետութբ գերափայլեալ՝ մեկնեաց զերգն երգոց Սողոմոնի · Գեղգեղեաց զճառ խաչին, և զներբողեանս ՚ի սբ Ածածինն, ՚ի համօրէն գունդս առաքելոց, և ՚ի սուրբն Յակոբ Մծբնայ · և զքարոզս գանձից։ Այս բանապաճոյճ ջերճամանութբ գրեաց զորյն զՂԵ բանս աղօթից ՚ի խնդրոյ հայցման հարց միաբանից, զոր թողեալ մեզ վերջին ժառանգութի անսպառ մթերից՝ փոխեցաւ յաստի կենաց՝ վախճանեալ յերիտասարդական հասակի, ՚ի թուականիս

Հայոց՝ դ̃ձ̃ծ̃է̃ · և ամփոփեցաւ ՚ի նոյն վանըս Նարեկայ։ Իսկ յորժամ Սենեքարիմ արքայ փոխեաց զթգւթին ՚ի փոքրն Հայաստան, ապա և միանձանցն Նարեկայ դիմեալ մերձ ՚ի կողմանս քաղաքին Անիոյ և Տիրիկեայ, շինեցին վանս յանուն Նարեկայ, ուր բերեալ հանգուցին զպատուական մարմինն, թէև այժմ է աւերակ, և կոչի ուխտ Արակայ, յորմէ լինին նշանք բժշկուԹե̃ ՚ի փառս այ̃։ Որոյ ած̃ախօս մաղթանաց օժանդակուԹե̃ արժանասցուք զմայլական տեսուԹեանն այ̃ · որում պատիւ փառաց ծնրադրական երկրպագուԹեամբ յաւիտենանս · ամէն։

---

Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ՝ ներբողեան առ սուրբ Աստուածածինն։

Գումարք խմբից դասուց երջանկացն՝ պատուասիրեն բիւրաբեղուն բանիւք գովեստի՝ զսկզբնալոյսն կենաց դրից ՚ի կիցս բանից ըղձաձայնուԹ̃եց · և ոմ̃ փողովք տաւղօք և քնարիւք զգայական սրտի՝ շարժեալ զգործի՝ զգերազանցեալն ՚ի լոյս անմատոյց ուրախուԹե̃ վերադրուատեն։ Եւ զանձառ արարչուԹե̃ հրաշագործ ամենաստեղծն տէրուԹ̃ի օրհնելով, պատ-

ճառ փառաբանութե՟ խնկութե՟ հաստչին զհաստատուածոցս առնուն գոյութի՟ · որպ՟ և ճշմարիտն բան ցուցանէ, ՚ի ստեղծանելն ինձ զայս տ՟ր, բայց զօրաց դասուց երջանկացն օրհնեցին զիս մեծաձայն, և տ՟ր հրեշտակք իմ գովեցին զիս։ Եւ արդ՝ եթէ հրափայլ և երագընթացն փառաբանչօք՝ վերնաթռիչ պատգամաւորօք՝ հոգիանիւթ և անեղծական կենդանեօքն նա օրհնաբանի · որ թէպէտ և նոքա վեհք են բնակութե՟ կայից ստորիցս, և նշոյլ երկրորդ՝ լուսոյ առաջնոյն · այլ սակայն յոյժ անտեսաբար ապաւորութե՟ առ բնութի՟ բարի բանին բարձրելոյ՝ բարեզարդաբար բերկրանօք բերին · և որ գոհաբանի առ ՚ի նոցանէ նը տ՟ծութի՟ն՝ լայնածիգ հեռաւորութեամբ և ընդարձակ միջոցաւ յաւէտ անջրպետ նշուլիւքն ծածկի ՚ի նոցունց։ Ապա զայն՝ որ զանհասն հրեղինաց ՚ի հողեղէն յարկն պարունակեաց · և զանճառն ՚ի սերովբէից զգալի մարմնոյ յօդիւն պատեաց · և զկերակրիչն դասուց հրեշտակաց՝ կաթնասուն ստեամբքն դիեցոյց, ո՞ր երգպատկանագիր ՚ի ճահ գովեստից օրհնեալ պատուեսցէ։ Ո՛ մարմնարանն անտեսին՝ և զձեռնարանն մեծին · զտաղաւարն տիրական՝ և զխորանն տ՟ծական · զխառնարանն

ճաշակման՝ անապական խրախճանութե՟ • զլուարանն մաքրութեան՝ և զընդունակն զգաստութե՟ • զնպատակն կուսութե՟՝ և զօրինակն երանութե՟ • զհարսնարանն անլուծանելի՝ անժամանականն փեսայի • զբնակարանն հաճութեան՝ կամաց անեղին ա՟ծութե՟։ Օ՜ այսքան փառաւորդ շնորհաց ընդունակն, և ոչ նորին ա՟ծութեանն օրհնաւորք հրեշտակացն պարք՝ ոչ պարտին է պատուել ժպրհին, թող թէ մարդ երկրային 'ի կշիռս չափոյ բերանոյ հողաղանգուածս հիւթոյ մեղկս մարմնոյ • քանզի անճառութե՟ անհասականաւ վեհագոյն ամենեցուն փակեալ գտանի • և ոչ զօրեն երկնայինք զարարչին անհաս տնօրէնութե՟ն զանքննին ծնող՝ արժանապէս վերաքարոզել։ Վասնզի թէ ըստ առաքելական ձայնին պօղոսի, մարդն անձնացեալ ոչ կումէքէ պատմի, ապա որ զլրութիւն բանին էութե՟ ա՟ծութե՟ն կլացեալ կրեաց 'ի մարմնի՝ զիա՟րդ զննեսցէ շարժումն շրթանց լեզումարմնեղէն զնա ճանաչել։

Օ ի թէ դաւք պետութե՟ց անմահից վեհից վերնոյ բնակութե՟ն՝ եկեղեցեաւս 'ի կայս խորհուրդ խորին կաւեցան • ապա կայտ է, թէ մեծ է առ նոսա հիացումն սքանչելի գործոյս այսորիկ, քան զհասումն

երկրաւորաց բանից պատմութեան։ Բայց սակայն երգեսցէ բանս որքան զօրեսցէ 'ի բաղձանաց սրտի փափաքման՝ նմին ընծայ օրհնաւորք փառաց տեսչութեան․ Նա զի թէ երկինք՝ փառացն ոչ լինին պատմաբանք՝ և յանդրէն դարձ տարադրելոյ տոհմին յուդայի՝ ժողովք ժողովրդոց տեսին զփառս անեղին, արդ այժմ յերևիլ բանին 'ի մարմնի և լինիլ մարմին ադամեան կերպիւ, հնա՞րկ է յոյժ ձայնողապէս ոչ միայն անմարմնոցն՝ այլև զգայնոցս արժանաբար ըղձականութբ հնչել զձայն բերկրանաց բարբառոյ բանից օրհնութեանց։ «Քանզի խոնարհս այս երկիր՝ եղեալ սիրակիր՝ գտաւ լծակից ընդ ածակիր երկնին վերին․ վասն որոյ խրախուսեալ հոգևորական հրճուանօք երկուցն դասուց 'ի մի խումբ պարու՝ տօնս տարեկանս փրկչին փայլման կատարեն․ զգայական սեռս եղականաց, և անմարմին դասք հրեշտակաց․ յերևելիս տեսականաց, և յիմանալեան ծածկեցելոց։ Ընդ որս և մեք կցորդք այսօր եկեղեցի դասար վերինն յարկի երկնայինն առագաստի, պարեմք հոգեպէս տարփմամբ՝ երգելով քեզ ընդ երկնայնոցդ ձայն սրբասաց։

Ո՜վ ամենասուրբ արարչընկալ ախուհի ըթ․

և ա՟ծածին․ որ զանտանելին երկնի բարձ-
րութե՟ և երկրի լայնութե՟, ծովու խորութե՟
և անդնդոց անհասութե՟, զ'ի քէն մարմնաց-
եալն իսկութե՟ էութե՟, յորովայն անձուկ
սուրբ քում սենեկի կրել զօրեցեր։ Ու
որ հայեցեալ երջանկին յօբայ՝ պատուա-
բանեաց 'ի ձև առակաց՝ զանբաւութի՟ մե-
ծին սքանչացուցեալ․ յումեմն դիմաց ա-
սելով, եթէ չունիմ զնա․ և զայլմէ, թէ չէ
ընդ ինև։ Որում երգակցեալ վեհին յով-
հաննու 'ի բանն յայտնութե՟ ասէ հիաց-
մամբ, փախեաւ երկին և երկիր 'ի մի սա-
սանուե՟ 'ի դիմաց էին, և տեղի ոչ գտաւ․
քանզի արդարև յաւէտ անձկութե՟ ամ-
փոփին 'ի բերումն բովանդակութե՟ տրար-
չական բանին հանգստեան։

Իսկ դու ընտրեալ 'ի զարմէ և 'ի զանգուա-
ծոյ մաքուր զաւակի ո՟բ ա՟ծածին․ տարար
զնա 'ի քեղ ախորժ հանգստեամբ կամացն
հաճութե՟, եղեալ երկիր անձնական՝ բա-
նական բուսոյն․ և զգայական անդաստան՝
կենացն հացի․ և վառարան բորբոքման՝
անշէջ կայծական․ և վայր դալարաբեր՝
հայրական ծոցածին ծաղկին․ և ծառ երկ-
նուղէշ՝ անթարշամ խնծորին․ և գործա-
րան գոյութե՟՝ լուսատու մարգարտին․ և
լեառն արձանունակ՝ երկրաւոր վիմին․ և

այգ արփիափայլիդն՝ աստեղն առաւօտին · և յարկ դիտապետին՝ բանական հօտին · և արքայարան լուսակերտ՝ անմահ Թագաւորին · և մայր կաթնամատոյց՝ բնաւից ստեղծողին · և հարսն սրբուհի՝ հօրն քո ։

Ընդ այս և ուրախ լեր ձայնիւ երգոցս օրհնութե, քումդ երանութե բանագովութեան · խրախացիր և ձայնիւ ողջունի գաբրիելեան աւետեացն՝ բերկրեալդ 'ի կանայս · բնակարան արժանաւոր բանին խոնարհութեան · անկապտաղարդ մարմնոյ ածութեն խառնարան · իւղարան օծելուե քնական անունադրութեան · որ նախ քան զծնանիլ բանին առ 'ի քէն՝ անթերի լուկանութեամբ հրեշտակական թևոցն սքօղմամբ՝ ցանգ արկեալ պահէիր անաղտ անբծութե ։ Ու որ հաճեալ հաւանութե երրորդական փառք ածութեանն՝ Ճանապարհ արար հանգստեան · քանզի հոգին սբ եկն 'ի քեզ՝ յօրինօղն անախտ սրբուե · և բարձրելոյն հօրն զօրութի՝ մօրդ հովանացաւ · որդւոյն պատրաստեալ զքեզ ընդունակ ։ Ու որ բնակեցաւն էակիցն հօր բարձրելոյ՝ էր անժամանակ · և որ յօդաւոր մարմնով 'ի քէն ծնաւ՝ սկիզբն ունի էութե նախ քան զարուսեակ · ուստի և զյօդաւոր մարմինն միակ, խառնեաց ընդ

ածական բնութեն իւր անքակ · և սեպ-
հականեաց զաթոռն հօր իւրոյ դաւթի
յաւիտեան · թագաւորեալ տանս աշխարհի
և երկրիս քաղաքի · արկեալ սոցա ուղ ճա-
նապարհի զփայտակերան գործի՝ հանել 'ի
կամարն երկնից տաճարի · և կանգնեաց զխո
րանն կործանեալ ադամեան մարմնոյն՝ 'ի
նորոգութիւն շինութե քհական ուխտին
դաշնաւորութեան ։

Որդ՝ այսպիսեաց բազմաթիւ և բարձրա-
գոյն բարեաց ընդունակ և մատակարար՝
միայն դու մաքուր կուսութբ էին խնկա-
րան տիրուհի օրհնեալ սուրբ ածածին ·
քանզի իբրև զճնշումն խառնութե խնկոց
կնդրկի և զմռսի ընդ տաշխին և կասիայի՝
բոլորեալ հրով մաքրութեան բարդեցեր
զծուխ բուրման անուշահոտ սրբութե 'ի
հոտոտելիս այ և հօր հաճութե · վարուք
մաքրեալ , բարութբ լցեալ , հեզութեամբ
արձանացեալ , առաքինութեամբ կատար-
եալ , քաղցրութբ աղբիւրացեալ սուրբ
աստուածամայր ։

Ցնծա՛ և ուրախ լեր յարկ անճառ ծնե-
լոյդ 'ի քէն աներղ այ · որ 'ի նմին յորդւոյն
քո խնամոց՝ հրաշազարդ փառօք ամբարձար
'ի կատար աստուածան վերնայինն երկնի լու-
սաւորէս · և թևօք թեթևութեան հոգւոյն

սլացեալ՝ յիմանալիսն վերաչուեցեր 'ի կայա նըս հանգչելոյ։ Սուսափ և զանհասանելին իշխանականս իմացման՝ զանկապտելին ըզգայութե սրտի նկատման՝ զմայելս անտեսիցն՝ անձնայեկ հոգիագրկեալ, զանեղծին փառաց ճոխութի՝ քեզ սեպհականեցեր սուրբ ածածին։

Ներբողեալ ես մաքուրդ փայլմն, կըրօղ արարչին առաքինութեան. որ սքանչելարուեստ հրաշիւք ներգործեալ քև 'ի մեզ զփոփոխումն մեծ արդարեաց փառացն ընդ փոքուն յեղանակեցեր. քանզի զանհայըն մանուկ՝ մայրդ որդեալես գերագրուեցեր. և ըմբռնեալ բարձողաց ձեռացդ բազկօք՝ զանպարագիրն էակ մարդացեալ՝ 'ի համբոյր հոգելից մատուցման շրթանցդ ողջագուրեցեր. որում գաք մեք ժառանգակիցք՝ աբբայ հայր զած աձայնել՝ 'ի ձեռն քումդ միջնորդութեան սուրբ ածամայր։

Բարեհամբաւեալ ես մաքրութե շուիղ նախընթաց կուսից. որ զլրութե ունօղն գոյից՝ կարօտաբար կաթամբ լցուցեր. և աչաց մարդկութեան զանտեսն՝ 'ի մարմնի ետուր նկատել. վն որոյ զմեծ բերան գոհութեամբ՝ մատուցար քեզ օրհնաբանս՝ անձկով տարփման սուրբ ածածին։

Մոռանեալ ես դու 'ի լեզուս ամբիծս ընտ-
րական շրթանց ծաղիկդ յեսսեայ պտղոյն
մեր կենաց · որ 'ի գրութե խառնունէ քա-
ռից յեղանակեալ տարերաց՝ անկցորդ մը-
նացեր 'ի մասնէ հողածնելոցս հասարա-
կաց · ոչ բերող ծանրութե̃ բնականիր հա-
մատեղծս կարեաց , այլ քերովբէօրէն հը-
րաբերան բղխող նշուլից ։ Ասալ երագ-
ընթացիւք հեռոց հեռացեալ 'ի վայրն ան-
մատոյց , յարփին վերին ընծայեցար սուրբ
աստուածամայր ։

Ուրախացիր յաւէտ հրճուանօք բերկրելդ
'ի կանայս · որ դժուարընտել դասախարա-
կու խաչին վարժեալ կրթեցար , որդւոյ
քոյ կցորդակցութե̃ , միասնակին ժուժ-
կալութե̃՝ կրելով զերաշխեալ վշտաց ծնի-
ցելոյդ 'ի քէն ա̃ն · միշտաչարչարին մեռե-
լութե̃ անձնատուր տօթով խորտակեալ ·
իբրև զորոջ անարատ քահանայական նուիր
մամբ 'ի վերայ սիրոյ սեղանոյդ մատեար՝
տարաբոյս և ստեւագխակ գեղմնաբարձ մա-
քուր պատարագ · 'ի ճգնաւորական վարս
ողջակիզէլ , քան թէ 'ի սրոյ հանդեպ խող-
խողեալ ։ Ա̃ն այսօրիկ 'ի նուէր քո զեն-
մամն՝ հրեշտակացն պարք պաշտպանեալ ,
ընդ առաքելոցն գումար դասակցեալ՝ ըղ-
միայն արժանիդ պատուեալ գովեն ո̃բ

աստուածածին ։

Ուրախացի՛ր համայն տարփանօք բերկրե՛լդ ՚ի կանայս. որ ՚ի կոյս և յանարօր արգանդէ բան բեղմնաւորեցեր. ցաւոց անխծից՝ արմատ օրհնութե՛. հօրն ադամայ՝ որդի բերկրութե՛ ։ Վասն որոյ շնորհ ունելով քեզ օրհնեալքս ՚ի յորդորդ քո փրկիչ աշխարհի, երանեմք քեզ ս̃բ ա̃ծածին ։

Ուրախացի՛ր անբաւ բերկրանօք հարսն լուսոյ, ոսկեզարդ զգեստուք պաճուճեալ. որ յօրէնս երկրայինս աղջաւոր կրից, զերկնայինն ածեալ մատուցեր. և զաննմանն նմանեաց մաղանդուած ազգի մարդկութեան՝ ՚ի չափ հասակի գեղոյ՝ գեղեցիկ զատեղն վայելուչ ՚ի լիբանանէ մեզ պարգևեցեր ։ Ուստի զպատկեր նախահօրն ՚ի քէն ստացեալ նորոգ հաստատեալ՝ գոհաբանեմք զուրբ տիրամայրդ ։

Ուրախացի՛ր յողջոյն նախընծայ երկնային աւետաւորին՝ տաճար սրփափայլ. որ լուսով ա̃ծականաւ ուռճացեալ լցար. և երկրաւոր մարմնով՝ երկնայնոյն աթոռ կազմեցար. և արեգակնապէս հոլովմամբ՝ արուսեակն երագ ընթացար ։ Վասն որոյ բացեալ զբերան պատուոյն՝ ամլածին որդւոյն՝ օրհնէր զօրհնեալդ ՚ի կանայս՝ ս̃բ աստուածածին ։

Նաեւ դու լցեր զտունն զաքարիայ բար-
բառոյն գոհութեն · յօրինակ հանրական
եկեղեցւոյ՝ որ է քո միշտ օրհնաբան · զի
երանեն աշա՛ յայնմ հետէ քեզ ա՛մ ազգք՝
ըստ բանի ա՛ծ ազգակից քում դաւանութե՛ն ·
սկզբնարար կուսից անարատութեան · ՚ի
բերկրեալ լեզուս շրթանց զուարթնոց միշտ
բարեբանեալ ես ա՛ծածին ։ Քանզի արդ-
եկեղեցի դասուց անդրանկաց՝ զ՚ի քէն
մարմինն ՚ի բանէն անանջատ՝ համապատիւ
հօր փառաւորէ յերկս սրբասացս · առ որ
հպաւոր քո գոլով աղաւոր խորհրդոյդ տե-
սօղ՝ զանճառն ուրախութի՛ յաւէտ վայե-
լես ։ Զի զոր նորա թեւասքօղելով գիմաց
ծածկութիւ ՚ի բացուստ ակնարկեն, դու
յաւէտ համարձակ նմին կաթնածիր մայր
ցուցեալ ծանուցար · և ՚ի մէջ դասատակաց
ձեռաց՝ ո՛չ զմանուկ զծերն հին աւուրց
գգուանօք ընկալար · եղեալ կառք անձնա-
ւոր կայից՝ բազմելոյն յաթոռ քրովբէից ։
Մ՟ զի ո՛չ ընդ քեզ միայն, այլ ՚ի քեզ ·
ո՛չ միայն փարեցաւ բազմեալ, այլ բնա-
կեցաւ տաղաւարեալ · ո՛չ միայն միացաւ ՚ի
զանգուած մարմնոյ, այլ մարդացաւ, առ-
եալ զկերպարան ՚ի քէն սկսելոյ · ո՛չ միայն մի
զօդեցաւ քո՛ յերկուց գոյութեանց, այլ
ընկղմեցաւ յանապական անօսր էութին՝

մարմնոյն վերբերումն․ ոչ միայն միջնորդաւ անձինն ընդ հողոյ միաւորեցաւ դիմակ տեսակօք, այլ եւ ամասն խառնեալ էութեամբք միաւորեցաւ անշփոթելի։ Ի որդի մերում բնութեան՝ յաթոռ հօրն իւր աջոյ՝ յերկնաւորացն միշտ պաշտպանեցաւ։

Յաղագս որոյ եւ մեք երկրաւորքս՝ զմատակարարդ եւ զսպասաւոր մեծի խորհրդոյ՝ երանեմք ըղձական երգօք զանժամանակն էուն երջանիկդ ծնօղ. որ զա͞մ եւ ամենեցունց պահեալն՝ հոգեշունչ երգօք ՚ի քեզ ընկալար. ոչ ՚ի մանանէ, այլ ՚ի լուսէ. ոչ համամբ, այլ հաստատութեամբ. ոչ բաժանաբար, այլ ամբողջապէս. ոչ փոփոխմամբ, այլ փոխատրութեամբ. ոչ ՚ի ծիրս սահմանի տեղւոյ, այլ ՚ի սեննեակ լայնատարր ոգւոյ՝ Քանզի զբերօղն ՚ի կշիռ ձեռին զերկիր եւ զերկին՝ տարար յարգանդի. եւ ոչ միայն ՚ի տես նկատման աչաց նայեցար ՚ի նա, այլեւ շօշափմամբ ձեռացդ ծաներ. ոչ միայն ողջունեալ զանհուպն շրթանց, այլեւ ըմբռնեալ. ոչ միայն զննեալ զհասարակաշէն խորան մարդացեալ բանին, այլեւ անուանեալ կոչմամբ յա͞ զքրիստոսն ա͞յ. ոչ միայն ստեամբքդ սնուցեր զանժամանակն ըստ աւուրց, այլեւ աճման հասակի զնոյն ըն-

ծայեցեր։ Օ՜ որ խոստովանիս հանրական եկեղեցի զծնեալդ 'ի քէն՝ ա̃ծ ճշմարիտ, ընդ նախնեղակ գոյակն միացեալ, 'ի տեսուէ իմաստից քննուէ մեր փակեալ։ Յորոյ տիպըն ապացուցի խաբօղն յակոբ՝ ըմբռնեաց զմարտուցեալն ընդ իւր պնդապէս. և զանխուլ խորհրդով զա̃ծատեսն անուն ընկալաւ։ Որպէս և որ 'ի քէն ծնեալդ մարմին՝ 'ի յարգանդ սրբոյդ սենեկի՝ ընդ ա̃ծ խառնեցաւ. և խաբեալ զեդոմն մարդկան թշնամին՝ մարմնով գերազանց նմին բարձրացաւ. վասն որոյ ոչ տեսօղ ա̃յ, այլ ճշմարիտ ա̃ծ անուանեալ, զա̃մենեան յիսրայէլ անուն փոխադրեաց։ Ակս որոյ լի՛ բերանով զպաշտպանդ փրկութեան այսմ մեծի խորհրդոյ՝ երանեմք զտիրուհիդ մեր

աստուածածին։

Որոյ տեսչութեն ա̃յ՝ նախագիծ 'ի ծովէ քարին պատուական հրափայլ՝ և սպիտակ մարգարտին մաքուր կերպարան գոյացեալ ցուցաւ։ Քանզի արդարև դու ես այն պատուական յաշխարհիս ծովէ ընտրուէ, որ զա̃ծային հրոյն տարար կերպարան։ Ո՜վ որքան մեծ է 'ի քեզ աւարտեալ խորհուրդ՝ սրբուհի. զի թէ առածք մարգարէիցն հոգեկիր յղացմանց՝ իսրայէլի ծնօղք ասացան. ապա դու որ զբանն ա̃ծ

անձնաւոր՝ հայրենի բնութեն հաւասար՝ ՚ի սենեկի քում մաքրականի՝ մարմնացեալ բացածանուցեր , զՈրդիդ արժանապատիւ գովութիս ոչ ընդունիցիս։ Ով շնորհաշուք գեղով արփաւոր ծածկութիւ՝ յանմառոյց գեղեցկութեն պանծոյծ փայլփայլեալ։ Ով համեստ հեղութե խոնարհ անբծութե կերպասիւք լուսոյ ՚ի հոգւոյն պարարքողեցեալ ։ Ով զարդուք երկնայնովք ոսկեզօծ սրբութե , արծաթափայլ մաքրութե , ականակապ պսակ քեզ փառաց զբարձրելոյն հովանի ՚ի գլուխ ընկալեալ։ Ով քառեակ մանեկաւ նշուլափայլ մաքուր ուլանցն յեռամամբ՝ այ հոգւոյ և մարմնոյ խառնմամբ ՚ի մի էութի երիցն հիւսմամբ ՚ի յորդւոյն՝ լանջք ոբ քո շնորհօք առ լցեալ։

Որհնեալդ միայն ՚ի կանայս՝ շրթամբք քահանայուհւոյ մօր մարգարէին յովհաննու փառաւոր ։ և ՚ի դասուց համազարմ նմանացեալցս՝ ցանկալի երգօք ներբողականս տաւղօք։ Ոչ ի թէ բանականս մարդոյ գոյութիւն՝ ՚ի պատկեր այ ՚ի սկզբանն ստեղծաւ , և այսր աղագաւ ստեղծողին զշնորհս կալաւ ։ ապա և առաւել քեզ պարտական եմք երկրպագութե ունել շնորհ տիրամայր ։ որ այ ՚ի ծոցայի կերպարան ստեղծման եղեր պատճառ ։ առ որ ՚ի

լրումն աւարտման՝ մարգարէական կտակն հասանիւր · այն զոր ասէ , եղիցի 'ի վերայ առն ձեռն քո , և աջ քո 'ի վերայ որդւոյ մարդոյ 'ի քեզ խրախուսելոյ։ Ա՛ջ և կարողութիւնն և բազուկն հօր միածինն 'ի քեզ հանգուցեալ , և զա̃մ՛ որդիս մարդկան՝ վկայս · և երկրպագուս իւր զօրացուցեալ։ Զայն նկարագիր՝ և կերպարանըն հօր գոյութե̃ 'ի քեզ բնակելովն՝ սըրբութիւն և արդարութի̃ լրման աշխարհի ընձեռեաց։ Ա՛պա յիրաւի արժանապէս հոգեշարժ քնարիւք զքեզ բարեհամբաւեմք սուրբ ա̃ծածին։

Ի մարդկային զարմէ՝ հրեշտակ երկնային · յեղծականաց սեռից՝ անմահ սերովբէ · 'ի հողային նիւթոյ՝ ոսկի սափերայ · 'ի ծովային բերմանց՝ շնորհալոյս մարգարիտ · 'ի յեսսեանն բուսոյ՝ քաղցրապտուղ ծաղիկ · 'ի հաւուց նախնեացն՝ ձիր օրհնութեան · ցօղոյն հանդարտի՝ ամպ անձրևաձիր · արևուն ծագման՝ ակն արփիափայլ · մերկացելոյ այգոյն՝ աստղ առաւօտի · գիշերային մթոյն՝ խոսնակ բերկրանաց · օրինի սատակելին՝ տառ ճշմարտաճառ։ Սակս որոյ իբր զնիւթ գործօնեայ այսքանեաց բարեաց օրհնեա՛լ ես դու 'ի կանայս · նախաստեղծին մերկացելոյ՝ փառք անկապ-

տելի · վշտացելոց անխծապարտ մօրն՝ ափո-փիչ քաւութե · որդւոց Նոյին խռովութե՝ խաղաղութե ձայնատու ։ Եւ մերդ՝ ո՞ր բան բաղդատելով զանհամեմատ քո մեծութիդ-լիցի կարօղ գերահռչակել · արարչին մայր · անհասին ծնօղ · անբաւին գրկարան · ամե-նակալին յանձանձիչ · փառաւորարգողին ըղ-ձեցուցիչ · վերօրհնելոյն դրդիչ ։ Ահա յաղագս այսորիկ ըստ անսուտ քոյ բանի՝ յիրաւի տացուք քեզ երանի մայրդ լի · Աննիրհելի գիտմամբ լուսալիր աչօք նը-կատեալ տեսակ · կտակ մանկագիծ ， անեղծ պայմանաւ արձան հաստատեալ · սահման յարակայ՝ մեծութեն կցորդութե · երկուց միութեն անայլայլականի՝ կամ պատկա-նակիր · վեհին պատկեր կերպիւ կշռորդ-եալ · թեթև պարզութիւն ， հիւթիւ բաղ-կացեալ · տար տարբերական ， տողիւ ձևաց-եալ · տումար տենչալի ， անխառն դրոշմեալ · մատեան մեծութե ， շնորհիւ նկարեալ · նամակ ընտրութե ， բանիւք բարդեցեալ · արձան անձնական ， իմաստիւք զօդեալ · կնիք մատանւոյ ， տերամբ կերպագրեալ ։ Զգեստ լուսանիւթ ， երկնից արքային · օթոց սրբութե ， անմահ բնակողին · յարկ վայելչութե ， անեղ շինողին · առիթ մարդ-կութե ， բանի անեղին · գործի մարմնութե ，

վեհին ընութեան · պատճառ պատշաճից , անպատկառ ճգնութեց · օրինակ ուղղութեան , անայլայլակ վրիպութե · անպակաս աճելութի , լրման թերութե · խակուհի երկնային , կենդանեաց դաստարին · մասնակից շնորհընկալ , հայրական գթութեանն · անպարագրելին ազգակցութե , երկնից վերատին · անժամանակն արգանդի ծանուցող ծննդեան :

Իսկ զհօրն լուսոյ զորդի հարազատ՝ ՚ի տորինս կոյս աշխարհի՝ մայրենի կաթամբ ջամբեալ դիեցուցեր · և որպէս թևովք խնամական պահպանութե զպարունակօղն պարփակեցեր : Իսկ զկենցաղոյս ընթացս՝ ընդ լուսաղարդ կենացն շաւիղ ձգեցեր · և ըստ նմանութե արագման օդային թռչնոյ՝ ՚ի յանցաւորաց սատի փոխեցար · և ՚ի մէջ դասուց հրեշտակաց՝ ունօղ ոչ յայտնեալ ծանուցար : Իսկ լուսարփի ամպով առ ՚ի նոցանէ պատուեալ համբարձար · և հողեղէն հաստատուած՝ ՚ի քրովբէից աղի հանդուցար · և ՚ի կանանց աղանցն կերպից՝ արուսեկին տեսակաւ տեսար · և զննելի բնութեամբ մարդկայնոյ՝ յանճառաշնորհ խորհուրդ ծածկեցար · և ՚ի ստեղծողէն քո և համայնից՝ հպատակօրէն ձևով պաշտեցար · և հաստողին ծագաց աշխարհի՝ մայր

օրինակ անուանք ձայնեցար . և մեղուցելոյ կնոջն առաջնոյ՝ առանց յանցանաց զաւակ գովեցար . և ամենայն անբծաց ընտրութե՛ պսակ սրբուե՛ դու դաւանեցար . և իբրև զհանդարտ երինջ անարատ՝ արարչաւանդ ծոյն մատուցար . և իբր յաւանակ կամաց անբաւին՝ ա՛ծութե՛ն հետևեցար . և ՚ի խո-րոց ծովէ աշխարհի՝ շուշանական շաւղք ամբարձար . և իբր ՚ի գժնեայ փշոց խստու-թեանց յաշխարհիս զբաղմանց ծաղկեցար . և իբր ՚ի դառն արմատոյ երկրի՝ քաղցրա-ճաշակ պտուղ յայտնեցար . և երրորդութե՛ն անտես թաքնութեան՝ խորհրդակից սիրոյ կոչեցար . և ծածուկ հաւաքման բանին՝ իբր լուսատու ձորձով պատեցար . և ան-քակ էին տէրութե՛՝ սահման սկսման վե-րակարգեցար . և ՚ի սրբասնեալ միջոց քո-սաեանց՝ զանկէան ՚ի տաշխին ծրար թա-քուցեր . և ՚ի կուսական քում բարունա-կէ՝ զանմահարարն ողկոյզ հասուցեր . և միջնորդ կենաց երկոցունց՝ սքանչելապէս համարձակեցար . և համողէշ ՚ի խաղաղուե՛ մրրկածուփ շարժմանց կացուցար . և խրա-խակից վերնոյն բարձրութե՛՝ անկապտելի անուանք պատուեցար :

Արդ՝ յայսքանս , և ՚ի սոյնպիսիս , և յևս ընտրելական երգս բանահիւսից գեր-

հռչակեալ ես · վսեմական վարուց նախըն-
թաց և յառաջաշաւիղ սուրբ ա̃ծածին ։
Վասն զի որ̃պ երևեալն ՚ի քէն միածին
անդրանիկ բնութե̃ն հօր՝ սկիզբն ասի հե-
տևման խաշունակ մահակիր ձգանց · այս-
պէս երանեալդ և բարեբանեալդ , գերօ-
րինակ ցուցման տեսակի ա̃ծակրօն կարգաց
ծագեցար ։ Որ և զանմատոյց հուրն կիզա-
նող՝ անապական ծաւքմամբ ծախեցար ·
քև զարագեալն ՚ի թևս օդային՝ ՚ի քա-
ռընթաց կենդանիս տեսաք · քև զանկը-
ցորդն տեսականաց , ՚ի մարդկային կերպ
նկատեցաք · քև զգովեալ բարձօղն մե-
ղաց , իբր զդառն ճաշակ ընկալաք · քև դա-
տելոյն ՚ի չարագործաց , որ̃պ ա̃յ ճշմարտի
երկրպագեցաք · քև զանծանօթն հօր էու-
թիւն , ազգակցապէս օրհնաբանեցաք · քև
զմուրհակ պարտուց անիծիցն , ՚ի յաւազա-
նին ջուր ընկղմեցաք · քև զանտեսն աչաց
հրեշտակաց , տղայական տիօք գգուեցաք ·
քև զանսահման բանին բնութի̃ , ՚ի հասա-
րակածին տիպ համբուրեցաք · քև զադամն
նոր հոգեղէն , ՚ի չափ հասակի առաջնոյն
տեսաք · քև զարեգակն արդարութե̃ , կեն-
ցաղակից մեր կցորդ ստացաք · քև զանժա-
մանակ բանին էութի̃ , սկսեալ ՚ի դաւթայ
պատմեցաք · քև զանհամեմատն մարդոյ

պատկերի , մեզ նմանատիպ գործով դրե-
ցաք ։ Արդ՝ այսքանեաց սրբազնական մա-
սանցս ճառեցելոց՝ դու միայնակ պատ-
ճառ՝ անտրատ կուսից նպատակ կրօնից՝
տիրամայր ոք ածածին ։ Քանզի թէ չէր
'ի քէն անձեալ ուղեշն երկնայինն , ոչ էր պըտ-
ղաբերեալ զանձաշակելին 'ի շրթանցն մեր
հաղորդութի . և թէ չէր երևեալ հօրն ար-
դարութի 'ի յերկնից , չէ՛ էր սկսեալ ճըշ-
մարտութին 'ի յերկրէ . և թէ չէր յղացեալ
յանփորձականդ քում արգանդի , ոչ էր
մարմնացեալ . և թէ չէր յայտնեալ մերով
բնութեամբս , ոչ էր շօշափեալ և ըմբռնեալ
անհասն իմաստից . և թէ չէր կրեցեալ 'ի
գիրկ բարձողաց հողեղէն բազկաց , ոչ էր
ծանուցեալ . և թէ չէր համբուրեալ երկ-
րաւոր շրթամբք՝ ոչ էր ճառեցեալ . և թէ
չէր հետևեալ 'ի մարդկան ընթացս , ոչ էր
քարոզեալ էակն 'ի յէիցս . և թէ չէր թաւ-
եալ խուղն անապական 'ի վեհագունեն , ոչ
էր զմեզ օծեալ . և թէ չէր խառնեալ ըն-
մերս ընդ խուրումն , ոչ էր մկրտեալ . և թէ
չէր խրախուսեալ մարդն 'ի յերկնայնումն ,
ոչ և ս էր սրբեալ . և թէ չէր խոնարհեալ
բարձրն 'ի յընտանի փառացն , ոչ էր վե-
րացեալ 'ի ստորնայնոցս առեցեալն ։ Այսյ
մարմնացաւ , որդին մարդացաւ . նոյն և

յայտնեցաւ, ըստ որում ծանուցաւ. աւետարանեցաւ, ուստի փառաւորեցաւ. իսկ մաքրեցաւ, ոպ՟ երգեցաւ. իսկ մկրտեցաւ, որ և վկայեցաւ. նոյն իսկ պատմեցաւ, ոպ՟ ճառեցաւ. իսկ տնանկացաւ, որով ճոխացաւ. իսկ հնազանդեցաւ, որով պաշտեցաւ. իսկ երկրպագեցաւ, որով խոցեցաւ. իսկ կենդանացաւ, որով թաղեցաւ. իսկ պատուեցաւ, որով պատժեցաւ. իսկ ամաչեցոյց, որով պատկառեաց. իսկ բերկրեցոյց, որով տրտմեցաւ. իսկ զգեցոյց, որով մերկացաւ. իսկ ողջացոյց, որով բևեռեցաւ. իսկ կանգնեցաւ, որով վտանգեցաւ. և սլացաւ որպ՟ վերնոյին, թռեաւ ոպ՟ հոգեղէն. ծածկեցաւ որպ՟ զանքննին. փախեաւ որպէս զանհաս. 'ի յամպս երկնից եղզգնացս. գովեցաւ որպ՟ միածին. բոսորաբուղխ կայլակօք ներկեաւ. անկից վիրացն խոցով հարցաքննեցաւ. 'ի վէհից անմահ հըրեշտակացն հաւատացաւ. յաղթող մրցման և մարտի փառաւորեցաւ. դատաւոր արդարակշիռ յմ՟ ազգաց վերապատմեցաւ: Վ․անզի 'ի քէն հիմնադրեաց զեկեղըն մարդեղութ՟ե անեղն իսկութ՟ի. և յընտրեալ անպատում շնորհէ՝ զայս ամ՟ անփոխանորդելի պարգևական ձիրս ընկալաք: Նաև ամ՟ այս պատրաստութ՟ի բարեբաստութ՟ե

բազմերանեան լուսոյ հրճուանաց մեզ հանդերձեցաւ։ Նա զա̃մ փառս երանական լուսոյ նշուլից՝ վերնոց և ներքնոց ծանուցի խորհրդոց, բազմագովեսա պայծառ յօրինման նոր արարածոց անճառ շինուածոյ ո̃ր եկեղեցւոյ, 'ի քեն ծնիցելոյ կերպիւ մերոյ և բարձրացելոյ անուանն յիսուսի, ծնկովք կրկնելովք մատուցանեմք։ Ուստի և քեզ բերկրեցելոյդ՝ զսովորականն օրհնաբանութիւն բանիս երկրպագեմք։

Օրհնեալ ես դու 'ի կանայս, գլուխ նոցին պանծանաց և պայծառ պսակ։ Պսակ կուսութե̃, մաքուր հարսնութե̃. պսակ ընտրութե̃, անփորձ գովլուե̃. պսակ անեղծութե̃, լուսոյ նմանութե̃. պսակ շնորհանորոգ, էին ծնելութե̃. պսակ երանական, բանին հօր մայրութե̃. պսակ ո̃ր պարծանաց, կենացն բարձրութե̃. պսակ պայծառափայլ՝ վարուց իմաստութե̃. պսակ տիրապատուաստ՝ երկնահանճարն գիտութե̃. պսակ պետանական՝ եկեղեցւոյ գեղեցկութե̃. պսակ պաշտելութե̃՝ սիոնի նորոյ զարդարման. պսակ յոգնանկար՝ յարփից եօթանց փայլատակման. պսակ առաջնորդական՝ վերնոցն ազգակցութե̃. պսակ անբծութե̃՝ շաւղաց արդարութե̃։

Արդ՝ ամենեցուն վերակարգելոց թուոցս

այսոցիկ՝ ընակարան բաղձալի և երանելի, և ընդունարան ընտրական կամաց անբաւին, զքեզ խոստովանիմք երկրաւոր ծընունդքս ստորաստեղծականն ադամայ • որոց անհամար և անթիւ ազանց՝ ամրական և պահպանական պարիսպ կառուցար։ Վասնզի յարժանահայց և յամենազօր քոյ բարեխօսութիւդ միշտ ապաւինեալ, մնամք 'ի հաստատութե • խրամեալք և հանդուցեալք ընդ հովանեաւ պաշտպանութե ամուր պատուարի սուրբ ածածնիդ։

Պատուար սքանչօրէն, 'ի զանազան մոքրաղորդ ականց յարմարեալ • պատուար հրապարփակ, անմատոյց ընդդիմողացն հինից • պատուար բոցանշոյլ անհուպ և անհաս մատուցման դժնեայ դժրողաց • պատուար ամենահրաշ ըստ եղեկիելի, որ աղխեալ զմուտ քո՝ Ճշդրտապատումն գրեաց • պատուար շրջապարիսպ ըստ դաւթայ, որոյ հիմն անշարժութե 'ի բարձրելոյն հաստատեցաւ • պատուար ամրակառոյց քաղաքին վերնոյ ըստ պօղոսի, որում զհանուրս ընակիչս արարեր։ Վասնզի զած ծնար 'ի մարմնի, և զծնունդս մարմնաւոր սիոնի՝ որդիս արարեր վերնումն հոգւորի։ Արդ ազգաւ օրհնեցաւ արդարդ քոյ կուսու 'ի շրթունս նոցին, և խոստովանեցար յա-

մնեցունց մարմնարան և տաճար հօր խոկակցին։ Որով արդարապէս ՚ի քեզ ընծայեալ բան պատմողին, եղեր մեր օգնական և տուն ապաւինի՝ յուղխից հեղեղաց յաւուր անձկութե. մաքրութի կուսից. և սկզբնաշաւիղ դասուց երջանկաց, մայր հիմնադրութե հաստատութե եկեղեցւոյ, և ծնող անարատ բանին այ։ Զքեզ յաւէտ օրհնութբ միշտ պսակեմք՝ ՚ի նուիրեալ տեղիս սրբութե քում տաճարի, և ՚ի թևս պաշտպանութե լայնատարած քումդ մաղթանաց ապաւինելով, զձեռս մեր ՚ի սմա տարածեմք. և աներկբայ յուսով հաւատամք ապրիլ։ Արդ աղաչեմք՝ ընկալ զերգաբան օրհնութի մերումս լեզուի. և հաճեալ տացես սմա զձիրս շնորհաց սիոնի և բեթղեհեմի։ Ուստի արժանացուք ընդունել մասն փրկութե՝ յաւուր գալըստեան մեծի յայտնութե՝ փառաց անեղծի, փրկչին անմահի, քումդ միածնի, միայն այ, ամն յի։ Դու իբր զպատճառ սկզբնաշաւիղ այսքանեաց բարեաց, ՚ի սոյն կամարի գեղապաճնելոյ զքեզ պատուեսցուք՝ անժամանակ էին բարձրացեալ ծնող։

Նորին վերստին ՚ի վերայ գրոյ անուան իւրոյ։

Գերաղանց չափոյ կշռման երկնային բընութե, և քրովբէական նախադասութե

եղեալ վեհական, որբուհի պայծառ առագաստ փրկչին քո. և Նորուն իսկ տեսաւորիչ վն մեր. ծունր կրկնեսցի արժանապատիւ քումդ պատկերի. հայցեմ վն մեր առ ծնեալդ 'ի քէն ած 'ի մարմնի:

Բովէից յոգնաթիւ մասանց բերկրութի՝ ազգաց և ազանց արմատդ օրհնութե. 'ի ծագմանէ փառացն երկնայնոյ՝ անստուեր Նշոյլ տարփալի շողեալ 'ի սորբինս տեղի. անորիշ հպմամբ՝ մերձաւոր անմատոյց լուսոյ՝ անճառ խոստմամբ ապառնեացն յուսոյ. 'ի մահու պարտեացն զերծ ա զառ քեզ ապաստան ծառայ քո քումդ որդւոյ:

Ի յերկրաւոր Նիւթոյ մարմնաւոր վարուց՝ երկնայնոցն կրօնիցն եղեր հպաւոր. մարիամ՛ աւիթ տեսութեան Նոցին զանզննին որդւոյն կերպարան: Ուստի տեսին զանկէտն՝ սկսեալ, և երանեցին զարմատդ և զպատճառ. յորմէ և մեք հայցեմք զնորոգութիւն կենաց. և պաշտպան զտիրամօրդ ձեռնտուութիւն:

Գլխաւորեալ այսօր 'ի քեզ զիմանալեացն փարթամութի. որ սլացեալ հասեր 'ի բարձունս երկնից. իբր անընդունակ ապականութե և մահու լուծման. յորմէ պատկառեաց ամօթով պարտիքն մահու. և ցուցար բնակիչ արժանապատիւ կենդանեաց

երկրին . սուրբդ տիրամայր՝ արգահատեա՛ միշտ զողորմութիւն որոց պանդխտիմք ՚ի վիհս ներքին։

Ունօղ հրճուանաց անթիւ խրախուսութե̃ց ա̃ծային անկէտ խոստմանց ՚ի բուրաստանս անդաստանաց տիրական տնկոյն . որոյ սաղմունք շառաւիղացն՝ երկրային հնարից գերազանց . անդր մուծցես զքո դաւանօղքս սուրբ տիրուհի մայրդ յի̃։

Մոտեմք ՚ի քէն աղերսիւ բանի , որ ես քաղցրալուր գրաւ աշխարհի . միայն երանեալ և բարեբանեալ . հօրն հաճութ̃բ հովանաւորեալ . որդւոյն ծնօղ . հոգւոյն վերընդունօղ . երրորդութեան փառացն աթոռ . վերանկարեա՛ զառ յաւազանէն անախտ արգանդէ զկարդացեալս անուն՝ ՚ի գիր մատենի վերնում դպրոցիդ ։ Եւ զերգագրութի̃ սակաւամասնեայ այսր գովեստի՝ արձա՛ն հաստատեա միշտ անկործան սրբոյդ տաճարի . ընծայեալ մարմնոյս՝ զմրաշարս գիծ , և զգայական շնչոյս՝ զպատկեր բանիս ։ Զի իբր ՚ի գոյից երկուց զուգելոց ՚ի մի խառնութի̃ միոյ կենդանւոյ , միշտ փառաւորեսցիս դու սովին օրհնութ̃բ , ո՛չ անեղծ պաշտօնէիցդ օրհնաբանութ̃բ ։ Ներևս ՚ի ձեռն զօրեղ քոյին հայցուածոց , լիցի մեզ անդատապարտ համարձա-

կութիւն՝ յատենի մեծ և ահաւոր սուրբ դատաւորին։ Եւ գտցուք արժանի՝ անբիծ վարուք և ուղիղ դաւանութեամբ հաւատոյն հաստատութեամբ՝ հանդիպիլ և անդանօր ընծայի բանից քումդ երանութեան․ փառաւորել ընդ քեզ և ընդ քոյին՝ յանդիման դիմաց պաշտելի և պատկերի քում աստուածափայլ և լուսանշոյլ մեծ պայծառութեանդ՝ զէութեան անքակ և անքննելի որ երրորդութեանն՝ ՚ի միում տէրութեան և արարչութեան։ Որում վայելչական պատիւ և գովեստ անդադար երգոց․ այժմ և միշտ յաւիտեանս յաւիտենից․ ամէն։

Համառօտութիւն աղօթից եռամեծի և քաջ վարդապետի Մխիթարայ գոշի խոստակրօն ճգնաւորի և բանիբուն հռետորի՝ ասացեալ ՚ի սուրբ պատարագին.

Տէ՛ր ա՛ծ իմ յ՛ս ք՛ս բան հօր և կերպարան, կենդանի և կենդանատար, լոյս և փրկութիւն ամենեցուն որ կարդան առ քեզ: Որ շնորհես առաւել քան զարժանն, և տաս խնդրողացն զպիտոյս կարեաց: Զի ոչ միայն տարերբ և ստացար ՚ի վերստին յանցանելն մեր՝ չարչարանօք խաչի քո, այլև միշտ զքեզ ետուր փրկանս կենաց մարդկան: Ո՜ որպ մեծ եղև մինչև յերկինս ողորմութիւն քո, և յա՛մ երկրի ցուցաւ փառք քո: Եւ այնքան գերազանցեաց պարգևաց քոց նշանակ, մինչ զի ոչ միայն մարդկայինս հիանան ազգք, այլև երկնային զօրքն և առաւել մերձակայքն. ընդ որս սոսկացեալ փառաւորեն անլռելի ձայնիւ ասելով. ս՛բ՝ ս՛բ՝ ս՛բ՝ տէր զօրութեանց. զորս և ուսեալ մեր՝ երգեմք ՚ի ժամ անմահին զենման՝ կցորդելով անմարմնոցն երջանկաց:

Զի զառ մեզ զանձառն տեսանելով ընդ խոնարհուրդ՝ զօրինակ մահուն ճշմարտի, ընդ մեր եղեալ՝ մարդկապէս ընդ մեզ եղանակեն զերգս օրհնութեան: Զի եթէ

զօրինակն անգիտանան գովասանութեան՝ միայն զսուրբն կարդան զանուն, ուսանի զերեսն ծածկեն և զոտսն. մեք զո՞ր ասաս-ցուք զօրհնութի՞ւն կամ զգոհութիւն, բայց միայն զքեզ օրհնեսցուք սարսափմամբ, և հաւատովք մերձեսցուք յանտեսանելիդ և 'ի տեսանելիդ անձառութիւն։

Օրհնեմք զհայր՝ զառաքօղ փրկողիդ։

Օրհնեմք և զհոգիդ սուրբ՝ զկատարիչ և զսրբիչ զգալստյն օրինակի։

Օրհնեմք զանխմանալի զքո խոնարհութիւնդ։

Օրհնեմք և զմեծ քո քաղցրութեան կամսդ։

Օրհնեմք՝ որ զկենդանարար մարմին և զարիւն քո նք շնորհեցեր մեզ 'ի քաւութիւն։

Օրհնեմք՝ որ հուր աստուածութեան քո՝ ոչ կի-զու զընութիւնս հողեղէն։

Օրհնեմք՝ զոր ոչ տանին երկինք ամե-նայն, այլ տանին նիւթական և նուաս-տական եկեղեցիք։

Օրհնեմք՝ որ նստիս 'ի քերովբէս, և բազ-միս 'ի սեղան սրբութեան։

Օրհնեմք՝ զոր ոչ ունին երկինք վերին՝ և իննեակ դասք անմարմնոցն, բաւնան մտ-տունք քահանայից։

Օրհնեմք՝ զոր և սերովբէն ունելեօք մա-տուցանէր 'ի բերան մարգարէին. իսկ աստ ձեռամբ բաշխիս հողեղինաց և մատամբ

մատչիս ճաշակողաց։

Օրհնեմք՝ որ ոչ գարշիս յաղտեղութենէ
մարմնական կրից, այլ մաքրես սրբութբ քով։

Օրհնեմք՝ որ զպէսպէս յանցանսն անտես
առնես զազգի մարդկան՝ որք հաւատով
ապաւինին ՚ի քեզ։

Օրհնեմք՝ որ միջնորդութբ կենարար
մարմնոյ և արեան քոյ՝ հաշտեցուցանես ըն-
հայր քո ընդ օտարացեալս մեղօք, տալով
վճիռ անստելի, ոչ ուտողացն և ոչ ըմպո-
ղացն ոչ ունել կեանս, և ուտողացն և ըմ-
պողացն զբնակիլն ՚ի քեզ, և զքեզ ՚ի նս։
Քանզի տիրապէս մարմին և արիւն քո նք
կատարեալ արձակումն է և ազատութի ՚ի
կապանաց մեղաց։

Զի եթէ սուրբք ամենայն առ հասարակ
յիշին, և քոյոցդ բարեաց կարօտին, զիա՞րդ
և ոչ ես անկեալս ՚ի շնորհաց և ունայնս ՚ի
բարեգործութեանց։

Զի եթէ այժմ ոչ ողորմիս, յորում բաց-
եալ ես զդուռն անճառ ձրից, երբ տայ-
ցես յայլում ժամու. քանզի անվրէպ յայ-
սոմ ժամու է առնուլ ՚ի քէն զխնդիրս, որ
և սուրբք ՚ի քաղցրութն ժամանակի։

Զի եթէ յորժամ ընդ հանուր երկինք և
երկիր առ հասարակ բարեխօսեն՝ ոչ լսես,
այլ յորո՞ւմ ժամու զմնեան ժողովեցից։

Օ՜ի եթէ մինչ հիանամ անմարմնոցն դասք
ընդ առատութի պարգևաց քոց , և զօրհ-
նութիս մատուցանեն , ոչ առնում . յոր-
ժամ 'ի կշիռ դնես՝ զխո՞րդ ընկալոյց :

Օ՜ի եթէ յորժամ դասք հրանիւթիցն գո-
չեն ասելով՝ ողորմեա՛ քո արարածոց , մասն
ինձ ոչ տացի . ընդ որո՞ց այլոց առից :

Աղաչեմ զքեզ տէր , մի՛ ունայն դարձու-
ցաներ զիս յամենասուրբ երեսաց քոց ,
անչափ պարգևացդ իշխան :

Յորժամ յարգեալ է իբրև զգետս 'ի լը-
րութէ ծովու մեծիդ պարգևք , ուստի և
ինձ կաթիլ մի բաւական է . զի սակաւն քո
անչափ ունի մեծութի , և առաւելեալ է
քան զխորս ծովու :

Օ՜ի եթէ 'ի ծագիլ լուսոյ արեգականդ
ոչ լուսաւորիմ , 'ի գիշերի ո՞րպէս պայ-
ծառացայց :

Եւ եթէ ձրի բժիշկդ մերձ ես՝ և զդեղ-
կենաց ոչ տացես , այլ ո՞ւր գտից բժիշկ
զի բժշկեցայց :

Եթէ յարուցչիդ պատահեալ մեռանիմ ,
և ո՞ զիս յարուսցէ :

Եթէ բնութե ճոխացուցիչդ զաղքատու-
թիւնս ոչ բարձցես , առ այլ ո՞վ երթայց
'ի փարթամանց :

Ընդ խաղաղութե աշխարհիս զոր շնորհես ,

տուր և ինձ խաղաղութի̃ յամբոխից կռից ·
ընդ հաստատութե̃ եկեղեցւոյ՝ հաստատեա՛
և զշարժեալ անձինս ։

Ընդ քահանայապետաց և քահանայից՝ սարկաւագաց և դպրաց՝ և ամ̃ ուխտի մանկանց եկեղեցւոյ պահպանութե̃ , զօրութե̃ քո և զիս ընդ հովանեաւ քով ամրացո՛ ։

Ընդ թագաւորաց և իշխանաց՝ զօրավարաց և զօրականաց յաղթօղ և զիս ՚ի վերայ աներևոյթ թշնամւոյն արասցես ։

Ընդ ննջեցելոցն հաւատացելոց յիշեա՛ և զիս տէր զմեռեալս մեղօք · զորս ՚ի խորոցն հաներ անդնդոց , ընդ նոսին հա՛ն և զիս ՚ի չարին բանդէ՝ միջնորդութե̃ կենարար մարմնոյ քո և արեան , արժանապէս գոհանալ զողորմութենէ քումմէ ։

Գոհանամ զքէն տէ՛ր՝ որ արժանի արարեր զիս տեսլեան սուրբ խորհրդոյ քո ։

Գոհանամ՝ զի զսոսկալին և զահաւորն լուայ զօրհնութեան ։

Գոհանամ՝ զի զա̃ծախօսութիւն քո լսել արժանացայ ։

Գոհանամ՝ որ զհոգիս յուսով լցեր , և զմիտս ուրախութեամբ ։

Ո՞ր օրհնութի̃ կամ զգոհութի̃ քեզ մատուցանեմ՝ ա̃ծ իմ յս̃ , զի արժանի եղէ կենաց հացիդ և անմահարար բաժակիդ ։

Գիտեմ՝ զի չար է ինձ մերձենալն չարեաց, և տարակուսանք հեռանալն. մանաւանդ զի անսուտ սահմանեցեր, եթէ որ ոչ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, կեանս ոչ ունիցի յանձին իւրում։

Ահա յայտնապէս խոստովանիմ, զի ես մեռեալ եմ, և քեզ է յարուցանելն. զի փառաւորեցից զքեզ ընդ Հօր քում ամենազօրի, և ընդ ամենասուրբ Հոգւոյդ ճշմարտի, այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն։

Ամենակալ ամենախնամ Ա̃ծ՝ յամենայնի օրհնեալ. որ յա̃մի ես և ամենեցուն անհաս՝ և բովանդակեալ պահես զա̃մ արարածս՝ զհոգեղէնս և զհողեղէնս, զաննիւթս և զնիւթեղէնս. զի մահկանացուաց կեանք ես և անմահութեան յարամնացութիւն։ Բաց զդուռն ողորմութե̃ քո՝ գըթած, և ծագեա լոյս խաւարելոյս։ Ծանրացեալս բեռամբք մեղաց՝ թեթևացո. զսևացեալս աղտեղեալ կրիւք՝ սպիտակացո. զպաղուցեալս յա̃ծային սիրոյդ՝ ջերմացո. զմթացեալս անասնական սահեցմամբ՝ զգաստացո։ Զըմբռնեալս ՚ի ծուղակ որսողին՝ փրկեա և ազատեա. զմանրեալս ՚ի ժանեաց կերչին՝ կորզեա և կենագործեա. և զհոգիս խաւարեալ մեղօք՝ անձառ լուսով քով լու-

սաւորեմ, և միշտ առ քեզ հայեցո՛։
Ո՛ գերեալ խորհուրդս ՚ի գերողէն՝ առ քեզ դարձո՛ . զըմբռնեալ կամս ՚ի խարդախողէն՝ զերծո՛ . զյօժարութիւն՝ քաղցրութբ̅ ՚ի քեզ միացո՛ . զբանական միտս հոգւոյս՝ խոհեմացո՛ . զբարկանականն արիացո՛ . զցանկականն ողջախոհացո՛, և առ քեզ դարձո՛ . զերկս մասունս՝ արդարութբ̅ ամրացո՛ . զնսեմացեալ միտս՝ պայծառացո՛։
Ո՛ ներտրամադրեալ բնութ̅ի բանիս՝ հոգւով քո խառնեա՛ . զարտաբերեալս յօգուտ լողաց՝ շնորհօք քո ներկեա՛ . զզգայարանս կարկառման մտացս՝ առ քեզ հայեցո՛ . զըզգայուն պատուհանացս՝ ազդմամբ քո լցո՛։
Տեսանելեացս՝ ցոյց զողորմութ̅ի քո . լսելեացս՝ լսելի արա զձայն քո . ճաշակելեացս՝ քաղցրասցին բանք քո . հոտոտելեացս՝ բուրեսցի հոտ կենաց քոց, միշտ առ քեզ պաղատիլ և աղաչել և երկրպագանել՝ բաղխմամբ կրծից, տարածմամբ ձեռաց, տատանմամբ մտանց, կականմամբ ձայնից, հառաչմամբ սրտից, հեծութբ̅ ողբոց, արտասուօք աչաց, յայտնութբ̅ դաւանեաց, խոստովանութբ̅ մեղանաց, և ՚ի քէն ընդունիլ թողութ̅ի սխալանաց, քաւութ̅ի յանցանաց, հանգիստ փառաց, և զուարճանալ տեսութբ̅ աչաց, և վայելել ՚ի փառս երրեակ անձնաւորութեան յաւիտենից յաւիտեանս, ամէն։

Տէր Առաքել վարդապետի՝ ասացեալ ներբողեան ՚ի սուրբ Գրիգոր Նարեկացին ։

Արփիական լոյս երկնային, յ՟ն ք՟ն հօր միածին, լցեր շնորհիւ քո անքննելին, զսուրբ գրիգոր Նարեկացին ։

Բղխեալ աղբիւր անհիւթական, անձառ հոգւովդ աստուածական, մեղուցելոց լոյս փրկութեան, յանցաւորաց ազգի մարդկան ։

Գանձ անսպառ անապական, աննիւթ նիւթով շարադրական, զի որք առնուն փարթամանան, շահով երկնից արքայութ՟ն ։

Դեղ խոցելոց ՚ի բանսարկուէն, և անջատումն ՚ի չար ախտէն, մեզ օգնական լինի և զէն, ընդդէմ այսոց նետաձգողէն ։

Երանելի տ՟ր ս՟բ գրիգոր, դուռըն բացեր մեզ հոգևոր, ռահըս ցուցեր մտաց մոլոր, բանիւ քոյին արդիւնաւոր ։

Զարքայն երկնից աջօք տեսար, զհոգին ա՟ծ սուրբ ընկալար, հօրն լուսոյ ուռ կազմեցար, յորթըն քրիստոս պատուաստեցար ։

Իւին հըրոյն մաքրեցար, անտես բոցովըն վառեցար, ընդ ա՟յ խօսակցեցար, մեղուցելոց ցուցեր դու ձար ։

Ընտրեալ ծաղիկս ՚ի սուրբ գրոց, հաւաքեցեր ՚ի մի շարոց, դեղ կազմեցեր

հիւանդ հոգւոց, պարգեւեցեր ձիր մարդկայնոց ։

Թախանձանաց բանս լսողին, բարբառեցար դու 'ի խորին, խորտակեցեր զժանիս չարին, զդիւաց գընդին լեգէօնին ։

Ժամանակաւ յետին ցուցար, քան զառաջինսն պատուեցար, յերեկոյիս լոյս ծագեցար, քան զմիջօրեայ պայծառացար ։

Իմաստութ՟ քո անքննին, անբիծ վարուքդ իսկ 'ի մարմին, եղեր պարծանք տանս արամին, ասքանազեան հայկ արմենին ։

Լուսաւորչին համանման, գրիգորիոս արթուն անուան, զի որք նովաւ 'ի լոյս դարձան, եւ առաւել քեւ ցնծացան ։

Խաչեալ մարմնով ընդ քի̃, զօրհանապազ միշտ յաղօթի, գրիգորիոս լոյս գերափի, լուսաւորիչ մեզ 'ի հոգի ։

Ծաղիկ յաշնան ժամ յայտնեցար, անմահութեան հոտ բուրեցար, գրիգորիոս ծառ ծաղկեցար, պտուղ կենաց պարգեւեցար ։

Կեանք մեղուցեալ մարդկան ցուցեր, յուսահատից յոյս կանգնեցեր, գրիգորիոս բանս երգեցեր, յանցաւորաց կանոնս եդեր ։

Ձաղբըն չարին անխըղճելի, որ ընդ մարդկան պատուատեսցի, գրիգորիոս սուր երկսայրի, սուրբ աղօթիւքըդ խորտակի ։

Զայնիւ քոյին հըսկողական, սանդարա-մետքն ահիւ դողան, Գրիգորիոս դու ան-նման, հողանիւթեայ բնութեւ մարդկան։

Պայծառափայլ ճաճանչ փառաց, ՚ի գա-ւառին Ըռշտունեաց, քան զարեգակն ընդ-աստեղաց, նոյնպէս բան քո ընդ այլ կը-տակաց։

Որոտ եդեալ կաշտանակի, ըստ հրամանի տն Յիսուսի, Գրիգորիոս մարմնով յերկ-րի, հոգւով ՚ի դաս հրեղէն գնդի։

Աշտահոսան հոգւովն անճառ, յարմարե-ցեր բանիւ մեզ ճառ, Գրիգորիոս մըտօք պայծառ, փարատեցեր զմեղաց մըռայլ։

Հանեղ լուսոյդ լոյս կոչեցար, կաշտանակի մարմնոյդ եդար, եկեղեցւոյ ջահ վառե-ցար, խաւար հոգւոց դու լուսարար։

Լուսանձաւոր հարանց վարուց, ճգնաւո-րաց նախնի դասուց, Գրիգորիոս ցանկ խրատուց, բանս խօսեցար վասն նոցունց։

Տուաւելոզք րաբունական, տուեր շնորհս և գաւազան, քարոզ լինել որդւոց մարդ-կան, կոխելով զօձն անդընդական։

Ուրախանան յաւէժական, ազգըս հայոց թորգոմական, յորժամ լսեն զքո խօսեալ բան, որ դեղ կենաց է փրկութեան։

Զարին յաղթեմք քոյին երգով, և զնա ուժգին խոցոտելով, զըսպիս մեղաց մեր

մաքրելով, քաղցրանուագ այսու դեղով։
Պարուց վերնոյն հրակերպեան, եղեր
մարմնով համանըման, Գրիգորիոս կանգ-
նեալ արձան, ըռըշտունեաց ծովն յան-
դիման։

Ջնջեալ 'ի մէնջ զաղտս մեղաց, սուրբ
աղօթիւք քո յոտընկաց, Գրիգորիոս տեղ
պարծանաց, ակն լուսոյ հայաստանեայց։
Սետին կենաց մեզ կամեցեր, առա-
տապէս մեզ բաշխեցեր, Գրիգորիոս կոչ-
արարեր, զքաղցեալս հոգւով կերակ-
րեցեր։

Սուրբ և մաքուր բանից քոյին, այլասեռից
ազգ ցանկային, եռափափագ սիրով եկին,
և գծագրեալ առեալ գնացին։
Վըշտացելոց դու մխիթար, և նեղելոց
անդորրարար, տէր սուրբ Գրիգոր հայր
բարերար, այսահարից դեղ և հընար։

Տաղանդ շնորհաց զոր ընկալար, բազմա-
պատիկ զայն շահեցար, Գրիգորիոս կա-
տարեալ այր, ա̃ծութենըն կամարար։
Բանից ստեղծչին դու խօսակից, ճգնա-
ւորաց աղօթակից, վարդապետաց հանուրց
վարժից, Գրիգորիոս պետ բաղձալից։
Ընծան մանկունք սուրբ հաւատոյ, ընդ
լուսակիր աղօթըս քո Գրիգորիոս դու սիւն
լուսոյ, հայաստանեայց եկեղեցւոյ։

Հիւանդ հոգւոցս մարդկային, բարեխօսեա՛ տեառն յիսուսին, սուրբ աղօթից քոց կցորդին, բանք տիրամօր աստուածածնին ։

Փայլըն կենաց սրբոյ խաչին, և ձայն ո՛րյ կարապետին, ստեփաննոսին՝ սուրբ գրիգորին, յորդիս լուսոյ զմեզ ծընողին ։

Զ. և ըզ․քրիստոս փառաբանեմք, ընդ հօր հոգւով երկրպագեմք, երրորդութեանն փառս վերերգեմք, աստուածութեամբ մի դաւանեմք ։

—————

Ի սոր չորից Աւետարանչացն սրբոց՝ Յառաջացու-ցին Ներհաւաքեցեալ վասն բժշկութեան փրկչին մե-րոյ Քրիստոսի. Յիւրաքանչիւր տեղեաց գիտ-աւորեալք առ այսմ, ըստ գիտման ՚ի բաժանմ հոգւոյ և մարմնոյ։

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ շրջէր յս ընդ ամ կողմն գալիլեացւոց. ուսուցանէր ՚ի ժողովուրդս նց և քարոզէր զաւետարանն արքայութեան, և բժշկէր զամ հիւանդութիւն՝ և զամ ախտ ՚ի ժողովրդեանն։ Եւ ել լուր նր ընդ ամ երկիրն ասորւոց, և մատուցին առ նա զամ հիւանդս՝ որ նեղեալ էին ՚ի պէս պէս ցաւս և ՚ի տանջանս, և զդիւահարս և զլուսնոտս և զանդամալոյծս. և բժշկեաց զնս։ Եւ երթային զհետ նր ժողովուրդք բազումք ՚ի գալիլեէ և ՚ի դեկապօլեայ և յերուսաղէմէ և ՚ի հրէաստանէ, և յայնկոյս յորդանանու, և բժշկեաց զնոսա։

Եւ իբրև էջ ՚ի լեռնէ անտի, գնացին զկնի նորա ժողովուրդք բազումք։ Եւ

առաջի մատուցեալ բորոտ մի, երկիրպագա-
նէր նմա, և ասէր. տէ՛ր՝ եթէ կամիս՝
կարող ես զիս սրբել: Ձգեաց զձեռն իւր
և հասոյց ՚ի նա յն՝ և ասէ. կամիմ սրբ-
եաց. և վաղվաղակի սրբեցաւ ՚ի նմանէ բո-
րոտութիւնն: Եւ ասէ ցնա յիսուս,
զգո՛յշ լեր՝ մի՛ ումեք ասիցես. այլ երթ
ցո՛յց զանձն քո քահանային. և մատո՛ ըզ-
պատարագն, զոր հրամայեաց մովսէս, ՚ի
վկայութիւն նոցա:

Եւ մտեալ ՚ի կափառնաում, մատեաւ առ
նա հարիւրապետ մի, աղաչէր զնա, և
ասէր. տէ՛ր՝ մանուկ իմ անկեալ կայ ՚ի
տան անդամալոյծ՝ չարաչար տանջեալ:
Ասէ ցնա յն. ես եկից՝ և բժշկեցից զնա:
Պատասխանի ետ հարիւրապետն՝ և ասէ.
տէ՛ր, չեմ բաւական՝ եթէ ընդ յարկաւ
իմով մտցես. այլ ասա՛ բանիւ, և բժշկեսցի
մանուկն իմ: Քանզի և ես այր մի եմ ընդ
իշխանութեամբ, ունիմ ընդ ինև զինուորս.
ասեմ սմա երթ՝ և երթայ, և այլում թէ
եկ՝ և գայ, և ծառայի իմում թէ արա՛
զայս՝ և առնէ: Իբրև լուաւ յիսուս՝
զարմացաւ, և ասէ ցայնոսիկ՝ որ զհետն
երթային. ամէն ասեմ ձեզ՝ և ո՛չ յիսրայէ-
լի այսպիսի հաւատս գտի երբեք: Բայց
ասեմ ձեզ, զի բազումք յարևելից և յա-

րևմտից եկեսցեն՝ և բազմեսցին ընդ աբ-
րահամու՝ և ընդ սահակայ՝ և ընդ յակոբու
յարքայութե՟ երկնից։ Իսկ որդիքն արքայութե՟
ելցեն ՚ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ
և կրճել ատամանց։ Իսկ ասէ յս՟ ցհարիւրա-
պետն. երթ՝ և որպ՟ հաւատացերդ. եղիցի քեզ.
և ողջացաւ մանուկն նր՟ յաւուր յայնմիկ։
Իսկ եկեալ յս՟ ՚ի տուն պետրոսի, ետես զի
զզոքանչ նորա անկեալ դնէր տապացեալ։
կալաւ զձեռանէ նր՟՝ և եթող զնա ջերմն.
յոտն եկաց՝ և պաշտէր զնս՟։ Իբրև եղև
երեկոյ՝ մատուցին առ նա դիւահարս բա-
զումս, և եհան զայսսն բանիւ. և զա՟մ հի-
ւանդսն բժշկեաց։ Զի լցցի բանն՝ որ աս-
ցաւ ՚ի ձեռն եսայեայ մրգ՟րէի. Նա զհիւան-
դութ՟իս մեր վերացոյց, և զցաւս մեր եբարձ։
Իսկ իբրև անց յայնկոյս յերկիրն գերգե-
սացւոց, պատահեցին նմա դիւահարք եր-
կու՝ ելեալք ՚ի գերեզմանացն, չարաչարք
յոյժ. որպ՟ զի չէր հնար անցանել ումեք
ընդ այն ճանապարհ։ Իսկ ահա աղաղակե-
ցին և ասեն. զի՞ կայ մեր և քո յս՟ որդի
այ՟, եկիր տարաժամ տանջել զմեզ։ Իսկ էր
հեռագոյն ՚ի նոցանէ երամակ մի խոզից ա-
րօտական։ Իսկ դևքն աղաչէին զնա և ա-
սէին. եթէ հանես զմեզ աստի, հրաման
տուր մեզ երթալ յերամակ խոզիցն։ Իսկ

ասէ ցնա. երթա՛յք։ Եւ նոքա ելեալ գնացին յերամակն խոզից. եւ դիմեաց ամ երամակն ՚ի դարէ անտի ՚ի ծով. եւ մեռան ՚ի ջուրսն։ Իսկ խոզարածքն փախեան, եւ երթեալ ՚ի քաղաքն պատմեցին զամ, եւ զիրս դիւահարացն։ Եւ ահա ամ քաղաքն ել ընդ առաջ յի. իբրեւ տեսին զնա՝ աղաչեցին զի գնասցէ ՚ի սահմանաց նոցա։

Եւ մտեալ ՚ի նաւ անց յայնկոյս, եւ եկն ՚ի քաղաք իւր։ Եւ ահա մատուցին առ նա անդամալոյծ մի, որ դնէր ՚ի մահիճս. եւ տեսեալ յի զհաւատս նց՝ ասէ ցանդամալոյծն. թողեա՛լ լիցին քեզ մեղք քո։ Եւ ահա ոմանք ՚ի դպրացն ասեն ընդ միտս. հայհոյէ դա։ Եւ ծանուցեալ յի զխորհուրդս նոցա՝ ասէ ցնա. ընդէ՞ր խորհիք դուք չարիս ՚ի սիրտս ձեր։ Զի՞նչ դիւրին է. ասե՞լ թողեալ լիցին քեզ մեղք քո, թէ ասել արի՛ եւ շրջեա՛ց։ Այլ զի գիտասջիք՝ եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ յերկրի թողուլ զմեղս. յայնժամ ասէ ցանդամալոյծն. արի՛ առ ըզմահիճս քո՝ եւ երթ ՚ի տուն քո։ Եւ յարուցեալ գնաց ՚ի տուն իւր։ Իբրեւ տեսին ժողովուրդքն, զարմացան. եւ փառաւոր առնէին զած զտուողն այնպիսի իշխանութեան՝ մարդկան։

Մինչդեռ նա զայս խօսէր ընդ նոսա , ահա իշխան մի մատուցեալ երկիրպագանէր նմա՝ և ասէր · դուստր իմ արդ ևս վախճանեցաւ · այլ եկեալ դիցես զձեռն քո ՚ի վ՟ր նորա՝ և կեցցէ ։ Յարեաւ յ՟ս՝ և գնաց զհետ ն՟ր աշակերտօքն հանդերձ ։ Եւ ահա կին մի տեռատես երկոտասանամեայ՝ մատուցեալ յետոյ մերձեցաւ ՚ի դրօշակ հանդերձի ն՟ր ։ Քանզի ասէր ՚ի միտս իւրում · թէ միայն մերձենամ ՚ի հանդերձս նորա՝ փրկիմ ։ Իսկ յ՟ս իբրև դարձաւ և ետես զնա՝ ասէ · քաջալերեա՛ց դուստր՝ հաւատք քո կեցուցին զքեզ · և փրկեցաւ կինն ՚ի ժամէն յայնմանէ ։ Իբրև եկն յ՟ս ՚ի տուն իշխանին , և ետես զփողահարսն և ամբոխ յոյժ , ասէ ցնոսա · ՚ի բա՛ց գնացէ՛ք · զի ո՛չ եթէ մեռեալ է աղջիկդ՝ այլ ննջէ ։ Եւ ծաղր առնէին զնա ։ և իբրև ել ամբոխն ՚ի բաց , եմուտ՝ կալաւ զձեռանէ ն՟ր , և յարեաւ աղջիկն ։ Եւ ել համբաւս այս ընդ ամենայն երկիրն ընդ այն ։

Եւ մինչդեռ անցանէր ընդ այն յ՟ս , զհետ եղեն նորա կոյրք երկու , աղաղակէին՝ և ասէին · ողորմեա՛ց մեզ որդի դաւթի ։ Եւ իբրև եկն ՚ի տուն , մատեան առ նա կոյրքըն · և ասէ ցնոսա յ՟ս · հաւատա՞յք՝ եթէ կարօղ եմ առնել ձեզ զայդ · ասեն ցնա՝

այո՛ Տր։ Յայնժամ մերձեցաւ յաչս նո-
ցա՝ և ասէ. ըստ հաւատոց ձերոց եղիցի
ձեզ։ Եւ բացան աչք նոցա. և սաստեաց
նոցա Յիսուս՝ և ասէ. զգո՛յշ կացէք՝ մի՛
ոք գիտասցէ։ Եւ նոքա ելեալ համբաւե-
ցին զնա ընդ ամենայն երկիրն ընդ այն։
Եւ յելանելն նց արտաքս, ահա մատու-
ցին առ նա այր մի՝ համր դիւահար։ Եւ
յելանել դիւին՝ խօսեցաւ համրն. և զար-
մացան ժողովուրդքն՝ և ասեն. թէ և ոչ
երբէք երևեցաւ այսպիսի ինչ յիսրայէլի։
Իսկ փարիսեցիքն ասէին, թէ իշխանաւն
դիւաց հանէ դա զդևս։

Եւ շրջէր Յիսուս ընդ ամ քաղաքս և ընդ
գիւղս. ուսուցանէր 'ի ժողովուրդս նց.
և քարոզէր զաւետարանն արքայութե. և
բժշկէր զամենայն ախտս և զամ հիւան-
դութիւնս 'ի ժողովրդեանն։ Եւ տեսեալ
զժողովուրդսն՝ գթացաւ 'ի նոսա. զի էին
աշխատեալք և ցրուեալք իբրև զոչխարս,
որոց ոչ իցէ հովիւ։ Յայնժամ ասէ ցա-
շակերտսն իւր. հունձք բազում են՝ և մշ-
շակք սակաւ։ Արդ՝ աղաչեցէ՛ք զտր հըն-
ձոց՝ զի հանցէ մշակս 'ի հունձս իւր։ Եւ
կոչեցեալ առ ինքն զերկոտասանեսին աշա-
կերտսն իւր, ետ նոցա իշխանութի այսոց
պղծոց հանել զնոսա, և բժշկել զամ ցաւս

և զամենայն հիւանդութիւնս։

Եւ գնացեալ անտի Յիսուս եկն ՚ի ժողովուրդն նոցա։ Եւ անդ էր այր մի՝ որոյ ձեռն իւր գօսացեալ էր. հարցին զնա՝ և ասեն, եթէ պա՞րտ իցէ ՚ի շաբաթու բժշկել. զի չարախօսեսցեն զնմանէ։ Եւ նա ասէ ցնոսա. ո՞վ է ՚ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ ոչխար մի, և անկանիցի այն ՚ի խորխորատ ՚ի շաբաթու. միթէ ո՞չ ունիցի և յարուցանիցէ զնա։ Իսկ արդ՝ ո՞րչափ ևս առաւել է մարդ քան զոչխար. ապա ուրեմն պարտ է ՚ի շաբաթու բարիս գործել։ Յայնժամ ասէ ցայրն. ձգեա՛ զձեռն քո, և նա ձգեաց՝ և եղև ողջ իբրև զմիւսն։ Իսկ փարիսեցիքն ելեալ արտաքս խորհուրդ առին զնմանէ՝ թէ ո՞րպէս կորուսցեն զնա։

Յայնժամ մատուցաւ առ նա դիւահար մի կոյր և համր, և բժշկեաց զնա. որպէս զի համրն և կոյրն խօսիցի և տեսանիցէ։ Զարմացան ամ̃ ժողովուրդքն՝ և ասէին. միթէ սա՞ իցէ քն̃ որդի դաւթի։ Բայց փարիսեցիքն իբրև լուան՝ ասեն. ո՛չ իւիք հանէ դա զդևս՝ եթէ ոչ բէեղզեբուղաւ իշխանաւն դիւաց։

Եւ ելեալ անտի Յիսուսի գնաց ՚ի կողմանս տիւրոսի և սիդոնի։ Եւ ահա կին մի քանանացի ՚ի սահմանաց անտի նոցա ելեալ,

աղաղակէր և ասէր . ողորմեա՛ց ինձ տէր որդի Դաւթի , դուստր իմ չարաչար այսահարի ։ Եւ նա ոչ ետ նմա պատասխանի . և մատուցեալ աշակերտքն նորա՝ աղաչէին զնա և ասէին . արձակեա՛ զնա զի աղաղակէ զհետ մեր ։ Նա պատասխանի ետ և ասէ . ո՛չ ուրեք առաքեցայ՝ եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի ։ Եւ նա մատուցեալ երկիրպագանէր նմա և ասէր . Տ̃ր՝ օգնեա՛ ինձ ։ Պատասխանի ետ նմա և ասէ . ո՛չ է բարւոք առնուլ զհաց մանկանց՝ և արկանել շանց ։ Եւ նա ասէ . այո՛ Տ̃ր , քանզի և շունք կերակրին ՚ի փշրանաց անկելոց ՚ի սեղանոյ տ̃ն իւրեանց ։ Յայնժամ պատասխանի ետ նմա Յ̃ս և ասէ . ո՛վ կին դու՝ մեծ են հաւատք քո , եղիցի քեզ որպ̃ և կամիս ։ Եւ բժշկեցաւ դուստր նորա ՚ի նմին ժամու ։

Եւ գնացեալ անտի Յ̃ս , եկն ՚ի ծովեզրն Գալիլեացւոց , և ելեալ ՚ի լեառն նստէր անդ ։ Մատեան առ նա ժողովուրդք բազումք որ ունէին ընդ իւրեանս՝ կաղս կոյրս համերս միակողմանիս , և այլս բազումս . և ընկեցին զնոսա առ ոտս նորա՝ և բժշկեաց զն̃ս ։ Մինչև զարմանալ ժողովրդոցն՝ որ տեսանէին , զի համերքն խօսէին՝ կաղք գնային՝ միակողմանիք բժըշ-

կէին՝ կոյրք տեսանէին, և փառաւոր առ-
նէին զա͞ծ իսրայէլի։

Եւ իբրև եկին 'ի ժողովուրդն, մատեաւ
այր մի՝ 'ի ծունր իջանէր և ասէր· տէ՛ր
ողորմեա՛ց որդւոյ իմում, զի լուսնոտի է և
չարաչար հիւանդանայ· բազում անգամ
անկանի 'ի հուր՝ և երբեմն 'ի ջուր։ Եւ
մատուցի զնա աշակերտացն քոց՝ և ոչ կա-
րացին բժշկել։ Պատասխանի ետ յ͞ս՝ և
ասէ· ո՛վ ազգ անհաւատ և թիւր, մինչև
ցե՞րբ իցեմ ընդ ձեզ՝ մինչև յե՞րբ անսայ-
ցեմ ձեզ· ա՛ծ զնա առ իս· և ածին զնա առ
յ͞ս։ Եւ սաստեաց 'ի նա յիսուս՝ և ել 'ի
նմանէ դևն, և բժշկեցաւ մանուկն 'ի ժա-
մէն յայնմանէ։ Յայնժամ մատեան աշա-
կերտքն առանձինն՝ և ասեն ցյ͞ս· մեք ըն-
դէ՞ր ոչ կարացաք հանել զնա։ Եւ նա
ասէ ցնոսա· վ͞ն թերահաւատութե͞ն ձերոյ։
ամէն ասեմ ձեզ՝ եթէ ունիցիք հաւատս
քան զհատ մանանխոյ, ասասջիք լերինս
այսմիկ՝ փոխեա՛ց աստի անդր, և փոխեսցի·
և ոչ ինչ անհնարին լինիցի ձեզ։ Բայց
այս ազգ ոչ ելանէ՝ եթէ ոչ աղօթիւք և
պահովք։

Եւ յելանելն նոցա յերիքովէ, գնացին
զհետ ն͞ր ժողովուրդք բազումք։ Եւ ահա
կոյրք երկու նստէին առ ճանապարհաւն·

իբրև լուան թէ Յս անցանէ՝ աղաղակեցին և ասեն. ողորմեա՛ց մեզ Յս որդի Դաւթի։ Իսկ ամբոխն սաստեաց նոցա զի՝ լռեսցեն. և նոքա ևս առաւել աղաղակէին և ասէին, Տ՛ր՝ ողորմեա՛ց մեզ որդի Դաւթի։ Օտեղի առ Յս, կոչեաց զնս և ասէ. զի՞նչ կամիք՝ զի արարից ձեզ։ Ասեն ցնա. Տ՛ր՝ զի բացցին աչք մեր։ Իսկ գթացեալ Յս մերձեցաւ յաչս նոցա, և վաղվաղակի տեսին. և գնացին զհետ նորա։

---

Սրբոյ Աւետարանին Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մարկոսի։

## Տէրամբ մերով Յիսուսիւ Քիւ։

Եւ մտանէին ՚ի կափառնաում, և իսկ և իսկ ՚ի շաբաթուն մտեալ ՚ի ժողովուրդն, ուսուցանէր զնոսա։ Եւ զարմանային ընդ վարդապետութի նր, զի ուսուցանէր զնս իբրև իշխանութբ՝ և ոչ որպ դպիրքն։ Եւ էր ՚ի ժողովրդեանն նց այր մի, յորում այս պիղծ դևր ՚ի նմա. որ աղաղակեաց՝ և ասէ։ Թո՛յլ տուր, զի՞ կայ մեր և քո՝ Յս Նազովրեցի, եկիր կորուսանել զմեզ. գիտեմք զքեզ՝ ով ես սբդ այ։ Սաստեաց ՚ի նա Յս և ասէ. կարկեա՛ց՝ և ել ՚ի դմանէ։ Եւ զարկոյց զնա այն պիղծ. և

աղաղակեաց 'ի ձայն մեծ, և ել 'ի նմանէ։ Եւ զարմացան ամենեքին, մինչև հեծել ընդ միմեանս՝ և ասել. զինչ է այս նոր վարդապետութիւն, զի իշխանութեամբ և այսոց պղծոց սաստէ՝ և հնազանդին նմա։ Եւ ել լուր նորա ընդ ամենայն կողմն գալիլեացւոց։

Եւ վաղվաղակի ելեալ 'ի ժողովրդենէն, եկն 'ի տուն սիմոնի և անդրէայ՝ յակոբու և յովհաննու հանդերձ։ Եւ զզոքանչ սիմոնի դնէր ջերմացեալ, և վաղվաղակի ասեն ցնա վ̃ն ն̃ր։ Եւ մատուցեալ յարոյց զնա՝ կալեալ զձեռանէ ն̃ր. և եթող զնա տենդն՝ և պաշտէր զնոսա։

Եւ իբրև երեկոյ եղև 'ի մտանել արեգականն, բերէին առ նա զա̃մ հիւանդս և զդիւահարս. և էր ա̃մ քաղաքն ժողովեալ առ դրունսն։ Եւ բժշկեաց բազում հիւանդս 'ի պէսպէս ախտից, և դևս բազումս եհան, և ոչ տայր խօսել դիւացն, զի գիտէին զնա թէ քրիստոսն է։

Եւ ընդ այգն ընդ առաւօտն յարուցեալ ել և գնաց յանապատ տեղի, և անդ կայր յաղօթս։ Եւ գնաց զհետ նորա սիմոն՝ և որ ընդ նմայն էին։ Եւ իբրև գտին զնա՝ ասեն ցնա, թէ ամենեքին խնդրեն զքեզ։ Եւ ասէ ցնոսա. եկա՛յք երթիցուք և յայլ

մօտաւոր գիւղաքաղաքն, զի և անդ քա-
րոզեցից. զի յայս իսկ եկեալ եմ։ Եւ քա-
րոզէր ՚ի ժողովուրդս նց ընդ ամ Գալիլեա-
ցիս, և դևս հանէր։ Կայ առ նա բորոտ
մի, աղաչէր՝ ՚ի ծունր իջանէր՝ և ասէր.
Տէր՝ եթէ կամիս, կարօղ ես զիս սրբել։
Իսկ յս գթացեալ ձգեաց զձեռն, մերձե-
ցաւ ՚ի նա՝ և ասէ ցնա, կամիմ սրբեա՛ց։
Եւ իբրև ասացն ցնա, վաղվաղակի գնաց
՚ի նմանէ բորոտութիւն՝ և սրբեցաւ։ Եւ
սաստեալ նմա՝ եհան զնա արտաքս վաղվա-
ղակի, և ասէ։ Զգո՛յշ լեր՝ մի՛ ումեք ինչ
ասիցես. այլ երթ ցո՛յց զքեզ քահա-
նային. և մատո՛ վս սրբութե քո պատա-
րագ՝ զոր հրամայեաց Մովսէս, ՚ի վկայութի
նց։ Եւ նա ելեալ սկսաւ քարոզել յոյժ՝
և հռչակ հարկանել զբանն, մինչ ո՛չ ևս
կարօղ լինել նմա յայտնապէս ՚ի քաղաք
մտանել, այլ արտաքոյ յանապատ տեղիս
էր. և գային առ նա յամ կողմանց։

Եւ մտեալ դարձեալ ՚ի Կափառնաում յետ
աւուրց. լուր եղև եթէ ՚ի տանն է։ և ժո-
ղովեցան բազումք՝ մինչև տեղի ևս ո՛չ լի-
նել՝ և ո՛չ առ դրանն. և խօսէր նց զբանն։
Եւ գային առ նա՝ բերէին անդամալոյծ
մի բարձեալ ՚ի չորից։ Եւ իբրև ո՛չ կա-
րէին մերձենալ առ նա յամբոխէ անտի,

քակեցին զյարկն՝ ուր էր Յս, եւ բացեալ
զառաստաղն իջուցին զմահիճսն յորում
կայր անդամալոյծն։ Եւ տեսեալ Յի զհա-
ւատս նց, ասէ ցանդամալոյծն. որդեակ՝
թողեալ լիցին քեզ մեղք քո։ Եւ էին ո-
մանք ’ի դպրաց անտի՝ որ անդ նստէին.
եւ խորհէին ’ի միտս իւրեանց. զի՞նչ է
այս՝ որ խօսի սա զհայհոյութիւն. ո՞վ կարէ
թողուլ զմեղս, եթէ ոչ՝ մի Ած։ Եւ գի-
տաց Յս յոգի իւր՝ թէ այնպէս խորհին
’ի միտս իւրեանց, եւ ասէ. զի՞ խորհիք
զայդ ’ի միտս ձեր։ Զի՞նչ դիւրին է, ա-
սել ցանդամալոյծն՝ թողեալ լիցին քեզ
մեղք քո, եթէ ասել՝ արի առ զմահիճս քո
եւ երթ ’ի տուն քո. Այլ զի գիտասջիք
եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ ’ի վր
երկրի թողուլ զմեղս, ասէ ցանդամալոյծն.
Քեզ ասեմ, արի առ զմահիճս քո՝ եւ երթ
’ի տուն քո։ Եւ յարեաւ վաղվաղակի առ-
եալ զմահիճսն, ել առաջի ամենեցուն.
մինչեւ զարմանալ ամենեցուն՝ եւ փառաւոր
տանել զԱծ՝ եւ ասել, թէ այսպիսի ինչ
երբեք ոչ տեսաք։

Եւ եմուտ միւսանգամ ’ի ժողովուրդն,
եւ էր անդ այր մի՝ որոյ ձեռն իւր գօսաց-
եալ էր. Եւ սպասէին նմա՝ եթէ բժշ-
կեսցէ զնա ’ի շաբաթու՝ զի չարախօսեսցեն

զնմանէ։ Եւ ասէ ցայրն՝ որոյ ձեռն գօսացեալ էր. արի՛ անց ՚ի մէջ։ Եւ ասէ ցն՟ս. զի՞նչ արժան է ՚ի շաբաթու, բարի՞ ինչ գործել՝ եթէ չար առնել, ոգի մի ապրեցուցանե՞լ՝ եթէ կորուսանել. և նոքա լռեցին։ Եւ հայեցեալ յիսուսի զնոքօք ընցասմամբ, տրտմեալ վս՟ կուրութեն սրտից նց՟՝ ասէ ցայրն. ձգեա՛ զձեռն քո. և նա ձգեաց, և ողջացաւ ձեռն նր՟։ Եւ ելեալ արտաքս վաղվաղակի փարիսեցիքն հերովդիանոսօքն հանդերձ, խորհուրդ առնէին վս՟ նորա՝ թէ զիա՞րդ կորուսցեն զնա։

Իսկ յս՟ աշակերտօքն իւրովք գնաց ՚ի ծովեզրն. և բազում ժողովուրդ ՚ի գալիլեացւոց երթային զհետ նր՟. և ՚ի հրէաստանէ, և յերուսաղէմէ, և յայնկոյս յորդանանու, և որք ՚ի տիւրոսէ և ՚ի սիդովնէ. բազում ժողովուրդ իբրև լուէին՝ որչափ ինչ առնէր, գային առ նա։ Եւ ասէ ցաշակերտսն իւր, զի նաւակ մի պատրաստական կայցէ նմա վս՟ ամբոխին՝ զի մի՛ նեղեսցեն զնա։ Քանզի զբազումս բժշկեաց. մինչ գալ խռնել զնովաւ՝ զի մերձեսցին առ նա, որք ունէին ախտս ինչ։ Եւ այսք պիղծք յորժամ տեսանէին զնա, անկանէին առաջի նր՟, աղաղակէին և ասէին. թէ դու ես որդին այ՟. և նա յոյժ սաս-

տէր նմա, զի մի՛ յայտնի առնիցեն զնա։

Եւ եկն յայնկոյս ծովուն յաշխարհն Գերգեսացւոց։ Եւ ընդ ելանելն նր ՚ի նաւէ անտի, պատահեաց նմա այր մի ՚ի գերեզմանացն՝ զոր ունէր այս պիղծ. որոյ և բնակութիւն իւր իսկ ՚ի գերեզմանս էր. և ոչ շղթայիւք ոք ևս կարէր կապել զնա. վասն բազում անգամ ոտնակապօք և շղթայիւք կապելոյ, և խզելոյ ՚ի նմանէ զշղթայսն, և զոտնակապսն խորտակելոյ. և ոչ ո՛ք կարէր պարտել զնա. քանզի հանապազ զցայգ և զցերեկ ՚ի գերեզմանս և ՚ի լերինս աղաղակէր, և կոծէր զանձն իւր քարամբք։ Իբրև ետես զՅս ՚ի հեռաստանէ, ընթացաւ և երկիրպագ նմա։ Աղաղակեաց ՚ի ձայն մեծ՝ և ասէ, զի՞ կայ իմ և քո՝ Յս որդի Այ բարձրելոյ. երդմնեցուցանեմ զքեզ յԱծ, մի՛ տանջեր զիս։ Քանզի ասէր ցնա. ե՛լ այսդ պիղծ ՚ի մարդոյ այտի։ Եւ հարցանէր ցնա՝ թէ զի՞նչ անուն է քո. և ասէ ցնա. լէգէոն անուն է իմ, քանզի բազումք եմք։ Եւ աղաչէին զնա յոյժ, զի մի՛ առաքեսցէ զնս արտաքս քան զաշխարհն։ Եւ անդ էր առ լերամբն երամակ մի խոզաց արօտական մեծ։ Աղաչեցին զնա ամ դևքն և ասեն, առաքեա զմեզ ՚ի խոզսն, զի մտցուք ՚ի նոսա։ Եւ հրամայեաց

նչ̃ · և իբրև ելին այսքն պիղծք՝ մտին ՚ի խոզսն, և դիմեաց երամակն ՚ի դարէ անտի ՚ի ծովն · էին իբրև երկու հազարք, և հեղձնուին ՚ի ծովուն ։ Եւ խոզարածքն փախեան, և պատմեցին ՚ի քաղաքին և յագարակս, և ելին տեսանել զինչ իցէ՝ որ գործեցաւն ։ Գան առ յս̃, և տեսանեն զդիւահարն զի նստէր զգեցեալ և զգաստացեալ, որ ունէր զլէգէովնն, և զահի հարան ։ Եւ պատմեցին նոցա՝ որոց տեսեալն էր, թէ զինչ եղև այսահարին, և զինչ վս̃ խոզիցն ։ Եւ սկսան աղաչել զնա գնալ ՚ի սահմանաց նչ̃ ։ Եւ իբրև եմուտ նա ՚ի նաւն, աղաչէր զնա դիւահարն՝ զի ընդ նմա իցէ · և յս̃ ոչ ետ նմա թոյլ, այլ ասէ ցնա · Երթ ՚ի տուն քո առ ընտանիս քո, և պատմեա՛ նոցա, որ ինչ միանգամ տէր արար քեզ՝ և ողորմեցաւ քեզ ։ Եւ չոգաւ՝ և սկսաւ քարոզել ՚ի դեկապօլին, զոր ինչ արար նմա յիսուս, և ամենեքին զարմանային ։

Եւ իբրև անց յիսուս միւսանգամ յայն կողմն՝ ժողովեցաւ առ նա ժողովուրդ բազում, և էր առ ծովեզերբն ։ Եւ ահա մի ՚ի ժողովրդապետացն գայր, որում անուն էր յայրոս · և իբրև ետես զնա՝ անկաւ առ ոտս նորա · աղաչէր զնա յոյժ և

ասէր, թէ դուստր նր մերձ է 'ի մահ, զի եկեալ դնիցէ նմա ձեռն, ոպ զի ապրեսցի և կեցցէ։ Եւ գնաց ընդ նմա․ երթայր և ժողովուրդ բազում զհետ նր, և նեղէին զնա։ Եւ կին մի էր 'ի տեռատեսութե ար-եան զերկոտասան ամ․ և յոյժ վշտացեալ 'ի բազում բժշկաց, և ծախեալ զինչս իւր զամ՝ և չէր ինչ օգտեալ, այլ ևս առաւել զայրացեալ։ Իբրև լուաւ զյսէ՝ եկն 'ի մէջ ամբոխին յետոյ՝ և բուռն եհար ըզ-հանդերձէ նր․ քանզի խորհէր 'ի միտ, թէ միայն մերձեցայց 'ի հանդերձս նր, փրկե-ցայց։ Եւ վաղվաղակի ցամաքեցաւ աղբիւր արեան նորա․ և գիտաց 'ի մարմին իւր թէ բժշկեցաւ 'ի տանջանացն։ Եւ անդէն վաղվաղակի գիտաց յս յանձն իւր զզօ-րութիւնն որ ել 'ի նմանէ, դարձաւ յամ-բոխն և ասէ․ ով մերձեցաւ 'ի հանդերձս իմ։ Եւ ասեն ցնա աշակերտքն․ տեսանես՝ զի ամբոխդ նեղէ զքեզ, և ասես՝ թէ ով մերձեցաւ 'ի հանդերձս իմ։ Եւ շուրջ հայէր տեսանել՝ թէ ով զայն արար։ Եւ կինն զարհուրեալ և դողացեալ վասն որոյ գաղտն արար․ քանզի գիտէր զինչ եղև նմա, եկն անկաւ առաջի նորա, և ասաց զամ իրսն ստուգութբ։ Եւ յիսուս ասէ ցնա․ դուստր՝ հաւատք քո կեցուցին

զքեզ․ երթ ՚ի խաղաղութ̃ի, և եղիջի՛ր ողջ
՚ի տանջանաց քոց։

Մինչդեռ նա զայն խօսէր, գան ոմանք ՚ի տանէ ժողովրդապետին, և ասեն՝ թէ դուստրն քո մեռաւ, զի՞ ևս աշխատ առնես զվարդապետդ։ Իսկ Յ̃ս իբրև լուաւ զբանն ասացեալ, ասէ ցժողովրդապետն․ մի՛ երկնչիր, բայց միայն հաւատա՛։ Եւ ոչ զո՛ք եթող ընդ իւր երթալ, բայց միայն զպետրոս և զյակոբոս և զյովհաննէս՝ զեղբայրն յակոբայ։ Գայ ՚ի տուն ժողովրդապետին, և տեսանէ ամբոխ յոյժ և լալականս, և աղաղակ յոյժ։ Եւ մտեալ ՚ի ներքս՝ ասէ ցն̃ս․ զի՞ խռովեալ էք և լայք, մանուկն ո՛չ է մեռեալ, այլ ննջէ։ Եւ ծաղր առնէին զնա․ և նո՛ր հանեալ արտաքս զամենեսեան, առնու ընդ իւր զհայր մանկանն և զմայր, և զն̃ս որ ընդ նմայն էին, և մտանէ ուր դնէր մանուկն։ Եւ կալեալ զձեռանէ մանկանն, ասէ ցնա․ տա՛լիթա կո՛ւմի, որ թարգմանի, աղջիկ դու՝ քե՛զ ասեմ՝ արի՛։ Եւ վաղվաղակի յարեաւ աղջիկն և գնայր, քանզի էր ամաց՝ իբրև երկոտասանից․ և զարմացան մեծաւ զարմանալեօք։ Եւ պատուէր տայր նոցա յոյժ՝ զի մի՛ ոք գիտասցէ զայն, և ասաց տալ
նմա ուտել։

Եւ իբրեւ անցին յայնկոյս, եկին յերկիրն Գեննեսարեթ։ Եւ իբրեւ ելին 'ի նաւէ անտի՝ իսկ եւ իսկ ծանեան զնա արք տեղւոյն այնորիկ։ Եւ ընթացեալ այսր անդր ընդ ա͞մ գաւառն, սկսան մահճօք բերել զհիւանդս՝ ուր լսէին թէ անդ իցէ։ Եւ ուր եւ մտանէր 'ի գեօղս կամ 'ի քաղաքս՝ կամ յագարակս՝ 'ի հրապարակս դնէին զախտաժէտս՝ եւ աղաչէին զնա զի գոնէ 'ի քղանցս հանդերձից նո͞ր մերձենայցեն. եւ որ միանգամ մերձեցանն՝ փրկեցան։

Եւ անտի յարուցեալ եկն 'ի սահմանս տիւրոսի եւ սիդոնի. եւ մտեալ 'ի տուն ոչ ումեք կամէր յայտնել, եւ ոչ կարաց ծածկել։ Լուաւ կին մի զնմանէ՝ որոյ դուստր իւր նեղեալ էր յայսոյ պղծոյ, եկն անկաւ առաջի նո͞ր։ Եւ կինն էր հեթանոս փիւնիկ ասորի յազգէ. եւ աղաչէր զնա՝ զի զդեւն հանցէ 'ի դստերէ նո͞ր։ Եւ յս͞ ասէ ցնա՝ թո՛յլ տուր՝ նախ յագեսցին մանկունք. զի ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց եւ արկանել շանց։ Նա պատասխանի ետ եւ ասէ. տէ՛ր եւ շունք 'ի փշրանաց սեղանոյ մանկանցն կերակրին։ Եւ ասէ ցնա՝ վս͞ այդր բանի երթ, ել դեւն 'ի դստերէ քումմէ։ Գնաց 'ի տուն իւր՝ եւ եգիտ ելեալ զդեւն, եւ զդուստրն զի անկեալ

դնէր ՚ի մահճիմ։

Եւ եղեալ միւսանգամ ՚ի սահմանացն Տիւ-րոսի և Սիդոնի, և եկն ՚ի ծովեզրն Գալի-լեացւոց ՚ի մէջ սահմանացն ՚ի Դեկապօլիս։ Եւ բերին առաջի ն՟ր խուլ մի և համր, և աղաչէին՝ զի ձեռն դիցէ ՚ի վերայ նորա։ Եւ առեալ զնա մեկուսի յամբոխէ անտի. արկ զմատունս իւր ընդ ականջս նորա և եթուք անդր. և կալաւ զլեզուէ նորա։ Հայեցաւ յերկինս՝ յոգւոց եհան՝ և ասէ եփփաթա՝ որ է բացիր։ Եւ նոյն ժամայն բացան լսելիք ն՟ր և լուծան կապանք լեզուի ն՟ր և խօսէր ուղիղ։ Եւ պատուիրեաց նոցա՝ զի մի՛ ումեք ասիցեն. և որչափ նա պատուիրէր նոցա, նոքա ևս առաւել քարոզէին։ Եւ ևս քան զևս զարմանային և ասէին, զա՟մ ինչ բարւոք գործեաց սա. զի խլից լսել տայ և համերց խօսել։

Գան ՚ի Բեթսայիդա, և ածեն առաջի ն՟ր կոյր մի, և աղաչէին զնա զի մերձեսցի ՚ի նա։ Եւ առեալ զձեռանէ կուրին եհան արտաքոյ շինին, եթուք յաչս ն՟ր և ձեռն եդ ՚ի վերայ ն՟ր, և հարցանէր ցնա թէ տե-սանիցէ՞ ինչ։ Նայեցաւ և ասէր, տեսանեմ զմարդիկս զի շրջին իբրև զծառս։ Դարձ-եալ եդ ձեռս ՚ի վերայ աչաց ն՟ր, եբաց և տեսանէր. ողջացաւ և տեսանէր համաբ-

ձակ զնմ։ Արձակեաց զնա ՚ի տուն իւր և ասէ, ՚ի շէնդ մի մտանիցես. այլ երթ ՚ի տուն քո. և յորժամ ՚ի շէնն մտանիցես, մի ումեք ասիցես ՚ի շէնին։

Եւ եկեալ առ աշակերտսն տեսին ամբոխ շուրջ զնոքօք. և զդպիրսն՝ զի վիճէին ընդ նոսա։ Եւ վաղվաղակի ամ ժողովուրդն իբրև տեսին զնա՝ զարմացան. և ընդ առաջ ընթացեալ՝ ողջոյն տային նմա։ Եւ եհարց ցնս, թէ զինչ վիճէիք ընդ նս։ Պատասխանի ետ մի ոմն ՚ի ժողովրդենէն և ասէ, վարդապետ՝ ածի զորդի իմ առ քեզ զոր ունի այս համր։ Եւ ուր հասանէ՝ զարկուցանէ զնա. և փրփրէ և կրճտէ զատամունս իւր և ցամաքի. և ասացի ցաշակերտսն քո զի հանցեն, և ոչ կարացին հանել զնա։ Պատասխանի ետ նց և ասէ, ո՛վ ազգ անհաւատ՝ մինչև յե՞րբ իցեմ առ ձեզ. մինչև ցե՞րբ անսայցեմ ձեզ. ածէք զնա առ իս։ Եւ ածին զնա առ նա. իբրև ետես զնա այսն՝ վաղվաղակի շարժլեաց զնա. և անկեալ յերկիր թաւալէր և փրփրեայր։ Եհարց ցհայր նորա և ասէ. քանի ժամանակք են յորմէհետէ այդ եղև դմա. և նա ասէ՝ ՚ի մանկութէ։ Բազում անգամ ՚ի հուր արկանէ զդա, և ՚ի ջուր՝ զի կորուսցէ. արդ՝ եթէ կարօղ ինչ ես, օգնեա մեզ

որ գթացեալ 'ի վերայ մեր։ Եւ յն ասէ
ցնա՝ ասացեր թէ կարող ես․ ամ ինչ հնա-
րաւոր է այնմ, որ հաւատայ։ Եւ վաղ-
վաղակի աղաղակեաց հայր մանկանն և ա-
սէ․ հաւատամ տէ՛ր՝ օգնեա անհաւատու-
թեան իմում։ Իբրև ետես յն եթէ կուտի
ժողովուրդն 'ի վերայ, սաստեաց այսոյն
պղծոյ և ասէ, համրդ և խուլ այս, ես
տամ հրաման, ե՛լ 'ի դմանէ և այլ մի՛ ևս
մտանիցես 'ի դա։ Եւ աղաղակեաց և յոյժ
լլկեաց զնա և ել․ և եղև պատանեակն
իբրև զմեռեալ․ մինչև բազմաց իսկ ասել
թէ մեռաւ։ Եւ յն կալաւ զձեռանէ նր՝
յարոյց զնա և կանգնեցաւ։ Եւ իբրև ե-
մուտ նա 'ի տուն, աշակերտքն առանձինն
հարցին ցնա՝ մեք ընդէ՞ր ոչ կարացաք հա-
նել զնա։ Եւ ասէ ցնս․ այդ ազգ ոչ իւիք
ելանէ, եթէ ոչ պահօք և աղօթիւք։
Եւ գան յերիքով․ և ընդ ելանել նր յե-
րիքովէ աշակերտօքն՝ և բազում ժողովր-
դով, որդի տիմէի բարտիմէոս կոյր՝ նստէր
մուրացիկ յանցս ճանապարհին։ Իբրև լու-
աւ թէ յն նազովրեցի է՝ սկսաւ աղաղա-
կել և ասել, որդի դաւթի յն ողորմեա՛ց
ինձ։ Եւ սաստէին նմա բազումք զի լռ-
եսցէ։ Եւ նա առաւել ևս աղաղակէր
որդի դաւթի ողորմեա՛ց ինձ։ Ո տեղի առ

յս, և հրամայեաց կոչել զնա. կոչեն զկոյրն և ասեն ցնա, քաջալերեա՛ց արի կոչէ զքեզ։ Եւ նա ընկեցեալ զձորձս իւր՝ յարեաւ և եկն առ յս։ Պատասխանի ետ նմա յս և ասէ՝ զի՞նչ կամիս թէ արարից քեզ. ասէ ցնա կոյրն՝ ռաբբունի՝ զի բացայայց։ Եւ յս ասէ ցնա. երթ՝ հաւատք քո կեցուցին զքեզ. և վաղվաղակի բացաւ, և երթայր զհետ նորա ի ճանապարհին։

---

Սուրբ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Ղուկասու։

## Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ էջ ի Կափառնաում ի քաղաքն Գալիլեացւոց՝ և ուսուցանէր զնոսա ի շաբաթուն։ Եւ զարմանային ընդ վարդապետութիւն նորա՝ զի իշխանութեամբ էր բան նորա։ Եւ էր ի ժողովրդեանն այր մի՝ զոր ունէր այս դիւի պղծոյ. և աղաղակեաց ի ձայն մեծ և ասէ՝ Թուլացո՛, զի՞ կայ մեր և քո յս Նազովրեցի. եկիր կորուսանել զմեզ՝ գիտեմ զքեզ՝ ով ես սուրբդ այ։ Սաստեաց ի նա յս և ասէ՝ պապանձեա՛ց և ե՛լ ի դմանէ. զգետնեաց զնա դեւն ի միջի անդ, և ել ի նմանէ. և ինչ ոչ վնասեաց նմա՝ Եւ եղեն զարմանալիք ի վր ամենեցուն. խօ-

սէին ընդ միմեանս և ասէին, զի՞նչ է բանս այս՝ զի իշխանութ̅ և զօրութ̅ սաստէ՛ այսոց պղծոց և ելանեն։ Եւ երթայր հռչակ զնմանէ ընդ ամենայն տեղիս շուրջ զգաւառաւն։

Եւ յարուցեալ ՚ի ժողովրդենէ անտի՝ եմուտ ՚ի տուն Սիմոնի. և զոքանչ Սիմոնի տագնապէր ջերմամբ մեծաւ. և աղաչեցին զնա վասն նր̅։ Եկաց առ նմա, սաստեաց ջերմանն, և եթող զնա. և վաղվաղակի յարեաւ և պաշտէր զնոսա։ Եւ ընդ արևուն մտանել՝ որոց էին հիւանդք ՚ի պէս պէս ցաւս՝ բերէին զնոսա առ նա։ Եւ նա իւրաքանչիւր ումեք ՚ի նոցանէ դնէր ձեռս և բժշկէր զնոսա։ Ելանէին դևք ՚ի բազմաց՝ աղաղակէին և ասէին, եթէ դու ես որդի ա̅յ. և նա սաստէր՝ և ո՛չ տայր նոցա թոյլ խօսիլ, զի գիտէին զնա թէ քրիստոսն է։

Եւ եղև ՚ի հասանելն նորա ՚ի մի քաղաքացն, ահա՛ այր մի լի՛ բորոտութ̅ իբրև տեսեալ զյս̅, անկեալ ՚ի վր̅ երեսաց աղաչեաց զնա, և ասէ. տէ՛ր եթէ կամիս, կարօղ ես զիս սրբել։ Ձգեաց զձեռն իւր՝ հասոյց ՚ի նա և ասէ, կամի՛մ սրբեա՛ց. և վաղվաղակի գնաց ՚ի նմանէ բորոտութ̅ին։ Եւ նա պատուիրեաց նմա մի՛ ումեք ասել. այլ

Թէ՝ երթ ցոյց զանձն քո քահանային, և մատո պատարագ վն սրբութե քո. որպ և հրամայեաց մովսէս 'ի վկայութի նց։ Եւ յորդէր աւաւել բանն զնմանէ. և ժողովէին ժողովուրդք բազումք լսել և բժշկել 'ի հիւանդութենէ իւրեանց։ Եւ նա խոյս տայր յանապատ տեղիս, և կայր յաղօթս։

Եւ եղև 'ի միում աւուրց և ինքն ուսուցանէր, և փարիսեցիքն և օրինացն վարդապետք նստէին. որ ժողովեալ էին յամ քաղաքաց գալիլեացւոց և հրէաստանի և երուսաղէմի. և զօրութի տն էր 'ի բժշկել զնոսա։ Եւ ահա արք բերէին մահճօք զայր մի՝ որ էր անդամալոյծ. և խնդրէին զնա մուծանել 'ի ներքս և դնել առաջի նր։ Եւ իբրև ոչ գտանէին թէ ընդ որ մուծանիցեն զնա 'ի ներքս վն ամբոխին, ելին 'ի տանիս, և 'ի ցուոցն կախեցին զնա, և իջուցին մահճօքն հանդերձ 'ի մէջ առաջի յի։ Եւ տեսեալ զհաւատսն նց՝ ասէ ցնա, այր դու՝ թողեալ լիցին քեզ մեղք քո։ Սկսան խորհել դպիրքն և փարիսեցիքն և ասեն. ո՞ է սա որ խօսի զհայհոյութիս. ո՞վ կարէ թողուլ զմեղս՝ բայց միայն ած։ Իբրև գիտաց յս զխորհուրդս նց, պատասխանի ետ և ասէ ցնս, զի՞ խորհիք 'ի սիրտս ձեր։

Զի՞նչ դիւրագոյն է ասել թողեալ լիցին քեզ մեղք քո, եթէ ասել արի՛ և գնա՛։ Բայց զի գիտասջիք եթէ իշխանութի՛ւն ունի որդի մարդոյ յերկրի թողուլ զմեղս, ասէ ցանդամալոյծն, քեզ ասեմ՝ արի՛ առ զմահիճս քո և երթ 'ի տուն քո։ Եւ առ ժամայն յարուցեալ առաջի ամենեցուն՝ էառ զեւրեւ յորոյ վերայ անկեալ դնէր, գնաց 'ի տուն իւր՝ և փառաւոր առնէր զա՟ծ։ Զարմանք կալաւ զա՟մենեան, և փառաւոր առնէին զա՟ծ. լի եղեն ահիւ և ասեն, եթէ

տեսաք այսօր նոր նշան։

Եւ եղև 'ի միւսում շաբաթուն մտանել նմա, 'ի ժողովուրդն և ուսուցանել. և էր անդ այր մի՝ և ձեռն իւր աջ գօսացեալ էր։ Եւ սպասէին նմա դպիրքն և փարիսեցիքն՝ թէ 'ի շաբաթուն բժշկիցէ՝ զի գտանիցեն չարախօսութիւն զնմանէ։ Եւ նա գիտէր զխորհուրդս ն՟ց. ասէ ցայրն որոյ ձեռնն գօսացեալ էր, արի՛ անց 'ի մէջ. և նա յարուցեալ եկաց։ Ասէ ցնոսա յ՟ս՝ հարցից ինչ զձեզ. զի՞նչ արժան է 'ի շաբաթու, բարի՞ ինչ առնել, եթէ չար գործել. ոգի մի ապրեցուցանել՝ թէ կորուսանել։ Եւ հայեցեալ շուրջ զամենեքումբք զայրագին, ասէ ցնա՝ ձգեա՛ ըզձեռն քո, և նա ձգեաց. և հաստատեցաւ

ձեռն նորա իբրև զմիւսն։ Եւ նոքա լցան յիմարութե̄, և խօսէին ընդ միմեանս՝ թէ
զինչ առնիցեն յիսուսի։

Եւ իջեալ նոքօք հանդերձ ՚ի տեղի մի տափարակ. և ժողով աշակերտացն նր̄, և բազմութ̄ի յոյժ ժողովրդեանն, յա̄մ հրէաստանէ և յերուսաղեմէ և յայնմ կողմանէ և ՚ի ծովեզերէն տիւրոսի և սիդոնի։ Որ եկին լսել ՚ի նմանէ և բժշկել ՚ի հիւանդութենէ իւրեանց. և նեղեալքն յայսոց պղծոց բժշկէին։ Եւ ամենայն ժողովուրդն խնդրէր մերձենալ ՚ի նա, զի զօրութիւն բազում ելանէր ՚ի նմանէ՝ և
բժշկէր զամենեսին։

Եւ իբրև կատարեաց զա̄մ բանս իւր ՚ի լսելիս ժողովրդեանն, եմուտ ՚ի կափառնայում։ Հարիւրապետի ուրումն ծառայ չարաչար հիւանդացեալ՝ մերձ էր ՚ի վախճանել՝ որ էր նմա պատուական. իբրև լուաւ զյս̄է, առաքեաց զծերսն ՚ի հրէից՝ աղաչէր զնա զի եկեսցէ ապրեցուսցէ զծառայն նորա։ Եւ նոքա եկեալ առ յս̄ աղաչէին զնա ստէպ՝ և ասէին, թէ արժանի է՝ որում զշնորհս զայս առնես. զի սիրէ զազգս մեր. և զժողովրդանոցն նա շինեաց մեզ։ Եւ յս̄ գնաց ընդ նս̄. իբրև ոչ ինչ կարի հեռի էր ՚ի տանէն, յղեաց

առ նա հարիւրապետն բարեկամս, և ասէ
ցնա, տէր՝ մի՛ ինչ աշխատ լինիր․ զի չեմ
բաւական եթէ ընդ յարկաւ իմով մտանի-
ցես։ Վասն որոյ և ո՛չ զանձն համարեցայ
արժանի առ քեզ գալոյ․ այլ ասա՛ բանիւ,
և բժշկեսցի մանուկս իմ։ Քանզի և ես
այր մի եմ կարգեալ ընդ իշխանութեամբ․ ու-
նիմ ընդ ինև զինուորս․ և ասեմ սմա երթ,
և երթայ․ և այլում թէ եկ, և գայ․ և ծա-
ռայի իմում թէ արա՛ զայս, և առնէ։ Եւ
իբրև լուաւ զայս Յս զարմացաւ․ դարձաւ
առ ժողովուրդն որ երթային զհետ նր և
ասէ՝ ամէն ասեմ ձեզ՝ թէ և ո՛չ յիսրայ-
էլի այսչափ հաւատս գտի։ Եւ դարձան
անդրէն պատգամաւորքն ՚ի տուն, և գտին
զծառայն հիւանդ՝ բժշկեալ։

Եւ եղև ՚ի վաղիւն երթայր ՚ի քաղաք մի,
որում անուն էր Նային․ երթային ընդ
նմա և աշակերտք նորա և ժողովուրդ բա-
զում։ Իբրև մերձ եղև ՚ի դուռն քաղա-
քին, և ահա ելանէր մեռեալ մի՝ որդի միա-
մօր մօր իւրոյ․ և նա էր այրի, և ժողո-
վուրդ բազում քաղաքին էր ընդ նմա։
Իբրև ետես զնա տէր՝ գթացաւ ՚ի նա և
ասէ, մի՛ լար։ Եւ մատուցեալ մերձեցաւ
՚ի դագաղն․ և որք բարձեալն տանէին՝
զտեղի առին․ և ասէ՝ պատանի դու՝ քեզ

աւեմ արի։ Կանգնեցաւ և նստաւ մեռեալն, և սկսաւ խօսել, և ետ զնա ցմայր իւր։ Եւ ահ կալաւ զամենեսին և փառաւոր առնէին զա՟ծ և ասէին՝ թէ մարգարէ ոմն մեծ յարուցեալ է 'ի միջի մերում. և թէ այց արար ա՟ծ ժողովրդեան իւրում 'ի բարութիւն։ Եւ ել զրոյցս այս ընդ ա՟մ հրէաստան վ՟ն նորա՝ և ընդ ամենայն կողմանս աշխարհին։

Եւ պատմեցին յովհաննու աշակերտքն իւր վ՟ն ամենայնի այսորիկ։ Եւ կոչեաց առ ինքն երկուս ոմանս յաշակերտացն իւրոց յովհաննէս. առաքեաց առ տ՟ր և ասէ, դո՟ւ ես որ գալոցն ես, եթէ այլում ակն կալցուք։ Եւ եկեալ արքն առ նա ասեն՝ յովհաննէս մկրտիչ առաքեաց զմեզ առ քեզ և ասէ՝ դո՟ւ ես որ գալոցն ես, եթէ այլում ակն կալցուք։ Եւ 'ի նմին ժամու բժշկեաց զբազումս 'ի հիւանդութե՟ց և 'ի հարուածոց և յայսոց չարաց. և կուրաց բազմաց շնորհեաց տեսանել։ Պատասխանի ետ նոցա և ասէ՝ երթայք պատմեցէք յովհաննու զոր տեսիք և լուայք, զի կոյրք տեսանեն, և կաղք գնան, բորոտք սրբին, խուլք լսեն, մեռեալք յառնեն, աղքատք աւետարանին, Եւ երանի որ ոչ գայթակղեսցի յիս։

Եւ նաւեցին իջին յաշխարհն Գերգեսաց-ւոց որ է յայնկոյս հանդէպ Գալիլեայ։ Եւ ընդ ելանելն նր՟ 'ի ցամաք՝ պատահեաց այր մի 'ի քաղաքէն՝ յորում էին դեւք. եւ բազում ժամանակս չէր հանդերձ զգեցեալ՝ եւ ոչ 'ի տան բնակեալ, այլ 'ի գերեզմանս. Եւ տեսեալ զՅս՟, աղաղակեաց եւ անկաւ առաջի նր՟, եւ ասէ մեծաձայն. զի՞ կայ իմ եւ քո Յս՟ որդի Այ՟ բարձրելոյ, աղաչեմ ըզքեզ՝ մի՛ տանջեր զիս։ Քանզի հրամանտայր այսոյն պղծոյ ելանել 'ի մարդոյ անտի. քանզի բազում ժամանակս յափշտակեալ էր զնա, եւ կապէր 'ի շղթայս եւ պահէր յերկաթս. եւ խզէր զկապանսն՝ եւ վարէր 'ի դիւէն յանապատս։ Եհարց ցնա Յս՟ եւ ասէ, զի՞նչ անուն է քեզ. եւ նա ասէ՝ լեգէովն. զի դեւք բազումք մտեալ էին 'ի նա։ Եւ աղաչէին զնա՝ զի մի՛ հրաման տացէ նց՟ երթալ յանդունդս։ Եւ էր անդ՝ երամակ մի խոզից բազմաց արօտական 'ի լերինն. եւ աղաչեցին զնա՝ զի հրաման տացէ նց՟ մտանել 'ի նս՟. եւ հրամայեաց նց՟։ Եւ ելեալ դեւքն յառնէն՝ մտին 'ի խոզեանն. եւ դիմեաց երամակն 'ի գահէ անտի 'ի ծովակն եւ հեղձաւ։ Իբրեւ տեսին խոզարածքն զեղեալն՝ փախեան. եւ պատմեցին 'ի քաղաքին եւ յագարակսն։ Եւ ելին

տեսանել զգործսն, և եկին առ յիս, և գըտին զայրն ուստի դևքն ելեալ էին՝ զգեցեալ և զգաստացեալ նստէր առ ոտսն յի, և երկեան։ Պատմեցին նց՝ որոց տեսեալն էր, թէ զիա՞րդ փրկեցաւ դիւահարն։ Եւ աղաչէր զնա ամ բազմութիւն շուրջ զկողմամբքն գերգեսացւոց. գնալ ՚ի սահմանաց նց. քանզի ահիւ մեծաւ տագնապէին, և նա մտեալ ՚ի նաւ դարձաւ անդրէն։ Աղաչէր զնա այրն ուստի դևքն ելեալ էին լինել ընդ նմա։ Արձակեաց զնա և ասէ. դարձ ՚ի տուն քո և պատմեա զոր միանգամ արար քեզ ած։ Գնաց ՚ի քաղաքն՝ և քարոզէր զոր ինչ արար նմա յի։

Եւ իբրև դարձաւ անդրէն յի, ընկալաւ զնա ժողովուրդն, քանզի ամքեան ակն ունէին նմա։ Եւ ահա եկն այր մի՝ որում անուն էր Յայրոս. և նա էր իշխան ժողովրդեանն. անկեալ առ ոտսն յի, աղաչէր զնա մտանել ՚ի տուն նորա։ Զի դուստր միամօր էր նորա, ամաց իբրև երկոտասանից. և էր մերձ ՚ի մահ. և ընդ երթալն նր՝ ժողովուրդքն նեղէին զնա։ Եւ կին մի էր ՚ի տեռատեսութեան արեան՝ ամաց երկոտասանից. որ ՚ի բժիշկս ծախեալ էր զամ ինչս իւր. որում ոչ էր լեալ հնար յումեքէ բժշկիլ։ Մատուցեալ յետոյ մերձեցաւ

'ի քղանցս հանդերձի նր, և նոյն ժամայն եկաց բղխումն արեան նր ։ Եւ ասէ Յս՝ ո՞վ է որ մերձեցաւն յիս · Իբրև ամենեքեան ուրանային, ասէ Պետրոս՝ և որք ընդ նմա էին · վարդապետ՝ ժողովուրդք պնդեն և նեղեն զքեզ ։ Եւ ասէ Յս՝ ոմն մերձեցաւ յիս · քանզի գիտացի եթէ զօրութի ել յինէն ։ Իբրև ետես կինն՝ եթէ ոչ ծածկեցաւ 'ի նմանէ, եկն դողալով և անկաւ առաջի նր · թէ վն որոյ իրաց մերձեցաւ 'ի նա, պատմեաց առաջի ամ ժողովրդեանն · և եթէ որպէս բժշկեցաւ առժամայն ։ Եւ ասէ՝ քաջալերեաց դուստր · հաւատք քո կեցուցին զքեզ՝ երթ 'ի խաղաղութիւն ։

Եւ մինչդեռ նա խօսէր, գայ ոմն 'ի տանէ ժողովրդապետին՝ և ասէ ցնա, մեռաւ դուստրն քո, մի' ինչ աշխատ առնէր զդա ։ Իսկ Յս իբրև լուաւ, պատասխանի ետ նմա և ասէ · մի' երկնչիր, միայն հաւատա և կեցցէ ։ Եւ մտեալ 'ի տունն՝ ոչ զոք եթող մտանել · բայց միայն զպետրոս և ըզյակոբոս և զյովհաննէս, և զհայր մանկանն և զմայր նր ։ Լային ամենեքեան և կոծէին զնա · և նա ասէ՝ մի' լայք, զի ոչ է մեռեալ՝ այլ ննջէ ։ Եւ նոքա ծաղր առնէին զնա · զի գիտէին թէ մեռաւ ։ Եւ

նո՛ր հանեալ զամենեսին արտաքս , կալեալ զձեռանէ նո՛ր՝ բարբառեցաւ և ասէ , արի կա՛ց մանուկ դու ։ Եւ դարձաւ ոգի նո՛ր և կանգնեցաւ վաղվաղակի . և հրամայեաց տալ նմա ուտել ։ Եւ զարմացան ծնօղքն նո՛ր . և նա պատուիրէր մի՛ ումեք ասել որ

ինչ եղեն ։

Եւ եղև ՚ի վաղիւն մինչ իջանէին նոքա ՚ի լեռնէ անտի , ընդ առաջ եղև նմա ժողովուրդ բազում ։ Եւ ահա այր մի ՚ի ժողովրդենէ անտի աղաղակեաց և ասէ , վարդապետ աղաչեմ զքեզ հայեաց յորդի իմ . զի միածին է ինձ ։ Եւ ահա այս հարկանէ ՚ի նմա . և յանկարծ գոչէ . և զարկուցանէ և թաւալեցուցանէ զնա և փրփրեցուցանէ . և հազիւ մեկնի ՚ի նմանէ խորտակեալ զնա ։ Եւ աղաչեցի զաշակերտսն քո զի հանիցեն զնա , և ոչ կարացին ։ Պատասխանի ետ Յս և ասէ , ո՛վ ազգ անհաւատ և թիւր . մինչև յե՞րբ եղէց ընդ ձեզ՝ և անսայցեմ ձեզ , մատո այսր զորդին քո ։ Եւ մինչդեռ մատչէր , զարկոյց զնա դևն և շարժեաց ։ Սաստեաց Յս այսոյն պղծոյ և բժշկեաց զմանուկն և ետ զնա ցհայր իւր ։ Եւ զարմանային ամենեքեան ՚ի վ՛ր մեծամեծայն այ . և ՚ի զարմանալ ամենեցուն ՚ի վ՛ր ամի զոր առնէր , ասէ ցաշակերտսն իւր . դիք դուք ՚ի լսելի

ձեր զրանս պայծառին, զի որդի մարդոյ
մատնելոց է 'ի ձեռս մարդկան:

Եւ հանէր դև մի համր. և եղև յելանել դիւին՝ խօսեցաւ համրն. և զարմացան ամ՟ ժողովուրդքն: Եւ ոմանք 'ի նոցանէ ասեն՝ բէեղզեբուղաւ իշխանաւն դիւաց հանէ դա զդևս: Եւ այլք փորձէին և նշան յերկնից խնդրէին 'ի նմանէ, Իսկ ն՟ր գիտացեալ զխորհուրդս ն՟ց, ասէ ցն՟ս. ամ՟ թագաւորութի՟ բաժանեալ յանձն՝ աւերի. և տուն բաժանեալ յանձն՝ կործանի: Ապա եթէ և սատանայ բաժանեցաւ յանձնէ, զիարդ կայցէ թագաւորութի՟ ն՟ր. զի ասէք զինէն թէ բէեղզեբուղաւ իշխանաւըն դիւաց հանէ դա զդևս: Եթէ ես բէեղզեբուղաւ հանեմ զդևս, որդիքն ձեր իւ հանիցեն. վասն այդորիկ նոքին եղիցին ձեզ դատաւորք: Իսկ եթէ մատամբ ա՟յ հանեմ զդևս, ապա հասեալ է 'ի վերայ ձեր արքայութի՟ ա՟յ: Յորժամ հզօր վառեալ պահիցէ զտուն իւր, 'ի խաղաղութե՟ են ինչք ն՟ր. բայց եթէ հզօրագոյն քան զնա 'ի վ՟ր եկեալ յաղթեսցէ նմա, զսպառազինութին հանէ յոր յուսացեալն էր, և զաւար նորա բաշխեսցէ: Որ ոչ է ընդ իս՝ հակառակ իմ է. և որ ոչ ժողովէ ընդ իս, ցրուէ: Յորժամ այսն ելանիցէ 'ի մարդոյ՝ շրջի ընդ

անջրդի՛ն տեղիս․ խնդրէ հանգիստ․ և իբրև ո՛չ գտանէ՝ ասէ, դարձայց անդրէն ՚ի տուն իմ ուստի ելի։ Եւ գայ գտանէ մաքրեալ և յարդարեալ։ Յայնժամ երթայ և առնու եօթն այլ այսս չար ևս քան զինքն՝ և մտանէ բնակէ անդ․ և լինի յետինն մարդոյն այնորիկ չար քան զառաջինն։ Եւ եղև մինչդեռ խօսէր զայս՝ ձայն եբարձ կին մի ՚ի ժողովրդենէ անտի և ասէ․ երանի է որովայնին որ կրեաց զքեզ՝ և ստեանցն որ դիեցուցին զքեզ։ Եւ նա ասէ, նա երանի այնոցիկ, որ լսեն զբանն Աստուծոյ

և պահեն։

Եւ ուսուցանէր ՚ի միում ժողովրդանոցացն ՚ի շաբաթու։ Եւ ահա կին մի զոր ունէր այս հիւանդութե̅ ամս ութուտասն․ և էր կորկամեալ և ո՛չ կարէր ամենևին ՚ի վեր հայել։ Եւ տեսեալ զնա յի̅ կոչեաց առ ինքն և ասէ ցնա, կին դու՝ արձակեալ ես ՚ի հիւանդութե̅ քումմէ։ Եւ եդ ՚ի վր̅ նր̅ ձեռն․ և առ ժամայն ուղղեցաւ և փառաւոր առնէր զա̅ծ։ Պատասխանի ետ ժողովրդապետն ցասուցեալ՝ թէ ընդէ՞ր ՚ի շաբաթու բժշկեաց յի̅ս․ և ասէ ցժողովուրդն վեց օր է՝ յորս արժան է գործել․ յայնս եկեալ բժշկեցարուք, և մի յաւուր շաբաթու։ Պատասխանի ետ նմա տէր և ասէ,

կեղծաւորք՝ իւրաքանչիւրոք 'ի ձէնջ 'ի շաբաթու ո՞չ արձակէ զեզն իւր կամ զէշ 'ի մսրոց և տանի տայ ջուր։ Իսկ այս դուստր աբրահամու էր, զոր կապեաց սատանայ ահաւադիկ ութուտասն ամ, ո՞չ էր արժան արձակել 'ի կապանաց անտի 'ի շաբաթու։ Եւ զայս խօսեալ, յամօթ լինէին ամենեքին որ հակառակն կային նմա։ Եւ ամ ժողովուրդն ուրախ լինէր 'ի վր ամ փառաւորութեանցն՝ որ գործէին 'ի նմանէ։

Եւ եղև 'ի մտանելն նր 'ի տուն ուրումն իշխանացն փարիսեցւոց 'ի շաբաթու ուտել հաց՝ և նոքա սպասէին նմա։ Եւ ահա այր ոմն էր անդ ջրգողեալ առաջի նորա։ Պատասխանի ետ յս և ասէ ցօրինաւորս և ցփարիսեցիս՝ եթէ արժան իցէ 'ի շաբաթու բժշկել. և նոքա լուռ եղեն։ Եւ բուռն հարեալ զնմանէ՝ բժշկեաց զնա և արձակեաց։ Եւ ասէ ցնս՝ ո՞յր ուրուք 'ի ձէնջ էշ կամ եզն անկանիցի 'ի ջրհոր, և ո՞չ վաղվաղակի հանիցէ զնա յաւուր շաբաթու։ Եւ ո՞չ կարացին տալ նմա պատասխանի առ այն։

Եւ եղև մինչ երթայր նա յեղմ, և ինքն անցանէր ընդ մէջ սամարիայ և գալիլեացւոց։ Եւ մինչդեռ մտանէր 'ի գեօղ ուրեմն, պատահեցին նմա տասն այր բորոտ,

որք կային 'ի հեռաստանէ . բարձին զձայնս
և ասեն՝ յն վարդապետ՝ ողորմեա մեզ :
Եւ իբրև ետես զնս՝ ասէ ցնոսա . երթայք
ցուցէք զանձինս քահանայից . և եղև իբ-
րև գնացին առ ժամայն սրբեցան : Մի ոմն
'ի նոցանէ իբրև ետես եթէ բժշկեցաւ ,
դարձաւ անդրէն , 'ի ձայն մեծ փառաւոր
ռանէր զած , Անկաւ առ ոտս նորա 'ի վր
երեսաց իւրոց՝ և գոհանայր զնմանէ . և
ինքն էր սամարացի : Պատասխանի ետ յն և
ասէ , ոչ տասն սոքա սրբեցան . իսկ արդ
ինունքն ուր են : Զի ոչ գտան դառնալ
տալ փառս այ . բայց միայն այլազգիս այս :
Եւ ասէ ցնա . արի գնա՛ զի հաւատք քո
կեցուցին զքեզ :
Եւ եղև 'ի մտանել նորա յերիքով՝ կայր ոմն
նստէր առ ճանապարհաւն մուրացիկ : Իբրև
լուաւ զանցանել ժողովրդեանն , հարցա-
նէր թէ զինչ իցէ այն : Եւ պատմեցին
նմա թէ յն նազովրեցի անցանէ : Աղաղակ
եաց և ասէ՝ յն որդի դաւթի՝ ողորմեա
ինձ : Եւ որ առաջին երթային՝ սաստէին
նմա զի լռեսցէ . և նա ևս առաւել աղաղա
կէր որդի դաւթի՝ ողորմեա ինձ : Զտեղի
կալ յն՝ և հրամայեաց ածել զնա առ ինքն .
և իբրև մերձ եղև առ նա՝ եհարց զնա և
ասէ , զինչ կամիս դու զի արարից քեզ . և նա

ասէ՝ տէ՛ր զի բացցին աչք իմ, և տեսից։ Եւ յ՟ս ասէ ցնա՝ Հայեա՛ց, հաւատք քո կեցուցին զքեզ։ Եւ առ ժամայն ետես. երթայր զհետ ն՟ր և փառաւոր առնէր զա՟ծ. և ամենայն ժողովրդեանն տեսեալ՝ տայր օրհնութիւն ա՟յ։

---

Սրբոյ Աւետարանին Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

## Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ յետ երկուց աւուրց՝ ել անտի և գնաց ՚ի գալիլեա։ Զի ինքն իսկ յ՟ս վկայեաց՝ եթէ մարգարէ յիւրում գաւառի պատիւ ոչ ունի։ Եւ յորժամ եկն նա ՚ի գալիլեա. ընկալան զնա գալիլեացիքն. զի տեսեալ էր զա՟մ նշանսն, զոր արար յե՟մ ՚ի տօնին. քանզի և նոքա եկեալ էին ՚ի տօնն։ Եկն դարձեալ ՚ի կանա գալիլեացւոց՝ ուր արար զջուրն գինի։ Եւ անդ էր թագաւորազն մի, որոյ որդի ն՟ր հիւանդ կայր ՚ի կափառնաում։ Նա լուեալ եթէ յ՟ս եկեալ է ՚ի հրէաստանէ ՚ի գալիլեա, եկն առ նա. և աղաչէր զի իջցէ և բժշկեսցէ զորդի նորա՝ քանզի մերձ էր ՚ի մեռանել։ Ասէ ցնա, եթէ ոչ նշանս ինչ և արուեստս տեսանէք՝ ոչ հա-

ւտայր։ Ասէ ցնա Թագաւորազն, տէր էջ մինչչև մեռեալ իցէ մանուկն իմ։ Ասէ ցնա Յս՟, երթ որդին քո կենդանի է. եւ հաւատաց այրն բանին զոր ասաց նմա Յս՟ եւ գնաց։ Եւ մինչդեռ իջանէր՝ ընդ առաջ ելեն նմա ծառայքն նր՟. աւետիս ետուն եւ ասեն՝ թէ մանուկն նորա կենդանի է։ Հարցանէր ցնոսա վասն ժամուն՝ յորում ապաքինեցաւ. եւ ասեն ցնա՝ երէկ յեօթնե-րորդ ժամուն եթող զնա ջերմն։ Գիտաց հայրն նր՟՝ եթէ յայնմ ժամու՝ յորում ա-սացն ցնա Յս՟ թէ որդին քո կենդանի է. եւ հաւատաց ինքն եւ ամ՟ տուն իւր։ Զայս դարձեալ երկրորդ նշան արար Յս՟՝ եկեալ ՚ի Հրէաստանէ ՚ի Գալիլեա։

Յետ այսորիկ տօնէր Հրէից, եւ ել Յս՟ յե-րուսաղէմ։ Եւ էր յԵմ՟ ՚ի պրոբատիկէ աւազանին՝ որ կոչէր եբրայեցերէն բեթ-հեզդայ՝ հինգ սրահ։ Ընդ այնոսիկ անկեալ դնէր բազմութիւն յոյժ հիւանդաց. կուրաց՝ կա-ղաց՝ գօսացելոց՝ որ ակն ունէին ջրոյն յու-զելոյ։ Եւ հրեշտակ տն՟ իջանէր ըստ ժա-մանակի յաւազանն՝ եւ յուզէր զջուրսն. եւ որ նախ ՚ի շարժմն՟ ջրոյն իջանէր յա-ւազանն՝ բժշկէր, ոչ ունելով նշան հիւան-դութն՟։ Եւ անդ էր այր մի, որոյ երե-սուն եւ ութ ամ էր ՚ի հիւանդութե՟ իւրում։

Զնա իբրև ետես Յս զի անկեալ դնէր,
և գիտաց եթէ բազում ժամանակք են այ-
նուհետև, ասէ ցնա՝ կամի՞ս ողջ լինել։
Պատասխանի ետ նմա հիւանդն. տէ՛ր ո՛չ
զոք ունիմ, թէ յորժամ ջուրքն յուզիցին,
արկցէ զիս յաւազանն. և մինչ ես գանգա-
ղիմ, այլ ոք քան զիս յառաջագոյն իջանէ։
Ասէ ցնա Յս, արի՛ առ զմահիճս քո և գնա։
Եւ ողջացաւ այրն. և յարեաւ առ զմահիճս
իւր և շրջէր. և էր շաբաթ յաւուրն յայն-
միկ։ Ասէին Հրեայքն ցբժշկեալն՝ շաբաթ է
և ո՛չ է արժան քեզ առնուլ զմահիճս քո։
Պատասխանի ետ նց և ասէ. որ բժշկեացն
զիս, նա ասաց ցիս, ա՛ռ զմահիճս քո և գնա։
Հարցին ցնա և ասեն, ո՞վ է այրն՝ որ ասաց
ցքեզ, ա՛ռ զմահիճս քո և շրջեա՛ց։ Եւ բժ-
շկեալն ո՛չ գիտէր թէ ո՛վ իցէ. քանզի
Յս խոյս ետ վն ամբոխին ՚ի տեղւոջէ անտի։
Յետ այսորիկ գտանէ զնա Յս ՚ի տաճա-
րին, և ասէ ցնա. ահաւասիկ ողջացար, մի՛
ևս մեղանչեր, զի մի՛ չար ևս ինչ լինիցի քեզ։
Գնաց այրն և պատմեաց Հրէիցն, եթէ Յս
էր որ բժշկեացն զիս։ Եւ վասն այնորիկ
հալածէին զՅս Հրեայքն զի զայն առնէր
՚ի շաբաթու։ Եւ Յս պատասխանի ետ նց՝
Հայր իմ մինչև ցայժմ գործէ՝ և ես գոր-
ծեմ։ Վասն այնորիկ առաւել խնդրէին

հրեայքն սպանանել զնա, զի ոչ միայն լու-
ծանէր զշաբաթս, այլ և հայր իւր կոչէր
զա̄ծ. և հաւասար առնէր զանձն ա̄յ։

Իսկ մինչդեռ անցանէր ետես այր մի կոյր
ի ծնէ. և հարցին ցնա աշակերտքն նր̄ և
ասեն. ռաբբի՝ ո՞յր մեղս է. սորա՞, թէ
հօր և մօր իւրոյ՝ զի կոյր ծնցի։ Պատաս-
խանի ետ յ̄ս. ոչ դորա մեղս է, և ոչ հօր
և մօր իւրոյ, այլ զի յայտնի լիցին գործքն
ա̄յ ի դմա։ Իսկ ինձ պարտ է գործել զգ-
գործս այնորիկ որ առաքեացն զիս՝ մինչ
որ կայ. գայ գիշեր, յորժամ ոչ ոք կարէ
գործել։ Մինչդեռ յաշխարհի եմ, լոյս եմ
աշխարհի։ Զայս իբրև ասաց, եթուք ի
գետին. և արար կաւ ի թքոյն, և ծեփեաց
զկաւն ի վ̄ր աչաց կուրին։ Իսկ ասէ ցնա՝
երթ լուա յաւազանին Սելովմայ՝ որ թարգ-
մանի առաքեալ. չոքաւ լուացաւ, եկն և
տեսանէր։ Իսկ դրացիքն՝ և որոց տեսեալ
էր զնա յառաջագոյն եթէ մուրացիկ էր,
ասէին՝ ո՞չ սա էր որ նստէրն և մուրա-
նայր. կէսքն ասէին նա է. այլքն ասէին ո՞չ՝
այլ նման է նմա. և ինքն ասէր՝ թէ ես եմ։
Ասեն ցնա՝ իսկ զիարդ բացան աչք քո։
Նա ետ պատասխանի՝ այր մի՝ որում յ̄ն
ասեն, կաւ արար և ծեփեաց զաչս իմ, և
ասէ ցիս՝ երթ ի Սելովամ և լուա. չոքայ

լուացայ՝ և տեսանեմ։ Ասեն ցնա՝ ո՞ւր է նա. ասէ ցն՟ս՝ ոչ գիտեմ։ Ածին առ փարիսեցիսն զնա՝ որ երբեմն կոյրն էր։ Եւ էր շաբաթ յորժամ զկաւն արար Յս՟ և եբաց զաչս կուրին։ Դարձեալ հարցանէին զնա փարիսեցիքն՝ թէ զիա՞րդ տեսանես. և նա ասէ ցնոսա՝ կաւ եդ ՚ի վր՟ աչաց իմոց, և լուացայ և տեսանեմ։ Ասեն ոմանք ՚ի փարիսեցւոցն. ոչ է այրն այն յԱյ՟՝ զի զշաբաթս ոչ պահէ. կէսքն ասէին, իսկ զիա՞րդ կարէ մարդ մեղաւոր այսպիսի նշանս առնել. և էին հերձուածք ՚ի մէջ նոցա։ Ասեն դարձեալ ցկոյրն՝ դու զի՞ ասես վս՟ նորա՝ զի եբաց զաչս քո. և նա ասէ՝ թէ մարգարէ է։ Եւ ոչ հաւատային հրէայքն ըզ նմանէ՝ եթէ կոյր էր և բացաւ, մինչև կոչեցին զծնողս բացելոյն։ Հարցին ցնոսա և ասեն. սա՞ է որդին ձեր, զորմէ դուքն ասէիք թէ կոյր ծնաւ, արդ՝ զիա՞րդ տեսանէ։ Պատասխանի ետուն նմ՟ ծնողքն նր՟ և ասեն. գիտեմք՝ զի սա է որդին մեր և զի կոյր ծնաւ. բայց զիա՞րդ այժմդ տեսանէ՝ ոչ գիտեմք. կամ թէ ո՛ եբաց զաչս դորա՝ մեք ոչ գիտեմք. ցդա՛ իսկ հարցէք. ինքնին ՚ի չափ հասեալ է՝ ինքն իսկ խօսեսցի վս՟ իւր։ Զայս ասացին ծնողքն նր՟, զի երկնչէին ՚ի հրէիցն. քանզի ուխտ եդ-

եալ էր հրէից, եթէ որ խոստովանեսցի զնա քրիստոս՝ 'ի բաց կացցէ 'ի ժողովրդենէն։ Վասն այնորիկ ասացին ծնողքն նորա, թէ ինքնին 'ի չափ հասեալ է՝ զնա իսկ հարցէք։ Փորձեալ կրկին անգամ կոչեցին զայրն որ կոյրն էր, և ասեն ցնա, տուր փառս այ, մեք գիտեմք՝ զի այրն այն մեղաւոր է։ Նա ասէ, թէ մեղաւոր իցէ՝ ես ոչ գիտեմ. բայց զայս գիտեմ՝ զի կոյր էի՝ և արդ տեսանեմ։ Փորձեալ ասեն ցնա. զի՞նչ արար քեզ՝ զիա՞րդ եբաց զաչս քո։ Պատասխանի ետ նոցա, այժմ ասացի ձեզ և ո՞չ լուայք՝ զի՞ կամիք միւսանգամ լսել. մի թէ և դո՞ւք կամիք աշակերտել նմա։ Նոքա հայհոյեցին զնա և ասեն. դու լիջիր նորա աշակերտ. մեք Մովսիսի աշակերտ եմք։ Մեք գիտեմք զի ընդ Մովսեսի խօսեցաւ ած. զսա ոչ գիտեմք ուստի իցէ։ Պատասխանի ետ այրն և ասէ ցնոսա՝ այդ իսկ են սքանչելիք. զի դուք ոչ գիտէք ուստի իցէ՝ և զիմ զաչս եբաց։ Գիտեմք՝ զի ած մեղաւորաց ոչ լսէ. բայց եթէ ածապաշտ ոք իցէ՝ և զկամս նորա առնիցէ, նմա լսէ։ Յաւիտենից ոք ոչ լուաւ՝ եթէ եբաց ոք զաչս կուրի 'ի ծնէ կոյր ծնելոյ։ Եթէ ոչ յայ էր այրն այն, ոչ կարէր առնել ինչ։ Պատասխանի ետուն և ասեն

ցնա՝ ՚ի մեղս իսկ ծնեալ ես ամենեւին . եւ դու վարդապետ լինիս մեր . եւ հանին զնա արտաքս ։ Լուաւ յս̃ եթէ հանին զնա արտաքս . եւ խնդրեալ եգիտ զնա , ասէ ցնա՝ դու հաւատաս յորդի այ̃ ։ Նա պատասխանի ետ եւ ասէ , ով՞ է զի հաւատացից ՚ի նա ։ Ասէ ցնա յս̃ . եւ տեսեր զնա , եւ որ խօսիդ ընդ քեզ՝ նա՛ է ։ Եւ նա ասէ , հաւատամ տէր՝ եւ երկիրեպագ նմա ։

Թուղթ ՚ի Յակոբայ՝ առ երջանիկ տէրդ իմ և հայր՝
Կարապետ մաքրաղան վարդապետ ։

Յարտօնական ջահացայտ ձահարգոյ՝ հո-
գեկան դիտաւոյլ կոյսդ՝ որ յաւէժ ար-
փիս փղձկալը, որ այք երջանկայես սորա-
կաւ առ մեզ՝ սիրային սիրասոր և միջնա-
բուղն կատարողական լուսաւորութեանն՝
յորդիչ յորդորիչ. և տարիս՝ առը ծա-
ւալմանն, գերարփիւղն երիկի՝ ձրածար
ծածուկ երիւրմամբ՝ նշողիչ շողշողիչ. և
ղաւ ՚ի պարզօրակն ծովէ՝ անմ հօզիսշու-
թեթև ոլացմամբ՝ տարախանձիցս ցօղիչ
հեղեղիչ. որ և թեքեկոր շեղագլիր մերայ-
ինս անկատար հօդուոց՝ յորունակ բաղձա-
նօք, բարձեալ ես կայիս. ղատկան կամօքդ՝
առ ՚ի յանդ՝ յորդել յորմարել ։

Բ. րդ՝ ՚ի նոյն խորխաւսանացդ՝ խուճապ
ներածեալ և բունադատեցեալ ՚ի սերտակի
սիրոյդ՝ ձեռ ընդ ձեռ ձախրանօք ընծա-
յցր հարկիս՝ դժնէիս վր տասուր արարած
եալ. այսինքն, մաքրական անձինն արթուն
հսկողին՝ բուշտեանն շափիւղայլին՝ խօսուն
մարգարտին՝ ձգնակ մատենին՝ ինքնագիծ
աւոլին՝ խուղեալ ղհաւատոյն՝ կշռել ըՆ
հանգամանան ։

Կարեւոր վարկայ և ես՝ որ 'ի վաղւանոյ իմ
կենիս հետէ՝ սատուրեալս ելով տեղաւոր՝
և ընդ սրտահերձ օդաչու բանից քոյին հը-
րամանի, անդանօր ըստ կարեացս՝ 'ի յոտին
և ես կացի հանդերձեալ. և դէպ 'ի մայեկս
եղեալ՝ 'ի սաստկաձիգ լեռնոտեան փա-
պարս կորդուաց՝ սարսռատես դժնեայ
քարկուտաց՝ սոր 'ի սոր սահուտ՝ խոշոր
ռահիւ ուշ 'ի մտի եդեալ՝ արագ արշաւ-
մամբք 'ի մեկս հասի։

Որ և 'ի խորս խուզեալ 'ի հարուստ պատ-
մութենց՝ յաւանդուէ նախնեաց, 'ի յերկա-
րակեն հաւուց, 'ի զարմանահրաշ ներգոր-
ծութենց՝ հաստատ արմատացեալ ներ մտի
բազմաց. գոլով 'ի փանս քաւուենց՝ որ յե-
տոյ հրաժարման տեղի վարկանի՝ տն Ընա
նիայի մեծ վարժապետի՝ մաքուր սոփես-
տի՝ արեան ընտանի՝ որդւոյն Գրիգորի պուե
տաբանի և ձոխ յօդողի. և զի նոյն մատե-
նի ձեռնարկման, ըստ ատեան ազդեցման և
փստա անուանի տր Ընանիայն. յարատեն
հայցուածով՝ խանդակաթ սիրով՝ լցեալ
անձերի. որ և յաւարտին բանի նմին ըն-
ծայեն՝ յիւրոցն ոգեցմանց՝ յայտնի իմանի։
Բայց զի իմ պատահեալ տփոյս լուսածը-
րար՝ եղէ վտարանդեալ. ոչ յաւակնի լորբ
եալ և ոչ վստահաբար ձեռնամուխ եղեալ,

այլ կսկծմամբ մտախոյզ կէի աղջատեալ․ սակս չունելոյ ծիր յիշատակի՝ որով լինիւր բանս մեր հաւաստի․ և մինչ կայի ներ սոյն խորհրդեան, ծեր ումն ժամանեաց դիմս յանդիման․ ժամէր աղերսէր սակս դստերն իւրոյ քառամեայ ամանակաւ յողն անկական․ ախտիւք խլրոնական, բնաւին անդամօք ընդ արմլուծական․ ոչ ոգուամն լեզուի և ոչ լսունելի․ ոչ ձեռս տարբերեալ և ոչ յոտս յենեալ․ այլ հանդոյն կոճեղ խանձողեցելոյ՝ դիտասահ գնիւր ընդարմանի․ մահու ցանկ արփան՝ քան թէ կենաց ակն կալեալ։

Նոր ժամս իբրու եօթնեկի՝ արփւոյն մաղլալի, որ զառավին այն խնկալի՝ 'ի տուն թագծողինն մուծի․ և 'ի նախորդաց անոր հոգեկիր ողեցուածոյն՝ մինչ նաւարտ երիցս եռեակ փնջակ նարդոսից՝ համան խալամբյ՝ անդուր կրկնեցի, և յուղի անկեալ 'ի վանան տիրայնոյ մածեալ նշանին՝ գահաւանդ վայրին՝ ապարանից գահոյին գնացի․ ուր և մեղ հեռաւմուտ չոգաւ այրն հաւատալի՝ հանդերձ նուիրօք մարմնական և գոհութեն տիրական․ սրտիւ խրախական՝ իբր պատգամաբեր աւետական․ թէ զդուստրն խմղուր տեսեր յայնպիսի ալէտա հանդարման, խոկյն ընդ մեկուսանալն 'ի

դրանէն տաւին դրուատեալ, 'ի նոյն վայր-
կենի յաջողակ իմն յարմար ձևով՝ պնդեալ
ուղղեցան խօթազանկ յօդուածքն ա̃մ. յեն-
եալ 'ի յոտին և բան 'ի լեզուին. և բոլորն
'ի կարգին. զլանցանս ճառեալ, մասին հա-
ղորդեալ, կտակ աւանդեալ. և 'ի տ̃ր հանգ-
եալ. բարուոք ապաշաւեալ. որպէս երբեմն
Սիմէօն նախնի՝ լուծեալ 'ի կապից բանի-
տիրական։

Սակս որոյ և մերս հաւատ ընկալեալ՝ որոյ
ձեռնարկի ջանիւ զըսպակի, հանգոյն գա-
ղափարին զատեալ սրբեցի. ոչ թէ մտահաճ
աճեցմամբ՝ համքատակ շարիւ՝ եկամուտ
ինչ մուծի, և ոչ քերթութեան ապաստան
եղեալ՝ զո̃քյն լուսաւոր բանսն վիժեցի.
երկուցեալ յառաքելոյն թէ՝ որ յաւելու
'ի գիրս յայս՝ այլև նորին դիմակն, յա-
ւելցին 'ի վերայ նորա հարուածքն եօթ-
նեակ. այլ յայն հանդիսացայ, զի մի զառ-
իւէք զանց լիցի. այլ զաւելորդս պարապատ
կետիւք պնդեցի, և զթերիսն ըն լուսանցսն՝
ծիրաձիգ նշանաւ՝ արձան կառուցի։ Որդ՝
եթէ գժնէիս դուն աշխատանս շնորհ ինչ
տեառնդ իմոյ, և ազնուազուն մերեանս
պատուանակաց՝ 'ի քէն հայցողացն առաջի
դացի, այն տեառն փառս լիցի. և սրբոյն՝
սակս որոյ 'ի հանդէս մտի. և թէ պայ շը-

նորհ յետս ընկեսցի , այն ամօթ 'ի յիս դարձցի . և սրբոյն բան մի եղերեսցի . ընդ որոյ՝ ցելիչ փառեկոխ փեղկիչ՝ կորնթարդ-յարկից՝ միտաշու բանիցն , և սիրաբարիդ-աղերսանք ինձ ապրուստ լիցի , այժմ և անկէտ յաւիտեանս ամէն ։

Ի քոյին հարազատէս՝ նոյին Յակոբ աբեղայէս պատականացս՝ ընկալ ողջամբ 'ի տէր ։

Պատճառ այսորիկ գեղապանծ շարադրութեան , և սրբոյ Մատենիս ուղղագրութե՛ , յաղնիւ զարմէ Մուրատեանց լուսահոգի մահտեսի Գասպար ամիրայն ։ Որ 'ի մանկութէ՛ հետէ բորբոքեալ 'ի սէր լուսաւոր բանիցս ս՛բ. Նարեկացւոյն՝ յորժամ յօժարեցաւ օրինաւոր սրբագրութեամբ տպագրել , բաց 'ի առ զանազան քաղաքն հայաստանեայս գրելոյ , գրեաց ևս զդիր առ Կտուց անապատի Առաջնորդ՝ տէր Կարապետ շնորհափայլ վարդապետն՝ յայս խնդիր . զի առաքեսցէ զոք հաւատարիմ յիւրոցն 'ի Մոկաց գաւառ , 'ի գիւտ բուն ձեռագրի՝ Նարեկ մատենի սրբոյն Գրիգորի . և զօրինակեալն անտուստ՝ առ ինքն հասուսցէ 'ի տպագրութիւն ։ Ուստի՝ ընտրեալ

Նորին ընդ զգերզգօն տէր Յակոբ չքնաղիմաստ վարդապետն, առաքէ ՚ի կատարումըն խնդրոյն։ Իսկ այն եւ՝ ըստ հրամանին, բազում ճգամբ որոնեալ՝ գտեալ եւ օրինակեալ՝ եւ ընդ հրաշապատում նամակիս իրում եդեալ, առաքէ առ Վանահայրն։ Յորմէ եւ նոյնք՝ ՚ի ՌՄԺԸ մերս Թուականի, աստ ՚ի Մայրաքաղաքս՝ առ Մահտեսի Ամիրայն առաքին։

Եւ եղեւ իբրեւ տեսին եւ ընթերցան ամենք բանիբուն անձինք՝ զհռետորատող զայս գիր Երանելոյն Յակոբայ, փառս մատուցին շնորհապարգեւին Աստուծոյ։ Յորոց նաեւ հռչակաւոր ատենաբան ոմն Եպիսկոպոս՝ սքանչացեալ ընդ մարդապատշաճ բանսըն, ՚ի մերս ներկայութեան ասաց "Ո՞ երկիր հայոց՝ տակաւին գտանի՞ արդեօք ՚ի քեզ այսպիսի ճոռոմաբան շարադրարար"։
Արդ՝ յայսցանէ յարգանաց յորդորեալ եւ մեր, մանաւանդ թէ՝ փոխարէն երախտեաց Երանելոյն՝ որ առ նարեկս սուրբ, ՚ի յիշատակիլ նորին՝ յընթերցողաց սորին, ՚ի տիպ արձանացուցաք։

Այլ այս տէր Յակոբ վարդապետ՝ զկնի քանի ինչ ամաց՝ ՚ի վկայութիւն ճշմարտութեան Հաւատոյս, դառն տանջանօք եւ սրախող

խող կատանօք՝ ՚ի Տիգրանակերտ նահատակեալ կատարի՛. և երկնային ճառագայթաւէտ լուսոյ՝ ՚ի վերայ սուրբ մարմնոյն իջմամբ փառաւորիլ նորին՝ յանհաւատից

անգամ քարոզի՛:

Որոյ յիշատակն օրհնութ՟բ եղիցի. և աղօթիւք նորին՝ Տէրն ամենախնամ մեզ ողոր

մեսցի, ամէն:

## ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆՔ ԽՐԹԻՆ ԲԱՌԻՑ

Ադդովլ. զաքարիայ մարգարէի պապուն անունն է.
ղգ · 8.
ադոնայի տէր. որ այ կըսվի · թանգրը. լդ · 8.
ազատազնեայ. պատուական ազգ · քիշիզատէ. ձա · 3.
ազդարան. խապար տրուած տեղ. ուրն էրի. խա֊
պերխանէ. ծթ · 2. կամ խապար տուօղ գործիք.
որ է՝ բերան. կամ լեզու. հգ · 2.
ալէլուք. օրհնութիք. գովասանք. մէտհ. ղգ · 24.
ալէտանջ հաղմ. տալղա հանող հովի. ծդ · 3.
ալփափեալք. պըրըեներն շարքը. ղդ · 22.
ախտարծարծ. ախտը շարժող. մարդը թէփրէտիճի.
կ · 4.
ածանցական. անցաւոր. թեզմը անցնող. հդ · 3.
ակատ. նաւու թէքնէ. կամ փիճատէ խայեխ. կգ · 2.
ակնայայտ. աչքը պարզանօղ՝ մէդանօղ. խը · 4.
ակումբ. ճիւմհիւռ, միւրիւ. իզ · 1.
աղարտեալ. աւրած, խարապ եղած. ե · 1. և
իե · 2.
աղաւաղել. աւրել, փճացնել, թափթփել, եօխ
ընել. բ · 3. և կէ · 2.
աղէկարմար. քիրիշով ախըզենկենմիշ եղած. ղբ · 8.
աղխաւարկութի. քէրփիճճիութի, թօղլաճիութի.
հե · 12.
աղխեալ ազդարան. կղպած գոցուած բերան. կամ
լեզու. հգ · 2.
աղորի ըմբոշխնելի. տէյիրմէն՝ եղմիշ ընելու. որ է
ծամելու ակռաներ. կդ · 2.
աղու աղաւնի. մաքուր եավաշ կէօվէրճին. բ · 1.
աղուական. անուշիկ. միլայիմ. կզ · 4.
աղուական ախտ. թաթլը մարազ. որ է ցանկութին.
ղա · 3.

*աղջուԹի: մԹուԹի · քարա տումն: գ · 3:
աղատաղաքին: աղի լիղի · աճը զէհիր: լթ · 2:
աղօԹկեր: աղօԹող · աղօԹաւոր: ծա · 5:
աղոտանալ: մԹննալ · 'ի լուսոյ պակասիլ: է · 3:
աճառ: սայօն: ղգ · 11:
աճիւն: մոխիր · քիւլ: ի · 1: և իղ · 2:
ամանակ: ժամանակ · ատեն · վագԹ · 'ի [illegible]:
ամբարձաւղէշ: բարձր ձուղ ունող · իւճէ տալլը:
Թ · 2:
ամենագրաւ: ամենը զապտ լնող: ը · 2: կամ
խիստ սաստիկ զափԹ լնող: ը · 1:
ամենայիկար: խիստ ակար · զայիֆ: ըա · 2:
ամպրոպ: կիւրիւլԹիւ · վէլվէլէ: գ · 3: և գ · 3:
այս: ծնոտ · երես · եանագ · եուզ: կգ · 2:
անագան: կէճաէն կէճ: լթ · 3: կամ վերջինը ·
սօղրաքի: կը · 2:
*անախտակիր: այլոց ցաւակից չըլլող: ծ · 1: և
ծզ · 2: կամ խարեզ չըպաշօղ: ը · 2:
անալէլի՝ խակակուԹ · չըալղուած՝ նոր ծնած բիճ:
ծգ · 2:
անարծարծելի: մէջը վառուելու: է · 3: և հա · 2:
կամ մէջը չիմուելու: ի · 2:
անբոյժ: չըբժշկուելու · ծնղուլմազ: ծը · 2:
*անգաձմունք: խարուկ մամուռք · պարսկերէն՝ էն-
տիշէ: իէ · 3: բառայնս 'ի պատմագիրն եղիշէի·
յերեսն 83: Ցուցանէ սխալ անդրանիկ, և ջնջել զա-
ճենայն և այլն:
անդամանդեայ: էլմասիյէս պինտ: ղը · 10:
*անդանձաւք: անդ · այսինքն՝ 'ի հնումն անձաւե-
լեք · որպիսի էր 'ի հին օրէնս՝ սրբուԹի սրբու-
Թեցն · որ անձաւելի և անմատչելի էր նց · վասն
որոյ ասացուած՝ Սրբոցն սրբոց անդանձաւէց · իմաց-
եալ լինի՝ Սրբութեան սրբութեանցն: հե · 15:

անդաստանելի · կարգէ դուրս, նիզամ չըմացած · ԼԴ · 7 :
անդուլ · ժիր, տաժան · ՃԸ · 2 :
*անդրուղեկցութիւն · այն տեղը երթալու ճամբոր_
դութիւն և եօլտաշութիւն · ՂԴ · 5 :
աներևակի · աներևոյթ · կէօրիւնմէզ · ԻԳ · 3 :
և ԾԵ · 3 :
աներկեան · աներկբայ, առոյգ · ճշմարիտ · շիւպ_
հէսիզ · Գ · 1 · և ԿԵ · 3 :
անընդելք գազան · եապանի եապուռուղ ճանաւար : Թ · 3 :
անկանել · կցելով գործել · տօգումագ : ԿԳ · 2 :
անկեղակարծ · անկասկած · շիւպհէսիզ : ՃԳ · 5 :
անկոխնչ · շունչը կտրած · նէֆէսի քէսիլմիշ · ԺԳ · 2 :
անհագագ · շունչ շունող · հոգի շունող · ճանըղ :
ԼԴ · 7 :
անհամբոյր · թէրսլէյէյի չեկող · հէրկէլէ · ԻԲ · 2 ·
կամ չը գոցուող, շատախօս · ԻԳ · 2 · կամ դար_
չելի · պէթ · ԾԶ · 2 · կամ խաթը կեօնիւլ չը
նայող · ՃԸ · 2 :
անհամեղելի · խօսքի մտիկ չընող · ինատճի · ԾԶ · 2 :
անհատուածելի · անբաժանելի · չը զատուելու ·
ՀԵ · 5 :
անհրաժեշտ : անդառնալի · միւհքեմ · ԱԿ · 2 :
կամ անխախտ · անդառնելի · ՂԴ · 11 :
անձաւ · մաղարայ · Խ · 2 :
անձնամատն · ինք իր անձը մատնող · ԽԸ · 2 :
անձուկ · նեղկուկ · Ա · 2 · և ԿԴ · 2 · կամ քչիկ մը ·
պիր աղամըք · ԺԵ · 2 :
անյարիր ջատուկ · վեր չելլելու նենդաւոր և ցա_
ւաղար · ԾԸ · 2 :
անշամանդաղ · չը մթնալու պայծառ · տումանըզ ·
Գ · 1 :
անշաշ · անփոփոխ · անխառնակ · ԿԵ · 1 :
անոպայ · էյլիկ պիլմէզ · նատան · ԽԸ · 4 :

անպատուար, պատ չունօղ · հիսարսըզ, լթ · 2,
անջրպետ, բաժանօղ · զատօղ · պէօլմէ, խէ · 2,
անսպառելի, յետ չը մղուելու, էհմալ չըլլուելու,
լթ · 2,
անստգիւտ, անպակաս · էքսիքսիզ · նոքսանսըզ,
իը · 3,
անվթար, անախտ · քուսուրսուզ, ժ · 2,
անտարբերափակ, տարբերքի տակ չընկնող, նիւթեղէն
բաներէն դուրս, ժզ · 1, և լդ · 3,
*անքատ, տկար, փոքրիկ · զայիֆ, կթ · 2,
աշխար, ողբ · լաց · սուգ, իէ · 3, լթ · 3, խը · 2,
ծզ · 2, և այլն, աշտանակ, շամտան, խզ · 2,
աշտէ, խըշտ, մըզրագ, հա · 3,
ապարան, անգործ, պարապածած, անձըրկած, խէ · 3,
ապաղէն, զէնք չունօղ · սիլահսըզ, է · 1, և կը · 3,
ապաթոյն, թոյն չունօղ · զէհիրսիզ, կդ · 1,
ապախտաւոր, անշահ · էյլիկ տիլմէզ, զ · 2, և հդ · 1,
ապահար, ամսական հայզը բռնած, ի · 2,
ապաձեռն, օգնական չունօղ, խեղճ, իգ · 3, և լէ · 3,
ապաշուկ, անպատիւ · իքրամսըզ, լդ · 7,
ապաջան, ջանք չընօղ, խայրէթսիզ, բ · 2,
ապառում, լիրբ, առսըզ, ժա · 3, և խա · 2,
և կդ · 2, կամ խաթր կեօնիւլ չընայօղ, ան-
գութ, ձը · 2,
ապարանջան, ապըրձան, պիլէզիկ, լգ · 1,
ապաւանդակ, չուան նաւու, բալամար, իե · 2,
ապաւինութիւն խարսխի, նաւուն մեծ երկաթը ·
ձան գուրթարան, իե · 2,
ապաքինել, փարատել, դադրեցընել, կամ լըռըն-
ցընել, ձգ · 2, և զե · 2,
ապենիազ, անկարօտ, պակասութիւն չունօղ, միւհ-
տաճ չըլլօղ, ծթ · 2,
ապիկար, տկար, խաւտի չըլլօղ, ժ · 1, և իզ · 2,

*առակայք ․ առաջնիկայք ․ առջևը ․ կամ մօտը եղած_ նները ․ կամ քիչ մի ետև ըլլալիքները ․ ժդ ․ 3 ․

առանցեալ ․ դադարեալ ՚ի ծնելոյ ․ վախտը անցած ․ լա ․ 1 ․

առիգած ․ գոգնոց ․ փեշախիմալ ․ ի ․ 2 ․

առկայծեալ ․ ճրագն որ մարելու մօտեցած ․ վերջին կայծակը հատած ․ ձե ․ 3 ․

առհաւատչեայ ․ չէշնի ․ նուանէ ․ կամ փէյ ․ իե ․ 4 ․ կե ․ 2 ․ և կէ ․ 1 ․

առուղեկան յաւիտեան ․ անցաւոր ժամանակ ․ ՚ի յիշատակարանն ․

*առօրինակեալ ․ բաղդատեալ ․ նմանեցուցեալ ․ ա ․ 2 ․

ասուխ ․ բրդեղէն ․ չուխայ՝ և այլք նմանք ․ խա ․ 3 ․

ասպականապետ ․ շան կերակրի խումբը ընող ․ լե ․ 3 ․

ասպաստակ ․ քէլէփիրճի ․ փուստ խըրըղը ․ կթ ․ 2 ․

ասպարէս ․ կամ ասպարէզ ․ մեծ մէյտան ․ աթ մէյ_ տանը ․ ա ․ 2 ․ և խը ․ 4 ․ դարձեալ՝ երկրի չափ է ․ որ է մէկ միլ տեղին՝ ութը փայլն մէկն ․ թ ․ 1 ․

աստարատէ ․ կնկան կերպարանքով կուռքի մի անուն է ․ կ ․ 4 ․

ատտիկեցի ․ աթենացի ․ որ ՚ի հնումն այս քաղա_ քացւոց զլաւ մարդն՝ խիստ նամուսար ․ և զլաւն՝ խիստ պէթնամ համարէին ․ կե ․ 1 ․

արահետ ․ լան ճամբայ ․ քէօռ եօլու ․ թ ․ 2 ․ կամ շիտակ ճամբայ ․ ճամտէ ․ խղ ․ 3 ․

*արամաթացի ․ արիմաթացի ․ ուստի էր Սամուէլ մարգարէն ․ ձը ․ 1 ․

*արբուն ․ կատարեալ հասակ ․ քեամիլ եաշը ․ գ ․ 2 ․

արգահատել ․ ցաւակցելով մխիթարել ․ սիրտ տալ ․ ժբ ․ 1 ․ կամ աղաչել ․ ըէճա ընել ․ ժե ․ 1 ․ և ծե ․ 2 ․

արգասաւոր ․ արդիւնաւոր ․ մէյվէտար ․ յիշատ" ․

արդարալլուկ ․ հախ տեղը տանջուող ․ իթ ․ 2 ․

արդեան ․ հիմիկուան ․ շիմտիքի ․ հե ․ 8 ․

*արդմանական. հիմնկուց թելէփ եղած. իր. 2.
արկանք. փորձանք. պէլայ. դ. 3. և կ. 2. և կէ. 2.
արձագանք. յետ դարձող ձայն. որ մաղարաներուն
մէջ. կամ խորունկ տեղուանք՝ կանչողին ինչ որ
կանչէ. զայն կու լսէ. ղբ. 8.
արուարձան. քաղէ բոլած եղիկմարդու պատիկըք.
կուռք. կ. 4.
արութիւն. արիութի. կարիճութի. իթ. 3.
արուսեակ. սատղաձ երլողըը. գեօզէ. կամ արե-
գակն. կամ սաղոյեղ. լգ. 2.
արջնաթոյր. սեւցոյն ունող. կթ. 2.
արջնասես. սիւեաձ կեօրինիւշլիւ. լա. 3.
արտաքսած. ձամբէ դուրս եղած, եօլտան դ. պէթնամ.
կամ սիւրկիւն եղած. ծղ. 2.
արտաքնոյարդար. դրսի դիյէն թէմիզ. իէ. 3.
արտաքի. ձամբէն դուրս. ծուռ, եանղըշ. հը. 3.
արփիացնցուղ. լոյս տարածող. շաւխ ծագող. գ. 1.
արօտ. արծուելու տեղ. չայըրլըխ. իա. 3. կ. 2.
արօր: չիֆթ քշելու գործիք. սապան. ծդ. 2.
աւաղական. ափսոսական. ողբալու. իգ. 1.
աւանդ. էմանէթ. գ. 1. կամ տուրք. վերկի
թ. 2. կամ թէմլիք. վագըֆէթ. իէ. 4.
*աւղական. բեռի ալըշմիշ չըղած. աձամի. հեր-
կէլէ. իբ. 2.
աքար. պատմուած մարդոյ մը անունն է. Յեսուայ.
7. 1. ‖ իէ. 2. և հա. 3.
աքիա սիլանայի. մարդարէի մը անունն է. որ ՚ի սե-
լով քաղաքէն էր. գ Թագ. ժա. 29. ‖ իբ. 4.
Բաբելոն. կամ բաբելօն. պաղատա քաղաքն է.
ա. 1. և կէ. 2.
բագին. կուռքի սեղան. կուռք. իէ. 3. և հէ. 13.
*բաղձանք. բաղձելու տեղ. մեքեան. կ. 3.
բաղմական. մեծերու նստող. խը. 1. և ղգ. 4.

կամ բազմելու, նստելու տեղ. ղա. 3.
բազմաձեռնեան խորդաւանօղք. շատուր հսկէ-
պաղներ. կամ փենաերով խարօղներ. դբ. 9.
բազմայծեան. սորին անդին ընկնող շրջօղ. բար-
բարակուն պըտըտօղ. կ. 3.
բազմաստեղնեան. շատ ձիւղ ունօղ. տալը պա-
տախըլը. խե. 2. և յիշատակարան.
*բազմարկածեան. շատ փորձանքոտ. Թէհլիքէլի.
հգ. 2.
բահաղ. կուռքի անուն է. կգ. 2. և ղգ. 6.
բամբիռն. չալղըպալըդ. զիլ. դբ. 8.
բանդագուշեալ. խելացնոր. չըլղըն. Թիմարխանայի
խենթ. ժը. 2.
բանին երամշտականութ̄ի. խօսքին եօղը զայընելը.
խենթութենէ եօլսուզ խօսիլը. խե. 2.
բառաչ. ոչխարներուն և նմանեաց պօռալը. ժե. 2.
բառայի. փառաւոր. շէօհրէթլի. դբ. 8.
բաւիղ. վաւիղ. էր կայր յանայ. յիշատակարան.
բարեկին. մեղարդրելի. պըլղըլանմաղա լայըգ. ղա. 3.
բարատնութիւն. խօսիլ չը կըրցողի բերանով խօ-
սիլ. դբ. 8.
բարայուցական. բարք ցըցընօղ. Թապիեաթը
յայտնօղ. դբ. 8.
բարբառոյ. գրան վերի շէմը. ղա. 2.
բարեստուիղ. անուշիկ խայտեալ. տեւզելի. դբ. 8.
բարեբքիա. զաքարիայ միքրէի հօրն անունն է. ղգ. 8.
բարձրանակ մնհաղկուզիան. առմայի ձիւղ՝ որ զէ-
հիրլի տալկըլմ ունի. է. 2.
*բաւանդակապէս. բովանդակապէս. կամ բաւա-
կանապէս. ղ. 4.
բափիլ. տաշտա. որ մաղարայի. կամ դրան վրայ
լինի. խ. 2.
բժժանք. պինկինձի. կամ պուրըձին չոփըն. կղ. 4.

բիծք բոցակիծք. կրակի պէս կծուած ուռեցներ, ինչպէս՝ թախտապիթիէն, կամ սիվրիսինեկէն խածուած տեղուանքը։ կթ. 2.
բոլորապատուղ. ողջակէզ. թամամ փէշկէշ. ա. 1.
բոսորոյ դիպակունք. կարմրագոյն ալթընաթաթախ լէշեր. կբ. 3.
բոսորայնի. կարմրագոյն, կարմրած. քըրմզը. կդ. 1.
բռեալ. սըղխըյած. կամ պատառնայ եղած. իե. 3.
*բռնախօսեան. դէմ ելլող կարիճ ճէնկճի. ղգ. 18.
բռնամարտիկ. կարիճ ճէնկ ընող. կզ. 2. կամ ու-ժով կիւլէշմիշ ընող. ղդ. 13.
Գահաւորակ. թահտըրավան. քեօշկ. իե. 2.
գաղձնաւոր. զարդըը խառերով, կամ ոսկըխ խո-տով լցուած. ծզ. 2.
գաղտնակուր. գաղտնի ուտող. ինչպէս՝ պաղըրտա-խից մէջի որդերը. կթ. 2.
գայիառն. երկար մըզրախ. ղբ. 4.
գանձութիւն. հնչուածք. կանչուածք. ղբ. 8.
գարնանային գետ. գարնան ատենը աղխէ ընող չայ. թաշքըն ըսածնիս. ծգ. 3.
գեղջօրէն. գեղցիկ քօյլիւած. հիւսրիւնլիւ. ղդ. 24.
գեղձիմ. ձերմակ բարդ. ղավաղը. ծբ. 1.
գերաբնապէս. բնութեան ատէթէն վեր. հրաշապէս. ղդ. 8.
գերանակիր. դիրեկ կրող. կամ դիրեկ ունող. իե. 3.
գերաշխարան. խիստ աշխարհաւոր. շատ լացող ող-բացող. խբ. 5.
գերաշխարհիկ. ամենէն պատուաւոր, խիստ իթի-պարը. գ. 3.
գերունակ. ամեն գերագանցութե և կատարելութե ունող. իէ. 2. և հե. 7. կամ ամենէն էվէլ ունող. իթ. 2.

գթել։ գորովիլ, սիրել, յոգնելով պակասութիւն ընել՝ ընկնիլ. լա. 2. ծե. 4. ծէ. 3. և հը. 2.
գժդմնութի. սրդողելով երեսը ծռելը. խղճալ.
խե. 2.
գժտութիւն. կռիւ. նիզա. խե. 2.
գինդ. գնդի. օղ. գիւփէ. լգ. 1.
գիշերավար. ստամոքս. շէյթան. լէ. 1.
գլխաշուք կատու. գլուխը ծածկող՝ զարդարող լա-չակ. լդ. 1.
գլխաւորել. գլուխ հանել, լմնցնել. հա. 2.
գոգջիք. ասայէք. հը. 1.
գողարական. կախուցիկ. փափուկ. նազիք. խզ. 2.
գոմոր. սոդոմայ մէկ քաղաքն է. ծդ. 2.
գոյարան. գոյացնող. ստեղծող. վար էտիճի. ձդ. 1.
գործականութի. գործելը. խօրս ընելը. ղգ. 20.
գործնականաց գործի. գործելու աշխ. որ է՝ ձեռքն. խգ. 2.
գործօնեայ. գործօղ. փէյդահ ընօղ. ձդ. 1.
գումարտակ. գումարեալ բազմութի. ճէմիէթ. ճիւմ-հուր. զ. 3. խգ. 1. լէ. 1. և հե. 12.
գունել. գոյն տալ. ներկել. լզ. 2. և զգ. 17.
գուպար. պատերազմի զօրք. ճէնկ ասքէրի. կ. 4.
*գոլիհ. գռեհ, սօխախ. կէ. 2.
գրաբանական. գրով խօսուած՝ զրուցած. լդ. 1.
գրաւական. չէշնի. նումունէ. ժ. 2. և ղգ. 16.
գրգեալ. զէվկի սէֆայի մէջ ըլլօղ. խը. 2.
գրկանք. սիրով և գթով գրկելը. գուճագ. խէ. 2.
գրուան. շինիկ. ցորենի եօչէկ. լե. 3.
գօշել. կոկըծցընել, խըշխըշցընել, սիրտը ցաւ-ցընել. ժէ. 1.
Դադան. աբիրօն. երկու եղբարք էին. որ մովսէսի դէմ կեցան ու գետինը անցան. Թուոց. 16. 1.‖ կը. 4.

դանդաչել. գուրգուրալ. քէօրի պէօշալմիշ. ժԹ. 3.
դանդաչեցուցանել. երերցնելով շօնկըր շօնկըր ձայնը հանել. գր. 8.
դաստակ. սիւրիւ. պէօլիւկ. կգ. 2.
դաստակնիք. վճիռ. սինճիլ. դ. 1. և ժէ. 3.
դարաստան. դրախտ. պախչա. խզ. 3.
դեգերեալ ողբայ. ալըլըյալ եաթըրըօր. խե. 2.
ՎՁՂՔ դեգերիլ. գերեկնալ. ըճ. ճանեա մեշլուլ օլմագ.
ժր. 1.
դերաքրիստոս. նեռն. թէճճալ. դա. 1.
դժնիկ. փուշ. քարա չալը. կթ. 2.
դժուարամիքելի. դժար անուշնալու. զէհիր թապի-
եթլի. իր. 3.
դժրել. խօսքէն դառնալ. խաւլը աւրել. ծե. 4.
*դիզի. այսինքն՝ դիզեցի. եըղմիշ ըրի. իէ. 3.
կամ նիզամը շարեցի. 'ի յէշլայազան.
դիմադրաւութի. գլուխը օրթան դնելով սերդեա-
ռութի. սերտէն կեշտխութի. կ. 4. և հա. 1.
դիմակ. դէմք. կերպարանք. քիավէթ. դ. 1.
դիմակերպութի. այլանդակութի. մինասիպէթ. դգ. 4.
դիմակս դիմակս. թիւրլիւ թիւրլիւ. լթ. 3.
դիտակ. ամենեւին բարձր տեղ. ինչպէս կէմիին
չանդախլըխը. խե. 2. կամ ամենեւին տեղ. ինչ-
պէս մարդոյ երեսը. կե. 2.
դիտակ ստոյց. ծառի ճիւղերուն ծայրը. գր. 9.
դիւաձեռնձեր ըօհալան. սատանայի հասար ըստրպան
եկեղեւ տեղը. ծա. 4.
դիւրափոխելի. խօլայ փչրուելու. փառքիլելու. ձգ. 3.
դուժ. եապանի միլլէթ. խարեթ. դգ. 12.
դաւիկան. տանը խաթը. կամ վերի խաթը. կթ. 2.
դորալել. քամահրել. սիթէմ տալ. լ. 3.
դրախտամաղէս անունադրութի. այլանդակա լուա
դնելը. դգ. 19.

դրանդ․ դրան մերձ շեմք․ ղբ․ 5։
դրուակ․ կամ դրուագ․ դրուած․ որմնած շինուած․
ըդ․ 8․ և յիշատակարան․
դրօշ․ թուղ․ սանճակ․ խաչակէմ․ լե․ 1։
դրօշեալ․ փորուած կուռքի պատկերք․ բ․ 1․ և
հե․ 12։
Եդովմայեցիք․ Եսաւայ փաշալէթին բնակիչները․ ա․ 2։
եզօղ․ եզ վարօղ․ չիֆթ քէշօղ․ ծդ․ 2։
եթովպացի․ արապիստանցի․ արապ․ ծդ․ 2։
*եղլենացի․ հելլենացի․ հոռոմ․ ղդ․ 12։
եղեամն․ խըրաղը․ որ ձմեռը պէս կուգայ․ կը․ 3․
և ղ․ 3։
եղեռնագործ․ չարագործ․ զիանքեար․ դ․ 3․
և ղա․ 3։
եղերական ձայն․ լալկաններու թախծալին լացը․ կը․ 1։
եղևին․ բարձր տերևի․ կամ չամի ծառ․ կա․ 3։
եղեգնախառնի․ պուհուր ղամըշը․ ղդ․ 11։
եղեգնախուռն․ խամըշի կարպասք՝ եօնկա․ ե․ 3։
եղիճ․ բարակ օթլուղու․ հա․ 2։
եմակ․ ձոր․ ատրէ․ խ․ 2։
եպերել․ քամահրել․ խաթիրքալ օլմագ․ ձբ․ 5։
երախայրի․ առաջին պտուղ․ թուրֆանտայ․ լա․ 2։
երախան․ լակոտներու սիւրիւ․ իզ․ 1։
երամակ․ սիւրիւ․ սիւրէկ․ խզ․ 1։
երասանակալ․ դիզգինը բռնօղ․ զապթ ընօղ․ լբ․ 2։
*երբեք․ երբեքի․ ժամանակ․ զաման․ լէ․ 3։
երգիծանութի․ սիրտ կակծցնելու խօսք․ սիթեմ․
խը․ 2։
*երեսակադոյթ․ երեսպյթ․ խէյալ կեօրինմիշ․ ղդ․ 10։
երևիլ․ ծառոյ և խոտոյ կիւղէն է․ կը․ 3։
*երիզապնդեալ․ երկան կապուած ոսկի փաթթած․
ծը․ 3։
երիթացեալ․ յանքած․ շորցած․ իթ․ 2։

Երինջ։ մատաղաշ կով․ կենաց խնէք։ խե․ 2։
Երկքամ։ ձուլել երուսաղէմի ոսկեթել քաղաքի մի անուանէ։ կգ․ 1։ ղբ․ 4։
Երկնակշիռ աստուածութիւն։ երկու ներհակ բան, ինչպէս՝ ամքն ու պայծառ, ցորեկն ու գիշերն։ ղգ․ 2։
Երկնանութիւն։ կասկած, շփոթէ։ ժա․ 1։
Երկնաձեռն։ երկինքը հանօղ․ կեցյն շրաքարան։ լբ․ 2։
Երկնել։ ալտրելքի ցաւ քաշել։ ա․ 2։ և բ․ 2։
Երկուորեակք։ լուծք եզանց, որով չինքթ կը քշեն։ ծգ․ 2։
Երկրակենցաղ հենք։ երկրիս վրա կեցած մարդիկու թիւներ, աշխարհքիս մեռթալին խասիկութիւք։ հա․ 4։
Երկրորդութիւն։ կրկնուածս, թէքրարլամիշ ընելը։ հե․ 1։ և ղգ․ 10։
Երկք։ աշխատանք․ զահմեթ, մեշագգեթ։ է․ 1։
Երփն։ գոյն․ ընենկ։ հա․ 2։
*Եւղընծիւղ փայտ։ եղատօղ ծառ, ինչպէս՝ ձիթենին։ լթ․ 2։
Զականիլ։ քէօրփիպէս՝ շաշխընփպէս ընեղիլ ըլլալ։ ի․ 2։
Զանգուած, կամ զանկուած։ քանի մի բանէրէ խառնուած՝ մէկ խմոր եղած, ինչպէս՝ մարդու մարմինը։ իգ․ 2։ և հա․ 1։
Զառածեալ։ մոլորած, ճամբէն ելած։ ը․ 1։ և կգ․ 2։
Զարհուրանեակ։ զարհուրելի անոք ունօղ․ ազդըն շէհրելի։ գգ․ 12։
Զարմանութիւն։ զարմանալիք, թամաշայ ընելու։ խթ․ 1։
Զեղծանիլ։ սխալիլ, խօսքը փուճ ըլլալ։ ծե․ 1։
Զեղջօղ։ երախտամոռաց, հախը ինքեար ընօղ։ ձէ․ 3։
Զմբաղ։ ուրախութիւն․ զէվք՝ սէֆա։ ծե․ 3։
Զնդամ զնդաւանա։ չարչարուիլ զնդանանով։ ժգ․ 1։
Զնծեցուցիչ։ սիրտ կակծցնօղ․ աղէքը կարօղ։ լթ․ 3։
Զնծիլ։ հաղ ընելով սիրտը երիլ։ իթ․ 2։ և կգ․ 2։

զմռսալից · քաղցրահոտ , անուշահոտով լցուած · ղդ · 6 ·

զփռնալ · ցրուել դողալ · թխթրեմք · խթ · 2 ·

զրահեակն · պօշ պարապ · անպատաղ · մեյլենիզ · խե · 2 ·

զօրէն · նման · այնիս · զօրէն խայթոցաց կարճոց · այնիս ախորժելիս խաղալիսից պես · կթ · 2 ·

Ըղձոտթիւն · խղճ · փափաք · աչք · ղդ · 1 ·

ըմբերանել · ախոյեան եղած , հախ չունենալով պատասխան · բ · 1 ·

ըմբոշխնել · ծամել · չէյնէմք · ե · 2 ·

ըմպահկանք · արհամարհանք · բէզարէթ , մեզաց · խը · 4 ·

*ընդլողեալ · ջրի մէջ պանթմիշ եղած · դ · 3 ·

ընդակից · հետը ուղղան · պարաւաշ · կա · 1 ·

ընդարմացուցիչ · թմրեցընող · ուղելեցնող · ձգ · 3 ·

ընդգոգել · գոգին մէջ ժողոված պահած · ծա · 4 ·

ընդերք · փորոտիք · փորու մէջի աղիք · պաղեսախ · ւղ · 2 ·

ընդ կրունկն դառնալ · յետոյետ գնալ · կերի կերի կիթմեք · հա · 2 ·

ընդհատ · պակաս · հետոա · ֆուրզլը · հբ · 2 ·

ընդ միջարկութիւն · օրթայէն իրբու պատ քաշելը · մօհքեմ թէնպիհ · ղդ · 6 ·

ընդ միջել · փերատէ քաշելը կէ · 3 · կամ ընկել ըէլ- լով՝ զատել · ձզ · 1 ·

ընդոստնուլ · վեր ցատկել ելնել · սըչրամաք · ե · 3 ·

ընդունայնաթաղ քիրան · ափլէթ առօղ պօշ քըր- ախնք , որ է առել՝ նափիլէ զահմէթ · խը · 4 ·

ընդպահկել · երեսէ ձգել · ձեռքէ թողալ · ձէ · 3 ·

ընկճիլ · ոլքիլ · տակ ընկնիլ · ինմէք · ւ · 3 ·

ընկրկիլ · յետ ընկնիլ · յետ փախչիլ · կէրիյէ դա- փանմաք · զա · 1 ·

Ըստանձնեալ. շալակն առած. խուբլէնմիշ. ծե. 3.
և հէ. 3։
Ըստ բան քո. քու խօսքէդ դուրս. անէնին սեօզիւն_
աէն ալըշաքը. հզ. 1.
Թուառանչ. հառաչանք. կեօյիւս կէչիրմէք. իգ. 2.
լ. 1. և խը. 2.
Թառը. Աստուան օրհնու. չէնկի օրհնու. լա. 2.
Թարահաա. կուռքի անուն է. զոր Թարա հայրն աբ_
րահամու շիներ էր։ կ. 4.
Թարթափումն. աչք քցել բանալը. լե. 3.
Թարմատար. փուշ. պօշ. բանմը չարժօղ. ծզ. 2.
և կ. 4.
Թափանցանց. մանօղանցնօղ. Թէէսիր ընօղ. դդ. 12.
Թեղան. մանած. երկան Թել. դդ. 24.
Թելադիր. յորդորօղ. Թաչրիք էտիճի. խը. 2.
Թերափ. կռապաշտից գործէք. համայիլ. խը. 3.
Թինդս առնուլ. ցաԹկել. լողալ. հա. 3.
Թխամոխիր. սեադոյն. մուԹ գուն. զէֆիրի. խ. 3.
Թշուառաքիրան Թուշակ. մաչուան քրտինքով վաս_
տակ. մէչադդէԹլի կլլառ։ խե. 3.
Թօղեալ. չարչարուած. պէրիշան եղած. հր. 3.
*Թուլադաշնակեալ. ախուղէնը Թուլցած. ախ ղէնը
աւրած. դդ. 20.
Ժայթքել. փսխել. գուսմագ. կե. 1.
Ժանէք. գաղանի ակռաներ. գ. 1. կզ. 4. և հԹ. 4.
Ժխտօղ. Թէքեար ընօղ. հէյլէ ընօղ. բ. 1.
Ժողովեալ. մարդաներով լցուած. հաւաած. ըխկած.
հգ. 2։
Ի գիծն Թուլանալ. շիտակ ճամբան չի կրնալ եր_
Թալ. Թալնալ ու ճանբան ձգել. հա. 2.
Ի ծխով մառանց Թուել. մառաներուն վերայ մէկիկ
մէկիկ համրել. հը. 3.
Ի ներքուստ յորելին. Ի նն անդամ ջիտան. որ է չոր

Հարիւր յիսուն։ ծ՚նշանակութեան։
*Ինքնարգոյ բարձրայօն։ Ինք զինք յարգօղ մեծա-
րօղ հպարտ։ գ · 2։
Ինքնագոյ։ Ինք իր հետ կացօղ․ ձինկ ընօղ։ ծթ · 1։
Ինքնօրէն։ Ինք իրմէ․ կէնալ քէյֆինէ։ կա · 1։
Իշանգամ։ Իշու անգամի պէս ամօթ անօղ։ կ · 4։
*Իսկ անուանն իսկոյն։ բուն իսկական անուանն իս-
կութեանն․ զամթինի իսմի զաթի։ դգ · 18։
Իրաւամերժ։ Իրաւունքով մերժուած, միւսթահաքը
զրկած։ իթ · 2։
Լայնատարր հեռք։ լայն ու տափակ ճամբայ․ էնլի եօլ։
ե · 3։
Լանջք։ կուրծք․ կէօքիւս։ լդ · 1։
Լաստ։ նաւուան տախտ․ կէմիի թէքնէ։ իե · 2։ և ձե · 2։
Լաստին դաշտաքն․ կէմիին հանգչելու տեղը․ լի-
մանն։ իդ · 2։
Լափելօղ։ լափելով ընօղ․ ալիւնը ծըծօղ։ ժ · 1։
Լենիլ։ անամօթ ըլնիլ․ էտէպսիզ օլմագ։ կզ · 4։
Լուծ։ Թէրազիի թաթ, աչք։ թ · 1։ կամ պայման-
ադրանի։ իե · 2։
Լուծք տուարք ամոլ։ կէմիի կէօլէրթէլի հաստը
գօտինները։ իե · 2։
Լուղակ։ լողացօղ․ Խոշպէս ձկները։ հա · 3։
*Լուռ։ լռեցո՛․ իշիթմիր։ ձե · 1։
Լուսանցոյց երդ․ երդիքէն լոյս մտնելու տեղ․
պահմա։ ժբ · 3։
Լուսնական գիպուած։ լուսնկայէն քունը եղած
խալ, թութարըխ։ ձբ · 6։
Լուտացօղ։ քաւնճրօղ․ պէթ սէօյլէյիճի։ ժա · 3։
Լպրշեալ։ անամօթ՝ էտէպսիզ եղած։ ծգ · 2։
Լնացեալ։ ձգըմըկած, Խոշպէս՝ լացած եարայն
տեղը։ իդ · 2։
Լուսապատար։ լուսով լեցուն․ մինէվվէր։ ծնշ"։

լըթագոյն։ մթնագոյն․ փէք գարանլըք։ լ․ 2։
լքանել։ դուրս ձգել․ բրաղ էթմէք։ բ․ 3։ և իէ․ 2։
Խաթարեալ։ աւրած, խարապ եղած, փճացած։ իե․ 3։
խակախորհուրդ։ խամ իմացմունք, տհասութիւն։ ղբ․ 8։
խաղուարար։ հրակայծակ։ կծած ուռեցք՝ կրակի պէս էրօղ՝ կսկծըցընօղ։ կթ․ 2։
*խաղբ։ իբրև թէ՝ խիղճ։ որ է՝ կապ, կամ կապանք․ ըստ այլոց՝ հազր։ որ է՝ որոգայթ։ իբ․ 3։
խայրիք։ պտուղներ․ մէյվէլէր։ լդ․ 1։
խառնիճ, կամ ջորեակ։ խառնաստըղ չէքիրգէ։ կը․ 3։
խարան։ եարա տաղլամիշ ընելու երկաթ։ գ․ 1։ կամ տաղլանմիշ եղած խոց։ ձէ․ 2։ և ղգ․ 6։
խարդաւանք։ խաբեբայութիւնք․ ֆէնտ։ կ․ 2։
խարխափանք։ քէօր իքալլումբ, գուրգուրալ։ ժէ․ 2։
խափուցանել։ խափանել․ մէն էթմէք։ կգ․ 2։
խելք։ նուռու խըչ։ խելք չըթանըց։ խըչին թարֆի քիւփէշտէնները։ իե․ 2։
խենեշանալ։ եաէպախիզմէ հագուիլ կապուիլ։ հբ․ 2։
խժական բարբարոս։ կոպիտ, խորեաթ եարամազ։ ղգ․ 6։
խիզախել։ համարձակիլ, մխրահաթ ընել։ կը․ 3։
խիթ։ խօտուկ, սանճը։ ղ․ 1 և իղ․ 3։
խլրտումն։ անղայը ժաժիլ, թէփրէնմէք։ ղ․ 3։ և է․ 1։
խծրիծ։ խառնելը բնտաելը, արաշտըրմալ։ խը․ 4։
*խխայթ․ խայխայթ։ պէօճէկ, թըռթըռ։ ե․ 1։
*խնծիղք։ խնտում․ զէվք, շադըլք։ դ․ 1։
խնկաւորութիւն։ օրհնենք, գովաբանք․ մեծ։ ղդ․ 14։
խոհեր։ դալըշըգի գործք, մուրատա բան։ խե․ 2։
խոպանացեալ։ չորցած, աւրած, խարապ եղած։ հգ․ 2։

խորշակ՝ տօթ հով · սամհելի։ կզ · 4։
խուել՝ չարչարել · էզիյէթ էթմէք։ կզ · 4։
խուզել՝ որոնել · փնտռել։ Թ · 2։ և ձե · 4։
խուժադուժ՝ եաբանի · աբուռճուբուռ։ կ · 4։
խունձայել՝ խիստ անձկելով սխլէթ ընել։ հթ · 3։
խուն՝ տակաւին · մզամըլը։ կգ · 2։ հ · 2։ և հդ · 3։
խոփ՝ հարօրի երկաթ · սապան տեմիրի։ ղբ · 7։
խորոց՝ զատող միջոց · պէօլիւճիւ սընըրը։ բ · 1։
և ղբ · 7։
խրթնանալ՝ խաժամիլ · մթննալ՝ գզուիլ։ հե · 11։
խրթնի՝ անցած · աղատա · չիւքիւն։ ղդ · 12։
խօլական ցնորք՝ խենթ ու մէնթ երազներ։ ժբ · 3։
խօսնականաց շարժողական գործի՝ լեզու · տիլ։
լե · 3։
Ծայրակատար՝ ծայրագոյն կատարող · խիստ չարգող։
իը · 1։
ծերպ՝ քարերու և ծառերու ծակ · զօվուք։ խ · 2։
ծնգեցեալ՝ հալած մաշած · խիստ մաշուած։ ծը · 2։
ծորիլ՝ մաշիլ · եօխ ըլլալ։ կե · 2։ հգ · 2։ և ղբ · 10։
ծործոր՝ լեռներու մէջ տէրէ · ձոր։ խ · 2։
ծորումն՝ կաթելը · վազելը · ըըխալը։ լե · 1։ և ղգ · 19։
ծուէնք՝ պատառուք · պէզ երաթքլարը։ իե · 2։
ծուղակ՝ որոգայթ · տուզախ · խափանձա։ խզ · 3։
ծուր և ծոյթան՝ են քաղաքք ընենիկեցւոց · Եզե-
կիէլ · 28 · Ա · 1։
ծրղեալ՝ աղանդեալ · ալըշկած՝ մրտըրած · մուտ-
տարլանմըշ։ ր · 1։
Կագղուրել՝ նորոգել · բժշկել և խանըսել։ ձ · 3։
և ձգ · 2։
կախանիլ՝ հեկեկալով աղաղակել լալ · եօքիւր եօքիւր
աղլամագ։ մը · 1։
կաղակարծ՝ կամ կեղակարծ՝ շիւպհէլի։ ւ · 2։
և խը · 2։

Կաշկանդողական · մեկմեկալով · եւ թողլուլն ըն-
ղալով։ լե · 3։
Կայթ · ցաթկելով խաղ · պար · խա · 2 · և լա · 2։
Կայտառ · մտաւորական կենդանի · պէտնէր · խե · 3։
Կայծ · նաւուն եկէքին բանալու ակրեն որբեկի
իե · 2։
Կապարան ձգողական · շուան՝ քաշելու · խելար ·
խե · 1։
Կապարանք զրատիս նաւու թեքնէի երկու կողմ
կապերը · խարսխարանները · իե · 2։
Կապարճ · նետ դնելու աման · թէքքէշ · կգ · 4։
Կապուտ · եաղմա եղած ապրանք · թալան · քէլէփիր ·
փրէզա · ժզ · 1 · և հե · 7։
Կառափիձ · գլուխ կորող · սպանող · ճէլլատ · ձբ · 2։
Կարապեամ · մօր մօրաքոյր շատմուտ · պալշըխ · ձգ · 3։
Կարեկցել · ցաւակից ըլլալ · հաւասար ըլլալով օգ-
նել · ղե · 1։
Կարթ · որսորդութ · ձկնորսութ · օլթա · խղ · 3 · և կգ · 4։
Կարծրերանի · սանձի չեկող · գլուխ չդնող · ինչ-
պէս՝ գլուխը ներքն ձին · իբ · 2։
Կարկառ · քարերու երեսն · թաշլըխ · կգ · 1։
Կարկառել · մատուցանել · երկնցնել · ուզնելով ·
ժբ · 2 · ըդ · 2 · և ղբ · 9։
Կարկառ կոճանն · մեր մերցնելով զարնելու · ղբ · 2։
Կարկեհան · ձեւակր քար · որ գիշերը լոյս կուտայ ·
չամբրագ · հե · 12։
Կարողութիւն · կարողութիւն · քաւըլլըք · ժթ · 4։
Կափառնայում · յորդանան գետի եզերքը մեծ քա-
ղաք մի է · բ · 1։
Կաքաւ · ցաթկելով խաղալ · լա · 2 · և ղբ · 6։
Կեղեքել · պատառել · բըզել · քաշել · ժէ · 1 · և կբ · 3։
Կենդանախառնոյն կուծանէն · եղբայր մայրոզ՝ ողջուն-
ցնօղ կոչել · ԼԲ · 5։

կենտախորախոյս ։ կենդանի ամառ տաօղ ։ խդ · 2 ։
կիտոյար ։ կիտկատար տայանմէջ եղած՝ կանգնած ։
լբ · 2 ։
կիտի կորուն ։ մեծ ձուկի եամրու ։ խե · 1 ։
կիւրոս ։ պարսից թագաւորի մի անուն է ։ Եսայ ·
45 · 1 ։ Ազ · 6 ։
կմախք ։ մեռելի ոսկորներ ։ հգ · 2 ։
կնդրուկ ։ անուշիկ հոտով ծխնելի պուհուր ։ ի · 2 ։
հե ։ 4 ։ ղգ · 8 ։ և 19 ։
կնիւն ։ սաղ ։ որ ջրոտ կեօղ անգղ կը բուսնի ։ լթ · 2 ։
կշտամբեալ ։ յանդիմանած, ջեխուած ։ բ · 1 ։
կոփօղ ։ խումբխով գլխու զարնօղ՝ ծեծօղ ։ լզ · 2 ։
կոթող ։ բարձր տնկած քար · անգիրի թաղ ։ լէ · 2 ։
և յիշատակարան ։
կոհակ ։ ալիք ծովու · անենից տալկալը ։ իե · 2 ։
և ձե · 1 ։
կողկողանք ։ խղճալի կերպիւ լալը՝ աղաչելը ։ իզ · 1 ։
կոչկոճել ։ խիստ չարչարել՝ տանջել ։ հա · 3 ։
կոշտ ։ պինդ հողի կտոր, խոշոր հող ։ հգ · 3 ։
կորակոր գնալք ։ ծռումռակելով քալուածք · ինչպէս՝
փիղերին գողի պէս օձինէջ ըլլալով քալելը ։
կթ · 2 ։
կուռալ ։ զօրանուած՝ եարալանմէջ եղած ։ ձէ · 2 ։
կուռալ գլխուած ։ զարնելու դպչելը ։ փուրուձա
տաքանըլը ։ ղբ · 5 ։
կրթակառու ։ թալիմի մարիֆէթ · հիւնէր ։ խգ · 1 ։
կրկնապատ անթափելի ։ թէքրար ոռնիլ եղած՝ որ
ալ չի ազատուիր ։ իզ · 2 ։
կրկնակայեն ։ երկու անգամ տրուած կաշառք · որ
անգամ մի յուզային տրուեցաւ, անգամ մի ալ
զինուորներուն ։ իղ · 2 ։
կրկնադարձ կոածագ ։ չէնկէլի պէս ծուռը ծռած,
ինչպէս փիղերին կոտոյն է ։ կթ · 2 ։

Կքանձ․ ոլորքիլը, երկու խամծ ըլլալը, խառխառծի մընալը։ ժը․ 2։

Հագագ․ ձայն, շունչ․ սէտա, նէֆէս․ իգ․ 2․ ղե․ 2․ Ղ․ 1․ և ղգ․ 12։

Հալուէ․ անուշահոտ եղ մի է, կամ եօտ աղածիին եօղը․ ղգ․ 11։

Հայր․ որոգայթ․ տուզախ․ դ․ 1․ ծդ․ 1․ և ծե․ 2։

Համբանաբար զուգամասնութիւն․ միաբերան ամէ-նը մէկէն․ ձե․ 2։

*Համաձևութեան օրէնք․ բրածը գտնելու օրէնք․ գըսասա գըսաս շէրահաթը․ ինչպէս մովսիսական օրէնքն էր՝ ակն ընդ ական, և այլն։ հը․ 2։

Համառօտ երբ․ կարճ ժամանակ․ քըսա վագթ․ ձր․ 6։

Համանեալ յանանցքպես միականութիւն միաւոր-եալ անբաժանելի միաւորութիւն։ հե․ 7։

Համասփիւռ․ ամէն կողմ եայըլմիշ եղած․ լգ․ 1։

Համբարտակ վասաձուէ․ սըզընմիշ ըլլալու խուլէ․ գ․ 4։

Հայթայթանաց կրկուտ․ կէչինմէյի համար չալը չըր-փը, եռնդա։ հ․ 2։

Հայթայթումն․ ստակին անդին ընկնիլը՝ ձար ընելը․ ժդ․ 2․ և ձե․ 2։

Հանդիսափառ․ նման փայէ ունօղ․ ազրանի ղգ․ 7։

Հանգոյց․ կապանք․ քյոստուպէնտ․ ծը․ 3․ և ղա․ 1։

Հանդերձանք․ յարմար խառնուածք շինուածք․ իգ․ 2․ կամ տալթանաթ, թախըմ․ լը․ 2։

Հանդերձաւորիլ․ զարդարուիլ․ պատրաստուիլ․ լգ․ 2։

Հանի․ մամ, մեծ նէնէ․ հանի մօրփու, մօրըն մեծ մայրը, որ է զոխտա կինն․ լղ․ 2։

Հաշմեալ․ սախատ, խախտաթի եղած․ ձղ․ 2։

Հասկ․ ցորենի՝ կամ գարիի գլուխ․ լը․ 4։

Հաստաբան․ հաստատելու կանգնելու տեղ․ գա-

ւազան · ակյնէկ · գ · 4 ·
հաստուածք · հաստատուածք · վիճակ · կեօվոէ ·
դ · 3 ·
հաստուածեալ · կարուած, զատուած · ը · 2 · և հե · 2 ·
հարևանցի երևականութիւ · առը չեղած երևոյթ ·
խէյալէթ · ղգ · 10 ·
հարևանցիկք · երևցող ու թէզմը անցնող · հգ · 3 ·
հարթուցեալ · լեզուով ծեծած, թաղիր եղած · ժէ ·
1 · և ձ · 3 ·
հեծան · բիր · սօփայ · ժ · 2 · և ժը · 1 · կամ ՝որ խաչին
պտղոյն փայտն, որ է քի՛ զէնքը · ղը · 6 ·
հեծանոց · հարմանձիներուն մառ մառ քիւրէկն,
որով յորդը՝ ցորենէն կը զատեն · եափա · հա · 3 ·
հեղեղատ կեդրոնի · նէմի սէյլթ գետ մի է · ա · 2 ·
հեղեղավայր · ջուր կոխած տեղ · կեօլ · լթ · 2 ·
հեղխաս · եղխ մարգարէն · ղգ · 6 ·
հեղցյա · բևեռ, էքսէր · չիվի · իե · 2 · և իը · 6 ·
հենգնել · ծաղր ընել · մըզադ էթմէք · կ · 4 · և կզ · 4 ·
հենուլ · հինել · հսւսել · կգ · 2 ·
հեստեալ · օրէնքէ դուրս ելլող՝ դէմ կեցող · լգ · 4 ·
հերապանծ տունկ · տերևներով ճիւղերով զար-
դարուած ծառ · թ · 2 ·
հէն · չէթէճի, խուրսատա · ղը · 9 ·
հիւղ · մանրիկ փոշի · հիւլէ · խէ · 2 ·
հմայեկ · համայիլ · ղգ · 18 ·
հմայք · պախըճիութիւն, տաւէթ · խը · 3 ·
հնարագիր · սուզախ խուամիչ ընող · ծե · 3 ·
հոգենկար · հոգւով սրբով լեզուն եղած · կամ հոգե-
ւոր գրուած · հե · 3 ·
հոմանի · պռանիկի սիրահար · ձգ · 3 ·
*հոմերոն · հոմերոս, բանաստեղծ մարդոյ մի ա-
նուն է · ղգ · 19 ·
հովիտ · ձոր · տէրէ · ա · 2 · խ · 2 · և ղգ · 11 ·

Հրաշակերտութ. գեղեցիկ և զարմանալի չինուածք
'ի [illegible]
Հրաշէկ. կրակի պէս կարմրած. ր. 2
Հրապոյրս արբուցանել. Թմրեցնող ու խելացնող
  դեղ խմցընել. կզ. 4
Հրատապ. կրակի պէս տաքցնող. խ. 3
Հօրան ալրաց. սիւրիւ՝ այծու մազերու. օղլաղլար
  սիւրիւսիւ. խր. 1
Ձեղուն. տանը ծածքը. տանիք. կը. 2
Ձեռնագրնին. ձեռքով բռնուելու. հե. 12
Ձեռներէց լինել. յանդգնութիւն ձեռք զարկել. եօ
  պայք օլմաք. ծր. 2
Ձուլածոյ. ուեղծի կաղապի պատկերք. խր. 3
Ղօղիլ. պահուիլ. կիզլենմէք. տաղլանմաք. գ. 1
Ճախարակիլ. պատուելարմիլ. ձենի ըլել. կ. 4
Ճայ. Ճայեկ. սևագոյն թռչուն մի է. հա. 2
Ճայթումն. տառափի հնչումն. չաթրթալ. ղր. 2. և 7
Ճապուկ բառառ. կանխուցիկ բարակուկ՝ փայտու ու-
  ղուրձան. կթ. 2
Ճարակ. փայտ և զ. ի՞չ եազղը. ա. 1. զգ. 8. 17. և 23
Ճանճիք. քեպայիս փոխուրը գեփը. ա. 1
Ճիրան. տար ըղունկով ձանի. փենչէ. զ. 3. և
  կը. 3
Ճնշեալ մզել. սխմելով քամել. ղգ. 11
Ճշգրիտ. եչկեարէ այըլտ ընելով. խե. 1. կամ նէ-
  քեսուսթիւնով. հթ. 3
Մ՝ագնեսիա մէմ. միխլաարզ թաշը. խե. 1
Մածուած լոյծ. ջրեղէն երկինքն է. իդ. 4
Մածուած լաստի. կէմիի թէքնէ. ձե. 2
Մակադրութ. լայն և արձակ տեղ. [illegible]
Մամռապատ. բոլոր քերքէն մամռով. գորտն-
  րրդած. եօսունլու. ծդ. 3
Մանեկալ. մաճ գալ. օրագ. թափան. լե. 3. և ղր. 7

Մանահաթ ։ մութ տուամանով ծածկած · չի տես_
նուելու ։ ղդ · 19 ։
Մարդեկեայ՝ շողշողող · մեռ տաճանէ ընող ։ կ · 4 ։
Մարմանջուսն ։ հեշտութիւն · ցանկութեան հարպգեթ ։
խե · 2 ։
Մեծդիտակական ։ մեծապէս գիտցող · իֆրաթ
վուխուֆ ։ դ · 2 ։
Մեկնաղեն ։ չեթեճի · փուստ խըլրըղը ։ կթ · 2 ։
Մեկին ։ յայտնի · էշկեարէ ։ ղդ · 11 ։
Մեղկել ։ թուլցնել · կեվշէթմէք ։ ղդ · 23 ։
Մեղսամածկալոր ։ մեղքով պըռշկած ։ ծե · 3 ։
Մեղքամ ։ կուռքի անուն է · գ թագաւորաց 11 · 5 ։
|| կ · 4 ։
Մեռայ ։ դառնութիւն · լեղութիւն · և է անուն
տեղւոյ · Ելից · 15 · 23 ։ || կդ · 1 ։ և ղդ · 20 ։
Մերաւէր ։ մեր · այսինքն՝ մարդոյ տղէ ծնած ։
ըէ · 9 ։ և հե · 7 ։
Մերկամբցանակ ։ չորսի մէնկ ընող՝ կիւլէշ բանող ։
ղդ · 13 ։
Մերկապարանոց ։ յայտնի · էշկեարէ · ալէյան ։ ը · 1 ։
Մեքենայ ։ խափանման · աալղըխ ։ ծե · 2 ։ ղ · 3 ։
և ղդ · 2 ։
Մընարհեատ ։ կաշխի զօրի պէս բարակ կաղմած ։
ղդ · 20 ։
Մթեր ։ գանձարան · խազինա ։ դ · 1 ։
Միխի ։ մածակ · օխլոխօինեկ ։ կը · 3 ։
Միղուկ ։ գինիի · կամ ձիթերի մանրիկ ճանճ ։ կը · 3 ։
Միպդպ իր ։ շատ մատունքէ ձեռ եղած մէկ բան ։
[illegible] ։
Միտարր ։ զուտ · սաղդ · զաթը · էօզ ։ հա · 1 ։
Միաջնեբու ։ ճակատը մէկ այլյնուգ ունող քաջ կին
դանի մի է · քեճկերաւն ։ կը · 2 ։
Միշմիլ ։ հերսեն խեղդուիլ · եօքքեէն ըոլ ։ ճանթիլ ։

խ . 3 . և կը . 2 .
մղոնաչափութիւն․ մանթը հովանող՝ ոտէ ֆի ընող․ ճէշ— .
մողոք․ կուռքի անուն է․ Ամովս 5 . 26 . Ա ի . 2 .
մորմոքեցուցիչ․ սիրտ կսկծեցնող․ խոչխոչցնող․ զը . 9 .
մուխ․ ջուր տուող․ զողլամիշ ընող․ ղգ . 24 .
մուրհակ․ վճռոյ գիր․ խըլամ․ խը . 2 .
մուրճ․ թաշչիի չէքիչ․ քիւլիւնկ․ զը . 7 .
※ մտանել․ մտանել․ մտնել․ կերմէք․ հա . 2 .
մրմնջել․ թրմնջալով և եղկելով լալ՝ ողբալ․ լթ . 3 .
մրցանակ․ կարինճութիւն ճէնկ․ ժ . 2 . կամ կարինճու
թեան համար պախշիշ․ չէլէնկ․ կա . 2 .
Յաբեթական տոհմ․ Նոյ նահապետի որդւոյն սին
սիլէն է․ որ է ազգն մեր՝ հայոց․ ճէշ— .
յամեայ յամրութիւն․ շատ ժամանակ աշխատելը․ ձա . 2 .
յամրայլն․ ուշ մնացող․ գյալանմիշ ըլլող․ խը . 2 .
յղփութ․ անամօթ․ աչողի․ եաէ պաից․ լդ . 1 .
※ յղփացուցանել․ եանէ պաիցնէ նայող՝ անանող․ ծզ . 2 .
յանդգնութիւն․ լիրբութիւն․ թամամելէք․ թ . 3 .
յանդգնիլ․ վերջի համնիլ․ լիրբնալ․ կա . 1 .
յանկարծ․ այլզման․ եամփինչիլու․ ծդ . 2 .
յանձնանձել․ պէտ ընել․ թէմնալ ընել․ խթ . 2 .
և ձ . 3 .
յառաջատեալ․ յառաջ ընկնող․ իլերի սէրթէն․
ծգ . 1 .
յարագող․ արևին դէմ կանող՝ մնացնող․ հա . 3 .
յարգահատել․ յաւակցելով աշաչել․ եարվարմալ․
հգ . 2 .
յարկել․ տօպի պէս տակ չինել՝ մէջը պահել․
ղգ . 9 .
յաւակնիլ․ անհրաժեշտ ըլլալ ըրութիւն ընել․ լգ . 7 .
※ յաւիտենական․ յօնական․ ամբողջաստուածական․
եաէշարիկ ախտէնլի․ կ . 4 .
յափրացեալ․ առաջնորդելի․ պըխմիշ եղած․ ղը . 10 .

յելուզակ: աւազակ. հարամի. գանփուստ: ղ.3:
յեղանակել: գործածել. պաշխայ կերպ ընել: ե.3:
կզ.1. և ղզ.19. կամ երգել: հզ.3:
յեղյեղել: փոխարկել. թէպտիլ ընել: թ.2:
կամ շատ կրկնել՝ յիշել: կա.2:
յեռանել: եռել. պիլէյիլէմիշ ընել: ղմ.5:
յերկնայունն. զարդարելը՝ եախշըշը բերելը:
խ.3:
յէու և ազայէլ: երկու թագաւորաց անուանք էն:
դ Թագաւորաց 19.15. || ղգ.6:
յղփացեալ: խիստ կշտացած. լիֆրաթ տօյմուշ:
ծթ.2:
յոբելեան: յիսներորդ տարի. թողութեան տարի:
Ղևտացւոց: 25.8. || ղէ.7:
յոլովամեղծ ծուխ: շատ խուրում փէյմաս ընող
ծուխ. խոյն թիւթիւն: խը.4:
յոյզ մտաց: մտմտուք. մտքի ալաւէրա: թ.3:
յովանակ: աւանակ. իշու քուռակ. սըփա: իբ.2:
յորջորջումն: կոչումն. անունը տալը: լդ.3:
և ղզ.7:
յորսայսել: կռնըկին վրայ գետինը ձգել: լզ.2:
յուռթի քրտունք: առատ քրտինք. զան թեր:
կզ.4:
յուռութ: համայիլ. կամ կռապաշտական հնարք:
կզ.4. և հե.12:
յուսոյ ձգարան: յոյսին թելը. ումուտին չուանը:
դ.4:
յօնիցն յաւակնութեն: ընքուիներուն հպարտութը՝
մաղրուրլուք եուէպրուցլուղի: խն.2:
Նախայանցք: առաջուց մեղանչօղք. ջըհեղեղին
ժամանակի մեղաւորները: հթ.3:
Նախայլք: առաջին այլք. էվէլքիլէր: դ.4:
Նահանգ: մեմլէքէթ. այալէթ: լէ.1:

*Նահանջէր՝ նահանջեցեր · արգիլեցիր · խա-
խաթի ըրիր · կգ · 1 ·
Նաշիհ՝ շարամաղուն՝ խիստ բարակ ալեւր · ղգ · 8 ·
Նարդոս՝ անուշահոտ ծաղիկ է · նանօֆար · ղգ · 11 ·
Նարեկ՝ էր վանք կրօնաւորաց՝ ի գաւառին ռշ-
տունեաց · ուր վանահայր էր վեհափառ այր մեր
Գրիգոր Նարեկացի · յիշատակարանն ·
Նաւակատիք՝ տօն · ուրախութիւն · տօնախմբութիւն · ղա · 1 ·
Ներգեւեալ՝ խեղճ՝ անփիլ եղած · անբախտա-
խա · 2 ·
*Ներութիւն՝ ներողութիւն · սուչը պախշլելը · աֆֆ ·
ժը · 1 · և ձր · 5 ·
Նեցուկ՝ յենարան · դայախ · կէ · 2 · և ղր · 10 ·
Նեհար՝ այս տիղծ · չար դեւ · սատանայ · ձիւ · ղբ · 9 ·
Նժար՝ թերազուի թասը · թաթ · Թ · 1 ·
Նկատ եղանիլ՝ նկատել · անանօզ ըլալ · կը · 2 ·
*Նկարագրէր՝ նկարագրեցեր · մի առ մի ան գը-
րեցիր · խմացուցիր · ծը · 1 ·
Նշանջել · կամ նահանջել՝ արգիլել · յետ դար-
ձընել · ր · 3 · և խա · 1 ·
Նշաւակել՝ ցույց տալ · խայիէթ էթմէք · գ · 2 ·
Նշխարել՝ անարգական · մնացած եղած · խր · 1 ·
Նողկալ՝ գարշելի՝ զզուելի ըլալ · ղ · 3 ·
Նուիրան՝ նուէրական · փէշքէշ ընծայելու տեղ ·
ճէ · 9 ·
Նպաստակ՝ նշան առնուած տեղ · նշանկեահ · ըր · 5 ·
Շաղակրատ՝ ապուշխօսող խօսող · լաֆազան ·
բօշ բօղազ · ծգ · 2 ·
Շամբ՝ անտառ եղեգանց · գամըշլըգ · Թ · 1 ·
Շամրին՝ սամարիա · որ եղելի մեծ գաւառ մի է ·
Եզեկիէլ · 16 · 46 · || ծգ · 2 ·
Շանթ՝ կայծակ · ըլտըրըմ · ղ · 3 ·
Շերտ՝ փայտ · սօփա , օտուն կամասը · ղը · 3 ·

ունկ ։ ադամանդյական ադամանդ՝ մեղմելէ ։ խ · 3 ։
ւայտութիւն ։ ցանկական ձիւնունութիւն ։ խը · 3 ։
ւթափութիւն ։ խիստ արտորալը ․ անձելէ ։ ղգ · 11 ։
ւշան ։ ծաղիկ է , զամպախ ։ կ · 1 ։ և ղգ · 11 ։
ւք ։ պատիւ , փառք ․ իղղէթ ։ ձգ · 4 ։ և ղգ · 18 ։
ւեմարան ։ Ներսէ Ներս սրայ ․ որը սրահը ։ խ · 2 ։
պէնադրութիւն ։ էթրաֆը տօնաթմիշ ընելը , կամ
պաշարանելը ։ կը · 1 ։ և ղ · 1 ։
րտումն ։ շուարումն , անձըրկիլը , շաշմիշ ըլլա
մալը ։ ղա · 3 ։
Ոգորիլ ։ կռուիլ , ձէնկ ընել ։ թ · 3 ։
ղեէլ ։ մարդոյ անուն է ։ բ Թագաւորաց ․
6 · 7 ։ || հե · 12 ։
ղնափայտ ։ նաւուն գլխէն մինչև ի խըչըն՝ տակի
երկան ախրեկն է , որոյ վերայ կողերն շա_
րած է ։ խե · 2 ։
ողողիլ ։ լուացուիլ , անձեռով ցօղուըւիլ ։ ղգ · 11 ։
և 24 ։
ողողակ մթոյին ու ընդեղական ։ լողայօղ քեօ
աձամի ։ ծե · 2 ։
ոողայ , ոողիբայ ։ էին անուանք երկուց Թագա_
ւորութեանցն՝ սամարիոյ և երուսաղէմի ․ զոր ա
եղ մարգարէն Եզեկիէլ · 23 · 4 ։ || ծդ · 2 ։
ոռոգել ։ ջրել , ինչպէս՝ պախճան , ծառը ։ լե · 2 ։
ոստայն կկել ։ կտաւ , կամ էօրիւմ ձէկ գործել ։
է · 3 ։
ոստիկան ։ վերակացու ․ քեհեայ ։ ծզ · 2 ։ և հթ · 3 ։
որոջ ։ գառն ․ գուզու ։ լա · 3 ։
ուղերձեալ ։ ծլած ծաղկած , ֆիլիզլէնմիշ եղած ։
ժե · 4 ։ և խթ · 2 ։
ուղէշ ։ ծառի ճիւղ ․ տալ պուտագ ։ իդ · 2 ։
և կա · 3 ։
ունելիք ․ կրակի մաշա , խըսաձ ։ լգ · 5 ։

ունկ , ունկն ։ յերդի մանրուք · մասման թօղու ։
իզ · 2 ։
ունկնտախից ։ ականջը խըցած՝ գոցած , խուլ ։ ծ · 4 ։
ուշ ։ միտք · Փիքիր · Փէրասէթ ։ իզ · 3 ։ լդ · 2 ։
ծթ · 1 ։ հը · 2 ։ և զգ · 24 ։
ուտիչ ։ ցեց · կիւվէ ։ ղբ · 9 ։
ուտնահար ։ ցեցէն կերուած , փտտած ։ ծղ · 2 ։
ուրախութիւն եւ ։ զուարթ ըլլալ , զուռ զուռ ըլլալ ։
լդ · 7 ։
ուրուական ։ գարշելի , փուճ , դիւական ։ հա · 4
հե · 12 ։ և զզ · 24 ։
Չարաշուք ։ չարութիւն երեւնող , զզուելի · պէթ ։
ծե · 2 ։ և ծը · 2 ։
չորեքվտակեան առաջ ։ չորս մեծ գետ ունող ըն_
դախ , որ էր յերկնայ բղխած գետն · Ծննդոց 2 ·
10 · ‖ կը · 1 ։
չու ։ քալուածք , յառաջ քալել գնալը ։ բ · 2 ։
և խե · 2 ։
չքնաղ ։ խիստ աղէկ գեղեցիկ ։ ժա · 1 ։ և հե · 13 ։
կամ փառաւոր , հրաշալի ։ հա · 4 ։ և ղգ · 19 ։
չքաւոր ։ Նուաստ , փոքրիկ , փուճ , խեղճ · զայիֆ ։
կթ · 2 ։
Պակուցեալ ։ սրտաբեկեալ , խիստ վախցած , սիրտը
փըրթած ։ ծ · 2 ։
պահակ ։ անկարիայի բռնուած , որ էր սիմոն կիւ_
րենացին · Մատթէոս 27 · 32 · ‖ ծը · 3 ։
պահպանակ ։ պահօղ , պահպանող ։ գ · 3 ։ և կե · 2 ։
կամ զըրըխ ։ ղգ · 12 ։
պաղպաջունք ։ գեղեցիկ պայծառ քէօշկ ։ խե · 2 ։
պաճար ։ Նախիր , կոլու սիւրիւ ։ ծե · 3 ։
պայթիլ ։ փաթլամիշ ըլլալ , ճաթիլ ։ հգ · 3 ։
պայման ։ չափ · սինօռ ։ բ · 3 ։ իզ · 2 ։ և ղգ · 24 ։
կամ ուխտ , խամվըլ ։ ծգ · 5 ։

...ն ։ Հաց · սօմուն · էքմէք ։ ՂԴ · 8 ։
...շտօնատար ։ պաշտօղ , խըզմէթ ընօղ ։ ԽԱ · 2 ։
ԽԸ · 2 ։ և ԾԳ · 4 ։
...պաշտօնէտեղ ։ աղօթքի տեղ · կռատուն ։ ԾԱ · 4 ։
...ատանդրին ցանցարկ ։ խառլըմիշ ընօղ զափթ ընօղ՝
խուռուլմիշ եղած տուղախ ։ ԾԵ · 2 ։
...աարուն ։ ըեցուն · սիլմէ՝ տօլու ։ ԽԸ · 3 ։ և ԿԳ · 2 ։
...տոգամ ։ խապար , խօսք · քէլամ ։ ՂԲ · 3 ։
...անեչ ։ Թամիյէ , պէաէն , մեթէլիզ ։ Կ · 2 ։
և ՂԸ · 5 ։
...տուածօրէն ։ պըտըրտուք՝ նէզագէթլի ։ ՂԳ · 7 ։
...տուատուածն ։ կցուիլը , էքլէնմիշ ըլլալը ։ Ը · 4 ։
...տապարան ։ սըղընմիշ ըլլալու տեղ · սիփէր ։
Խ · 2 ։ ՃԲ · 1 ։ ՃԹ · 1 ։ և ՂԱ · 3 ։ կամ
տայախ , իբր՝ թէմէլ ։ ԽԵ · 2 ։
...րդկ ։ Տրակի ֆիթիլ ։ ՂԳ · 2 ։
...րս ։ սափան , որով քար կընետեն ։ ԼԳ · 7 ։
և ՂԸ · 4 ։
...ռել ։ իրր սափանով քարատել , տանջել ։ Է · 2 ։
...ամ հալածել , գուրս ընել ։ Մ · 3 ։ և Ղ · 3 ։
...ծակ ։ իշմեղու · էշէկ առըսը , աթ առըսը ։
ԿԸ · 3 ։
...տակ ։ լոկ · սալթ , սատէ ։ ԽԸ · 6 ։
...ղպջակ ։ ուռեցք , որ ջրին երեսը բուշտ բուշտ
կու լինի · տու զապարճըղը ։ ՀԳ · 3 ։
...ղտորպրըութիւն ։ գարշելի՝ պուլանըխ իչմէլը ։
ԾԴ · 3 ։
...նելի ։ զարդարելու , սաղելու ։ Բ · 2 ։
...ղիլ ։ եսուէն ընկնիլ՝ վազել ։ Բ · 2 ։
...ռեանկոս ։ բանսատեղծ · շայիր , աշըգ ։ ԽԸ · 6 ։
...րակ ։ օռման , Դիմ ծառերու երըշըն , տէմէթ ։ Թ · 1 ։
...ութիւն ։ էտէպսիզ սողուիլը , խնչպէս՝ ըկան
կանանց տիւզէնը ։ ԽԸ · 4 ։

*Ջախել. ջաղխել, ջարդել, կոտրել. խը·2
ջահաւորիլ. մաշալայիդես վառիլ, փայլիլ. ղգ·
17. և 23
ջահել. ծագել, լուսաւորել. ծգ·2
ջամբել. կերցնել. տալ. ժդ·3. և ղգ·22. և 23
ջնար. սանդուռ, որ փայտեղէն չաղղը մի է. ղը·9
ջնել. զարնել, ծեծել. կ·2
ջութակ. սանթուռ, կամ քէման. ղը·8
ջրակարծ. ջրէն կարծրացած՝ սառած, ինչպէ-
կարկուտը. կը·3
ջրել. կջնջել, աւրել. պօզմագ. մը·3. խը·1
կե·2. և ղգ·14
ջրողող. ջրհեղեղով ապականած՝ թելէֆ եղած
կ·5
Ռետին. թիւրէմէնթին, որ եարայի դեղ՝ մէլհե-
լինի. կը·1
Սաբեկ. է անուն ծառոյն, յորում կախեցաւ տեսա
Աբրահամ՝ զխոյն. Ծննդոց 22·13.|| ղը·9
սադրել. մատնել, խամզել. ելէ վէրմէք. կե·1
կամ չար ֆիթ տալ. ղ·3
սակ. հարկ. վէրկի, խարաճ. խե·1. կամ չափ
հիսապ. ժէ·3. խե·2. և ձ·3
սակաւամեան. տկար, զայիֆ, նուաղ. դ·3
ղգ·1
սահանք ծովու. ծովու անդունդը, զոր իբր դը-
եալ պարիսպ դարձոյց ած, ընդ որ եանց ի-
րայէլ. Ելից·14·22.|| կգ·
սահանք յորձանաց. տեղէ, ուր տեղէսի. խ·
սաղարթ սեւութն վարսից. տերեւ՝ եւ եափրախն
լուն, որ է տակ, եւ մօրուք. կգ·
սամի. ախումնը դարձընող փայտ, եէքէ. խե·
*սանձատակէր. պոռզի սոյ, պուզիդես փատցա
ձա.

տուեր։ սինչ․ շղթայ․ որոյ գինն էր 88 ստակ․
Մովսէս․ 17․ 26․ ‖ խե․ 1։
որդ․ մանուկ․ երբեմն ձէկն պէտնէի․ ղգ․14։
որտուցեալ։ բամբանուած, երեւէ ձգած․ խը․2․
ծե․ 2․ և կը․ 3․
տառնիլ․ թաշակելով խանասնէրը վրայ բերեւ
ծածկանիլ․ ղա․ 1․
ափիրա․ պատմեալ կնկան մի անուն է․ Գործոց․
5․ 9․ ‖ հա․ 3․
ելոյլ․ խաշաշամիոն․ քաղաք մի է։ ա․ 1․
եղանաննենգ․ անդամը․ կամ տաճարը թալլող․
խը․ 2․
եպուհ․ պէյզատէ․ բիշիզատէ․ գ․ 2․
եան․ մաքուր․ ուղիղ․ հիլլէսիզ․ ժ․ 2․ և
յէշտալարն․
ենոք․ զամաւածք․ միխլանմիշ ըլլալը․ կզ․ 4․
թափիլ․ պըլխալ․ խելքը գլուխը գալ․ ար–
թննալ․ գ․ 3․ և ղը․ 1․
իգացող․ ֆոտուլուք ունեցող․ տալընմիշ ըլլող․
ոգ․ 2․
իզանացիք․ սայապացիք․ որք նստմարէ կուռք մի
ունէին․ զոր պատուեսց Սողոմոն․ գ․ Թագա–
ւորաց 11․ 5․ ‖ խը․ 3․
ինկ․ անուշիկ հոտ․ խոշ քոքուլար․ լը․ 3․
ին․ գառնուկ․ պոշ․ փուշ․ լե․ 3․ և ձա․ 2․
ուք․ փք ուէմիլի․ խըշտա․ իգ․ 3․
կախատն․ մուրատ պուլանրլն․ չիրքէֆ․ ծգ․ 3․
կաւատակ․ քեասէ․ թասատան․ լ․ 2․ և ձը․ 1․
կիւթայի․ թաթարաց ազգն է․ ղգ․ 12․
նտախտապատուատ․ անշահ չինուած․ նիշանըզ
ախուզէնմիշ եղած․ գ․ 1։
նտախաէր․ պոշ փուշ ունը ունող․ ղգ․ 20․
աոկալինն․ եայան․ գ․ 3․ նմանեիկ․ ֆախիլը․ հա․ 2․

տոսկանլինթխալ ։ աճարկու ընտուհա , պետառայն
ղգ · 12

տոր ։ խորունկ սելի ձամբայ , տերէ ։ խ · 2

տուղել ։ տակը խիճեցնել · պաթըրմագ ։ լզ · 2

տուրհանդակ ։ սայի , մենղիլ ։ ծզ · 2

տոփել ։ մառեան , գիրք · քիթայ ։ ձը · 2 , և
[illegible]

տպանդ ։ ղոհ · ղուրպան ։ խդ · 2

տպանդարան ։ ղուրպան մորթելոյ տեղ ։ խե · 3

տպառաղէն ։ սիլահը , փիշր սիլահ ։ ծզ · 2

տպեղանի ։ դեղ , մելհեմ ։ ը · 3 , և խը · 1

տատամբակ ։ Նախա , ղալըմ , եարատմագ ։ խը · 3
և ղը · 2

տոգաանք ։ մեղադրանք , սիթէմ ։ թ · 3

※տարեկելք ։ վարեն մեր եղող , կամ եղած ։ ղգ · 24

տռուար ։ թանձր , հաստ ։ խզ · 2 , և կզ · 4

տռուարատեղն ։ ձուղը հաստ · գալըն տալլ
պուտագը ։ թ · 2

տռուգարանել ։ ոյղուն գալըմ խայաթ եղած
ղգ · 20

տրունկ ։ խեղճ՝ ծառայ , բայէ ։ գ · 3 , ղգ · 12
և 18

տրջանալ ։ ափոսալ , դղջալ , փիշման ըլլ
իթ · 2

տրահի առագաստ ։ բակի փերտէն , որ է՝ գուռն
խը · 1

տրանալ ։ թաշիլ , փախչիլ ։ ի · 2 , լ · 4 , խը · 3
հա · 2 , և հգ · 2 , կամ սիվրիլմիշ եղած քե·
կինցած ։
իը · 3

տրույեալ վարատական ։ փախչող հեռացող , ա·
տիլմիշ ։
ժա · 3

տրեհրդեան ։ Սուրբ Սուրբ երգող , ինչպէ·
Սերովբէքն ։
ղգ · 1

*սրինկ ։ սրինգ , նէյզուհուր չալղը , նեյ ։ ղբ · 8 ։
սրսկումն ։ ցրցըքնելը · սէրփմիշ ընելը ։ ծա · 4 ։
սփոփանք ։ սփոփութիւն , մխիթարանք · թէսէլլի ։
դ · 1 ։ լդ · 3 ։ և ղդ · 9 ։
սքանչելահրաշ ։ հրաշալի ։ միւձիւզաթլը ։ հե · 10 ։
սքանչելատես ։ զարմանալի գեղեցիկ տեսիլունով ։
ծա · 4 ։
սքանչելարմատ ։ զարմանալի գերազանց քեօք ունով ։
հդ · 2 ։
Վայրագասուն ։ լեառը սնած մեծցած , լեռնցի ,
եապանի ։ խղ · 1 ։
վայրագութիւն ։ եապանի կոպտութիւն · եաւուզլուք ։
ժա · 3 ։ լ · 4 ։ հա · 4 ։ և ղգ · 19 ։
վանդակապետ ։ պարմախլը շարած գեղեցիկ քէօշկ ։
իե · 2 ։
վաննիչ ։ զայ ընող · թէլէֆ ընող ։ իղ · 2 ։ կամ
փճացնող · չիւրիւթմիշ ընող ։ ղբ · 9 ։
վարակեալ ։ պաշարեալ ։ մուհասէրէ եղած ։ լա · 3 ։
վարանիլ ։ վախուն թառայիլ՝ անձկիլ ։ իզ · 3 ։ և
իը · 2 ։
վարասպան ։ կէմ , հալխա , որ գազանի բերան կը
կապեն ։ ղբ · 2 ։
վարատիլ ։ զատուիլ՝ տէտիրկին ըլլալ ։ իէ · 3 ։
վարմ ։ տուզախ , խափանձա ։ խ · 3 ։
վարսք ։ մազեր , որ թէ մարդոյ իցէ՝ փէրչէմ է ,
կգ · 2 ։ և ղդ · 12 ։ և եթէ ձիոյ իցէ՝
եալըլըխներն է ։ թ · 2 ։
*վերակացումն ։ զապիտութ ձեռք վերցնելը ։ ա · 2 ։
վերակենդանալ ։ կրկին ողջնալ , յարութիւն առնել ։
լդ · 5 ։
*վերանայեկել ։ վեր նայիլ , դէպ ՚ի վեր ուռուտ
ընել ։ իզ · 3 ։
վերնամարտութիւն ։ վերինին հետ ձէնիկ , որ է

դէմ դնելը։ ծա․ 4։
վերնամբոյանակ։ երկնիքէն տրուած յաղթութեան
համար՝ վարձք․ չէլէնկ։ ղգ․ 24։
վերջին դատաւկնիք։ ի կորուստ յաւիտենական
վճռեալ, որք են դատապարտելոյն դասք։ իէ․ 2։
վերջնական։ յետքինը․ կամ խիստ պէթէրը։ ծ․ 3։
վերջնական ամառ։ քեակին լեքէ սամանու։ ղգ․ 11։
վէտ։ հօպար․ խնքնահաւան․ զօրպխիխ նախատէ
մարգարէն Եսայի։ 65․ 5։ ‖ ծ․ 2։
վիժած անզգալի կուժան։ անցուցած տղայ․ որ
մարդ չի կուռոյր։ ի․ 2։
վիհ վհից։ խորունկներուն խորունկը։ խ․ 2։
վիրգ մաշու։ մեղրնօղ ձեռնկի քար․ հիւլէ․ կ․ 2։
＊վիրգ ամլի։ անօչեմէյի քար․ գոյկան։ ղբ․ 8։
վաակ։ ախընոյ․ կամ սել․ ընտմախ։ ծգ․ 3։ և
ղբ․ 10։
վատել։ վատաւմյնել․ չիքքինցնել։ ի․ 2։
վրիժակ։ վճիռ․ խլամ․ սիճիլ։ իէ․ 2։
վրիպակ։ մոլար․ ծառու․ ժը․ 2․ իը․ 4․ և ղբ․ 9։
վրնջողական։ բղջախոհ ցանկութբ կապուելը․ աղ-
միչ ըլլալը։ խե․ 2։
Տախտ տախտ։ կամացուկ կամացուկ․ քըչիկ
քըչիկ։ ծը․ 3։
տաղանդ։ կամ քանքար․ քեռէ մի լրաակ․ Բի․ Ր
քանքար։ ժՌ քեռէ սաակ․ կամ այլ աւելի։
իզ․ 2։
տաղաւարեալ։ ընակելու տեղ ըլլալ։ ձ․ 1։
տաղաւարիլ։ օթեւանիլ․ զօնաք էթմէք։ հե․ 13։
տաղակազազմական։ իքլրաճ ընելու մարատ։
ղգ․ 20։
տաշա։ քեաաէ․ թաս։ լ․ 2։
տատանմանիլ։ տրամելի․ խառէվէթ ընելու։ լա․ 2։
տարալ։ կերպ․ թարզ։ ժը․ 2։ և ծգ․ 5։

տարացույց · նման եօրնէկ , ույղուն · ժե · 2 · և
խե · 3 ·

տարժանելի , կամ տաժանելի · խիստ աշխատելի ·
մէշագգէթլի · ը · 1 · կզ · 5 ·

տարմ · խանատըլըներու քիւմը՝ երդիկներ · կը · 3 ·

տարր · բոլոր նիւթաւոր մարմիններուն թէմէլը ·
և է չորս · Հուր · Օդ · Ջուր · Հող · ձբ · 3 ·
և ղգ · 15 · և զայս բառս՝ ալէս ալէս նշանա_
կութեամբ գործածէ սուրբս · զոր օրինակ · ի
տարր գալ · տարերքէ եղածներուն մէջ , կամ
կայ եղածներուն եօզին մէջ · խա · 2 ·

տարր ժամանակի · ժամանակին կայութիւնը , կամ
չափը , որ հիշի մօտ՝ քիչէ · ծե · 3 ·

տարր ժամանակաց · չորս եղանակն է · Գարուն ·
Ամառն · Աշուն · Ձմեռն · որք իրր տարրին
տարերքն են · խդ · 2 ·

տարր մահու · մահուան քէօքը՝ սէպէպը · ղբ · 6 ·

տարերս սասանել · բոլոր աշխարհս շարժել՝ դող_
ցնել · լզ · 2 ·

տարր փոքր · փոքրիկ ոչինչ իր · չէյծիկէզ · կթ · 1 ·

տեառնագրել · կնքել , խաչակնքել · ժբ · 3 · և
ղգ · 12 ·

տենդ · ջերմ , սըթմա · իը · 5 ·

տեսական · տեսանօղ , կէօրիւճիւ · լգ · 5 · կամ
երևելի , կէօզէ կէօրինէն · լդ · 3 · և ձգ · 1 ·

տեսականել · աչը եօզը խլխալ մը մէյտան հանել ·
ղգ · 10 ·

տեգ · մըզրախ · խըշտ · խե · 3 ·

տիրադաւ · իր տէրը խարօղ՝ մատնօղ · ծզ · 2 ·

տիրադրուժ պաշտօնեայ · իր տէրը ֆէնտով խա_
բօղ խըզմէթքեար · է · 2 ·

տիւրոս · կամ ծուր · քաղաք մի է սայտայի
սէմթ · Եսայ 23 · 15 · || կթ · 3 ·

փոկ՝ կաշիէ կապ՝ խե · 2:

փրկանակ՝ փրկութեան տեղ՝ իզ · 2՝ կամ ուժուա թելի՝ ծա · 4՝ կամ ազատելոյ գործիք՝ կգ · 3՝ և ղբ · 5՝

Քաղցկեղ՝ մարմինը չիւրխածելով ընող եարա մի է · կերցաւ · չիւրխփենչէ՝ ժը · 3՝

քամել՝ կուռքի անուն է՝ դ Թագ · 11 · 7 · ՅԿ · 4՝

քայլ՝ կերպանքը՝ կամ լեօֆ՝ ԼԺ · 1՝

քանան՝ Նոյ Նահապետի թոռն է՝ քամայ որդին՝ Բ · 1՝

քանանուհի՝ կին մի էր քանանացի՝ որոյ աղջջիկն քո բժշկեաց՝ Մատթէոս · 15 · 22 · Լէ · 3:

քանտար՝ կապարի · եալուղ · գուլամ՝ կթ · 2՝

քանցել՝ ձուկերը կապարելով փոյնել՝ իդ · 1՝ և կէ · 2՝

* քառադիմակի՝ է մեկնութիւն բառին քերանոյ՝ որ երեւի եկեալ 'ի յունական բառէն ՖՖՖ՝ որ թարգմանի քառակուսի · ուստի քեանդ քառագիմակի պատկեր՝ ասել է՝ չորս երեսով՝ կամ չորս թարաֆըլը կուռք · զորպիսի չինեաց մանասէ՝ դ Թագաւորաց · 21 · 5 · Ա ծա · 4՝

քաւարան՝ քաւող՝ մեղքը թողող՝ ղդ · 1՝

քեղի՝ օրթա տիրեկ՝ թեմել տիրեկի՝ ԼԲ · 3՝

քիմք՝ դամախ՝ կէյմղ՝ իգ · 2՝

քինաւոր՝ քէն ունող · ղարեզ ունող՝ ղա · 1՝

քղանց՝ հանդերձի փէշ · էթէկ՝ ժը · 2՝

* քոյինանութ՝ քու նիւթըդ · քոյինանութ զանգուած · քու նիւթիդ խմօրը՝ որ է իսկ մարմինն խորհրդոյ՝ ծգ · 4՝

քորեբ՝ արապխատան լեռ մի է՝ ուր խօսեցաւ ԱԾ եղիայի հետ՝ դ Թագ · 19 · 8 · Լդ · 9 · և ղգ · 6՝

քամնափուշ՝ վռվունօղ՝ մարմինը փուշ փուշ ընող՝ իը · 6՝

տխրատեսակ հուք․ կամ երփն․ մութ գոյն, սև
ըռէնկ․ լդ․ 8․ և ղգ․ 12․
տղմախիտ գուբ․ չամուռով լեցուն հոր․ ժզ․ 1․
տնտեսել․ տէր ըլլել, քերէմ էթմէք․ ժե․ 2․
կամ յայտնել, ցուցանել․ խը․ 6․
տոյժ տանջանաց․ կամ լլկանաց, վնաս պատժոյ․
գազէպ ճէրիմէսի․ սիասէթ․ ը․ 2․ և հա․ 3․
տռան․ չուանէ կապ․ իպլար․ իը․ 1․
տուայտիլ․ չարչարուիլ․ ճէֆայէն մաշիլ․ կզ․ 5․
տպաւորագոյն․ էշկեարէ ուղղուն․ թըպդըլ․ ժթ․ 3․
տրոհել․ որոշել, բաժանել, զատել․ այըրմագ․
խը․ 1․ և կբ․ 2․
Ցանց․ սփծիմով հիւսուած թոռ, աղ․ տուզախ․ խ․ 3․
ցիռ․ վայրի էշ․ եապան էշէկի․ խղ․ 2․
ցնորից ցրիչ․ խենթ ու մենթ երազները տա_
ղըթմիշ ընօղ․ ձդ․ 1․
ցնցուղ․ ցաթկուք․ սէրփինթի ջրոյ, կամ հրոյ․
զ․ 3․ և կը․ 3․
*ցոլք նշուլից․ շողշողումն ճառագայթից, շա_
ղին փայլելով ցաթելը․ ձա․ 3․
ցոփութի․ անառակութի, աներեսութի․ էտէպ_
սիզլիք․ հբ․ 2․
*Փագովր․ Բէլփէգովր․ կուռքի անուն է,
Թւոց․ 25․ 3․ ‖ խը․ 3․
փաղանգ․ ճիւմհիւռ․ թապուռ․ օռտու․ կե․ 1․
փաղաքշել․ երեսպաշտութիւն ընել, խօշամէտի
խօսիլ․ ժ․ 1․
փապար․ ծակ, խոմուխ․ չուխուր․ խ․ 2․
փարաքումն․ ըղձախոհ ցանկութի, եաւէպոխզութի․
խե․ 2․
փթթեալ․ ֆիլիզլէնմիշ եղած, ծաղկած․ ղգ․ 11․
փղշտացիք․ բուրբուրատաց և ամ պղաշգաց կըռաւի․
ա․ 2․

քամահելի ։ զարհուրելի . խիստ վախցնող ։ ը . 1 ։
ժը . 2 . իր . 2 . իը . 4 . և հթ . 3 ։
քրայ ։ խաւշիր օձախ . ժթ . 1 . իգ . 3 . և կթ . 1 ։
քրէական ։ խիստ մեծ մեղք . որ է Այ դէմ .
ծա . 4 . և ղա . 3 ։
քրձազգած . լինիլ ։ չուլ հագնիլ ։ իթ . 2 ։
քրքումն ։ զաֆրան չիչէկի . որ է անուշահոտ ծա_
ղիկ մի . կամ զաֆրան ։ ղգ . 11 ։
Օդք . օդեր ։ ոտից աման . այսպէս զամը . հիւղեա՛
չիզմէ . փապուճ ։ խէ . 3 ։
օղոյ ։ հանդերձ . Լօպայ ։ գ . 1 ։
օժանդակել ։ ձեռնտու [illegible] ամել ։ ե . 1 ։
ժ . 2 . ժա . 1 . լդ . 6 . ձ . 2 . և ղդ . 9 ։
օձաւղ ։ ճէնիկի թիւլում . ակլաւհ ։ կղ . 3 ։
օն և օն ։ ասանկ ու անանկ . չէօյլէ պէօյլէ ։ իթ . 3 ։
օշինդր ։ լեղի խոտ մի է . փելին ։ դ . 3 ։
աւսիտացի ։ Յօբ երանելին է . զի էր յԱւսիտ գա_
ւառէ . որ է 'ի կողմն Արաբիստանու ։ իը . 6 ։
օ[illegible] այդ է . այլազգի ։ կգ . 1 ։
օտարութի ։ անծանօթութիւն . միանաւորութէ ղարիպլիք ։
հե . 12 ։
օրակշիռ ։ որ չափով . որ է արեգակն . 'ի յերկինս .
որ 'ի յօր յերկարանայ . օրէ օր մեծնալ ։ ծը . 3 ։
օրհներգ ։ երգող օրհնութեան . կամ . օրհնութիւն ։
կա . 2 . գոհութի . բարեբանութի . որ միայն
Աստուծոյ վայելէ . որ է անմարմնաւոր եկեղեցին
ամ՛ եկեղեցւոյ , և անեզրական փառացն ։

100